ՏՏԿՀ կենտրոն	1.200.000	1.100.740	900.000	525.000	275.000	4.000.740
ԵՈՒ կենտրոն	1.238.325	1.507.875	2.137.500	1.200.000	400.000	6.483.700
Հայագիտ. հետազոտ. ինստիտուտ	-	-	-	262.500	135.000	397.500
Մասս մեդիայի գիտակրթական կենտ.	-	-	-	375.000	-	375.000
Ընդամենը	*277.224.660*	*254.854.466*	*276.028.000*	*264.020.500*	*267.338.500*	1.339.466.126



ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲԱԶԱ

2014-2015 ուստարվա ընթացքում ԵՊՀ ծախսերի և եկամուտների նախահաշվով հատկացված միջոցների շնորհիվ զգալիորեն բարելավվել է համալսարանի նյութատեխնիկական բազան, մասնավորապես ձեռք են բերվել 55 մլն դրամ արժողությամբ համակարգիչներ, շարժական և պլանշետային համակարգիչներ, համակարգչային պահեստամասեր, պատճենահանող սարքեր, տպիչներ և այլն, 1.7 մլն դրամի չափով հեռախոսակայանների բաղադրամասեր, 21.5 մլն դրամի չափով էլեկտրատեխնիկա և կենցաղային սարքավորումներ /սառնարան, օդորակիչ, փոշեկուլ, հեռուստացույց, հեռախոս և այլն/, 38 մլն դրամի կահույք /պահարան, սեղան, աթոռ, ուսանողական նստարան, գրատախտակ և այլն/, գրենական պիտույքներ /22 մլն դրամ/, քիմիական նյութեր /14 մլն դրամ/, տնտեսական ապրանքներ ու սանհիգիենիկ միջոցներ /26 մլն դրամ/, բենզին, դիզվառելիք ու քսայուղեր /22 մլն դրամ/, ավտոպահեստամասեր /9.8 մլն դրամ/, պոլիգրաֆիական նյութեր /3 մլն դրամ/, սպորտային գույք /2.5 մլն դրամ/, շերտավարագույրներ, ուղեգորգեր ու ցուցանակներ /2.9 մլն դրամ/ և այլն:

ԵՊՀ մասնաշենքերում կատարվել են շուրջ 400 մլն դրամի շինարարական ու վերանորոգման աշխատանքներ, այդ թվում.

ԵՊՀ գրադարանի՝ Չարենցի փողոցի կողմից մուտքի մոտ Հայոց մեծ եղեռնի 100-րդ տարելիցի կապակցությամբ բացվել է Երախտիքի ծառուղի, որտեղ տեղադրվել են Ցեղասպանությունը դատապարտած ու հայերին օգնության ձեռք մեկնած օտարազգի հայտնի 12 գործիչների կիսանդրիներ:

Կառուցվել է թիվ 1 ուսումնական մասնաշենքի մանսարդային հարկը: Վերանորոգվել են կենտրոնական, ինչպես նաև թիվ 2, 4 և 6 ուսումնական մասնաշենքերի մի շարք լսարաններ և սանհանգույցներ: Բարեկարգվել են ԵՊՀ գրադարանի մուտքի աստիճանավանդակը, թիվ 5 մասնաշենքի բակը, որտեղ տեղադրվել է ԴՆԹ-ն խորհրդանշող արձան: Թիվ 8 ուսումնական մասնաշենքին հարող պուրակում կանգնեցվել է հուշակոթող՝ նվիրված Հայոց ցեղասպանության նահատակների հիշատակին:

Կաթսայատանն իրականացվել են շուրջ 86.2 մլն դրամի հիմնանորոգման աշխատանքներ: Տեղադրվել են 5 նոր կաթսաներ՝ իրենց գազայրիչներով: Կատարվել են առաստաղի ձայնամեկուսացում և ներքին հարդարում:

2015 թ. մայիսին կնքված պայմանագրի համաձայն՝ ԵՊՀ անվտանգության աշխատանքների կատարումը ստանձնել է «Ալֆա-Դելտա» անվտանգության ծառայությունը: Լիցենզավորված մասնագետների աշխատանքն ավելի արդյունավետ է դարձել ընդլայնված տեսահսկման ցանցի և նոր տեխնիկական միջոցների կիրառման շնորհիվ:

Հաշվապահությունում, գրադարանում, հին ու նոր գրապահոցներում և հարակից սենյակներում տեղադրվել է հակահրդեհային-ազդանշանային համակարգ /10.4 մլն դրամ/:

Հաշվետու ժամանակահատվածում ԵՊՀ ավտոպարկի կողմից իրականացվել է շուրջ 323 ուղերթ, այդ թվում՝ հյուրերի սպասարկման և գիտաժողովների համար՝ 122, գիտաճանաչողական էքսկուրսիաների և ուսումնաարտադրական պրակտիկայի համար՝ 98, մշակութային և ռազմահայրենասիրական միջոցառումների համար՝ 103:

Ցանկապատվել է ԵՊՀ ջերմատան տարածքը: Մեծածավալ աշխատանքներ են կատարվել ԵՊՀ հարակից տարածքը կանաչապատելու և ծաղկազարդելու ուղղությամբ: Տեխնիկապես վերազինվել է ԵՊՀ սանիտարական մաքրման աշխատանքներն իրականացնող «Կրիստալ Քլինինգ» ՍՊԸ-ի աշխատակազմը, և հետևողականորեն բարձրացվել է սանմաքրման աշխատանքների որակը:

ԵՊՀ Ծաղկաձորի, Հանքավանի և Բյուրականի ուսումնաարտադրական բազաներում պատշաճ կերպով կազմակերպվել են աշխատակիցների և ուսանողների հանգստի և ուսումնաարտադրական պրակտիկայի հետ կապված աշխատանքները:

ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈԴԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

Վարչության պետ՝ *Ժամհարյան Հրանտ Գևորգի, կենս. գիտ. թեկնածու, դոցենտ*

Վարչության գործունեության հիմնական գործառույթներն են՝

- բակալավրիատում և մագիստրատուրայում ուսումնական գործընթացի պլանավորում, կազմակերպում և վերահսկում,
- համալսարանական կրթության ներքին որակի ապահովմանն առնչվող գործառույթների համակարգում և վերահսկում,
- ուսանողների գիտելիքների գնահատման գործընթացի թափանցիկության և հրապարակայնության ապահովում, այդ ուղղությամբ տարվող աշխատանքների կազմակերպում ու վերահսկում (նաև հակակոռուպցիոն ծրագրի շրջանակում),
- ուսումնական գործընթացին մասնակցող ԵՊՀ կառուցվածքային ստորաբաժանումների աշխատանքի համակարգում,
- բակալավրիատի և մագիստրատուրայի առկա և հեռակա ուսուցման ուսումնական պլանների ու առարկայական ծրագրերի մշակման գործընթացի կազմակերպում և կատարման վերահսկում,
- ամբիոնային ուսումնական բեռնվածությունների ստուգում և կատարման վերահսկում,
- ժամավճարային հիմունքներով աշխատողների ձևակերպում և հաշվառում,
- բակալավրիատի և մագիստրատուրայի առկա և հեռակա ուսուցման դասատախտակների ստուգում և ուսումնական գործընթացը լսարանային ֆոնդով ապահովում,
- ուսումնական գործընթացի ժամանակացույցի և դասատախտակների օպտիմալացում,
- առկա և հեռակա ուսուցման դասերի կայացման վերահսկում, դասամատյանների ստուգում,
- ֆակուլտետային կուրատորների և մագիստրոսական ծրագրերի ղեկավարների աշխատանքների կոորդինացում,
- ֆակուլտետների դեկանատների, ամբիոնների և ուսումնական կենտրոնների աշխատակիցներին մեթոդական աջակցության ցուցաբերում,
- ուսանողների ավարտական փաստաթղթերի նախապատրաստում և հաշվառում,
- ավարտական, ամփոփիչ և քննական հանձնաժողովների աշխատանքների կազմակերպում,
- ուսումնական գործընթացի փաստաթղթային գործավարության ապահովում և վերահսկում,
- ուսումնական, արտադրական և մանկավարժական պրակտիկաների կազմակերպում և վերահսկում,
- առկա և հեռակա ուսուցմամբ մագիստրատուրայի և բակալավրիատի 2-րդ մասնագիտության գծով ընդունելության կազմակերպում,
- բակալավրիատի և մագիստրատուրայի առկա և հեռակա ուսուցման համակարգերում դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ ուսանողական հարցման կազմակերպում և իրականացում,
- ԵՊՀ-ում կրթական ծրագրերից և ստացած կրթությունից շրջանավարտների բավարարվածության վերաբերյալ տարեկան հարցման կազմակերպում և իրականացում,
- ուսանողների մնացորդային գիտելիքների ստուգման կազմակերպում,
- ուսանողների շարժունության հետ կապված գործընթացի կազմակերպում, հրամանագրում և վերահսկում,

- բակալավրիատի և մագիստրատուրայի անվճար-վճարովի համակարգերում ուսանողների փոխատեղման /ռոտացիա/ անցկացում, ուսման վարձի զեղչման գործընթացի կազմակերպում, ձևակերպում և ամփոփում,
- վճարովի կրթական ծառայությունների կազմակերպում,
- ԵՊՀ ընթացիկ և տարեկան հաշվետվությունների համար տվյալների նախապատրաստում և ամփոփում,
- Կրթության և գիտության նախարարության համար ուսումնական գործընթացի վերաբերյալ տեղեկատվա-վիճակագրական տվյալների նախապատրաստում,
- ուսանողների տվյալների հենքի ստեղծում և պահպանում,
- ուսումնական պլանների, դասընթացներին ուսանողների գրանցման, ուսման առաջադիմության տվյալների ավտոմատացված մուտքագրման ու մշակման, ստուգարքային և քննական տեղեկագրերի ու դիպլոմի հավելվածի պատրաստման միասնական էլեկտրոնային համակարգով գործընթացի կազմակերպում և վերահսկում,
- ՀՀ ազգային վիճակագրական ծառայության համար վիճակագրական տվյալների նախապատրաստում և տրամադրում,
- Գնահատման առանցքային ցուցանիշների ամփոփում,
- ԵՊՀ վարկանիշավորման ցուցանիշների հաշվարկման համար անհրաժեշտ տվյալների նախապատրաստում և տրամադրում ԿԳՆ-ին,
- ԵՊՀ ուսումն ընդհատած ուսանողների յուրաքանչյուր կիսամյակի տվյալների ամփոփում և տրամադրում ՀՀ բանկերի միություն:

Վարչության կազմում գործում են 5 բաժիններ.

- Բակալավրիատի
- Մագիստրատուրայի
- Կազմակերպչական
- Ուսումնական գործընթացի վերահսկման
- Պրակտիկայի

2014-2015 ուսումնական տարվա ընթացքում վարչությունն իրականացրել է հետևյալ աշխատանքները.

❖ Ինչպես նախորդ, այս ուստարում ևս կրեդիտային համակարգով ուսումնառության ուղեցույցի և դասընթացների տեղեկագրքի էլեկտրոնային տարբերակը տեղադրվել է ԵՊՀ կայքէջում՝ ուսանողների և դասախոսների իրազեկության մակարդակի բարձրացման և համալսարանական կրթական ծրագրերի թափանցիկությունն ու հրապարակայնությունն ապահովելու նպատակով:

❖ Վարչությունն իր ակտիվ մասնակցությունն է ունեցել ԵՊՀ զարգացման ռազմավարական նոր ծրագրի (2016-2020) մշակման աշխատանքներին՝ համապատասխան աշխատանքային խմբերում:

❖ Հաշվետու ժամանակաշրջանում, ինչպես և նախորդ տարիներին, վարչությունն առաջնորդվել է ռեկտորի կողմից հաստատված ուսումնական գործընթացի կազմակերպման հրաման-ժամանակացույցով:

❖ Իրականացվել է բակալավրիատի ու մագիստրատուրայի առկա և հեռակա ուսուցման առաջին կուրսի ուսանողների և ԵՊՀ-ի միջև ուսումնառության կազմակերպման պայմանագրերի կնքման գործընթացը:

❖ Հաշվետու տարում ևս վերանայվել է առկա և հեռակա ուսուցմամբ բակալավրի և մագիստրոսի պատրաստման կրթական ծրագրերի ցանկը՝ հաշվի առնելով դրանց արդիականությունը և ուսանողների նախասիրությունները:

❖ Հավաքագրվել են ԵՊՀ վարկանիշավորման ցուցանիշների հաշվարկման համար անհրաժեշտ տվյալները, ամփոփվել և ներկայացվել են ԿԳՆ:

❖ Աշնանային և գարնանային կիսամյակներում ամփոփվել են ԵՊՀ ուսումն ընդհատած ուսանողների տվյալները և ներկայացվել ՀՀ բանկերի միություն:

❖ Շարունակվել են ուսանող-դասախոս թվաքանակի հարաբերակցությունն օպտիմալացնելու ուղղությամբ տարվող աշխատանքները:

❖ Կատարելագործվել է էլեկտրոնային տեղեկատվական «SuperVision YSU» ծրագրի ավտոմատացված համակարգը, և շարունակվել են աշխատանքները ուսումնական գործընթացի պլանավորման, կառավարման և կատարողականի վերահսկման ուղղությամբ:

❖ «SuperVision YSU» ծրագրի միջոցով շարունակվել են աշխատանքները ուսումնական պլաններից ուսումնական աշխատանքային պլանների անցման ուղղությամբ, և դրանց հիման վրա կազմվել են ամբիոնային բեռնվածությունները: Նույն համակարգի միջոցով յուրաքանչյուր կիսամյակ վերահսկվում է ամբիոնների կատարողականը, որի արդյունքները հաշվի են առնվում մյուս ուսումնական տարվա ամբիոնային բեռնվածությունների հաստատման ժամանակ:

❖ Տարվել են աշխատանքներ «SuperVision YSU» ծրագրի միջոցով դասատախտակները էլեկտրոնային ձևով կազմակերպելու ուղղությամբ: Սկզբում այն փորձարկվել է չորս ֆակուլտետներում, և այդ ֆակուլտետների կողմից արված առաջարկությունների հիման վրա կատարվել են համապատասխան շտկումները: 2015-2016 ուստարվանից այն կիրառվել է բոլոր ֆակուլտետների առկա և հեռակա համակարգերում:

❖ Կատարվել են աշխատանքներ «SuperVision YSU» ծրագրի միջոցով ուսումնական գործընթացին վերաբերող թղթատարությունն ավտոմատացնելու ուղղությամբ:

❖ Մշակվել և ավտոմատացվել են վարչության կողմից տրվող ավելի քան 30 հրամանների ձևանմուշները և ներբուհական տեղափոխությունների հաշվարկների ընթացակարգը:

❖ Համակարգվել է մինչև 12 կրեդիտ պարտք ունեցող ուսանողների դիմումների ընդունման և քննությունների վերահանձնման գործընթացը, որը «SuperVision YSU» ծրագրի միջոցով կազմակերպվում է ավտոմատացված եղանակով: Նույն ծրագրի միջոցով կազմակերպվում են նաև ՀՀ ԶՈՒ մեկնող և վերադարձող ուսանողների դիմումների ձևակերպումները:

❖ Տարվում են աշխատանքներ բոլոր դիմումները, ինչպես նաև վերականգնվող ուսանողների առարկայական տարբերությունների հաշվարկի ձևաթուղթը ավտոմատացնելու ուղղությամբ:

❖ Տարվում են աշխատանքներ «SuperVision YSU» ծրագրի միջոցով քննաշրջանից և լուծարքային շրջանից հետո պարտք ունեցող ուսանողների անվանական ցուցակների ամփոփումը ավտոմատացնելու ուղղությամբ:

❖ ԵՊՀ որակի ապահովման կենտրոնի հետ շարունակվել է աշխատանքը ուսումնական դասընթացների ելքային կրթական արդյունքների սահմանման ուղղությամբ՝ չափելի գիտելիքների, կարողությունների և հմտությունների տեսքով:

❖ Վարչությունն աջակցել է ՀՀ բարձրագույն մասնագիտական կրթության ԵՊՀ մասնագիտությունների կրթական ծրագրերի (բակալավրիատ և մագիստրատուրա) նոր ցանկի ձևավորման գործընթացին:

❖ Ուսանողների գիտելիքների գնահատման գործընթացի թափանցիկության և հրապարակայնության ապահովման նպատակով, ինչպես նախորդ, այս ուստարում ևս վարչության բոլոր բաժիններն իրենց գործունեությունը իրականացրել են՝ հետևելով ՀՀ Կառավարության, ԿԳ նախարարության և ԵՊՀ կանոնակարգերին ու պահանջներին:

❖ Ուսումնական գործընթացները բարելավելու նպատակով ԵՊՀ ուսումնամեթոդական վարչության ստորաբաժանումները կազմակերպել են ստուգումներ այդ գործընթացներին առնչվող գործառույթների շրջանակներում:

❖ Քննաշրջաններին նախորդող ժամանակահատվածներում ուսանողների և դասախոսների շրջանում շարունակվել են բացատրական-մեկնաբանման աշխատանքները քննությունների անցկացման ընթացակարգերի, ուսանողների պարտականությունների և իրավունքների վերաբերյալ:

❖ Ֆակուլտետների հետ շարունակվել են աշխատանքները քննաշրջանների և փոխատեղման արդյունքները ուսանողների համար առավել հասանելի և թափանցիկ դարձնելու ուղղությամբ:

❖ Վերամշակվել է վարչությունում ստեղծված պրոֆեսորադասախոսական կազմի տվյալների բազան, որը պարունակում է դասախոսի ուսումնական բեռնվածությունը, յուրաքանչյուր դասախոսի վերջին չորս տարվա ուսանողական հարցումների և դասախոսների վերապատրաստվելու մասին ամփոփ տվյալներ:

❖ Շարունակվել են վարչության կողմից պարբերաբար կազմակերպվող հանդիպումները դեկանատների, ամբիոնների գործավար-լաբորանտների, ինչպես նաև ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի աշխատակիցների հետ՝ նրանց մեթոդական աջակցություն ցուցաբերելու նպատակով:

❖ Հաշվետու տարում ևս հաշվառվել է լսարանային ֆոնդը, և իրականացվել են աշխատանքներ արդյունավետ օգտագործման և դասերի կայացման ուղղությամբ:

❖ Տարվել են աշխատանքներ «SuperVision YSU» ծրագրի միջոցով 2015-2016 ուստարվանից լսարանային բաշխվածությունը ավտոմատացնելու ուղղությամբ:

❖ Հաշվետու տարում ևս շարունակվել են վարչության համագործակցությունը ՊՆ բարձրագույն կրթական հաստատությունների հետ՝ նրանց ցուցաբերելով մեթոդական աջակցություն ուսումնական գործընթացի կազմակերպման, ուսումնական պլանների և առարկայական ծրագրերի կազմման ու իրականացման ուղղությամբ:

❖ Վարչությունը շարունակել է ՃՇՀԱՀ-ի հետ համագործակցության շրջանակում ԵՊՀ դասախոսների կողմից այդ բուհում մի շարք առարկաների դասավանդման գործընթացի կազմակերպումը:

❖ Միջին մասնագիտական պետական հաստատությունների շրջանավարտների կրթությունը ԵՊՀ-ում շարունակելու համար հաշվետու տարում ևս շարունակվել է ԵՊՀ-ի և այդ հաստատությունների միջև համագործակցության գործընթացը:

❖ ԵՊՀ-ի և 34 ավագ դպրոցների միջև կնքված պայմանագրերի համաձայն՝ շարունակվել է դրանց հետ համալսարանի համագործակցությունը, և նախատեսված է համալսարանի 14 ֆակուլտետների առանձին դասախոսների դասավանդումը այդ դպրոցներում, իսկ դասավանդման ժամերը դարձյալ ներառվել են դասախոսների անհատական բեռնվածությունների մեջ:

❖ Վարչությունը «SuperVision YSU» ծրագրի միջոցով շարունակել է ուսումնամեթոդական առաջադիմության վերահսկման աշխատանքները՝ զեղչերի կիրառման և նպաստների հատկացման գործընթացն առավել հստակ և անթերի կազմակերպելու նպատակով: Ինչպես նախորդ, այս ուստարում ևս ՏՏԿՀ կենտրոնում և վարչությունում շարունակվել են քննությունների արդյունքների մշակման ավտոմատացման խնդիրների վերաբերյալ ուսուցողական աշխատանքները ֆակուլտետների դեկանատների և կենտրոնների աշխատակիցների հետ՝ միտված համակարգչային այդ ծրագրից օգտվելու նրանց հմտությունների զարգացմանը:

❖ Հաշվետու ուստարում ԵՊՀ ուսանողական նպաստների, պետական և ներբուհական կրթաթոշակների հատկացման գործընթացը իրականացվել է կրթության որակի ապահովման խիստ պահանջներով՝ առաջնորդվելով գործող կանոնակարգով: ՀՀ պետական բյուջեով նախատեսված միջոցների և ԵՊՀ ֆինանսական միջոցների հաշվին իրականացվել է ուսանողական նպաստների հատկացումը: Առաջադիմության արդյունքներով նպաստ է տրվել բակալավրիատի և մագիստրատուրայի 1424 ուսանողների, որոնցից 341-ը՝ բակալավրիատի 1-ին կուրսում, 346-ը՝ 2-րդում, 356-ը՝ 3-րդում, իսկ 381-ը՝ մագիստրատուրայի 1-ին կուրսում: Համակարգի փոփոխման են ենթարկվել բակալավրիատի 1-ին կուրսի 109 ուսանող (31,9%), 2-րդ կուրսի՝ 72 (20,8%), 3-րդ կուրսի՝ 96 (26,9%) և 53 ուսանող (13,9%) մագիստրատուրայի 1-ին կուրսում:

❖ Հասարակական ակտիվություն ցուցաբերած բարձր առաջադիմությամբ ուսանողներին հատկացվել է կրթաթոշակ, բացի պետական կրթաթոշակից՝ հատկացվել են ԵՊՀ-ի և այլ կազմակերպությունների կողմից սահմանված անվանական կրթաթոշակներ, որոնց թիվը 52 է, իսկ ստացողների թիվը՝ 64:

❖ Հաշվետու տարում ևս «Կրթության մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ բուհի վճարովի համակարգում սովորող ուսանողներին հատկացվել են ուսման վարձի զեղչեր: Այդ զեղչերից 1-ին կիսամյակում օգտվել է 1221 ուսանող, 2-րդ կիսամյակում՝ 1851: Նրանցից 1-ին կիսամյակում 851-ը եղել են բակալավրիատի, 194-ը՝ մագիստրատուրայի ուսանողներ, 176-ը՝ աշխատակիցների երեխաներ, իսկ 2-րդ կիսամյակում 1393-ը եղել են բակալավրիատի, 290-ը՝ մագիստրատուրայի ուսանողներ, 168-ը՝ աշխատակիցների երեխաներ: Երկու կիսամյակներում կիրառված զեղչերի գումարը կազմում է ավելի քան 267 մլն դրամ: Կատարված գործընթացը, ըստ ուսուցման ձևի, ֆակուլտետների, մասնագիտությունների, կուրսերի, զեղչված տոկոսի չափի, կարգավիճակի և գումարների, մանրամասն ամփոփվել է առանձին գրքով, որը ներկայացվել է նաև ԿԳՆ:

❖ 2014-15 ուստարում ևս շարունակվել են «SuperVision YSU» ծրագրի միջոցով ֆակուլտետներում ներդրված ուսանողի ուսումնական քարտի էլեկտրոնային տարբերակով ուսանողների անձնական գործի վարումը, ուսանողների տվյալների բազայի լրամշակումը և այլ գործընթացներ:

❖ Ուսումնամեթոդական վարչության կողմից կազմակերպվել և իրականացվել է ելքային արդյունքների վերահսկման ընթացքը: Ամփոփվել, այնուհետև ԿԳՆ են ներկայացվել ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների նախագահների հաշվետվությունները:

❖ Առկա և հեռակա ուսուցման համակարգերում շարունակվել են կրթության որակի բարելավմանը նպաստող կարևոր գործոններից հանդիսացող դասավանդման արդյունավետության վերաբերյալ իրականացվող ուսանողական հարցումների և ԵՊՀ-ում ստացած կրթությունից շրջանավարտների բավարարվածության ամենամյա հարցումների կազմակերպումն ու իրականացումը:

❖ Ուսանողական և շրջանավարտների հարցումներն էլ ավելի արդյունավետ կազմակերպելու նպատակով հաշվետու տարում ամբողջությամբ փոխվել է ուսանողական հարցման հարցաթերթը, և լրամշակվել է շրջանավարտների հարցման հարցաթերթը: Լրամշակվել են նաև համապատասխան կանոնակարգերը:

❖ Տարվել են աշխատանքներ հեռակա ուսուցման ուսանողների շրջանում ուսանողական հարցումն առցանց կազմակերպելու ուղղությամբ:

❖ Շարունակվել են լսարաններում տեսախցիկների տեղադրման աշխատանքները, որոնց շնորհիվ իրականացվել է ամփոփիչ ատեստավորման արդյունքների բողոքարկման գործընթացը:

❖ 2014-2015 ուստարում պատրաստվել և շրջանավարտներին են հանձնվել 3355 դիպլոմ, որոնցից 835-ը՝ առկա ուսուցման համակարգի բակալավրիատում, 1269-ը՝ մագիստրատուրայում, 770-ը՝ հեռակա ուսուցման համակարգի բակալավրիատում, 353-ը՝ մագիստրատուրայում, 86-ը՝ նախորդ տարիների (այդ թվում՝ 2-ը նախորդ տարիների 5-րդ կուրս) շրջանավարտների: Վերականգնվել և տրվել են շրջանավարտների 42 դիպլոմի կրկնօրինակներ:

❖ Հաշվետու տարում ևս որակի ապահովման կենտրոնի հետ վերամշակվել, տպագրվել և բակալավրիատի ու մագիստրատուրայի շրջանավարտներին է հանձնվել միջազգային չափանիշներին համապատասխան երկլեզու (հայերեն և անգլերեն) տարբերակով դիպլոմի հավելված:

❖ Շարունակվել են ուսանողական շարժի հաշվարկման և վերահսկման աշխատանքները: Ձևակերպվել են ՀՀ զինված ուժերում ծառայելու, ազատման, տեղափոխման, վերականգնման, արտերկիր գործուղման, հիվանդությունների պատճառով տարկետման, ինչպես նաև ուսումնական գործընթացին առնչվող այլ հրամաններ:

❖ ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն և ՀՀ ԿԳՆ են ներկայացվել 1-ԳՄ և 3-ԳՄ ձևաչափերով վիճակագրական հաշվետվությունները, որոնք ներառում են քննությունների արդյունքները,

ուսանողների և շրջանավարտների վերաբերյալ այլ տվյալներ, ինչպես նաև ԵՊՀ պրոֆեսորադասախոսական կազմին առնչվող տեղեկատվություն:

❖ Հաշվետու տարում ևս մշակվել են ամբիոնային բեռնվածությունների, զեղչերի, տեղափոխությունների և քննաշրջանի արդյունքների տվյալները ու ամփոփվել են առանձին գրքով:

❖ Նախապատրաստական համապատասխան աշխատանքներից հետո ուսումնական պլաններում նախատեսված պրակտիկաները իրականացնելու համար ներկայումս համալսարանն ունի 85 պայմանագիր, որոնք կնքված են պետական և ոչ պետական տարբեր կազմակերպությունների, հիմնարկ-ձեռնարկությունների և նրանց ստորաբաժանումների հետ (ինչպիսիք են՝ ՀՀ նախագահի աշխատակազմը, ՀՀ վարչապետի աշխատակազմը, ՀՀ Ազգային ժողովը, ՀՀ Սահմանադրական դատարանը, ՀՀ Գերագույն դատարանը, նախարարությունները, ՁԼՄ խմբագրությունները, դպրոցները, միջազգային կազմակերպությունների երևանյան ներկայացուցչությունները): Պրակտիկայի վայրերն ընտրելիս հաշվի են առնվել գործատուների պահանջները, ինչը հետագայում աշխատանքի տեղավորման գործում կնպաստի շրջանավարտների մրցունակ լինելուն, որի շնորհիվ որոշ շրջանավարտներ աշխատանքի են անցել ՀՀ Ազգային ժողովում, Պաշտպանության նախարարությունում, դպրոցներում, դեղագործական կազմակերպություններում, արտադրական ձեռնարկություններում և այլ կազմակերպություններում: Առանձին դեպքերում անհատական կարգով պրակտիկաներ են կազմակերպվել ԵՊՀ-ի հետ համագործակցության պայմանագիր ունեցող այլ պետությունների առաջատար բուհերում և գիտահետազոտական կենտրոններում:

❖ Բացված նոր կրթական ծրագրերում մեծ ուշադրություն է դարձվել պրակտիկաների ծրագրերի կազմման վրա:

❖ Արտադրական պրակտիկայի վայրերն ընտրելիս հաշվի են առնվել աշխատաշուկայի պահանջները, ուսանողների նախասիրությունները, ինչպես նաև անցած տարիների ընթացքում ֆակուլտետների կողմից ներկայացված առաջարկությունները: Նոր կրթական ծրագրերին համապատասխան ընդլայնվել է պրակտիկայի անցկացման աշխարհագրությունը: Արտադրական (այդ թվում՝ մանկավարժական) պրակտիկա են անցել 5919 ուսանող (բակալավր և մագիստրոս), ուսումնական պրակտիկա են անցել 1416 ուսանող, որոնցից 1408-ը՝ դաշտային: Բոլոր պրակտիկաները անցկացվել են՝ համաձայն ռեկտորատի կողմից հաստատված չվացուցակի:

❖ Ռադիոֆիզիկայի ֆակուլտետի ԳԲՀ ռադիոֆիզիկայի և հեռահաղորդակցության ամբիոնի «ԳԲՀ ռադիոֆիզիկա» մասնագիտացման ուսանողները արտադրական պրակտիկան անց են կացրել «Նեյշնլ-ինստրումենթս»-ի հայաստանյան մասնաճյուղում: Ֆիզիկայի ֆակուլտետի Միջուկային ֆիզիկայի ամբիոնի ուսանողները արտադրական պրակտիկան անց են կացրել ՀԱԷԿ ՓԲԸ-ում:

❖ Ուսումնական (դաշտային) պրակտիկան անցկացվել է ԵՊՀ-ի Բյուրականի և Հանքավանի հանգրվաններում (Աշխարհագրության և երկրաբանության, Կենսաբանության ֆակուլտետների ուսանողների համար): Նույն ֆակուլտետների, ինչպես նաև Պատմության, Աստվածաբանության, Դեղագիտության և քիմիայի ֆակուլտետների մի շարք պրակտիկաներ կազմակերպվել են մեկօրյա կամ 2-4 օր տևողությամբ ավտոբուսային երթուղիների ձևով՝ ՀՀ-ում և ԼՂՀ-ում: Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի 1-ին կուրսի ուսանողները ծանոթացել են ԼՂՀ գետահովիտների երկրաձևաբանությանը, եղել են Դրմբոնի և Կաշենի հանքավայրերում, այցելել են Դաղիվանք, Գանձասար, Շուշի և Տիգրանակերտ:

❖ Հաշվետու տարում հատուկ ուշադրություն է դարձվել հայագիտությանը, որի նպատակն էր պրակտիկայի միջոցով էլ ավելի ամրապնդել ուսանողների գիտելիքները նշված ուղղությամբ: Սոցիոլոգիայի ֆակուլտետի ամառային պրակտիկան նվիրված էր Հայոց մեծ եղեռնի վերաբերյալ ղարաբաղյան հասարակության կոլեկտիվ հիշողության ուսումնասիրմանը: Սոցիոլոգիայի ֆակուլտետի արտադրական պրակտիկան, ինչպես անցած 2 տարիներին, այս տարի նույնպես անց է կացվել Շուշիում:

ՄԻՆՉՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

Վարչության պետ՝ *Գալստյան Վաչագան Սարգսի*

Հաշվետու տարում դիմորդների մասնագիտական կողմնորոշմանը նպաստելու, իրազեկության մակարդակը բարձրացնելու նպատակով վարչությունը շարունակել է հետևողական և ակտիվ աշխատանք տանել ավագ դպրոցների 2014-2015 ուստարվա շրջանավարտների հետ: Ուստարվա սկզբից կազմակերպվել են հանդիպում-զրույցներ, քննարկումներ աշակերտների, ծնողների և ուսուցիչների հետ: Աշխատանքի արդյունավետությանը խթանող հանդիպումների ընթացքում ներկայացվել են ԵՊՀ մասնագիտությունները, մանրամասն պարզաբանվել են շարունակական կրթության և ընդհանուր հիմունքներով բակալավրի ծրագրով բուհ ընդունվելու կարգերը: Այդ գործընթացին իրենց ակտիվ մասնակցությունն են ունեցել ֆակուլտետների դեկանները: Աշխատանքները շարունակվել են նաև շարունակական կրթության վերաբերյալ պայմանագրեր ունեցող 16 պետական քոլեջների հետ: Երևանի պետական համալսարանում 18 մասնագիտությունների գծով կրթություն ստանալու նպատակով նշված քոլեջներից 82 հայտ է ներկայացվել:

Հաշվետու ուսումնական տարում ԵՊՀ բոլոր ֆակուլտետների դեկանների և պրոֆեսորադասախոսական կազմի աջակցությամբ կազմակերպվել են ակնարկային և բովանդակային դասախոսություններ Երևան քաղաքի և ՀՀ մարզերի դպրոցների բարձր դասարանների աշակերտների համար: Մեր կրթօջախի մասին լիարժեք պատկերացում կազմելու համար և խիստ կարևորելով հանրակրթական դպրոցների բարձր դասարանների աշակերտների մասնագիտական կողմնորոշման ուղղությամբ տարվող աշխատանքները՝ վարչությունը հաշվետու տարվա ընթացքում մայրաքաղաքի և մարզերի դպրոցների 1825 աշակերտների համար կազմակերպել է նպատակային ճանաչողական այցեր ԵՊՀ, որտեղ հյուրընկալված աշակերտները, ըստ մասնագիտական կողմնորոշման, նաև դասախոսություններ են լսել տարբեր ֆակուլտետներում: Բնագիտական հոսքերի աշակերտների համար անցկացվել են 30 լաբորատոր պարապմունքներ «քիմիա», «ֆիզիկա» և «կենսաբանություն» առարկաներից: Ամբողջ տարվա ընթացքում կազմակերպվել են անվճար դասընթացներ «ինֆորմատիկա և ծրագրավորում», «բանավոր հաղորդակցման մշակույթ», «ստեղծագործական աշխատանք» առարկաներից, որոնց մասնակցել են շուրջ 220 դիմորդներ:

2014-2015 ուսումնական տարում ԵՊՀ-ի կողմից առաջարկվող կրթական ծրագրերի և մասնագիտությունների մարքեթինգն ակտիվացնելու, անհրաժեշտ տեղեկատվությունը հասարակությանը, մասնավորապես դիմորդներին հասանելի դարձնելու նպատակով նախապատրաստվել և 2500 տպաքանակով հրատարակվել է «Դիմորդի ուղեցույց-2015» ձեռնարկը, որն անհրաժեշտ տեղեկատվություն է պարունակում ԵՊՀ ֆակուլտետների, մասնագիտությունների, հեռակա ուսուցման համակարգի, նախապատրաստական դասընթացների և ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի մասին: Նույն նպատակով պատրաստվել և 5000 տպաքանակով հրատարակվել են նաև ԵՊՀ-ն ներկայացնող գունավոր բուկլետներ: Ուղեցույցները և բուկլետները անվճար բաժանվել են հանրապետության հանրակրթական բոլոր հաստատություններին: Ինչպես հարց ու պատասխանի, այնպես էլ դիմորդի ուղեցույցը կայքում տեղադրելու միջոցով կատարելագործվել է համալսարանի ինտերնետային կայքում դիմորդների հետ տարվող աշխատանքների լուսաբանումը:

Արդեն բարի ավանդույթ է դարձել հանրակրթական դպրոցների ավարտական դասարանների աշակերտների համար տարբեր առարկաների գծով օլիմպիադայի կազմակերպումը: Հաշվետու տարում այն անցկացվել է Երևանում, Աբովյանում, Գյումրիում, Վանաձորում, Իջևանում, Արարատում, Գավառում, Գորիսում և Արմավիրում, Աշտարակում և Եղեգնաձորում: Նախորդ տարիների համեմատ՝ մեծացել է մասնակից դպրոցների աշխարհագրությունը, և աճել է մասնակիցների թիվը: Հատկանշական

է, որ հաշվետու տարում օլիմպիադան կազմակերպվել է ՀՀ բոլոր մարզերում, ինչը յուրատեսակ ստուգատես է բարձր դասարանների աշակերտների համար նախքան միասնական քննություններ հանձնելը, միևնույն ժամանակ նպաստում է նրանց մասնագիտության ընտրությանը: ՀՀ 269 դպրոցներից օլիմպիադային մասնակցել է 3010 աշակերտ: Հաղթող են ճանաչվել 465 մասնակիցներ, որոնցից 221-ը արժանացել են I, II, III կարգի դիպլոմների, իսկ 244-ը՝ գովասանագրերի: Բոլորին տրվել է նաև ԵՊՀ-ի կողմից հրատարակված արժեքավոր գրքեր: Պարգևատրությունը կատարվել է ԵՊՀ ղեկավարության կողմից՝ մեծ հանդիսությամբ: Շնորհակալագրերով և արժեքավոր գրքերով պարգևատրվել են նաև հանրապետության 18 դպրոցներ՝ լավագույն մասնակցություն և բարձր առաջադիմություն ցուցաբերելու համար: Ուշագրավ է, որ տարեցտարի նկատվում է աշակերտների մասնակցության աճ, որն էլ յուրատեսակ հաջողության գրավական է: Հարկ է նշել, որ օլիմպիադայում պարգևատրված աշակերտների շուրջ 60%-ը դիմել է ԵՊՀ: Օլիմպիադայի մասնակիցների համար կազմակերպվել է հանդիպում ԵՊՀ ռեկտորի և ֆակուլտետների դեկանների հետ: Ըստ մասնագիտությունների՝ ֆակուլտետներում կազմակերպվել է «բաց դռների» օր, որին մասնակցել են շուրջ 1000 աշակերտ:

2014-15թթ. Մինչհամալսարանական կրթության վարչությունը մեծ աշխատանքներ է տարել ՀՀ մարզերում (Շիրակ, Արարատ, Տավուշ, Արմավիր, Սյունիք, Գեղարքունիք, Արագածոտն, Լոռի), որտեղ ԵՊՀ կրթական ծրագրերի և մասնագիտությունների մասին անհրաժեշտ տեղեկատվություն ապահովելու նպատակով պաշտոնապես բացվել են ԵՊՀ ներկայացուցչություններ, որոնց թվին հաշվետու տարում ավելացել են Կոտայքի, Վայոց ձորի մարզերը: ԵՊՀ-ն, հիմք ունենալով նախորդ տարիների համագործակցությունը ավագ դպրոցների հետ, 2015 թ. ևս համագործակցության պայմանագրեր է կնքել Երևանի ևս 2 ավագ դպրոցների հետ՝ դրանց թիվը հասցնելով 21-ի, մարզերում՝ 3, հասցնելով 13-ի:

Վերը նշված ավագ դպրոցներում ԵՊՀ տարբեր ֆակուլտետների 36 փորձառու դասախոսներ լրացուցիչ կրթական ծրագրերով հատուկ դասընթացներ են վարել: Դասախոսների վարձատրությունը իրականացվել է ԵՊՀ-ի միջոցների հաշվին: Նշված ծրագիրը բավականաչափ մեծ արձագանք է ստացել ինչպես դպրոցների տնօրինության, այնպես էլ ծնողական խորհուրդների կողմից:

Վարչության կողմից աշակերտների համար կազմակերպվել են նաև ակնարկային դասախոսություններ, ուսուցիչների համար մեթոդական խորհրդատվություն և սեմինարներ տարբեր առարկաների գծով, դասագրքերի քննարկումներ մարզերի պայմանագրային ավագ դպրոցներում: Վարչությունը իրականացնում է նաև «Նոր գրքեր դպրոցի գրադարանին» ծրագիրը՝ նպատակ ունենալով հարստացնել դպրոցների գրադարանները նոր գրքերով: ԵՊՀ-ի կողմից 2014 թ. հոկտեմբերին այդ այցերը եղել են Գորիսում, Բերդավանում, Վարդենիկում, Գյումրիում, Վանաձորում, Գուգարքում, իսկ ապրիլին՝ Արարատում, Տավուշում, Չարենցավանում, Վաղարշապատում, Բերդում: Դպրոցների տնօրենները իրենց երախտագիտությունն ու գոհունակությունն են հայտնել այդ այցերի համար՝ նշելով դրանց կարևորությունը աշակերտների մասնագիտական կողմնորոշման գործում: Վարչությունը մասնակցել է նաև «Թալին 2015» աշակերտական տոնավաճառին՝ ներկայացնելով ԵՊՀ-ն դիմորդի ուղեցույցի, բուկլետների և խորհրդատվության միջոցով: Տարվա ընթացքում վարչության աշխատանքները բազմիցս լուսաբանել են հանրապետական և մարզային հեռուստաընկերությունները, մամուլը, ինչպես նաև «Երևանի համալսարան» թերթը:

Ինչպես յուրաքանչյուր տարի, հաշվետու ուստարում ևս վարչությունը առկա և հեռակա ուսուցման համակարգերի դիմորդների համար կատարել է մշտական տեղեկատվական աշխատանք՝ մեծապես օժանդակելով ԵՊՀ 2015 թ. ընդունելության կազմակերպման գործընթացին:

Հաշվետու տարում վարչությունը ձգտել է կատարելագործել նախապատրաստական դասընթացների համակարգը՝ այդ նպատակով ձևավորելով դասընթացների լայն ընտրանի՝ ըստ կրթական ծրագրերի՝ ապահովելով նաև դրանց իրականացման ճկուն ժամանակացույց:

Նախապատրաստական դասընթացների կրթական ծրագրերի բովանդակությունն ու որակն ապահովելու, ինչպես նաև ավարտական քննությունների թեստերը պատրաստելու նպատակով ԵՊՀ պրոֆեսորադասախոսական կազմի առավել հմուտ և փորձառու ներկայացուցիչներից ձևավորվել է

փորձագիտական խորհուրդ՝ ըստ հանրակրթական առարկաների: Ունկնդիրների ուսումը կազմակերպվել է փորձագիտական խորհրդի կողմից նախապես քննարկված և հաստատված ուսումնական պլաններով, որոնք համապատասխանում են ընդունելության քննությունների համար նախատեսված ծրագրերին: Հատուկ ուշադրություն է դարձվել, որ թեստերը կազմվեն պետական ծրագրերի շրջանակներում, չլինեն զուգաձևություններ և վիճահարույց պատասխաններ: Դասավանդվող բոլոր առարկաներից 2015 թ. փետրվար ամսին կազմակերպվել և անցկացվել են ստուգարքներ, ապրիլին՝ ստուգողական գրավոր աշխատանքներ, իսկ մայիսի վերջին տասնօրյակում՝ ավարտական քննություններ:

Ունկնդիրների համար, ըստ ընտրած մասնագիտությունների, ուսուցումը կազմակերպվել է 12 հանրակրթական առարկաներից: Նախապատրաստական դասընթացներ բաժնի ունկնդիրների մեծ մասը, հաջողությամբ հանձնելով առկա ուսուցման ընդունելության միասնական և կենտրոնացված քննությունները, ընդունվել է ԵՊՀ տարբեր ֆակուլտետներ:

ՀԵՏԲՈՒՀԱԿԱՆ ԼՐԱՑՈՒՑԻՉ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

Վարչության պետ՝ *Աղասյան Ժասմեն Արտաշեսի*

Կրթական ծրագրերը՝ որակավորման բարձրացում
մասնագիտական վերապատրաստում
ստաժավորում

2014/2015 ուսումնական տարում Հետբուհական լրացուցիչ կրթության վարչության կողմից երեք կրթական ծրագրերով իրականացվել են հետևյալ աշխատանքները.

Ա. ՈՒՍՈՒՑՈՒՄ ԸՍՏ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ

1. Ունկնդիրների թիվն ըստ կրթական ծրագրերի

Հ/հ	Կրթական ծրագրի անվանումը	Ունկնդիրների թիվը		
		ընդամենը	ԵՊՀ	այլ հաստա-տություններ
1.	Որակավորման բարձրացում	2033	2023	10
2.	Մասնագիտական վերապատրաստում	414	-	414
3.	Ստաժավորում	5	-	5
	Ընդամենը	**2452**	**2023**	**429**

2. ԵՊՀ պրոֆեսորադասախոսական կազմի որակավորման բարձրացում

2.1. Ըստ կրթական կառուցամասի մոդուլների և դասընթացների

Հ/հ	Մոդուլի և դասընթացի անվանումը	Ունկնդիրների թիվը
1.	**Անգլերենը ակադեմիական միջավայրում**	**164**
2.	**Տեղեկատվական տեխնոլոգիաներ**	**512**
2.1.	Համակարգչային գրագիտություն	162
2.2.	Էսարանային ցուցադրությունների պատրաստում	173
2.3.	Կիրառական ծրագրային փաթեթներ (MATLAB, Mathematics)	56
2.4.	Ուսուցողական Case-փաթեթների պատրաստում	121
3.	**Մանկավարժական-հոգեբանական պատրաստություն**	**472**
3.1.	Դասավանդման, ուսումնառության և գնահատման ժամանակակից մեթոդներ	155
3.2.	Ուսումնական ծրագրերի մշակման հիմունքներ	94
3.3.	Կրթության հոգեբանություն	101
3.4.	Խոսքի մշակույթ (հռետորական արվեստ)	122
4.	**Մասնագիտական պատրաստություն**	**539**

4.1.	**Մասնագիտության արդի հիմնախնդիրները**	**242**
4.1.1.	Անգլերեն	57
4.1.2.	Իրավագիտություն	34
4.1.3.	Պատմություն	34
4.1.4.	Իսպաներեն	24
4.1.5.	Ֆիզդաստիարակություն	16
4.1.6.	Տնտեսագիտություն	15
4.1.7.	Աշխարհագրություն	13
4.1.8.	Կենսաբանություն	12
4.1.9.	Արևելագիտություն	10
4.1.10.	Արտասահմանյան գրականություն	9
4.1.11.	Ֆիզիկա	8
4.1.12.	Մեխանիկա	8
4.1.13.	Միջազգային հարաբերություններ	2
4.2.	**Կամընտրական դասընթացներ**	**297**
4.2.1.	Անգլերեն	88
4.2.2.	Ռուսաց լեզու	31
4.2.3.	Գրականագիտություն	28
4.2.4.	Գերմաներեն	28
4.2.5.	Արտգրականություն	24
4.2.6.	Միջազգային հարաբերություններ	20
4.2.7.	Ժուռնալիստիկա	17
4.2.8.	Հին հունարեն	16
4.2.9.	Ֆիզդաստիարակություն	16
4.2.10.	Մեխանիկա	13
4.2.11.	Փիլիսոփայություն	12
4.2.12.	Արևելագիտություն	2
4.2.13.	Կենսատեխնոլոգիա	2
5.	**Որակավորման բարձրացման այլ ձևեր**	**346**
	Ընդամենը	**2033**

2.2. Ունկնդիրների թիվն ըստ ֆակուլտետների և դասընթացների

Հ/հ	Ֆակուլտետի և/ կամ ամբիոնի անվանումը	Ունկնդիրների թիվը ըստ դասընթացների												Ընդամենը
		Անգլերենը ակադեմիական միջավայրում	Համակարգչային գրագիտություն	Լաբորատորային գոցատրություններին պատրաստում	Կիրառական ծրագրային փաթեթներ	Ուսուցողական Case-փաթեթների պատրաստում	Դասավանդման, ուսումնառության և գնահատման ժամանակակից մեթոդներ	Ուսումնական ծրագրերի մշակման հիմունքներ	Կրթության հոգեբանություն	Խոսքի մշակույթ	Մասնագիտության արդի հիմնախնդիրները	Մասնագիտական դասընթացներ մեկ	Որակավորման բարձրացման այլ ձևեր	
1.	Մաթեմատիկայի և մեխանիկայի	3	4	3	9	5	7	8	2	7	8	7	6	**69**
2.	Ինֆորմ. և կիրառ. մաթեմատիկայի	5	3	3	10	1	6	3	1	5	-	4	9	**50**
3.	Ֆիզիկայի	3	3	1	7	1	1	1	3	2	5	2	9	**38**
4.	Ռադիոֆիզիկայի	2	2	2	1	-	2	1	-	-	3	-	4	**17**
5.	Դեղագիտության և քիմիայի	-	1	2	9	2	2	4	1	3	-	-	5	**29**
6.	Կենսաբանության	6	7	7	-	4	6	1	5	6	12	-	12	**66**
7.	Աշխարհագր. և երկրաբանության	6	10	14	6	9	14	8	15	7	13	-	9	**111**
8.	Տնտեսագիտության և կառավարման	10	8	13	14	5	10	5	3	6	15	-	19	**108**
9.	Փիլիսոփայության և հոգեբանության	9	10	12	-	5	10	-	2	7	-	13	16	**84**
10.	Սոցիոլոգիայի	4	8	8	-	-	1	-	4	-	-	-	12	**37**
11.	Պատմության	12	12	11	-	9	10	8	7	10	34	1	9	**123**
12.	Միջազգային հարաբերությունների	11	8	8	-	9	13	8	9	10	3	22	19	**120**
13.	Արևելագիտության	12	12	11	-	6	9	8	3	9	10	-	16	**96**
14.	Հայ բանասիրության	21	9	11	-	7	5	8	12	9	-	39	42	**163**
15.	Ժուռնալիստիկայի	4	4	6	-	2	2	2	5	5	-	17	9	**56**
16.	Ռուս բանասիրության	14	7	7	-	8	7	9	8	5	-	51	32	**148**
17.	Ռոմանագերման. Բանասիրության	26	33	37	-	45	40	18	17	23	88	121	89	**537**
18.	Իրավագիտության	3	7	5	-	1	1	-	-	1	34	-	2	**54**
19.	Աստվածաբանության	3	1	1	-	-	-	-	-	2	-	1	1	**9**
20.	ՏՏ գիտակրթական կենտրոն	1	-	-	-	-	3	-	1	2	-	-	1	**8**
21.	Միջազգային կրթական կենտրոն	3	-	-	-	-	1	-	-	-	1	1	2	**8**
22.	Ֆիզդաստիարակու-թյան և սպորտի	2	9	8	-	-	-	-	-	-	16	16	13	**64**
23.	Քաղպաշտպանության	2	4	3	-	2	2	2	2	1	-	-	4	**22**
24.	Վարչական աշխատող	1	-	-	-	-	1	-	-	-	-	-	-	**2**
25.	Իջևանի մասնաճյուղ	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	4	**4**

26.	Այլ բուհեր	-	-	-	-	-	2	-	1	-	-	2	2	**7**
27.	Ազատ ունկնդիր	1	-	-	-	-	-	-	-	2	-	-	-	**3**
	Ընդամենը	**164**	**162**	**173**	**56**	**121**	**155**	**94**	**101**	**122**	**242**	**297**	**346**	**2033**

2.3. Աշխատանքների թիվն ըստ հետազոտական-մեթոդական կառուցամասի բաղադրիչների

Հ/հ	Ֆակուլտետի և/կամ ամբիոնի անվանումը	Կառուցամասի բաղադրիչները							Ընդա-մենը
		հոդված	մեթոդ. աշխ.	զեկու-ցում	ուսումն. ձեռն.	դասա-գիրք	մենա-գրութ.	ատեն. պաշտ.	
1.	Մաթեմատիկայի և մեխանիկայի	18	3	1	-	1	19	-	**42**
2.	Ինֆորմ. և կիրառ. մաթեմատիկայի	25	1	4	-	-	9	-	**39**
3.	Ֆիզիկայի	38	-	2	-	-	11	1	**52**
4.	Ռադիոֆիզիկայի	25	1	-	-	-	15	1	**42**
5.	Դեղագիտության և քիմիայի	24	2	3	-	-	34	-	**63**
6.	Կենսաբանության	92	3	4	1	1	56	-	**157**
7.	Աշխարհագր. և երկրաբանության	45	6	4	1	1	33	3	**93**
8.	Տնտեսագիտության և կառավարման	62	6	12	-	3	19	3	**105**
9.	Փիլիսոփայության և հոգեբանության	29	5	7	6	2	58	1	**108**
10.	Սոցիոլոգիայի	39	-	9	-	12	20	1	**81**
11.	Պատմության	90	2	1	4	8	48	2	**155**
12.	Միջազգային հարաբերությունների	45	4	5	2	2	28	3	**89**
13.	Արևելագիտության	43	4	4	2	5	16	3	**77**
14.	Հայ բանասիրության	37	4	9	2	4	29	4	**89**
15.	Ժուռնալիստիկայի	8	2	1	-	1	10	1	**23**
16.	Ռուս բանասիրության	12	3	4	1	-	11	2	**33**
17.	Ռոմանագերմ. բանասիրության	153	7	15	11	7	51	10	**254**
18.	Իրավագիտության	39	40	7	5	6	11	-	**108**
19.	Աստվածաբանության	10	2	-	-	1	-	-	**13**
20.	ՏՏ գիտակրթական կենտրոն	10	1	-	-	-	-	-	**11**
21.	Միջազգային կրթական կենտրոն	12	-	-	-	-	9	2	**23**
22.	Ֆիզդաստիարակության ամբիոն	3	-	1	-	-	-	-	**4**
23.	Քաղպաշտպանության ամբիոն	-	-	-	-	-	-	-	**-**
	Ընդամենը	**859**	**96**	**93**	**35**	**54**	**487**	**37**	**1661**

3. Մասնագիտական վերապատրաստում ըստ կրթական ենթածրագրերի

Հ/հ	Կրթական ենթածրագրի անվանումը	Ունկնդիրների թիվը
1.	ՀՀ Ազգային անվտանգության խորհրդի աշխատակազմի քաղաքացիական հատուկ ծառայողների վերապատրաստում	20
2.	ՀՀ պաշտպանության նախարարության աշխատակազմի զինվորականների վերապատրաստում	67
3.	ՀՀ պաշտպանության նախարարության աշխատակազմի քաղաքացիական հատուկ ծառայողների վերապատրաստում	132
4.	ՀՀ քաղաքացիական ծառայողների վերապատրաստում	171
5.	ՀՀ համայնքային ծառայողների վերապատրաստում	15
6.	«Հոգեբանություն» մասնագիտությամբ վերապատրաստում	9
	Ընդամենը	**414**

Բ. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԲԵՌՆՎԱԾՈՒԹՅՈՒՆ

1. Ըստ կրթական ծրագրերի

Հ/հ	Կրթական ծրագրի անվանումը	Ժամաքանակը		
		ընդամենը	բեռնված.	ժամավճար
	Ա. Դասախոսների որակավորման բարձրացում	**3 803**	1 554	2 249
1.	**Բ. Մասնագիտական վերապատրաստում**	**1 661**	-	1 661
	ՀՀ քաղծառայողների վերապատրաստում	992	-	992
2.	«Հոգեբանություն» մասնագիտությամբ վերապատրաստում	669	-	669
	Ընդամենը	**5 464**	**1 554**	**3 910**

2014-2015 ուստարում Երևանի պետական համալսարանում լրացուցիչ կրթությունը զարգացել է ըստ հիմնական կրթական ծրագրերի.

1. ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԲԱՐՁՐԱՑՈՒՄ

1.1. Շարունակվել է կրեդիտային համակարգով ԵՊՀ պրոֆեսորադասախոսական կազմի որակավորման բարձրացման հնգամյա կրթագիտական ծրագիրը, որի դասընթացներին հաշվետու տարում մասնակցել է 2033 ունկնդիր: Անգլերենի դասընթացի 164 ունկնդրից 100-ը ստացել է ITEP միջազգային հավաստագրում:

1.2. Ծրագրի կրթական կառուցամասում առաջատարը եղել է մասնագիտական պատրաստության բաղադրիչը. 26 մասնագիտությամբ կազմակերպված դասընթացներին մասնակցել է 539 ունկնդիր:

1.3. Կրեդիտային համակարգը ակնհայտորեն խթանել է ԵՊՀ դասախոսների կրթական մոտիվացիան՝ նպաստելով նաև ակադեմիական շարժունությանը. ունկնդիրներից 346-ը հիմնական ծրագրից դուրս մասնակցել է ԵՊՀ-ում, ՀՀ-ում և արտերկրում կազմակերպված մասնագիտական կատարելագործման տարբեր դասընթացների՝ կարճաժամկետ և երկարաժամկետ ծրագրերով՝ որակավորման բարձրացման իրենց հիմնական ծրագրի կատարողականին փոխանցելով 1017 կրեդիտ: Դասախոսների կրթական պահանջմունքները բավարարելու նպատակով ընդլայնվել է որակավորման բարձրացման լրացուցիչ դասընթացների ցանկը:

1.4. Հաշվետու տարում ակտիվացել է դասախոսների մասնակցությունը ծրագրի հետազոտական-մեթոդական կառուցամասին. 441 ունկնդիր ներկայացրել է 1661 աշխատանք: Դրանք ներառում են հիմնականում 2 բաղադրիչ՝ գիտական հոդված (859) և զեկուցում գիտաժողովում (487): Քիչ են ներկայացված մյուս բաղադրիչները՝ դասագիրք, մենագրություն, ուսումնական ձեռնարկ և ուսումնամեթոդական աշխատանք (ընդամենը՝ 315):

1.5. Հանրապետության այլ բուհերի 9 դասախոս համալսարանում կատարելագործվել է տարբեր ծրագրերով՝ միաժամանակ ծանոթանալով ԵՊՀ ամբիոնների կրթական և հետազոտական աշխատանքներին: ՌԴ Բելգորոդի պետական ազգային հետազոտական համալսարանից 2 դասախոս ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետում անցել է որակավորման բարձրացում անհատական ծրագրով՝ «Կենսատեխնոլոգիա» մասնագիտությամբ:

2. ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

2.1. Հասարակության հետ կապերի հետագա զարգացումը ապահովելու և հանրային ծրագրերում ԵՊՀ առավելագույն ներգրավումը իրագործելու նպատակով վարչությունը շարունակել է հարատև կրթության ծրագրերի իրականացումը 2 հիմնական ուղղությամբ՝ հանրային ծառայողների և հոգեբանների մասնագիտական վերապատրաստում:

2.2. ԵՊՀ-ում են վերապատրաստվել ՀՀ Ազգային անվտանգության խորհրդի, ՀՀ պաշտպանության նախարարության և պետական այլ կառույցների աշխատակազմերի 384 հանրային ծառայող և զինծառայող՝ 7 մասնագիտական կրթական ենթածրագրերով: ԵԱՀԿ-ի հետ համագործակցությամբ իրականացվել է քաղաքացիական և համայնքային 30 ծառայողի վերապատրաստում՝ «Ամբողջականության հիմունքները հանրային ծառայության համակարգում» ծրագրի շրջանակում:

2.3. «Հոգեբանություն» մասնագիտությամբ վերապատրաստման դասընթաց է կազմակերպվել զուգահեռաբար 2 խմբի համար: 2-րդ տարվա խմբի 9 ունկնդիրները ամփոփիչ ատեստավորում են անցել՝ հաջողությամբ ավարտելով դասընթացը: Ծրագիրը վերակազմակերպվել է «Կրթության մասին» և «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» օրենքներում կատարված փոփոխություններին համահունչ. նոր ծրագիրը ներկայացվել է երկու մակարդակով՝ 5-ական ամիս ժամկետով:

2.4. Վարչությունը մասնագիտական աջակցություն և խորհրդատվություն է ցուցաբերել Արցախի պետական համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմի որակավորման բարձրացման ծրագրի իրականացմանը:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

Վարչության պետ՝ *Մարգարով Ալեքսանդր Ալեքսանդրի, քաղ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր*

Երևանի պետական համալսարանը միջազգային համագործակցության պայմանագրեր և համաձայնագրեր ունի աշխարհի շուրջ 50 երկրների 253 համալսարանների, հաստատությունների և միջազգային կազմակերպությունների հետ: Առկա պայմանագրերի շրջանակներում յուրաքանչյուր ուսումնական տարվա ընթացքում տեղի են ունենում պրոֆեսորադասախոսական կազմի և ուսանողների փոխանակումներ: Այսպես, ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի ուսանողները վերապատրաստման դասընթացների են մասնակցում Քուվեյթում գործող արաբերեն լեզվի կենտրոններում կազմակերպվող և տարբեր տևողություն ունեցող դասընթացներին (3 ամիս, 10 ամիս): Ռուսաստանի Դաշնության Միջուկային հետազոտությունների միացյալ ինստիտուտում Ֆիզիկայի ֆակուլտետի լավագույն ուսանողներին գիտահետազոտական համատեղ աշխատանք կատարելու հնարավորություն է տրվում: Ռուս բանասիրության ֆակուլտետի ուսանողները բուլղարերենի վերապատրաստում են անցնում Բուլղարիայի Սուրբ Կլիմենտ Օհրիդսկու անվան համալսարանում, ինչպես նաև հունարեն լեզվի դասընթացների են մասնակցում Հունաստանում՝ Սալոնիկի Արիստոտելի անվան համալսարանում: Վերջին դասընթացներին մասնակցում են նաև Պատմության ֆակուլտետի լավագույն ուսանողները: Ի դեպ, ուսանողները մասնակցում են նաև հունական «Յասոն» կրթամշակութային ծրագրին: Իտալիայի Կա՛ Ֆոսկարի համալսարանում իտալերենի վերապատրաստման դասընթացներին մասնակցում են Ռոմանագերմանական բանասիրության ֆակուլտետի ուսանողները:

Առավել ակտիվ շարունակվում է համագործակցությունը Արիզոնայի համալսարանի (ԱՄՆ), Սանկտ Պետերբուրգի պետական համալսարանի (Ռուսաստան), Կազանի Դաշնային համալսարանի (Ռուսաստան), Բոլոնիայի համալսարանի (Իտալիա), Արևելյան լեզուների և մշակույթների ազգային ինստիտուտի (Ֆրանսիա), Մոնպելիե-I համալսարանի (Ֆրանսիա), Պրովանսի համալսարանի (Ֆրանսիա), Մաղտըմգուլիի անվան թուրքմենական պետական համալսարանի (Թուրքմենստան), Քուվեյթի համալսարանի (Քուվեյթ), Կրակովի Յագելլոնյան համալսարանի (Լեհաստան) հետ: 2014-2015 ուսումնական տարվա ընթացքում ստորագրվել են պայմանագրեր բուհերի, հետազոտական կենտրոնների, հիմնադրամների և ընկերությունների հետ:

Դրանք են՝

- Միջազգային նորարարական համալսարան, ՌԴ
- Լիբանանի Հայոց թեմի առաջնորդարան, Լիբանան
- «Ազգային գյուղատնտեսության ռուսական ակադեմիայի և ՌԴ նախագահին կից պետական ծառայության» մասնաճյուղի կառավարման հարավային ռուսական ինստիտուտ, ՌԴ
- Բաբեշ-Բոյայի համալսարան, Ռումինիա
- Ռեզեգնե համալսարան, Լատվիա
- Վլադիմիրի պետական համալսարան, ՌԴ
- Հումբոլդտի համալսարան, Գերմանիա
- Կառլովի համալսարան, Չեխիա
- Տնտեսագիտության բարձրագույն դպրոց ազգային հետազոտական համալսարան, ՌԴ
- Ուրալի պետական տնտեսագիտական համալսարան, ՌԴ
- Լվովի առևտրի ակադեմիա, Ուկրաինա
- Ս. Ա. Եսենինի անվան Ռյազանի պետական համալսարան, ՌԴ

- Դոնեցկի ազգային համալսարան, Ուկրաինա
- Թեհրանի համալսարան, Իրան
- Սանկտ Պետերբուրգի պետական տնտեսագիտական համալսարան, ՌԴ
- Հ. Ի. Իբրահիմովի անվան ռուսական գիտությունների ակադեմիայի համակարգային գիտահետազոտական ինստիտուտ, ՌԴ
- Գրոզնու պետական նավթային տեխնիկական համալսարան, ՌԴ
- Չերկասի ազգային համալսարան, Ուկրաինա
- Մշակութային դիվանագիտության ինստիտուտ, Գերմանիա
- Վորոնեժի պետական համալսարան, ՌԴ
- Պենզայի պետական համալսարան, ՌԴ
- Սննդի արտադրության Մոսկվայի պետական համալսարան, ՌԴ
- Ազգային հետազոտական համալսարան (МИЭТ), ՌԴ
- Ազգերի բարեկամության ռուսական համալսարանի Սոչիի մասնաճյուղ, ՌԴ

Վերակնքվել են Արևելյան լեզուների և քաղաքակրթությունների ազգային ինստիտուտի (Ֆրանսիա), Ի. Ջավախիշվիլիի անվան Թբիլիսիի պետական համալսարանի (Վրաստան), Ֆլորենցիայի համալսարանի (Իտալիա), Քուվեյթի համալսարանի (Քուվեյթ) հետ ստորագրված պայմանագրերը:

Ակտիվացել է նաև ֆակուլտետների միջազգային համագործակցությունը: Այսպես, համագործակցության պայմանագրեր են կնքվել ԵՊՀ իրավագիտության և Մոնպելիե-1 համալսարանի (Ֆրանսիա) իրավագիտության և քաղաքագիտության, ԵՊՀ միջազգային հարաբերությունների և Մոսկվայի պետական համալսարանի (ՌԴ) քաղաքագիտության ֆակուլտետների, ԵՊՀ միջազգային հարաբերությունների և Կոնֆուցիոսի ինստիտուտի (Չինաստան) հայաստանյան մասնաճյուղի միջև:

Ինչպես և նախորդ տարիներին, այնպես էլ 2014-2015 ուսումնական տարում Երևանի պետական համալսարանն ակտիվ մասնակցություն է ցուցաբերել տարբեր միջազգային գիտաժողովների, սեմինարների և քննարկումների կազմակերպմանը: Միևնույն ժամանակ ԵՊՀ միջազգային համագործակցության վարչությունը տարբեր գիտակրթական միջոցառումների, սեմինարների, կրթական ծրագրերի և տեղեկատվական ցուցահանդեսների կազմակերպման գործում աջակցել է ՀՀ-ում գործող միջազգային կազմակերպություններին և ՀՀ-ում հավատարմագրված դեսպանություններին:

2014 թ. սեպտեմբերի 18-ից 19-ը ԵՊՀ-ում կազմակերպվել է «Հայ-գերմանական հարաբերությունների ավելի քան 100 տարին» խորագրով միջազգային գիտաժողով, որի նախաձեռնողներն էին ԵՊՀ աստվածաբանության ֆակուլտետը և Հալլե-Վիտենբերգի համալսարանի «Մեսրոպ» հայագիտական հետազոտությունների կենտրոնը:

2014 թ. հոկտեմբերի 9-ին ՀՀ-ում Ֆրանսիայի և Գերմանիայի դեսպանությունների հետ ԵՊՀ-ում կազմակերպվել է «Խաղաղության կորստից մինչև Եվրոպական միության հիմնում» խորագրով միջոցառում, որի ժամանակ ՀՀ-ում Ֆրանսիայի և Գերմանիայի դեսպանները ներկայացրել են 1-ին աշխարհամարտի քաղաքական դրդապատճառները, հետևանքները և դրանց անդրադարձը Եվրոպայի վրա:

2014 թ. հոկտեմբերի 27-ին ԵՊՀ-ում կազմակերպվել է Վատիկանի մշակույթի քահանայապետական խորհրդի նախագահ, ԵՊՀ պատվավոր դոկտոր, կարդինալ Ջանֆրանկո Ռավազիի հեղինակած «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ. Քրիստոնեության ընդհանուր ժառանգություն» գրքի հայերեն և ռուսերեն թարգմանության շնորհանդեսը:

2014 թ. նոյեմբերի 6-ին ԵՊՀ-ում կազմակերպվել է Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպության համալսարանական լիգայի «Եվրասիայի տեղեկատվական անվտանգության ապահովման արդիական խնդիրները» խորագրով սեմինար, որը վարել է լիգայի գործադիր տնօրեն, պրոֆեսոր Իգոր Պանարինը: Սեմինար-դասախոսության ընթացքում խոսվել է Եվրասիական տարածաշրջանի անվտանգության ապահովման գործընթացում ՀԱՊԿ-ի դերի,

գաղափարախոսությունների մեթոդիկայի, տեղեկատվական պատերազմների տեսության և այլ թեմաների մասին:

2014 թ. նոյեմբերի 10-ից 14-ը «Հայաստան-ՆԱՏՕ. Անհատական գործընկերության գործողությունների ծրագրի» շրջանակում Հայաստանում անցկացվել է «ՆԱՏՕ-ի շաբաթ» խորագրով հերթական՝ 8-րդ միջոցառումը, որի շրջանակում ԵՊՀ-ում հյուրընկալվել են և համալսարանականների համար ելույթ ունեցել ՀՀ-ում Մեծ Բրիտանիայի արտակարգ և լիազոր դեսպան Քաթրին Լիչը, ՀՀ-ում ԱՄՆ արտակարգ և լիազոր դեսպան Ջոն Հեֆֆերնը, ՆԱՏՕ-ի անդամ պետությունների ռազմական կցորդները, ՀՀ-ում գործող մի շարք դեսպանատների և ՀՀ ԱԳՆ ներկայացուցիչները, ՆԱՏՕ-ում Հայաստանի մշտական ներկայացուցիչ, դեսպան Սամվել Մկրտչյանը:

2015 թ. հունիսի 26-ին ԵՊՀ-ում կազմակերպվել է «Թուրքմենստանի մշտական չեզոքության կարգավիճակը կայուն զարգացման և միջազգային կառուցողական համագործակցության հիմք» խորագրով միջազգային գիտաժողովը, որին մասնակցել են Թուրքմենստանի, Չինաստանի, Հնդկաստանի, Իրանի, Ճապոնիայի, Բելառուսի, Ղազախստանի դեսպաններն ու դեսպանությունների ներկայացուցիչներ:

ԵՊՀ-ի և արտասահմանյան համալսարանների ու հաստատությունների հետ կնքված պայմանագրերի շրջանակներում հաշվետու տարում կազմակերպվել են փոխայցելություններ, որոնց ընթացքում քննարկվել են երկկողմանի հետաքրքրության ոլորտներ, իրականացվել են ճանաչողական այցեր՝ դրանով իսկ ամրապնդելով և էլ ավելի զարգացնելով արդեն առկա համագործակցությունները:

Այսպես՝

- 2014 թ. սեպտեմբերի 18-ից 19-ը ԵՊՀ ռեկտոր Արամ Սիմոնյանի գլխավորած պատվիրակությունը մեկնել է Դոնի Ռոստով՝ մասնակցելու «Կազակներն ու լեռնականները Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին» խորագրով միջազգային երկօրյա գիտական համաժողովին: Աշխատանքային այցի ընթացքում պատվիրակության անդամներն ունեցել են մի շարք հանդիպումներ, այդ թվում՝ Դոնի Ռոստովի պետական տեխնիկական համալսարանի ռեկտորի հրավերով այցելել են այդ բուհ, քննարկել բուհերի միջև հնարավոր համագործակցության ուղղությունները:
- 2014 թ. հոկտեմբերի 20-ին Մոսկվայի Մ. Ա. Շոլոխովի անվան պետական հումանիտար համալսարանի հետ համագործակցության շրջանակում ԵՊՀ է այցելել այդ համալսարանի պատվիրակությունը: Կողմերը քննարկել են գիտության, դասավանդման մեթոդիկայի մշակման, ինչպես նաև ուսանողների փոխանակման բնագավառներում համագործակցության հնարավորությունները:
- 2014 թ. նոյեմբերի 7-ին ԵՊՀ ռեկտոր Արամ Սիմոնյանի գլխավորած պատվիրակությունը մեկնել է Ռումինիա՝ մասնակցելու Կլուժ-Նապոկա քաղաքի Բաբեշ-Բոյայ համալսարանի Հայագիտության ինստիտուտի բացմանը: Այցի ընթացքում տեղի է ունեցել երկու համալսարանների ռեկտորների առանձնազրույցը: Ռեկտորները պայմանավորվել են համագործակցության պայմանագրեր կնքել Կլուժի համալսարանի և ԵՊՀ-ի, ինչպես նաև հայագիտության ինստիտուտների միջև:
- 2014 թ. նոյեմբերի 24-ին Բուխարեստում մեկնարկել է «Բարձրագույն կրթության ապագան» խորագրով Բոլոնիայի գործընթացի հետազոտողների 2-րդ գիտաժողովը, որին ԵՊՀ-ն ներկայացրել է ուսանողների, շրջանավարտների և հասարակայնության հետ կապերի գծով պրոռեկտոր Ռուբեն Մարկոսյանը:
- 2015 թ. փետրվարի 26-ին ԵՊՀ է այցելել Մոսկվայի ազգային հետազոտական համալսարանի պատվիրակությունը՝ միջբուհական համագործակցության, ինչպես նաև կրթության ու գիտության ոլորտներում փոխգործակցության հեռանկարները քննարկելու համար, որի արդյունքում երկու բուհերի միջև ստորագրվել է համագործակցության համաձայնագիր:
- 2014-2015 ուստարում շարունակվել է համագործակցությունը Արիզոնայի նահանգային համալսարանի, Հարավային դաշնային համալսարանների հետ:

- 2014-2015 ուստարում շարունակվել է նաև համագործակցությունը Մոնպելիե-1, Մոնպելիե-3 համալսարանների հետ:
- ԵՊՀ-ի և ԱՊՀ երկրների Ցանցային համալսարանի միջև համագործակցության շրջանակում 2014-2015 ուսումնական տարում Ռուսաստանի Ազգերի բարեկամության համալսարան են գործուղվել 9 ուսանողներ՝ Միջազգային հարաբերությունների, Ինֆորմատիկայի և կիրառական մաթեմատիկայի, Աշխարհագրության և երկրաբանության, Ռուս բանասիրության ֆակուլտետներից:
- 2014-2015 ուստարում շարունակվել է համագործակցությունը Սանկտ Պետերբուրգի պետական համալսարանի հետ:
- Պրովանսի համալսարանի հետ համագործակցության շրջանակում շարունակվել են ԵՊՀ-ի և Պրովանսի համալսարանի տարբեր ֆակուլտետների միջև ուսանողական փոխանակումները:

Այս շրջանակներում կազմակերպվել են ԵՊՀ ռեկտորի և օտարերկրյա համալսարանների պատվիրակությունների հետ անհատական հանդիպումներ, որոնց ընթացքում քննարկվել են երկկողմանի համագործակցության և գիտահետազոտական ու կրթության զարգացմանը վերաբերող հարցեր:

Հաշվետու տարվա ընթացքում ԵՊՀ են ժամանել մի շարք պատվիրակություններ Ռուսաստանի Դաշնությունից, Գերմանիայից, Քուվեյթից, Թուրքմենստանից, Ֆրանսիայից, Ամերիկայի Միացյալ Նահանգներից:

2014-2015 ուսումնական տարվա ընթացքում կազմակերպվել են հանդիպումներ ՀՀ-ում միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների, ինչպես նաև ՀՀ-ում արտակարգ և լիազոր դեսպանների հետ: Համալսարան են ժամանել օտարերկրյա համալսարանների պրոֆեսորներ՝ ԵՊՀ տարբեր ֆակուլտետներում և կենտրոններում մասնագիտական դասընթացներ անցկացնելու նպատակով:

Այսպես՝

- 2014 թ. սեպտեմբերի 25-ին ապագա միջազգայնագետների հետ տարածաշրջանային խնդիրների ու քաղաքականության մասին զրուցելու էին եկել գերմանացի պրոֆեսորները, հետազոտողներն ու ուսանողները՝ ի դեմս Հելմուտ Շմիդթի անվան համալսարանի արտաքին և միջազգային քաղաքականության ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Ավգյուստ Պրադետտոյի և պրոֆեսոր Ռուդոլֆ Մարկի:
- 2014 թ. նոյեմբերի 19-ին ԵՊՀ է այցելել ֆրանսիացի գիտնական, հասարակական գործիչ, պրոֆեսոր Պիեռ Ժոլիո-Կյուրին, ով ուսանողների հետ հանդիպման ժամանակ հանդես է եկել «Հետազոտությամբ զբաղվելու տարերքը. դասավանդման միջոցով հաղորդակից դարձնել այս տարերքին» թեմայով դասախոսությամբ:
- 2014 թ. նոյեմբերի 26-ին ԵՊՀ-ում «Գլոբալ և տարածաշրջանային տնտեսություններ, հեռանկարներ. Հայաստանի մարտահրավերներն ու հնարավորությունները» թեմայով դասախոսությամբ հանդես է եկել Արժույթի միջազգային հիմնադրամի հայաստանյան ներկայացուցիչ Թերեզա Դաբան Սանչեսը:
- 2015 թ. մարտի 18-ին ԵՊՀ է այցելել Ժուռնալիստների միջազգային ֆեդերացիայի նախագահ Ջիմ Բումելան, ով Ժուռնալիստիկայի, Միջազգային հարաբերությունների և Սոցիոլոգիայի ֆակուլտետների ուսանողների հետ հանդիպման ժամանակ խոսել է ժամանակակից տեխնոլոգիաների, դրանց դրական կողմերի, ինչպես նաև հարուցող մի շարք խնդիրների մասին:
- 2015 թ. ապրիլի 13-ին ԵՊՀ են այցելել ՀՀ-ում Շվեյցարիայի արտակարգ և լիազոր դեսպան Լուկաս Գասերը և Ժնևի համալսարանի պրոֆեսորներ Լորենց Է. Բաումերը, Ժան Տերիերը: Պատմության ֆակուլտետի ուսանողների հետ հանդիպման ժամանակ հյուրերը խոսել են իրենց երկրում կատարվող հնագիտական աշխատանքների մասին:

- 2015 թ. ապրիլի 14-ին ԵՊՀ է այցելել Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի նախագահ Անն Բրասերը: Ուսանողների հետ հանդիպման ժամանակ հյուրը ներկայացրել է ԵՄ-ի և ԵԽԽՎ-ի հիմնադրման, կայացման գործընթացներն ու գաղափարները, ինչպես նաև անցած ճանապարհը:
- 2015 թ. ապրիլի 17-ին ԵՊՀ է այցելել Գերմանիայի Դաշնային Հանրապետության Բունդեսթագի պատգամավոր, կրթական հարցերով հանձնաժողովի անդամ Թանկրեդ Շիպանսկին, ով ուսանողների հետ հանդիպման ժամանակ ներկայացրել է գերմանական կրթական համակարգը, գերմանական բուհեր ընդունվելու հնարավորությունները:
- 2015 թ. ապրիլի 21-ին ԵՊՀ է այցելել Շվեդիայի Ուփսալա համալսարանի դասախոս, ցեղասպանագետ, ցեղասպանությունների ուսումնասիրությամբ զբաղվող Հուգո Վալենտինի կենտրոնի տնօրեն Տոմիսլավ Դուլիչը, ով հանդես է եկել «Զանգվածային սպանությունների երեք ասպեկտները» վերտառությամբ զեկուցմամբ, ինչից հետո մի շարք ցեղասպանությունների օրինակով խոսել է դրանց միջազգային ճանաչման խճճված գործընթացների և քաղաքական ենթատեքստերի մասին:
- 2015 թ. հունիսի 3-ին ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետ են այցելել Չեխիայի Սահմանադրական դատարանի պատվիրակության անդամները՝ ի դեմս ՍԴ նախագահ Պավել Ռիխետսկու: Ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի և ուսանողների հետ հանդիպման ընթացքում առանցքային քննարկումները վերաբերել են Սահմանադրական դատարանի և մյուս դատարանների փոխհարաբերություններին, ինչպես նաև անհատ քաղաքացիների գանգատների հետ կապված փորձին:
- 2015 թ. հունիսի 24-ին ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետ է այցելել ՀՀ-ում Ճապոնիայի արտակարգ և լիազոր դեսպան Էյձի Տագուչին: Հանդիպման ընթացքում քննարկվել են ԵՊՀ-ի և ճապոնական բուհերի հետ հետագա համագործակցության հնարավորությունները:

Հաշվետու տարում ԵՊՀ-ում շարունակվել է օտարերկրյա մասնագետների դասավանդումը: 2014-2015 ուսումնական տարում ԵՊՀ-ում դասավանդել են ԱՄՆ-ից, Եգիպտոսից, Գերմանիայից, Լեհաստանից, Իրանից, Վրաստանից և Ռուսաստանից ժամանած դասախոսներ: Օտարերկրյա դասախոսներին ԵՊՀ գրադարանից անվճար օգտվելու հնարավորություն է տրվել, նրանք ապահովվել են աշխատանքի համար անհրաժեշտ պայմաններով, կազմակերպվել են նաև մշակութային ծրագրեր և ճանաչողական այցեր: ԵՊՀ ֆակուլտետներում շարունակվել է գերմաներեն, իսպաներեն, պորտուգալերեն, լեհերեն և արաբերեն լեզուների դասավանդումը:

ԵՊՀ-ն լայնորեն ներգրավված է միջազգային ծրագրերում և հանդիսանում է Համալսարանների միջազգային ընկերակցության, Եվրոպական համալսարանների ընկերակցության, Եվրասիական համալսարանների ընկերակցության, Սևծովյան երկրների համալսարանների ցանցի ընկերակցության, Ռեկտորների ռուսաստանյան միության և Համալսարանների ղեկավարների միջազգային ընկերակցության լիիրավ անդամ, Ֆրանկոֆոն համալսարանների միջազգային ասոցիացիայի անդամ, Կոլեկտիվ անվտանգության վերաբերյալ պայմանագրի իրագործման համալսարանական լիգայի անդամ:

2014-2015 ուստարում ԵՊՀ ստորաբաժանումներն ու մասնագետները, ինչպես նաև բակալավրիատի, մագիստրատուրայի և ասպիրանտուրայի ուսանողները մասնակցել են տարբեր գիտական միջոցառումների, սեմինարների, արտասահմանյան գիտական և կրթական ծրագրերի: Իրականացվել են նաև միջբուհական փոխանակման ծրագրեր:

Հաշվետու տարում առավել ուշագրավ են՝

- Ֆակուլտետներին ներկայացվել են Գերմանական ակադեմիական փոխանակման ծառայության (DAAD) և Բաց հասարակության ինստիտուտի (OSI) կողմից 2014-2015 ուսումնական տարվա համար ուսանողներին, ասպիրանտներին և գիտնականներին առաջարկված մի շարք դրամաշնորհային ծրագրեր:

- ԵՊՀ ֆակուլտետները տեղեկացվել են Հունաստանի Հանրապետության կրթության նախարարության կողմից ներկայացված 2014-2015 ուսումնական տարում Հունաստանի բարձրագույն ուսումնական հաստատություններում սովորելու համար կրթաթոշակային ծրագրի մրցույթի մասին:
- 2014-2015 թ. ուստարում ԵՊՀ ուսանողներին ներկայացվել է «ERASMUS MUNDUS» միջազգային կրթական ծրագիրը, որի նպատակն է խթանել համագործակցությունը բարձրագույն ուսումնական հաստատությունների միջև, ընդլայնել ուսանողների, դասախոսների և հետազոտողների փոխանակումները և աջակցել շարժունությանը հատկապես ոչ Եվրոպական միության անդամ երկրներից դեպի Եվրոպական միության անդամ երկրներ:
- ԵՊՀ բոլոր ուսանողներին և շրջանավարտներին ներկայացվել է IREX-ի (Միջազգային հետազոտությունների և փոխանակման խորհուրդ) կողմից առաջարկված կրթական փոխանակման ծրագրերը:
- Ներկայացվել է Գերմանիայի Բունդեսթագի կողմից հայտարարված «Միջազգային խորհրդարանական կրթաթոշակ» ծրագիրը:

ԵՊՀ ստորաբաժանումները և մասնագետները տեղեկացվել են տարբեր ոլորտներում՝ քաղաքագիտություն, իրավագիտություն, սոցիոլոգիա, մաթեմատիկա և այլն, կրթաթոշակների, համագործակցության ծրագրերի, միջազգային գիտաժողովների վերաբերյալ, ինչպես նաև ստացել են օժանդակություն հայտերի լրացման գործում:

- Աշխարհագրության և երկրաբանության, Կենսաբանության, Դեղագիտության և քիմիայի, Ինֆորմատիկայի և կիրառական մաթեմատիկայի ֆակուլտետները տեղեկացվել են «Հիմնարար հետազոտություններ» ռուսական հիմնադրամի հայտարարած գիտական ծրագրերի մրցույթի վերաբերյալ:
- Միջազգային հարաբերությունների, Պատմության, Սոցիոլոգիայի, Տնտեսագիտության և կառավարման, Ժուռնալիստիկայի, Իրավագիտության ֆակուլտետները տեղեկացվել են Թբիլիսիի պետական համալսարանի կազմակերպած «Վրաստանը ժամանակակից աշխարհում» թեմայով միջազգային գիտաժողովի վերաբերյալ:
- Իրավագիտության, Պատմության, Միջազգային հարաբերությունների ֆակուլտետները տեղեկացվել են Էստոնիայի Տարտուի համալսարանում սովորելու հնարավորության վերաբերյալ:
- Ֆակուլտետները տեղեկացվել են Գերմանական ակադեմիական փոխանակման գրասենյակի (DAAD) հայտարարած կրթաթոշակային ծրագրերի վերաբերյալ:
- Մաթեմատիկայի և մեխանիկայի, Ինֆորմատիկայի և կիրառական մաթեմատիկայի, Արևելագիտության, Պատմության ֆակուլտետները տեղեկացվել են Մոսկվայի Ազգային հետազոտական համալսարանի կողմից կազմակերպվելիք գիտահետազոտական աշխատանքների մրցույթի վերաբերյալ:
- Պատմության ֆակուլտետը տեղեկացվել է «Խաղաղության կորստից մինչև Եվրոպական միության կառուցումը» խորագրով միջազգային գիտաժողովի վերաբերյալ:
- Ֆակուլտետները տեղեկացվել են «ԱՐՓԱ» ինստիտուտի հայտարարած նորարարության ամենամյա մրցույթի վերաբերյալ:
- Ռոմանագերմանական բանասիրության, Ռուս բանասիրության, Պատմության ֆակուլտետները տեղեկացվել են Միչիգանի համալսարանի Հայկական ուսումնասիրությունների ծրագրի հայտարարած «Մանուգյան» հիմնադրամի անվան կրթաթոշակային ծրագրի մրցույթի վերաբերյալ:
- Ֆակուլտետները տեղեկացվել են ԱՄՆ Կառավարության կողմից ֆինանսավորվող PEER դրամաշնորհային ծրագրի վերաբերյալ:
- Ֆակուլտետները տեղեկացվել են Ֆրանսիական համալսարանների միության հայտարարած Էժեն Յոնեսկուսի անվան կրթաթոշակային ծրագրի մրցույթի վերաբերյալ:

- Ֆակուլտետները տեղեկացվել են Վիլնյուսի Մենեջմենթի և տնտեսագիտության համալսարանի հայտարարած կրթաթոշակային ծրագրի մրցույթի վերաբերյալ:
- Մաթեմատիկայի և մեխանիկայի ֆակուլտետը տեղեկացվել է Ֆրանսիայի Լե Մանի համալսարանի հայտարարած մագիստրոսական ծրագրի ընդունելության վերաբերյալ:
- Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետը տեղեկացվել է Հայաստանում ԱՄՆ դեսպանատան կազմակերպած «Ինչպես ֆինանսավորել սկսնակ բիզնեսը. Բազմաֆինանսավորում» թեմայով կլոր սեղան-քննարկման վերաբերյալ:
- Ֆակուլտետները տեղեկացվել են ԱՄՆ դեսպանատան հայտարարած «Ֆուլբրայթ» կրթաթոշակային ծրագրի վերաբերյալ:
- Ֆակուլտետները տեղեկացվել են ԱՄՆ համալսարաններում վերապատրաստում անցնելու հնարավորությունների վերաբերյալ:
- Միջազգային հարաբերությունների ֆակուլտետը տեղեկացվել է Վիեննայի դիվանագիտական ակադեմիայի հայտարարած կրթաթոշակային ծրագրի մրցույթի, ԱՄՆ դեսպանատան կազմակերպած «Միջանկյալ ընտրությունները ԱՄՆ-ում» թեմայով կլոր սեղան-քննարկման վերաբերյալ:
- Ֆակուլտետները տեղեկացվել են Լեհաստանի Կառավարության կողմից տրամադրվող կրթաթոշակային ծրագրերի վերաբերյալ:
- Իրավագիտության, Սոցիոլոգիայի ֆակուլտետները տեղեկացվել են ԱՄՆ դեսպանատան կազմակերպած «Ընտանեկան բռնություն» թեմայով կլոր սեղան-քննարկման վերաբերյալ:
- Կենսաբանության ֆակուլտետը տեղեկացվել է Ֆրանսիայի Նյարդաբանության դպրոցի հայտարարած ասպիրանտական կրթաթոշակային ծրագրի մրցույթի վերաբերյալ:
- Ֆակուլտետները տեղեկացվել են Կիպրոսի համալսարանում կազմակերպվելիք ամառային դպրոցի վերաբերյալ:
- Արևելագիտության ֆակուլտետը տեղեկացվել է Քուվեյթի համալսարանի արաբերեն լեզվի ուսուցման կենտրոնում 2015-2016 ուստարում սովորելու հնարավորության վերաբերյալ:
- Ֆակուլտետները տեղեկացվել են Համաշխարհային բանկի հայտարարած Ռոբերտ Մակ Նամարայի անվան ասպիրանտական կրթաթոշակային ծրագրի մրցույթի մեկնարկի վերաբերյալ:
- Ռուս բանասիրության ֆակուլտետի ուսանողները տեղեկացվել են Բուլղարիայի Սոֆիայի Սբ. Քլիմենթ Օհրիդսկի համալսարանում կազմակերպվելիք բուլղարերեն լեզվի, գրականության և մշակույթի ամենամյա ամառային դասընթացների վերաբերյալ:
- Միջազգային հարաբերությունների, Իրավագիտության, Պատմության, Սոցիոլոգիայի ֆակուլտետները տեղեկացվել են Պրահայում կազմակերպվելիք ամառային դպրոցի վերաբերյալ:
- Ռոմանագերմանական բանասիրության ֆակուլտետը տեղեկացվել է Իտալիայի դեսպանատան հատկացրած կրթաթոշակային տեղերի մրցույթի վերաբերյալ:
- Ֆակուլտետները տեղեկացվել են Ֆրայբուրգի համալսարանի հայտարարած գիտահետազոտական կրթաթոշակային ծրագրի մրցույթի վերաբերյալ:
- Ֆակուլտետները տեղեկացվել են Ռումինիայի արտաքին գործերի նախարարության տրամադրած կրթաթոշակների վերաբերյալ՝ Ռումինիայի տարբեր համալսարաններում ուսանելու համար:
- Պատմության ֆակուլտետը տեղեկացվել է Բելգորոդի համալսարանում կազմակերպվելիք միջազգային դպրոցի վերաբերյալ:
- Ֆիզիկայի, Ռադիոֆիզիկայի, Դեղագիտության և քիմիայի ֆակուլտետները տեղեկացվել են Կորեայի Կառավարության տրամադրած կրթաթոշակային ծրագրի շրջանակում Կորեայի Ջիոնգսանգ համալսարանում սովորելու հնարավորության վերաբերյալ:
- Միջազգային հարաբերությունների ֆակուլտետը տեղեկացվել է Բուխարեստի համալսարանում կազմակերպվելիք «Սոցիալական շարժումները կենտրոնական և Արևելյան Եվրոպայում» թեմայով միջազգային գիտաժողովի վերաբերյալ:

- Ֆակուլտետները տեղեկացվել են Բաց հասարակության հիմնադրամներ-Հայաստան կազմակերպության հետազոտությունների դրամաշնորհային ծրագրի վերաբերյալ:
- Ֆակուլտետները տեղեկացվել են Սանկտ Պետերբուրգի պետական համալսարանի ուսանողների փոխանակման ծրագրի վերաբերյալ:
- Միջազգային հարաբերությունների ֆակուլտետը տեղեկացվել է Կորեայի Կառավարության մագիստրոսական կրթաթոշակային ծրագրի վերաբերյալ:
- Արևելագիտության, Սոցիոլոգիայի, Միջազգային հարաբերությունների, Պատմության ֆակուլտետները տեղեկացվել են Քարնեգի հետազոտական կրթաթոշակային ծրագրի վերաբերյալ:
- Արևելագիտության ֆակուլտետը տեղեկացվել է Եգիպտոսի Արաբական Հանրապետության բարձրագույն կրթության նախարարության կողմից արաբերեն լեզվի ուսուցման նպատակով 2015-2016 ուստարում ՀՀ քաղաքացիների համար հատկացված կրթաթոշակային ծրագրի վերաբերյալ:
- Ֆակուլտետները տեղեկացվել են ՌԴ «Տնտեսագիտության բարձրագույն դպրոց» ազգային հետազոտական համալսարանի կողմից կազմակերպվելիք միջազգային օլիմպիադայի վերաբերյալ:
- Ֆակուլտետները տեղեկացվել են Հնդկաստանի Կառավարության Մշակութային հարաբերությունների հնդկական խորհրդի կրթաթոշակային ծրագրի վերաբերյալ:
- Ֆակուլտետները տեղեկացվել են Վարշավայի տնտեսագիտական դպրոցի կողմից կազմակերպվելիք ամառային դպրոցի վերաբերյալ:
- Ռոմանագերմանական բանասիրության ֆակուլտետը տեղեկացվել է Իտալիայի դեսպանատան հատկացրած կրթաթոշակային տեղերի մրցույթի վերաբերյալ:

ԵՊՀ ֆակուլտետներից ստացված արձագանքների շնորհիվ ԵՊՀ մասնագետներին և ուսանողներին հնարավորություն է տրվել մասնակցելու վերոհիշյալ գիտակրթական սեմինարներին, գիտաժողովներին, կրթական և հետազոտական ծրագրերին: Միջազգային համագործակցության վարչությունն ապահովել է համալսարանականների արտասահման գործուղվելն ու գիտաուսումնական փոխանակումները: Այսպես՝ հաշվետու տարում համալսարանականներն առավել հաճախ գործուղվել են Ռուսաստան, Վրաստան, Գերմանիա, Ֆրանսիա, Իտալիա:

Արտասահմանյան դրամաշնորհներ

	Դրամաշնորհի անվանումը	Ղեկավար
1.	Erasmus Mundus IANUS (Inter-Academic Network Erasmus Mundus)	Ջիննի Վեյթսման
2.	Erasmus Mundus BACKIS (Between Black and Caspian Seas)	Հայկուհի Մկրտչյան
3.	Erasmus Mundus WEBB (Whole Europe Beyond Borders)	Նաիրա Մնացականյան
4.	Erasmus Mundus ELECTRA (Enhancing Learning in ENPI Countries through Clean technologies and Research related Activities)	Նաիրա Մնացականյան
5.	Erasmus Mundus EMBER (Erasmus Mundus Broadening Educational Experiences)	Նաիրա Մնացականյան
6.	Erasmus Mundus HUMERIA (Humanities,Education, Research, International Relations, Arts)	Հայկուհի Մկրտչյան
7.	Tempus Cap4Com «Բուհ-ձեռնարկություն համագործակցության խթանումը ՀՀ-ում, Ուկրաինայում և Վրաստանում հմտությունների վրա հիմնված վերապատրաստումների նպատակով»	Ալեքսանդր Մարգարով

8.	Tempus LaMANCHE «Փոփոխությունների ուղղորդումն ու կառավարումը բարձրագույն կրթության ոլորտում»	Ալեքսանդր Մարգարով
9.	Tempus ATHENA «Կայուն և ինքնավար բարձրագույն կրթության համակարգերի խթանումը Արևելյան հարևանության տարածաշրջանում»	Արամ Սիմոնյան, Ալեքսանդր Գրիգորյան, Մենուա Սողոմոնյան
10.	Tempus PICASA (Promoting Internationalization of HEIs in Eastern Neighborhood Countries through Cultural and Structural Adaptations)	Ալեքսանդր Մարգարով
11.	Tempus PACT (Project Actors Capacity Training in Caucasus)	Վաչե Քալաշյան

Թեմա 1-6. Erasmus Mundus IANUS, BACKIS, WEBB, ELECTRA, EMBER, HUMERIA ծրագրերի հիմնական նպատակը ուսանողական, դասախոսական և վարչական անձնակազմերի փոխանակումներն են ԵՄ անդամ և թիրախային երկրների միջև: Ծրագրերի դիմումների ընդունման առաջին շրջափուլի ավարտին ԵՊՀ-ից եվրոպական բուհեր են մեկնել ընդհանուր առմամբ 35 մասնակից, իսկ ԵՊՀ են ժամանել 8 արտասահմանցիներ, որոնց շարքում ընդգրկված են ինչպես բակալավրիատի, մագիստրատուրայի և ասպիրանտուրայի ուսանողներ, այնպես էլ դասախոսական ու վարչական անձնակազմի ներկայացուցիչներ:

Թեմա 7. 2014-2015 ուստարում շարունակվել է Tempus Cap4Com դրամաշնորհային ծրագիրը, որը միտված է ՀՀ-ի, Ուկրաինայի ու Վրաստանի համալսարանների կարողությունների ամրապնդմանը՝ դրանք շուկայական տնտեսությանը համապատասխանեցնելու նպատակով:

Թեմա 8. 2012 թ.-ին մեկնարկած և երեք տարի տևողությամբ Tempus LaMANCHE ծրագրի հիմնական նպատակն է Հայաստանում, Բելառուսում, Վրաստանում, Մոլդովայում և Ուկրաինայում խթանել բարձրագույն կրթության (ԲԿ) արդիականացումը: LA MANCHE կոնսորցիումը 29 հաստատությունների համագործակցություն է, որում ընդգրկված են Արևելյան հարևանության տարածաշրջանի 23, ԵՄ՝ 5 բուհեր և մեկ բրիտանական բիզնես կազմակերպություն: Կոնսորցիումը ներկայացնում է 10 երկրներ՝ 5 գործընկեր երկրներ Արևելյան հարևանության տարածաշրջանից՝ Հայաստան, Բելառուս, Վրաստան, Մոլդովա և Ուկրաինա, և 5 ԵՄ երկրներ՝ Բուլղարիա, Ֆրանսիա, Հունաստան, Պորտուգալիա և Միացյալ Թագավորություն:

Թեմա 9. Tempus ATHENA ծրագիրը միտված է ՀՀ-ում, Մոլդովայում և Ուկրաինայում բարձրագույն կրթության համակարգերի արդիականացմանը: Ծրագրի համակարգողը Եվրոպական համալսարանների ասոցիացիան է: ՀՀ-ից ընդգրկված են ԵՊՀ-ն, Գավառի պետական համալսարանը, ՀՊՃՀ-ն, Պետական համալսարանների ռեկտորների խորհուրդը, ՀՀ կրթության և գիտության նախարարությունը: Ծրագրի հիմնական նպատակն է բարելավել ինստիտուցիոնալ և ֆինանսական ինքնավարությունն ու հաշվետվողականությունը, այն է՝ բուհերի կարողությունները: ATHENA-ն դասվում է կառուցվածքային գործողությունների շարքին և համակարգային մոտեցում է ենթադրում՝ ներառելով ազգային պետական իշխանության մարմիններին և այլ շահակիցներին (տեղական աշխատաժողովներ և վերապատրաստումներ, սեմինարներ): Ծրագիրը ռազմավարական շրջանակներ և միջոցառումների պլաններ կմշակի ազգային մակարդակում տնական կառուցվածքային փոփոխություններ կատարելու համար:

Թեմա 10. Tempus PICASA ծրագրի առաջնային նպատակներից է բուհերի կառավարման կառուցվածքային ու մշակութային բաղադրիչներում միջազգայնացման գործընթացների զարգացման և ինտեգրման միջոցով նպաստել Արևելյան հարևանության տարածքի՝ Հայաստանի, Վրաստանի, Բելառուսի և Ուկրաինայի բարձրագույն կրթական համակարգերի ճանաչմանը:

Թեմա 11. Tempus PACT ծրագրի նպատակն է աջակցել և վերապատրաստել ծրագրի աշխատակիցներին, երիտասարդ գիտնականներին, հետբուհական համակարգում սովորող

ուսանողներին և հայ, վրացի ու ադրբեջանցի երիտասարդ դասախոսներին՝ հետազոտական աշխատանքներ կատարելու:

Արտերկրից ԵՊՀ-ում սովորող ուսանողները

2014-2015 ուստարում ԵՊՀ ֆակուլտետներում սովորել են 434 օտարերկրացի ուսանողներ և ասպիրանտներ, այդ թվում՝ 33 ուսանող ԵՊՀ միջազգային կրթական կենտրոնում (ՄԿԿ), բակալավրիատում՝ 247 (225-ը՝ վճարովի, 22-ը՝ անվճար հիմունքներով), մագիստրատուրայում՝ 57 (35-ը՝ վճարովի, 22-ը՝ անվճար հիմունքներով), ասպիրանտուրայում՝ 37 (34-ը՝ վճարովի, 3-ը՝ անվճար հիմունքներով) և հեռակա՝ 49 ուսանող (33-ը՝ բակալավրիատ, 16-ը՝ մագիստրատուրա) և 11 ստաժորներ:

2014-2015 ուստարվա օտարերկրյա ուսանողների, ասպիրանտների, ստաժորների, հեռակա ուսանողների կազմը.

Արտերկրից ԵՊՀ-ում սովորած օտարերկրյա ուսանողների կազմը 2009-2015 տարիների ընթացքում

N	Կարգավիճակը	2009/10	2010/11	2011/12	2012/13	2013/14	2014/15
1	2	3	4	5	6	7	8
1.	ՕՔՆՖ	28	41	29	56	34	33
2.	Բակալավրիատ	303	251	225	226	253	247
3.	Մագիստրատուրա	52	40	62	80	89	57
4.	Ասպիրանտուրա	320	244	104	63	38	37
5.	Ստաժորներ	6	6	12	14	23	11
6.	Հեռակա ուսուցում	36	51	59	49	40	49
	Ընդամենը	**745**	**633**	**491**	**488**	**477**	**434**

2014-15 ուստարվա ընթացքում «Գալուստ Գյուլբենկյան» հաստատության կողմից հատուցվել են համալսարանի երիտասարդ գիտնականների արտասահմանյան կարճաժամկետ գործուղումների (գիտական կոնֆերանսներ, սեմինարներ, դասընթացներ և այլն) ծախսերը:

Գ. Գյուլբենկյանի հիմնադրամի և ՀԲԸՄ կողմից փոխհատուցվել են համալսարանում սովորող 37 սիրիահայ ուսանողների և մագիստրանտների ուսման վարձերի 60%-ը:

Կազմակերպվել է լույս տեսնող և նախկինում հրատարակված գրականության առաքումը Լիբանանի, Սիրիայի և Իրանի հայկական համայնքների մշակութային, ուսումնական կենտրոններ, ինչպես նաև Գ. Գյուլբենկյան հիմնադրամին (Լիսաբոն)՝ Եվրոպայի հայկական համայնքներում դրանք տարածելու նպատակով: 2014-15 ուսումնական տարում այդ նպատակով առաքվել է շուրջ 100 կտոր գրականություն:

ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿԱՊԵՐԻ ԵՎ ԼՐԱՏՎՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

Վարչության պետ՝ *Գրիգորյան Կարեն Հովիկի, բան. գիտ. թեկնածու*

ԵՊՀ հասարակայնության հետ կապերի և լրատվության վարչության գործունեության հիմնական ուղղություններն են.

- հասարակայնության հետ կապերի ոլորտում տարվող քաղաքականության վերաբերյալ առաջարկությունների ներկայացում, համապատասխան ծրագրերի և միջոցառումների մշակում և իրականացում, վարչական այլ աշխատանքների իրագործում,
- հայաստանյան և արտերկրի ԶԼՄ-ների հետ (տպագիր և էլեկտրոնային) փոխգործակցություն, ԵՊՀ միջոցառումների լուսաբանում,
- ինտերնետային ռեսուրսների զարգացում, համացանցային տիրույթում ԵՊՀ-ի վերաբերյալ տեղեկատվության և տեսանյութերի տարածում,
- «Երևանի համալսարան» պաշտոնաթերթի և այլ նյութերի հրատարակում,
- մեթոդական աշխատանքների իրականացում,
- միջոցառումների լուսանկարահանում և տեսանկարահանում, նյութերի արխիվացում:

Վարչության գործունեության առանցքում եղել են Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին նվիրված ծրագրերին և միջոցառումներին առնչվող աշխատանքները:

2014-2015 ուստարում վարչությունում կատարվել են հետևյալ աշխատանքները.

Հասարակայնության հետ կապերի ոլորտում տարվող քաղաքականության վերաբերյալ առաջարկությունների ներկայացում, համապատասխան ծրագրերի և միջոցառումների մշակում և իրականացում, վարչական այլ աշխատանքների իրագործում

- Աշխատանքներ են իրականացվել ԵՊՀ հանրային կապերի, ներքին և արտաքին հաղորդակցության ոլորտներում ԵՊՀ զարգացման ռազմավարությամբ սահմանված խնդիրների իրականացման ուղղությամբ, համապատասխան առաջարկություններ են ներկայացվել ԵՊՀ ռեկտորատ:
- Ամփոփվել է ԵՊՀ հակակոռուպցիոն միջոցառումների համառոտ հաշվետվությունը, համակարգվել են ԵՊՀ 2013-2014 ուստարվա հաշվետվության մշակման աշխատանքները:
- Վարչության ներկայացուցիչներն ընդգրկված են եղել ԵՊՀ 2016-2020 թթ. զարգացման ռազմավարական ծրագրի աշխատանքային խմբերում և հաշվետու ժամանակահատվածում ակտիվորեն մասնակցել են ծրագրի նախագծի մշակման աշխատանքներին:
- Վարչությունը ներգրավված է եղել գնումների՝ օրենքով նախատեսված պատասխանատու ստորաբաժանմանը վերապահված գործառույթների իրականացման գործում:
- Պարբերաբար կազմակերպվել են հանդիպումներ ԵՊՀ տարբեր ստորաբաժանումների հանրային կապերի պատասխանատուների հետ, քննարկվել են ստորաբաժանումներում տարվող աշխատանքների առանձնահատկությունները:
- ԵՊՀ-ում նոր բացված (վերանվանված) ստորաբաժանումների համար մշակվել և շրջանառության մեջ են դրվել համապատասխան ձևաթղթեր: «ԵՊՀ ձևաթղթերի օգտագործման

ուղեցույց»-ում ամրագրված դրույթները սահմանված կարգով օգտագործելու նպատակով պարբերաբար հանդիպումներ են կազմակերպվել ԵՊՀ ստորաբաժանումների հանրային կապերի պատասխանատուների հետ:

- Վարչությունն ապահովել է տարբեր հասարակական կազմակերպությունների, տեղական ինքնակառավարման մարմինների, միջազգային կազմակերպությունների հետ ԵՊՀ փոխգործակցությունը, ապահովել է ԵՊՀ պատշաճ արձագանքը նրանց նախաձեռնություններին:

Հայաստանյան և արտերկրի ԶԼՄ-ների հետ (տպագիր և էլեկտրոնային) համագործակցություն, ԵՊՀ միջոցառումների լուսաբանում, հանրային կապեր

- Հետևողական աշխատանք է կատարվել «ԵՊՀ-ում հանրային նշանակություն ունեցող միջոցառումների կազմակերպման, իրազեկման և հասարակայնության հետ տարվող աշխատանքների ուղեցույց»-ի դրույթների կիրառման և իրազեկման հայտերը ԵՊՀ ստորաբաժանումների կողմից ճիշտ ժամկետներում ու պատշաճ կերպով լրացնելու ուղղությամբ: Պարբերաբար կազմակերպվել են հանդիպումներ ֆակուլտետների հանրային կապերի պատասխանատուների հետ:
- 2014-2015 ուստարվա ընթացքում վարչությունը ստացել է հանրային նշանակության միջոցառման շուրջ 350 հայտ:
- Շուրջ 60 մամուլի հաղորդագրություններ են ուղարկվել ԶԼՄ-ներին:
- Իրականացվել է տպագիր ԶԼՄ-ներում և ինտերնետային կայքերում համալսարանի, կրթության և գիտության ոլորտի կարևոր խնդիրների մասին հրապարակված նյութերի մոնիթորինգ:
- Տպագիր լրատվամիջոցներում ԵՊՀ-ի մասին հրապարակված նյութերի քանակը հաշվետու ժամանակահատվածում կազմել է 575, իսկ ինտերնետային կայքերում ԵՊՀ-ին անդրադարձած նյութերի թիվը՝ 656: Հայաստանյան հեռուստաընկերություններով ԵՊՀ-ի վերաբերյալ հեռարձակված տեսանյութերի թիվը հաշվետու ժամանակահատվածում 97 է:
- Համապատասխան նյութերը յուրաքանչյուր օր՝ առավոտյան, ներկայացվել են ԵՊՀ ռեկտորատ, իրականացվել է նյութերի վերլուծություն:
- ԵՊՀ կենտրոնական մասնաշենքի և այլ մասնաշենքերի նախասրահի հեռուստաէկրաններին յուրաքանչյուր աշխատանքային օր տեղեկատվություն և հայտարարություններ են տեղադրվել համալսարանում կայանալիք միջոցառումների վերաբերյալ: Դրանց ընդհանուր թիվը շուրջ 350 է:
- Կապեր են հաստատվել նոր ձևավորված զանգվածային լրատվության միջոցների հետ, ամրապնդվել են հին կապերը:

Ինտերնետային ռեսուրսների զարգացում, համացանցային տիրույթում ԵՊՀ-ի վերաբերյալ տեղեկատվության և տեսանյութերի տարածում

- ԵՊՀ ինտերնետային ռեսուրսների զարգացման գործողությունների պլանի համաձայն՝ շարունակվել են ԵՊՀ ինտերնետային պորտալի զարգացման աշխատանքները: Նորաստեղծ պորտալում ընդգրկված են 63 կայք ու ենթակայք:
- «Վեբոմետրիքս» կայքի բուհերի ռեյտինգավորման սանդղակում ԵՊՀ-ն ամրապնդել է իր դիրքերը՝ նախորդ տարվա համեմատ առաջընթաց գրանցելով 81 նիշով: 2015 թվականի օգոստոսին «Վեբոմետրիքսի» (Webometrics Ranking of World Unisvesuties) հրապարակած բուհական համաշխարհային վարկանիշային աղյուսակում ԵՊՀ-ն 2510-րդ տեղում է: Մայր բուհը միաժամանակ շարունակում է գլխավորել ՀՀ բուհերի ցանկը, իսկ տարածաշրջանում 2-րդն է:
- Կայքի «Նորություններ» բաժնում հայերեն, ռուսերեն, անգլերեն հրապարակվել է 1416 նյութ, «Հայտարարություն» բաժնում՝ 186 հայտարարություն:

- Ապահովվել է առցանց հետադարձ կապ, ինչպես նաև մշակվել և վերլուծվել են էլեկտրոնային փոստով ու սոցիալական ցանցերի միջոցով ստացված նամակները:
- ԵՊՀ կայքում գործում է «Հարց-պատասխան» բաժինը, որի միջոցով ստացված բազմաբնույթ (1263) նամակներին ԵՊՀ տարբեր ստորաբաժանումների օգնությամբ հնարավորինս սեղմ ժամկետներում տրվել են սպառիչ պատասխաններ:
- Ամենօրյա օպերատիվ աշխատանքի շնորհիվ և կայքի այցելուների հետ ինտերակտիվ կապ ապահովելու արդյունքում, նախորդ ուստարվա համեմատ, կայքի այցելուների թիվն աճել է՝ հասնելով օրական միջինը 4800-ի:
- Հաշվետու ժամանակահատվածում ֆակուլտետների կայքերում շարունակվել են թարմացվել ու տեղադրվել դասախոսների տվյալները (հայերեն ու անգլերեն), լուսանկարները, խմբագրվել և ավելացվել են մոտ 1470 գիտական հրապարակումների մասին տվյալներ, և ներկայումս կայքում առկա են 18700 հրապարակումներ:
- ԵՊՀ մասնագիտական աստիճանաշնորհման խորհուրդների (http://ysu.am/council) կայքը թարմացվել է 330 անգամ: Պարբերաբար թարմացվել է նաև «Գիտական հանդեսների» կայքը (http://publications.ysu.am/), ավելացվել են նոր հանդեսներ՝ հոդվածներով ու կից Pdf-ներով: Ժուռնալիստ.am ուսանողական առցանց պարբերականի (http://journalist.ysu.am), ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի (http://ijevan.ysu.am/), «Մաթեմատիկա և կիրառություններ» ամառային դպրոցի (http://mathschool.ysu.am/), Միգրացիայի ուսումնասիրությունների կենտրոնի (http://mcc.ysu.am/), համալսարանական կենտրոնների՝ Կիրառական հոգեբանության (http://ysu.am/psy/), Որակի ապահովման (http://ysu.am/quality/), Շրջանավարտների և կարիերայի (http://www.ysu.am/careercenter/), Գենդերային հետազոտությունների և առաջնորդության (http://www.ysu.am/gender/), Մշակույթի (http://culture.ysu.am/), Էկոլոգիական իրավունքի գիտաուսումնական (http://elrc.ysu.am/), Ռուսական կենտրոնի (http://russian-center.ysu.am/hy/) կայքերը գործում են բնականոն:
- Յուրաքանչյուր ամիս թարմացվում է «Երևանի համալսարան» ամսաթերթի կայքը (http://ysu.am/newspaper). ավելացվում են թերթի նոր լույս տեսած համարի էլեկտրոնային տարբերակը և խմբագրի ընտրանին:
- Ամենօրյա թարմացումներ են արվում «Մետեո կայանի» կայքում (http://ysu.am/meteo):
- Հաշվետու ուստարում շահագործման են հանձնվել ԵՊՀ պորտալում տեղակայված հետևյալ նոր կայքերը՝
  - ✓ Ձեռնարկությունների հետ համագործակցություն (http://ysu.am/cooperation/),
  - ✓ ԵՊՀ-ն հիշում է և պահանջում (http://ysu.am/armeniangenocide100/),
  - ✓ Առաջին կուրսեցու ուղեցույց (http://1course.ysu.am/),
  - ✓ Լավագույն ուսանող (http://beststudent.ysu.am),
  - ✓ ԵՊՀ հրատարակչություն (http://publishing.ysu.am/),
  - ✓ ԵՊՀ արհեստակցական կազմակերպություն (http://ysu.am/tu/),
  - ✓ Միգրացիայի ուսումնասիրությունների կենտրոն (http://mcc.ysu.am/),
  - ✓ Միգրացիայի և մարդկային կապիտալի վերարտադրության փոխառնչությունները Հայաստանում (http://imhcr.ysu.am/):
- Facebook սոցիալական ցանցում վարվել են Երևանի պետական համալսարանի էջերը, մասնավորապես Facebook-ի (http://www.facebook.com/ysu.am) տիրույթում բազմաթիվ այցելուներ բուռն քննարկումներ են ծավալել. ԵՊՀ Facebook-ի էջի հետևորդների թիվը հասել է 25.500-ի:
- Առկա և հեռակա ուսուցման համակարգերի դիմորդների համար ԵՊՀ ինտերնետային կայքում տեղադրվել է համապատասխան տեղեկատվություն, իսկ հեռակա ուսուցման ընդունելության քննությունների պատասխանների 24 ձևաթղթեր օրական երկու անգամ օպերատիվ կերպով

տեղադրվել են կայքում, ինչպես նաև զետեղվել են 2015 թ-ին առկա ուսուցման համակարգով ԵՊՀ ընդունված բոլոր ուսանողների տվյալները:

«Երևանի համալսարան» պաշտոնաթերթի և այլ PR նյութերի հրատարակում

- Խմբագրվել, սրբագրվել և տպագրության է պատրաստվել ԵՊՀ 2013-2014 ուստարվա գործունեության հաշվետվությունը:
- 2014-2015 ուստարվա ընթացքում լույս է տեսել «Երևանի համալսարան» թերթի 10 համար՝ միջինը 32 էջ ծավալով, յուրաքանչյուր համարում՝ 50-55 նյութ (ուստարվա կտրվածքով՝ 500-550 նյութ, այդ թվում՝ վերլուծություններ, հարցազրույցներ, կայացած միջոցառումների լուսաբանումներ և այլն):
- «Երևանի համալսարան» պաշտոնաթերթը հանդես է եկել հստակ խորագրերով՝ «Քաղաքականություն», «Գիտություն», «Կրթություն», «Հասարակություն», «Մարզական», «Մշակույթ», «Միջազգային», «Ուսումնագիտական խճանկար»:

Լուսանկարների և տեսանյութերի ստեղծում և արխիվացում

- Հաշվետու ժամանակահատվածում կատարվել են 402 լուսանկարահանումներ (միջոցառումներ, թերթի համար ֆոտոսեսիաներ և այլն), ընդհանուր թվով՝ 36.924 լուսանկար:
- Շարունակվել են տեսանյութերի և լուսանկարների թվանշայնացման և արխիվացման աշխատանքները:
- Վարչության համապատասխան բաժնի աշխատակիցները ԵՊՀ-ում կայացած միջոցառումների լուսանկարներով ապահովել են ինչպես համալսարանական, այնպես էլ հանրապետական մամուլը:

Մեթոդական աշխատանքների իրականացում

- Անցկացվել են ԵՊՀ արտաքին իմիջի վերաբերյալ Երևանի բնակչության պատկերացումների բացահայտմանն ուղղված և հեռախոսային հարցման մեթոդով իրականացված հետազոտության իններորդ և տասներորդ փուլերը: Հետազոտությունը շարունակական բնույթ ունի և անցկացվում է վեց ամիսը մեկ:
- ԵՊՀ արտաքին իմիջին վերաբերող հետազոտության համար ներգրավվել են ԵՊՀ փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետի ուսանողներ, ովքեր աջակցել են հետազոտության դաշտային և տվյալների մշակման փուլերի աշխատանքներին՝ ստանալով վերջիններիս իրականացման վերաբերյալ համապատասխան մանրամասն գիտելիքներ և հմտություններ:
- Անցկացվել են մի շարք որակական թեմատիկ հետազոտություններ ԵՊՀ ուսանողների շրջանում (ընտանիք կազմած ուսանողների, առաջին կուրսեցիների հետ և այլն):
- Շրջանավարտների և կարիերայի կենտրոնի հետ ուսանողների զբաղվածության վերաբերյալ անցկացվել է հետազոտություն:
- Կազմակերպչական աջակցություն է ցուցաբերվել ՀՀ ԿԳՆ-ի միջոցով ստացված տարբեր կազմակերպությունների ուսումնասիրություններին և հետազոտություններին (ՄԻԱՎ/ՁԻԱՀ, ծխելու դեմ պայքար և այլն):

Պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, միջազգային կազմակերպությունների, հասարակական կազմակերպությունների, հիմնադրամների և տարբեր կառույցների հետ աշխատանքներ

- ՀՀ կրթության և գիտության նախարարության հետ ԵՊՀ Ծաղկաձորի ուսումնաարտադրական բազայում կազմակերպվել է «Հանրային կապերը ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատություններում» խորագրով եռօրյա սեմինար-քննարկում, որին մասնակցել են

հայաստանյան գրեթե բոլոր պետական բուհերի հասարակայնության հետ կապերի և լրատվության բաժինների ղեկավարներն ու մամուլի պատասխանատուները: Սեմինարի աշխատանքների ամփոփմանը մասնակցել են նաև համապատասխան բուհերի ռեկտորները:

- Վարչությունը մասնակցել է հայաստանյան և միջազգային կազմակերպությունների կողմից կազմակերպված հակակոռուպցիոն սեմինար-քննարկումներին, որոնց ընթացքում ներկայացվել են «ԵՊՀ կոռուպցիոն երևույթների դեմ պայքարի համալիր միջոցառումների» ծրագրի դրույթները:
- ՀՀ կրթության և գիտության նախարարությանը տեղեկատվություն է տրամադրվել ԵՊՀ-ում առկա կապի և տեղեկատվական հաղորդակցման տեխնոլոգիաների ոլորտի ցուցանիշների վերաբերյալ:
- ԵՊՀ-ի տվյալների եռալեզու գրանցման աշխատանքներ են իրականացվել «Արեգ» և «Սփյուռ» տեղեկատուներում:
- ԶԼՄ-ների, հասարակական կազմակերպությունների և քաղաքացիների կողմից ԵՊՀ-ին հասցեագրված հարցումներին օրենքով սահմանված ժամկետներում տրվել են սպառիչ պատասխաններ:
- Շարունակվել է ակտիվ համագործակցությունը Ավետիք Իսահակյանի անվան կենտրոնական գրադարանի հետ: Հաշվետու ուստարվա ընթացքում ևս ԵՊՀ-ն հաղթող է ճանաչվել «Ամենակարդացող բուհ» անվանակարգում:
- Վարչության ներկայացուցիչները մասնակցել են Եվրոպական բարձրագույն կրթական տարածքի (ԵԲԿՏ) նախարարական գագաթնաժողովին ու Բոլոնիայի գործընթացի 4-րդ քաղաքական ֆորումին:

ԵՊՀ հանրային կապերի ուղղությամբ իրականացված ծրագրերի վերաբերյալ թվային տվյալներ

Գործունեության ոլորտները	2006-2007	2007-2008	2008-2009	2009-2010	2010-2011	2011-2012	2012-2013	2013-2014	2014-2015
www.ysu.am կայքի նորություններ (հայերեն, ռուսերեն, անգլերեն)	528	570	840	957	1140	1041	1152	1221	1416
www.ysu.am կայքի այցելուների քանակը (օրական/ամսական)	853/10300	974/12000	1320/16000	2185/26220	2866/34392	3500/42000	4500/54000	5200/62400	5500/130000
ԵՊՀ կայքերի քանակը	1	1	1	20	25	32	49	55	63
www.ysu.am կայքի «Հարց /պատասխան» բաժնի (հայերեն, ռուսերեն, անգլերեն) հարցերի քանակը (բոլոր հարցերին տրվել են պատասխաններ)	403	497	511	670	635	1068	1192	936	1263
«Երևանի համալսարան» թերթի թողարկումները և էջերի քանակը	3 թողարկում (համարներից յուրաքանչյուրը՝ 8-ից 12 էջ)	9 թողարկում (համարներից յուրաքանչյուրը՝ 12-ից 20 էջ)	10 թողարկում (համարներից յուրաքանչյուրը՝ 16-ից 24 էջ)	10 թողարկում (համարներից յուրաքանչյուրը՝ 16-ից 28 էջ)	10 թողարկում (համարներից յուրաքանչյուրը՝ 16-ից 40 էջ)	10 թողարկում (համարներից յուրաքանչյուրը՝ 22-ից 44 էջ)	10 թողարկում (համարներից յուրաքանչյուրը՝ 28-ից 40 էջ)	9 թողարկում (համարներից յուրաքանչյուրը՝ 24-ից 44 էջ)	10 թողարկում (համարներից յուրաքանչյուրը՝ 28-ից 44 էջ)
«Երևանի համալսարան» թերթի նյութերի քանակը	53	182	224	239	374	450	465	525	530
ԵՊՀ-ի մասին տպագիր մամուլում հրապարակված նյութերի քանակը	202	316	295	563	519	540	617	589	575
ԵՊՀ-ի մասին ինտերնետային կայքերում հրապարակված նյութերի քանակը	298	330	318	521	580	704	901	1872	656
ԵՊՀ-ում կայացած միջոցառումների վերաբերյալ իրազեկման հայտերի քանակը	-	-	-	-	243	250	230	271	348
Լուսանկարահանված միջոցառումներ/լուսանկարների քանակը	165/16899	189/19218	242/17515	262/18720	290/19300	417/26600	582/24134	595/24960	402/36924

Տեսանկարահանված միջոցառումների քանակը և տեսանկարահանման տևողությունը (րոպեներով)	92/5160	87/1160	91/4965	130/5790	127/5460	100/6000	92/6400	39/1000	10/100

«Վեբոմետրիքսի» (Webometrics Ranking of World Universities) հրապարակած բուհական համաշխարհային վարկանշային աղյուսակի՝ ԵՊՀ-ին վերաբերող թվային տվյալներ

2010 Հուլիս	2011 հունվար	2011 հուլիս	2012 հունվար	2012 հուլիս	2013 հունվար	2013 հուլիս	2014 հունվար	2014 հուլիս	2015 հունվար	2015 հուլիս
4392	4651	2856	1880	2051	2321	3152	2994	2591	2628	2510

Webometrics.info

«Վեբոմետրիքսի» (Webometrics Ranking of World Universities) հրապարակած բուհական համաշխարհային վարկանշային աղյուսակի բաղադրիչների դինամիկան

Դասակարգիչ	2011 հուլիս	2012 հունվար	2012 հուլիս	2013 հունվար	2013 հուլիս	2014 հունվար	2014 հուլիս	2015 հունվար	2015 հուլիս
Ներկայություն Presence	3120	1449	850	1692	1272	3097	2256	1984	797
Ազդեցություն Impact	6183	6977	6599	6196	6043	5959	6301	7247	6953
Թափանցիկություն Openness	9583	7083	1589	2226	4306	3858	1792	1792	1858
Գերազանցություն Excellence	1051	1209	1901	1905	2016	2028	2403	2396	2220

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

Վարչության պետ՝ *Հովհաննիսյան Արշալույս Լյովայի*

Հաշվետու ուսումնական տարում վարչությունը շարունակել է աշխատանքներ իրականացնել իր առջև դրված խնդիրների լուծման ուղղությամբ, որոնք պայմանականորեն կարելի է բաժանել 5 հիմնական մասի՝

- տեղեկատվական համակարգերի, համակարգչային տեխնիկայի զարգացման և արդիականացման ուղղությամբ համապատասխան վարչական գործառույթների իրականացում,
- համալսարանում առկա համակարգչային տեխնիկայի սպասարկում և արդիականացում,
- ներհամալսարանական համակարգչային ցանցի (այդ թվում՝ հեռախոսային ցանցի օպտիկամանրաթելային հատվածի) սպասարկում և արդիականացում,
- համալսարանական տեղեկատվական համակարգերի սպասարկում և զարգացում,
- աջակցություն համալսարանական ստորաբաժանումներին համակարգչային տեխնիկայի շահագործման և նրանց առջև դրված խնդիրների լուծման գործում:

2014-2015 ուսումնական տարում վարչության կողմից մասնավորապես իրականացվել են հետևյալ աշխատանքները.

Վարչական գործառույթների իրականացում

Վարչությունն առաջարկություններ է ներկայացրել ԵՊՀ տեղեկատվական համակարգերի ոլորտում տարվող քաղաքականության և ծրագրերի վերաբերյալ, մասնակցել է ԵՊՀ ռազմավարական ծրագրի համապատասխան դրույթների իրականացման աշխատանքներին: Վարչության աշխատակիցները ներգրավված են եղել գնումների՝ օրենքով նախատեսված և պատասխանատու ստորաբաժանմանը վերապահված գործառույթների իրականացման գործում:

Վարչության ներկայացուցիչները ներգրավված են եղել 2016-2020 թթ. ԵՊՀ զարգացման ռազմավարության մշակման աշխատանքներում:

Վարչության աշխատակիցները ներգրավված են «Տեմպուս» ծրագրով իրականացվող HEN-GEAR ծրագրում, որի շրջանակում ստեղծվել է շրջանավարտների տվյալների շտեմարան՝ նրանց զբաղվածության և այլ խնդիրների լուծման նպատակով, ինչպես նաև մասնակցել են կազմակերպված քննարկումներին և ընթացիկ աշխատանքներին:

Վարչությունը վարել է համակարգչային տեխնիկայի էլեկտրոնային գույքագրման և կանչերի գրանցման շտեմարանը՝ կատարելով ընթացիկ թարմացումներ և էլեկտրոնային գրանցում: Ընդլայնվել և վերամշակվել է էլեկտրոնային փոստի հասցե բացելու, համակարգչային տեխնիկայի վերանորոգման, տպիչ սարքերի քարթրիջների վերալիցքավորման, համակարգիչները ինտերնետ ցանցին միացման և մի շարք այլ վարչական գործառույթների ավտոմատացման համակարգը:

Համալսարանում առկա համակարգչային տեխնիկայի սպասարկում և արդիականացում

- Համակարգչային պահեստամասերից հավաքվել և շահագործման են հանձնվել շուրջ 50 նոր համակարգիչներ: Կատարվել են համակարգչային տեխնիկայի ընթացիկ վերանորոգման և ցանցի սպասարկման աշխատանքներ (ըստ մակագրված զեկուցագրերի՝ վերանորոգվել են շուրջ 800 համակարգիչ և համակարգչային տեխնիկա (անխափան սնուցման սարքեր, մոնիտորներ, տպիչ սարքեր, սկաներներ), այդ թվում՝ նաև տեղադրվել են ծրագրային ապահովումներ):
- Վարչության աշխատակիցները տեխնիկական աջակցություն են ցուցաբերել ԵՊՀ տարբեր ստորաբաժանումների կողմից կազմակերպված ավելի քան 30 միջոցառումների համակարգչային տեխնիկայի սպասարկման և ապահովման աշխատանքներին:
- Պետական և ավարտական քննությունների անցկացման լսարաններում տեղադրված 70 IP տեսախցիկներին ավելացվել է ևս 5-ը, որոնց միջոցով բոլոր ֆակուլտետներում ապահովվել են պետական քննությունների (այդ թվում՝ ավարտական աշխատանքների պաշտպանության) ողջ ընթացքի տեսահեռարձակում ԵՊՀ ներքին ցանցում և սահմանված կարգով քննությունների տեսաձայնագրում:
- Վարչության աշխատակիցները մասնակցել են հնացած և անսարք համակարգչային տեխնիկայի դուրսգրման աշխատանքներին՝ տրամադրելով մասնագիտական համապատասխան եզրակացություններ:

Ներհամալսարանական ցանցի սպասարկում, կառավարում և զարգացում

- Ներհամալսարանական ցանցի ընդլայնման շրջանակում ԵՊՀ ցանցին են միացվել ինչպես նոր, այնպես էլ նախկինում ձեռք բերված համակարգիչները (շուրջ 200 համակարգիչ), վերանորոգված մասնաշենքերում և այլ լսարաններում ու աշխատասենյակներում ԵՊՀ համակարգչային ցանցին միանալու նպատակով անցկացվել է համակարգչային նոր ցանց:
- ԵՊՀ կենտրոնական մասնաշենքում, գրադարանում, բոլոր մասնաշենքերում, հյուրերի տանը, ԵՊՀ միջազգային կրթական կենտրոնում, Կիևյան ուսումնական մասնաշենքում և Ծաղկաձորի ԵՊՀ ուսումնաարտադրական բազայում ներառված WiFi սարքերի թիվը հասել է 90-ի:
- ԵՊՀ կենտրոնական մասնաշենքի նախասրահում տեղադրված և համակարգչային ցանցին միացված հեռուստամոնիտորներից բացի՝ նոր հեռուստամոնիտորներ են տեղադրվել ԵՊՀ № 1, № 4, № 6, № 8 մասնաշենքերում, որոնք տեղեկատվություն են տալիս ԵՊՀ-ում կայանալիք միջոցառումների մասին:
- Ապահովվել է համալսարանի ինտերնետ կապի կայուն թողունակությունը (միջինը կազմել է 50Mb/s), մշտական օգտվողների թիվը հասել է շուրջ 2100-ի:
- Իրականացվել են ԵՊՀ ներքին ավտոմատ հեռախոսակայանի տեխնիկական սպասարկման աշխատանքները, ընդլայնվել է թիվ 6 մասնաշենքի ներքին հեռախոսակայանը, որի արդյունքում Տնտեսագիտության և կառավարման, ինչպես նաև Աստվածաբանության ֆակուլտետներում ներդրվել են նոր ԱՀԿ-ի հեռախոսահամարներ:

Համալսարանական տեղեկատվական համակարգերի սպասարկում և զարգացում

- Ապահովվել են առանձին սերվերով ԵՊՀ-ի www.ysu.am պորտալի կայքերի հոստինգը (տեղադրում ինտերնետում) և բոլոր կայքերի անխափան աշխատանքն ու անվտանգության բարձր մակարդակը:

- ԵՊՀ աշխատակիցներին տրամադրվել են շուրջ 120 նոր էլեկտրոնային փոստի հասցեներ ysu.am դոմեյնում: Սպասարկվել են ԵՊՀ էլեկտրոնային փոստի սերվերների աշխատանքները:
- Նախորդ տարի մեկնարկած ԵՊՀ ուսանողների էլ. փոստի հասցեների տրամադրման ընթացիկ գործընթացը հասցվել է ավարտին և հաշվետու ժամանակաշրջանում ուսանողական էլ. փոստի հասցեների թիվը կազմել է շուրջ 21200: Հաշվետու ժամանակաշրջանում ԵՊՀ ֆակուլտետների դեկանատները օգտվել են վարչության կողմից ստեղծված ուսանող – դեկանատ (uStaff v2.0) էլեկտրոնային կապի գործիքից, և դեկանատների կողմից ուսանողներին ուղարկվել է շուրջ 2100 էլեկտրոնային հաղորդագրություն:

Աջակցություն համալսարանական ստորաբաժանումներին համակարգչային տեխնիկայի շահագործման և նրանց առջև դրված խնդիրների լուծման գործում

- Տրամադրվել է համակարգչային ծրագրերի և տեխնիկայի հետ աշխատելու խնդիրներին առնչվող խորհրդատվություն (շուրջ 1500 այցելություն և խորհրդատվություն), տարվել են համակարգչային անվտանգության հետ կապված բացատրական աշխատանքներ:
- Ապահովվել է ԵՊՀ գիտական խորհրդի նիստերի և համալսարանական այլ դահլիճներում ու սրահներում տեղի ունեցած միջոցառումների համակարգչային տեխնիկայի սպասարկումը (շուրջ 30 միջոցառում):

ԱՐՀԵՍՏԱԿՑԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

Նախագահ՝ *Ավետիսյան Արմեն Ռուդոլֆի*

ԵՊՀ արհեստակցական կազմակերպության գործունեության հիմնական ուղղություններն են.

- ✓ մասնակցել գործատուի կողմից արհեստակցական կազմակերպության անդամների աշխատանքային, սոցիալ-տնտեսական և իրավական շահերը շոշափող կանոնակարգերի մշակման աշխատանքներին,
- ✓ համալսարանի աշխատողների աշխատանքային, սոցիալական և այլ շահերն ու իրավունքները ներկայացնելու և պաշտպանելու նպատակով նախաձեռնել ու գործատուի հետ կնքել կոլեկտիվ պայմանագիր, հսկողություն իրականացնել դրա կատարման նկատմամբ,
- ✓ համաձայն գործող օրենսդրության՝ մասնակցել կոլեկտիվի աշխատանքային վեճերի կարգավորմանը,
- ✓ համագործակցել հանրապետության և օտարերկրյա արհեստակցական կազմակերպությունների, միավորումների և այլ կազմակերպությունների հետ, ուսումնասիրել և կիրառել արհեստակցական կազմակերպությունների աշխատանքային փորձը, կազմակերպել արհմիութենական ակտիվի ուսուցում,
- ✓ ստանալ և տարածել արհեստակցական կազմակերպության անդամների սոցիալ-տնտեսական և աշխատանքային հարցերին առնչվող տեղեկատվությունը,
- ✓ Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան՝ վերահսկել գործատուի կողմից աշխատանքային օրենսդրության և աշխատանքի պաշտպանության կանոնների պահպանումը,
- ✓ մշակել և իրականացնել աշխատողների առողջարանային բուժման և հանգստի կազմակերպման, զբոսաշրջության, մշակութային և մարզական միջոցառումների ծրագրեր, ինչպես նաև օժանդակել սոցիալական համագործակցության զարգացմանը,
- ✓ ԵՊՀ վարչակազմի առջև հանդես գալ ներհամալսարանական կյանքին վերաբերող նախաձեռնություններով՝ նպատակ ունենալով բարելավել ԵՊՀ աշխատակիցների սոցիալական վիճակն ու աշխատանքային պայմանները,
- ✓ ԵՊՀ սոցիալապես անապահով աշխատակիցներին տրամադրել դրամական օգնություն, ինչպես նաև կազմակերպել անվճար իրավաբանական խորհրդատվություն:

ԵՊՀ արհեստակցական կազմակերպությունն իր կանոնադրական խնդիրներն առավել արդյունավետ լուծելու նպատակով համալսարանի աշխատողների և ուսանողների համար շարունակել է նախորդ տարիներից ավանդույթ դարձած սոցիալական ուղղվածության բազմաբնույթ միջոցառումները: ԵՊՀ արհեստակցական կազմակերպությունը գործել է «ՀՀ աշխատանքային օրենսգրքի», «ՀՀ արհեստակցական կազմակերպությունների մասին» օրենքի, «ԵՊՀ արհեստակցական կազմակերպության» կանոնադրության և «ԵՊՀ կոլեկտիվ պայմանագրի» շրջանակներում:

Հաշվետու ժամանակահատվածում ԵՊՀ արհեստակցական կազմակերպությունը առավել ուշադրություն է դարձրել համալսարանի աշխատակիցների հանգստի, առողջության պահպանման, իրավունքների պաշտպանության, սոցիալական այլևայլ խնդիրների լուծմանն ուղղված ծրագրերի իրականացմանը: Այդ նպատակով ԵՊՀ արհեստակցական կազմակերպությունն իր միջոցներից օգնության կարգով համալսարանի 382 աշխատակիցների, առանձին դեպքերում նաև սոցիալապես խիստ անապահով և հասարակական ակտիվություն ցուցաբերած ուսանողների հատկացրել է տասնվեց միլիոն չորս հարյուր յոթ հազար դրամի օգնություն:

Հաշվետու տարում ԵՊՀ արհեստակցական կազմակերպությունը աշխատողների և ուսանողների 2020 երեխաների և թոռնիկների համար կազմակերպել և իրականացրել է ամանորյա միջոցառումներ՝ հատկացնելով ամանորյա ներկայացման տոմսեր և նվերներ, իսկ հունիսի 1-ի՝ Երեխաների պաշտպանության միջազգային օրվա առթիվ ձեռք է բերվել մանկական երաժշտական ներկայացման 2100 տոմս:

Ֆակուլտետներում և ստորաբաժանումներում իրականացվել են նաև Կանանց միջազգային օրվան նվիրված միջոցառումներ 1562 կին աշխատակիցների համար՝ ծախսելով երեք միլիոն հարյուր երեսունինը հազար դրամ գումար:

Նպատակ ունենալով համալսարանականներին անմասն չթողնել մշակութային կյանքից՝ հաշվետու ժամանակահատվածում ձեռք է բերվել և կոլեկտիվի անդամներին անվճար հատկացվել է համերգային և թատերական տարբեր ներկայացումների 2487 տոմս:

Նախորդ տարվա նման համալսարանի աշխատակիցների, նրանց ընտանիքների անդամների և ուսանողների հանգիստը կազմակերպվել է միայն Ծաղկաձորի ուսումնաարտադրական բազայում, որտեղ հատկացված ուղեգրերով հանգստացել է մոտ 1460 մարդ (5985 մարդ-օր): Իրականացվել է հանգստյան մեկնողների համար ուղեգրերի արժեքի մասնակի զեղչման անհատական մոտեցման համակարգ՝ սոցիալապես առավել անապահով աշխատակիցների նկատմամբ կիրառելով ուղեգրերի արժեքը 50 տոկոսով զեղչելու սկզբունքը:

ԵՊՀ արհեստակցական կազմակերպության՝ 2010 թվականի հունիսի մեկից նախաձեռնած «Ծննդօգնություն համալսարանականներին» ծրագրի շրջանակում այս տարի 79 աշխատակցի ընդհանուր առմամբ հատկացվել է չորս միլիոն յոթ հարյուր վաթսուն հազար դրամ գումար (38-ը՝ առաջին երեխայի, 28-ը՝ երկրորդի, 11-ը՝ երրորդի, 1-ը՝ չորրորդ երեխայի և 1-ը՝ երկրորդ զույգ երեխայի համար):

2014-2015 ուսումնական տարում ԵՊՀ արհեստակցական կազմակերպությունը մի շարք ֆակուլտետների կոլեկտիվների համար մեկօրյա և բազմօրյա արշավներ է կազմակերպել դեպի Հայաստանի, Ջավախքի և Արցախի տարբեր պատմամշակութային տեսարժան վայրեր:

2014 թվականի նոյեմբերին ԵՊՀ արհեստակցական կազմակերպությունն աջակցել է Սոցիոլոգիայի ֆակուլտետի հիմնադրման 10-ամյակին նվիրված միջոցառումների կազմակերպմանը, իսկ դեկտեմբերին Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի հիմնադրման 80 և վերաբացման 30-ամյակներին նվիրված հոբելյանական միջոցառման շրջանակում ֆինանսավորել է ֆակուլտետի վերաբերյալ եռալեզու գրքույկների տպագրությունը: 2015 թվականի հուլիսին Արհկոմիտեն ֆինանսավորել է Մաթեմատիկայի և մեխանիկայի ֆակուլտետի կազմակերպած «Ամառային դպրոցը»՝ ԵՊՀ Ծաղկաձորի ուսումնաարտադրական բազայում ապահովելով 25 մասնակիցների կեցությունն ու սնունդը:

ԵՊՀ արհեստակցական կազմակերպության Արհկոմիտեի նիստի որոշման համաձայն՝ 2015 թվականի ապրիլից մեկնարկել է ԵՊՀ նորապսակ աշխատակիցներին Ծաղկաձորի ուսումնաարտադրական բազայում Արհկոմիտեի կողմից հնգօրյա հարսանեկան ուղեգիր հատկացնելու ծրագիրը: Այն գործում է ՔԿԱԳ կողմից ամուսնության վկայականի տրման օրվանից՝ վեց ամիս ժամկետում: Ապրիլ-օգոստոս ամիսներին ծրագրից օգտվել է 3 զույգ:

ԵՊՀ արհեստակցական կազմակերպությունն ակտիվ մասնակցություն է ունեցել Հայոց եղեռնի 100-ամյակին նվիրված համահամալսարանական և համապետական միջոցառումներին:

Հաշվետու ժամանակահատվածում ավարտվել էր ԵՊՀ կոլեկտիվ պայմանագրի գործողության ժամկետը: Գործատուի և արհեստակցական կազմակերպության կողմից ստեղծված համատեղ հանձնաժողովը քննարկել և մշակել է ԵՊՀ նոր կոլեկտիվ պայմանագիրը: Այն կնքվել է 2015 թվականի մայիսի 20-ին «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կառավարիչ-ռեկտորի և ԵՊՀ արհեստակցական կազմակերպության նախագահի կողմից:

ԵՊՀ արհեստակցական կազմակերպության նախագահը ԵՊՀ պատվիրակության կազմում 2015 թվականի մայիսի 14-15-ին մասնակցել է Եվրոպական բարձրագույն կրթական տարածքի նախարարական գագաթնաժողովին ու Բոլոնիայի գործընթացի 4-րդ քաղաքական ֆորումին: Այդ

շրջանակներում «Education International» կազմակերպության եվրոպական կոմիտեի (որը, ըստ էության, կրթության ոլորտի աշխատակիցների արհեստակցական ազգային կազմակերպությունների համաեվրոպական հարթակ է) հետ երկկողմանի հանդիպումների համատեքստում քննարկվել են ՀՀ բուհերի արհեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միության (որին անդամակցում է ԵՊՀ արհեստակցական կազմակերպությունը, իսկ ԵՊՀ արհեստակցական կազմակերպության նախագահ Ա. Ավետիսյանն այդ միության փոխնախագահն է) անդամության խնդիրն ու երկկողմ համագործակցության ծրագրերը:

2015 թվականի ապրիլ-հունիս ամիսներին ԵՊՀ արհեստակցական կազմակերպությունը ռեկտորատի հետ կազմակերպել և իրականացրել է ԵՊՀ աշխատակիցների պարտադիր բժշկական զննությունը Երևանի համար 4 պոլիկլինիկայում:

2011 թվականից ԵՊՀ արհեստակցական կազմակերպությունում գործող անվճար իրավաբանական խորհրդատվության ծառայությունից հաշվետու տարում օգտվել են ԵՊՀ 124 աշխատակիցներ՝ ստանալով իրավաբանական խորհրդատվություն ոչ միայն աշխատանքային, այլև քաղաքացիաիրավական, ընտանեկան, վարչական և այլ իրավական խնդիրների վերաբերյալ:

ԵՊՀ արհեստակցական կազմակերպության և «Ինգո Արմենիա» ապահովագրական ՓԲ ընկերության միջև կնքված փոխհամաձայնության շնորհիվ հաշվետու տարում ԵՊՀ 204 աշխատակից և ուսանող իրենց և ընտանիքի անդամներին պատկանող ավտոտրանսպորտային միջոցների ապահովագրությունը իրականացրել են սահմանվածից 10% զեղչով: Դա և՛ ժամանակի, և՛ ֆինանսական խնայողություն է:

Հաշվետու ժամանակահատվածում գործարկվել է ԵՊՀ արհեստակցական կազմակերպության նոր ինտերնետային կայքը (http://ysu.am/tu), որը մանրամասնորեն ներկայացնում է կազմակերպության գործունեությունն ու ծրագրերը:

2014-2015 ուստարում իր ակտիվ գործունեությունն է շարունակել ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի արբյուրոն: Պարբերաբար կազմակերպվել են տարբեր միջոցառումներ:

Հաշվետու տարում շարունակվել է ակտիվ համագործակցությունը ինչպես Հայաստանի պետական բուհերի արհեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միության, Հայաստանի արհմիությունների հանրապետական կոնֆեդերացիայի, այնպես էլ Եվրասիական համալսարանների արհմիութենական կազմակերպությունների ասոցիացիայի և Արհմիությունների համընդհանուր կոնֆեդերացիայի հետ:

ԵՊՀ արհեստակցական կազմակերպության նախագահը 2014 թվականի սեպտեմբերի 7-ից 11-ն ընկած ժամանակահատվածում մասնակցել է Ռուսաստանի Դաշնության Խ. Մ. Բերբեկովի անվան Կաբարդինա Բալկարիայի պետական համալսարանում տեղի ունեցած Եվրասիական համալսարանների արհեստակցական կազմակերպությունների ասոցիացիայի (ԵՀԱԿԱ) 27-րդ համագումարին՝ ներկայացնելով ՀՀ մայր բուհը: Քննարկվել են բուհական աշխատողների իրավունքների պաշտպանության արդյունավետության բարձրացմանը, դրանում պետական մոտեցման նշանակությանը վերաբերող հարցեր:

ԵՊՀ արհեստակցական կազմակերպության արհկոմիտեի կազմը

1. Ավետիսյան Արմեն - նախագահ
2. Մամաջանյան Արտաշես - քարտուղար, հաշվապահության և զնումների բաժնի արհբյուրոյի նախագահ
3. Ալիխանյան Մարիամ - Միջազգային հարաբերությունների ֆակուլտետի արհբյուրոյի նախագահ
4. Գրիգորյան Հովիկ - Պատմության ֆակուլտետի արհբյուրոյի նախագահ
5. Էլոյան Ռուբիկ - Հայ բանասիրության ֆակուլտետի արհբյուրոյի նախագահ
6. Թորոսյան Միտուշ - Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի արհբյուրոյի նախագահ

7. Թորոսյան Սվետլանա - Ռեկտորատի և կենտրոնական վարչական ապարատի արհբյուրոյի նախագահ
8. Խաչատրյան Մասիս - Վարչատնտեսական մասի արհբյուրոյի նախագահ
9. Խաչատրյան Մեդորա - Կենսաբանության ֆակուլտետի արհբյուրոյի նախագահ
10. Կարապետյան Արամ - Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի արհբյուրոյի նախագահ
11. Կարապետյան Դավիթ - Ֆիզիկական դաստիարակության և սպորտի համահամալսարանական ամբիոնի արհբյուրոյի նախագահ
12. Կարապետյան Էմիլյա - Ֆիզիկայի ֆակուլտետի արհբյուրոյի նախագահ
13. Կարապետյան Լիլիթ - Եվրոպական ուսումնասիրությունների կենտրոնի արհբյուրոյի նախագահ
14. Հարությունյան Հասմիկ - Քաղաքացիական պաշտպանության համահամալսարանական ամբիոնի արհբյուրոյի նախագահ
15. Հարությունյան Նարինե - Ռոմանագերմանական բանասիրության ֆակուլտետի արհբյուրոյի նախագահ
16. Ղուշչյան Գևորգ - Աստվածաբանության ֆակուլտետի արհբյուրոյի նախագահ
17. Վարդանյան Նանե - Ժուռնալիստիկայի ֆակուլտետի արհբյուրոյի նախագահ
18. Մարգարյան Ալեքսան - Իջևանի մասնաճյուղի արհբյուրոյի նախագահ
19. Միքայելյան Գագիկ - Մաթեմատիկայի և մեխանիկայի ֆակուլտետի արհբյուրոյի նախագահ
20. Մխիթարյան Ռազմիկ - Դեղագիտության և քիմիայի ֆակուլտետի արհբյուրոյի նախագահ
21. Պետրոսյան Աշոտ - Իրավագիտության ֆակուլտետի արհբյուրոյի նախագահ
22. Պետրոսյան Սիմոն - Միջազգային կրթական կենտրոնի արհբյուրոյի նախագահ
23. Զահուկյան Նարինե - Գրադարանի արհբյուրոյի նախագահ
24. Զիլավյան Հրաչուհի - Արևելագիտության ֆակուլտետի արհբյուրոյի նախագահ
25. Սաղոյան Էմմա - Ռուս բանասիրության ֆակուլտետի արհբյուրոյի նախագահ
26. Սարգսյան Անի - Հայագիտական հետազոտությունների ինստիտուտի արհբյուրոյի նախագահ
27. Սերոբյան Ռուբեն - Ինֆորմատիկայի և կիրառական մաթեմատիկայի ֆակուլտետի արհբյուրոյի նախագահ
28. Սողոմոնյան Ժաննա - Տեղեկատվական տեխնոլոգիաների կրթական հետազոտական կենտրոնի արհբյուրոյի նախագահ
29. Վարդանյան Եվգինե - Սոցիոլոգիայի ֆակուլտետի արհբյուրոյի նախագահ
30. Վարդանյան Հայկանուշ - Փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետի արհբյուրոյի նախագահ
31. Քալանթարյան Վիտալի - Ռադիոֆիզիկայի ֆակուլտետի արհբյուրոյի նախագահ

Վերստուգիչ հանձնաժողովի կազմը

1. Կառլեն Գրիգորյան - հանձնաժողովի նախագահ, Էկոլոգիայի և բնության պահպանության ամբիոնի վարիչ
2. Ռոմիկ Հարությունյան - հանձնաժողովի անդամ, Անօրգանական և անալիտիկ քիմիայի ամբիոնի վարիչ
3. Վիլեն Մեթանջյան - հանձնաժողովի անդամ, Քարտեզագրության և գեոմորֆոլոգիայի ամբիոնի դոցենտ

ՍԱՐԳԻՍ ԵՎ ՄԱՐԻ ԻԶՄԻՐԼՅԱՆՆԵՐԻ ԱՆՎԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

Տնօրեն՝ *Միրզոյան Եզնիկ Սահակի, ֆիզմաթ. գիտ. թեկնածու, դոցենտ*

Բաժին՝ 6
Ընթերցասրահ՝ 7
Հաճախում՝ 348662
Աշխատողների թիվը՝ 70

Գրքային ունեցվածք՝ 2116927
Ընթերցողներ՝ 18244
Գրքատացք՝ 926783

Ըստ ընդհանուր ուղղությունների՝ գրադարանում կատարված աշխատանքների ամփոփում

2014-2015 ուստարում գրադարանում շարունակվել են գիտակրթական-տեղեկատվական աշխատանքները, որոնք ներառում են ֆոնդերի նպատակային համալրման, աշխատափուլերի ավտոմատացման, գրականության թվայնացման, «ALEPH» և «KOHA» ծրագրերով էլեկտրոնային գրացուցակների և թղթային քարտարանների հարստացման և գրադարանային արդիականությանն ուղղված այլ գործընթացներ։

Ցեղասպանության 100-ամյակի կապակցությամբ բացվել է Ցեղասպանագիտության կաբինետ, որի ֆոնդերը ձևավորվել են գրապահոցից, գրադարանի այլ բաժիններից և ֆակուլտետներից բերված շուրջ 1200 միավոր գրականությամբ, կազմակերպվել են ցուցահանդեսներ։

Բաժինների աշխատանքային ցուցանիշները

ԱԲՈՆԵՄԵՆՏԻ ԲԱԺԻՆ

Բաժնի վարիչ՝ *Խաչիկօղլյան Քրիստինե Ալիկի*

- Սովորողների գրանցում
- Գեղարվեստական առձեռն ֆոնդի համալրում՝ 1800 միավոր (հայերեն և ռուսերեն)
- Առցանց էլեկտրոնային պատվեր՝ 850
- Գրականության սպասարկում՝
  - առձեռն ֆոնդից՝ 7000 միավոր
  - պահանջաթերթիկով, գրապահոցից՝ 680 միավոր

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԱՄՈՒԼԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԲԱԺԻՆ

Բաժնի վարիչ՝ *Գրիգորյան Անյուտա Տիգրանի*

- Գրականության առկա ֆոնդի կազմը և տպագիր նյութերի քանակը՝
  - գիրք՝ 42719, ամսագիր՝ 25114, ատենախոսություն՝ 2030, թերթերի կազմեր՝ 647, թերթեր (տարեկան, հատով)՝ 6228, որից՝ բաժանորդագրված՝ 3500, Սփյուռքից՝ 2728
- Ֆոնդերի համալրում՝
  - գիրք՝ 510, ամսագիր՝ 260, ատենախոսություն՝ 225, թերթեր՝ 3800 (բաժանորդագրված՝ 3500, Սփյուռքից՝ 300)
- Սպասարկված գրականություն՝ 110314 միավոր
- Հաճախումներ՝ 198762
- Պատճենահանված և վերանորոգված գրականություն՝ 410 գիրք և թերթերի կազմեր
- Ընթերցողի պատվերով գրապահոցից բերված ժամանակավոր օգտագործման գրականություն՝ 240 միավոր

ԳՐԱՊԱՀՈՑԻ ԲԱԺԻՆ

Բաժնի վարիչ՝ *Առաքելյան Մարիա Ալեքսանդրի*

- Ֆոնդերի համալրում՝ 17600 միավոր
- Ընթերցողական պատվերների քանակը (ըստ պահանջաթերթերի)՝ 1700
- Սպասարկված պահանջաթերթերի քանակը՝ 1300
- Դասագրքային առձեռն ֆոնդից սպասարկում՝
  - գրքատացք՝ 54560 միավոր, վերադարձ՝ 49700 միավոր
- Այլ գործընթացների համար տեղահանված և վերադասավորված գրականություն՝
  - մուտքագրման նպատակով՝ 3000 միավոր, թվայնացման նպատակով՝ 250 միավոր, ընթերցասրահների պահանջով՝ 500 գիրք և 10 ատենախոսություն, Ցեղասպանագիտության կաբինետի ֆոնդի ձևավորման համար՝ 400 միավոր, հայերեն հնատիպ գրքեր՝ 1880 միավոր
- Գրքերի կազմում և վերանորոգում՝ 17000 միավոր

ՀԱՄԱԼՐՄԱՆ ԵՎ ՄՇԱԿՄԱՆ ԲԱԺԻՆ

Բաժնի վարիչ՝ *Մխիթարյան Անահիտ Մաքսիմի*

- Համալրված գրականության ընդհանուր քանակը՝ 1537 անուն 12258 միավոր, որից՝
  - գիրք՝ 8069 միավոր, ամսագիր՝ 4014 միավոր, թերթեր՝ 52 անուն, ատենախոսություն՝ 120, տեղեկույթի կրիչ՝ 3 պնակիտ
  - գիտական՝ 9282 միավոր, ուսումնական՝ 300 անուն 2553 միավոր, գեղարվեստական՝ 423 միավոր
  - հայերեն՝ 8370 միավոր, ռուսերեն՝ 1940 միավոր, այլ լեզուներով՝ 1948 միավոր

Այդ թվում՝

- նվիրատվություն՝ 725 անուն 2140 միավոր (1.666.222 դրամի), որից՝
  - գիտական՝ 2071, ուսումնական՝ 21 անուն 48 միավոր, գեղարվեստական՝ 21

- հայերեն՝ 1333, ռուսերեն՝ 323, այլ լեզուներով՝ 484
- դրամական փոխանցումով՝ 76 անուն 507 միավոր (5.847.636 դրամի), որից՝
  - գիտական՝ 375, ուսումնական՝ 34 անուն 132 միավոր
  - հայերեն՝ 450, ռուսերեն՝ 53, այլ լեզուներով՝ 4
- գրափոխանակմամբ՝ 6 անուն 18 միավոր (40770 դրամի), որից՝
  - գիտական՝ 18
  - հայերեն՝ 15, այլ լեզուներով՝ 3
- ԵՊՀ պահեստից և հրատարակչությունից՝ 98 անուն 14018 միավոր (22246782 դրամի), որից՝
  - գիրք՝ 11155, ամսագիր՝ 2863
  - գիտական՝ 9257, ուսումնական՝ 37 անուն 4681 միավոր, գեղարվեստական՝ 80
  - հայերեն՝ 11030, ռուսերեն՝ 962, այլ լեզուներով՝ 2026
- ՄԱԿ-ից՝ 59 անուն 136 միավոր (94000 դրամի), որից՝
  - գիրք՝ 90, ամսագիր՝ 43, պնակիտ՝ 3
  - գիտական՝ 83, ուսումնական՝ 4 անուն 53 միավոր
  - հայերեն՝ 96, ռուսերեն՝ 14, այլ լեզուներով՝ 26
- կորցրածի փոխարեն՝ 446 անուն 650 միավոր (627623 դրամի), որից՝
  - գիտական՝ 47, ուսումնական՝ 203 անուն 283 միավոր, գեղարվեստական՝ 320
  - հայերեն՝ 519, ռուսերեն՝ 116, այլ լեզուներով՝ 15

Համալրմանն օժանդակել են Բոննի, Ռոստոկի, Կալիֆորնիայի, ԱՄՆ Կոնգրեսի գրադարանները, ՄԱԿ-ը, ԵԱՀԿ-ը, Միջազգային դրամական ֆոնդը, ՀՀ-ում Գերմանիայի, Մեծ Բրիտանիայի դեսպանատները:

- Գրադարանից նվիրատվությամբ և գրափոխանակմամբ ելք եղած գրականություն՝
- գիրք, ամսագիր, քարտեզ՝ 921 անուն 4578 միավոր:

ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՎՏՈՄԱՏԱՑՄԱՆ ԲԱԺԻՆ

Բաժնի վարիչ՝ *Սարգսյան Միդա Ստեփանի*

- Գրականության էլեկտրոնային մուտքագրում «ALEPH» և «KOHA» ծրագրերով՝
  - գիրք՝ 5730 միավոր, մատենագիտական գրառում՝ 1971
- Առձեռն ֆոնդերի գրականության մուտքագրում՝ 9524 միավոր
- Պատվիրված էլեկտրոնային հոդվածներ՝
  - Ֆրեզնոյի համալսարանի շտեմարաններից՝ 2890
  - «SUBITO» գերմանական ծառայությունից՝ 132
- Ընթերցողական տոմսերի պատրաստում և էլեկտրոնային բազայում մուտքագրում՝ 5248 ընթերցողի համար, որոնցից՝
  - բակալավր՝ 3150, մագիստրոս՝ 1200, հեռակա բակալավր՝ 508, հեռակա մագիստրոս՝ 350, աշխատակից՝ 40
- Գրականության թվայնացում (լուսապատճենահանում, մշակում և տեղադրում կայքում)՝ 509 գիրք
- «KOHA» գրադարանային նոր ծրագրի ներդրման, էլեկտրոնային ռեսուրսների բաժանորդագրության և գրադարանի կայքէջում տարված աշխատանքներ:

ՀՆԱՏԻՊ, ՀԱՁՎԱԳՅՈՒՏ ԵՎ ԱՐՎԵՍՏԻ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ

Բաժնի վարիչ՝ *Հովսեփյան Մարգարիտա Սաշայի*

- Գրականության տվյալների գրանցում գրքամատյաններում՝
  - ռուսերեն հնատիպ գրականություն՝ 2500 գիրք
- Գրականության մուտքագրում «ALEPH» և «KOHA» ծրագրերով, էլեկտրոնային տարբերակի թղթային քարտագրում
  - մուտքագրված գրականություն՝ 1176 (ռուսերեն հնատիպ), 816 (Գյուլբենկյան հավաքածու)
  - քարտագրված գրականություն՝ 3760
- Ֆոնդերի համալրում հնատիպ և նոր ստացված գրականությամբ՝
  - հնատիպ գրականություն՝ 3 գիրք
  - նոր ստացված գրականություն՝ 35 գիրք
- Սպասարկում՝ 305 ընթերցող
- Ատենախոսությունների մուտքագրում գրադարանային ծրագրերով, էլեկտրոնային տարբերակի թղթային քարտագրում՝
  - մուտքագրված գրականություն՝ 254
  - քարտագրված գրականություն՝ 254
- Հատուկ ֆոնդի գաղտնազերծված գրականության հաշվառում, զտում և հանձնում այլ բաժինների՝ 673 միավոր
- Մատենագիտական-հրատարակչական աշխատանքներ՝
  - ներկայացված է հրատարակության «Երևանի պետական համալսարանում պաշտպանված ատենախոսությունների մատենագիտություն (2013-2014): Պր. 11»-ը։

ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ

Տնօրեն՝ *Գասպարյան Հեղինե Քերոբի*

Պատմության թանգարանի աշխատանքները բաժանվում են հետևյալ խմբերի՝

- ֆոնդի համալրում,
- արխիվի համալրում,
- գիտահետազոտական աշխատանք,
- Հայոց ցեղասպանության 100-ամյա տարելիցին նվիրված միջոցառումներ:

Ֆոնդի համալրում

Հաշվետու ժամանակահատվածում կատարվել են ֆոնդում եղած առարկաների համակարգում և ցուցակագրում: Ֆոնդը համալրվել է 18 միավոր նոր ցուցանմուշներով:

Արխիվի համալրում

Հաշվետու ժամանակաշրջանում արխիվում, ժամանակակից պահանջներին համահունչ, կատարվել է փաստաթղթերի վերադասավորում: Արխիվը համալրվել է ԵՊՀ պատմությանը վերաբերող 169 էջ նոր փաստաթղթերով:

Գիտահետազոտական աշխատանք

Համակարգվել և մուտքագրվել են համալսարանի պատմության կարևոր դեպքերին ու միջոցառումներին վերաբերող նյութեր:

Կատարվել է գիտահետազոտական աշխատանք, որի արդյունքում տպագրության է պատրաստվում «Երևանի պետական համալսարան» գիրքը:

Մասսայական աշխատանք

Թանգարանի մշտական ցուցադրությունը համալրվել է նոր ցուցանմուշներով, այդ թվում՝ ԵՊՀ ուսանողական կյանքը լուսաբանող նյութերով ու լուսանկարներով:

Թանգարանում բացվել է նոր ցուցասրահ, որտեղ ներկայացված են համալսարանի միջազգային կապերին ու համագործակցությանն առնչվող ավելի քան 100 ցուցանմուշ:

Թանգարանի բոլոր ցուցանմուշները ներկայացվել են երեք լեզուներով՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն:

Ըստ թանգարանում կազմված ժամանակացույցի՝ կազմակերպվել է ԵՊՀ առաջին կուրսեցիների, ինչպես նաև հանրապետության տարբեր հանրակրթական դպրոցների աշակերտների այցելություններ թանգարան: Թանգարան են այցելել նաև հյուրեր արտերկրից: Հաշվետու ժամանակաշրջանում թանգարանն ունեցել է 1800 այցելու:

Հայոց ցեղասպանության 100-ամյա տարելիցին նվիրված միջոցառումներ

Հաշվետու ժամանակահատվածում թանգարանը Հայոց ցեղասպանության 100-ամյա տարելիցին նվիրված ԵՊՀ միջոցառումների շրջանակում կազմակերպել է.

1. բաց դաս՝ «Համալսարանի հիմնադրումը որպես հայ ժողովրդի հետցեղասպանական հոգևոր վերածնունդ» խորագրով,
2. լուսանկարների ցուցադրություն /կատարված Արևմտյան Հայաստանում/՝ «Էրգիրը տիրոջ աչքերով» խորագրով:

ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Տնօրեն՝ *Բուդաղյան Արմեն Ստեփանի, ուս. աշխատանքների գծով պրոռեկտորի տեղակալ, տեխն. գիտ. թեկնածու, դոցենտ*

Հաշվետու ուստարում ԵՊՀ որակի ապահովման կենտրոնը (ՈԱԿ) ԵՊՀ այլ ստորաբաժանումների հետ իրականացրել է հետևյալ աշխատանքները.

1. Որակի ապահովում

ՈԱԿ-ի հիմնական առաքելությունը որակի ապահովման գործընթացներում ներգրավված կառույցների գործունեության համակարգումը և որակի ներքին ապահովման գործընթացների ու մեխանիզմների գործադրումն է: Ըստ այդմ՝ ՈԱԿ-ը ներգրավվել է հետևյալ աշխատանքներում.

- Շարունակվել են աշխատանքները ԵՊՀ դասընթացների և կրթական ծրագրերի որակի և արդյունավետության գնահատման առցանց էլեկտրոնային համակարգի ստեղծման ուղղությամբ:
- Շարունակվել են աշխատանքները ֆակուլտետների հետ նոր կրթական ծրագրերի մշակման ուղղությամբ, իրականացվել են աշխատանքներ նոր ծրագրերի փաթեթների ստուգման և մասնագիտական եզրակացության տրամադրման առումով:
- Հրատարակվել է ԵՊՀ դասախոսական կազմի տարեկան գործունեության գնահատման ղեկավար ձեռնարկը, որը ներառում է դասախոսի ինքնագնահատման ընթացակարգը և ձևաչափը (դասախոսի ինքնագնահատման տարեկան զեկույցի ձևաթերթի տեսքով), գործընկեր դասախոսների և անմիջական ղեկավարի (ամբիոնի վարիչի) կողմից դասախոսի գնահատման ընթացակարգը և ձևաչափը, ինչպես նաև դասախոսի գնահատման չափանիշները՝ ներկայացված երեք հիմնական ոլորտներում (դասավանդում և ուսումնամեթոդական գործունեություն, գիտահետազոտական և ստեղծագործական գործունեություն, հասարակական և վարչական գործունեություն) տարբեր տարակարգերի դասախոսների գնահատման անալիտիկ ռուբրիկի տեսքով:
- Լրամշակվել և հրատարակվել է «ԵՊՀ գործունեության գնահատման առանցքային ցուցանիշներ (ԳԱՑ)» 3-րդ հրատարակության անգլերեն տարբերակը 2008-2013 թթ. համար:
- ՈԱԿ-ի աշխատողները մասնակցել են ոլորտին վերաբերող թեմաներով անցկացված մի շարք գիտաժողովների և սեմինարների, ինչպես նաև հանրապետությունում և արտերկրում կազմակերպված վերապատրաստումների:

2. Ռազմավարական պլանավորում

- Պատրաստվել և հրատարակվել է ԵՊՀ 2010-2014 թթ. զարգացման ռազմավարական ծրագրի իրականացման վերաբերյալ զեկույց, որը քննարկվել է ԵՊՀ գիտական խորհրդում և ներկայացվել ԵՊՀ խորհուրդ:
- Ռեկտորի ղեկավարությամբ և ՈԱԿ-ի անմիջական մասնակցությամբ նախապատրաստական աշխատանքներ են տարվել ԵՊՀ զարգացման նոր ռազմավարական ծրագրի մշակման ուղղությամբ: Մասնավորապես՝
  - ԵՊՀ ռեկտորի հրամաններով կազմված և հաստատված աշխատանքային խմբերը, ըստ ԵՊՀ 2016-2020 թթ. զարգացման ռազմավարական ծրագրի մշակման աշխատանքների ժամանակացույցի, ուսումնասիրել և բացահայտել են համապատասխան ոլորտներում ԵՊՀ

գործունեության ներքին ուժեղ և թույլ կողմերը, արտաքին հնարավորությունները և վտանգները: Կազմվել է ԵՊՀ SWOT-ը:

– ՈԱԿ-ը կոորդինացրել է աշխատանքային ինը խմբերի հանդիպում-քննարկումները համապատասխան պրոռեկտորների ղեկավարությամբ, ինչպես նաև համակարգող հանձնաժողովի հանդիպումները ԵՊՀ ռեկտորի հետ:
– ՈԱԿ-ը համակարգել և ի մի է բերել ՌԾ աշխատանքային խմբերի մշակած և համակարգող հանձնաժողովի քննարկած ռազմավարական նպատակների, դրանց իրականացման համար անհրաժեշտ խնդիրների ձևակերպումները, համապատասխան գործողությունների՝ ըստ կատարման ժամկետների մշակումը, ռազմավարական նպատակների առաջընթացի գնահատման քանակական և որակական ցուցիչների սահմանումը և այլն:
– Կազմվել է ԵՊՀ 2016-2020 թթ. զարգացման ռազմավարական ծրագրի և նրա իրականացման աշխատանքային պլանի նախագիծը:

3. Ուսումնական գործընթացի բարելավում

- ՈԱԿ-ի աջակցությամբ ֆակուլտետներում շարունակվել են աշխատանքները կրթական վերջնարդյունքների վրա հիմնված ուսումնական ծրագրերի մասնագրերի (սպեցիֆիկացիաների) մշակման ուղղությամբ:
- ՈԱԿ-ի աջակցությամբ ֆակուլտետներում լրամշակվել են ԵՊՀ առկա և հեռակա ուսուցման համակարգերի բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերով սովորող ուսանողների համար նախատեսված միասնական ֆակուլտետային «Կրեդիտային համակարգով ուսումնառության ուղեցույց և դասընթացների տեղեկագիրք» տեղեկատվական ձեռնարկները: Դրանք տեղադրվել են ԵՊՀ պաշտոնական կայքում՝ ներբեռնելու հնարավորությամբ:
- ՈԱԿ-ի աջակցությամբ ֆակուլտետներում տպագրվել է համաեվրոպական ձևաչափի դիպլոմի հավելվածը առկա և հեռակա ուսուցման բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերի ուսանողների համար:

* * *

ՈԱԿ-ը ԿԳՆ-ի, ՀՀ և եվրոպական մի շարք գործընկեր բուհերի ու կազմակերպությունների հետ շարունակել է նախորդ տարում մեկնարկած TEMPUS «ARMENQA» ազգային նշանակության եռամյա ծրագիրը, որն ուղղված է որակավորումների ազգային և ոլորտային շրջանակների (ՈԱՇ և ՈՈՇ) իրականացմանը ՀՀ-ում: Նախագիծը ֆինանսավորվում է Եվրոպական հանձնաժողովի կողմից, որի հիմնական խնդիրներն են.

– ՀՀ ՈԱՇ-ի գործնականացում օրենսդրական, կանոնադրական և մեթոդաբանական հենքի ու մի շարք գործիքների ստեղծման և կիրարկման միջոցով,
– ՈԱՇ-ի մասին հիմնական շահակիցների՝ բուհերի, ուսանողների և շրջանավարտների, գործատուների ու աշխատաշուկայի ներկայացուցիչների, ոլորտը կարգավորող պետական մարմինների ու հանրային գործընկերների կարողությունների զարգացում,
– ՀՀ-ում ՈՈՇ-ների ստեղծման և փորձարկման նպատակով համապատասխան մեթոդաբանական հենքի մշակում,
– ՀՀ բուհերին ծրագրային կողմնորոշիչների, մեթոդաբանական հենքի և պրակտիկ գործիքների տրամադրում կրթական վերջնարդյունքների վրա հիմնված բազմամակարդակ կրթական ծրագրերի մշակման համար, որոնք համահունչ են ՀՀ ՈԱՇ-ի, ՈՈՇ-ների և աշխատաշուկայի պահանջներին:

Արտասահմանյան դրամաշնորհներ

Թեմայի անվանումը	*Ղեկավար*
1. Որակավորումների ազգային և ոլորտային շրջանակների իրականացումը Հայաստանում (ՏԵՄՊՈՒՍ-ի «ARMENQA» նախագիծ):	Բուդաղյան Ա. Ս.

Թեմա 1. Թեմայի շրջանակում հաշվետու ժամանակահատվածում իրականացվել են հետևյալ աշխատանքները.

1. Վերջնականացվել է ՀՀ բարձրագույն կրթության որակավորումների ազգային շրջանակը (ՈԱՇ) և տրամադրվել ՀՀ ԿԳՆ-ին՝ Կառավարության հաստատմանը ներկայացնելու համար:
2. Մշակվել են ՀՀ ՈԱՇ-ի իրականացման ռազմավարությունը և միջոցառումների պլանը:
3. Ստեղծվել են համապատասխան գործիքամիջոցներ և թափանցիկ ընթացակարգեր՝ գործող որակավորումները ՈԱՇ-ին համապատասխանեցնելու և նոր որակավորումները շրջանակի մեջ ներառելու համար:
4. Կազմվել է ՈԱՇ-ի իրականացման ձեռնարկ բուհերի, գործատուների և ոլորտը կարգավորող պետական մարմինների և այլ շահակիցների համար:
5. Կազմվել է ՈԱՇ-ի հիմնական տերմինները, հասկացությունները և սկզբունքները պարզաբանող համակարգված տերմինարան:
6. ՈԱՇ-ի հիմնական շահակիցների համար կազմակերպվել են քննարկումներ, սեմինարներ, աշխատաժողովներ, ուսուցողական այցեր և վերապատրաստումներ:

Կենտրոնին կից գործում է 1 բազային լաբորատորիա

ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱ

Գիտական ղեկավար՝ *Գրիգորյան Ալեքսանդր Կոնստանտինի, ֆիզմաթ. գիտ. թեկնածու, դոցենտ, առաջատար գիտաշխատող*

Լաբորատորիայի աշխատակիցների կազմը

1. Բուդաղյան Արմեն Ստեփանի, տեխն. գիտ. թեկնածու, դոցենտ, ավագ գիտաշխատող
2. Հարությունյան Նազիկ Կարապետի, մանկ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր, ավագ գիտաշխատող
3. Շաքյան Ստելլա Հարությունի, ավագ լաբորանտ
4. Աբրահամյան Անի Դավիթի, ավագ լաբորանտ

Ըստ ընդհանուր ուղղությունների՝ լաբորատորայում կատարված գիտական աշխատանքների ամփոփում

Գիտական թեմաներ

Թեմայի անվանումը	*Ղեկավար*
1. ՀՀ բարձրագույն կրթության արդիականացման հիմնախնդիրները եվրոպական բարձրագույն կրթության տարածքում ինտեգրման համատեքստում (պետական ֆինանսավորում):	Գրիգորյան Ա. Կ.

Թեմա 1. Թեմայի շրջանակում հաշվետու ժամանակահատվածում իրականացվել են հետևյալ աշխատանքները.

1. Որոշվել են ԵՊՀ գործունեության հիմնական ոլորտները, մշակվել է իրավիճակի և արդյունավետության գնահատման ցուցանիշների լրակազմը, որոշվել են ցուցանիշների արժեքները վերջին 2 տարվա համար, կատարվել են դրանց վերլուծություն և հիմնական միտումների բացահայտում, արվել են համապատասխան եզրահանգումներ: Գործողության արդյունքում հրատարակվել են ԵՊՀ գործունեության գնահատման ցուցանիշների լրակազմը և համապատասխան վերլուծական զեկույցը:

2. Մշակվել են համապատասխան հարցաշարեր, պատրաստվել ու տպագրվել են դրանց հարցաթերթերը, կազմակերպվել և անց են կացվել շրջանավարտների բավարարվածության և զբաղվածության հարցումներ: Մշակվել և վերլուծվել են վերջին երեք տարվա (2011-2013) շրջանավարտների բավարարվածության արդյունքները, կատարվել է համեմատական վերլուծություն: Գործողության արդյունքում պատրաստվել է ԵՊՀ 2011-2013 թթ. շրջանավարտների բավարարվածության և զբաղվածության զեկույց, որը հրատարակվել է 2015 թ.-ին:

3. Մշակվել են համապատասխան հարցաշարեր, կազմակերպվել և անց են կացվել գործատուների բավարարվածության հարցումներ: Արդյունքները մշակվել և վերլուծվել են, կատարվել են համապատասխան եզրահանգումներ: Գործողության արդյունքում կազմվել է ԵՊՀ շրջանավարտներից հիմնական գործատու կազմակերպությունների բավարարվածության զեկույց:

4. Ուսումնասիրվել է ՀՀ բարձրագույն կրթության որակավորումների ազգային շրջանակը, նրա մակարդակների նկարագրիչները համադրվել են Եվրոպական բարձրագույն կրթության տարածքի Որակավորումների շրջանակի, Հարատև ուսումնառության որակավորումների Եվրոպական շրջանակի և մի շարք եվրոպական երկրների որակավորումների ազգային շրջանակների նկարագրիչների հետ, որի արդյունքում գործող նկարագրիչները ամբողջությամբ փոխվել են նորերով, առաջադրվել է նոր շրջանակի նախագիծ: Գործողության արդյունքում կազմվել և 2014 թ. հունիսին ՀՀ կրթության և գիտության նախարարությանն է ներկայացվել ՀՀ բարձրագույն կրթության որակավորումների ազգային շրջանակի նոր նախագիծը, որը նախապես հավանության է արժանացել եվրոպական փորձագետների և բուհական հանրության կողմից:

Հրատարակություններ

Դասագիրք	Մենագրություն	Ուսումնական ձեռնարկ	Ուսումնամեթոդական ձեռնարկ	Հոդված	Զեկուցման թեզիս
-	3	-	2	5	1

Գիտական և ուսումնամեթոդական հրատարակությունների ցանկ

Մենագրություն

1. *Ա. Հ. Սիմոնյան, Ա. Կ. Գրիգորյան, Մ. Գ. Սանթուրջյան,* «Key Performance Indicators of Yerevan State University (2008-2013)», ԵՊՀ հրատ., Երևան, 2014, 100 էջ:
2. *Ա. Ս. Բուդաղյան, Կ. Վ. Հարությունյան, Կ. Գ. Ծատուրյան, Մ. Գ. Սանթուրջյան,* Reforms in the higher education of Armenia, In the context of the Bolonia progress, ԵՊՀ հրատ., Երևան, 2015, 72 էջ:
3. *A. S. Budaghyan, K. V. Harutyunyan, K. G. Tsaturyan, M. G. Santurjyan,* Reforms in the Higher Education of Armenia in the Context of the Bologna Process, National Centre for Strategic Research in Higher Education, Tigran Mets, Yerevan, 2015, 72 p..

Ուսումնամեթոդական ձեռնարկ

1. *Ռ. Խաչատրյան, Ա. Բուդաղյան և այլք,* Մարդկային ռեսուրսների կառավարումը բարձրագույն ուսումնական հաստատություններում, «Լինգվա» հրատ., Երևան, 2015, 548 էջ:
2. *A. H. Simonyan, A. K. Grigoryan, G. G. Gevorgyan, R. L. Markosyan, A. S. Budaghyan, M. G. Santurjyan, A. N. Sargsyan,* The Key Performance Indicators of Yerevan State University (2008-2013), Yerevan State University, YSU Press, Yerevan, 2014, 100 p..

Հոդված

1. *Ա. Գրիգորյան,* ՀՀ բուհերի վարկանիշավորումը, «Մանկավարժության ժամանակակից հիմնախնդիրները» տարածաշրջանային միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածու, Երևան, «Զանգակ» հրատ., 2015, էջ 79-84:
2. *Ա. Բուդաղյան, Ա. Գրիգորյան,* Առցանց ուսուցման որակի հիմնահարցերը ԵՊՀ-ում: Ուսումնառության ռեսուրսների վիրտուալիզացիա. Միջհամալսարանական համագործակցության փորձի փոխանակում, Գիտաժողովի նյութերի ժողովածու, ԵՊՀ, 20 մարտի, Երևան, 2015, էջ 15-17:
3. *Ա. Բուդաղյան, Ա. Գրիգորյան,* Էլեկտրոնային ուսուցման որակի ապահովումը: Ուսումնառության ռեսուրսների վիրտուալիզացիա. Միջհամալսարանական համագործակցության փորձի փոխանակում, Գիտաժողովի նյութերի ժողովածու, ԵՊՀ, 20 մարտի, Երևան, 2015, էջ 27-37:
4. *А. К. Григорян, А. Г. Симонян, А. Г. Есаян, Г. Г. Жамгарян, С. К. Шукурян,* Применение технологий обучения в организации экологического образования студентов Ереванского государственного университета, Экологические проблемы. Евразийское пространство, Москва, Издательство МГУ, 2014 (серия коллективных монографий «Евразийские университеты XXI века»), с. 17-24.
5. *A. Grigoryan, A. Budaghyan,* Development of the Internal Quality Assurance System at Yerevan State University (YSU), Proceedings of International Conference "Education in the 21st Century: Problems and Challenges", Yerevan, 10-13 June, 2014, Yerevan, 2014, pages 12-14.

Զեկուցման թեզիս

1. *Ա. Գրիգորյան,* ՀՀ բուհերի վարկանիշավորումը, «Մանկավարժության ժամանակակից հիմնախնդիրները» տարածաշրջանային միջազգային գիտաժողովի թեզիսներ, Ծաղկաձոր, 17-18 հոկտեմբերի, 2014, էջ 89-92:

ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻ ԵՎ ԿԱՐԻԵՐԱՅԻ ԿԵՆՏՐՈՆ

Կենտրոնի տնօրեն՝ *Հակոբյան Լիլիթ Տարոնի*

Շրջանավարտների և կարիերայի կենտրոնը 2014-2015 ուսումնական տարվա գործունեության ընթացքում իրականացրել է հետևյալ ծրագրերն ու միջոցառումները.

- **համալսարան-ձեռնարկություն փոխգործակցության խթանում,**
- **պարբերական բնույթ կրող սեմինար-դասընթացների կազմակերպում,**
- **ուսանողների կարիերայի զարգացմանը նպաստող այցեր և հանդիպումներ,**
- **ինտերնշիփների և լրացուցիչ ուսանողական պրակտիկայի կազմակերպում,**
- **աշխատանքային հնարավորությունների ընձեռում,**
- **էլեկտրոնային նոր ռեսուրսների մշակում և զարգացում,**
- **կրթաթոշակներ:**

1. Համալսարան-ձեռնարկություն փոխգործակցության խթանում

2014 թ. կենտրոնի նախաձեռնությամբ հայաստանյան առաջատար բուհերի (Երևանի պետական համալսարան, Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարան, Հայաստանի ամերիկյան համալսարան, Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան, Երևանի ճարտարապետության և շինարարության պետական համալսարան, Հայաստանի ազգային ագրարային համալսարան, Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարան, Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան, Ռուս-հայկական (Սլավոնական) համալսարան) ուսանողների կարիերայի խնդիրներով զբաղվող կառույցների միջև կնքվեց համագործակցության հուշագիր, որում, ի թիվս այլ խնդիրների, ամրագրվեց նաև ամենամյա միջբուհական աշխատանքային տոնավաճառի կազմակերպման դրույթը:

2014 թ.-ի նոյեմբերի 19-ին ԵՊՀ-ում կազմակերպվեց **«Բուհից աշխատաշուկա՝ 1 քայլ»** խորագրով առաջին միջբուհական աշխատանքային տոնավաճառը, որին մասնակցեցին շուրջ 100 մասնավոր և պետական ձեռնարկություն, ինչպես նաև միջազգային և տեղական կազմակերպություն: Միջոցառման ընթացքում մասնակից կազմակերպությունների ներկայացուցիչները իրենց հատկացված տաղավարներում ներկայացրեցին տեղեկատվական նյութեր ընկերության և առաջարկվող աշխատատեղերի, ինթերնշիփերի և տվյալ կազմակերպության կադրային քաղաքականության վերաբերյալ:

Տոնավաճառին զուգահեռ անցկացվեց նաև **«ՀՀ կրթական համակարգ և աշխատաշուկա. առկա խնդիրներն ու փոխգործակցության ընդլայնմանն ուղղված քայլեր»** խորագրով կլոր սեղան սեմինար-քննարկում մի շարք ձեռնարկությունների, միջազգային կազմակերպությունների պատասխանատու անձանց, պետական այրերի և նշված ոլորտում մասնագիտացած փորձագետների մասնակցությամբ:

Կազմակերպվեցին նաև ուսանողների համար նախատեսված դասընթացներ հետևյալ թեմաներով՝

• ***«Բարձրագույն կրթության հնարավորությունները Erasmus+ ծրագրում»*** (վարող՝ Անի Թորոսյան, Հայաստանում Էրազմուս+ ծրագրի ազգային գրասենյակ, համակարգողի օգնական):

• ***«Ներքին աուդիտորի մասնագիտության ընձեռած հնարավորությունները»*** խորագրով սեմինար-դասընթաց (դասընթացավար՝ Արա Չալաբյան, «Ներքին աուդիտորների ինստիտուտ-Հայաստան» ՀԿ-ի նախագահ, Հայաստանի Կենտրոնական բանկի ներքին աուդիտի ղեկավար):

• ***«Որոնք են աշխատաշուկայում մրցունակ լինելու հիմնական կարողությունները»*** խորագրով սեմինար-դասընթաց (դասընթացավար՝ Շահանե Բեգլարյան, Մասնագիտական կողմնորոշման մեթոդական կենտրոնի ուսումնամեթոդական բաժնի գլխավոր մասնագետ):

2. Պարբերական բնույթ կրող սեմինար-դասընթացների կազմակերպում

Հիմնական կազմակերպիչը	***Դասընթացի անվանումը***	***Մասնակիցների թիվը***
ԵՊՀ շրջանավարտների և կարիերայի կենտրոն	CV գրելու և գործատուին ներկայանալու հմտություններ	352 մասնակից
ԵՊՀ շրջանավարտների և կարիերայի կենտրոն	«Գործարար իմիջ և բիզնես-էթիկետ» խորագրով եռօրյա սեմինար-դասընթաց	44 մասնակից
ԵՊՀ շրջանավարտների և կարիերայի կենտրոն	«Ինչպե՞ս կառուցել խոստումնալից կարիերա» խորագրով եռօրյա անվճար սեմինար-դասընթաց	53 մասնակից
ԵՊՀ շրջանավարտների և կարիերայի կենտրոն	«Կարիերայի կառավարում» խորագրով եռօրյա անվճար սեմինար-դասընթաց	37 մասնակից
ԵՊՀ շրջանավարտների և կարիերայի կենտրոն	«Ինչպես սկսել բիզնես առանց նախնական կապիտալի» խորագրով եռօրյա սեմինար-դասընթաց	48 մասնակից
«Ամքոր Հայաստան» ՀԿ	«Թրաֆիքինգը և հարկադիր աշխատանքը Հայաստանում» խորագրով սեմինար-դասընթաց	46 մասնակից
«ԿԱԶԱ» շվեյցարական մարդասիրական հիմնադրամի «Էսպաս» երիտասարդական կրթամշակութային կենտրոն	«Ինչպե՞ս և որտե՞ղ փնտրել աշխատանք» խորագրով սեմինար-դասընթաց	38 մասնակից
«Օրանժ Արմենիա» ՓԲԸ	«Ինչպե՞ս գրել CV և ինչպե՞ս անցնել աշխատանքային հարցազրույցը» խորագրով սեմինար-դասընթաց	52 մասնակից
«Օրանժ Արմենիա» ՓԲԸ	«Հաճախորդների սպասարկման հիմունքներ» խորագրով սեմինար-դասընթաց	36 մասնակից
«Ռոսգոսստրախ-Արմենիա» ԱՓԲԸ	«Հաջողության բանաձև» խորագրով սեմինար-դասընթաց	42 մասնակից
«Այ Էյ Բի» բիզնեսի միջազգային ակադեմիա	«Խաղերը՝ անգլերենի ուսուցման մաս. տեսականից դեպի գործնական իրականություն» խորագրով սեմինար-դասընթաց	46 մասնակից
Ընդամենը	**794 ուսանող /շրջանավարտ**	

3. Ուսանողների կարիերայի զարգացմանը նպաստող այցեր, հանդիպումներ

Կազմակերպությունը	Մասնակիցների թիվը
«Կոկա-Կոլա Հելլենիկ Բոթլինգ Քամփնի Արմենիա» ՓԲԸ	76 ուսանող
«Ռոսգոսստրախ-Արմենիա» ԱՓԲԸ	42 ուսանող
Ընդամենը	**118 մասնակից**

4. Ինտերնշիփերի (լրացուցիչ ուսանողական պրակտիկայի) կազմակերպում

Կազմակերպությունը	Դիմողների թիվը	Ընդգրկված ուսանողների թիվը
«Ռոսգոսստրախ-Արմենիա» ՓԲԸ	38 ուսանող	19 ուսանող
«Վիվասել-ՄՏՍ» ՓԲԸ	67 ուսանող	24 ուսանող
«Իդրամ» ՍՊԸ	10 ուսանող	3 ուսանող
ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողով	15 ուսանող	3 ուսանող
«Զիգզագ» ՍՊԸ	32 ուսանող	11 ուսանող
«Ի ԷԼ ԷԼ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՍՊԸ	9 ուսանող	2 ուսանող
«Օրանժ Արմենիա» ՓԲԸ	13 ուսանող	13 ուսանող
Ընդամենը	**184 ուսանող**	**75 ուսանող**

5. Աշխատանքային հնարավորությունների ընձեռում

Կազմակերպությունը	Դիմել է	Աշխատանքի ընդունված ուսանողների թիվը
«Արփիմեդ» դեղագործական ընկերություն (քիմիկ-անալիտիկ)	28	6
«Պրոկրեդիտ բանկ» ՓԲԸ (իրավախորհրդատու)	3	1
«Իմեքս Գրուպ» ՍՊԸ (առևտրային դիրքի կառավարիչ)	6	1
«Ռոսգոսստրախ-Արմենիա» ՓԲԸ (անձնակազմի կառավարման դեպարտամենտի մասնագետ)	8	3
«Ռոսգոսստրախ-Արմենիա» ՓԲԸ (վերասպահովագրության բաժնի մասնագետ)	15	4
«Այ Էյ Բի» հայ-բրիտանական ընկերություն (անգլերենի դասախոս)	6	1
«Այ Էյ Բի» հայ-բրիտանական ընկերություն (դասընթացների համակարգող)	12	3
«Դանաֆարմ» ՍՊԸ (դեղագետ)	9	2

«Ինֆորմացիոն տեխնոլոգիաների ձեռնարկությունների միություն»	15	2
«Այբ» հոգեբանական կենտրոն (հոգեբան)	6	2
«ՀայՓոստ» (հասարակայնության հետ կապերի պատասխանատու)	17	4
«Այ Էյ Բի» հայ-բրիտանական ընկերություն (հայերենի դասախոս)	5	1
«Դանաֆարմ» ՍՊԸ (վաճառքի և գովազդի խմբի ղեկավար)	3	1
«Դանաֆարմ» ՍՊԸ (Տեղեկատվական կենտրոնի մենեջեր)	1	1
«Այ Էյ Բի» հայ-բրիտանական ընկերություն (անգլերենի դասախոս)	10	2
«ՍԵՖ Ինտերնեյշնլ ՈՒՎԿ» ՍՊԸ (վարկային մասնագետ «Արարատ» մասնաճյուղի համար)	3	1
«Այ Փի Էս Սի» քաղաքական և սոցիոլոգիական խորհրդատվությունների ինստիտուտ (հարցազրուցավար)	12	3
«ՊրոԿրեդիտ բանկ» (բիզնես հաճախորդների խորհրդատու)	5	1
«Զիգզագ» ՍՊԸ (լոգիստիկայի մասնագետ)	7	1
ՀՀ Կառավարության աշխատակազմի Ֆինանսատնտեսագիտական վարչություն	23	3
«ՓՄՁ ներդրումներ ՈՒՎԿ» ՓԲԸ (Ֆինանսավարկային վարչության վարկային մասնագետ)	10	1
«Նորամուծության և ձեռներեցության ազգային կենտրոն» ՊՈԱԿ (առաջին կարգի և առաջատար մասնագետներ)	14	1
«Սի Ընդ էֆ Քո» ՍՊԸ (գլխավոր հաշվապահի օգնական)	3	1
Արարատի կոնյակի գործարան «Ա.Կ.Զ» (մենեջեր-գործավարուհի)	10	2
Արարատի կոնյակի գործարան «Ա.Կ.Զ» (իրավաբան)	7	1
«Ռոսգոսստրախ-Արմենիա» ԱՓԲԸ (ընդունարանի աշխատակից)	11	3
«Արմսվիսբանկ» ՓԲԸ	16	2
«Ավարայր Տուր» (տուրօպերատոր)	20	3
«Թեքնոլոջի Ընդ Սայնս Դայնամիքս» ՍՊԸ (տեխնիկական սպասարկման մասնագետ)	12	1
«Թեքնոլոջի Ընդ Սայնս Դայնամիքս» ՍՊԸ (ցանցային ադմինիստրատոր)	9	1

«Արմենիա Վայն գործարան» ՍՊԸ (գիդ-էքսկուրսավար)	19	1
«Յուքոմ» ընկերություն (տեղեկատվական կենտրոնի մասնագետ)	13	1
«Օրանժ Արմենիա» ընկերություն (կորպորատիվ վաճառքների բաժնի ասիստենտ)	9	1
«Օրանժ Արմենիա» (վաճառքների գործառնական բաժնի ասիստենտ)	7	1
«Օրանժ Արմենիա» (որակի և թրեյնինգների խորհրդատու)	21	2
«Մալխասյան Քոնսալթինգ» ՍՊԸ (օտար լեզուների մասնագետներ՝ անգլերեն, ֆրանսերեն, իտալերեն, իսպաներեն, գերմաներեն, թուրքերեն, լեհերեն, արաբերեն)	18	4
«Այ Փի Էս Սի» քաղաքական և սոցիոլոգիական խորհրդատվությունների ինստիտուտ (հարցազրուցավար)	16	6
«Այ Փի Էս Սի» քաղաքական և սոցիոլոգիական խորհրդատվությունների ինստիտուտ (կոորդինատոր)	12	2
«Սաննի Թոեֆլ» ուսումնական կենտրոն (օտար լեզուների մասնագետներ՝ անգլերեն, ֆրանսերեն, իտալերեն, իսպաներեն)	15	5
Ընդամենը	**488 ուսանող/շրջանավարտ**	**83 ուսանող/շրջանավարտ**

6. Էլեկտրոնային նոր ռեսուրսների մշակում և զարգացում

Հաշվետու տարվա ընթացքում կենտրոնի կողմից վերամշակվել է կենտրոնի նոր կայքը (http://www.ysu.am/careercenter/), ինչպես նաև ստեղծվել է ձեռնարկությունների հետ համագործակցության պորտալը (http://ysu.am/cooperation/):

7. Կրթաթոշակներ

Հաշվետու տարվա ընթացքում կենտրոնի միջնորդությամբ «ՎիվաՍել-ՄՏՍ»-ի կողմից վճարվել է ԵՊՀ տարբեր ֆակուլտետների 22 ուսանողի տարեկան վարձավճարը, իսկ «Օրանժ Արմենիա» ընկերությունը կրթաթոշակ է տրամադրել գերազանց առաջադիմություն ցուցաբերած 10 ուսանողի:

ՄՇԱԿՈՒՅԹԻ ԿԵՆՏՐՈՆ

Կենտրոնի տնօրեն՝ *Դավթյան Կարինե Ավետի*

2014-2015 ուստարում Մշակույթի կենտրոնը կազմակերպել է 30 միջոցառում, 11 կինոդիտում-քննարկումներ: «Համալսարանական» թատրոն-ստուդիան բեմադրել է 1 նոր ներկայացում: Վերոնշյալ միջոցառումներին մասնակցել են շուրջ 10000 ուսանողներ: Բացվել է երկու նոր խումբ՝ Կիթառահարների խումբ և Ժողովրդական գործիքների նվագախումբ:

Հաշվետու ուստարում Մշակույթի կենտրոնը, ավանդաբար իրականացվող ծրագրերին և միջոցառումներին զուգահեռ, ընդլայնելով համագործակցության շրջանակները, իր գործուն մասնակցությունն է ունեցել ԵՊՀ-ում և հանրապետության այլ պետական հաստատություններում կազմակերպված մի շարք միջոցառումներին:

Ինչպես 2006 թվականից սկսած յուրաքանչյուր ուստարում, այնպես էլ 2014 թվականի սեպտեմբերին կենտրոնի աշխատակազմը հանդիպումներ է ունեցել ԵՊՀ բոլոր ֆակուլտետների առաջին կուրսեցիների հետ (03-22.09.2014): Այդ հանդիպումների ընթացքում մանրամասն ներկայացվել են կենտրոնի ստեղծման նպատակները, գործունեությունը և կենտրոնում գործող խմբերը, բաժանվել են կենտրոնի կողմից նախապես պատրաստված հայտեր՝ խմբերի համալրման և մրցույթ-ստուգատեսներին մասնակցություն ապահովելու նպատակով: Մրցույթ-ստուգատեսները տեղի են ունեցել հոկտեմբերի 14-ից 23-ը:

Ավանդական միջոցառումներ

- ✓ «ԵՊՀ մեծարման և առաջին կուրսեցիների երդման արարողություն», որն այս անգամ նվիրված էր Ուսանողական խորհրդի 20-ամյակին և կազմակերպվել էր ՈՒԽ-ի հետ համատեղ (23.09.2014):
- ✓ Ուսանողության միջազգային օրվան նվիրված «Լավագույն ուսանող 2015» համերգ-մրցանակաբաշխություն, որը կազմակերպվել է Ուսանողական խորհրդի հետ համատեղ (17.11.2014):
- ✓ Ամենամյա ամանորյա ներկայացում-համերգ, որն այս անգամ կրել է «Երնե՛կ թե այս նոր տարին…» խորագիրը (25.12.2014):
- ✓ Թատրոնի միջազգային օրվա կապակցությամբ կենտրոնի «Համալսարանական» թատրոն-ստուդիայի սաների այցելությունը ՀՀ գրականության և արվեստի թանգարան, ապա Կոմիտասի անվան պանթեոն՝ հարգանքի տուրք մատուցելու հայ բեմի հանճարներին (27.03.2015):
- ✓ «ԵՊՀ ռեկտորը ներկայացնում է…» հանդիպումների ծրագրի շրջանակում «ԵՊՀ ռեկտորը ներկայացնում է… Սաթյաններին» երաժշտական երեկո (31.03.2015):

Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին նվիրված միջոցառումներ

- ✓ Ամերիկահայ գրող Ջոյս Վան Դայկի «Աքսորվածները» երազ-պիեսի անգլերեն բեմադրված ընթերցանություն «Համալսարանական» թատրոն-ստուդիայի սաների մասնակցությամբ, ռեժիսոր՝ Կարինե Դավթյան (31.10.2014):
- ✓ ՀՀ վաստակավոր գործիչ, նկարչուհի Աննա Հարությունյանի անհատական ցուցահանդես՝ «Ու կյանքը սկսվեց…» խորագրով (18.02.2015):

- ✓ «Աշխարհասփյուռ հայ արվեստագետներ» նոր ծրագիր, որի շրջանակում ներկայացվել են Ցեղասպանության հետևանքով աշխարհի տարբեր երկրներում ապրող և գործող հայ մշակութային գործիչները.

«Աշխարհասփյուռ հայ արվեստագետներ… Ֆրանսիա», որը կազմակերպվել էր նաև Ֆրանկոֆոնիայի շրջանակում (17.04.2015),

«Աշխարհասփյուռ հայ արվեստագետներ… Ռուսաստան», որը նվիրված էր նաև Մեծ հայրենական պատերազմում ֆաշիզմի դեմ տարած հաղթանակի 70-ամյակին (21.05.2015):

- ✓ Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակմանը և ոգեկոչմանը նվիրված գիտխորհրդի հանդիսավոր նիստ և համերգային ծրագիր, որին հրավիրվել է նաև «Նորայր Քարտաշյան և Վան նախագիծ» համույթը (21.04.2015):
- ✓ Հ. Ղափլանյանի անվան դրամատիկական թատրոնում «Փարիզյան դատավարություն» ներկայացման դիտում՝ Պերճ Զեյթունցյանի համանուն պիեսի հիման վրա բեմադրված (16.05.2015):

Փառատոների ու մրցույթների մասնակցություն

Հաշվետու ժամանակաշրջանում կենտրոնը մասնակցել է միջազգային, հանրապետական և միջբուհական մրցույթների և փառատոների:

- ✓ Կենտրոնի «Ռոմեո և Ջուլիետ» երաժշտական նոր ներկայացման ցուցադրություն «Հայֆեստ» միջազգային թատերական փառատոնի շրջանակում (06.10.2014):
- ✓ «Մենք երգում ենք Ա. Բաբաջանյանի երգերը» և «Խորհրդային երգեր» մրցույթ-փառատոների դափնեկիրների համերգ, որին մասնակցել են կենտրոնի մեներգիչներ Արփինե Խեչիկյանը, Տիգրան Գրիգորյանը և Մարիցա Թիլիքյանը (23.11.2015):
- ✓ Հայ-ռուսական (Սլավոնական) համալսարանի կողմից կազմակերպված ֆրանսիական երգի մրցույթ-փառատոն, որի ընթացքում Մշակույթի կենտրոնի մեներգիչ Հովհաննես Կարապետյանը և դաշնակահար Արտյոմ Անդրեասյանը զբաղեցրել են 2-րդ տեղը (31.04.2015):
- ✓ «Ռուսական մարտական երգեր» («Русские военные песни») խորագրով ուսանողական հանրապետական երաժշտական մրցույթ-փառատոն՝ նվիրված Հայրենական մեծ պատերազմում ֆաշիզմի դեմ տարած հաղթանակի 70-ամյակին, որի երեք մրցութային փուլերի արդյունքում ԵՊՀ-ն ներկայացնող վեց մեներգիչներից Մարիցա Թիլիքյանը, Արևիկ Պռազյանը և Մարիաննա Վարոսյանը դարձել են դափնեկիրներ (09.05.2015):

Համագործակցության շրջանակներում անցկացված միջոցառումներ

Մշակույթի կենտրոնը սերտորեն համագործակցում է ինչպես ԵՊՀ ստորաբաժանումների, այնպես էլ ՀՀ նախարարությունների և պետական ու հասարակական կազմակերպությունների հետ:

- ✓ Մշակույթի կենտրոնի և Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Գևորգյան հոգևոր ճեմարանի համատեղ ջանքերով արդեն 6-րդ անգամ կազմակերպվել է Սբ. Վարդանանց նահատակներին նվիրված միջոցառում: Միջոցառմանը ներկա են եղել Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Երկրորդը, ԵՊՀ ռեկտոր Արամ Սիմոնյանը, բարձրաստիճան հոգևոր հայրեր, ուսանողներ ինչպես ԵՊՀ-ից, այնպես էլ պետական ուսումնական այլ հաստատություններից (27.02.2014):
- ✓ Մշակույթի կենտրոնի աջակցությամբ «Միջմշակութային ուսումնասիրությունների ուսուցման և երկխոսության միջազգային կենտրոն» հասարակական կազմակերպությունը իրականացրել է «Մոգական Ասիա» խորագրով լուսանկարների ցուցադրությունը (4-6.12.2014):
- ✓ ՀՀ վաստակավոր արտիստ, դերասանուհի Լալա Մնացականյանի կուրսը հանդես է եկել «Հում օր կամ մեծ աղմուկ ոչնչից» երգիծական մանրապատումներով (03.12.2014):

- ✓ Երեխաների պաշտպանության միջազգային օրվա կապակցությամբ Գյումրու տիկնիկային թատրոնը հանդես է եկել Հովի. Թումանյանի «Պոչատ աղվեսը» տիկնիկային ներկայացմամբ (27.05.2015):
- ✓ Մշակույթի կենտրոն, Հայաստանի ազգային կինոկենտրոն և Կամերային թատրոն եռահամագործակցության արդյունքում թատրոնի ղեկավար Արա Երնջակյանի նախաձեռնությամբ կազմակերպվել է «Արմմակեդոն» հոռետեսական կատակերգության դիտման համար ամբողջ դահլիճի տոմսերի նվիրատվություն: Դիտումից հետո տեղի է ունեցել քննարկում ստեղծագործական խմբի հետ (29.05.2015):
- ✓ ՀՀ շախմատի ակադեմիայի հրավերով Մշակույթի կենտրոնի երգիչներն ու պարային համույթը մասնակցել են Հայաստանի շախմատի ակադեմիայի կողմից Մարտունիում կազմակերպված «Սևանա լիճ 2015» շախմատի միջազգային երիտասարդական մրցաշարի փակման արարողությանը (20.07.2015):
- ✓ ՀՀ սփյուռքի նախարարության «Սփյուռքի ամառային դպրոց 2015» ծրագրի շրջանակում ազգային երգի ու պարի դասընթացները արդեն 4-րդ անգամ կազմակերպել է Մշակույթի կենտրոնը (09.07.2015- 31.07.2015):

Այլ միջոցառումներ

- ✓ ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի հիմնադրման 80 և վերաբացման 30-ամյակներին նվիրված համերգային ծրագիր (12.12.2014):
- ✓ Կենտրոնի սաների գիտաճանաչողական և մշակութային այց Ծաղկաձոր, Կեչառիսի վանքային համալիր (27.12.2014):
- ✓ «Գարուն, սեր, կիթառ…» գրական-երաժշտական երեկո՝ նվիրված Կանանց միջազգային օրվան (12.03.2015):
- ✓ Հանդիպում «Զույգ արեգակներ» նոր բալետային ներկայացման հեղինակ, բալետմեյստեր Ռուդոլֆ Խառատյանի և ներկայացման ստեղծագործական խմբի հետ (09.04.2015):
- ✓ Թաթուլ Կրպեյանի 50-ամյակին նվիրված հուշ-երեկո, որին մասնակցել են կենտրոնի երգչախումբը և աղջիկների պարային համույթը (30.04.2015):

Կինոակումբի գործունեություն

ԵՊՀ մշակույթի կենտրոնի կինոակումբի և Հայաստանի ազգային կինոկենտրոնի կողմից յուրաքանչյուր չորեքշաբթի ցուցադրվել են հայկական արտադրության նոր ֆիլմեր, որոնց ցուցադրությունից հետո տեղի են ունեցել քննարկումներ ֆիլմարտադրողների հետ (ռեժիսորներ, դերասաններ, պրոդյուսերներ, սցենարիստներ):

1. *«Կինոաշուն» փառատոնի շրջանակում ցուցադրվել են հետևյալ ֆիլմերը.*
   - ✓ «Կիսալուսնի ծովածոցը» (ռեժ.՝ Մարինե Զաքարյան, 2014), (21.10.2014),
   - ✓ «Շքամուտք» (ռեժ.՝ Լուսինե Սարգսյան, 2014) (29.10.2014),
   - ✓ «Թևանիկ» (ռեժ.՝ Ջիվան Ավետիսյան, 2014) (05.11.2014),
   - ✓ «Ճամբարում» (ռեժ.՝ Հայկ Ավագյան, 2014) (12.11.2014),
   - ✓ «Ընկեր Փանջունի» (ռեժ.՝ Արման Մանարյան, 2014) (19.11.2014):

2. *Հայաստանում Ֆրանկոֆոնիայի օրերի շրջանակում ցուցադրվել են հետևյալ ֆիլմերը.*
   - ✓ «Արարատից Եվրոպա» (ռեժ.՝ Արսեն Հակոբյան, 2014) և «Շների կղզին» (ռեժ.՝ Սերժ Ավետիքյան, 2012) (15.04.2015),
   - ✓ «Մայրիկ» (ռեժ.՝ Անրի Վեռնոյ, 1991) (22.04.2015):

3. *Գարնանային ցուցադրություններ*
   - ✓ «Ժաննա» (ռեժ.՝ Արա Երնջակյան, 2015) (06.05.2015),
   - ✓ «Շրջադարձ» (ռեժ.՝ Արմեն Սիմոյան, 2015) (13.05.2015),
   - ✓ «Մոսկվիչ, իմ սեր» (ռեժ.՝ Արամ Շահբազյան, 2015) (20.05.2015):

Կենտրոնում գործող խմբեր

Խմբեր	Ղեկավար/պատասխանատու	Ներգրավված ուսանողներ
Երգչախումբ	ՀՀ վաստակավոր արտիստ Կարեն Սարգսյան (գեղ. ղեկավար), Ռուբեն Կարասեֆերյան (խմբավար)	30
Աղջիկների պարային համույթ	Իռեն Ուլիխանովա	62
«Համալսարանական» թատրոն-ստուդիա	Կարինե Դավթյան	27
Գրական ստեղծագործողների ակումբ	Սամվել Մուրադյան	22
Կինոակումբ	Մարի Գրիգորյան	65
Կամերային նվագախումբ	Կարեն Սարգսյան	11
Ժող. գործիքների նվագախումբ	Արմեն Այվազյան	18
Կիթառահարների խումբ	Նորայր Շահբազյան	8
«Նիկե» (նախաձեռնող, իրագործող, կամավոր երիտասարդներ)	Արևիկ Պռազյան	20

ԳԻՏԱԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԲԱԺԻՆ

Բաժնի վարիչ՝ *Վարդանյան Իշխան Վոլոդյայի, ֆիզմաթ. գիտ. թեկնածու*

Երևանի պետական համալսարանը հաշվետու ուսումնական տարում արդյունավետ գործունեություն է ծավալել գիտահետազոտական աշխատանքների բնագավառում: Բազմաթիվ համալսարանականներ ընդգրկվել են գիտական նոր ծրագրերում, մրցույթով շահել տարբեր դրամաշնորհներ:

2014-2015 ուստարում ԵՊՀ-ում գիտական աշխատանքներն ընթացել են երեք հիմնական ուղղություններով՝ պետական բազային («Գիտական և գիտատեխնիկական գործունեության ենթակառուցվածքի պահպանում ու զարգացում»), թեմատիկ և դրամաշնորհային ծրագրերի շրջանակներում: ԵՊՀ նոր ձեռքբերումներից է բազային ծրագրերի ոլորտում 4 նոր գիտահետազոտական լաբորատորիաների ստեղծումը:

Հաշվետու ուստարում ԵՊՀ գիտական ստորաբաժանումներում կատարված աշխատանքների գիտական արդյունքներն ու ձեռքբերումները ներկայացված են 1862 հոդվածներում, 86 մենագրություններում: 486 թեզիսներ ներկայացվել են միջազգային և տեղական տարբեր գիտաժողովներում:

Աշխատանքները շարունակվել են նաև 2005 թվականից գործող պետական բազային ֆինանսավորմամբ գիտահետազոտական ստորաբաժանումներում: 2014 թվականին գիտահետազոտական գործունեություն է իրականացվել Հայագիտության հետազոտությունների ինստիտուտում, 41 գիտահետազոտական կենտրոններում և գիտահետազոտական լաբորատորիաներում: 2015 թվականի դրությամբ ԵՊՀ-ում գործում են 2 ինստիտուտներ՝ Հայագիտական հետազոտությունների ինստիտուտ, «Կենսաբանություն» ԳՀ ինստիտուտ, 36 գիտահետազոտական կենտրոններ և գիտահետազոտական լաբորատորիաներ:

2014-2015 ուստարում դրամաշնորհային (թեմատիկ, հայ-բելառուսական, հայ-ֆրանսիական, հայ-գերմանական և երիտասարդ գիտնականների) ծրագրերի հաշվետվությունները տրվել են գիտական փորձաքննության, ինչի շրջանակներում գնահատվել են եզրափակիչ հաշվետվության գիտական ու գիտատեխնիկական նորույթը և արդիականությունը, գիտության տվյալ բնագավառում հետազոտական խմբերի ձեռքբերումները և նրանց մասնագիտական որակավորման համապատասխանությունը:

Երևանի պետական համալսարանում 2014 թվականին շարունակվել է 3 (հայ-գերմանական), 9 («Երիտասարդ գիտաշխատողների հետազոտությունների աջակցության ծրագիր - 2013») ծրագիր, իսկ 2014 թվականից գործում են՝ 1 նպատակային ծրագիր, 8 (հայ-ռուսական), 3 (հայ-բելառուսական), 1 (հայ-ֆրանսիական) և 8 («Ասպիրանտների և երիտասարդ հայցորդների հետազոտությունների աջակցության ծրագիր-2014») դրամաշնորհային ծրագրերը: 2015 թվականից ավելացել է 6 (հայ-ռուսական) դրամաշնորհային ծրագիր:

Հաշվետու ուստարում կազմակերպվել են «Գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային ֆինանսավորման ենթակառուցվածքի պահպանման և զարգացման ծրագրերի» թափուր պաշտոնների համար մրցույթներ:

Հաշվետու ժամանակաշրջանում Գիտակազմակերպական բաժնի անմիջական աջակցությամբ ձևակերպվել և պետական գրանցում են ստացել 5 արտոնագրեր, որոնցից 2-ը՝ ֆիզիկայի, 3-ը՝ երկրաբանության բնագավառներում: Բաժնի աշխատակիցների կողմից պարբերաբար ուսումնասիրվել է արտոնագրային գրականությունը՝ «Մտավոր սեփականության գործակալության» տրամադրած գյուտերի մեթոդական նկարագրությունները և օրենսդրական ակտերը: Աշխատանքներ են տարվել «Եվրասիական

արտոնագրային տեղեկատվական բազայից» ԵՊՀ-ի գիտահետազոտական ստորաբաժանումների ազատ օգտվելու ուղղությամբ:

Տարին նշանակալից է եղել նաև գիտական միջոցառումների տեսանկյունից: Կազմակերպված և իրականացված գիտաժողովներից կարելի է առանձնացնել հետևյալները՝ «Հայ-գերմանական հարաբերությունների 100-ամյա հոբելյանը» /ԵՊՀ, 18-19 սեպտեմբերի, 2014 թ./, «Մանկավարժության ժամանակակից հիմնախնդիրները», /Ծաղկաձոր, 17-18 հոկտեմբերի, 2014 թ./, «Բնագիտությունը 21-րդ դարում. ուսուցման հիմնախնդիրներ և լուծումներ» /ԵՊՀ, 15-17 նոյեմբերի, 2014 թ./, «Արդիականության պարադոքսներ: Փիլիսոփայական և հոգեբանական անդրադարձներ» /ԵՊՀ, 10-12 հոկտեմբերի, 2014 թ./, «Աշխարհագրության և երկրաբանության արդի հիմնախնդիրները (նվիրված ԵՊՀ աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի 80-ամյա հոբելյանին)» /ԵՊՀ, 10-11 դեկտեմբերի, 2014 թ./, «Բյուջետային եկամուտների և ծախսերի կառավարման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» /ԵՊՀ, 21-23 նոյեմբերի, 2014 թ./, IX միջազգային գիտաժողով՝ «Քվանտային տեսություն և սիմետրիա» /ԵՊՀ, 13-18 հուլիսի, 2015 թ./, «Ինտեգրվող համակարգերը և սիմետրիաները» չորրորդ միջազգային դպրոց /Ծաղկաձոր, 06-11 հուլիս, 2015 թ./:

2014-2015 ուստարում Գիտակազմակերպական բաժնի կողմից շարունակվել են աշխատանքները ԵՊՀ ողջ գիտական և վերջինիս օժանդակ աշխատակազմի կադրային գործերի վարման թվայնացման ուղղությամբ:

Արտասահմանյան դրամաշնորհներ

Դրամաշնորհի անվանումը	Ղեկավար
1. Tempus VERITAS (բարձրագույն կրթության երրորդ աստիճանի կառուցվածքային զարգացումը ըստ Զալցբուգյան սկզբունքների):	Գևորգյան Գ. Գ.

Թեմա 1. 2014-2015 ուստարում շարունակվել է Tempus VERITAS դրամաշնորհային ծրագիրը, որը միտված է ՀՀ-ում բարձրագույն կրթության երրորդ աստիճանի՝ ասպիրանտուրայի կառուցվածքային զարգացմանը՝ համաձայն Զալցբուգյան սկզբունքների: Ծրագրի մեջ ընդգրկված են ՀՀ 11 բուհեր, ՀՀ ԳԱԱ-ն, ՀՀ ԿԳՆ, ՈԱԱԿ-ը, ՀՀ ԲՈՀ-ը և 5 ԵՄ գործընկեր համալսարաններ:

ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՀԵՏ ՏԱՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԲԱԺԻՆ

Բաժնի վարիչ՝ *Վարագյան Վահագն Մանվելի, կենս. գիտ. թեկնածու*

Հաշվետու ժամանակահատվածում բաժինն իրականացրել է ուսանողական, հասարակական և մշակութային առօրյայի ակտիվացմանը, ուսանողների ինտելեկտուալ զարգացմանն ուղղված մի շարք ծրագրեր:

Բաժնի աշխատանքներն ընդհանուր առմամբ կարելի է բաժանել երկու հիմնական մասի.

- Աջակցություն համալսարանի ուսանողական կազմակերպությունների նախաձեռնություններին և ծրագրերին (ՈՒԽ և ՈՒԳԸ),
- Ուսանողական կառույցների կարողությունների զարգացում:

Աջակցություն ԵՊՀ-ում գործող ուսանողական կազմակերպությունների ծրագրերին և նախաձեռնություններին.

- ԵՊՀ 95, ԱրՊՀ 45 և ՈՒԽ 20-ամյակներին նվիրված այց Արցախ, ՈՒԽ նախագահության նիստ ԱրՊՀ-ում և ծառատունկ Քաշաթաղի շրջանի Բերձոր քաղաքի համալսարանական պուրակում (20-23.11.2014, ՈՒԽ, ՈՒԳԸ),
- «Լավագույն ուսանող» մրցույթի կազմակերպում (17.11.2014),
- Ամանորյա տարեմուտի միջոցառում՝ մասնակցությամբ շուրջ 700 համալսարանականների (28.12.2014, ՈՒԽ, ՈՒԳԸ),
- Ցեղասպանության 100-ամյակին նվիրված միջոցառումների շարքում այցելություն Արցախ, սեմինար-քննարկում ԱրՊՀ-ում, Բերձորում Հայոց մեծ եղեռնի զոհերի հիշատակին նվիրված պուրակի հիմնում (27.03-29.03.2015, ՈՒԳԸ, ՈՒԽ),
- Ցեղասպանության 100-ամյակին նվիրված միջոցառումների կազմակերպչական աշխատանքներում ներգրավված ԵՊՀ ուսանողների կամավորական գործունեության համակարգում,
- Ձեռներեցության 8-շաբաթյա դասընթացներ՝ համագործակցությամբ ՄԱԿ-ի արդյունաբերական զարգացման կազմակերպության կողմից իրականացվող և «Գլոբալ» էկոլոգիական հիմնադրամի կողմից ֆինանսավորվող «Հայաստանում մաքուր տեխնոլոգիաների գլոբալ ինովացիոն ծրագիր ՓՄՁ-ների համար» ծրագրի հետ (15.04-29.05.2015, ՈՒԳԸ),
- Ազգագրական պարի դասընթաց համալսարանականների համար (02.05-18.07.2015),
- Ուսանողների ամառային հանգստի կազմակերպում Բյուրականի ուսումնաարտադրական բազայում (13.07-30.08.2015, ՈՒԽ),
- Ուսանողների ամենամյա գիտական հոդվածների ժողովածուի հրատարակում (ՈՒԳԸ),
- Սոցիալապես անապահով շուրջ 100 ուսանողների վարձավճարների զեղչերի հատկացում (ՈՒԽ, ՈՒԳԸ),
- Համաբուհական բանակում Արցախի Հադրութի շրջանի Տող գյուղում (14.08-20.08.2015, ՈՒԽ, ՈՒԳԸ),
- Հաշվետու ժամանակահատվածում կազմակերպվել են նաև ուսանողական բազմաթիվ արշավներ դեպի մարզային մշակութային կոթողներ և այցելություններ թանգարաններ:

Ուսանողական կառույցների կարողությունների զարգացում.

- Ուսանողական կառույցների նախագահությունների հանդիպում ԵՊՀ ռեկտորի և պրոռեկտորների հետ,
- Ծաղկաձորի ուսումնաարտադրական բազայում եռօրյա արտագնա սեմինարներ ԵՊՀ կառավարման մարմիններում ընդգրկված ուսանողների մասնակցությամբ՝ այդ մարմիններում ուսանողների մասնակցության արդյունավետությունը բարձրացնելու նպատակով:

Կազմակերպվել են նաև մի շարք հանդիպումներ գիտության, արվեստի և սպորտի հայտնի գործիչների հետ:

ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Նախագահ՝ *Քարամյան Ռաֆֆի Արայի, ԵՊՀ աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի ասպիրանտ*

ԵՊՀ ուսանողական խորհուրդը հաշվետու ուսումնական տարվա ընթացքում շարունակել է իր գործունեությունն ու ծրագրերի իրականացումը՝ ՀՀ օրենսդրության և ԵՊՀ ՈՒԽ կանոնադրության համաձայն պաշտպանելով ուսանողների շահերն ու իրավունքները: ՈՒԽ ջանքերով ակտիվացել է համալսարանի կառավարմանը ուսանողների մասնակցությունը՝ տարբեր հարթակներում բարձրաձայնելով ուսանողությանն առնչվող տարբեր հարցեր: ՈՒԽ-ն մասնակցել է ուսումնական գործընթացի կազմակերպմանը, տարբեր միջոցառումների շրջանակներում ուսանողներին իրազեկել է իրենց իրավունքների և պարտականությունների մասին, միավորել է համալսարանի ուսանողական կառույցների, ակումբների և միությունների ջանքերը՝ նպաստելով ուսանողության համար արտալսարանային արդյունավետ աշխատանքային մթնոլորտի ձևավորմանը:

ԵՊՀ ուսանողական խորհուրդը ֆակուլտետային ուսանողական խորհուրդների և հանձնաժողովների համակարգված և հստակորեն ուղղորդված աշխատանքի արդյունքում նպաստել է ուսանողների գիտական, կրթական, հոգևոր, մշակութային, ստեղծագործական և ֆիզիկական զարգացմանը, աջակցել է ուսանողների սոցիալական վիճակի բարելավմանը, կազմակերպել է ուսանողների ազատ ժամանցն ու հանգիստը, մասնակցել է ԵՊՀ տարածքում ներքին կարգապահության պահպանման գործին, ինչպես նաև զբաղվել է ուսանողներին հուզող բազմաթիվ այլ խնդիրներով:

2014-2015 ուստարվա ընթացքում ՈՒԽ-ն անցկացրել է նախագահության 24 նիստ:

2014 թվականի դեկտեմբերի 19-ին տեղի է ունեցել Ուսանողական խորհրդի 5-րդ համագումարը:

Համագործակցություն ՀՀ տարբեր կառույցների և կազմակերպությունների հետ

Հաշվետու տարում ևս ԵՊՀ ուսանողական խորհուրդը ակտիվորեն համագործակցել է ՀՀ կրթության և գիտության, ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի, ՀՀ սփյուռքի նախարարությունների, ՀՀ Ազգային ժողովի կրթության, գիտության, մշակույթի, սպորտի և երիտասարդության հարցերի հանձնաժողովի հետ:

Շարունակվել է համագործակցությունը նաև Հայ Առաքելական եկեղեցու հետ, որի շրջանակում կազմակերպվել են մի շարք հանդիպումներ հոգևորականների հետ, այցելություններ Հայաստանի հոգևոր, պատմական և մշակութային վայրեր:

Հաշվետու ուստարում ԵՊՀ ՈՒԽ-ն Հայաստանի երիտասարդական հիմնադրամի և հասարակական բազմաթիվ կազմակերպությունների հետ կազմակերպել է մի շարք միջոցառումներ՝ այցելություններ Արցախ, սեմինար-դասընթացներ, հանդես է եկել բարձրագույն կրթության որակի ապահովման վերաբերյալ նոր նախաձեռնություններով և այլն:

Հանձնաժողովներ

ԵՊՀ արտաքին կապերի հանձնաժողովը զարգացրել է կապերը հայաստանյան և արտասահմանյան իր գործընկերների հետ: 2014 թվականի հոկտեմբերին Երևանում կազմակերպվել է միջազգային ֆորում ԱՊՀ երկրների մասնակցությամբ: 2015 թվականի մարտին ԵՊՀ ՈՒԽ նախագահ Ռաֆֆի Քարամյանը և ԵՊՀ ՈՒԽ նախագահի առաջին տեղակալ Արմենակ Հարությունյանը մասնակցել են ԱՊՀ երկրների երիտասարդական հավաքին: Ուսանողական խորհրդի օժանդակությամբ մի շարք ուսանողներ մեկնել են արտերկիր (Ռուսաստան, Վրաստան, Ղազախստան, Լեհաստան, Հունգարիա և այլն)՝ մասնակցելու գիտաժողովների, ֆորումների, ինտելեկտուալ խաղերի, մրցումների և այլն:

ԵՊՀ ՈՒԽ իրավական հանձնաժողովը կազմակերպել է հանդիպումներ, քննարկումներ, դասընթացներ՝ ԵՊՀ ուսանողներին իրենց իրավունքներին և պարտականություններին ծանոթացնելու նպատակով: Առանձնակի կարևորություն է տրվել 1-ին կուրսեցիների հետ կրթական համակարգի, քննական գործընթացի և նրանց հուզող մի շարք այլ հարցերի վերաբերյալ հարցուպատասխանի ձևաչափով անցկացվող պարբերական հանդիպումներին: Հանձնաժողովը մշակել է ֆակուլտետային ՈՒԽ-ների և հանձնաժողովների օրինակելի աշխատակարգը, ինչպես նաև վերամշակել է ԵՊՀ ՈՒԽ կանոնադրությունը:

ԵՊՀ ՈՒԽ-ն հետևողական աշխատանքներ է իրականացրել ուսանողների սոցիալական վիճակը բարելավելու ուղղությամբ, մասնավորապես ՈՒԽ-ի աջակցությամբ գրեթե 1000 ուսանողների տրվել են ուսման վարձի զեղչեր, կրթաթոշակներ, ինչպես նաև ցուցաբերվել է այլ աջակցություն:

ԵՊՀ ՈՒԽ մշակույթի հանձնաժողովը կազմակերպել է մի շարք հանդիպումներ մշակույթի և արվեստի գործիչների հետ, կինոդիտումներ, համերգներ, ցուցահանդեսներ և այլն: Հանձնաժողովի ջանքերով կրկին իրականացվել է «Երգող համալսարանական» մրցույթը, ինչպես նաև կյանքի է կոչվել նոր բուհական մրցույթ՝ «Պարող համալսարանական»: Մրցույթում լավագույնս հանդես եկած համալսարանականները հետագայում մասնակցել են ԵՊՀ ՈՒԽ-ի կողմից ներհամալսարանական, արտահամալսարանական, ինչպես նաև Արցախում կազմակերպված մի շարք մշակութային միջոցառումների: Այս ամենից զատ՝ հանձնաժողովին կից շարունակել են ակտիվորեն գործել Երիտասարդ ստեղծագործողների ակումբը, Ազգագրական պարի համույթը:

Հաշվետու ժամանակահատվածում կազմակերպվել են այցելություններ թանգարաններ (Սարդարապատի հուշահամալիր, Մուսա լեռան հերոսամարտի հուշահամալիր, ՀՀ պատմության թանգարան, Գրականության և արվեստի թանգարան և այլն):

Հաշվետու ժամանակահատվածում բավականին ակտիվ է եղել նաև ԵՊՀ ՈՒԽ սպորտի հանձնաժողովը: Կազմակերպվել է ԵՊՀ ուսանողական սպարտակիադան, որի շրջանակում տեղի են ունեցել ֆուտբոլի, սեղանի թենիսի, շախմատի, վոլեյբոլի, բասկետբոլի մրցումներ:

Գիտակրթական հանձնաժողովը հաշվետու ժամանակահատվածում շարունակել է իրականացնել ուսանողների ինտելեկտուալ զարգացմանն ուղղված միջոցառումներ: Հանձնաժողովն անցկացրել է ԵՊՀ «Բանավեճ»-ի, «Ի՞նչ, որտե՞ղ, ե՞րբ»-ի միջֆակուլտետային և այլ ինտելեկտուալ խաղերի առաջնություններ: Հաղթողներին տրվել են գրքեր և պատվոգրեր: 2014 թվականի նոյեմբերի 17-ին ԵՊՀ ՈՒԽ գիտակրթական հանձնաժողովի ջանքերով կայացել է ամենամյա «Ուսանողական ռեկտորատ» միջոցառումը: Նույն օրը տեղի է ունեցել «Լավագույն ուսանող» մրցանակաբաշխությունը, որի մշակութային մասն ապահովել է ԵՊՀ ՈՒԽ մշակույթի հանձնաժողովը: 2015 թվականի մայիսի 18-ին կազմակերպվել է «Ուսանող 2015» մրցանակաբաշխությունը՝ նվիրված ԵՊՀ 96-ամյակին, որի ընթացքում ՈՒԽ մշակույթի հանձնաժողովի ջանքերով կազմակերպվել է համերգ, և հասարակական ակտիվություն դրսևորած և տարբեր հարթակներում Մայր բուհը լավագույնս ներկայացրած ուսանողները պարգևատրվել են ԵՊՀ ՈՒԽ մեդալով: Գիտակրթական հանձնաժողովը նաև կազմակերպել է «Բոլոնիայի գործընթացը Հայաստանում» խորագիրը կրող դասընթացներ, որոնց մասնակցած ուսանողները ծանոթացել են Բոլոնիայի համակարգին:

Լրատվության և հասարակայնության հետ կապերի հանձնաժողովը ակտիվորեն շարունակել է իր գործունեությունը, լուսաբանել Ուսանողական խորհրդի կողմից կազմակերպվող բազմաբնույթ միջոցառումները: Աշխատանքներ են տարվել ՈՒԽ կայքի զարգացման և նրա հիմնական գործառույթները խթանելու ուղղությամբ:

Ֆինանսատնտեսական հանձնաժողովը հաջողությամբ իրականացրել է ԵՊՀ ՈՒԽ բյուջեի, միջոցների օգտագործման վերստուգումը, ինչպես նաև ՈՒԽ մի շարք միջոցառումներ ֆինանսավորելու նպատակով պայմանավորվածություններ է ձեռք բերել համապատասխան կառույցների հետ:

Հաշվետու ուստարում հեռակա համակարգում սովորող ուսանողների հետ ակտիվորեն աշխատել է ՈՒԽ հեռակա բաժնի ուսանողների հետ տարվող աշխատանքների հանձնաժողովը:

Հաշվետու ուստարում ստեղծվել և սկսել է ակտիվ գործունեություն ծավալել ՈՒԽ ռազմահայրենասիրական ոգու բարձրացման հանձնաժողովը:

2014-2015 ուստարվա ընթացքում ԵՊՀ ՈՒԽ-ն կազմակերպել է շուրջ 300 միջոցառում:

ԵՊՀ ՈՒԽ նախագահության կազմը

1. Քարամյան Ռաֆֆի (Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետ)
3. *S. M. Badalyan, N. G. Gharibyan, A. V. Shnyreva, T. A. Shahbazyan,* Antifungal activity of *Fomitopsis pinicola* collections against potentially pathogenic for humans and animals filamentous fungi, Abstracts. 8th International Conference on Mushroom Biology and Mushroom Products. ICMBMP8, 19-22 November, New Delhi, 2014, p. 93-94.
4. *S. M. Badalyan, L. R. Melikyan, T. A. Shahbazyan,* Mycelial characteristics of several *Psathyrella* collections, Abstracts. 8th International Conference on Mushroom Biology and Mushroom Products. ICMBMP8, 19-22 November, New Delhi, 2014, p. 128.
5. *Э. Ю. Саркисян, Л. Л. Осипян,* Вульвовагинальный кандидоз у разных возрастных групп в Армении, Проблемы медицинской микологии, 16, 2, Санкт-Петербург, 2014, с. 124.
6. *K. Azaryan, E. Melkonyan,* The effectiveness of biopreparation from *Bacillus subtilis* ч-13 for the cultivation ornamental plants, Abstracts book of conference "Trends in microbiology and microbial biotechnology", Yerevan, Armenia, YSU press, 2014, p. 45.
7. *Z. Farmazyan, S. Nanagulyan, I. Shahazizyan,* Polymer solutions as nutrient medium for microscopic fungi, Polymers for biotechnology and biomedical applications, BTEC-44, 2014, p. 216.
8. *M. Harutyunyan, Sh. Harutyunyan, S. Nanagulyan,* Assessment of the brandy materials made from grapevine infected eithoidium and mildew diseases, Trends in Microbiology and Microbial biotechnology, Yerevan, 5-8 October, 2014, p. 59.
9. *Y. Hovhannisyan, S. Nanagulyan, I. Eloyan, I. Shahazizyan, K. Muradyan,* Fungal diseases and using of terbisil during the treatment of otomycosis, Trends in Microbiology and Microbial biotechnology, Yerevan, 5-8 October, 2014, p. 62.
10. *S. Nanagulyan, I. Eloyan, Y. Hovhannisyan, I. Shahazizyan,* Mycobiota associated with cinematography archives of Yerevan, Trends in Microbiology and Microbial biotechnology, Yerevan, 5-8 October, 2014, p. 73.
11. *L. L. Osipyan,* Current problems in the development of mycological studies in Armenia, International Scientific Workshop. Trends in microbiology and microbial biotechnology, Yerevan, 2014, p. 77.
12. *L. L. Osipyan, E. A. Sarkisyan,* Comparative evaluation of the composition of onychomycosis causal agents in Armenia in various periods of research, International Scientific Workshop. Trends in microbiology and microbial biotechnology, Yerevan, 2014, p. 78.
13. *N. Zakaryan, I. Eloyan, S. Nanagulyan, A. Zakaryan,* Antifungal activity of floschamomillae, Trends in Microbiology and Microbial biotechnology, Yerevan, 5-8 October, 2014, p. 95.

ԿԵՆԴԱՆԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆ

Ամբիոնի վարիչ՝ *Առաքելյան Մարինե Սեմյոնի, կենս. գիտ. դոկտոր, դոցենտ*

Պրոֆեսորադասախոսական կազմը

1. Դանիելյան Ֆելիքս Դանիելի, կենս. գիտ. դոկտոր, պրոֆեսոր
2. Եղիազարյան Էդուարդ Մուրազի, կենս. գիտ. դոկտոր, պրոֆեսոր
3. Ջիվանյան Կարինե Արամի, կենս. գիտ. դոկտոր, պրոֆեսոր
4. Ասլանյան Աշոտ Վարդգեսի, կենս. գիտ. թեկնածու, դոցենտ
5. Կարապետյան Աննա Ֆելիքսի, կենս. գիտ. թեկնածու, դոցենտ
6. Վարդանյան Լուիզա Կոնստանտինի, կենս. գիտ. թեկնածու, դոցենտ

Համատեղողներ

1. Պապով Գեորգի Յուրիի, կենս. գիտ. թեկնածու, ասիստենտ

Ուսումնաօժանդակ աշխատակիցներ

1. Գրիգորյան Աննա Վլադիմիրի, ուսումն. լաբորատորիայի վարիչ
2. Ղազարյան Աստղիկ Սամվելի, կենս. գիտ. թեկնածու, ավագ լաբորանտ
3. Սարգսյան Նելլի Հովհաննեսի, կենս. գիտ. թեկնածու, ավագ լաբորանտ
4. Հարությունյան Թեհմինե Կարլենի, ավագ լաբորանտ

Ըստ ընդհանուր ուղղությունների՝ ամբիոնում կատարված գիտական աշխատանքների ամփոփում

Դրամաշնորհային ծրագրեր

Թեմայի անվանումը	Ղեկավար
1. Darevskia ցեղի ժայռային մողեսների հիբրիդածին տեսակառաջացման բջջագենետիկ մեխանիզմները (պետական ֆինանսավորում):	Առաքելյան Մ. Ս.

Թեմա 1. Հայաստանի Հանրապետությունը հանդիսանում է հիբրիդածին տեսակների աշխարհում հայտնի կենտրոն: *Darevskia* ցեղի ժայռային մողեսները յուրահատուկ մոդել են հանդիսանում ողնաշարավոր կենդանիների ցանցաձև (հիբրիդածին) էվոլյուցիայի ակտուալ և հետաքրքիր հարցերի պարզաբանման համար: Ցանցաձև էվոլյուցիայի բջջագենետիկ մեխանիզմների ուսումնասիրությունը կուսածնության և պոլիպլոիդության առաջացման ընկալման բանալի է: Տվյալ ծրագիրն ուղղված է կուսածին *Darevskia* ցեղի ժայռային մողեսների և նրանց հիբրիդների մեյոզի առանձնահատկությունների պարզաբանմանը: Առաջին անգամ բջջագենետիկական նորագույն մեթոդներով կուսումնասիրվեն հիբրիդային առանձնյակների կարիոտիպերը և մեյոզիփուլերը, որոնք առանցքային նշանակություն ունեն բնականոն մեյոզի ընթացքի համար: Ցանցաձև էվոլյուցիայի տեսության մեջ սկզբունքային նշանակություն են ստանում պլոիդության տարբեր աստիճան ունեցող հիբրիդների բեղունության, հարմարվածության և էկոլոգիական ճկունության խնդիրները: Այդ խնդիրների հետազոտությունը կարևոր նշանակություն ունի ցանցաձև էվոլյուցիայի տեսության զարգացման համար:

Արտասահմանյան դրամաշնորհներ

Թեմայի անվանումը	Ղեկավար
1. Survay and conservation of bats distributed in Armenia (Eurobats).	Ղազարյան Ա. Ս.
2. Use of Long-legged Buzzard as a model for conservation of Raptors in Khosrov Nature Reserve (KhNR) (Rufford small grants).	Աղայան Ս. Ա.

Թեմա 1. Ծրագրի շրջանակում ուսումնասիրվելու են Հայաստանի ձեռքաթևավորների տարածվածությունը, էկոլոգիան, ինչպես նաև մշակվելու է հազվադեպ և ոչնչացման եզրին կանգնած տեսակների պահպանության միջոցառումների համակարգ: Հետազոտությունների ընթացքում կատարվելու են ուսումնասիրություններ որոշ ձեռքաթևավորների (*Miniopterus hajastanicus*, *M. schaubi* and

M. nipalensis) կարգաբանական ստատուսի վերաբերյալ: Կհավաքվեն ամբողջական տվյալներ Միջազգային Կարմիր ցուցակում Data deficient (տվյալների բացակայություն) կարգավիճակով ընդգրկված Արաքսյան գիշերաչղջիկի տարածվածության, բիոտոպային նախապատվության, սեզոնային և օրեկան միգրացիաների ու մի շարք այլ կենսաբանական առանձնահատկությունների վերաբերյալ:

Թեմա 2. Ռաֆորդ փոքր դրամաշնորհների շրջանակներում ուսումնասիրվել է տափաստանային ճուռակի տարածվածությունը Խոսրովի պետական արգելոցի հարակից շրջաններում: Կրթական նպատակներով կազմակերպվել են թռչունների բազմազանության ու կարևորության վերաբերյալ հանրամատչելի սեմինարներ արգելոցին հարող 7 գյուղերում:

Ամբիոնում կատարված այլ աշխատանքների մասին:

1.Կապան քաղաքի շրջակայքի սողունների տեսակային կազմի ուսումնասիրություն: 2014-2015 ուստարվա ընթացքում իրականացվել է Կապան քաղաքի շրջակայքի սողունաբանական հետազոտություն, որն ընդգրկել է տեսակային կազմի, առանձնյակների քանակի, բիոտոպային կապվածության և կենսացենոզներին սպառնացող վտանգների վերաբերյալ ուսումնասիրություններ, որոնք իրականացվել են ընդունված մեթոդներով՝ օգտագործելով ժամանակակից տեխնիկական և համակարգչային-ծրագրային միջոցներ:

Կապան քաղաքի ընտրությունը պայմանավորված է նրա աշխարհագրական դիրքով և տարածաշրջանում ինտենսիվ տնտեսական գործունեությամբ: Քաղաքը գտնվում է անտառային և տափաստանային գոտիների սահմանագծում և բնորոշվում է ջերմային ռեժիմի և խոնավության առանձնահատուկ համադրությամբ: Այդտեղ կարելի է դիտարկել առաջավորասիական-թուրանյան և Փոքր Կովկասի մեզոֆիլ ֆաունիստական էլեմենտների համադրությունը, ինչի շնորհիվ ձևավորվել են հարուստ կենսաբազմազանությամբ օժտված կենսացենոզներ: Միաժամանակ Սյունիքի մարզն ամբողջությամբ և Կապան քաղաքի շրջակայքը գտնվում են զգալի մարդածին ճնշման ազդեցության տակ՝ մասնավորապես ինտենսիվ հանքարդյունաբերության արդյունքում:

Կատարված հետազոտությունների արդյունքում Կապան քաղաքի շրջակայքում դիտարկվել են երկկենցաղների 4 տեսակներ՝ կանաչ դոդոշ *(Bufo variabilis),* լճագորտ *(Pelophylax ridibundus),* փոքրասիական գորտ *(Rana macrocnemis)* և հարավային ծառագորտ *(Hyla savignyi):* Բոլոր տեսակներն էլ հանդիպում են քաղաքի ողջ շրջակայքում և բնորոշվում են կայուն քանակով: Տարածաշրջանին հատուկ սողուններից ուսումնասիրությունների ընթացքում դիտարկվել են 14-ը՝ կասպիական *(Mauremys caspica)* և ճահճային կրիաներ *(Emis orbicularis),* դեղնափորիկ *(Pseudopus apodus),* կովկասյան ագամա *(Laudakia caucasia),* շերտավոր մողես *(Lacerta strigata),* միջին մողես *(Lacerta media),* ռադդեի ժայռային մողես *(Darevskia raddei),* օձագլխիկ գեղիրան *(Ophisops elegans),* ջրային լորտու *(Natrix tesselata),* սովորական լորտու *(Natrix natrix),* արճճագույն սահնօձ *(Hemorrhois nummifer),* բազմագույն սահնօձ *(Hemorrhois ravergieri),* քառաշերտ սահնօձ *(Elaphe sauromates)* և գյուրզա *(Macrovipera lebetina):* Մողեսների բոլոր տեսակները բնորոշվում են կայուն քանակությամբ, իսկ պոպուլյացիաները ունեն նույնպիսի խտություն, ինչպես ոչ քաղաքային բնական բիոտոպերում: Օձերի քանակությունը սահմանափակ է, ինչը կարող է հանդիսանալ բնակչության կողմից այդ սողունների անմիջական ոչնչացման արդյունք: Ընդհանրացնելով ստացված արդյունքները՝ կարելի է փաստել, որ զարգացած հանքարդյունաբերություն ունեցող Կապան քաղաքի շրջակայքում երկկենցաղների և սողունների տեսակային կազմը և պոպուլյացիաների խտությունը էապես չեն տարբերվում համանման բնակչություն ունեցող այլ քաղաքներից:

2. Երկկենցաղների պոպուլյացիոն կենսաբազմազանության ուսումնասիրություն: ՀՀ երկկենցաղների պոպուլյացիոն կենսաբազմազանության ուսումնասիրությունները սկսվել են 2010 թ.-ից: Ուսումնասիրվել են հանրապետության տարածքում լայնորեն տարածված տեսակների՝ լճագորտ *(Pelophylax ridibundus),* փոքրասիական գորտ *(Rana macrocnemis),* կանաչ դոդոշ *(Bufo variabilis),* ինչպես նաև եվրոպական ծառագորտ (և ՀՀ Կարմիր գրքում գրանցված սիրիական սխտորագորտի *(Pelobates syriacus)* ձևաբանական և ֆենոտիպային առանձնահատկությունները: Համեմատվել են տարբեր պոպուլյացիաներում և էկոլոգիական, այդ թվում՝ անթրոպոգեն, միջավայրերում ապրող նույն

տեսակների ֆենոտիպական և ձևաբանական տարբերությունները: Ուսումնասիրվել են նաև էրիթրոցիտների ձևաբանական փոփոխությունները՝ կախված միջավայրի պայմանների փոփոխություններից: Կատարվել է նաև աղտոտված և մաքուր տարածքներում ապրող տեսակների համեմատական կարիոլագիական վերլուծություն:

Հաշվետու տարում կատարվել է Հայաստանի հյուսիսում հանդիպող *Hyla arborea shelkownikowi* և *Hyla savignyi* միջտեսակային համեմատություն՝ ըստ ձևաբանական ինդեքսների, ֆենային տիպերի և կարիալոգիական առանձնահատկությունների: Նկարագրվել են երկկենցաղների՝ բարձրադիր և ցածրադիր վայրերում ապրող տեսակների ադապտացիոն մեխանիզմները՝ ըստ մարմնի չափերի և գունավորման առանձնահատկությունների:

Կատարվել են ՀՀ Կարմիր գրքում ընդգրկված *Pelobates syriacus* տեսակի սեզոնային ակտիվության, ֆենոտիպային բազմազանության և բազմացման առանձնահատկությունների վերաբերյալ դիտարկումներ:

3.Միկոտոքսինների ազդեցությունը կենդանիների վրա: Միկոտոքսինները թունավոր օրգանական նյութեր են, որոնց վնասակար ազդեցության ուսումնասիրության հիմնախնդիրն արդիական է: Միկոտոքսիններով հացահատիկների, բանջարեղենի, կարտոֆիլի, մրգերի և գյուղատնտեսական այլ արտադրանքի վարակվածությունը պատճառ է դառնում օրգանիզմների զանազան ախտահարումների՝ միկոտոքսիկոզների, որոնք մեծ վտանգ են մարդու և կենդանիների առողջության համար:

Մարդու և գյուղատնտեսական կենդանիների առողջության վրա միկոտոքսինների բացասական ազդեցության վտանգը միանգամայն իրական է, և այն գնալով ավելի ընդլայնվում է, քանի որ ներկայումս այդ թույների նոր ձևեր են հայտնաբերվում: Այդ հարցով զբաղվող միջազգային կազմակերպությունների տվյալներով հացահատիկի ծավալների քառորդ մասը վարակված է միկոտոքսիններով:

Մեր ուսումնասիրություններն ուղղված են եղել միկոտոքսինների ազդեցության պայմաններում առնետների հեպատոցիտներում տեղի ունեցող հեպատոցիտների բջջաբանական փոփոխությունների ուսումնասիրությանը: Կատարված ուսումնասիրություններով պարզվել է, որ առնետներին աֆլատոքսին B1-ի, օխրատոքսին A-ի և զեարալենոնի, կերի հետ առանձին և համատեղ 15-60 օրվա ընթացքում ներմուծման դեպքում փորձակենդանիների լյարդում զգալիորեն մեծանում է կորիզների ձևաբանական տարբեր խաթարումներով՝ միկրոկորիզավոր բջիջների, հարկորիզային վակուոլով, խտացած քրոմատինով, կարիոռեքսիսով, կարիոլիզիսով, կորիզի արտափքումով բջիջների հարաբերական քանակությունը:

Հրատարակություններ

Դասագիրք	Մենագրություն	Ուսումնական ձեռնարկ	Ուսումնամեթոդա-կան ձեռնարկ	Հոդված	Զեկուցման թեզիս
2	-	-	-	8	3

Գիտական և ուսումնամեթոդական հրատարակությունների ցանկ

Դասագիրք

1. *Է. Ս. Գևորգյան, Ֆ. Դ. Դանիելյան, Ա. Հ. Եսայան,* Կենսաբանության օրինաչափություններ, 9 դասարան, «Աստղիկ գրատուն», Երևան, 2014, 197 էջ:
2. *Ա. Պ. Անտոնյան, Ա. Վ. Ներկարարյան, Կ. Վ. Գրիգորյան, Ռ. Հ. Գրիգորյան, Ա. Ֆ. Կարապետյան, Գ. Ա. Փարսադանյան, Պ. Հ. Վարդևանյան,* Կենսաբանության թեստային առաջադրանքների շտեմարան, մաս 4, «Աստղիկ Գրատուն», Երևան, 2014, 348 էջ:

Հոդված

1. *Ա. Ֆ. Կարապետյան,* Սեռը և հակազդեցությունը, «Բնագետ», 2014, 3, էջ 48-52:
2. *Կ. Ա. Ջիվանյան,* Հյուսվածքային համատեղելիության գլխավոր համալիրը, «Բնագետ», 3, 2014, էջ 55-61:
3. *Т. А. Арутюнян, Р. М. Арутюнян, Г. Г. Оганесян, А. Ф. Карапетян,* Комбинированное генотоксическое воздействие афлатоксина В1, охратокасина А и зеараленона в лейкоцитах крови и клетках костного мозга, Материалы международной конференции “Актуальные проблемы биологии, нанотехнологий и медицины”, Ростов-на-Дону, 2014, с. 334-336.
4. *Э. М. Егиазарян, А. Л. Агасян,* Современное состояние и перспективы сохранения батрахофауны Армении, Материалы международной конференции “Биологическое разнообразие и проблемы охраны фауны Кавказа -2”, Ереван, 2014, с. 377-378.
5. *А. Ф. Карапетян,* О некоторых особенностях гистоморфологии семенников крыс при поступлении с кормом зеараленона, “Современная микология в России”, № 5, 2015, с. 267-270.
6. *H. Abelyan, V. Harutyunyan, G. Papov, A. Ghazaryan,* Characteristics of location signals of some little brown bats of Armenia, Proceedings of the International conference “Biological diversity and conservation problems of the fauna of the Caucasus-2”, LLC “Spika”, 2014, Yerevan, p. 8-11.
7. *A. Ghazaryan, G. Papov, T. Hayrapetyan,* New data on Myotis bats dwelling in Armenia, Proceedings of the International conference “Biological diversity and conservation problems of the fauna of the Caucasus-2”, LLC “Spika”, Yerevan, 2014, p. 142-144.
8. *T. A. Hayrapetyan, A. V. Aslanyan, G. Yu. Papov, A. S. Ghazaryan,* New data on small mammals (Insectivora, Chiroptera, Rodents) in southern part of Armenia, “Proceedings of the Yerevan State University”, N 2, 2014, p. 43-47.

Զեկուցման թեզիս

1. *S. A. Aghayan, H. A. Atoyan, J. A. Harvey, G. Voelker, S. V. Drovetski,* Which avian haemosporidia are better colonizers? Proceedings of the conference “Biological diversity and conservation problems of the fauna of the Caucasus”, Yerevan, September 23-26, 2014, p. 25.
2. *G. Boano, S. V. Drovetski, I. V. Fadeev, E. A. Koblik, M. Pavia, M. Rakovich, S. A. Aghayan,* Importance of surenavan fishponds for birds` conservation, Proceedings of the conference “Biological diversity and conservation problems of the fauna of the Caucasus”, Yerevan, September 23-26, 2014, p. 77.
3. *T. Hayrapetyan, L. Revazyan, G. Papov, A. Ghazaryan,* Morphological variation of voles from Central Armenia, Book of Abstracts 14th Rodens et Spatium International Conference on Rodent Biology, Lisbon, 28-02 August, 2014, p. 154.

ՄԱՆՐԷԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԱՆՐԷՆԵՐԻ ՈՒ ԲՈՒՅՍԵՐԻ ԿԵՆՍԱՏԵԽՆՈԼՈԳԻԱՅԻ ԱՄԲԻՈՆ

Ամբիոնի վարիչ՝ *Թոչունյան Արմեն Համբարձումի, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, կենս. գիտ. դոկտոր, պրոֆեսոր*

Պրոֆեսորադասախոսական կազմը

1. Պետրոսյան Մարգարիտ Թորգոմի, կենս. գիտ. թեկնածու, դոցենտ
2. Փանոսյան Հովիկ Հարությունի, կենս. գիտ. թեկնածու, դոցենտ

3. Փոլադյան Աննա Արշակի, կենս. գիտ. թեկնածու, դոցենտ
4. Բազուկյան Ինգա Լևոնի, կենս. գիտ. թեկնածու, ասիստենտ

Համատեղողներ

1. Սեմերջյան Ինեսա Հենրիկի, կենս. գիտ. թեկնածու, ասիստենտ
2. Մարգարյան Արմինե Արմենի, դասախոս

Ուսումնաօժանդակ աշխատակիցներ

1. Սեմերջյան Ինեսա Հենրիկի, կենս. գիտ. թեկնածու, ուսումն. լաբորատորիայի վարիչ
2. Բաբայան Անուշ Մարտինի, ավագ լաբորանտ
3. Բլբուլյան Սյուզաննա Սուրենի, ավագ լաբորանտ
4. Մուրադյան Մարիամ Շահենի, ավագ լաբորանտ

Ըստ ընդհանուր ուղղությունների՝ ամբիոնում կատարված գիտական աշխատանքների ամփոփում

Դրամաշնորհային ծրագրեր

Թեմայի անվանումը	*Ղեկավար*
1. Քեմոտրոֆ և ֆոտոտրոֆ բակտերիաների կողմից H_2-ի արտադրության կենսատեխնոլոգիայի կատարելագործման ուղիները (պետական ֆինանսավորում):	Թոչունյան Ա. Հ.
2. Բակտերիաների F_0F_1-ԱԵՖ-ազի դերը էներգիայի ձևափոխության գործընթացներում ածխածնի տարբեր աղբյուրների խմորման ընթացքում (պետական ֆինանսավորում):	Բլբուլյան Ս. Ս.
3. Հայաստանի և Բելառուսի պայմաններում բուծվող իշխան ձկան մանրէաբանական ֆլորայի համեմատական անալիզ նույնականացման արագ մեթոդների մշակման նպատակով (պետական ֆինանսավորում):	Գրիգորյան Կ. Մ.

Թեմա 1. Հաշվետու ժամանակահատվածում հետազոտվել են տարբեր ածխածնի աղբյուրների խառնուրդի խմորումը՝ համեմատվելով մեկ ածխածնի աղբյուրի հետ, *E. coli*-ի կողմից և H_2-ի արտադրման առանձնահատկությունները միջավայրի տարբեր պայմաններում: Մասնավորապես ուսումնասիրվել է գլյուկոզի և գլիցերոլի համատեղ խմորման ժամանակ H_2-ի արտադրությունը միջավայրի pH-ի տարբեր արժեքների դեպքում: Հետազոտություններն իրականացվել են՝ օգտագործելով տվյալ ածխածնի աղբյուրների տարբեր կոնցենտրացիաներ: Նկատվել է *E. coli*-ի BW25113 վայրի տիպի նախնու կողմից H_2-ի արտադրության նվազում միջավայրի pH 7.5 և 6.5 արժեքների, բայց ոչ pH 5.5-ի դեպքում, երբ գլյուկոզի կոնցենտրացիան աճում է 0.05%-ից մինչև 0.2%: 0.1% գլիցերոլի ավելացումը աճման միջավայրին բերում է H_2-ի արտադրության զգալի աճին ինչպես գլիցերոլի, այնպես էլ գլյուկոզի ավելացման ժամանակ: Արդյունքները ցույց են տալիս, որ գլյուկոզը ճնշում է H_2-ի արտադրությունը, բայց կախված է գլյուկոզի կոնցենտրացիայից: Ինչևէ, գլյուկոզի և գլիցերոլի խառնուրդը նպաստում և խթանում է H_2-ի արտադրությունը խառը խմորման ժամանակ:

Հաշվետու ժամանակահատվածում ուսումնասիրվել են նաև մրջնաթթու ջրածին լիազ համալիրի կազմում ներգրավված որոշ մետաղների՝ 0.02 մՄ-ից մինչև 3 մՄ նիկելի (Ni^{2+}), երկաթի (Fe^{3+}, Fe^{2+}),

մոլիբդենի (Mo^{6+}) և դրա արգելակչի՝ պղնձի (Cu^{+}, Cu^{2+}) իոնների և դրանց համակցված ազդեցությունները *E. coli* BW25113 բակտերիաների աճի վրա գլիցերոլի անթթվածին խմորման ժամանակ: Ցույց է տրվել, որ բակտերիաների աճը (ՕԽ) խթանվել է աճման ստացիոնար փուլում 1.3-ից մինչև 1.5 անգամ 0.02-ից 0.1 մՄ Fe^{2+}, Fe^{3+}, Ni^{2+} -ի և 1.3-ից 2 անգամ նրանց խառնուրդների՝ Ni^{2+}+Fe^{2+}+Mo^{6+}, Ni^{2+}+Fe^{3+}, Ni^{2+}+Fe^{2+} և Mo^{6+}+Fe^{3+} ներմուծման արդյունքում: *E. coli* BW25113 բակտերիաներում H_2 արտադրության ելքը ստուգիչ, մետաղների բացակայությամբ նմուշում լոգարիթմական փուլի վերջում կազմել է 0.75°0.02 մՄ/լ: Ավելին, H_2 արտադրության ելքը խթանվել է 2-ից 5 անգամ 0.02-0.1 մՄ Ni^{2+}+Fe^{3+}, Ni^{2+}+Fe^{3+}+Mo^{6+} և Mo^{6+}+Fe^{3+} մետաղների իոնների ազդեցությամբ: Մինչդեռ 0.1 մՄ պղնձի իոնները (Cu^{+}, Cu^{2+}) ունեն հակադարձ, ճնշիչ ազդեցություն H_2 արտադրության ելքի վրա:

Հետազոտվել են նաև տարբեր մետաղների իոնների (Mg^{2+} և Fe^{2+}) առանձին և համակցված ազդեցությունները *R. sphaeroides* MDC 6521 և MDC 6522 բակտերիաների աճման և H_2-ի արտադրության վրա: Հայտնի է, որ մի շարք մետաղների (երկաթ, մագնեզիում և այլն) իոնները կարևոր են ծիրանագույն բակտերիաների աճի և նյութափոխանակության համար: *R. sphaeroides* բակտերիաները չեն աճում միջավայրում Fe^{2+} և Mg^{2+}-ի բացակայությամբ՝ վկայելով տվյալ իոնների կարևորության մասին: Առավելագույն ուժգնությամբ աճ և H_2-ի ելք դիտվում են միջավայրում 80 մկՄ Fe^{2+}-ի և 5 մՄ Mg^{2+} առկայությամբ՝ ստուգիչի (40 մկՄ Fe^{2+} և 1 մՄ Mg^{2+}) հետ համեմատած: Իոնների համակցված ազդեցությունը խթանել է բակտերիաների աճը 1.2 անգամ, իսկ H_2-ի ելքը՝ 2.5 անգամ: Այդպիսով, կիրառված մետաղների իոնների համակցումը խթանում է *R. sphaeroides* բակտերիաներում H_2-ի ֆոտոարտադրությունը:

Ստացված տվյալները մատնանշում են որոշ մետաղների խառնուրդների կարևորությունը *E. coli* և *R. sphaeroides* H_2 արտադրության և կարգավորման մեջ, կարող են օգտագործվել կենսատեխնոլոգիական և արդյունաբերական գործընթացներում՝ էժան հումքից՝ գլիցերոլից, առավելագույն քանակով կենսազանգված և օգտակար վերջնանյութեր ստանալու նպատակով:

Թեմա 2. Հաշվետու ժամանակահատվածում ուսումնասիրվել է *E. Coli*-ի նախնու և հիդրոգենազային տարբեր մուտանտների F_oF_1-ԱԵՖ-ազի ակտիվությունը գլիցերոլի և գլյուկոզի խառնուրդի խմորման պայմաններում: Հավանական է, որ գլյուկոզի և գլիցերոլի խառնուրդի խմորման պայմաններում *hypF* մուտանտի թաղանթային բշտիկների բարձր ԱԵՖ-ազային ակտիվությունը բջջի պատասխանն է հիդրոգենազային ֆերմենտների բացակայությանը: F_oF_1-ԱԵՖ-ազը աշխատում է պրոտոնային ցիկլի և բջջի էներգետիկ պահանջները հավասարակշռության մեջ պահելու համար: Ստացված տվյալները կարևոր են բակտերիաների կողմից գլիցերոլի և ածխածնի խառն աղբյուրների խմորման ընթացքում F_oF_1-ԱԵՖ-ազի և Հիդ-1 և Հիդ-2 ֆերմենտների գործառական կապի պարզաբանման համար: Հարկ է նշել, որ այդ ֆերմենտների փոխհարաբերությունը տարբեր է՝ կախված խմորման սուբստրատից և pH-ից:

Թեմա 3. Իրականացվել է *Pseudomonas* ցեղի մանրէների տարածվածության ուսումնասիրությունը իշխան ձկան աճեցման ավազաններում: Ուսումնասիրվել են ջրում *Pseudomonas* տեսակների քանակական և որակական պարունակության հարաբերությունը, ինչպես նաև ջրի ֆիզիկաքիմիական հատկությունները: *P. fluorescens, P. aeruginosa* և *P. diminuta* ունեին բարձր հանդիպման հաճախականություն արտեզյան ջրերում: *P. fluorescens and P. aeruginosa* անջատվել են առողջ ձուկ պարունակող ջրերի նմուշներից: *P. anguilliseptica, P. putida, P. diminuta* հայտնի են որպես իշխան ձկան պսևդոմոնադոս հիվանդության հարուցիչներ և նույնականացվել են լողակի շրջանում վերքոտ ձուկ պարունակող ջրերից: Հայտնաբերվել է *P. alcaligenes* և P. *alcaligenes* համաներկայություն:

Արտասահմանյան դրամաշնորհներ

Թեմայի անվանումը	Ղեկավար
1. Էկոլոգիական մանրէաբանության բնագավառում համագործակցություն Հայաստանի և Նորվեգիայի միջև (CPEA - 2011/10081 դրամաշնորհային ծրագիր, 2011-2014, CPEALA - 2011/10068 հավելյալ ֆինանսավորում 2015):	Փանոսյան Հ. Հ.
2. Էկոլոգիական մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի բնագավառում գիտական հետազոտությունների և բարձրագույն կրթության Եվրասիական-Նորվեգական ցանց (CPEALA-2013/10107 դրամաշնորհային ծրագիր, 2013-2014):	Փանոսյան Հ. Հ.
3. Էկոլոգիական մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի բնագավառում բարձրագույն կրթության և գիտության կրթական ցանց (CPEALA-2014/10111 դրամաշնորհային ծրագիր, 2015):	Փանոսյան Հ. Հ.
4. Ոչխարի և մատակի կաթից ստացված հայկական կաթնամթերքներից մեկուսացված կաթնաթթվային բակտերիաների հակասնկային ակտիվության ուսումնասիրությունը (ANSEF - N biotech-3474 հետազոտական դրամաշնորհ):	Բազուկյան Ի. Լ.
5. Հայաստանի երկրաջերմային աղբյուրների թերմոֆիլ մանրէները և դրանց կենսատեխնոլոգիական ներուժը (ANSEF NS-microbio 3362 հետազոտական դրամաշնորհ, 2014):	Փանոսյան Հ. Հ.
6. Ծովային, քաղցրահամ և երկրաջերմային ջրային էկոհամակարգերում ֆագով պայմանավորված հակաբիոտիկների նկատմամբ կայուն գեների տեղափոխումը (CRDF դրամաշնորհային ծրագիր # A60920, 2015-2018):	Փանոսյան Հ. Հ.
7. Հայաստանի հանքապարները որպես ծանր մետաղներ կենսակուտակող մետաղակայուն բացիլների աղբյուր (ANSEF NS-microbio-3869 հետազոտական դրամաշնորհ):	Մարգարյան Ա. Ա.

Թեմա 1. Իրականացվել է գիտարշավ Քարվաճառի (ԼՂՀ) երկրաջերմային հանքային աղբյուրներից ջրային և տղմային նմուշների նմուշահանման նպատակով: Մեկուսացվել են լիպոլիտիկ և ամիլոլիտիկ ակտիվությամբ օժտված թերմոֆիլ բացիլների նոր շտամներ, որոնք նույնականացվել են որպես *Anoxybacillus, Geobacillus, Brevibacillus* և *Bacillus* ցեղերի ներկայացուցիչներ:

Ուսումնասիրվել և նույնականացվել են Ավանի աղի հանքի քարաղի նմուշներից մեկուսացված հալոֆիլ արքեաները: Արքեաների շտամների աճի օպտիմումը դիտվել է 35-37՝C ջերմաստիճանային պայմաններում, միջավայրում՝ 3.5-4 Մ NaCl-ի և 10 մՄ Mg^{2+}-ի պարունակության դեպքում, pH 7-8 արժեքներում: Անջատված բևեռային լիպիդների վերլուծությամբ ցույց է տրվել դրանցում դիեթեր ֆոսֆոլիպիդների, ֆոսֆատիդիտգլիցերոլի և $C_{20}C_{20}$ արքեոլի մեթիլացված ածանցյալների առկայությունը, որով հաստատվել է այդ շտամների *Haloarcula* ցեղին պատկանելիությունը: Մանրէները ունեցել են միևնույն սպիտակուցային պրոֆիլը և պարունակել են մեգապլազմիդներ: Կառուցված մենահատուկ փրայմերների կիրառմամբ ցույց է տրվել *Haloarcula* ցեղի տեսակներում 16S ռՌՆԹ-ի գեների

պոլիմորֆիզմի առկայությունը: Այդ գեների վերլուծությունը հաստատում է նուկլեոտիդային հաջորդականությունների 6-7% նմանությամբ երկու տարբեր կլաստերներին (type I (rrnA) և type II (rrnB կամ rrnC)) դրանց պատկանելիությունը:

Լրամշակվել և արդեն դասավանդվում է «Մանրէների էկոլոգիա» (9 կրեդիտ) առարկան: Ամբիոնը համալրվել է համակարգչային նորագույն տեխնիկայով, ՊՇՌ ամպլիֆիկատորով, դենատուրացնող ժել էլեկտրաֆորեզային ապարատով, սառեցման համակարգ ունեցող կենտրոնախուսակով, քարշիչ պահարանով, դյուրակիր մեխանիկական ֆիլտրման ապարատով, քիմիական ռեակտիվներով և ընդհանուր մանրէաբանության, երկրամանրէաբանության, կենսաքիմիային և մոլեկուլային էկոլոգիային վերաբերող՝ վերջին տարիներին լույս տեսած գրքերով:

Շարունակվել է դասախոսների, ասպիրանտների և մագիստրոսների վերապատրաստումը Բերգենի համալսարանում, ուր գործուղվել են երկու մագիստրանտ (յուրաքանչյուրը՝ 3-ական ամիս), մեկ ասպիրանտ (3 ամիս) և մեկ դասախոս (15 օր):

2014 թ.-ի հոկտեմբերի 5-ից 8-ը կազմակերպվել է «Մանրէաբանության և մանրէների կենսատեխնոլոգիայի նվաճումները» խորագրով միջազգային գիտաժողով (100 մասնակիցներ), որի ընթացքում բանավոր զեկուցմամբ մասնակցել են ԱՄՆ-ի, Բուլղարիայի, Կանադայի, Իսպանիայի, Նորվեգիայի, Ռուսաստանի, Տաջիկստանի և Վրաստանի առաջատար գիտահետազոտական ինստիտուտների և համալսարանների գիտնականներ: Հրատարակվել է զեկուցումների թեզիսների ժողովածուն:

Բերգենի համալսարանում նախատեսվում են նաև ԵՊՀ դասախոսական անձնակազմի, մագիստրոսների և ասպիրանտների փոխանակման և նրանց վերապատրաստման միջոցով գենոմիքսի, պրոտեոմիքսի և մանրէային սեքվենավորված գենոմների վերլուծության կենսաինֆորմատիկայի ժամանակակից մեթոդների յուրացումը և այդ փորձը հետագայում ԵՊՀ-ում ներդնելն ու զարգացնելը: Բերգենի համալսարան են գործուղվել նաև մեկ գիտաշխատող, մեկ ասպիրանտ և մեկ մագիստրանտ (յուրաքանչյուրը՝ 3-ական ամիս ժամանակահատվածով):

Ուսումնասիրվել է Շամլուխի պղնձահանքի, Ալավերդու պղնձահանքի թափոնային շլամի, Ախթալայի լեռնահարստացման կոմբինատի և Թեղուտի պոչամբարի շլամի բակտերիական և արքեային համակեցությունների կազմը: Ցույց է տրվել հետազոտված նմուշներում Alphaproteobacteria, Betaproteobacteria, Gammaproteobacteria, Actinobacteria և Firmicutes ֆիլումներին պատկանող բակտերիաների և *Ferroplasma, Sulfolobus, Aciduliprofundum, Methanocaldococcus, Methanosaeta, Methanosphaera* ցեղերին պատկանող արքեաների գերակշռությունը: Ցույց է տրվել, որ *B. subtilis* AG4 շտամի կայունությունը Cu^{2+}, Cd^{2+} և Zn^{2+} իոնների պայմանավորված է *copA* և *czcD* գեներով:

Իրականացվել է *Anoxibacillus flavitermus* K103 թերմոֆիլ շտամի արտաբջջային սպիտակուցների պրոտեոմիքս: Ցույց է տրվել օսլայով սննդամիջավայրում շտամի աճի օպտիմալ պայմաններում արտաբջջային α-ամիլազ և ամինոպուլլուլանազ ֆերմենտների առկայությունը: Մոդելավորվել են մենահատուկ փրայմերներ *A. flavitermus* K103 շտամի α-ամիլազի և ամինոպուլլուլանազի գեների նուկլեոտիդային հաջորդականությունների ամպլիֆիկացման համար: Ստացված արդյունքների հիման վրա մոդելավորվել է նշված ֆերմենտների տարածական կառուցվածքը: Մոդելավորվել են մենահատուկ փրայմերներ, և ամպլիֆիկացվել են *Termus scotoductus* Karvachar-1 թերմոֆիլ շտամի ԴՆԹ-պոլիմերազ-I-ի գենի նուկլեոտիդային հաջորդականությունները: Ստացված ամպլիկոնները հետագայում կլոնավորվել են աղիքային ցուպիկի կոմպետենտ բջիջներում հետագայում դրանց էսպրեսման և ֆերմենտի մաքրման համար: Իրականացվել է *Haloarcula* ցեղի երկու նոր տեսակների հալոֆիլ արքեաների, թերմոֆիլ պոլիմերազ արտադրիչ ասպորոգեն *T. scotoductus* Karvachar-1-ի, թերմոֆիլ էնդոսպոր առաջացնող ամիլազ արտադրիչ *A. flavitermus* K103-ի, ակտիվ էկզոպոլիսախարիդ արտադրիչ *Geobacillus thermodentitrificans* N 3-ի, Ni^{2+} և Cu^{2+} իոնների ակտիվ կենսաադսորբցիա իրականացնող *B. subtilis* AG4-ի ամբողջական գենոմների նուկլեոտիդային հաջորդականությունների որոշում: Մասնավորապես RAST առցանց համակարգչային ծրագրով վերծանվել է *T. scotoductus* Karvachar-1-ի ամբողջական գենոմը՝

կազմված 2,382,129 նուկլոտիդային զույգերից: Դրանում կոնտիգների (contigs) թիվը կազմել է 54, ենթահամակարգերինը՝ 358, էքսպրեսայի ենթարկվող գեները՝ 2653:

Թեմա 2. Ծրագրի համակարգողները այցելել են Ուզբեկստանի ազգային համալսարան (Տաշքենդ) և Տաջիկստանի պետական ազգային համալսարան (Դուշանբե) փորձի փոխանակման և գիտակրթական երկարաժամկետ համագործակցության պլանների մշակման նպատակով: Կազմակերպվել է գիտարշավ աղերով և ծանր մետաղներով աղտոտված էկոհամակարգերից (էկոլոգիական աղետի ենթարկված Արալի ծովի նստվածքներ և ջուր) և երկրաջերմային աղբյուրներից նմուշահանման նպատակով, ուսումնասիրվել է այդ նմուշներում մանրէային համակեցությունների կազմը: Համագործակից բոլոր երկրների համակարգողների մասնակցությամբ աշխատանքային ժողով է կազմակերպվել նաև Բերգենի համալսարանում՝ քննարկելու և մշակելու հետագա երկարաժամկետ դրամաշնորհային ծրագիր:

Թեմա 3. Ծրագրի համակարգողները մասնակցել են Վրաստանում Գ. Էլիավայի անվան բակտերիոֆագերի, մանրէաբանության և վիրուսաբանության ինստիտուտում կազմակերպված աշխատաժողովին՝ քննարկելու գիտակրթական համագործակցության պլանը: Կազմակերպվել է գիտարշավ Վրաստանի մի շարք երկրաջերմային աղբյուրներից նմուշահանման նպատակով:

Թեմա 4. Հաստատվել է *Lactobacillus rhamnosus* R-2002 շտամի հակասնկային ակտիվությունը *Penicillium aurantioviolaceum* և *Mucor plumbeus* բորբոսասնկերի նկատմամբ: Այդ շտամի հակասնկային ակտիվությունը դրսևորվում է pH-ի արժեքների լայն տիրույթում: Հակասնկային ակտիվությունը զգայուն է ջերմաստիճանի նկատմամբ: Հակասնկային ակտիվությամբ օժտված նյութերը համակցված են *L. rhamnosus* R-2002-ի բջջապատի հետ: Հակասնկային նյութը ունի սպիտակուցային բնույթ: *L. rhamnosus* R-2002-ը դրսևորել է ֆունգիցիդ ազդեցություն:

Թեմա 5. Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի երկրաջերմային աղբյուրներից մեկուսացվել և նույնականացվել են լիպազ և ամիլազ արտադրող թերմոֆիլ բացիլների ավելի քան 180 շտամներ: Լիպազների և ամիլազների ակտիվ շտամ արտադրիչները ներկայացված են եղել *Geobacillus, Anoxybacillus, Brevibacillus* և *Bacillus* ցեղի տեսակներով:

Ամիլազի ակտիվ արտադրիչ *Anoxybacillus rupiensis* Arzakan 1-ի առավելագույն ամիլազային ակտիվությունը (60.2 U/մգ) դիտարկվել է pH 6.5-7, 56˚C ջերմաստիճանային պայմաններում ինկուբացման 6-րդ ժամում: *Anoxibacillus flavitermus* strain K103 շտամի առավելագույն ամիլազային արտադրություն (205 U/մլ) է դիտարկվել pH 7, 65˚C ջերմաստիճանային պայմաններում աճի վաղ լոգարիթմական փուլում: Ոչ լրիվ մաքրված ֆերմենտային ֆրակցիայի զիմոգրաֆիկական վերլուծությամբ էլեկտրոֆորեգրամում հայտնաբերվել է մեկ սպիտակուցային բիծ: Որոշվել է ամիլազային սպիտակուցի մոլեկուլային կշիռը՝ 75 կԴա: Ամիլազային ֆերմենտը կայուն է 40-100՛C ջերմաստիճանային միջակայքում և pH-ի 5-10 արժեքներում, այն խթանվում է Ca^{2+} և Mn^{2+} և ճնշվում Cu^{2+} և Zn^{2+} իոններով:

Լիպազների ակտիվ արտադրիչ *Geobacillus* sp. Tatev 4, *Anoxybacillus* sp. Karvachar QB-2 և *Bacillus licheniformis* 107 թերմոֆիլ շտամների լիպազի (Էսթերազի) գենի նուկլեոտիդային հաջորդականությունների ամպլիֆիկացման համար մոդելավորվել են մենահատուկ փրայմերներ: Ցույց է տրվել լիպազների GDSL և Lip 1 ընտանիքներին պատկանելիությունը: Մոդելավորվել են լիպազային սպիտակուցների տարածական կառուցվածքները:

Թեմա 6. Իրականացվել է գիտարշավ Սևանա լճից նմուշահանման նպատակով: Ջրային նմուշներից թաղանթային ֆիլտրերով առանձնացվել է մանրէային կենսազանգվածը, որը հետագայում կիրառվել է ԴՆԹ-ի անջատման համար: Ջրային և տղմային նմուշներում որոշվել է մի շարք հակաբիոտիկների նկատմամբ զգայուն և կայուն ալոխտոն և աուտոխտոն կուլտիվացվող մանրէների, կոլիֆորմ բակտերիաների և էնտերակոկերի ընդհանուր քանակը: Որոշվել են նաև ջրային նմուշների կոլի ինդեքսը և կոլի տիտրը: Ընդհանուր առմամբ մեկուսացվել են բացիլների 11 շտամներ, այդ թվում՝ էրիթրոմիցին և ամպիցիլին կայուն 3 շտամներ, և *Aeromonas* ցեղին պատկանող 6 շտամներ՝ ներառյալ էրիթրոմիցին, ցիպրոֆլոքսացին և սուլֆամետոքսազոլ կայուն 3 շտամներ:

Թեմա 7. Հայաստանի պղնձի և ոսկու հանքապարների նմուշներից մեկուսացվել են մոտ 30 մեզոֆիլ և ջերմասեր մետաղակայուն բակտերիաներ: Կուլտուրաները, ըստ 16S ՌԴՆԹ-ի նուկլեոտիդային հաջորդականությունների սեքվենավորման, նույնականացվել են որպես *Aeromonas, Arthrobacter, Bacillus, Brevibacillus, Comamonas, Geobacillus, Micrococcus, Methylobacterium, Pseudomonas, Sinomonas* և *Stenotrophomonas* ցեղերի ներկայացուցիչներ: Ուսումնասիրվել է շտամների դիմացկունությունը Cu(II), Cd(II), Zn(II), Ni(II), Co(II) և Mo(II) իոնների 0.1-10 մՄ կոնցենտրացիաների նկատմամբ: Ցույց է տրվել շտամների բարձր դիմադրողականությունը Mo(II), Cu(II) և Ni(II) իոնների նկատմամբ: Պարզվել է, որ16 մկՄ Cu(II), 17 մկՄ Ni(II), 10 մկՄ Cd(II) և 15 մկՄ Zn(II) իոնների առկայությունը սննդամիջավայրում էապես չի ազդում *B. subtilis* AG4 շտամի աճի վրա, իսկ *B. megaterium* AA1 և *G. pallidus* AA4 շտամների համար իոնների նշված կոնցետրացիաները համապատասխանաբար ունեն աճը խթանող կամ ճնշող ազդեցություն:

Ամբիոնում կատարված այլ աշխատանքների մասին:

Ուսումնասիրվել են բարդածաղկավորների ընտանիքին պատկանող թերապևտիկ բարձր արժեք ունեցող *Stizolophus balzamita* Lam. մեկուսացված կուլտուրայի աճման և նյութափոխանակության առանձնահատկությունները: Պարզվել է, որ երկրորդային նյութափոխանակության արգասիքների սինթեզի ակտիվությունը կախված է մեկուսացված կուլտուրայի աճի ցիկլից և սննդամիջավայրի կազմից: *S. balzamita* կուլտուրայի հակաօքսիդանտային ակտիվության փոփոխության դինամիկան ուսումնասիրվել է կալուսի աճեցման 10, 20, 30 օրերի ընթացքում էքսպրես-թեստի՝ DPPH-ի (2,2-diphenyl-1-picrylhydrazyl) կիրառմամբ, ազատ ռադիկալների կապման մեթոդով: Այդ նպատակով կիրառվել են 10, 50, 100, 1000 մկգ/լ կոնցենտրացիայով կալուսային հյուսվածքներից և բնականոն բույսից ստացված սպիրտային լուծամզվածքները, որոնց ակտիվությունը համեմատվել է ասկորբինաթթվի նույն կոնցենտրացիայով լուծույթների ակտիվության հետ: Պարզվել է, որ ուսումնասիրվող կուլտուրայի աճեցման 30-րդ օրը 1000, 500, 100, 50 մկգ/մլ լուծամզվածքների հակաօքսիդանտային ակտիվությունը հասել է համապատասխանաբար 41.89%, 19.64%, 6.8%, 0.18%-ի: Կալուսի աճեցման սկզբնական շրջանում՝ 10-րդ օրը, հակաօքսիդանտային ակտիվությունը բավականին բարձր է, կազմում է 25.94%, հետագայում նվազելով՝ հասնում է 15.09% (20-րդ օրը), իսկ աճի ցիկլի վերջում բարձրանում է մինչև 41.89%, որը համեմատելի է բնականոն բույսում սինթեզվող հակաօքսիդանտային ակտիվություններով օժտված նյութերի մակարդակի հետ, այն կազմում է 37,19%: Որոշվել է նաև *S. balsamita* բնականոն բույսի և աճի տարբեր փուլերի կալուսային հյուսվածքի ընդհանուր սպիտակուցի, ինչպես նաև կալուսային հյուսվածքի չոր նյութի քանակությունը: Սպիտակուցի ամենաբարձր արժեքը նույնպես գրանցվել է կալուսի աճեցման 30-րդ օրը: Կալուսային հյուսվածքի չոր նյութի առավելագույն քանակը դիտվել է աճեցման 15-րդ օրը՝ 7%, որից հետո այն նվազել է: Չոր նյութի նվազումը համընկնում է երկրորդային և առաջնային նյութափոխանակության սինթեզի ակտիվացման հետ: Փորձարկվել են հորմոնների տարբեր քանակությամբ և համադրությամբ սննդամիջավայրեր, որոնցից մեկուսացված կուլտուրայի աճի և նյութափոխանակության խթանման համար առավել նպաստավոր է եղել Մուրասիգե-Սկուգ հիմքով և հորմոնների կազմով սննդամիջավայրը:

Ուսումնասիրվել են նաև Հայաստանի Լոռվա մարզի պղնձի հանքավայրերում մանրէային համակեցությունները: Նմուշահանումը իրականացվել է Ալավերդու պղնձի հանքարդյունաբերական թափոնից՝ շլամից, Ախթալայի պոչամբարից, Շամլուղի հանքապարից, ինչպես նաև Թեղուտի պոչամբարից հոսող գետի նստվածքից: Պարզվել է, որ նմուշներում բակտերիական համակեցությունները ներկայացված են Acidobacteria, Alphaproteobacteria, Betaproteobacteria, Gammaproteobacteria, Actinobacteria և Firmicutes ֆիլումներով: Այսպես, Ալավերդու շլամում հայտնաբերվել են *Modestobacter, Microbacterium, Rhodococcus* և *Saccharomonospora* ցեղերին պատկանող բակտերիաներ, Ախթալայի պոչամբարում՝ *Acidobacteria* և *Terriglobus* ցեղերին պատկանող բակտերիաներ, ինչպես նաև որոշ չկուլտիվացվող ձևեր: Շամլուղի հանքապարում առկա էին *Stenotrophomonas, Massilia, Dechloromonas, Limnobacter, Thiobacillus, Thalassospira, Actinobacterium* ցեղերի ներկայացուցիչներ և որոշ չկուլտիվացվող ձևեր, իսկ Թեղուտի

նմուշներում՝ *Shewanella* և *Aeromonas* ցեղերի ներկայացուցիչներ: Պարզվել է նաև որոշ չկուլտիվացվող արքեների առկայությունը Ալավերդու շլամում, *Ferroplasma* ցեղի ներկայացուցիչների առկայությունը՝ Ախթալայի պոչամբարի նմուշներում, Candidatus *Nitrososphaeragargensis, Methanosphaera* sp. և Uncultured Methanobacteriaceaearchaeon՝ Շամլուղի հանքապարի նմուշներում, ինչպես նաև *Methanosphaera*sp., *Aciduliprofundum*sp. և Uncultured archaeon տեսակների առկայությունը՝ Թեղուտ գետի նստվածքային նմուշներում:

Շարունակվել է Հնդկաստանից ուղարկված միկորիզային սնկի Մայկոնետ պատրաստուկի փորձարկումը մի շարք բույսերի վրա: Այդ պատրաստուկը պարունակում է միկորիզային սնկի սպորներ, իսկ որպես կրիչ ավելացված է փայտի ածուխ: Պատրաստուկն օգտագործվել է սերմերի նախացանքային թրջման, տնկիների և սածիլների արմատային համակարգերի թրջման եղանակներով: Փորձերը դրվել են ԵՊՀ և ՀՀ ԳԱԱ բուսաբանության ինստիտուտի ջերմատներում, ինչպես նաև բաց գրունտում՝ Արարատի և Արմավիրի մարզերում:

Սերմերի նախացանքային թրջումն արագացրել է սերմերի ծլումը և բարձրացրել ծլման էներգիան, խթանել է սածիլների աճը և ճյուղավորումը, ինչի հետևանքով ձևավորվել է փարթամ տնկանյութ, որոնց ծաղկումը և պտղագոյացումը ստուգիչից 5-7 օրով ավելի արագ են սկսվել: Նման պատկեր է արձանագրված դեկորատիվ՝ կովկասյան սոճու, գիհի կազակական և կոտոնեաստր տնկիների, ինչպես նաև փռվող կենսածառի կտրոնների վրա, Զանգակի և ակվիլեգիայի փորձնական բույսերի հաբիթոևսը գերազանցում է ստուգիչին ծաղիկների չափով, կարճ ամուր կոթուններով, ինչը բարձրացնում է դրանց զարդարարական արժեքը: Դեկորատիվ բույսերի նվազ տնկանյութի արմատների թրջումը Մայկոնետով զգալիորեն խթանել է սածիլների աճը և դրանք պիտանի դարձրել բաց գրունտում տնկելու համար:

Դաշտային մշակաբույսերից՝ դդմիկի, վարունգի, լոլիկի և խոշորապտուղ դդմի սերմերի և կարտոֆիլի պալարների մշակման արդյունքում արագանում է աճը, առաջացնում ճյուղավորված և հաստացած ցողուն ու հզոր արմատային համակարգ:

Հրատարակություններ

Դասագիրք	Մենագրություն	Ուսումնական ձեռնարկ	Ուսումնամեթոդական ձեռնարկ	Հոդված	Զեկուցման թեզիս
1	-	-	3	53	43

Գիտական և ուսումնամեթոդական հրատարակությունների ցանկ

Դասագիրք

1. *Է. Մ. Ղազարյան, Ա. Հ. Թոչունյան, Գ. Ա. Մելիքյան, Հ. Ա. Խաչատրյան,* Բնագիտություն - 6, Դասագիրք դպրոցի 6-րդ դասարանի համար, Երևան, «Աստղիկ» հրատ., 2014, 160 էջ:

Ուսումնամեթոդական ձեռնարկ

1. *Ա. Պ. Անտոնյան, Գ. Գ. Արծրունի, Կ. Վ. Գրիգորյան, Է. Ս. Գևորգյան, Ֆ. Դ. Դանիելյան, Ա. Գ. Եսայան, Ա. Հ. Թոչունյան և ուրիշներ,* Կենսաբանություն. Թեստային առաջադրանքների շտեմարան, Մաս 1, Երևան, «Աստղիկ» հրատ., 2014, 316 էջ: Մաս 2, Երևան, «Աստղիկ» հրատ., 2014, 272 էջ: Մաս 3, Երևան, «Աստղիկ» հրատ., 2014, 340 էջ:
2. *Ա. Հ. Թոչունյան,* Կենդանի բջիջների աշխարհում, «Դպրոցականի գրադարան» մատենաշար, գիրք Բ, Երևան, «Աստղիկ» հրատ., 2014, 144 էջ:

3. *Ա. Հ. Թոչունյան, Հ. Հ. Փանոսյան, Ի. Լ. Բազուկյան, Ա. Ա. Մարգարյան, Յու. Գ. Պոպով,* Մանրէաբանության լաբորատոր աշխատանքներ, ԵՊՀ հրատ., Երևան, 2014, 316 էջ:

Հոդված

1. *Հ. Դավթյան, Ն. Սահակյան, Ա. Բաբայան, Մ. Պետրոսյան, Sizolophus balzamita* Lam. մեկուսացված կալուսի ստացման, աճի և նյութափոխանակության որոշ առանձնահատկությունների շուրջ, «ԵՊՀ ՈՒԳԸ գիտական հոդվածների ժողովածու», N 1.1(4), 2015, էջ 56-61:
2. *Ս. Իսաջյան, Ն. Սահակյան, Ա. Բաբայան, Մ. Պետրոսյան, Hypericum elongatum* Ledeb. մեկուսացված կուլտուրայի միկրոբազմացման առանձնահատկությունները, «ԵՊՀ ՈՒԳԸ գիտական հոդվածների ժողովածու», N 1.1(4), 2015, էջ 99-105:
3. *Ս. Հանիսյան, Ի. Բազուկյան,* Տարբեր դեղաբույսերի լուծամզվածքների ազդեցությունը կաթնամթերքի մերանների թթվառաջացման և հակաբակտերիական ակտիվության վրա, «ԵՊՀ ՈՒԳԸ գիտական հոդվածների ժողովածու», N 1.1 (4), 2015, էջ 90-98:
4. *Ն. Հարությունյան, Մ. Լալայն, Յու. Թ. Ալեքսանյան, Գ. Գ. Մելիք-Անդրեասյան, Կ. Վ. Հարությունյան, Ա. Հ. Թոչունյան,* Պայմանական ախտածին էնտերոբակտերիաների և պրոբիոտիկ կաթնաթթվային բակտերիաների ադհեզիվության համեմատական գնահատականը, «Հայաստանի բժշկագիտություն», 55 (2), 2015, էջ 48-52:
5. *Մ. Պետրոսյան, Ն. Սահակյան, Ա. Թոչունյան,* Էթիլենը բույսերի և մարդու կյանքում, «Գիտության աշխարհում», N 1, 2015, էջ 46-50:
6. *Ա. Վերդյան, Ի. Բազուկյան,* Կաթնաթթվային բակտերիաների պրոբիոտիկ հատկությունների ուսումնասիրությունը «ԵՊՀ ՈՒԳԸ գիտական հոդվածների ժողովածու», N 1.1 (4), 2015, էջ 26-32:
7. *Հ. Հ. Փանոսյան,* Կյանքը աղի բյուրեղում: Աղասեր մանրէները և դրանց կենսատեխնոլոգիական ներուժը, «Բնագետ», N 2, 2014, էջ 46-52:
8. *А. Э. Акопян, А. А. Маргарян, О. С. Аттарян, Г. В. Асатрян, И. Л. Базукян, О. А. Паносян, А. А. Трчунян,* Антимикробная активность хитозановых пленок, модифицированных пиразол карбоновыми кислотами, “Биологический журнал Армении”, N 67 (1), 2015, с. 45-49.
9. *Г. Г. Варданян, П. А. Оганесян, А. А. Маргарян, О. А. Паносян, А. А. Трчунян,* Термофильные бациллы, выделенные из источников Армении и Нагорного Карабаха, как продуценты гидролитических ферментов, “Актуальные проблемы гуманитарных и естественных наук”, N 6 (1), 2014, с. 47-50.
10. *А. Р. Сагателян, А. А. Маргарян, О. А. Паносян, А. А. Трчунян,* Выделение и Изучение *Thermus scotoductus* Karvachar-1 из горячего источника Карвачар, “Актуальные проблемы гуманитарных и естественных наук”, N 6 (1), 2014, с. 89-92.
11. *V. Abrahamyan, A. Poladyan, A. Vassilian, A. Trchounian,* Hydrogen production by *Escherichia coli* during glucose fermentation: effects of oxidative and reductive routes using the strain lacked of hydrogen oxidizing hydrogenases 1 (*hya*) and 2 (*hyb*), Int. J. Hydrogen Energy 40; 2015; Epub Feb 25; DOI: 10.1016/j.ijhydene. 2015, 02.006.
12. *S. V. Avakyan, V. V. Kovalenok, V. P. Savinykh, A. S. Ivanchenkov, N. A. Voronin, A. Trchounian, L. A. Baranova,* The role of a space patrol of solar X-ray radiation in the Provisioning of the safety of orbital and interplanetary manned space flights, Acta Astronautica 109, 2015, p. 194-202.
13. *I. Bazukyan, L. Matevosyan,* Antifungal activity of lactic acid bacteria isolated from Armenian dairy products, “The FEBS Journal”, 281 (Suppl. 1), 2014, p. 651. DOI: 10.1111/febs.12919
14. *S. Blbulyan, A. Trchounian,* Role of *Escherichia coli* hydrogenases in the F0F1-ATPase activity under mixed carbon fermentation at different pHs. Biochim. Biophys. Acta - Bioenergetics 1837, Suppl. 2014, p. e107-108. DOI: 10.1016/j.bbabio.2014.05.257.

15. *S. Blbulyan, A. Trchounian,* Impact of membrane-associated hydrogenases on the FoF1-ATPase in *Escherichia coli* during glycerol and mixed carbon fermentation: atpase activity and its inhibition by N,N'-dicyclohexylcarbodiimide in the mutants lacking hydrogenases. Arch. Biochem. Biophys. 579, 2015, p. 67-72; DOI: 10.1016/j.abb.2015.05.015.
16. *S. Blbulyan, A. Trchounian,* Proton translocating ATPase activity of *Escherichia coli* membrane vesicles under mixed carbon fermentation at alkaline and acidic pHs. "The FEBS Journal", 281, Suppl. s1, 2014, p. 53. DOI: 10.1111/febs.12919.
17. *L. Gabrielyan, L. Hakobyan, A. Trchounian,* Oxidizer and reducer different effects on proton-translocating F_OF_1-ATPase activity of *Rhodobacter sphaeroides* membrane vesicles. The FEBS J. 282, Suppl. 2015, p. 115.
18. *L. Gabrielyan, H. Sargsyan, A. Trchounian,* Inhibitory studies on hydrogen protoproduction by *Rhodobacter sphaeroides.* 6th Int. Conf. on Hydrogen Production. Proc. Oshawa (Canada). 2015, p. 452-458. ISBN 978-0-9781236-3-5.
19. *L. Gabrielyan, L. Hakobyan, H. Sargsyan, A. Trchounian,* Study of membrane properties of *Rhodobacter sphaer*oides under various growth conditions, Eur. Biophys. J. 44, Suppl. 1, 2015, p. S88.
20. *A. Ghazaryan, S. Blbulyan, A. Poladyan, A. Trchounian,* Redox stress in geobacilli from geothermal springs: phenomenon and membrane-associated response mechanisms, Bioelectrochemistry 105, 2015, p. 1-6.
21. *M. Ginovyan, A. Keryan, I. Bazukyan, P. Ghazaryan, A. Trchounian,* The large scale antibacterial, antifungal and anti-phage efficiency of Petamcin-A: New multicomponent preparation for skin diseases treatment. Ann. Clin. Microbiol. Anrimicrob. 14, 2015, 28.
22. *M. Ginovyan, P. Ghazaryan, I. Bazukyan, A. Trchounian,* The large scale antimicrobial efficiency of a new multicomponent preparation for skin diseases treatment, "FEBS Journal", 281 (Suppl. 1), 2014, p. 671. DOI: 10.1111/febs.12919.
23. *L. Hakobyan, L. Gabrielyan, A. Trchounian,* Redox regulation of photo-fermentative hydrogen production by *Rhodobacter sphaeroides.* The FEBS J. 281, Suppl. 1, 2014, p. 207. DOI: 10.1111/febs.12919
24. *K. Harytyunyan, L. Hakobyan, A. Trchounian,* Adhesive and antimicrobial properties of *Lactobacillus acidophilus* strain Er 317/402 "Narine" for its use in some types of blood cancer. The FEBS J. 281, Suppl. 1, 2014, p. 729-730. DOI: 10.1111/febs.12919.
25. *K. Hovnanyan, S. Marutyan, A. Pepoyan, L. Navasardyan, A. Trchounian,* Transmission and scanning electron microscopy of contacts between bacterial and yeast cells in biofilms on different surfaces. Open Access Library J. 2, 2015, e1492.
26. *A. G. Keryan, I. L. Bazukyan, Yu. G. Popov, A. H. Trchounian,* Phenotypic characteristics of the new lactobacilli strain isolated from matsoun, the Armenian traditional sour-milk product, "Scientific Medical Journal", N 9:1; 2014, p. 18-23.
27. *A. Margaryan, H. Panosyan, N.-K. Birkeland, A. Trchounian,* Heavy metal resistance of *Bacillus subtilis* AG4 isolated from the Sotk gold mine in Armenia. The FEBS J. 282, Suppl. 2015, p. 221-222.
28. *H. Panosyan, A. Margaryan, N. K. Birkeland,* Thermostable α-amylase produced by Anoxibacillus flavitermus K103 isolated from an Armenian geothermal spring. "FEBS Journal 281 (Suppl 1), 2014, p. 673.
29. *H. Panosyan, G. Anzelmo, B. Nicolaus,* Production and characterization of exopolysaccharadies synthesized by geobacilli isolated from an Armenian geothermal spring. "FEBS Journal", 281 (Suppl 1), 2014, p. 667.
30. *H. Panosyan, M. Wagner, C. Brandmayr, T. Carell,* Differentiation of bacilli on genera level based on tRNA modification profiles. "FEBS Journal", 281 (Suppl 1), 2014, p. 655-656.
31. *M. Petrosyan, N. Sahakyan, A. Babayan, A. Trchounian,* Amberboasosnovskyi ILJIN in vitro culture obtaining, "Reports of NAS of Armenia", N 1 (24), 2015, p. 7-10.
32. *M. Petrosyan, N. Sahakyan, A. Babayan, A. Trchounian, Amberboa sosnovski* Iljin in vitro culture obtaining. El. J. Nat. Sci., NAS Armenia 24, 2015, p. 7-10.

33. *M. Petrosyan, Y. Shcherbakova, N. Sahakyan, Z. Vardanyan, A. Poladyan, Yu. Popov, A. Trchounian, Alkanna orientalis* (L.) Boiss. plant isolated cultures and antimicrobial activity of their extracts: phenomenon, dependence on different factors and effects on some membrane-associated properties of bacteria. "Plant Cell, Tissue and Organ culture (PCTOC), Journal of Plant Biotechnology", 2015, DOI: 10.1007/s11240-015-0806-3.
34. *A. Poladyan, V. Abrahamyan, A. Vassilian, A. Trchounian,* Hydrogen production during glucose fermentation by *Escherichia coli*: Effects of oxidative andreductive routes on the strain lacked of hydrogen oxidizing hydrogenases 1 and 2. Proc. 13th Int. Conf. Clean Energy (eds. I. Dincer, C.O. Colpan, O.Kizilkan et al.), Istanbul (Turkey), 2014, p. 1087-1092. ISBN: 978-605-64806-0-7, www.icce-2014.net.
35. *A. Saghatelyan, H. Panosyan,* Study of bacterial diversity of Karvachar geothermal spring using culture-independent methods, "Materials of the scientific session dedicated to the 95th anniversary of YSU", 2015, p. 13-18.
36. *H. Sargsyan, L. Gabrielyan, A. Trchounian,* Dithiothreitol, redox reagent, is affecting proton-translocating ATPase activity of *Rhodobacter sphaeroides*. Biochim. Biophys. Acta - Bioenergetics 1837, Suppl. 2014, p. e90. DOI: 10.1016/j.bbabio.2014.05.106.
37. *H. Sargsyan, L. Gabrielyan, A. Trchounian,* Protonophores affecting *Rhodobacter sphaeroides* growth and hydrogen photoproduction. The FEBS J. 281, Suppl. 1, 2014, p. 669-670. DOI: 10.1111/febs.12919.
38. *H. Sargsyan, L. Gabrielyan, L. Hakobyan, A. Trchounian,* Light-dark duration alternation effects on *Rhodobacter sphaeroides* growth, membrane properties and bio-hydrogen production in batch culture. *Int. J. Hydrogen Energy* 40, 2015, p. 4084-4091.
39. *G. Shahinyan, H. Panosyan, A. Trchounian,* Production of thermostable lipases by thermophilic bacilli. "FEBS Journal", 281 (Suppl 1), 2014, p. 668.
40. *G. S. Shahinyan, A. A. Margaryan, H. H. Panosyan, A. H. Trchounian,* Isolation and characterization of lipase-producing thermophilic bacilli from geothermal springs in Armenia and Nagorno-Karabakh, "Biolog. J. Armenia", N 67 (2), 2015, p. 6-15.
41. *G. S. Shahinyan, H. H. Panosyan, A. H. Trchounian,* Characterization of lipase producing thermophilic bacilli isolated from Armenian geothermal springs. "Reports of NAS of Armenia", N 115 (1), 2015, p. 59-68.
42. *H. Torgomyan, A. Trchounian,* The enhanced effects of antibiotics irradiated of extremely high frequency electromagnetic field on *Escherichia coli* growth properties. Cell Biochem. Biophys. 71, 2015, p. 419-424.
43. *H. Torgomyan, A. Trchounian,* The effects of 53 GHz irradiation on enhancements of antibiotics antibacterial influence on *Escherichia coli. The FEBS J.* 281, Suppl. 1, 2014, p. 211-212.
44. *A. Trchounian,* Mechanisms for hydrogen production by different bacteria during mixed-acid and photo-fermentation and perspectives of hydrogen production biotechnology. Crit. Rev. Biotechnol. 35, 2015, p. 103-113.
45. *K. Trchounian, V. Abrahamyan, A. Vassilian, A. Trchounian,* Role of formate channel coding f*ocA* and f*ocB* genes in H_2 production by *Escherichia coli* upon glucose fermentation at slightly alkaline pH. *Biochim. Biophys. Acta - Bioenergetics* 1837, Suppl. 2014, e115. DOI:10.1016/j.bbabio.2014.05.278.
46. *K. Trchounian, H. Sargsyan, A. Trchounian,* Hydrogen production by *Escherichia coli* depends on glucose concentration and its combination with glycerol at different pHs. Int. J. Hydrogen Energy 39, 2014, p. 6419-6423, DOI: 10.1016/j.ijhydene.2014.02.050.
47. *K. Trchounian, A. Trchounian,* Hydrogen producing activity by *Escherichia coli* hydrogenase 4 (*hyf*) depends on glucose concentration. Int. J. Hydrogen Energy 39, 2014, p. 16914-16918.
48. *K. Trchounian, A. Trchounian,* Glucose concentration is distinctive for *Escherichia coli* hydrogenase 4 (*hyf*) activity. "The FEBS J." 281, Suppl. 1, 2014. p. 567-568. DOI: 10.1111/febs.12919.
49. *K. Trchounian, A. Trchounian, Escherichia coli* hydrogen gas production from glycerol: effects of external formate. Renewable Energy 83, 2015, p. 345-351, Epub May 14; DOI: 10.1016/j.renene.2015.04.052.

50. *K. Trchounian, A. Vardanyan, A. Poladyan, A. Trchounian, Escherichia coli* growth and hydrogen production upon glycerol fermentation at slightly acidic pH: effects of formate and some heavy metal ions. 6th Int. Conf. on Hydrogen Production. Proc., Oshawa (Canada). 2015, p. 306-313. ISBN 978-0-9781236-3-5.
51. *G. Vardanyan, A. Margaryan, H. Panosyan,* Isolation and characterization of lipase-produvting bacilli from Tatev geothermal spring (Armenia). "Materials of the scientific session dedicated to the 95th anniversary of YSU", 2015, p. 33-36.
52. *Z.Vardanyan, A. Trchounian, Comparative effects of single Cu (II) and Fe(III) ions and their mixture on Enterococcus hirae growth and membrane associated ATPase activity. Biochim. Biophys. Acta - Bioenergetics 1837, Suppl., 2014, p. e116. DOI: 10.1016/ j.bbabio.2014.05.280.*
53. *Z. Vardanyan, A. Trchounian,* Cu(II), Fe(III) and Mn(II) combinations as environment stress factors have distinguishing effects on *Enterococcus hirae.* J. Environm. Sci. 28, 2015, p. 95-100.

Զեկուցման թեզիս *К. М. Григорян, Л. Л. Акопян, М. П. Саргсян,* Разработка метода биоконтроля с целью предотвращения роста охратоксигенных грибов из секции Aspergillus nigri в процессе хранения изюма, Материалы III Межд. миколог. форума "Современная микология в России", Т. 5, 2015, с. 155-156.

2. *В. В. Овсепян, К. М. Григорян, М. П. Саргсян,* Таксономический анализ грибов, выявленных в специях и пряных травах. Материалы III Межд. миколог. форума "Современная микология в России", Т. 5, 2015, с. 183.
Հաշվետու ուստարում ամբիոնի աշխատակիցները գիտահետազոտական աշխատանքներ են կատարել Ազոտ պարունակող միացությունների կենսաքիմիայի գիտահետազոտական լաբորատորիայում:

Հրատարակություններ

Դասագիրք	Մենագրություն	Ուսումնական ձեռնարկ	Ուսումնամեթոդական ձեռնարկ	Հոդված	Զեկուցման թեզիս
-	-	-	-	14	4

Գիտական և ուսումնամեթոդական հրատարակությունների ցանկ

Հոդված

1. *Ն. Ավթանդիլյան, Մ. Սարգսյան, Ս. Կարապետյան,* Պոլիամինների քանակության փոփոխության ուսումնասիրումը լյարդի արգինազի իզոֆերմենտների արգելակման ժամանակ, ԵՊՀ ՈՒԳԸ գիտական հոդվածների ժողովածու, բնական գիտություններ, 1.1 (4), 2015, էջ 75-81:
2. *Ծ. Ի. Ադամյան, Է. Ս. Գևորգյան, Հ. Մ. Կարապետյան, Լ. Է. Հովհաննիսյան,* Մեղրախոտի (Stevia rebaudiana Bertoni) և իմմոբիլիզացիոն սթրեսի համակցված ազդեցությունը լեյկոպոեզի մորֆոֆունկցիոնալ ցուցանիշների և պրոլինի կենսասինթեզի ֆերմենտների ակտիվության վրա, «Հայաստանի կենսաբանական հանդես», № 1 (67), 2015, էջ 64-69:
3. *Հ. Մ. Կարապետյան,* Մեղրախոտի և իմմոբիլիզացիոն սթրեսի համակցված ազդեցությունը պրոլինի կենսասինթեզի ֆերմենտների ակտիվության վրա, «Տեսական և կլինիկական բժշկության հարցեր», № 6, 2014, էջ 64-66:
4. *Հ. Մ. Կարապետյան, Տ. Ա. Զաքարյան, Է. Խ. Բարսեղյան,* Մի շարք երկվալենտ իոնների ազդեցությունը սպիտակ առնետի տարբեր օրգանների D-ամինաթթվային օքսիդազի ակտիվության վրա, «Տեսական և կլինիկական բժշկության հարցեր», № 7/96, 2014, էջ 28-31:
5. *Լ. Հ. Նավասարդյան, Ս. Վ. Մարության, Ա. Լ. Նավասարդյան, Լ. Ռ. Առաքելյան,* Ռենտգենյան ճառագայթման ազդեցությունը խմորասնկային բջիջներում ցիտիդինային միացությունների դեզամինացման վրա, «Հայաստանի կենսաբանական հանդես», LXVI, 3, 2014, էջ 75-78:
6. *А. А. Агаджанян,* Влияние некоторых лекарственных растений и уровень общего холестерина в сыворотке крови человека, “Биологический журнал Армении”, № 4, 2014, с. 38-41.
7. *М. А. Давтян, Н. Н. Айрапетян, М. А. Хачатрян, А. П. Григорян,* Влияние интенсивности гипоксии на активность гуаниндезаминазы в органах крыс, Доклады НАН РА, т. 114, 4, 2014, с. 351-355.
8. *М. А. Давтян, Н. Н. Айрапетян, М. А. Хачатрян, Г. Г. Семерджян,* Исследование некоторых физико-химических свойств аденинндезаминазы в различных биологических объектах, “Биологический журнал Армении”, т. LXVI, 3, 2014, с. 18-23.
9. *Ts. I. Adamyan, H. M. Karapetyan, E. S. Gevorgyan, T. A. Hayrapetyan,* Immobilization stress action on leukopoesis index and on activity changes of praline biosynthesis enzymes, Proceedings of the Yerevan State University, № 1, 2015, p. 39-44.
10. *A. A. Agadjanyan,* Influence of some herbs on concentration of glucose in human serum, Proceedings of Yerevan State University, № 1, 2015, p. 53-56.
11. *N. V. Avtandilyan, S. A. Karapetyan,* Relationship between liver polyamines quantity and arginase isoenzymes activity after arginase inhibition by NG-hydroxy-L-arginine. National Academy of Sciences of RA, Electronic Journal of Natural Sciences, 1 (24), 2015, p. 3-6.
12. *K. Hovnanyan, S. Marutyan, A. Pepoyan, L. Navasardyan, A. Trchounian,* Transmission and Scanning Electron Microscopy of Contacts between Bacterial and Yeast Cells in Biofilms on Different Surfaces, OALib Journal 04/2015; 2 (04):e1492. DOI:10.4236/oalb.1101492.
13. *H. G. Javrushyan, M. H. Khachatryan, M. A. Davtyan,* Effect of hypoxia on the activity of urea cycle enzymes, National Academy of Sciences of RA, Electronic Journal of Natural Sciences, 2 (23), 2014, p. 13-16.
14. *S. A. Karapetyan, N. V. Avtandilyan,* Polyamines quantity change after inhibition of rats kidney and brain arginase isoenzymes by NG-hydroxy-L-arginine. Issues In Theoretical And Clinical Medicine, Journal of Scientific and Practical Medicine, Vol 17, N 7 (96), 2014, p. 20-24.

Զեկուցման թեզիս

1. *N. V. Avtandilyan, S. A. Karapetyan, K. A. Alexanyan,* Serum arginase activity during women breast and men prostate cancers, The 3rd International Scientific Conference, Yerevan, 23-26 June, 2015, Book of Abstracts, p. 78-79.
2. *S. P. Hovhannisyan, H. M. Davtyan,* Induction of L-amiono acid oxidase activity expression in Aspergillus niger R-3, Trends in microbiology. International Scientific works hop., Book of Absracts, October 5-8, Yerevan, 2014.
3. *A. L. Navasardyan, L. M. Arshakyan, S. V. Marutyan, L. H. Navasardyan,* The investigation of guanine compounds deamination intensity after the influence of X-ray irradiation and repair in *Candida* yeasts, III International Scientific conference of Young Researchers. Dialogues on Science, dedicated to the 5th Anniversary of the SPC, Armbiotechnology NAS, Book of Abstracts, june 23-26, 2015, p. 99.
4. *A. Pepoyan, M. H. Balayan, A. M. Manvelyan, L. A. Minasbekyan, K. O. Hovnanyan, V. Tsaturyan,* DNA Fluorescence Parameters and Methylation Levels of Gut Commensal Escherichia coli from Crohn's Disease Patients, 59rd The Biophysical Society Annual Meeting. Baltimore, Maryland, February 7-11, 2015.

ԿԵՆՍԱՖԻԶԻԿԱՅԻ ԱՄԲԻՈՆ

Ամբիոնի վարիչ՝ *Վարդանյան Պողոս Հովհաննեսի, կենս. գիտ. դոկտոր, պրոֆեսոր*

Պրոֆեսորադասախոսական կազմը

1. Անտոնյան Արա Պետիկի, կենս. գիտ. թեկնածու, դոցենտ
2. Արծրունի Իրինա Գեղամի, կենս. գիտ. թեկնածու, դոցենտ
3. Մատինյան Կարինե Ստեփանի, կենս. գիտ. թեկնածու, դոցենտ
4. Յավրոյան Ժենյա Վաղինակի, կենս. գիտ. թեկնածու, դոցենտ
5. Ներկարարյան Անահիտ Վլադիմիրի, կենս. գիտ. թեկնածու, դոցենտ
6. Պողոսյան Գայանե Հմայակի, կենս. գիտ. թեկնածու, դոցենտ
7. Փարսադանյան Մարինե Աշոտի, կենս. գիտ. թեկնածու, դոցենտ

Համատեղողներ

1. Գևորգյան Էմիլ Սոսի, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, կենս. գիտ. դոկտոր, պրոֆեսոր

Ուսումնաօժանդակ աշխատակիցներ

1. Հովհաննիսյան Գոհար Գարիկի, կենս. գիտ. թեկնածու, ուսումն. լաբորատորիայի վարիչ
2. Շահինյան Մարիամ Աշոտի, կենս. գիտ. թեկնածու, ավագ լաբորանտ
3. Ասատրյան Անուշ Լևոնի, ավագ լաբորանտ
4. Համբարձումյան Լիլիթ Արմենի, ավագ լաբորանտ
5. Միքայելյան Մարիետա Սամվելի, ավագ լաբորանտ

Ըստ ընդհանուր ուղղությունների՝ ամբիոնում կատարված գիտական աշխատանքների ամփոփում

Արտասահմանյան դրամաշնորհներ

Թեմայի անվանումը	*Ղեկավար*
1. Նոր սուբստրատների կիրառումը Հայաստանի հանքային աղբյուրներից անջատված Rhodobacter sphaeroides բակտերիաներում կենսաջրածնի ֆոտոարտադրության խթանման և կենսաջրածնի տեխնոլոգիաների զարգացման համար (ANSEF NS-Biotechnology-3777):	Գաբրիելյան Լ. Ս.
2. Արտաքին պայմանների փոփոխությունը՝ որպես H_2-ի արտադրության խթանման գործիք Հայաստանի հանքային ջրերից անջատված ֆոտոտրոֆ բակտերիաներում (ANSEF NS-Biotechnology-3921):	Հակոբյան Լ. Յու.
3. Պոլի(ԱԿՖ-ռիբոզ)իլ պոլիմերազ 1-ի ակտիվության արգելակման տարիքային և սեռական տարբերությունները առնետների լյարդի բջիջների և թիմոցիտների կորիզներում ցիսպլատինի ներարկումից հետո (ANSEF-Biochem-3711):	Ասատրյան Ա. Լ.

Թեմա 1. Դրամաշնորհի շրջանակում ուսումնասիրվել են *Rhodobacter sphaeroides* ծիրանագույն բակտերիաների MDC6521 շտամի աճման և H_2-ի ֆոտոարտադրության առանձնահատկությունները էթանոլի խմորման թափոնների առկայությամբ: Էթանոլի խմորման թափոնների վրա *R. sphaeroides* աճման ժամանակ նկատվել է աճման արագության նվազում՝ Օրմերոդի միջավայրում աճեցված ստուգիչի համեմատ: 5-10 անգամ նոսրացված թափոնային միջավայրում աճը մոտ 1.4 անգամ ճնշում է աճման արագությունը: Արդյունքները ցույց են տվել, որ Օրմերոդի միջավայրում H_2-ի արտադրությունը դիտվել է 48 ժ հետո, մինչդեռ 2-10 անգամ նոսրացված էթանոլի խմորման թափոններում H_2 արտադրությունը սկսվում է 24 ժ հետո և շարունակվում է մինչև 96 ժ: H_2-ի արտադրություն չի դիտվել չնոսրացված էթանոլի խմորման թափոններում: H_2-ի ելքը 2-5 անգամ նոսրացված թափոններում աճեցված *R. sphaeroides* բակտերիայում 48 ժ անաէրոբ աճի ժամանակ 4.6-6.3 անգամ մեծ է ստուգիչի համեմատությամբ: Սա հնարավոր է մատչելի սուբստրատների յուրացման շնորհիվ: Էթանոլի խմորման թափոնները պարունակում են զգալի քանակությամբ ամինաթթուներ, որոնք հանդիսանում են ազոտի և ածխածնի աղբյուր H_2-ի արտադրության ժամանակ և կարող են ազդել ծիրանագույն բակտերիաներում H_2-ի արտադրության համար պատասխանատու հիմնական ֆերմենտի՝ նիտրոգենազի ակտիվության վրա: Այսպիսով, էթանոլի խմորման թափոնները կարող են կիրառվել որպես H_2-ի արդյունավետ աղբյուր:

Թեմա 2. Ֆոտոսինթետիկ ծիրանագույն բակտերիաների կողմից մոլեկուլային ջրածնի արտադրությունը լուսավորությունից կախված գործընթաց է: Լույս և մութ պայմանների հաջորդական փոփոխությունը կարող է ազդել գունանյութերի մակարդակի վրա, փոխել բակտերիաների անաէրոբ նյութափոխանակությունը և ազդել դրանց կողմից մոլեկուլային ջրածնի արտադրության վրա: Հայաստանի հանքային ջրերից անջատած *Rhodobacter sphaeroides* MDC6521-ի աճը իրականացվել է լույս/մութ տևողության հարաբերության փոփոխության պայմաններում, Օրմենրոդի միջավայրում: Շարունակական լուսավորության պայմաններում աճած ստուգիչ բջիջներում H_2-ի ելքը կազմել է 8.28 մմոլ/գ չ.ք. 72 ժ-ում, որից հետո՝ 96 ժամ անց, այն նվազել է (5 անգամ, ապա ընդհանրապես անհետացել է): Ֆոտոֆերմենտացիայի տևողությունը երկարել է 24 ժ մութ/լույս աճեցման պայմաններով կուլտուրայում, իսկ H_2-ի արտադրությունը հաստատուն բարձր մակարդակի վրա է մնացել 96-144 ժ-ի ընթացքում (8.8 մմոլ/գ չ.ք.): Այդպիսի աճը հնարավոր է միայն նիտրոգենազների քանակի ավելացման և ֆոտոսինթետիկ ապարատի կազմավորման փոփոխության պայմաններում: H_2-ի արտադրությունը մութ/լույս աճեցման

պայմաններով կուլտուրայում ուշանում է և հասնում 8.0 8.8 մմոլ/գ չ.ք. մակարդակի աճման 144 ժամից հետո: Նշված արդյունքները կարող են թույլ տալ օպտիմալացնել բակտերիաների աճման պայմանները և մեծացնել դրանց կենսատեխնոլոգիական նշանակությունը:

Թեմա 3. ՊԱՌՊ 1-ի (պոլի(ԱԿՖ-ռիբոզ)իլ պոլիմերազ 1) արգելակիչները ներկայումս թևակոխել են կլինիկական գործարկման փուլ՝ կիրառվելով մոնոթերապևտիկ և զուգակցված ֆարմակոթերապիայի ռեժիմներում, զանազան հիվանդությունների բուժման ժամանակ: Դեղամիջոցների ազդեցության սեռից կախված տարբերությունները հատուկ ուշադրության են արժանի հատկապես չարորակ ուռուցքների բուժման ժամանակ: Ներկայումս ՊԱՌՊ 1-ի արգելակման մեխանիզմների ուսումնասիրությունը և նոր արգելակիչների մշակումը համարվում են կարևոր գործնական խնդիր: Խնդրի առանձնահատկություններն այն են, որ ՊԱՌՊ 1-ի արգելակման բուժիչ ազդեցությունը կախված է սեռից: Biochem–3711 դրամաշնորհի շրջանակում ուսումնասիրվել է հակաքաղցկեղային դեղամիջոց ցիսպլատինի ազդեցությունը ՊԱՌՊ 1-ի ելակետային ակտիվության, ԴՆԹ-ի ֆրագմենտավորման օրինաչափությունների վրա՝ տարբեր սեռի առնետների լյարդի և ուրցագեղձի բջջակորիզներում: Հետազոտությունների արդյունքները ցույց են տալիս, որ ցիսպլատինը չի ազդում դեռատի (4 շաբաթական) արու առնետների թիմոցիտների ՊԱՌՊ 1 ակտիվության վրա, մինչդեռ ավելի քան 40%-ով խթանում է ֆերմենտի ակտիվությունը էգ առնետների թիմոցիտներում: Հետազոտությունների հաջորդ փուլում նախատեսվում է ուսումնասիրել ՊԱՌՊ 1-ի մրցակցային (բենզամիդ) և ալոստերիկ (ԱԵՖ) արգելակիչների ազդեցությունը ֆերմենտի ելակետային ակտիվության վրա, ինչպես նաև ֆերմենտի ակտիվության վրա արգելակիչների և ցիսպլատինի համատեղ ազդեցության օրինաչափությունները տարբեր սեռի և հասակի առնետների լյարդի բջիջների և թիմոցիտների կորիզներում:

Ամբիոնում կատարված այլ աշխատանքների մասին:

Հաշվետու տարում շարունակվել են ԴՆԹ-ի հետ տարբեր լիգանդների փոխազդեցության հետազոտությունները: Առաջարկվել է ԴՆԹ-ի հետ ինտերկալյացիոն մեխանիզմով կապվող լիգանդների, մասնավորապես ԷԲ-ի կլանման սպեկտրներում ի հայտ եկող իզոբեստիկ կետի դիրքի և վարքի ուսումնասիրության տեսական մոդել, որը թույլ է տալիս ավելի մեծ հավաստիությամբ նշելու այդ կետի գոյության փաստը ԴՆԹ-լիգանդ կոմպլեքսների կլանման սպեկտրներում: Ավելին, այդ կետի ճշգրիտ ուսումնասիրությունը տեսական մոդելի միջոցով թույլ է տալիս բացահայտելու ԴՆԹ-ի հետ տվյալ լիգանդի կապման ինտերկալյացիոն մեխանիզմը, ինչպես նաև հայտնաբերելու կապման մեկից ավելի եղանակներ, եթե այդպիսիք կան: Առաջարկված մոդելի միջոցով հայտնաբերվել է, որ ԴՆԹ-ի որոշակի կոնցենտրացիաների դեպքում ԴՆԹ-ԷԲ կոմպլեքսների բոլոր սպեկտրները հատվում են մեկ կետում՝ իզոբեստիկ կետում, իսկ ԴՆԹ-ի բավականին մեծ կոնցենտրացիաների դեպքում կոմպլեքսների կլանման սպեկտրներն այլևս չեն անցնում իզոբեստիկ կետով: Հատկանշական է, որ և՛ փորձարարականորեն, և՛ տեսականորեն իզոբեստիկ կետի դիրքը ստացվում է միևնույն ալիքի երկարության տակ, ինչը ավելի է մեծացնում այս մոդելի կիրառական նշանակությունը: Այդ կետի առկայությունը վկայում է նաև, որ ԷԲ-ը ԴՆԹ-ի հետ կապվում է մի քանի եղանակներով: Այդ կետից կոմպլեքսների սպեկտրների շեղումը կապման միայն մեկ՝ ինտերկալյացիոն եղանակի դրսևորման ցուցանիշն է:

Իրականացվել են ԴՆԹ-ի և ԴՆԹ-ԷԲ կոմպլեքսների ջերմային և թթվային դենատուրացման ուսումնասիրություններ: Ստացված տվյալները ցույց են տվել, որ նշված երկու գործոնների դեպքում էլ ԴՆԹ-ի երկշղթա կառուցվածքի վրա ԷԲ-ի ազդեցությունն ունի նույնատիպ ուղղվածություն: Մասնավորապես կոմպլեքսների պարույր-կծիկ անցման միջակայքի լայնությունը լիգանդի փոքր կոնցենտրացիաների դեպքում աճում է, այնուհետև լիգանդի որոշակի կոնցենտրացիաների դեպքում անցնում է թույլ արտահայտված մաքսիմումով և նվազում է: Այս տվյալները արդյունքն են այն փաստի, որ ԴՆԹ-ի հետ ԷԲ-ը կապվում է առնվազն երեք՝ ինտերկալյացիոն, կիսաինտերկալյացիոն և էլեկտրաստատիկ եղանակներով, որոնք դրսևորվում են լուծույթի և՛ չեզոք, և՛ թթվային պայմաններում:

Հաշվետու ժամանակահատվածում շարունակվել են հակաուռուցքային դեղամիջոց ցիսպլատինի նկատմամբ կորիզային տարբեր կառույցներում ընդգրկված լիպիդների զգայունության բացահայտմանն

ուղղված հետազոտությունները: Կորիզային մատրիքսի և կորիզաթաղանթի հետ քրոմատինի կապման կետեր կան, որոնք, ինչպես հայտնի է, կարևոր են տրանսկրիպցիայի գործարկման համար: Այդ կապերի ձևավորմանը մասնակցում են կորիզային մատրիքսի լիպիդները: Հայտնի է, որ կորիզային մատրիքսի կազմում առկա լիպիդներն օժտված են կարգավորիչ հատկություններով և մասնակցում են բջջի կենսական կարևոր գործընթացների կարգավորմանը: Այդ ազդեցությունները, որպես կանոն, դոզա կախյալ բնույթ են կրում: Հետևաբար հնարավոր է, որ բջջի կենսական կարևոր գործընթացների կարգավորումն իրականանա լիպիդների քանակական փոփոխությունների շնորհիվ: Ուսումնասիրվել են առնետի ուրցագեղձի կորիզային մատրիքսի կազմում առկա ֆոսֆոլիպիդների և չեզոք լիպիդների կազմը և պարունակությունը հակաուռուցքային դեղամիջոց ցիսպլատինի *in vivo* (24 ժամ) ազդեցությունից հետո: Հետազոտությունների արդյունքները վկայում են հակաուռուցքային դեղամիջոց ցիսպլատինի ազդեցության նկատմամբ տարբեր հյուսվածքներից ստացված ֆոսֆոլիպիդների և չեզոք լիպիդների տարբերակված զգայունության մասին:

Վերջին տարիներին իրականացված կլինիկական հետազոտությունները վկայում են, որ հակաուռուցքային դեղամիջոց ցիսպլատինի (ցիս-դիամինոդիքլորպլատին) էֆեկտիվությունը կտրուկ աճում է, երբ նրան զուգահեռ կիրառվում են ՊԱՌՊ 1 (պոլի(ԱԿՖ-ռիբոզ)պոլիմերազ-1) ֆերմենտի արգելակիչներ: Կուտակված տվյալներից պարզվել է, որ ՊԱՌՊ 1-ի արգելակիչների արդյունավետությունը մեծապես կախված է հիվանդների սեռից՝ տարբերվելով բուժիչ ազդեցության դրսևորման մեջ: Դեղամիջոցների ազդեցության սեռական դիմորֆիզմը կարող է բախտորոշ դեր խաղալ ցիտոտոքսիկ դեղամիջոցների կիրառման ժամանակ, ինչը մեծ գործնական նշանակություն կարող է ունենալ հատկապես ուռուցքաբուժության բնագավառում: Հաշվետու ժամանակահատվածում ուսումնասիրվել են ՊԱՌՊ 1-ի ելակետային ակտիվությունը, ցիսպլատինի ներորովայնային ներարկման ազդեցությունը ՊԱՌՊ 1-ի ակտիվության վրա, ֆերմենտի ակտիվության մրցակցային և ալոստերիկ արգելակիչներով արգելակման բնույթը, իրագործվել է ՊԱՌՊ 1-ի նույնականացում Ուեսթերն բլոթինգի և քանակական որոշում ELISA մեթոդներով տարբեր սեռի կենդանիների լյարդի բջիջների և ուրցագեղձի կորիզներում: Ցույց է տրվել, որ ՊԱՌՊ 1 արգելակման սեռական դիմորֆիզմի դրսևորումները կախված են կիրառվող արգելակչի բնույթից:

Հաշվետու ուստարում ամբիոնում պաշտպանվել է երկու ատենախոսություն.

1. Հովհաննիսյան Գ. Գ., «Փոքր հագեցումների դեպքում միաշղթա և երկշղթա ԴՆԹ-ի հետ լիգանդների կապման ուսումնասիրությունը», Գ.00.02 – Կենսաֆիզիկա, ղեկավար՝ կենս. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Պ. Հ. Վարդևանյան,

2. Հովհաննիսյան Ա. Գ., «Առնետի լյարդի և ուրցագեղձի բջիջների կորիզային կառուցվածքներում լիպիդների բաղադրության փոփոխությունները ցիսպլատինի in vivo ազդեցության ժամանակ», Գ.00.04 – Կենսաքիմիա, ղեկավար՝ ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, կենս. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Է. Ս. Գևորգյան:

3. Հրատարակություններ

Դասագիրք	Մենագրություն	Ուսումնական ձեռնարկ	Ուսումնամեթոդական ձեռնարկ	Հոդված	Ձեկուցման թեզիս
-	-	-	6	26	16

Գիտական և ուսումնամեթոդական հրատարակությունների ցանկ

Ուսումնամեթոդական ձեռնարկ

1. *Ա. Պ. Անտոնյան, Գ. Գ. Արծրունի, Վ. Գ. Գյուլազյան, Կ. Վ. Գրիգորյան, Ռ. Հ. Գրիգորյան, Է. Ս. Գևորգյան, Ֆ. Դ. Դանիելյան, Ա. Հ. Եսայան, Տ. Վ. Թանգամյան, Ա. Հ. Թոչունյան, Գ. Ի. Միրզոյան, Ա. Վ. Ներկարարյան, Գ. Գ. Սևոյան, Պ. Հ. Վարդևանյան, Գ. Ա. Փարսադանյան,* Կենսաբանություն: 2015 թ. պետական ավարտական և միասնական քննությունների առաջադրանքների շտեմարան, մաս 1, «Աստղիկ» հրատ., Երևան, 2014, 320 էջ:
2. *Ա. Պ. Անտոնյան, Գ. Գ. Արծրունի, Վ. Գ. Գյուլազյան, Կ. Վ. Գրիգորյան, Ռ. Հ. Գրիգորյան, Է. Ս. Գևորգյան, Ֆ. Դ. Դանիելյան, Ա. Հ. Եսայան, Տ. Վ. Թանգամյան, Ա. Հ. Թոչունյան, Գ. Ի. Միրզոյան, Ա. Վ. Ներկարարյան, Գ. Գ. Սևոյան, Պ. Հ. Վարդևանյան, Գ. Ա. Փարսադանյան,* Կենսաբանություն: 2015 թ. պետական ավարտական և միասնական քննությունների առաջադրանքների շտեմարան, մաս 2, «Աստղիկ» հրատ., Երևան, 2014, 272 էջ:
3. *Ա. Պ. Անտոնյան, Գ. Գ. Արծրունի, Վ. Գ. Գյուլազյան, Կ. Վ. Գրիգորյան, Ռ. Հ. Գրիգորյան, Է. Ս. Գևորգյան, Ֆ. Դ. Դանիելյան, Ա. Հ. Եսայան, Տ. Վ. Թանգամյան, Ա. Հ. Թոչունյան, Գ. Ի. Միրզոյան, Ա. Վ. Ներկարարյան, Գ. Գ. Սևոյան, Պ. Հ. Վարդևանյան, Գ. Ա. Փարսադանյան,* Կենսաբանություն: 2015 թ. պետական ավարտական և միասնական քննությունների առաջադրանքների շտեմարան, մաս 3, «Աստղիկ» հրատ., Երևան, 2014, 340 էջ:
4. *Ա. Պ. Անտոնյան, Ա. Վ. Ներկարարյան, Կ. Վ. Գրիգորյան, Ռ. Հ. Գրիգորյան, Ա. Ֆ. Կարապետյան, Գ. Ա. Փարսադանյան, Պ. Հ. Վարդևանյան,* Կենսաբանություն: 2015 թ. պետական ավարտական և միասնական քննությունների առաջադրանքների շտեմարան, մաս 4, «Աստղիկ» հրատ., Երևան, 2014, 348 էջ:
5. *Պ. Հ. Վարդևանյան, Ա. Պ. Անտոնյան, Մ. Ա. Փարսադանյան,* Մոլեկուլային կենսաֆիզիկայի լաբորատոր աշխատանքների ուսումնամեթոդական ձեռնարկ, մաս 2, ԵՊՀ հրատ., Երևան, 2014, 64 էջ:
6. *Г. Р. Вардапетян, А. А. Оганесян, С. Г. Тирацуян,* Биохимические методы в биологии и медицине. препаративные методы исследования белков, Уч.-мет. пособие для студентов мед.-биол. и зоовет. ф-тов, Изд. РАУ, Ереван, 2014, с. 175.

Հոդված

1. *Ա. Լ. Ասատրյան,* Պոլի(ԱԿՖ-ռիբոզ)պոլիմերազ 1-ի ակտիվության վրա տարաբնույթ արգելակիչների ազդեցության առանձնահատկությունները տարբեր սեռի առնետների թիմոցիտների կորիզներում, «Հայաստանի կենսաբան. հանդես», h. 67, N 1, 2015, էջ 86-90:
2. *Ժ. Մուխաելյան, Գ. Պողոսյան,* Կադմիում իոնների ազդեցությունը ցորենի (Triticum aestivum L.) էթիոլացված ծիլերում լիպիդների գերօքսիդային օքսիդացման վրա, ԵՊՀ ՈՒԳԸ գիտական հոդվածների ժողովածու, h. 1.1, N 4, 2015, էջ 43-48:
3. *П. О. Вардеванян, Р. С. Казарян, М. А. Шагинян, М. В. Минасянц, С. Н. Акопян,* Взаимодействие доксорубицина с двуспиральными нуклеиновыми кислотами, облученными нетепловыми миллиметровыми волнами, “Биомедицинская радиоэлектроника”, N 11, 2014, с. 51-54.
4. *П. О. Вардеванян, В. Л. Элбакян, М. А. Шагинян, М. В. Минасянц, М. А. Парсаданян, Н. С. Саакян,* Определение изобестической точки спектров поглощения комплексов ДНК с бромистым этидием, “Журнал прикладной спектроскопии”, т. 81, N 6, 2014, с. 970-973.
5. *П. О. Вардеванян, А. В. Неркарарян, М. С. Микаелян, М. А. Шагинян,* Влияние электромагнитного излучения крайне высокой частоты на гемолиз эритроцитов крови крыс, “Биомедицинская радиоэлектроника”, N 3, 2015, с. 56-60.

6. *A. P. Antonyan, L. A. Hambardzumyan, P. O. Vardeyanyan,* Analysis of fluorescence spectra of complexes of methylene blue with DNA, "Biolog. Journal of Armenia", v. 67, N 1, 2015, p. 35-39.
7. *A. P. Antonyan, M. V. Minasyants, P. O. Vardevanyan,* Study of poly(dA) structure in the acidic media, "Biolog. Journal of Armenia", v. 67, N 2, 2015, p. 29-35.
8. *I. G. Artsruni, A. L. Asatryan, K. S. Matinyan, E. S. Gevorgyan,* Temperature and pH effect of lipase production and asctivity on thermophilic bacilii isolated from Armenian geothermal springs, "Biol. Journal of Armenia", v. 67, N 2, 2015, p. 46-50.
9. *G. Gasparyan, S. Tiratsuyan, Sh. Kazaryan, H. Vardapetyan,* Effect of Laurus Nobilis extract on the functioning of liver against CCl4 induced toxicity, "Journal of Experimental Biology and Agricultural Sciences", v. 3, N 2, 2015, p. 174-183.
10. *L. A. Hambardzumyan,* Effect of DNA GC-content on the interaction with methylene blue, "Proceedings of YSU", N 1, 2015, p. 45-49.
11. *L. Hakobyan, L. Gabrielyan, A. Trchounian,* Redox regulation of photo-fermentative hydrogen production by *Rhodobacter sphaeroides,* "The FEBS J.", v. 281, Suppl. 1, 2014, p. 207.
12. *M. V. Minasyants,* Investigation of the differential absorption of DNA complexes with ligands, "Proceedings of the Yerevan State University, Chemistry and Biology", N 1, 2014, p. 51-57.
13. *M. S. Mikaelyan,* Influence of EMI EHF on plasma surface tension of rat blood, "Proceedings of YSU", N 3, 2014, p. 24-28.
14. *Z. H. Mukhaelyan, A. P. Antonyan, M. V. Minasyants,* Investigation of acidic denaturation of ethidium bromide complexes with DNA, "Proceedings of the Yerevan State University, Chemistry and Biology", N 2, 2014, p. 48-53.
15. *M. A. Parsadanyan, M. A. Shahinyan, M. A. Darbinyan, Z. H. Mukhaelyan,* Effect of millimeter electromagnetic radiation on peroxidase total activity of wheat seedlings treated by gibberellins, "Plant Biotechnology and Molecular Biology", v. 16, N 1-2, 2015, p. 48-51.
16. *G. H. Poghosyan, Z. H. Mukhaelyan, P. H. Vardevanyan,* Influence of Cadmium Ions on Growth and Antioxidant System Activity of Wheat (*Triticum Aestivum* L.) Seedlings, "International Journal of Scientific Research in Environmental Sciences", v. 2, N 10, 2014, p. 371-378.
17. *H. Sargsyan, L. Gabrielyan, L. Hakobyan, A. Trchounian,* Light-dark duration alternation effects on *Rhodobacter sphaeroides* growth, membrane properties and bio-hydrogen production in batch culture, "Int. J. Hydrogen Energy", v. 40, 2015, p. 4084-4091.
18. *H. Sargsyan, L. Gabrielyan, A. Trchounian,* Dithiothreitol, redox reagent, is affecting proton-translocating ATPase activity of *Rhodobacter sphaeroides,* "Biochim. Biophys. Acta - Bioenergetics", v. 1837, 2014, p. e90.
19. *K. Trchounian, H. Sargsyan, A. Trchounian,* Hydrogen production by *Escherichia coli* depends on glucose concentration and its combination with glycerol at different pHs, "Int. J. Hydrogen Energy", v. 39, 2014, p. 6419-6423.
20. *K. Trchounian, A. Trchounian,* Hydrogen producing activity by *Escherichia coli* hydrogenase 4 *(hyf)* depends on glucose concentration, "Int. J. Hydrogen Energy", v. 39, 2014, p. 16914-16918.
21. *K. Trchounian, A. Trchounian,* Glucose concentration is distinctive for *Escherichia coli* hydrogenase 4 (hyf) activity, "The FEBS J.", v. 281, Suppl. 1, 2014, p. 567-568.
22. *P. O. Vardevanyan, V. L. Elbakyan, M. A. Shahinyan, M. V. Minasyants, M. A. Parsadanyan, N. S. Sahakyan,* Determination of the isosbestic point in the absorption spectra of DNA-ethidium bromide complexes, "J. of Applied Spectroscopy", v. 81, N 6, 2015, p. 1060-1063.
23. *P. O. Vardevanyan, M. A. Parsadanyan, M. V. Minasyants,* Ethidium Bromide Interaction with Poly(G), "Biophysical Reviews and Letters", v. 9, N 3, 2014, p. 239-247.

24. *P. O. Vardevanyan, M. V. Minasyants, M. A. Parsadanyan, A. P. Antonyan,* Multimodal interaction of Hoechst 33258 minor groove binder and ethidium bromide intercalator with DNA, "Biolog. Journal of Armenia", v. 66, N 1, 2014, p. 59-65.
25. *P. O. Vardevanyan, V. B. Arakelyan, M. A. Parsadanyan, A. P. Antonyan, G. G. Hovhannisyan, M. A. Shahinyan,* Analysis of experimental binding curves of EtBr with single- and double-stranded DNA at small fillings, "Modern Phys. Lett. B", v. 28, N 22, 2014, p. 1450178-1-11.
26. *H. Vardapetyan, A. Hovhannisyan, S. Tiratsuyan,* Antioxidant and antibacterial activities of selected armenian medicinal plants, "Journal of Experimental Biology and Agricultural Sciences", v. 2, N 3, 2014, p. 300-307.

Զեկուցման թեզիս

1. *А. Л. Асатрян, И. Г. Арцруни, К. С. Матинян, Э. С. Геворкян,* Действие бензамида на активность поли(АДФ-рибозо)полимеразы 1 в ядрах тимоцитов крыс после введения цисплатина, 19-я Международная Пущинская Школа-Конференция Молодых Ученых "Биология - Наука XXI Века", 2015, с. 127-128.
2. *A. P. Antonyan, L. A. Hambardzumyan, M. A. Parsadanyan, P. O. Vardevanyan,* The binding mechanisms of methylene blue with DNA, "J. of Biomol. Struct. & Dyn., Albany 2015", The 19th Convers., June 9-13, 2015.
3. *V. B. Arakelyan, Z. E. Navoyan, G. G. Hovhannisyan, P. O. Vardevanyan,* The consistent description of diffusion and kinetic states of the adsorption of ligands on DNA immobilized molecules, "J. of Biomol. Struct. & Dyn., Albany 2015", The 19th Convers., June 9-13, 2015.
4. *L. Gabrielyan, H. Sargsyan, A. Trchounian,* Inhibitor studies on hydrogen photoproduction by *Rhodobacter sphaeroides,* "6th Int. conference on Hydrogen Production", Proc. UOIT–Oshava, Ontarion, Canada, 2015, p. 452-458.
5. *N. R. Hakobyan, A. G. Hovhannisyn, Z. V. Yavroyan, E. S. Gevorgyan,* Phosphatidylcholin/Sphingomyelin Metabolizm Crosstalk Inside the Nucleus Chromatin after the Cisplatin in vivo Action, "FEBS Journal", v. 281, E.Book, Paris, 2014, p. 494.
6. *L. Hakobyan, L. Gabrielyan, A. Trchounian,* Effects of redox reagents on accessible SH-groups number and membrane-associated F_0F_1-ATPase activity of *Rhodobacter sphaeroides,* Int. Scientific Workshop "Trends in Microbiology and Microbial Biotechnology", Yerevan, October 5-8, 2014, p. 86.
7. *L. A. Minasbekyan, P. O. Vardevanyan,* The impact of mm-waves on the level of DNA methylation on the plant model, "The FEBS J.", v. 282, Suppl. 1, 2015, p. 58-59.
8. *A. Pepoyan, M. Balayan, S. Marutyan, L. Minasbekyan, K. Hovnanyan, V. Tsaturyan,* DNA fluorescence and methylation levels of gut commensal Escherichia coli from Crohn`s disase petients, "Biophysical Journal", v. 108, N 2, 2015, p. 314 a.
9. *A. Poladyan, V. Abrahamyan, A. Vassilian, A. Trchounian,* Hydrogen production during glucose fermentation by *Escherichia coli*: Effects of oxidative andreductive routes on the strain lacked of hydrogen oxidizing hydrogenases 1 and 2, "Proc. 13th Int. Conf. Clean Energy" (eds. I. Dincer, C.O. Colpan, O.Kizilkan et al.), Istanbul, 2014, p. 1087-1092.
10. *H. Sargsyan, L. Gabrielyan, A. Trchounian,* Effect of light and dark shifts on bio-hydrogen production by *Rhodobacter sphaeroides,* Int. Scientific Workshop "Trends in Microbiology and Microbial Biotechnology", Yerevan, October 5-8, 2014, p. 26.
11. *K. Trchounian, A. Vardanyan, A. Poladyan, A. Trchounian, Escherichia coli* growth and hydrogen production upon glycerol fermentation at slightly acidic pH: effects of formate and some heavy metal ions, "6th Int. Conf. on Hydrogen Production", Proc. Oshawa, Canada, 2015, p. 306-313.
12. *K. Trchounian, A. Trchounian,* Interrelationship between H_2 cycling and proton motive force generation in *Escherichia coli* during glycerol fermentation, "18th Int. Biophys. Congress", Abstracts, Brisbane, Australia, 2014, p. 5-6.

13. *K. Trchounian, V. Abrahamyan, A. Trchounian,* Role of formate transport coding *focA* and *focB* genes in H_2 production activity by *Escherichia coli* during glycerol fermentation at slightly alkaline pH, "ASM 114th General Meeting", Abstracts, Boston, USA, 2014, N. 748.
14. *K. Trchounian, A. Trchounian,* Hydrogen producing *Escherichia coli* [Ni-Fe]-hydrogenase activity during glycerol and glucose fermentation, Int. Sci. Workshop "Trends in Microbiology and Microbial Biotechnology", Abstracts, YSU Press, Yerevan, 2014, p. 24.
15. *P. O. Vardevanyan, M. A. Shahinyan, A. P. Antonyan, M. A. Parsadanyan, M. V. Minasyants,* Spectral Characteristics of DNA-EtBr and DNA-MB Complexes, "J. of Biomol. Struct. & Dyn., Albany 2015", The 19th Convers., June 9-13, 2015.
16. *H. R. Vardapetyan, S. G. Tiratsuyan, A. A. Hovhannisyan,* Phytochemical composition and antioxidant activity of *Laurus nobilis* L. leaves extracts, Материалы on-line конференции, Ставрополь, 2014.

Ֆակուլտետում գործող լաբորատորիաների թիվը՝ 5

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԵՆՍԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱ

Գիտական ղեկավար՝ *Օսիպյան Լիա Լևոնի, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, կենս. գիտ. դոկտոր, պրոֆեսոր, գլխավոր գիտաշխատող*

Լաբորատորիայի աշխատակիցների կազմը

1. Գրիգորյան Կառլեն Վաղարշակի, թեմայի ղեկավար, կենս. գիտ. դոկտոր, առաջատար գիտաշխատող
2. Հարությունյան Ռուբեն Միքայելի, թեմայի ղեկավար, կենս. գիտ. դոկտոր, առաջատար գիտաշխատող
3. Դանիելյան Ֆելիքս Դանիելի, թեմայի ղեկավար, կենս. գիտ. դոկտոր, գլխավոր գիտաշխատող
4. Թռչունյան Արմեն Համբարձումի, թեմայի ղեկավար, կենս. գիտ. դոկտոր, գլխավոր գիտաշխատող
5. Մինասյան Սիրանուշ Մինասի, թեմայի ղեկավար, կենս. գիտ. դոկտոր, գլխավոր գիտաշխատող
6. Նանագյուլյան Սիրանուշ Գերասիմի, թեմայի ղեկավար, կենս. գիտ. դոկտոր, գլխավոր գիտաշխատող
7. Առաքելյան Մարինե Սեմյոնի, կենս. գիտ. դոկտոր, ավագ գիտաշխատող
8. Եղիազարյան Էդուարդ Մուրազի, կենս. գիտ. դոկտոր, ավագ գիտաշխատող
9. Հովհաննիսյան Գալինա Գեորգիի, կենս. գիտ. դոկտոր, ավագ գիտաշխատող
10. Համբարյան Լուսինե Ռաֆիկի, կենս. գիտ. դոկտոր, ավագ գիտաշխատող
11. Աղաջանյան Էվելինա Արտաշի, կենս. գիտ. թեկնածու, ավագ գիտաշխատող
12. Գրիգորյան Կարինե Մարտինի, կենս. գիտ. թեկնածու, ավագ գիտաշխատող

13. Զալինյան Գայանե Գևորգի, կենս. գիտ. թեկնածու, ավագ գիտաշխատող
14. Էլոյան Ինեսսա Մակեդոնի, կենս. գիտ. թեկնածու, ավագ գիտաշխատող
15. Կարապետյան Աննա Ֆելիքսի, կենս. գիտ. թեկնածու, ավագ գիտաշխատող
16. Հովհաննիսյան Նելլի Ալեքսանդրի, կենս. գիտ. թեկնածու, ավագ գիտաշխատող
17. Պոպով Գեորգի Յուրիի, կենս. գիտ. թեկնածու, ավագ գիտաշխատող
18. Սահակյան Նաիրա Ժորայի, կենս. գիտ. թեկնածու, ավագ գիտաշխատող
19. Սարգսյան Սուսաննա Հրաչի, կենս. գիտ. դոկտոր, գիտաշխատող
20. Ադամյան Նոնա Յուրիի, կենս. գիտ. թեկնածու, գիտաշխատող
21. Աթոյանց Անահիտ Լևոնի, կենս. գիտ. թեկնածու, գիտաշխատող
22. Աղայան Սարգիս Աղասու, կենս. գիտ. թեկնածու, գիտաշխատող
23. Ավալյան Ռիմա Էդուարդի, կենս. գիտ. թեկնածու, գիտաշխատող
24. Բաբայան Նելլի Սամվելի, կենս. գիտ. թեկնածու, գիտաշխատող
25. Գևորգյան Էմմա Սերգեյի, կենս. գիտ. թեկնածու, գիտաշխատող
26. Կարապետյան Մարիետտա Արմենակի, կենս. գիտ. թեկնածու, գիտաշխատող
27. Հովհաննիսյան Եվա Խորենի, կենս. գիտ. թեկնածու, գիտաշխատող
28. Ղազարյան Աստղիկ Սամվելի, կենս. գիտ. թեկնածու, գիտաշխատող
29. Ղազարյան Կարեն Արամայիսի, կենս. գիտ. թեկնածու, գիտաշխատող
30. Ղուկասյան Լիլիթ Էդիկի, կենս. գիտ. թեկնածու, գիտաշխատող
31. Մարգարյան Քրիստինե Սերյոժայի, կենս. գիտ. թեկնածու, գիտաշխատող
32. Նեբիշ Աննա Անդրեյի, կենս. գիտ. թեկնածու, գիտաշխատող
33. Շահազիզյան Իրեն Վաչագանի, կենս. գիտ. թեկնածու, գիտաշխատող
34. Քսաջիկյան Նարինե Ներսեսի, կենս. գիտ. թեկնածու, գիտաշխատող
35. Գրիգորյան Կարեն Կառլենի, գիտաշխատող
36. Մարգարյան Արմինե Արմենի, կենս. գիտ. թեկնածու, կրտսեր գիտաշխատող
37. Սողոյան Եվա Յուրիի, կենս. գիտ. թեկնածու, կրտսեր գիտաշխատող
38. Սողոմոնյան Դիանա Ռազմիկի, կենս. գիտ. թեկնածու, կրտսեր գիտաշխատող
39. Ադամյան Ռուզաննա Գեորգիի, կրտսեր գիտաշխատող
40. Հարությունյան Թեհմինե Կառլենի, կրտսեր գիտաշխատող
41. Մարգարյան Լուսինե Վահանի, կրտսեր գիտաշխատող
42. Պետրոսյան Աիդա Միքայելի, կրտսեր գիտաշխատող
43. Սարգսյան Հարություն Հրաչիկի, կրտսեր գիտաշխատող
44. Զաքարյան Հասմիկ Ներսեսի, կենս. գիտ. թեկնածու, ավագ լաբորանտ
45. Առաքելյան Անուշ Հայկի, ավագ լաբորանտ
46. Ծովյան Էլիզա Արմենի, ավագ լաբորանտ
47. Սիմոնյան Աննա Էդիկի, ավագ լաբորանտ
48. Ստեփանյան Անուշ Ստեփանի, ավագ լաբորանտ

Ըստ ընդհանուր ուղղությունների՝ լաբորատորիայում կատարված գիտական աշխատանքների ամփոփում

Գիտական թեմաներ

Թեմայի անվանումը	*Ղեկավար*
1. Հայաստանի սնկերի կենսաբազմազանության տեսակային, տարածական և ֆունկցիոնալ կառուցվածքը (պետական ֆինանսավորում):	Նանագյուլյան Ս. Գ.
2. Կազմավորման տարբեր մակարդակներ ունեցող համակարգերի կենսաբազմազանություն (պետական ֆինանսավորում):	Հարությունյան Ռ. Մ.
3. Ընդերամարմնական համակարգերի գործառույթների կարգավորման մեխանիզմները էկոլոգիական և տեխնածին գործոնների ազդեցության պայմաններում (պետական ֆինանսավորում):	Մինասյան Ս. Մ.
4. Ողնաշարավոր կենդանիների էվոլյուցիոն պրոցեսներն ապահովող մի շարք օրինաչափությունների ուսումնասիրությունը անհատական զարգացման և պոպուլյացիոն մակարդակով (պետական ֆինանսավորում):	Դանիելյան Ֆ. Դ.
5. Արփի լճի և նրա ջրահավաք ավազանի էկոլոգիական գնահատականը և տարածքի տնտեսական զարգացման հեռանկարները (պետական ֆինանսավորում):	Գրիգորյան Կ. Վ.
6. Դեղաբույսերի մեկուսացված կուլտուրաների և Հայաստանի տարբեր հողերից մեկուսացված էքստրեմոֆիլ մանրէների կենսատեխնոլոգիական ներուժի գնահատումը (պետական ֆինանսավորում):	Թոչունյան Ա. Հ.

Թեմա 1. «Հայաստանի սնկերի կենսաբազմազանության տեսակային, տարածական և ֆունկցիոնալ կառուցվածքը» թեմայի շրջանակում հաշվետու ժամանակահատվածում իրականացվել են բույսերի և դրանց վրա հայտնաբերված միկրոսնկերի հետազոտում Վայոց ձորի որոշ գյուղերի և Ջերմուկ քաղաքի տարածքներից, ինչպես նաև Նորավանքի և Գնդեվանքի շրջակայքերից: Բացահայտվել են առավել վտանգավոր սնկային հիվանդությունների հարուցիչները և դրանց նկատմամբ կայուն տեր-բույսերը: Կազմվել է ախտածին սնկերի տվյալների բազա:

Շարունակվել են Հայաստանի որոշ մարզերի և հատուկ պահպանվող տարածքների, մասնավորապես Շիկահող պետական արգելոցի և «Սոսու պուրակ» պետական արգելավայրի սնկաբանական առումով թերի ուսումնասիրված տարածքների մակրոմիցետների կենսաբազ-մազանության ուսումնասիրությունները և մոնիթորինգը: Բացահայտվել է 124 տեսակի սունկ, որոնք պատկանում են ասկոմիցետներին /7 տեսակ/ և բազիդիոմիցետներին /117 տեսակ/: Ուսումնասիրված սնկատեսակներից 6-ը ընդգրկված են «ՀՀ Կարմիր գրքի /բույսեր և սնկեր/» (2010) կազմի մեջ: Իրականացվում է տվյալների վիճակագրական վերլուծություն:

Շարունակվել են տարբեր շինություններում, այդ թվում՝ ԵՊՀ-ի գրադարանի գրապահոցներում, բնակելի տարածքներում, դպրոցներում, մանկապարտեզներում, թանգարաններում օդի աղտոտվածության ուսումնասիրությունները, ինչպես նաև Հայաստանի տարբեր քաղաքների և գյուղերի գրադարաններում սնկերով վարակված գրքերի միկոդեստրուկտորների տեսակային կազմի հայտնաբերման աշխատանքները: Անջատվել և նույնականացվել են մոտ 100 տեսակի մանրադիտակային

սնկեր, որոնցից առավել հաճախ հանդիպում էին *Penicillium*, *Aspergillus* և *Cladosporium* ցեղերի ներկայացուցիչները:

Կատարվել են Հայաստանի կերային բույսերի ախտածին միկոբիոտայի վերլուծություն և տեսակային կազմի բացահայտում: Իրականացվել է սնկերի զարգացման սեզոնային դինամիկայի որոշում Հայաստանի տարբեր բնակլիմայական գոտիներում, բացահայտվել են առավել վտանգավոր սնկային հիվանդությունների հարուցիչները: Իրականացվել են *Erodium (Geraniaceae)* ցեղի ներկայացուցիչների աշխարհագրական և մորֆոլոգիական հետազոտություններ, ճշտվել է տեսակային կազմը:

Մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի խմբի աշխատակիցների հետ շարունակվել է որոշ սնկային ծագում ունեցող /ենդոմիկորիզային սնկերի/ կենսապատրաստուկների փորձարկումը որոշ բույսերի վրա: Կատարվել է սերմերի նախացանքային մշակում միկորիզային Միցեֆիտ պատրաստուկով: Արձանագրվել է դրանց խթանիչ ազդեցությունը բույսերի սերմերի ծլման, զարգացման և աճի վրա:

Շարունակվել են աշխատանքները հիվանդների մոտ օնիխոմիկոզի և վուլվովագինալ կանդիդոզի հարուցիչների և դրանց ուղեկցող օպորտունիստական միկոբիոտայի բացահայտման ուղղությամբ, ինչպես նաև օտորինոլարինգոլոգիայի բաժանմունքի միկոտիկ հիվանդությունների հետազոտման աշխատանքները, հետազոտվել է որոշ միկրոմիցետների զգայունությունը հակասնկային պատրաստուկների նկատմամբ:

Կատարվել են պոլիմերային նյութերով աղտոտված հողերի սնկաբանական ուսումնասիրություններ, շարունակվել են աշխատանքները որոշ պոլիմերային նյութերի սնկաղիմացկունության ուղղությամբ:

Շարունակվել են արհեստականորեն աճեցվող սնկատեսակների ֆիզիոլոգիական ակտիվության օրինաչափությունների, ինչպես նաև բժշկական նշանակություն ունեցող սնկերի առանձնահատկությունների, դրանց դեղաբանական հատկությունների ուսումնասիրման աշխատանքները: Ուսումնասիրվել են հակաբորբոքային և իմունոմոդուլյատոր ակտիվությունները երեք տեսակի բնափայտ քայքայող սնկերի */Pleurotus ostreatus, Ganoderma lucidum, Lentinellus edodes/* կուլտուրաների լուծամզուկներում, ու հայտնաբերվել են հիմնական կենսաբանորեն ակտիվ նյութերը, որոնք պատասխանատու են այդ ակտիվության համար:

Ուսումնասիրվել են Արարատյան հարթավայրի օիդիում և միլդյու հիվանդություններով վարակված այգիներից բերված խաղողի Ռկածիթելի, Կանգուն և Մեղրաբույր սորտերից պատրաստված կոնյակի գինենյութերը: Իրականացվել են փորձանմուշների օրգանոլեպտիկ գնահատում և մանրէաբանական հետազոտում: Պարզվել է, որ կոնյակի բարձրորակ արտադրանքի ստացման համար անհրաժեշտ է հսկել վերամշակվող հումքի որակը և հնարավորության սահմաններում բացառել հիվանդություններով վարակված խաղողի առկայությունը:

Հաշվետու տարվա ընթացքում շարունակվել է Հայաստանում սնկաբանական ուսումնասիրությունների վերաբերյալ տեղեկությունների հավաքը՝ տպագրված աշխատանքների մատենագիտական ցանկի կազմման համար:

Թեմա 2. «Կազմավորման տարբեր մակարդակներ ունեցող համակարգերի կենսաբազմազանություն» խմբի շրջանակում կատարվել են.

Section 1.01 Խաղողի հայկական 20 սորտերի ֆենոտիպային բնութագրման նպատակով ուսումնասիրվել է աբորիգեն սորտերի, ներ- և միջտեսակային հիբրիդների գումարային ֆենոլների քանակական կազմը: Բացահայտված է, որ խաղողի գինու սորտերը, ի տարբերություն սեղանի սորտերի, ունեն պոլիֆենոլների հավաստի բարձր պարունակություն: Այս ցուցանիշը սորտային հատկանիշ է և պայմանավորված է համապատասխան գեների ակտիվությամբ, կլիմայական և մշակման ագրոտեխնիկական պայմաններից:

Section 1.02 Տրադեսկանցիայի 02 կլոնի կիրառմամբ ուսումնասիրվել է Սյունիքի մարզի տարբեր տարածքներից 10 հողային նմուշների գենաթունությունը: Կատարվել են նմուշառումներ ք. Կապանի տեխնոգեն շրջակայքից և պայմանական ֆոնային շրջանից՝ Շիկահողի արգելավայրի շրջակայքից: Ստացված արդյունքները ցույց են տալիս, որ Կապանի տեխնոգեն շրջակայքից վերցված հողում աճեցված բույսերում սոմատիկ մուտացիաների և տետրադներում միկրոկորիզների հաճախականությունը հավաստի բարձր է՝ համեմատած ֆոնային ստուգիչի հետ: Բուսական թեստ-համակարգում բացահայտված գենետիկական խաթարումները վկայում են Կապանից նմուշառված հողում գենաթունային ակտիվությամբ միացությունների առկայության մասին:

Section 1.03 Սյունիքի մարզի Շիկահողի արգելոցի և Քաջարան արդյունաբերական քաղաքի հողի գենաթունայնության գնահատման համար որպես կենսացուցիչներ օգտագործվել են Darevskia raddei տեսակի երկսեռ մողեսները: Միկրոկորիզային թեստը կիրառվել է գենետիկական խաթարումների գնահատման համար: Ընդամենը ուսումնասիրվել է 26 երկսեռ հասուն մողես, այդ թվում՝ 15 մողես (9 արու և 6 էգ) Շիկահողի արգելոցից, և 11 մողես (6 արու և 5 էգ) Քաջարան քաղաքից: Յուրաքանչյուր մողեսի 1000 էրիթրոցիտներում որոշվել է միկրոկորիզների հաճախականությունը: Միկրոկորիզների մակարդակը Շիկահողի մողեսների մոտ միջինում կազմել է 0.2°0.11, իսկ Քաջարանի մողեսների մոտ՝ 0.64°0.28: Այսպիսով, ուսումնասիրված երկու դիտակետերից բռնված մողեսների մոտ միկրոկորիզների մակարդակի միջև հավաստի տարբերություն չի դիտվել:

Section 1.04 Հետազոտվել է միկրոկորիզների (ՄԿ) և այլ կորիզային խախտումների մակարդակը Լեռնային Ղարաբաղի Հանրապետության երեք ծննդկան կանանց բերանի խոռոչի բջիջներում: Կատարված ուսումնասիրությունները կրում են շարունակական բնույթ և ուղղված են շրջակա միջավայրի աղտոտվածության ու ծննդկանների մոտ գենետիկական խաթարումների միջև հավանական կապի բացահայտմանը:

Section 1.05 Պատմամշակութային ժառանգության գիտահետազոտական կենտրոնի ՊՈԱԿ-ի հետ կատարվել է ԼՂՀ-ի Քաշաթաղ շրջանի Կերեն գյուղի մոտակայքի դամբարանադաշտի հողերի շերտերում բուսական փոշեհատիկների պալինոլոգիական ուսումնասիրություն: Բացահայտվել է, որ բոլոր նմուշները շատ հարուստ են ոչ միայն փոշեհատիկներով և սպորներով, այլև ոչ պալինոլոգիական բնույթ ունեցող նմուշներով, որոնցից են հացազգիների ֆիտոլիտները և միջատների մասնիկները:

Թեմա 3. «Ընդերամարմնական համակարգերի գործառույթների կարգավորման մեխանիզմները էկոլոգիական և տեխնածին գործոնների ազդեցության պայմաններում» գիտական խմբի աշխատակիցների կողմից 2014-2015 ուստարում կատարած հետազոտությունների առաջին ենթաթեմայում ուսումնասիրվել է երկարավուն ուղեղի նույնա- և հակակողմյան միայնակ խրձի կորիզի նեյրոնների ազդակային ակտիվությունը երեք փորձախմբով՝ նորմայում, դելաբիրինթացիայի ենթարկված առնետների մոտ և վիբրացիայի հետ համակցված ազդեցության պայմաններում: Նեյրոնային ակտիվության գրանցումը և ազդակային ակտիվության վերլուծությունը իրականացվել են հատուկ մշակված համակարգչային ծրագրով: Հետազոտության արդյունքները վկայում են, որ նորմայում նեյրոնների միջին հաճախականությանը բնորոշ ասիմետրայի համեմատ՝ 10-օրյա տևողությամբ վիբրացիան լաբիրինթէկտոմիայի ենթարկված կենդանիների մոտ ի հայտ է բերել վնասված և չվնասված կողմերի հավասարություն՝ սիմետրիա, որն էլ հավանաբար պայմանավորված է միայնակ ուղու նեյրոնների կորիզներում ի հայտ եկող պլաստիկ վերափոխումներով:

Հետազոտությունների երկրորդ ենթաթեմայում ուսումնասիրվել է հակաօքսիդիչներ կարմիր և սպիտակ երեքնուկների ազդեցությունն օրգանիզմի կենսադաշտի վրա թթվածնաքաղցի պայմաններում: Հետազոտվող բույսերի և առնետների կենսադաշտը գրանցվել է հատուկ սարքի՝ «Բիոսկոպի» միջոցով: Ստացված արդյունքները վկայում են, որ ստուգիչ և փորձնական կենդանիների կենսադաշտերը թթվածնաքաղցի պայմաններում էապես տարբերվում են:

Հետազոտությունների երրորդ ենթաթեմայում ուսումնասիրվել են ուսանողների սրտի գործունեությունը կարգավորող մեխանիզմների, հեմոդինամիկայի և հոգեֆիզիոլոգիական ցուցանիշների

փոփոխությունները ֆիզիկական ծանրաբեռնվածության պայմաններում ու դրանց շտկումը բուսական եթերային յուղերով: Հետազոտության արդյունքները վկայում են, որ ֆիզիկական ծանրաբեռնվածության պայմաններում էապես փոխվում են սրտի ռիթմի, հոգեֆիզիոլոգիական և հեմոդինամիկայի ցուցանիշները: Գրանցված տեղաշարժերը շտկվել են եղևնու և նարդոսի յուղերի հոտերի կիրառմամբ:

Հետազոտությունների առանձին տարբերակում ուսումնասիրվել են Երևանի Ա. Շիրակացու անվան ճեմարանի սաների սրտի ռիթմի տատանողականության սպեկտրային, ստատիստիկական, հիստոգրաֆիական ցուցանիշներն օրական և շաբաթական ծանրաբեռնվածության պայմաններում: Ծանրաբեռնվածության շտկումը կատարվել է երաժշտական թերապիայով, որն արդյունավետ ազդեցություն է թողել ինչպես սրտի տատանողականության կարգավորման կենտրոնական մեխանիզմների, այնպես էլ հեմոդինամիկայի և հոգեֆիզիոլոգիական ցուցանիշների փոփոխությունների վրա:

Հետազոտվել են նաև նախադպրոցական հասակի երեխաները (N 71 մանկապարտեզ), որոնք հաճախ են հիվանդանում գրիպով և անգինայով: Վարակի հավանական բռնկման շրջանում օգտագործվել են «Ակվալոր»-ի ցողաշիթը, որը հանդիսանում է ախտահանիչ և կանխարգելիչ միջոց, ինչպես նաև դեղաբույսերի հիմքի վրա պատրաստված թեյեր: Կատարվել են նաև տարբեր դեղաբույսերից պատրաստված թուրմերով ողողումներ:

Հետազոտված խմբերում որոշվել են հեմոդինամիկայի հիմնական ցուցանիշները: Փորձնական խմբի հետազոտվողների մոտ արյան րոպեական ծավալի բարձր մակարդակը սիրտ-անոթային համակարգի գործունեության լարվածության արտահայտումն է, իսկ նրա նվազումը՝ հաճախակի հիվանդացող երեխաների մոտ արագ ձևավորվող հոգնածության դրսևորում:

Թեմա 4. «Ողնաշարավոր կենդանիների էվոլյուցիոն պրոցեսներն ապահովող մի շարք օրինաչափությունների ուսումնասիրությունը անհատական զարգացման և պոպուլյացիոն մակարդակով»:

1. *Ժայռային մողեսների տեսակառաջացման գործընթացների ուսումնասիրություններ:* Ուսումնասիրություններն ուղղված էին տեսակառաջացման, հիբրիդիզացիայի /խաչասերման/, էկոլոգիական խորշերի զբաղեցման և մի շարք այլ խնդիրների պարզաբանմանը: Գիտահետազոտական աշխատանքները կատարվել են Արագածոտնի մարզի Քուչակ գյուղի շրջակայքում: Աշխատանքների ընթացքում ուսումնասիրվել են *Darevskia* ցեղի երեք տեսակների՝ *D. armeniaca* (միասեռ), *D. unisexualis* (միասեռ), *D. valentini* (երկսեռ) և նրանց հիբրիդների սեզոնային և օրական ակտիվությունը, ինչպես նաև նրանցից յուրաքանչյուրի բիոտոպային նախապատվությունը: Պոպուլյացիաների խտության և կենսապայմանների ուսումնասիրության համար ընտրվել են 1 կմ երկարությամբ 5 տարբեր հատվածներ, որտեղ գրանցվել են հանդիպող մողեսների տեսակները, կատարվել է առանձնյակների հաշվարկ, որոշվել է դրանց տարիքը, գրանցվել են տարածքների աբիոտիկ բնութագրերը՝ խոնավություն, օդի ջերմաստիճանը ստվերում և արևի տակ:

Դիտարկումների համաձայն՝ մողեսների հանդիպման առավել հաճախությունը համընկնում է 50% խոնավության, արևի տակ 32◦C օդի ջերմաստիճանի և ստվերում 24◦C օդի ջերմաստիճանի դեպքում: Լաբորատոր պայմաններում ուսումնասիրվել է երկու կուսածին տեսակների մարմնի օպտիմալ ջերմաստիճանը, իսկ ստացված տվյալները համեմատվել են բնական պայմաններում ստացված տվյալների հետ:

2. *Darevskia rostombekowi տեսակի կուսածին ժայռային մողեսների երկու պոպուլյացիաների համեմատական ուսումնասիրություն:* Ուսումնասիրվել է ՀՀ Կարմիր գրքում և IUCN Կարմիր ցուցակներում ընդգրկված *D. rostombekowi* կուսածին ժայռային մողեսը: Ստուգվել են *D. rostombekowi* տարածման գրական աղբյուրներից հայտնի բոլոր վայրերը: Ընտրվել են երկու պոպուլյացիաներ՝ Ծովակում (բարձրությունը ծ. մ. 1953-1938 մ) և Դիլիջանում (բարձրությունը ծ. մ. 1292 մ), որտեղ կատարվել են օրական ակտիվության, ջերմաստիճանային գերադասության, վարքագծային և այլ ուսումնասիրություններ: Գնահատվել է պոպուլյացիաների խտությունը, վերցվել են գենետիկական

նյութի (արյան և մաշկի փոքրիկ հատվածներ) նմուշներ: Ուսումնասիրությունների արդյունքում պարզվել է, որ *D. nostombekowi* տեսակը անհետացել է իր նախկին արեալի որոշ հատվածներից և հանրապետության տարածքում տեսակի պահպանության համար անհրաժեշտ է մշակել պահպանական միջոցառումների համակարգ:

3. *Թռչունների արյան սպորավոր մակաբույծների տարածվածության և վարակվածության կախվածությունը միջավայրային և կլիմայական տարբեր գործոններից:* Ուսումնասիրվել է թռչունների արյան սպորավոր մակաբույծների տարածվածության և վարակվածության կախվածությունը միջավայրային և կլիմայական տարբեր գործոններից: Պարզվել է, որ բարձրությունից կախված՝ նվազում է *Հեմոպրոտեուս* և *Պլազմոդիում* ցեղերի մակաբույծներով թռչունների վարակվածության մակարդակը: Հակառակ պատկերն է դիտվել ջերմաստիճանի և խոնավության դեպքում՝ հակադարձ համեմատական կախվածություն: Արդյունքները տեղ են գտել մեկ դիպլոմային աշխատանքում, և պատրաստվում է գիտական հոդված՝ միջազգային գրախոսվող պարբերական ուղարկելու համար:

Հայ-գերմանական «Կենդանաբանական վարակները Հարավային Կովկասում» ծրագրի շրջանակում իրականացվում են Էխինակոկոզով և Սալմոնելոզով հիվանդ կենդանիներից նմուշների հավաք և ուսումնասիրություն: Հավաքված նմուշները հետագայում ենթարկվելու են մոլեկուլային գենետիկ ուսումնասիրության, որն իրականացվելու է Գերմանիայի Հոֆենհայնի համալսարանում:

ԵԳԱԾ դրամաշնորհներով կազմակերպվել է Կենդանիների ուսումնասիրության ժամանակակից մեթոդների մասին գիտական դպրոց, որի շրջանակում ԵՊՀ կենդանաբանության ամբիոնի և արտասահմանյան դասախոսների կողմից ներկայացվել են կենդանիների դաշտային և լաբորատոր հետազոտության ժամանակակից մեթոդները, ինչպես նաև գործնական դասի շրջանակում կազմակերպվել են գիտարշավներ Խոսրովի պետական արգելոց և Սուրենավանի ձկնաբուծական ջրամբարներ:

4. *Հրազդան գետի աղտոտվածության ազդեցությունը լճագորտի հեպատոցիտների և էրիթրոցիտների կորիզների փոփոխությունների վրա:* Ուսումնասիրվել են Հրազդան գետի աղտոտվածության տարբեր աստիճաններով բնութագրվող հատվածներում բնակվող լճագորտի հեպատոցիտների և էրիթրոցիտների կորիզների փոփոխությունները: Այդ նպատակից բխող խնդիրների թվում ուսումնասիրվել են գետի ափամերձ 4 տարբեր դիտակետերից՝ Արգել, Քաղսի, Գեղանիստ, Դարբնիկ, բռնված լճագորտերի լյարդում միկրոկորիզավոր հեպատոցիտների և էրիթրոցիտների կորիզների ձևաբանական խաթարումները (միկրոկորիզներ, արտափքված կորիզներ, վակուոլացված կորիզներ):

Կատարված ուսումնասիրությունները ցույց են տվել, որ Հրազդան գետի աղտոտվածության ավելի բարձր ցուցանիշներ ունեցող հատվածներում՝ Գեղանիստ և Դարբնիկ գյուղի շրջակայքում բնակվող լճագորտի արյան մեջ, Արգել և Քաղսի գյուղերի շրջակայքում բնակվող գորտերի համեմատությամբ, կորիզային տարբեր խաթարումներ ունեցող հեպատոցիտների և էրիթրոցիտների քանակությունն ավելի մեծ է: Գետի ջրերի աղտոտվածության ավելի բարձր աստիճանի նկատմամբ պատասխան ռեակցիայի առումով հեպատոցիտների համեմատությամբ ավելի զգայուն են էրիթրոցիտները: Գետի ջրի աղտոտվածության նկատմամբ լճագորտի տարբեր առանձնյակների ռեակցիան արտահայտված է բավական տարբեր աստիճանով, որի հետևանքն է ստացված տվյալների ստանդարտ սխալի բարձր ցուցանիշը:

5. *ՀՀ հարավային շրջանների մանր կաթնասունների բազմազանությունը և տարածվածությունը:* Ուսումնասիրվել են Հայաստանի հարավային շրջանների, ինչպես նաև Լեռնային Ղարաբաղի Շահումյանի շրջանի մանր կաթնասունների բազմազանությունը, տարածվածությունը, պարզաբանվել են որոշ ձեռքաթևավորների կարգաբանական ստատուսը և գենետիկական բազմազանությունը: ԴՆԹ կոմետ մեթոդով հետազոտվել է շրջակա միջավայրի ազդեցությունը օրգանիզմների վրա՝ ԼՂՀ Շահումյանի շրջանի Զուար գյուղի շրջակայքի անտառային մկների օրինակով: Ստացված արդյունքները համեմատվել են Սյունիքի Կապան քաղաքի շրջակայքում հանդիպող անտառային մկների ԴՆԹ-ի հետազոտության

տվյալների հետ: Հետազոտությունների արդյունքները ցույց տվեցին, որ Զուար գյուղի շրջակայքի անտառային մկների ԴՆԹ-ն ավելի վնասված է, քան Կապան քաղաքի անտառային մկներինը, ինչը բացատրվում է Զուար գյուղի շրջակայքի հողում Fe, Cu, Ca տարրերի բարձր պարունակությամբ: Հետազոտությունների շրջանակում կատարվել է Զուար գյուղի շրջակայքի և Կապան քաղաքի շրջակայքի հողում և ջրում պարունակվող քիմիական տարրերի քանակական վերլուծություն:

Կապան քաղաքի շրջակայքում գրանցվել է թզուկ փոքրաչղջիկների յուրահատուկ պոպուլյացիա, որոնց ուլտրաձայների հարմոնիկ բաղադրիչները տարբերվում են հյուսիսային շրջաններում տարածված նույն տեսակի արձակած ձայների հարմոնիկ բաղադրիչներից:

«Արևմտյան Եվրոպայի և սիբիրյան խոշոր կաթնասունների գենետիկական բազմազանությունը» ծրագրի շրջանակում իրականացվել է խոշոր կաթնասունների տարբեր տեսակների ԴՆԹ նմուշների հավաք: Նմուշների վերլուծությունն իրականացվելու է Լեհաստանի ԳԱ Կաթնասունների ուսումնասիրության ինստիտուտում:

Կենդանաբանության ամբիոնի և Բեռլինի բնության թանգարանի միջև առկա համագործակցության շրջանակում իրականացվել է մի շարք ձեռքաթևավորների գենետիկական նմուշների վերլուծություն: Արդյունքում պարզվել է 2014 թ.-ին Հայաստանում բռնված ձեռքաթևավորների որոշ առանձնյակների կարգաբանական պատկանելիությունը: Ինչպես պարզվեց, այդ առանձնյակները պատկանում են *M. schaubi* տեսակին, որն ընդգրկված է Միջազգային Կարմիր ցուցակում՝ Data deficient (տվյալների բացակայություն) կարգավիճակով:

Թեմա 5. «Արփի լճի և նրա ջրահավաք ավազանի էկոլոգիական գնահատականը և տարածքի տնտեսական զարգացման հեռանկարները»: Վերջին հարյուրամյակում շրջակա միջավայրի վրա մարդու ակտիվ գործունեության, մասնավորապես ջերմոցային գազերի արտանետման հետևանքով նկատվեցին համամոլորակային բնույթի մի շարք փոփոխություններ: Բնական ջերմոցային էֆեկտի ուժեղացման մեջ իր ուրույն տեղն է գրավում մարդու տնտեսական գործունեության ճյուղերից մեկը՝ գյուղատնտեսությունը (գյուղատնտեսական մշակաբույսերի մնացորդների այրում, հանքային պարարտանյութերի գերնորմավորված օգտագործում): Արփի լճի ջրահավաք ավազանում, ըստ մեր ուսումնասիրությունների, հանքային պարարտանյութեր գրեթե չեն օգտագործում, ուստի դա ջերմոցային գազերի արտանետման մեջ չի կարող էական դեր ունենալ: Սակայն հացազգի բույսերի բերքահավաքից հետո բուսական մնացորդների այրումը կրում է սովորական բնույթ: Հաշվի առնելով նշված հանգամանքը՝ հաշվետու տարում կատարել ենք բուսական մնացորդների այրման հետևանքով մթնոլորտ արտանետվող ջերմոցային գազերի (CH4, CO, N2O, NOX) քանակական հաշվարկ:

Ուսումնասիրության արդյունքները ցույց են տվել, որ 2014 թվականին մթնոլորտ է արտանետվել 1,52 տ CH4, 31,87 տ CO, 0,035 տ N2O և 1,28 տ NOX: Այս ամենը շրջակա միջավայրի վրա թողնում է երկակի բացասական ազդեցություն. մթնոլորտ են արտանետվում ջերմոցային գազեր, և մեծ քանակով ածխածին ու ազոտ գազային միացությունների ձևով հեռացվում են հողից՝ խախտելով դրանց շրջանառության բնական ընթացքը:

Հաշվի առնելով քննարկվող հարցի կարևորությունը՝ առաջարկում ենք բարձրացնել հողօգտագործողների էկոլոգիական կրթվածության մակարդակը և տարածաշրջանում հողի վարը կատարել առանց բուսական մնացորդներն այրելու:

Թեմա 6. «Դեղաբույսերի մեկուսացված կուլտուրաների և Հայաստանի տարբեր հողերից մեկուսացված էքստրեմոֆիլ մանրէների կենսատեխնոլոգիական ներուժի գնահատումը» թեմայի շրջանակում հաշվետու ժամանակահատվածում ստացվել են Հայաստանի Հանրապետության Կարմիր գրքում ընդգրկված Asateraceae ընտանիքին պատկանող Amberboa sosnovskyi, Tomanthea carthamoides բույսերի մեկուսացված կուլտուրաները: Մշակվել է մեկուսացված կուլտուրաների կայուն աճը ապահովող և նյութափոխանակությունը խթանող սննդամիջավայրերի հորմոնային կազմը: Ուսումնասիրվել են բնականոն բույսերի և դրանց մեկուսացված կուլտուրաների սպիրտային լուծամզվածքների հակաբակտերիական և հակառադիկալային ակտիվությունները: Նշված

կուլտուրաները դրսևորել են բարձր հակառադիկալային ակտիվություն և չեն դրսևորել հակաբակտերիական ակտիվություն: Ընդ որում՝ մեկուսացված կուլտուրաների հակառադիկալային ակտիվությունը գերազանցել է բնականոն բույսերի նույն ակտիվությանը:

Հաշվետու տարում շարունակվել են ուսումնասիրությունները կաթնաթթվային բակտերիաների (ԿԹԲ) վրա: Որոշվել են Lactobacillus acidophilus-ի կենսունակությունը մարսողական ուղու in vitro մոդելում և թաղանթային ակտիվությունը բնութագրող չափորոշիչները (ԱԵՖ-ազային ակտիվություն, H+, K+ իոնների հոսքեր) տարբեր ֆիզիկական (51.8 և 53 ԳՀց հաճախականությամբ էլեկտրամագնիսական ճառագայթներ (ԷՄՃ)) և քիմիական (երրորդ սերնդի ցեֆալոսպորինային հակաբիոտիկ ցեֆտազիդիմ) գործոնների ազդեցության պայմաններում, ինչպես նաև ուսումնասիրվել է թթվային (pH 5.0) և հիմնային (pH 8.0) pH-ների և հակաբիոտիկ ցեֆտազիդիմի ազդեցությունը *Lactobacillus acidophilus*-ի՝ ադհեզիվ ունակության վրա:

Ցույց է տրվել, որ մարսողական ուղու մոդելում տեղի է ունենում ԿԹԲ-ի կենսունակության անկում վերը նշված երկու հաճախությունների դեպքում, ինչպես նաև ճառագայթման ազդեցությամբ մեծանում է հակաբիոտիկ ցեֆտազիդիմի նկատմամբ զգայունությունը: Նշված հաճախություններով ԷՄՃ-ի և ցեֆտազիդիմի ազդեցությամբ տեղի են ունենում նաև ԱԵՖ-ազային ակտիվության անկում և բակտերիաների թաղանթներով իոնների հոսքերի նվազում: Հակաբիոտիկի ազդեցությամբ տեղի է ունենում նաև ԿԹԲ-ի ադհեզիվ ունակության նվազում:

Կաթնաթթվային բակտերիաների հակաօքսիդանտային ակտիվության ուսումնասիրությունը ցույց է տվել կախվածությունը շտամային առանձնահատկություններից: Լիոֆիլիզացված ԿԹԲ-ները դրսևորում են ավելի ցածր հակաօքսիդանտային ակտիվություն, քան կենդանի բջիջները: *L. acidophilus* Er 317/402, *L. delbrueckii* subsp. *lactis* INRA-2010-4.2 շտամներում առավելագույն ակտիվությամբ են գործում ԴՖՊՀ-ի չեզոքացման և ասկորբինաթթվի ինքնաօքսիդացման ճնշման ուղիները:

Ուսումնասիրվել են Հայաստանի տարբեր շրջաններից անջատված *Aeromonas* spp. 50 շտամների դիմացկունությունը և զգայունությունը հակաբիոտիկների նկատմամբ: Անջատված շտամները պատկանում էին ինչպես շարժուն, այնպես էլ անշարժ տեսակներին: *A. hydrophylla*-ն առանձնացել է հայտնաբերման բարձր հաճախականությամբ: Նույնականացվել են նաև *A. sobria, A. caviae* և *A. salmonicida* տեսակները: *A. Salmonicida*-ն ցուցաբերել է դիմացկունություն տետրացիկլինի նկատմամբ: *A. Hydrophylla*-ն ցուցաբերել է կայունություն հակաբիոտիկների լայն տեսականու նկատմամբ: Ուսումնասիրված շտամների 31.3%-ը ցուցաբերել է կայունություն 10 հակաբիոտիկների նկատմամբ: Փորձարկված շտամների 20%-ի համար մուլտիկայունության գործոնը գերազանցել է 0.2 արժեքը:

Հյութերից անջատվել և նույնականացվել են պայուսակավոր սնկերի *Byssochlamys* ցեղի *B. fulva* ջերմակայուն տեսակի 20 շտամներ: Հաստատված է նրանց ջերմակայունությունը ջերմային մշակման տարբեր ռեժիմներում (ջերմաստիճան, ժամանակ, տարբեր սուբստրատներ, կոնսերվանտների առկայություն և բացակայություն):

ԱԶՈՏ ՊԱՐՈՒՆԱԿՈՂ ՄԻԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՍԱՔԻՄԻԱՅԻ ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱ

Գիտական ղեկավար՝ *Նավասարդյան Լիպարիտ Հայրապետի, կենս. գիտ. դոկտոր, գլխավոր գիտաշխատող*

Լաբորատորիայի աշխատակիցների կազմը

1. Հովհաննիսյան Սոֆյա Պետրոսի, կենս. գիտ. դոկտոր, ավագ գիտաշխատող

2. Բարսեղյան Էռնեստինա Խիկարի, կենս. գիտ. թեկնածու, ավագ գիտաշխատող
3. Գևորգյան Մարգարիտա Լևոնի, կենս. գիտ. թեկնածու, գիտաշխատող
4. Թումանյան Լիլիթ Ռուբենի, կենս. գիտ. թեկնածու, գիտաշխատող
5. Խաչատրյան Մեդորա Հարությունի, կենս. գիտ. թեկնածու, գիտաշխատող
6. Կարապետյան Սուսաննա Աղասիի, կենս. գիտ. թեկնածու, գիտաշխատող
7. Հայրապետյան Նարինե Կոլյայի, կենս. գիտ. թեկնածու, գիտաշխատող
8. Մարության Սեդա Վիկտորի, կենս. գիտ. թեկնածու, գիտաշխատող
9. Աղաջանյան Անուշ Արամայիսի, կենս. գիտ. թեկնածու, կրտսեր գիտաշխատող
10. Ավթանդիլյան Նիկոլայ Վլադիմիրի, կենս. գիտ. թեկնածու, կրտսեր գիտաշխատող
11. Գրիգորյան Աիդա Պետրոսի, կենս. գիտ. թեկնածու, կրտսեր գիտաշխատող
12. Կարապետյան Հասմիկ Մաէնլեստի, կենս. գիտ. թեկնածու, կրտսեր գիտաշխատող
13. Նավասարդյան Արփինե Լևոնի, կենս. գիտ. թեկնածու, կրտսեր գիտաշխատող
14. Հարությունյան Սիրանուշ Վարդգեսի, ավագ լաբորանտ

Ըստ ընդհանուր ուղղությունների՝ լաբորատորիայում կատարված գիտական աշխատանքների ամփոփում

Հաշվետու ուստարում ուսումնասիրվել է պոլիամինների քանակության փոփոխությունը առնետի լյարդում, գլխուղեղում և երիկամներում ոչ ուրեոթելիկ արգինազի NG-հիդրոքսի-L-արգինինով արգելակումից հետո: Կատարվել է արգինազի ակտիվության որոշում առողջ մարդկանց, կրծքագեղձի, շագանակագեղձի, ստամոքսի, հաստ աղիքի և միզապարկի չարորակ նորագոյացություններ ունեցող հիվանդների արյան շիճուկում:

Իրականացվել է սպիտակ առնետի և գորտի ուրեոթելիկ արգինազի ենթամիավորային կազմի ուսումնասիրում: Ցույց է տրվել, որ կաթնասունների ուրեոթելիկ արգինազն ունի հատուկ կառուցվածքային դոմեններ, որոնք ապահովում են ֆերմենտի կայունությունը տարբեր դենատուրացնող գործոնների նկատմամբ:

Իրականացվել է մեղրախոտի առկայությամբ իմմոբիլիզացիոն սթրեսի ենթարկված ճագարի տարբեր օրգաններում պրոլինի կենսասինթեզին մասնակցող ֆերմենտների ակտիվության փոփոխությունների ուսումնասիրում: Ցույց է տրվել, որ մեղրախոտը թողնում է սթրեսը թուլացնող ազդեցություն:

Հաշվետու տարում իրականացվել է ջրածնի պերօքսիդի ազդեցության ուսումնասիրություն Asp. niger R-3 բորբոսասնկի L- և D-ամինաթթվային օքսիդազների ակտիվության վրա:

Իրականացվել է հողային և հիդրոպոնիկայի եղանակով աճեցված բույսերի էքստրակտների ազդեցության ուսումնասիրություն արյան մեջ խոլեստերինի կոնցենտրացիայի վրա:

Շարունակվել են ռենտգենյան ճառագայթման ենթարկված խմորասնկային բջիջների սպիտակուցների ֆրակցիոն կազմի համեմատական ուսումնասիրությունները՝ ռադիոպաշտպանիչ սպիտակուցների հայտնաբերման նպատակով:

ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ԿԵՆՍԱՖԻԶԻԿԱՅԻ ՄԻՋՖԱԿՈՒԼՏԵՏԱՅԻՆ ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱ

Գիտական ղեկավար՝ *Գևորգյան Էմիլ Սոսի, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, կենս. գիտ. դոկտոր, պրոֆեսոր, գլխավոր գիտաշխատող*

Լաբորատորիայի աշխատակիցների կազմը

1. Դալյան Եվա Բենոյի, կենս. գիտ. դոկտոր, առաջատար գիտաշխատող
2. Անանյան Գայանե Վոլոդի, ֆիզմաթ. գիտ. թեկնածու, ավագ գիտաշխատող
3. Արծրունի Իրինա Գեղամի, կենս. գիտ. թեկնածու, ավագ գիտաշխատող
4. Եսայան Ալեքսանդր Հրանտի, կենս. գիտ. թեկնածու, ավագ գիտաշխատող
5. Մատինյան Կարինե Ստեփանի, կենս. գիտ. թեկնածու, ավագ գիտաշխատող
6. Յավրոյան Ժենյա Վաղինակի, կենս. գիտ. թեկնածու, ավագ գիտաշխատող
7. Հակոբյան Նունե Ռոմենի, կենս. գիտ. թեկնածու, գիտաշխատող
8. Հարությունյան Տիգրան Սամվելի, կենս. գիտ. թեկնածու, գիտաշխատող
9. Ղուկասյան Գայանե Բաբկենի, կենս. գիտ. թեկնածու, գիտաշխատող
10. Վարդապետյան Արմեն Ռուբենի, անասն. գիտ. թեկնածու, գիտաշխատող
11. Ազիզյան Ռաֆայել Արմենի, կենս. գիտ. թեկնածու, կրտսեր գիտաշխատող
12. Թորոսյան Անահիտ Լևոնի, կենս. գիտ. թեկնածու, կրտսեր գիտաշխատող
13. Հովհաննիսյան Ագապի Գևորգի, կենս. գիտ. թեկնածու, կրտսեր գիտաշխատող
14. Դալլաքյան Մարինա Վահանի, կրտսեր գիտաշխատող
15. Եսոյան Սյուզաննա Սայաթի, կրտսեր գիտաշխատող
16. Մանուկյան Իսկուհի Մարտիկի, լաբորանտ

Ըստ ընդհանուր ուղղությունների՝ լաբորատորիայում կատարված գիտական աշխատանքների ամփոփում

ԵՊՀ կենսաբանության և ֆիզիկայի ֆակուլտետների մասնագետները համագործակցում են Կառուցվածքային կենսաֆիզիկայի միջֆակուլտետային լաբորատորիայի շրջանակում: Հետազոտություններն ուղղված են կորիզաթաղանթի, կորիզային մատրիքսի, ինչպես նաև քրոմատինի և ԴՆԹ-ի վրա տարաբնույթ էնդոգեն (հորմոններ) և էկզոգեն (մետաղ պարունակող տարբեր հակաուռուցքային պրեպարատներ՝ ցիսպլատին, ցիսպալադիում և այլն) էֆեկտորների in vitro և in vivo ներգործության մոլեկուլային մեխանիզմների պարզաբանմանը:

1. Հաշվետու ժամանակահատվածում լաբորատորիայի՝ Կենսաֆիզիկայի ամբիոնում գործող խմբի կողմից ուսումնասիրվել է ՊԱՌՊ 1-ի ակտիվության արգելակման բնույթը տարբեր սեռի կենդանիների լյարդի բջջակորիզներում: Ցույց է տրվել, որ ՊԱՌՊ 1 արգելակման սեռական դիմորֆիզմի դրսևորումները կախված են կիրառվող արգելակիչի բնույթից: Մասնավորապես ԴՆԹ-ֆերմենտ կապը արգելակող արգելակիչ ԱԵՖ-ն ունի միանշանակ արգելակող ազդեցություն ՊԱՌՊ 1 ակտիվության վրա հետազոտվող սեռական և տարիքային խմբերի առնետների լյարդի բջջակորիզներում: Այլ է մրցակցային ինհիբիտոր բենզամիդի ազդեցությունը, որը դրսևորում է ՊԱՌՊ 1 արգելակման տարիքային և սեռական նախապատվություններ: Ուսթերն բլոթինգի և ELISA մեթոդներով ցույց է տրվել, որ ՊԱՌՊ 1 արգելակումը ԱԵՖ-ով պայմանավորված չէ ֆերմենտային մոլեկուլի ճեղքավորմամբ, որը բնորոշ է ֆերմենտի արգելակմանը ապոպտոզի ընթացքում:

Վերջին տարիների կլինիկական հետազոտությունները ցույց տվեցին, որ հակաուռուցքային դեղամիջոց cis-դիքլորդիամինպլատինի արդյունավետությունը կտրուկ աճում է, երբ նրան զուգընթաց

կիրառվում են պոլի(ԱԿՖ-ռիբոզ)պոլիմերազ-1 (ՊԱՌՊ 1) ֆերմենտի արգելակիչներ: Ինչպես պարզվեց կուտակված տվյալներից, ՊԱՌՊ 1 արգելակիչների արդյունավետությունը մեծապես կախված է հիվանդների սեռից՝ տարբերվելով բուժիչ ազդեցության դրսևորման մեջ: Դեղամիջոցների ազդեցության սեռական դիմորֆիզմը կարող է խաղալ բախտորոշ դեր ցիտոտոքսիկ դեղամիջոցների կիրառման ժամանակ, ինչը պայմանավորում է երևույթի ճանաչման և գործնական գնահատման նշանակությունը հատկապես ուռուցքաբուժության բնագավառում:

Մեր հետազոտությունների արդյունքները ցույց տվեցին, որ ՊԱՌՊ 1-ի ակտիվությունը լյարդի բջջակորիզներում դրսևորում է տարիքային կախվածություն: Ֆերմենտի ելակետային ակտիվությունն ավելի բարձր է 4 շաբաթական առնետների մոտ և նվազում է 10 շաբաթական թե՛ արու, թե՛ էգ կենդանիների լյարդի բջջակորիզներում:

Հաշվետու ժամանակաշրջանում մշակվել և ներդրվել են մոլեկուլային իմունոլոգիական մեթոդներ՝ Ուեսթերն բլոթինգի և ELISA-ի մեթոդները:

Հաշվետու տարում շարունակվել են նաև հետազոտությունները բջջակորիզի տարբեր կառուցվածքների լիպիդային բաղադրամասերի վրա ցիսպլատինի in vivo ազդեցության ուղղությամբ: Մասնավորապես իրականացվել են հետազոտություններ՝ նվիրված ֆոսֆոինոզիտիդային ցիկլի ֆոսֆոլիպիդների՝ մոնոֆոսֆոինոզիտիդների, դիֆոսֆոինոզիտիդների և տրիֆոսֆոինոզիտիդների պարունակության ցիսպլատինի ներգործության տակ դիտվող քանակական տեղաշարժերին: Հետազոտությունները ցույց տվեցին, որ ցիսպլատինի in vivo ազդեցության արդյունքում հավաստիորեն մեծանում է տրիֆոսֆոինոզիտիդ/մոնոֆոսֆոինոզիտիդ հարաբերությունը, ինչը վկայում է հակաուռուցքային միացության ֆոսֆոինոզիտիդային կարգավորիչ ուղու վրա ունեցած զգալի ներգործության և հավանաբար կարգավորիչ ուղու գործունեության արդյունավետության նվազման մասին: Նշված ուսումնասիրությունների, ինչպես նաև նախորդ տարիներին կատարված հետազոտությունների արդյունքների հիման հաշվետու տարում պաշտպանվել է թեկնածուական ատենախոսություն:

Հաշվետու տարում սկսվել են նաև եռֆերմենտային համակարգերի ռեակցիաների կինետիկայի տեսական հետազոտություններ: Տարբեր համակարգչային փաթեթների միջոցով համակարգչային փորձը՝ in silico հետազոտությունները, թույլ են տալիս հայտնաբերել հետազոտվող օբյեկտների մի շարք առանձնահատկություններ, որոնք երբեմն բավականին դժվար է լինում հայտնաբերել in vitro հետազոտություններում: Մշակված են բազմապիսի մոդելներ, որոշված է դրանց աշխատանքի արդյունավետությունը: Հաջորդ տարում նախատեսվում է ուսումնասիրել մոդելների աշխատունակությունը միջավայրում տարաբնույթ արգելակիչների առկայության դեպքում:

2. Հաշվետու ժամանակահատվածում լաբորատորիայի՝ Մոլեկուլային ֆիզիկայի ամբիոնում գործող խմբի կողմից շարունակվել են հետազոտությունները ԴՆԹ-պորֆիրին կոմպլեքսառաջացման առանձնահատկությունների բնագավառում: Շրջանային դիքրոիզմի և սպեկտրոֆոտոմետրիկ հալման մեթոդներով հետազոտվել է poly[d(A-C)].poly[d(G-T)] կրկնակի պարույրային պոլինուկլեոտիդի և մեզո-տետրա-(4N-օքսիէթիլպիրիդիլ)պորֆիրինի (TOEtPyP) և նրա CuTOEtPyP, CoTOEtPyP մետաղական ածանցյալների փոխազդեցությունը: Ցույց է տրված, որ բոլոր պորֆիրինները կայունացնում են պոլինուկլեոտիդի կառուցվածքը: Բացի դրանից՝ նկատվում է հալման ինտերվալի զգալի աճ, որը խոսում է պրոցեսի կոպերատիվության նվազման մասին: Հալման ինտերվալի աճը պայմանավորված է բացառապես հալման կորի վերջնամասի շեղումով դեպի բարձր ջերմաստիճանները: Հետևաբար պորֆիրինները կապվում են հիմնականում տվյալ պոլինուկլեոտիդի ԳՑ-տեղամասերի հետ: ԴՆԹ-պորֆիրին կոմպլեքսի ինդուկցված շրջանային դիքրոիզմի /ԻՇԴ/ սպեկտրները /370-470 նմ տիրույթում/ ցույց են տալիս խիստ կախվածություն պորֆիրինի տեսակից և կոնցենտրացիայից: Ինտերկալացվող պորֆիրինների (TOEtPyP և CuTOEtPyP) ԻՇԴ սպեկտրների դրական մասը մոտ 2 անգամ գերազանցում է արտաքին կապվող CoTOEtPyP, և առկա է շերտի բացասական տիրույթ:

ՈւՄ/տեսանելի սպեկտրալուսաչափման և շրջանային դիքրոիզմի եղանակներով ուսումնասիրվել է CoTOEtPyP-ի փոխազդեցությունը ԴՆԹ-ի A և B-ձևերի հետ: Կլանման իզոթերմներից հաշվարկվել են կապման հաստատունը (K) և տարածաչափական գործակիցը (n): K-ի արժեքների միջոցով հաշվարկվել են Գիբսի ազատ էներգիան, կապման էնթալպիան և էնտրոպիան: Ցույց է տրված, որ այս պորֆիրինը ԴՆԹ-ի A և B-ձևերի հետ փոխազդում է միայն արտաքին ակոսային կապակցման միջոցով:

3. Հաշվետու տարում լաբորատորիայի՝ էկոլոգիայի ամբիոնում գործող խմբի կողմից շարունակվել են մշակաբույսերի, մասնավորապես խաղողի տարբեր սորտերի և դրանց վայրի ցեղակիցների գենետիկական բազմազանության համեմատական ուսումնասիրությունները: Շարունակվել են Արենի-1 քարանձավային համալիրում հայտնաբերված բուսական մնացորդներից ԴՆԹ-ի անջատման և դրա քիմիական ու կենսաբանական առանձնահատկությունների գնահատման աշխատանքները: Կատարվում են նաև այդ մնացորդների քիմիական կազմի ուսումնասիրության և մասնավորապես դրանցում պորֆիրինային տիպի միացությունների հայտնաբերման աշխատանքներ: Փորձարարական աշխատանքների հետ մեկտեղ իրականացվել են նաև տեսական աշխատանքներ՝ հիմնված համակարգչային մոդելավորման վրա:

ԵՆԹԱԲՋՋԱՅԻՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԿԵՆՍԱՖԻԶԻԿԱՅԻ ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱ

Գիտական ղեկավար՝ *Վարդևանյան Պողոս Հովհաննեսի, կենս. գիտ. դոկտոր, պրոֆեսոր, գլխավոր գիտաշխատող*

Լաբորատորիայի աշխատակիցների կազմը

1. Փանոսյան Գերասիմ Հարությունի, կենս. գիտ. դոկտոր, առաջատար գիտաշխատող
2. Անտոնյան Արա Պետիկի, կենս. գիտ. թեկնածու, ավագ գիտաշխատող
3. Գաբրիելյան Լիլիթ Սերգեյի, կենս. գիտ. թեկնածու, ավագ գիտաշխատող
4. Փարսադանյան Մարինե Աշոտի, կենս. գիտ. թեկնածու, ավագ գիտաշխատող
5. Փոլադյան Աննա Արշակի, կենս. գիտ. թեկնածու, ավագ գիտաշխատող
6. Զաքարյան Արմեն Եգորի, կենս. գիտ. դոկտոր, գիտաշխատող
7. Հակոբյան Լիլիթ Յուրիկի, կենս. գիտ. թեկնածու, գիտաշխատող
8. Մինասբեկյան Լիյա Ալեքսանդրի, կենս. գիտ. թեկնածու, գիտաշխատող
9. Ներկարարյան Անահիտ Վլադիմիրի, կենս. գիտ. թեկնածու, գիտաշխատող
10. Պողոսյան Գայանե Հմայակի, կենս. գիտ. թեկնածու, գիտաշխատող
11. Սարգսյան Էվելինա Գեորգիի, կենս. գիտ. թեկնածու, գիտաշխատող
12. Տիրացույան Սուսաննա Գուրգենի, կենս. գիտ. թեկնածու, գիտաշխատող
13. Դարբինյան Մերի Ռազմիկի, կենս. գիտ. թեկնածու, կրտսեր գիտաշխատող
14. Թորգոմյան Հեղինե Ռաֆիկի, կենս. գիտ. թեկնածու, կրտսեր գիտաշխատող
15. Շահինյան Մարիամ Աշոտի, կենս. գիտ. թեկնածու, կրտսեր գիտաշխատող

Ըստ ընդհանուր ուղղությունների՝ լաբորատորիայում կատարված գիտական աշխատանքների ամփոփում

Հաշվետու տարում շարունակվել են ԴՆԹ-ի հետ տարբեր լիգանդների՝ մեթիլեն կապույտի (ՄԿ), Hoechst 33258-ի (H33258), ինչպես նաև էթիդիումի բրոմիդի (ԷԲ) կապման առանձնահատկությունների ուսումնասիրությունները: ՄԿ-ն հանդիսանում է դեղամիջոց և հատկապես մեծ կիրառություն ունի ֆոտոդինամիկ թերապիայիում: ԴՆԹ-ի հետ այս լիգանդի կոմպլեքսները լայնորեն ուսումնասիրվում են, այնուամենայնիվ դրա կապման մեխանիզմները դեռևս լիովին պարզաբանված չեն, ուստի իրականացվել է ԴՆԹ-ի հետ ՄԿ-ի կապման ուսումնասիրություն ֆլյուորեսցենտային սպեկտրոսկոպիայի մեթոդով: Ցույց է տրվել, որ ՄԿ-ի և ԴՆԹ-ի հետ նրա կոմպլեքսների ֆլյուորեսցենտային սպեկտրների վրա առկա են երկու պիկեր՝ λ=583 նմ և λ=682 նմ ալիքի երկարությունների դեպքում: λ=583 նմ ալիքի երկարության դեպքում պիկը աճում է ԴՆԹ-ի կոնցենտրացիայի մեծացմանը զուգընթաց, իսկ λ=682 նմ դեպքում պիկը նվազում է: Առկա տվյալների և ԴՆԹ-ԷԲ կոմպլեքսների համար ստացված արդյունքների համեմատումը ցույց է տվել, որ ՄԿ-ն ԴՆԹ-ի հետ կապվում է կիսաինտերկալյացիոն և էլեկտրաստատիկ եղանակներով՝ չնայած այն հանգամանքին, որ այս լիգանդը ինտերկալյատոր է: Իրականացվել է նաև տարբեր GC-պարունակությամբ ԴՆԹ-ի հետ մեթիլեն կապույտի (ՄԿ) կոմպլեքսների հալումը լուծույթի 0.02 Մ իոնական ուժի պայմաններում: Ցույց է տրվել, որ ԴՆԹ-ի հետ ՄԿ-ի կոմպլեքսների հալման միջակայքի լայնության փոփոխությունն աճում է՝ կապված ԴՆԹ-ում GC-պարունակության ավելացման հետ: Բացահայտվել է, որ ԴՆԹ-ի հետ ՄԿ-ն կապվում է կիսաինտերկալյացիոն եղանակով: Հայտնաբերվել է նաև, որ կապման այս եղանակը կախված է ԴՆԹ-ի GC-պարունակությունից:

Առաջարկվել է ԴՆԹ-ի երկշղթա և միաշղթա կառուցվածքների հետ ԷԲ-ի կապման փորձարարական կորերի վերլուծության նոր եղանակ՝ լիգանդի մոլեկուլներով ԴՆԹ-ի այդ կառուցվածքների փոքր հագեցումների դեպքում՝ առնվազն երկու եղանակներով լիգանդի մոլեկուլների կապման դեպքի համար: Հարկ է նշել, որ երկշղթա և միաշղթա ԴՆԹ-ի հետ ԷԲ-ի՝ փորձարարական եղանակով ստացված կապման կորերի վրա ի հայտ են գալիս երկու հստակ արտահայտված գծային տեղամասեր: Այդ կորերը վերլուծվել են երկու եղանակներով. փորձարարական կետերը, որոնք գտնվում են այդ գծային տեղամասերի վրա նկարագրվել են երկու առանձին ուղիղների, ինչպես նաև մեկ ընդհանուր կորի միջոցով: Առաջարկված եղանակի միջոցով բացահայտվել է, որ այդ կետերի վերլուծությունն ընդհանուր կորով թույլ է տալիս մեծ ճշգրտությամբ որոշելու ԴՆԹ-ի տարբեր կառուցվածքների հետ ԷԲ-ի կապման պարամետրերի՝ կապման հաստատունի և կապման տեղերի թվի արժեքները փոխազդեցության տարբեր մեխանիզմների դեպքում: Բացի դրանից՝ առաջարկված նոր մեթոդը հնարավորություն է ընձեռում որոշելու տարբեր եղանակներով կապման կենտրոնների մասնաբաժինը:

Ուսումնասիրվել են նաև poly(dA) պոլինուկլեոտիդի հետ ԷԲ-ի փոխազդեցության առանձնահատկությունները լուծույթի տարբեր pH-ի դեպքում: Ստացված տվյալներն ի հայտ են բերել, որ poly(dA)-ն տարբեր pH-ում գտնվում է տարբեր կառուցվածքային վիճակներում. երկշղթա 4.0>pH>3.0 միջակայքում և միաշղթա՝ չեզոք (pH≈7.0), թույլ թթվային (6.0>pH≥5.5) և ուժեղ թթվային (pH<3.0) պայմաններում: Հայտնաբերվել է նաև, որ ԷԲ-ն poly(dA)-ի հետ կապվում է ինտերկալյացիոն եղանակով pH≈3.5 պայմաններում և կիսաինտերկալյացիոն եղանակով՝ pH≈7.0 и pH≈5.5 պայմաններում:

Ուսումնասիրվել է նաև ԷԲ-ի փոխազդեցությունը poly(G)-ի հետ, և ստացվել են այդ փոխազդեցության թերմոդինամիկ պարամետրերի՝ էնթալպիայի, էնթրոպիայի և ազատ էներգիայի փոփոխությունների արժեքները: Ստացված տվյալներից ի հայտ է եկել, որ ԷԲ-ը poly(G)-ի հետ փոխազդում է կիսաինտերկալյացիոն եղանակով: Ուսումնասիրությունները կատարվել են 0.1 մոլ իոնական ուժով լուծույթում, որի պայմաններում poly(G)-ն հիմնականում գտնվում է քառաշղթա վիճակում:

Հալման մեթոդով ուսումնասիրվել են ԴՆԹ-ԷԲ, ԴՆԹ-H33258 և ԴՆԹ-ԷԲ-H33258 կոմպլեքսները լուծույթի 2 մմոլ իոնական ուժի պայմաններում: Հայտնաբերվել է, որ ԴՆԹ-ԷԲ կոմպլեքսների դեպքում լիգանդի կոնցենտրացիայից հալման միջակայքի լայնության փոփոխության՝ $\delta(\Delta T/T_m^2)$-ի կախվածության կորը զանգվածն է, ԴՆԹ-H33258 կոմպլեքսների դեպքում այդ կորն աճում է լիգանդի փոքր կոնցենտրացիաների պարագայում և գրեթե չի փոխվում H33258-ի կոնցենտրացիայի հետագա մեծացման արդյունքում: ԴՆԹ-ի հետ ԷԲ-ի և H33258-ի համատեղ կապման դեպքում լիգանդների կոնցենտրացիայից կախված կոմպլեքսների հալման միջակայքի լայնության փոփոխության կախվածության կորը որակապես տարբերվում է այդ ԴՆԹ-ԷԲ և ԴՆԹ-H33258 կոմպլեքսների համար ստացված $\delta(\Delta T/T_m^2)$-ի արժեքների պարզ հանրահաշվական գումարի դեպքում ստացվող կորից: Ստացված տվյալները ի հայտ են բերել, որ ԴՆԹ-ի հետ ԷԲ-ի և H33258-ի համատեղ փոխազդեցությունը չի հանդիսանում այդ լիգանդների առանձին փոխազդեցությունների հանրահաշվական գումար, ընդ որում՝ այդ լիգանդների համեմատաբար փոքր կոնցենտրացիաների դեպքում դրանք փոխադարձաբար ուժեղացնում են ԴՆԹ-ի երկշղթա կառուցվածքի վրա յուրաքանչյուրի կայունացնող ազդեցությունը, ավելի մեծ կոնցենտրացիաների դեպքում տեղի է ունենում դրանց առանձին ազդեցությունների փոխադարձ թուլացում: Ընդ որում՝ երկու լիգանդների դեպքում էլ բացահայտվել է, որ ինչպես առանձին, այնպես էլ համատեղ փոխազդեցության արդյունքում այդ լիգանդները ԴՆԹ-ի հետ կապվում են մի քանի եղանակներով: Ստացված տվյալները բացահայտել են նաև, որ ԴՆԹ-ի հետ նշված լիգանդների համատեղ կապման դեպքում տվյալ եղանակով փոխազդեցությունը կախված է ոչ միայն առանձին լիգանդի կոնցենտրացիայից, այլև ԴՆԹ-ի հետ մյուս լիգանդի կապված մոլեկուլների առկայությունից:

Կենդանի բջջի օնտոգենեզի և պաթոգենեզի ընթացքում տեղի են ունենում մի շարք փոփոխություններ, այդ թվում՝ նաև ԴՆԹ-ի մեթիլացման աստիճանի փոփոխություն, որը ներկայացնում է մեծ հետաքրքրություն: Հայտնի է, որ մի շարք գործոնների ազդեցության ներքո և տարբեր հիվանդությունների ընթացքում վնասված հյուսվածքների ԴՆԹ-ն որոշակի տեղամասերում հիպերմեթիլացվում է: Մեր կողմից ստացված տվյալները նույնպես վկայում են ԴՆԹ մեթիլացման աստիճանի աճի մասին ինչպես միլիմետրային էլեկտրամագնիսական ալիքների ազդեցության ներքո, այնպես էլ որոշ աղիքային հիվանդությունների ժամանակ: Որոշվել է նաև ԴՆԹ մեթիլացման և ԴՆԹ-ի ֆլյուորեսցենտային պարամետրերի միջև փոխկապակցությունը:

Հաշվետու տարում շարունակվել են միլիմետրային տիրույթի էլեկտրամագնիսական ճառագայթման հետազոտությունները կենսաբանական համակարգերի վրա: Ուսումնասիրվել են ԴՆԹ-ի և սինթետիկ պոլինուկլեոտիդների հետ հակաբիոտիկ դոքսոռուբիցինի կոմպլեքսագոյացման առանձնահատկությունները ջրի ռեզոնանսային (64.5 և 50.3 ԳՀց) և ոչ ռեզոնանսային (48.3 ԳՀց) հաճախություններով ճառագայթահարելիս: Ստացված տվյալներից ի հայտ է եկել, որ B-կոնֆորմացիայի դեպքում ռեզոնանսային հաճախություններով ճառագայթահարման արդյունքում ԴՆԹ-ի հետ դոքսոռուբիցինի կապման հաստատունի արժեքը մեծանում է գրեթե մեկ կարգով, մինչդեռ A-ի դեպքում (poly(rG)-poly(rC))՝ ընդամենը երկու անգամ: Ոչ ռեզոնանսային հաճախությամբ ճառագայթահարման դեպքում և՛ բնական երկշղթա ԴՆԹ-ի, և՛ սինթետիկ պոլինուկլեոտիդի հետ այդ միացության կապման հաստատունի արժեքը փոփոխության չի ենթարկվում:

Հաշվետու ժամանակահատվածում ուսումնասիրվել է միլիմետրային էլեկտրամագնիսական ճառագայթման ազդեցությունը առնետների արյան էրիթրոցիտների թաղանթի կայունության վրա: Ուսումնասիրություններն իրականացվել են՝ կիրառելով 41.8 ԳՀց և 51.8 ԳՀց հաճախությունները: Ցույց է տրվել, որ նշված արտաքին գործոնը փոփոխություններ է հրահրում էրիթրոցիտների թաղանթում, ինչն էլ անդրադառնում է էրիթրոցիտների կայունության վրա, և այս գործոնը հանգեցնում է հեմոլիզի արագացմանը: Շարունակվում են նաև միլիմետրային ալիքների ազդեցության ուսումնասիրությունները առնետների արյան պլազմայի և էրիթրոցիտների կախույթում վերջիններիս տարբեր կենսաֆիզիկական ցուցանիշների վրա:

Ուսումնասիրվել է նաև տարբեր հաճախությամբ միլիմետրային էլեկտրամագնիսական ալիքների և հիբերելինի համատեղ ազդեցությունը ցորենի ծիլերում պերօքսիդազի ընդհանուր ակտիվության վրա: Ստացված արդյունքները վկայում են այն մասին, որ ճառագայթումը հանգեցնում է պերօքսիդազի ընդհանուր ակտիվության աճին, ընդ որում՝ համատեղ ազդեցության դեպքում պերօքսիդազի ընդհանուր ակտիվությունը ենթարկվում է ավելի մեծ փոփոխությունների, քան այս երկու գործոնների առանձին ներգործության դեպքում:

Հաշվետու տարում իրականացվել է նաև կադմիում մետաղի (Cd^{2+}) իոնների և ծայրահեղ բարձր հաճախության էլեկտրամագնիսական ճառագայթման ազդեցության ուսումնասիրությունը բուսական (ցորեն –*Triticum aestivum L.*) և կենդանական (սպիտակ անցեղ առնետներ) օրգանիզմների վրա: Պարզվել է, որ $CdCl_2$-ի առկայությունը *Triticum aestivum L.* աճման միջավայրում առաջ է բերում ծիլերի աճի (երկարություն և զանգված) դանդաղում, ինչպես նաև դրանցում լիպիդների պերօքսիդային օքսիդացման վերջնական արգասիքներից մեկի՝ մալոնային երկալդեհիդի (ՄԵԱ) քանակի ավելացում: Cd^{2+}-հրահրված սթրեսն արտահայտվում է նաև կատալազի ակտիվության նվազմամբ և պերօքսիդազի ակտիվության նշանակալից աճով:

Ուսումնասիրվել է միլիմետրային տիրույթի էլեկտրամագնիսական ճառագայթման ազդեցությունը օլեինաթթվի, արևածաղկի ձեթի, խոշոր եղջերավոր կենդանու ուղեղից ստացված ընդհանուր լիպիդների, այդ ուղեղային հյուսվածքի և դրա հոմոգենատի վրա: Ցույց է տրվել, որ էլեկտրամագնիսական ճառագայթման ազդեցությունը բոլոր հետազոտվող նմուշների վրա ուղեկցվում է ազատ ռադիկալային պրոցեսների զգալի ակտիվացմամբ, որը դրսևորվում է քիմլյումինեսցենցիաի ինտենսիվության բարձրացմամբ:

Հաշվետու ժամանակահատվածում ուսումնասիրվել են 51.8 ԳՀց և 53.0 ԳՀց հաճախությամբ էլեկտրամագնիսական ալիքների (ԾԲՀ ԷՄԱ) տարբեր տևողության ճառագայթման ազդեցությունները *Enterococcus hirae* ATCC 9790 բակտերիաների ձևաբանական ցուցանիշների վրա: Ցույց է տրվել կապ ճառագայթման ալիքի երկարության, տևողության և բակտերիաների ձևաբանական վիճակի փոփոխության միջև: ԾԲՀ ԷՄԱ-ի ազդեցության արդյունքում դիտվում է բակտերիաների բջիջների ծավալի աճ, ընդ որում՝ սա ընդհանուր միտում է ճառագայթման ալիքի բոլոր երկարությունների և տևողությունների համար՝ համապատասխանաբար տարբեր աստիճանի փոփոխություններով:

Հետազոտվել է նաև *Rhodobacter sphaeroides* բակտերիաների վրա 51.8 ԳՀց և 53 ԳՀց հաճախությամբ ԷՄԱ ազդեցությունը: 15 ր ընթացքում բակտերիաների 51.8 ԳՀց և 53 ԳՀց ԷՄԱ-ով ճառագայթահարումը 1.2 անգամ խթանում է աճման տեսակարար արագությունը ստուգիչի համեմատ: Սակայն 51.8 ԳՀց ճառագայթահարման 1 ժ տևողության դեպքում աճման տեսակարար արագությունը արգելակվում է, ինչը վկայում է տվյալ ազդեցության բակտերիացիդ բնույթի մասին: 1 ժ տևողությամբ 51.8 ԳՀց ճառագայթահարման դեպքում *R. Sphaeroides* բակտերիաներում H_2-ի արտադրություն տեղի չի ունենում, մինչդեռ 53 ԳՀց ԷՄԱ-ով ճառագայթահարումը 1.5 անգամ խթանում է H_2-ի ֆոտոարտադրությունը: ԾԲՀ ԷՄԱ ազդեցության տարբերությունները կարող են պայմանավորված լինել բակտերիաների թաղանթային տեղափոխիչ և ֆերմենտային համակարգերի վրա ճառագայթների ուղղակի ազդեցությամբ:

Հաշվետու ժամանակաշրջանում ուսումնասիրվել են մի շարք դեղաբույսերի՝ *P. major*-ի, *L. nobilis*-ի, *O. basilicum*-ի մզվածքների հակաօքսիդանտային և հակամանրէային հեպատո-, անոթապաշտպանիչ հատկությունները, բացահայտվել են ակտիվ բաղադրիչները, ինչպես նաև բնորոշվել դրանց ազդեցության մեխանիզմները *in vivo* և *in vitro* փորձարարական մոդելային համակարգերում: Հակառադիկալային ազդեցությունը գնահատվել է DPPH ռադիկալի գունազրկման, իսկ ֆլավոնոիդների ընդհանուր պարունակությունը՝ գունաչափական մեթոդներով: Կատարվել են վերը նշված բույսերի էթանոլային էքստրակտների հիմնական բաղադրիչների քանակական և որակական վերլուծություններ բարձր ազդեցության հեղուկային քրոմոտոգրաֆիայի մեթոդով: Ստացված արդյունքների համաձայն՝ երեք մզվածքների հիմնական ֆլավոնոիդային ծագումով բաղադրիչներն են քվերցետինը, մորինը և ռուտինը: Կարևորվում է այն փաստը, որ էքստրակտների հակառադիկալային ակտիվությունները

համահարաբերակցվում (կորելյացվում) են քվերցետինի քանակի հետ, դրանց հակամանրէային ակտիվությունները՝ մորինի բաղադրության հետ:

ՍՆԿԵՐԻ ԿԵՆՍԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԿԵՆՍԱՏԵԽՆՈԼՈԳԻԱՅԻ ԳՀ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱ

Գիտական ղեկավար՝ *Բաղալյան Սուսաննա Միքայելի, կենս. գիտ. դոկտոր, պրոֆեսոր, գլխավոր գիտաշխատող*

Լաբորատորիայի աշխատակիցների կազմը

1. Ղարիբյան Նարինե Գրիգորի, կենս. գիտ. թեկնածու, ավագ գիտաշխատող
2. Գրիգորյան Մարգարիտա Օգսենի, կենս. գիտ. թեկնածու, գիտաշխատող
3. Շահբազյան Տաթևիկ Արշակի, լաբորանտ

Ըստ ընդհանուր ուղղությունների՝ լաբորատորիայում կատարված գիտական աշխատանքների ամփոփում

Գիտական թեմաներ

Թեմայի անվանումը	*Ղեկավար*
1. Մակրոմիցետների կարգաբանության և կենսաբանական առանձնահատկությունների ուսումնասիրությունը կենսատեխ-նոլոգիայում դրանց կիրառման նպատակով (պետական ֆինանսավորում):	Բաղալյան Ս. Մ.

Թեմա 1. Ընթացքի մեջ են Հայաստանում պոլիպորային սնկերի գենետիկական ռեսուրսների, տարածվածության, ինչպես նաև դրանց կարգաբանության և կենսաբանական առանձնահատկությունների վերաբերյալ ուսումնասիրությունները ՄՊՀ-ի /Ռուսաստան/, Բոլոնիայի և Ուրբինոյի (Իտալիա) համալսարանների հետ համատեղ: Բացահայտվել են միցելիումի կարգաբանական նշանակության մի շարք հատկանիշներ, իրականացվել է *Fomes fomentarius, Fomitopsis pinicola* և *Ganoderma* ցեղի որոշ ներկայացուցիչների հավաքածուների քիմիական կազմի, ինչպես նաև դեղաբանական հատկությունների հետազոտում:

Ուսումնասիրվել են *Psathyrella* ցեղի և կոպրինային սնկերի հավաքածուների միցելիումի մորֆոլոգիական, մասնավորապես անսեռ բազմացման առանձնահատկությունները և միջտեսակային անտագոնիզմը, գնահատվել է դրանց կարգաբանական նշանակությունը Գյեոինգենի համալսարանի /Գերմանիա/ հետ համատեղ: Բացահայտվել է որոշ կոպրինային սնկերի հակասնկային ակտիվությունը մարդու և կենդանիների պոտենցիալ պաթոգեն միկրոսկոպիկ սնկերի նկատմամբ:

ՀԱՅ ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

Դեկան՝ *Ավագյան Արծրուն Աբգարի, բան. գիտ. դոկտոր, պրոֆեսոր*

Դեկանի տեղակալներ՝ *Սարգսյան Արտաշես Լիպարիտի, բան. գիտ. թեկնածու, դոցենտ*
Եղիազարյան Վարդան Վոլոդյայի, բան. գիտ. թեկնածու, դոցենտ

Ֆակուլտետի մասնագիտությունները եւ մասնագիտացումները

Շիֆր	**Մասնագիտություն՝**
031000	Հայոց լեզու և գրականություն
050100	Կրթության կազմակերպում
051300	Սոցիալական մանկավարժություն

Մասնագիտացումներ՝
(մագիստրոսական ծրագրեր)

Համաշխարհային գրականություն և գրականության տեսություն
Հայ նորագույն գրականություն և գրաքննադատություն
Ժամանակակից հայոց լեզու և թարգմանչական գործ
Հայոց լեզվի պատմություն և լեզվաբանություն
Հայ գրականության պատմություն
Բարձրագույն կրթության կառավարում
Հանրակրթության կառավարում

Պատվավոր կոչումներ ունեցողներ

1. Եզեկյան Լևոն Կորյունի, Հայոց լեզվի ամբիոնի պատվավոր վարիչ

Կրթական աստիճան, մասնագիտություն	*Ուսանողների թիվը՝ 725*							
	I կուրս		II կուրս		III կուրս		IV կուրս	
	պպ	վճ	պպ	վճ	պպ	վճ	պպ	վճ
Բակալավրիատ								
Հայոց լեզու և գրականություն	18	110	23	105	24	130	20	11
Սոցիալական մանկավարժություն	3	37	2	36	2	46	2	17
Ընդամենը	**21**	**147**	**25**	**141**	**26**	**176**	**22**	**28**
Մագիստրատուրա								
Հայոց լեզու և գրականություն	16	21	20	44	-	-	-	-
Կրթության կազմակերպում	5	15	4	14	-	-	-	-
Ընդամենը	**21**	**36**	**24**	**58**	-	-	-	-

Հեռակա ուսուցում

Կրթական աստիճան, մասնագիտություն	*Ուսանողների թիվը՝ 305*				
	I կուրս	II կուրս	III կուրս	IV կուրս	V կուրս
Բակալավրիատ					
Հայոց լեզու և գրակ.	**19**	**29**	**38**	**31**	**77**
Մագիստրատուրա					
Հայոց լեզու և գրակ.	12	10	20	-	-
Կրթության կազմակերպ.	24	16	29	-	-
Ընդամենը	**36**	**26**	**49**	-	-

Քննաշրջանների արդյունքներ
Ձմեռային քննաշրջան

Կրթական աստիճան, մասնագիտություն, կուրս	Քննաշրջանին մասնակցել են	Անբավարար գնահատական ստացած ուսանողների թիվը		Գերազանցիկների թիվը	Առաջադիմության %-ը
		պպ	վճ		
Բակալավրիատ					
Հայոց լեզու և գրակ.					
1-ին	128	-	21	8	84
2-րդ	128	1	26	12	79
3-րդ	154	2	29	4	80
4-րդ	31	4	5	3	71
Սոցիալական մանկավարժություն					
1-ին	40	1	6	9	83
2-րդ	38	-	5	-	87
3-րդ	48	-	-	14	100
4-րդ	19	-	9	4	53
Ընդամենը	**586**	**8**	**101**	**54**	**81**
Մագիստրատուրա					
Հայոց լեզու և գրակ.					
1-ին	37	-	-	16	100
2-րդ	64	-	5	20	92
Կրթության կազմակերպ.					
1-ին	20	-	2	2	90
2-րդ	18	-	-	4	100
Ընդամենը	**139**	**-**	**7**	**42**	**95**

Ամառային քննաշրջան

Կրթական աստիճան, մասնագիտություն, կուրս	Քննաշրջանին մասնակցել են	Անբավարար գնահատական ստացած ուսանողների թիվը		Գերազանցիկների թիվը	Առաջադիմության %-ը
		պպ	վճ		
Բակալավրիատ					
Հայոց լեզու և գրակ.					
1-ին	126	-	20	5	84
2-րդ	126	1	24	19	80
3-րդ	154	1	27	8	82
4-րդ	52	2	5	3	87
Սոցիալական մանկավարժություն					
1-ին	40	1	26	-	33
2-րդ	38	-	13	4	66
3-րդ	48	-	-	9	100
4-րդ	21	-	7	1	67
Ընդամենը	**605**	**5**	**122**	**49**	**79**
Մագիստրատուրա					
Հայոց լեզու և գրակ.					
1-ին	37	-	1	21	97
Կրթության կազմակերպ.					
1-ին	19	-	1	4	95
Ընդամենը	**56**	**-**	**2**	**25**	**96**

Շրջանավարտներ

Մասնագիտություն	*Ընդամենը՝ 256 (7), այդ թվում նախորդ տարիներից՝* 21			
	բակալավրիատ (գերազանցության դիպլոմով)		մագիստրատուրա	
	առկա	հեռակա	առկա	հեռակա
Հայոց լեզու և գրականություն	37 (2)	74	60	19 (1)
Սոցիալական մանկավարժություն	19 (4)	-	-	-
Կրթության կազմակերպ.	-	-	18	29
Ընդամենը	**56 (6)**	**74**	**78**	**48 (1)**

2014-2015 ուստարում հրատարակվել են

Դասագիրք	Մենագրություն	Ուսումնական ձեռնարկ	Ուսումնամեթոդական ձեռնարկ	Հոդված	Ձեկուցման թեզիս
3	**7**	**2**	**6**	**104**	**20**

Ֆակուլտետում գործող ամբիոնների թիվը՝ 7

ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ԱՄԲԻՈՆ

Ամբիոնի վարիչ՝ *Ավետիսյան Յուրիկ Սրապիոնի, բան. գիտ. դոկտոր, պրոֆեսոր*

Պրոֆեսորադասախոսական կազմը

1. Եզեկյան Լյովիկ Կորյունի, բան. գիտ. դոկտոր, պրոֆեսոր, ամբիոնի պատվավոր վարիչ
2. Սաքապետոյան Ռուբեն Կարապետի, բան. գիտ. դոկտոր, պրոֆեսոր
3. Ադիլխանյան Անահիտ Զավենի, բան. գիտ. թեկնածու, դոցենտ
4. Աղաջանյան Զարիկ Խաչատուրի, բան. գիտ. թեկնածու, դոցենտ
5. Թելյան Լեոնիդ Գուրգենի, բան. գիտ. թեկնածու, դոցենտ
6. Թիրաբյան Նելլի Հարությունի, բան. գիտ. թեկնածու, դոցենտ
7. Հայրապետյան Լևոն Հրանտի, բան. գիտ. թեկնածու, դոցենտ
8. Մարգարյան Ռեբեկա Հայկարամի, բան. գիտ. թեկնածու, դոցենտ
9. Մեյթիխանյան Փառանձեմ Գառնիկի, բան. գիտ. թեկնածու, դոցենտ
10. Միքայելյան Կարինե Ռոբերտի, բան. գիտ. թեկնածու, դոցենտ
11. Ներսիսյան Բագրատ Սուրենի, բան. գիտ. թեկնածու, դոցենտ
12. Ներսիսյան Գոհար Միշայի, բան. գիտ. թեկնածու, դոցենտ
13. Ներսիսյան Նարինե Վոլոդյայի, բան. գիտ. թեկնածու, դոցենտ
14. Սաղաթելյան Ռիտա Գուրգենի, բան. գիտ. թեկնածու, դոցենտ
15. Սարգսյան Արտաշես Լիպարիտի, բան. գիտ. թեկնածու, դոցենտ
16. Սուքիասյան Քնարիկ Աշոտի, բան. գիտ. թեկնածու, դոցենտ
17. Տեր-Մինասյան Աշոտ Անդրանիկի, բան. գիտ. թեկնածու, դոցենտ
18. Գաբրիելյան Սուսաննա Վոլոդյայի, բան. գիտ. թեկնածու, ասիստենտ
19. Գևորգյան Շուշանիկ Սամսոնի, բան. գիտ. թեկնածու, ասիստենտ
20. Մանուկյան Անահիտ Լևոնի, բան. գիտ. թեկնածու, ասիստենտ
21. Մովսիսյան Անահիտ Ժորայի, բան. գիտ. թեկնածու, ասիստենտ
22. Մուրադյան Անի Սամվելի, բան. գիտ. թեկնածու, ասիստենտ
23. Սարգսյան Հրաձին Գրիշայի, բան. գիտ. թեկնածու, ասիստենտ
24. Քամալյան Արևիկ Սերգեյի, բան. գիտ. թեկնածու, ասիստենտ
25. Ֆալակյան Մանուկ Հարությունի, բան. գիտ. թեկնածու, ասիստենտ
26. Կիրակոսյան Մարիամ Վրույրի, ասիստենտ
27. Համբարձումյան Ռիմա Սերժիկի, ասիստենտ
28. Գրիգորյան Նելսոն Գրիգորի, դասախոս
29. Եզեկյան Լիլիթ Լևիկի, դասախոս

Համատեղողներ

1. Տոնոյան Թադևոս Վոլոդյայի, բան. գիտ. թեկնածու, դոցենտ
2. Չոլաքյան Հակոբ Մարտայի, բան. գիտ. թեկնածու, ասիստենտ
3. Մելքոնյան Լուիզա Արմենի, բան. գիտ. թեկնածու, դասախոս
4. Սարգսյան Լիանա Սամվելի, բան. գիտ. թեկնածու, դասախոս
5. Պապիկյան Լիլիթ Միհերի, դասախոս

Ուսումնաօժանդակ աշխատակիցներ

1. Մելքոնյան Լուիզա Արմենի, բան. գիտ. թեկնածու, ավագ լաբորանտ
2. Սարգսյան Լիանա Սամվելի, բան. գիտ. թեկնածու, ավագ լաբորանտ
3. Պապիկյան Լիլիթ Միհերի, ավագ լաբորանտ

Ըստ ընդհանուր ուղղությունների՝ ամբիոնում կատարված գիտական աշխատանքների ամփոփում

Հայոց լեզվի ամբիոնը 2014-2015 թթ. շարունակել է իր գիտական և ուսումնական բնականոն աշխատանքները:

Ամբիոնի գիտական ուսումնասիրության ուղղությունները բազմազան են, բայց շատ որոշակի՝ արդի հայերենի կանոնարկման հարցեր, արևելահայերենի և արևմտահայերենի առնչություններ, թարգմանչական գործ, հաղորդակցման և խոսքի մշակույթի արդիական հիմնախնդիրներ և այլն: Նշված ուղղություններով ամբիոնի անդամները իրականացրել են գիտական և մեթոդական աշխատանքներ. գրվել են գիտական հոդվածներ, հրատարակվել մենագրություններ, կազմվել են ուսումնամեթոդական ձեռնարկներ ինչպես մասնագիտական (բանասիրության), այնպես էլ ոչ մասնագիտական ֆակուլտետների ուսանողների համար: Նախատեսված նոր դասընթացի համար («Հայոց լեզու և խոսքի մշակույթ») հրատարակվել է ուսումնական ձեռնարկ (Գիրք Ա, 2014, Գիրք Բ, 2015):

Ամբիոնի անդամները հանդես են եկել համալսարանական, հանրապետական և միջազգային գիտաժողովներում. զեկուցումներ են կարդացվել նաև արտերկրում՝ Բագրատ Ներսիսյան (ԵՊՀ-ի և Թբիլիսիի պետական համալսարանի համատեղ միջազգային գիտաժողով՝ «Շիլակաձեն հայերենագետ», Եր., 2014), Փառանձեմ Մեյթիխանյան (Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Գևորգյան հոգևոր ճեմարանի 140-ամյակին նվիրված միջազգային գիտաժողով, Էջմիածին, 2014, Հովհ. Թումանյանի 145-ամյակին նվիրված հանրապետական գիտաժողով, Եր., 2014), Յու. Ավետիսյան (Մայրենիի օրվան նվիրված «Հայրենիք և լեզու» հանրապետական գիտաժողով, Եր., 2015), Հակոբ Չոլաքյան (Բեյրութի Հայկազյան համալսարանի միջազգային եռօրյա գիտաժողով՝ «Սուրիոյ հայերը», Բեյրութ, 2015): 2015 թ. ապրիլին «Ակադեմիկոս Գ. Բ. Ջահուկյանը և լեզվաբանական միտքը» հանրապետական գիտաժողովին մասնակցել են դոցենտներ Բ. Ներսիսյանը, Փ. Մեյթիխանյանը, Ա. Սարգսյանը:

Հայոց լեզվի ամբիոնը 2014 թ.-ից նախաձեռնել է գրական հայերենի կանոնարկման խնդիրների վերաբերյալ ամենամյա քննարկումների շարք՝ «Արդի գրական հայերենը. կանոն և զարգացում» խորագրով: 2015 թ. ապրիլի 8-ին տեղի է ունեցել այդ շարքի երկրորդ նախագծի («Օտարաբանություններ և փոխառություններ») քննարկումը, որին մասնակցել են մասնագետներ ՀՀ ուսումնական տարբեր հաստատություններից, կազմակերպություններից:

Հայ բանասիրության ֆակուլտետում գրավոր աշխատանքների կազմակերպումն ու ստուգումը միօրինակ դարձնելու, ընդհանուր և միասնական չափանիշներով առաջնորդվելու նպատակով ամբիոնը նախաձեռնել և իրականացրել է մեթոդական ուղեցույցի հրատարակությունը (2015):

Շարունակվել են թարմացվել և արդիականացվել մագիստրոսական ծրագրերը. ավելացվել են թարգմանչական գործին վերաբերող նոր դասընթացներ:

Թեկնածուական ատենախոսություն են պաշտպանել ամբիոնի ասպիրանտներ Լուիզա Մելքոնյանը («Բառապաշարային տեղաշարժերը արդի հայերենում»), Լիլիթ Պապիկյանը («Գ. Սարյանի պոեմների և բալլադների խոսքարվեստը»): Պաշտպանության են երաշխավորվել ևս երկուսը:

Ամբիոնի ասիստենտներ Լևոն Ավետիսյանը և Շուշան Գևորգյանը 2015 թ. ստացել են դոցենտի գիտական կոչում:

Ամբիոնն ունի 4 ասպիրանտ, ովքեր ներգրավված են ամբիոնի աշխատանքներում:

Հրատարակություններ

Դասագիրք	Մենագրություն	Ուսումնական ձեռնարկ	Ուսումնամեթոդական ձեռնարկ	Հոդված	Ձեկուցման թեզիս
3	2	1	1	21	4

Գիտական և ուսումնամեթոդական հրատարակությունների ցանկ

Դասագիրք

1. *Ա. Լ. Սարգսյան, Լ. Կ. Եզեկյան, Ռ. Կ. Սաքապետոյան,* Հայոց լեզու (դասագիրք ավագ դպրոցի հումանիտար հոսքի 10-րդ դասարանի համար, երկրորդ՝ վերամշակված հրատարակություն), «Մակմիլան-Արմենիա» հրատ., Երևան, 2014, 224 էջ:
2. *Ա. Լ. Սարգսյան, Լ. Կ. Եզեկյան, Ռ. Կ. Սաքապետոյան,* Հայոց լեզու (դասագիրք ավագ դպրոցի ընդհանուր և բնագիտամաթեմատիկական հոսքերի 10-րդ դասարանի համար, երկրորդ՝ վերամշակված հրատարակություն), «Մակմիլան-Արմենիա» հրատ., Երևան, 2014, 208 էջ:
3. *Յու. Ս. Ավետիսյան,* Հայոց լեզու և խոսքի մշակույթ, Գիրք Ա, «Զանգակ-97» հրատ., Երևան, 2014, 312 էջ:

Մենագրություն

1. *Ա. Ս. Մուրադյան,* Հայերենի գործուն ածանցների արժույթը (կապակցելիությունը) ըստ ժամանակակից մամուլի, «Լեգալ Պլյուս» հրատ., Երևան, 2015, 160 էջ:
2. *Ռ. Կ. Սաքապետոյան,* Բառգրքույկ. նոր և նորակազմ բառեր հայերենում, ԵՊՀ հրատ., Երևան, 2014, 78 էջ:

Ուսումնական ձեռնարկ

1. *Ա. Ա. Տեր-Մինասյան, Ա. Զ. Ադիլխանյան, Ա. Լ. Սարգսյան, Լ. Գ. Թելյան, Յու. Ս. Ավետիսյան, Ն. Վ. Ներսիսյան, Շ. Ս. Գևորգյան,* Հայոց լեզու և խոսքի մշակույթ, Գիրք Բ, ԵՊՀ հրատ., Երևան, 2015, 340 էջ:

Ուսումնամեթոդական ձեռնարկ

1. *Լ. Ա. Մելքոնյան, Լ. Ս. Սարգսյան, Լ. Վ. Ավետիսյան,* Մեթոդական ուղեցույց ուսանողների գիտելիքների ստուգման ու գնահատման եղանակների և ընթացակարգի վերաբերյալ, ԵՊՀ հրատ., Երևան, 2015, 28 էջ:

Հոդված

1. *Ա. Զ. Ադիլխանյան,* Տերմինային տեղաշարժերը արդի գրական հայերենում, «Հայագիտական հանդես», h. 4 (28), Երևան, 2014, էջ 26-41:
2. *Ա. Լ. Սարգսյան,* Քերականական համաձայնության ըմբռնումը, «Բանբեր Երևանի համալսարանի. Բանասիրություն», h. 3 (144), ԵՊՀ հրատ., Երևան, 2014, էջ 45-52:
3. *Թ. Վ. Տոնոյան,* Բանի և հացի համընկալումը. Դանիել Վարուժան, «Էջմիածին» հանդես, Թ, Երևան, 2014, էջ 129-138:

4. *Թ. Վ. Տոնոյան,* Ջենով Հովան. ազգային լեզվամտածողական համակարգի դրսևորումները «Սասնա ծռեր» էպոսում, «Գարուն», հ. 11-12, Երևան, 2014, էջ 105-112:
5. *Թ. Վ. Տոնոյան,* Ներածություն տեքստի, «Գարուն», հ. 9-10, Երևան, 2014, էջ 68-73:
6. *Թ. Վ. Տոնոյան,* Երգը՝ խոսքի կերպավորման և խորհրդանշայնացման բարձրագույն աստիճան, «Էջմիածին» հանդես, Դ, Ս. Էջմիածին, 2015, էջ 93-100:
7. *Լ. Ա. Մելքոնյան,* Արևմտահայերենից արևելահայերեն բառերի ներթափանցման ուղիները, «Բանբեր Երևանի համալսարանի. Բանասիրություն», հ. 3 (144), Երևան, 2014, էջ 53-59:
8. *Լ. Ա. Մելքոնյան,* Բառաբարդման կաղապարները նորաբանություններում, «Բանբեր Երևանի համալսարանի. Բանասիրություն», հ. 1 (16), Երևան, 2015, էջ 52-60:
9. *Լ. Լ. Եզեկյան,* Մկրտիչ Արմենի արձակի բառապաշարը, «Հայագիտական հանդես», հ. 1 (29), Երևան, 2015, էջ 69-80:
10. *Լ. Մ. Պապիկյան,* Փոխառությունները և օտարաբանությունները Գ. Սարյանի պոեմներում և բալլադներում, «Կրթությունը և գիտությունը Արցախում», Երևան, հ. 1-2, 2014, էջ 169-175:
11. *Լ. Ս. Սարգսյան,* Բայերի սեռային անցումներ արդի արևելահայերենում, «Բանբեր Երևանի համալսարանի. Հայագիտություն», հ. 144. 1, Երևան, 2014, էջ 45-54:
12. *Լ. Վ. Ավետիսյան,* Ցեղասպանագիտությանը նվիրված գրքի շնորհանդես, «Բանբեր Երևանի համալսարանի. Հայագիտություն», հ. 1 (16), Երևան, 2015, էջ 77-83:
13. *Կ. Ռ. Միքայելյան,* Երգող ասեղնապատկերներ, «Խոսող ժայռապատկերներ» արվեստաբանական նյութերի ժողովածու, Երևան, 2015, էջ 6-14:
14. *Յու. Ս. Ավետիսյան,* Արևելահայերենի և արևմտահայերենի հնչյունական, բառային և քերականական տարբերություններ, «Կրթությունը և գիտությունը Արցախում», հ. 1-2, Երևան, 2014, էջ 71-78:
15. *Յու. Ս. Ավետիսյան,* Արևմտահայերեն. խնդիրներ և հեռանկարներ, «Հայագիտության հարցեր» հանդես, հ. 2, Երևան, 2014, էջ 23-32:
16. *Յու. Ս. Ավետիսյան,* Խոսքի արտահայտչականություն. մեղմասություն և փոխարկում, «Բանբեր Երևանի համալսարանի. Հայագիտություն», հ. 1 (16), Երևան, 2015, էջ 67-77:
17. *Շ. Ս. Գևորգյան,* Խոսակցական լեզու, «Կանթեղ», հ. 1 (62), Երևան, 2015, էջ 46-53:
18. *Շ. Ս. Գևորգյան,* Խոսակցական լեզվի հնչյունական ու բառապաշարային առանձնահատկությունները, «Հայագիտական հանդես», հ. 1 (29), Երևան, 2015, էջ 14-22:
19. *Շ. Ս. Գևորգյան,* Խոսակցական լեզվի ձևաբանական ու բառապաշարային առանձնահատկությունները, «Հայագիտական հանդես», հ. 2 (30), Երևան, 2015, էջ 25-35:
20. *Ս. Վ. Գաբրիելյան,* Փոխառությունների ոճական արժեքը Ե. Չարենցի պոեզիայում, «Կրթությունը և գիտությունը Արցախում», հ. 3-4, Երևան, 2014, էջ 61-68:
21. *Ք. Ա. Սուքիասյան, Ա. Ա. Սուքիասյան,* Համացանցային նորաբանությունների բառակազմական մի շարք առանձնահատկություններ, «Կրթությունը և գիտությունը Արցախում», հ. 1-2, Երևան, 2015, էջ 11-14:

Զեկուցման թեզիս

1. *Լ. Գ. Թելյան,* Բազմաբաղադրիչ բարդ նախադասությունների տեսությունն ըստ Ս. Աբրահամյանի, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Ս. Գ. Աբրահամյանի 90-ամյակին նվիրված հանրապետական գիտաժողով, «Ասողիկ» հրատ., Երևան, 2015, էջ 21-22:
2. *Կ. Ռ. Միքայելյան,* Հայերենում բառային ներքին տեղաշարժերը և արտաքին փոխառությունները ըստ ժամանակագրության, «Հայերենագիտության հիմնահարցեր և զարգացման հեռանկարներ», Միջազգային գիտաժողովի զեկուցումների ժողովածու, ԵՊՀ հրատ., Երևան, 2015, էջ 144-160:
3. *Շ. Ս. Գևորգյան,* Ժամանակի քերականական կարգի ըմբռնումը, «Հայերենագիտության հիմնահարցեր և զարգացման հեռանկարներ», Միջազգային գիտաժողովի զեկուցումների ժողովածու, ԵՊՀ հրատ., Երևան, 2015, էջ 40-47:

4. *Ռ. Կ. Սաքապետոյան,* Լեզվական նորմը և լեզվի ներքին տեղաշարժերը, «Հայերենագիտության հիմնահարցեր և զարգացման հեռանկարներ», Միջազգային գիտաժողովի զեկուցումների ժողովածու, ԵՊՀ հրատ., Երևան, 2015, էջ 212-217:

ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆ

Ամբիոնի վարիչ՝ Աբաջյան Աննա Հենրիկի, բան. գիտ. դոկտոր, պրոֆեսոր

Պրոֆեսորադասախոսական կազմը

1. Գրիգորյան Սուսաննա Ալբերտի, բան. գիտ. թեկնածու, դոցենտ
2. Դիլբարյան Նարինե Հակոբի, բան. գիտ. թեկնածու, դոցենտ
3. Խաչատրյան Ալվարդ Ալբերտի, բան. գիտ. թեկնածու, դոցենտ
4. Հանայան Գաղթուհի Կարապետի, բան. գիտ. թեկնածու, դոցենտ
5. Յուզբաշյան Անահիտ Լյուդվիգի, բան. գիտ. թեկնածու, դոցենտ
6. Պողոսյան Նորայր Բերիկի, բան. գիտ. թեկնածու, դոցենտ
7. Պարոնյան Նաիրա Վրույրի, բան. գիտ. թեկնածու, ասիստենտ
8. Շաբոյան Ռուզաննա Սերժիկի, ասիստենտ
9. Կարապետյան Աստղիկ Ալբերտի, դասախոս
10. Մարկոսյան Նարինե Վարուժանի, դասախոս

Համատեղողներ

1. Մուրադյան Վիկտորյա Ռուդիկի, բան. գիտ. թեկնածու, ասիստենտ
2. Սանթուրջյան Մարի Գարեգինի, ասիստենտ

Ուսումնաօժանդակ աշխատակիցներ

1. Մուրադյան Վիկտորյա Ռուդիկի, բան. գիտ. թեկնածու, ավագ լաբորանտ

Ըստ ընդհանուր ուղղությունների՝ ամբիոնում կատարված գիտական աշխատանքների ամփոփում

Հայոց լեզվի պատմության ամբիոնի աշխատակիցները հաշվետու տարում զբաղվել են գրաբարի, միջին հայերենի, բարբառագիտության, հայոց լեզվի պատմության հիմնահարցերի ուսումնասիրությամբ և այդ գիտակարգերին վերաբերող դասընթացների մշակմամբ ու կատարելագործմամբ, ինչպես նաև գիտահետազոտական աշխատանքով:

Ամբիոնի դասախոսների մեծ մասը ղեկավարել է ՈՒԳԸ նիստեր և զեկուցումներ: Շատ դասախոսներ մասնակցել են որակավորման բարձրացման տարբեր դասընթացների:

2014 թ. ամբիոնը կազմակերպել է «Հայերենագիտության հիմնահարցեր և զարգացման հեռանկարներ» խորագրով հանրապետական գիտաժողովը, որին մասնակցել են ամբիոնի գրեթե բոլոր անդամները և բազմաթիվ մասնակիցներ ՀՀ տարբեր բուհերից և արտերկրից:

2015 թ. տեղի է ունեցել ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Ս. Գ. Աբրահամյանի 90-ամյակին նվիրված հանրապետական գիտաժողով, որտեղ զեկուցումներով հանդես են եկել նաև ամբիոնի վարիչ, պրոֆ. Ա. Աբաջյանը, ամբիոնի անդամներ Ն. Դիլբարյանը և Ա. Խաչատրյանը:

Ամբիոնի դասախոսներ Աստղիկ Կարապետյանը և Նարինե Մարկոսյանը 2015 թ. հունիսին պաշտպանել են թեկնածուական ատենախոսություններ: Ամբիոնում թարմացվել են հիմնական առարկայական ծրագրերը:

Ամբիոնն ունի երկու հայցորդ, մեկ առկա ասպիրանտ, մեկ՝ հեռակա:

Հրատարակություններ

Դասագիրք	Մենագրություն	Ուսումնական ձեռնարկ	Ուսումնամեթոդական ձեռնարկ	Հոդված	Զեկուցման թեզիս
-	1	1	-	25	3

Գիտական և ուսումնամեթոդական հրատարակությունների ցանկ

Մենագրություն

1. *Ա. Հ. Աբաջյան,* Անցյալ կատարյալ ժամանակը հայերենում, ԵՊՀ հրատ., Երևան, 2015, 177 էջ:

Ուսումնական ձեռնարկ

1. *Ն. Հ Դիլբարյան, Ա. Ա. Խաչատրյան, Ա. Լ. Յուզբաշյան,* Հայերենի ավանդական ուղղագրությունը և միջին դարերում կրած փոփոխությունները, «Գիտություն» հրատ., Երևան, 2015, 84 էջ:

Հոդված

1. *Ա. Հ. Աբաջյան,* Տեղաշարժեր արդի հայերենի բայի և խոնարհման համակարգում, «Հայերենագիտության հիմնահարցեր և զարգացման հեռանկարներ» գիտաժողովի զեկուցումների ժողովածու, Երևան, 2015, էջ 5-17:
2. *Ա. Հ. Աբաջյան,* Տեղաշարժեր արդի հայերենի անկանոն բայերի համակարգում, «Կրթությունը և գիտությունը Արցախում», N 3-4, Երևան, 2014, էջ 54-60:
3. *Ա. Կ. Կարապետյան,* Միջինհայերենյան բառերը և նորաբանությունները Ամիրդովլաթ Ամասիացու «Օգուտ բժշկութեան» երկում, «Բանբեր Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարանի», Երևան, N 1, 2014, էջ 123-131:
4. *Ա. Կ. Կարապետյան,* Իմաստային նորակազմությունները Ամիրդովլաթ Ամասիացու «Օգուտ բժշկութեան» երկում, «Հայագիտական հանդես», N 1, Երևան, 2015, էջ 34-41:
5. *Ա. Լ. Յուզբաշյան,* Դասական գրաբարի ձևաբանական նորմերը և նրանց պատմական զարգացումը /հոլովական համակարգ/, «Հայերենագիտության հիմնահարցեր և զարգացման հեռանկարներ» գիտաժողովի զեկուցումների ժողովածու, Երևան, 2015, էջ 161-173:
6. *Ն. Հ. Դիլբարյան,* Հայկական բնականունների իմաստային դաշտերը, «Զահուկյանական ընթերցումներ-2014» միջազգային գիտաժողովի զեկուցումներ, Երևան, 2014, էջ 25-33:
7. *Ն. Հ. Դիլբարյան,* Հայկական բնականունների կառուցվածքը, Հայ գիտական բարբառագիտության հիմնադրման 100-ամյակին նվիրված գիտաժողով, Իջևան, 2015, էջ 80-90:

8. *Ն. Հ. Դիլբարյան,* Նորակազմ բառերը Առաքել Սյունեցու «Ադամգրքում», «Հայերենագիտության հիմնահարցեր և զարգացման հեռանկարներ» գիտաժողովի զեկուցումների ժողովածու, Երևան, 2015, էջ 65-73:
9. *Ն. Հ. Դիլբարյան,* Փոխառյալ միջինհայերենյան կազմությունները Առաքել Սյունեցու պոեմներում, «ՎԷմ», N 2, Երևան, 2015, էջ 74-90:
10. *Ա. Կ. Սաքապետոյան,* Լեզվական նորմը և լեզվի ներքին տեղաշարժերը, «Հայերենագիտության հիմնահարցեր և զարգացման հեռանկարներ» գիտաժողովի զեկուցումների ժողովածու, Երևան, 2015, էջ 212-217:
11. *Ն. Վ. Մարկոսյան,* Գրաբարի ապառնի դերբայը, «Բանբեր Երևանի համալսարանի. Բանասիրություն», 1 (30), Երևան, 2014, էջ 46-52:
12. *Ն. Բ. Պողոսյան,* Կրոնաեկեղեցական նորահայտ բառեր ԺԶ-ԺԸ դարերի աղբյուրներում, «Էջմիածին», N Դ, 2014, էջ 105-122:
13. *Ն. Բ. Պողոսյան,* Դարձվածային նոր միավորներ XVI-XVIII դարերի հայերեն աղբյուրներում, «Բանբեր Երևանի համալսարանի», թիվ 2, Երևան, 2014, էջ 107-122:
14. *Ն. Բ. Պողոսյան,* Պատմական համանունության դրսևորումը հայերենում, «Զահուկյանական ընթերցումներ» գիտաժողովի զեկուցումներ, Երևան, 2014, էջ 159-167:
15. *Ն. Բ. Պողոսյան,* «Թիւք պատրիարքաց» Երուսաղեմի հայոց պատրիարքների անտիպ ժամանակագրությունը, «Էջմիածին», թիվ Ա, 2015, էջ 44-59:
16. *Ն. Բ. Պողոսյան,* Եվրոպական փոխառյալ բառեր ուշ միջնադարի հայերեն աղբյուրներում, «Հայերենագիտության հիմնահարցեր և զարգացման հեռանկարներ» միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածու, Երևան, 2014, էջ 194-212:
17. *Ն. Բ. Պողոսյան,* Պատմական համանունության դրսևորումը հայերենում, «Զահուկյանական ընթերցումներ» միջազգային գիտաժողով, Երևան, 2014, էջ 44-59:
18. *Ն. Բ. Պողոսյան,* Հայկաբանության ըմբռնումը հայ գիտական և ուսումնական ոլորտներում /ԺԷ-ԺԹ դդ./, «Էջմիածին», նոյեմբերի 21-22, 2014, էջ 58-65:
19. *Ա. Ա. Խաչատրյան,* Պահլավերենից և նոր պարսկերենից փոխառված հայոց անձնանուններ, «Հայերենագիտության հիմնահարցեր և զարգացման հեռանկարներ» միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածու, Երևան, 2014, էջ 80-89:
20. *Ս. Ա. Գրիգորյան,* Ապառնի և ենթակայական դերբայների ձևագործառական բնութագիրը Կորյունի «Վարք Մաշտոցի» երկում, Գիտական հոդվածների ժողովածու, թիվ 16, Երևան, 2014, էջ 511-520:
21. *Ս. Ա. Գրիգորյան,* «Գրաբարյան բնագրերի աշխարհաբար թարգմանություն» առարկայի դասավանդումը մագիստրատուրայում, «Մանկավարժական միտք», թիվ 1-2, Երևան, 2015, էջ 59-65:
22. *Ս. Ա. Գրիգորյան,* Նորակազմությունները Կոստան Զարյանի չափածոյում, «Հայերենագիտության հիմնահարցեր և զարգացման հեռանկարներ» միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածու, Երևան, 2015, էջ 48-64:
23. *Ն. Վ. Պարոնյան,* Սարգիս Բերիացու «Յաղագս աշխարհի եւ այլ մասնաւոր իրաց» երկի բառակազմությունը, ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, N 16, Երևան, 2014, էջ 529-538:
24. *Գ. Կ. Հանանյան,* Էդ. Աղայանը բարբառագետ, «Բանբեր Երևանի համալսարանի», թիվ 2/143, Երևան, 2014, էջ 154-160:
25. *Գ. Կ. Հանանյան,* Հին հայերենի բայական զարտուղությունների հետագա դրսևորումները, «Հայերենագիտության հիմնահարցեր և զարգացման հեռանկարներ» միջազգային գիտաժողովի զեկուցումների ժողովածու, Երևան, 2015, էջ 99-116:

Զեկուցման թեզիս

1. *Ա. Հ. Աբաջյան,* Տեղաշարժեր արդի հայերենի անկանոն բայերի համակարգում, ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտ, Զեկուցումների դրույթներ (Ս. Գ. Աբրահամյանի 90-ամյակին նվիրված հանրապետական գիտաժողով), Երևան, 2015, էջ 3-4:

2. *Ն. Հ. Դիլբարյան,* Հոմանշությունը և բազմիմաստությունը տեղանուններում, ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտ, Զեկուցումների դրույթներ (Ս. Գ. Աբրահամյանի 90-ամյակին նվիրված հանրապետական գիտաժողով), Երևան, 2015, էջ 16-17:
3. *Ա. Ա. Խաչատրյան,* Ածանցների գործառական արժեքը հայկական անուններում, ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտ, Զեկուցումների դրույթներ (Ս. Գ. Աբրահամյանի 90-ամյակին նվիրված հանրապետական գիտաժողով), Երևան, 2015, էջ 26:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆ

Ամբիոնի վարիչ՝ *Պետրոսյան Վարդան Զորիկի, բան. գիտ. թեկնածու, դոցենտ*

Պրոֆեսորադասախոսական կազմը

1. Հովսեփյան Լիանա Սամվելի, բան. գիտ. դոկտոր, պրոֆեսոր
2. Աբրահամյան Աշոտ Սերգեյի, բան. գիտ. թեկնածու, դոցենտ
3. Հայրապետյան Աշոտ Պուշկինի, բան. գիտ. թեկնածու, դոցենտ
4. Հարությունյան Ծովինար Ռաֆիկի, բան. գիտ. թեկնածու, դոցենտ
5. Ավետյան Սարգիս Ռուդիկի, բան. գիտ. թեկնածու, դոցենտ
6. Մկրտչյան Նելլի Նորիկի, բան. գիտ. թեկնածու, ասիստենտ
7. Գրիգորյան Կարինե Բաղդասարի, դասախոս

Համատեղողներ

1. Բայրամյան Հրաչիկ Սմբատի, բան. գիտ. թեկնածու, դոցենտ

Ուսումնաօժանդակ աշխատակիցներ

1. Ասատրյան Էդիտա Էդիկի, ավագ լաբորանտ

Ըստ ընդհանուր ուղղությունների՝ ամբիոնում կատարված գիտական աշխատանքների ամփոփում

2014-2015 ուստարում ամբիոնի պրոֆեսորադասախոսական կազմը դասավանդումը զուգակցել է ուսումնամեթոդական և գիտահետազոտական աշխատանքի հետ: Ամբիոնի գիտական հետաքրքրությունների շրջանակում են եղել լեզվաբանության տեսության, կառուցվածքային լեզվաբանության, համակարգչային լեզվաբանության, լեզվաբանական նշանագիտության, հայերենի պատմահամեմատական ուսումնասիրության, հ.-ե. լեզուների համեմատական քերականության, դասական լեզուների դասավանդման հետ կապված բազմաթիվ հիմնահարցեր:

Ամբիոնի նախաձեռնությամբ ապրիլի 2-ին կազմակերպվել է հանրապետական գիտական նստաշրջան՝ նվիրված անվանի լեզվաբան, ակադ. Գ. Բ. Ջահուկյանի ծննդյան 95-ամյակին: Ներկայացված զեկուցումների մի մասը անդրադարձ էր մեծանուն լեզվաբանի գիտական վաստակի տարբեր կողմերին, իսկ մյուսներում քննարկվում էին հայերենագիտության և ընդհանուր լեզվաբանական բազմաթիվ հիմնահարցեր: Ամբիոնի անդամները զեկուցումներով մասնակցել են հանրապետական գիտական նստաշրջանների:

Հաշվետու ուստարում ամբիոնի դասախոսների աշխատասիրությամբ հրատարակվել է 1 գիրք, 11 հոդված, վերահրատարակվել է ուսումնամեթոդական 1 ձեռնարկ:

Հրատարակություններ

Դասագիրք	Մենագրություն	Ուսումնական ձեռնարկ	Ուսումնամեթոդական ձեռնարկ	Հոդված	Զեկուցման թեզիս	Հոդվածների ժողովածու
-	-	-	1	11	-	1

Գիտական և ուսումնամեթոդական հրատարակությունների ցանկ

Ուսումնամեթոդական ձեռնարկ

«Անձ և սոցիալական միջավայր» ԳՀ լաբորատորիայի գործունեության հիմնական ուղղություններն են՝ տեղայնացնել և մշակել սոցիալ-մշակութային համատեքստում անձնային գործոնների ուսումնասիրմանն ուղղված մեթոդիկաներ, ուսումնասիրել սոցիալ-մշակութային փոփոխությունների

պայմաններում անձի արժեմշակութային կողմնորոշումների և համոզմունքների ազդեցությունը նրա ինքնակարգավորման վարքաձևերի ու սուբյեկտիվ բարեկեցության վրա:

Հաշվետու ժամանակահատվածում շարունակվել է միջազգային համագործակցությունը: Լաբորատորիան ընդգրկվել է երկու միջմշակութային նախագծերի աշխատանքներում.

- «Անձի սուբյեկտիվ բարեկեցություն և սեփական իրավունքները պաշտպանելու դիրքորոշումներ» ուսումնասիրություն (Գդանսկի համալսարանի հոգեբանության ինստիտուտ):
- «Արդարության դիրքորոշումներ և ինքնակարգավորման վարքաձևեր» ուսումնասիրություն (Քսիամենի համալսարան, Չինաստան):

Իրականացվել է մեթոդիկաների թարգմանություն, իսկ թեստավորումը և հարցումը իրականացվել են միջմշակութային հետազոտությունների պահանջներին համապատասխան երկու խումբ ուսանողների շրջանում (440 մասնակից): Ուսումնասիրության մեջ ընդգրկվել են 22-30 տարեկան ուսանողներ տարբեր բուհերից: Իրականացվել են նաև մեթոդիկաների հարմարեցմանն ուղղված վիճակագրական վերլուծություններ:

Լաբորատորիայի աշխատակիցների համար կազմակերպվել է գիտագործնական սեմինար R-վիճակագրական փաթեթի վերաբերյալ բազային գիտելիքներ ձեռք բերելու ուղղությամբ:

ՖԻԶԻԿԱՅԻ ՖԱԿՈՒԼՏԵՏ

Դեկան՝ *Ավագյան Ռոլանդ Մամիկոնի, ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ, ֆիզմաթ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր*

Դեկանի տեղակալ՝ *Ասլանյան Լևոն Սուրենի, ֆիզմաթ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր*

Ֆակուլտետի մասնագիտությունները եւ մասնագիտացումները

Շիֆր	**Մասնագիտություն՝**
010600	Ֆիզիկա
011100	Միջուկային ռեակտորների ֆիզիկա
010500	Կիրառական մաթեմատիկա և ֆիզիկա

Մասնագիտացումներ՝	Աստղաֆիզիկա
(մագիստրոսական ծրագրեր)	Մակրոմոլեկուլների ֆիզիկա
	Միջուկային ֆիզիկա և ատոմային էներգետիկա
	Պինդ մարմնի ֆիզիկա
	Տեսական ֆիզիկա
	Օպտիկա
	Մաթեմատիկական ֆիզիկայի մեթոդներ, գծային և ոչ գծային մոտարկումներ

ՀՀ ԳԱԱ ակադեմիկոսներ և թղթակից անդամներ

1. Չիլինգարյան Յուրի Սերգեյի
2. Չուբարյան Էդվարդ Վարդանի
3. Սեդրակյան Դավիթ Միհրի
4. Ավագյան Ռոլանդ Մամիկոնի (թղթակից անդամ)
5. Կարայան Համլետ Սուրենի (թղթակից անդամ)
6. Կիրակոսյան Ալբերտ Ավետի (թղթակից անդամ)
7. Կրյուչկյան Գագիկ Յուրիի (թղթակից անդամ)

Կրթական աստիճան, մասնագիտություն	*Ուսանողների թիվը՝ 325*							
	I կուրս		II կուրս		III կուրս		IV կուրս	
	պպ	վճ	պպ	վճ	պպ	վճ	պպ	վճ
Բակալավրիատ								
Ֆիզիկա	25	38	17	9	33	24	5	4
Միջուկային ռեակտորների ֆիզիկա	19	2	11	10	10	14	-	-
Կիրառական մաթեմ. և ֆիզիկա	-	-	3	4	5	14	-	-
Ընդամենը	**44**	**40**	**31**	**23**	**48**	**52**	**5**	**4**
Մագիստրատուրա								
Ֆիզիկա	10	20	12	18				
Միջուկային ռեակտորների ֆիզիկա	5	4	2	7				
Ընդամենը	**15**	**24**	**14**	**25**				

Հեռակա ուսուցում

Կրթական աստիճան, մասնագիտություն	*Ուսանողների թիվը՝ 11*				
	I կուրս	II կուրս	III կուրս	IV կուրս	V կուրս
Բակալավրիատ					
Ֆիզիկա	-	-	-	2	9

Քննաշրջանների արդյունքներ

Ձմեռային քննաշրջան

Կրթական աստիճան, մասնագիտություն, կուրս	Քննաշրջանին մասնակցել են	Անբավարար գնահատական ստացած ուսանողների թիվը		Գերազանցիկների թիվը	Առաջադիմության %-ը
		պպ	վճ		
Բակալավրիատ					
Ֆիզիկա					
1-ին	63	-	27	8	57
2-րդ	26	-	5	6	81
3-րդ	57	3	10	13	77
4-րդ	9	-	3	-	67
Միջուկային ռեակտորների ֆիզիկա					
1-ին	21	7	-	1	67
2-րդ	21	1	6	1	67
3-րդ	24	-	11	1	54
Կիրառ. մաթեմ. և ֆիզիկա					
2-րդ	7	-	1	1	86
3-րդ	19	-	9	1	53
Ընդամենը	**247**	**11**	**72**	**32**	**66**
Մագիստրատուրա					
Ֆիզիկա					
1-ին	30	-	-	17	100
2-րդ	30	-	-	23	100
Միջուկային ռեակտորների ֆիզիկա					
1-ին	9	-	-	3	100
2-րդ	9	-	-	2	100
Ընդամենը	**78**	**-**	**-**	**45**	**100**

Ամառային քննաշրջան

Կրթական աստիճան, մասնագիտություն, կուրս	Քննաշրջանին մասնակցել են	Անբավարար գնահատական ունեցող ուսանողների թիվը		Գերազանցիկների թիվը	Առաջադիմության %-ը
		պպ	վճ		
Բակալավրիատ					
Ֆիզիկա					
1-ին	68	2	31	11	51
2-րդ	26	1	6	7	73
3-րդ	57	-	14	19	75
4-րդ	9	-	2	3	78
Միջուկային ռեակտորների ֆիզիկա					
1-ին	22	1	16	-	23
2-րդ	21	2	7	1	57
3-րդ	24	-	8	3	67
Կիրառ. մաթեմ. և ֆիզիկա					
2-րդ	8	-	2	2	75
3-րդ	20	1	8	2	55
Ընդամենը	**255**	**7**	**94**	**48**	**60**
Մագիստրատուրա					
Ֆիզիկա					
1-ին	30	-	-	19	100
Միջուկային ռեակտորների ֆիզիկա					
1-ին	7	1	-	2	86
Ընդամենը	**37**	**1**	**-**	**21**	**97**

Շրջանավարտներ

Մասնագիտություն	*Ընդամենը՝ 58 (22), այդ թվում նախորդ տարիներից՝ 2*		
	բակալավրիատ (գերազանցության դիպլոմով)		մագիստրատուրա
	առկա	հեռակա	
Ֆիզիկա	11 (2)	9	30 (19)
Միջուկային ռեակտորների ֆիզիկա	-	-	8 (1)
Ընդամենը	**11 (2)**	**9**	**38 (20)**

2014-2015 ուստարում հրատարակվել են

Դասագիրք	Մենագրություն	Ուսումնական ձեռնարկ	Ուսումնամեթոդական ձեռնարկ	Հոդված	Ձեկուցման թեզիս
1	1	2	1	113	24

Ֆակուլտետում գործող ամբիոնների թիվը՝ 7

ԱԿԱԴԵՄԻԿՈՍ ՎԻԿՏՈՐ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՖԻԶԻԿԱՅԻ ԵՎ ԱՍՏՂԱՖԻԶԻԿԱՅԻ ԱՄԲԻՈՆ

Ամբիոնի վարիչ՝ *Մուրադյան Ատոմ Ժորայի, ֆիզմաթ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր*

Պրոֆեսորադասախոսական կազմը

1. Սեդրակյան Դավիթ Միհերի, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, ֆիզմաթ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր, ամբիոնի պատվավոր վարիչ
2. Աբրահամյան Մարտին Գրիգորի, ֆիզմաթ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր
3. Բաղալյան Դավիթ Հայրապետի, ֆիզմաթ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր
4. Գևորգյան Աշոտ Հարությունի, ֆիզմաթ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր
5. Երիցյան Հոմերոս Սուրենի, ֆիզմաթ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր
6. Խաչատրյան Ժյուլվերն Բաղդասարի, ֆիզմաթ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր
7. Ղազարյան Միշա Արիստակեսի, ֆիզմաթ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր
8. Բաղալյան Համլետ Գուրգենի, ֆիզմաթ. գիտ. թեկնածու, դոցենտ
9. Գաբրիելյան Ռուբեն Ցոլակի, ֆիզմաթ. գիտ. թեկնածու, դոցենտ
10. Գրիգորյան Լյովա Նազարեթի, ֆիզմաթ. գիտ. թեկնածու, դոցենտ
11. Մխիթարյան Սամվել Արամի, ֆիզմաթ. գիտ. թեկնածու, դոցենտ
12. Նինոյան Ժիրայր Հովհաննեսի, ֆիզմաթ. գիտ. թեկնածու, դոցենտ
13. Պետրոսյան Պետիկ Գրիգորի, ֆիզմաթ. գիտ. թեկնածու, դոցենտ
14. Կարապետյան Էմիլյա Լիպարիտի, ֆիզմաթ. գիտ. թեկնածու, ասիստենտ
15. Հայրապետյան Մեխակ Վազգենի, ֆիզմաթ. գիտ. թեկնածու, ասիստենտ
16. Հարությունյան Մերուժան Զավենի, ասիստենտ

Համատեղողներ

1. Նիկողոսյան Արթուր Գարեգինի, ֆիզմաթ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր
2. Մաղաքյան Տիգրան Յուրիի, ֆիզմաթ. գիտ. դոկտոր, դոցենտ

Ուսումնաօժանդակ աշխատակիցներ

1. Մարտիրոսյան Ժակլին Ռոբերտի, ֆիզմաթ. գիտ. թեկնածու, ուսումն. լաբորատորիայի վարիչ
2. Հովհաննիսյան Լիլիթ Արարատի, ուսումն. լաբորատորիայի վարիչ
3. Արշակյան Արփիկ Լևիկի, ավագ լաբորանտ
4. Ենոքյան Հասմիկ Էդիկի, ավագ լաբորանտ
5. Հարությունյան Գրետա Գևորգի, ավագ լաբորանտ
6. Պետրոսյան Գոհար Վարազդատի, ավագ լաբորանտ
7. Ստեփանյան Մարգարիտա Արամայիսի, ավագ լաբորանտ
8. Քարաջյան Էլլա Հրաչիկի, ավագ լաբորանտ

Ըստ ընդհանուր ուղղությունների՝ ամբիոնում կատարված աշխատանքների ամփոփում

Հեռու-ռեզոնանսային Կապիցա-Դիրակյան դիֆրակցիային առնչվող իրավիճակի՝ մեր կողմից վերջերս կատարած վերաքննարկումը ատոմական ինտերֆերոմետրիայի համար երևան է հանել մի կարող հնարավորություն: Մենք ստացանք լայն իմպուլսային ճեղքման հնարավորություն ատոմի համընթաց շարժման համար, երբ խնդրի քննարկման մեջ ներառվեց ատոմի վերին էներգետիկ մակարդակի փոքր բնակեցումը:

Նանոչափային լայնական հատույթներով ուղիներում մասնիկային հոսքերի՝ պոտենցիալային արգելքների վրա քվանտային ցրման համար ձևակերպվել է քվանտամեխանիկական մոդելավորման մաթեմատիկական ապարատը, և լուսաբանվել բազմուղի ցրման ամպլիտուդների անալիտիկ հատկությունները:

Ստացված են նեյտրոնային աստղի պատյանում մագնիսաձայնային ալիքների տարածումը նկարագրող հավասարումները և դրանց լուծումները: Ալիքների կլանման օրինաչափությունները և բաբախիչների ռադիոճառագայթման սպեկտրի առանձնահատկություններն ուսումնասիրելու համար կհաշվարկվեն աստղի պատյանի նյութի կինետիկ գործակիցները:

Լուծված են երկկոմպոնենտ աստղի անկյունային արագության հետթռիչքային ռելաքսացիան նկարագրող հավասարումները:

Կատարվել է նաև կապույտ կոմպակտ թզուկ (BCD) գալակտիկաների սպեկտրալուսաչափական և վիճակագրական ուսումնասիրություն, սպեկտրալ բնութագրիչներով առանձնացված խտացումների համար չափվել են սեփական շարժումները:

Հրատարակություններ

Դասագիրք	Մենագրություն	Ուսումնական ձեռնարկ	Ուսումնամեթոդական ձեռնարկ	Հոդված	Ձեկուցման թեզիս
-	-	-	-	11	1

Գիտական և ուսումնամեթոդական հրատարակությունների ցանկ

Հոդված

1. *Г. Г. Бадалян, Х. М. Казарян, С. М. Яйлоян,* Зависимость парциальной площади молекул от третьей компоненты в лиотропных жидких кристаллах, “Известия НАН Армении, Физика”, 50, 2015, с. 111-117.
2. *Д. М. Седракян, М. В. Айрапетян,* Механизм радиоизлучения пульсаров, “Астрофизика”, 58, 2015, с. 145-170.
3. *Д. М. Седракян, А. Х. Багдасарян, Л. Р. Седракян,* Двухканальное рассеяние и излучение электрона в квантовой квазиоднородной яме, “Известия НАН Армении, Физика”, 50, 2015, с. 25-37.
4. *Д. М. Седракян, П. Г. Петросян, Л. Н. Григорян,* Влияние случайного потенциала на оптические свойства полупроводниковых CdSxSe1–x нанокристаллов, “Журнал технической физики”, 85, 2015, с. 94-99.
5. *Д. М. Седракян, А. С. Арутюнян, М. В. Айрапетян,* Поглощение магнитозвуковых волн в коре нейтронной звезды. Радиоизлучение пульсаров, “Астрофизика”, 57, 2014, с. 573-590.
6. *М. Г. Абрамян,* Вихри во вращающемся гравитирующем газовом диске, “Астрофизика”, 58, 2015, с. 89-107.
7. *A. H. Gevorgyan,* Absorption and Emission of Finite Layer of Chiral Photonic Crystal, “J.Contemporary Physics (Armenian Academy of Sciences)”, 50, 2015, p. 28-38.

8. *A. H. Gevorgyan, R. B. Alaverdyan, H. Gharagulyan, M. S. Rafayelyan, H. Grigoryan,* Diffusion in liquid crystals of two cholesterics with different pitches, "Journal of Nanophotonics", 9, 2015, 093591.
9. *A. Movsisyan, G. Muradyan,* Momentum state preparation of a two-level atom using Kapitza – Dirac diffraction, 44, 2014, p. 891.
10. *D. M. Sedrakian, A. S. Harutunyan, M. V. Hayrapetyan,* Magnetosonic waves in the crust of a neutron star, "Journal of Physics: Conference Series", 496, 2014, 012017.
11. *M. G. Abrahamyan*, The structure of solitary dipole vortises in rotating gaseous gravitating disk, "International Journal of Astronomy", 3, 2014, p. 35-39.

Զեկուցման թեզիս

1. *M. G. Abrahamyan,* Some structural features of vortises in gaseous gravitating disk. Int. Conference on Astrophysics and Space Science (APSS2015), 2015, Shanghai, China, 2015, p. 47.

ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՄԱԹԵՄԱՏԻԿԱՅԻ ԱՄԲԻՈՆ

Ամբիոնի վարիչ՝ *Գրիգորյան Մարտին Գևորգի, ֆիզմաթ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր*

Պրոֆեսորադասախոսական կազմը

1. Աֆյան Սերգեյ Ղազարի, ֆիզմաթ. գիտ. թեկնածու, դոցենտ
2. Հակոբյան Գագիկ Հովսեփի, ֆիզմաթ. գիտ. թեկնածու, դոցենտ
3. Ղազարյան Գայանե Գրիգորի, ֆիզմաթ. գիտ. թեկնածու, դոցենտ
4. Պողոսյան Առնակ Վալերիի, ֆիզմաթ. գիտ. թեկնածու, դոցենտ
5. Գալոյան Լևոն Նիկոլայի, ֆիզմաթ. գիտ. թեկնածու, ասիստենտ

Համատեղողներ

1. Եպիսկոպոսյան Սերգո Արմենակի, ֆիզմաթ. գիտ. թեկնածու, դոցենտ
2. Սարգսյան Արծրուն Արշալույսի, ֆիզմաթ. գիտ. թեկնածու, դոցենտ

Ուսումնաօժանդակ աշխատակիցներ

1. Սիրադեղյան Կարինե Սերյոժայի, ավագ լաբորանտ

Ըստ ընդհանուր ուղղությունների՝ ամբիոնում կատարված գիտական աշխատանքների ամփոփում

Դրամաշնորհային ծրագրեր

Թեմայի անվանումը	*Ղեկավար*
1. Ֆունկցիոնալ տարբեր տարածություններում դասական համակարգերով վերլուծությունների գումարման մեթոդներ, գործակիցներ և գրիդի ալգորիթմ (պետական ֆինանսավորում):	Գրիգորյան Մ. Գ.

Թեմա 1. Լուծվել են մի շարք նոր, կարևոր խնդիրներ, որոնք առնչվում են ֆունկցիոնալ տարբեր տարածությունների ֆունկցիաների դասական համակարգերով վերլուծությունների, դրանց գրիդի ալգորիթմի ու Չեզարոյի միջինների տարբեր իմաստներով (հավասարաչափ, Lp (p>0), համարյա ամենուրեք, ըստ չափի) զուգամիտությանը:

Ուսումնասիրվել է փոքր չափի բազմության վրա փոխելուց հետո ստացված ֆունկցիայի դասական համակարգերով Ֆուրիեի գործակիցների վարքը:

Ամբիոնում կատարված այլ աշխատանքների մասին:

Հետազոտված է տարբեր համակարգերի բացարձակ եզակիության հատկությունը: Ապացուցված է, որ Հաարի համակարգը և Ֆրանկլինի համակարգը օժտված են բացարձակ եզակիությամբ, այնինչ Ֆաբեր-Շաուդերի համակարգը օժտված չէ: Ապացուցված է, որ Ֆաբեր-Շաուդերի համակարգը օժտված է ուժեղացված «Ոչ պայմանական-C» հատկությամբ:

Պարզվել է գոյությունը լրիվ չափի մոտ չափ ունեցող $E \subset [0,1]$ բազմության, որի վրա որոշված յուրաքանչյուր անընդհատ ֆունկցիա հնարավոր լինի անընդհատ շարունակել [0,1]-ի վրա այնպես, որ այդ շարունակած [0,1]-ում անընդհատ ֆունկցիայի՝ ըստ Շաուդերի համակարգի վերլուծության գործակիցների մոդուլների հաջորդականությունը մոնոտոն նվազի:

Հետազոտվել է $L^p[0,1], p \geq 1$ - դասերի ֆունկցիաների արժեքները փոքր չափի բազմության վրա փոխելուց հետո նոր ստացված ֆունկցիաների ըստ եռանկյունաչափական համակարգի Ֆուրիեի գործակիցների մոդուլների հաջորդականության ֆունկցիայի սպեկտրի վրա մոնոտոն նվազող կամ թույլ նվազող դարձնելու հնարավորությունը:

Ուսումնասիրված են փոքր չափի բազմության վրա փոխված ֆունկցիաների տարբեր համակարգերով Ֆուրիեի գործակիցների մոնոտոնության հարցեր:

$C_{[0,1]}$ և $L^p_{[0,1]}$ (1(p (2) տարածություններում կառուցված է ունիվերսալ օրթոգոնալ շարքեր տարբեր իմաստներով: Ուսումնասիրված են տարբեր ֆունկցիոնալ դասերում Ֆուրիեի շարքերի զուգամիտությունը, օրթոգոնալ շարքերով ներկայացումները և ունիվերսալ շարքերը:

Ապացուցված է Չեզարոյի և Լիբերայի ընդհանրացված օպերատորների սահմանափակությունը Հարդիի, Բեսովի և BMOA դասերում:

Հրատարակություններ

Դասագիրք	Մենագրություն	Ուսումնական ձեռնարկ	Ուսումնամեթոդական ձեռնարկ	Հոդված	Զեկուցման թեզիս
-	-	-	1	14	3

Գիտական և ուսումնամեթոդական հրատարակությունների ցանկ

Ուսումնամեթոդական ձեռնարկ

1. *Գ. Գ. Ղազարյան,* Վերլուծական երկրաչափության և գծային հանրահաշվի խնդիրների լուծման ուղեցույց և տիպային խնդիրների ընտրանի, ԵՊՀ հրատ., Երևան, 2015, 200 էջ:

Հոդված

1. *М. Г. Григорян, Л. Н. Галоян, А. Х. Кобелян*, О сходимости рядов Фурье по классическим системам, “Мат. сборник”, Т. 206, no. 7, 2015, с. 55-94.
2. *С. А. Епископосян,* Критерия универсальности для непрерывных отображений, “Математика в высшей школе”, т. 10, 1, 2014, с. 21-29.
3. *С. А. Епископосян, Т. М. Сагателян,* Ряды по обобщенной системе Уолша с монотонными коэффициентами в Lp, 1<p<1, “Математика в высшей школе”, т. 10, 2, 2014, с. 21-29.
4. *С. А. Епископосян*, *Ю. Мюллер,* О поточечной универсальности частичных сумм рядов Фурье по обобщенной системе Уолша, “Известия Вузов, сер. Математика”, N 8, 2015, с. 56-67.
5. *С. А. Епископосян,* О сходимости в L1 жагного алгоритма по обобщенной системе Уолша, “Математика в высшей школе”, т. 10-1, 2014, с. 14-35.
6. *С. Л. Гогян*, Об одном свойстве слабого жадного алгоритма по общей системе Хаара, Doklady, “NAN”, Volume 115, Issue 1, 2015, pp. 15-19.
7. *Л. Н. Галоян,* О сходимости в метриках Lp, 1<p<∞, средних Чезаро рядов Фурье с монотонными коэффициентами, “Изв. Вузов”, no. 9, 2015, с. 14-26.
8. *S. A. Sargsyan,* On the divergence of Fourier-Walsh series of continuous function, “Procceding of YSU”, no 2, 2015, p. 12-16.
9. *Causey Ryan, Stephen J. Dilworth, Smbat Gogyan and Denka Kutzarova*, An x-greedy algorithm with weakness parameters, “Comptes rendus de l academie bulgare des sciences”, 68, no. 3, 2015, p. 295-300.
10. *S. J. Dilworth, S. Gogyan and Denka Kutzarova,* On the Convergence of a Weak Greedy Algorithm for the Multivariate Haar Basis, “Constructive Approximation”, 39, no. 2, 2014, p. 343-366.
11. *S. A. Episkoposian, J. Muller,* Universality properties of Walsh-Fourier series, “Monatshefte fur Mathematik, Springer”, v. 175, 2014, p. 511-518.
12. *S. A. Episkoposian,* On uniqness of series with generalized Walsh system, “Mathematica Montisnigri”, v. XXXII, 2015, p. 38-54.
13. *M. G. Grigoryan,* The unconditional convergence of Fourier-Haar series, “Bulletin of TICMI”, v. 18, 1, 2014, p. 130-140.
14. *M. G. Grigoryan,* On the m-term best approximation of signals, greedy algorithm, “ASM, Springer”, V, 42, 2015, p. 25-36.

Զեկուցման թեզիս

1. *A. Kh. Kobelyan,* Some Property of Fourier Series with Respect by Orthogonal Systems, “Caucasian Mathematics Conference CMC I”, Tbilisi, September 5-6, 2014, p. 28.
2. *M. G. Grigoryan,* ON the L-strong and Greedy property of trigonometric system, “3rd Internation Conference on Mathematical, Computational and Statistical Sciences (MCSS '15)”, Dubai, United Arab Emirates, February 22-24, 2015, p. 36-38.
3. *M. G. Grigoryan,* Greedy algorithm and modifications of functions, “Abstracts of International Conference on Wavelets and Applications”, St. Petersburg, June 18-23, 2015, p. 29-31.

ՄՈԼԵԿՈՒԼԱՅԻՆ ՖԻԶԻԿԱՅԻ ԱՄԲԻՈՆ

Ամբիոնի վարիչ՝ *Դալյան Եվա Բենոյի, ֆիզմաթ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր*

Պրոֆեսորադասախոսական կազմը

1. Առաքելյան Վալերի Բեյբուդի, ֆիզմաթ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր
2. Բարխուդարյան Վիգեն Գրիգորի, ֆիզմաթ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր
3. Մորոզով Վլադիմիր Ֆյոդորի, ֆիզմաթ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր
4. Մամասախլիսով Եվգենի Շամիլի, ֆիզմաթ. գիտ. դոկտոր, դոցենտ
5. Ալոյան Լուսինե Ռաֆիկի, ֆիզմաթ. գիտ. թեկնածու, ասիստենտ

Համատեղողներ

1. Հարությունյան Սամվել Գառնիկի, ֆիզմաթ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր
2. Վարդանյան Իշխան Վոլոդյայի, ֆիզմաթ. գիտ. թեկնածու, ասիստենտ

Ուսումնաօժանդակ աշխատակիցներ

1. Քարամյան Կարինե Կառլենի, ուսումն. լաբորատորիայի վարիչ
2. Թորոսյան Անահիտ Լևոնի, ավագ լաբորանտ
3. Սինյավսկայա Ալլա Կոնստանտինի, ավագ լաբորանտ

Ըստ ընդհանուր ուղղությունների՝ ամբիոնում կատարված գիտական աշխատանքների ամփոփում

Դրամաշնորհային ծրագրեր

Թեմայի անվանումը	*Ղեկավար*
1. Նոր կենսաբանորեն ակտիվ մետաղապորֆիրինների ԴՆԹ-ի և պոլինուկլեոտիդների հետ կապման ընտրողականության հետազոտությունը (պետական ֆինանսավորում):	Դալյան Ե. Բ.
2. Նուկլեինաթթուների տրանսլոկացիայի կինետիկան և թերմոդինամիկան սպիտակուցային նանոանցքուղում սեկվենավորման դեպքում (պետական ֆինանսավորում):	Մամասախլիսով Ե. Շ.
3. Պորֆիրինների ազդեցությունը երկշերտ լիպիդային թաղանթի կայունության և հաղորդականության վրա (պետական ֆինանսավորում):	Առաքելյան Վ. Բ.
4. A-ԴՆԹ-ի հետ պորֆիրինների փոխազդեցության առանձնահատկությունները (պետական ֆինանսավորում):	Ավետիսյան Ա. Ա.

Թեմա 1. Սպեկտրալ մեթոդներով հետազոտվել են մեզո-տետրա-(4N-օքսիէթիլպիրիդիլ)-պորֆիրինի ($H_2TOEPyP4$) և նրա CuTOEPyP, CoTOEPyP մետաղական ածանցյալների փոխազդեցությունը poly(dI-dC)$_2$, poly(dG-dC)$_2$, poly(dA-dC)*poly(dG-dT) կրկնակի պարույրային պոլինուկլեոտիդների հետ:

Ցույց է տրված, որ պորֆիրինի կոնցենտրացիայի աճին զուգընթաց poly(dI-dC)$_2$ և poly(dA-dC)*poly(dG-dT) պոլինուկլեոտիդների հալման ջերմաստիճանն աճում է, իսկ հալման էնթալպիան՝ նվազում: Ցածր հարաբերական կոնցենտրացիաների դեպքում H_2TOEPyP4 և CuTOEPyP4 նախընտրում են փոխազդեցության ինտերկալյավիոն մեխանիզմը, իսկ CoTOEPyP4 կապվում է արտաքին ակոսային եղանակով: Բարձր կոնցենտրացիաների ժամանակ (r ~ 1) poly(dG-dC)$_2$–ի հետ կապված պորֆիրինները փոխազդում են միմյանց հետ կարգավորված ինքնաստեկինգի եղանակով: Ցույց է տրված, որ այս պորֆիրիններն ավելի ուժեղ են փոխազդում poly(dI-dC)$_2$-ի, քան poly(dG-dC)$_2$ հետ:

Թեմա 2. Նախագծի շրջանակում ստացվել են արդյունքներ, որոնք բնութագրում են նուկլեինաթթուների թերմոդինամիկական և կինետիկական բնութագրերը: Մասնավորապես ցույց է տրվել, թե հատկապես ինչպես են ցածրամոլեկուլային միացությունները և նուկլեոտիդների հաջորդականությունները ազդում միա- և երկթելանի նուկլեինաթթուներում երկրորդային և երրորդային կառուցվածքի տարրերի առաջացման վրա:

Թեմա 3. Ուսումնասիրված է պորֆիրինների ազդեցությունը երկշերտ լիպիդային թաղանթի (ԵԼԹ) կայունության և հաղորդականության վրա: Ցույց է տրված, որ կատիոնային պորֆիրինները (TOEtPyP4, CoTOEtPyP4) փոքրացնում են, իսկ անիոնային պորֆիրինը (TFnSO3Na) մեծացնում է ֆոսֆատիդիլսերինի (DOPS) և ֆոսֆատիդիլէթանոլամինի (DPPE) խառնուրդից (1:1) կազմված ԵԼԹ-ի կայունությունը էլեկտրական դաշտում, ինչը պայմանավորված է թաղանթի վրա ինքնաբերաբար ձևավորվող ծակոտիների եզրի գծային լարվածության փոքրացմամբ կամ մեծացմամբ համապատասխանաբար: Ցույց է տրված, որ կատիոնային պորֆիրինները մեծացնում են թաղանթի վրա ինքնաբերաբար ձևավորվող ծակոտիների առաջացման հավանականությունը, իսկ անիոնային պորֆիրինը մեծացնում է ծակոտիների չափերի փոփոխման արագությունը:

Թեմա 4. Սպեկտրալ եղանակներով ուսումնասիրվել են ԴՆԹ-ի A-ձևի հետ մեզո-տետրա-(4N-օքսիէթիլպիրիդիլ)պորֆիրինի (TOEPyP4) և նրա CuTOEPyP, CoTOEPyP մետաղական ածանցյալների փոխազդեցության առանձնահատկությունները: Խնդիրը հետաքրքիր է, քանի որ հայտնի է, որ բջջի կիսման պահին ԴՆԹ-ն ընդունում է A-կոնֆորմացիան: Կատարվել է ստացված արդյունքների համեմատություն B-ԴՆԹ-ի համար ստացված արդյունքների հետ: Գնահատվել են TOEPyP4, CuTOEPyP4 և CoTOEPyP4 պորֆիրինների կապման հաստատունները և փոխազդեցության թերմոդինամիկական պարամետրերը A-ԴՆԹ-ի հետ:

Ցույց է տրված, որ CoTOEPyP4 կապվում է ԴՆԹ-ի A- և B- ձևերի հետ ակոսային եղանակով, և փոխազդեցությունն ունի էնտրոպիական բնույթ, իսկ H_2TOEPyP4 և CuTOEPyP4 պորֆիրիններն ավելի ուժեղ են փոխազդում ԴՆԹ-ի A-ձևի, քան B-ձևի հետ:

Արտասահմանյան դրամաշնորհներ

Թեմայի անվանումը	*Ղեկավար*
1. Բիոսենսորների նախագծում ածխածնային նանո խողովակների օգտագործման միջոցով (NATO, Science for Peace, 110116):	Մամասախլիսով Ե. Շ.
2. Միաթել և երկթել կենսաբանական մոլեկուլների հավասարակշիռ և ոչ հավասարակշիռ վարքագիծը (Volkswagenstiftung, 85 927):	Մամասախլիսով Ե. Շ.

Թեմա 1. Հաշվետու ժամանակահատվածում սինթեզվել են պոլիմերային նանո-բաղադրանյութեր՝ ածխածնային նանոխողովակների տարբեր պարունակությամբ: Բացի դրանից՝ ուսումնասիրվել է մակերևույթի վրա նուկլեինաթթուների հիբրիդիզացիայի տեսական մոդելը՝ լիգանդների առկայությամբ, և դիտարկվել է հիբրիդիզացիայի կինետիկան երկար, միշտ ՌՆԹ-ներում:

Թեմա 2. Նախագիծը նվիրված է նուկլեինաթթուներում կոնֆորմացիոն անցումներին՝ ներառյալ ՌՆԹ-ի ինքնակազմակերպումը: Հաշվետու ժամանակահատվածում ուսումնասիրվել են միա- և երկշղթա նուկլեինաթթուներում երկար օղակների առաջացման հետ կապված էֆեկտներ, ՌՆԹ-ի երկրորդային և երրորդային կառուցվածքների փոխադարձ ազդեցությունը և մի շարք այլ հարցեր:

Պաշտպանվել է 1 թեկնածուական ատենախոսություն՝

Թորոսյան Անահիտ Լևոնի՝ «Պորֆիրինների ազդեցությունը երկշերտ լիպիդային թաղանթների վրա» թեմայով /Գ.00.02-Կենսաֆիզիկա, գիտական ղեկավար՝ ֆիզմաթ. գիտ. դոկտոր, պրոֆ. Վ. Բ. Առաքելյան/:

Հրատարակություններ

Դասագիրք	Մենագրություն	Ուսումնական ձեռնարկ	Ուսումնամեթոդական ձեռնարկ	Հոդված	Ձեկուցման թեզիս
-	-	-	-	14	4

Գիտական և ուսումնամեթոդական հրատարակությունների ցանկ

Հոդված

1. *В. Б. Аракелян, А. Л. Торосян, Р. К. Казарян,* Адсорбция катионных Co-порфиринов на липосомы, “Биологический журнал Армении”, N 2, 66, 2014, с. 63-67.
2. *В. Б. Аракелян, А. Л. Торосян, Р. К. Казарян,* Устойчивость бислойной липидной мембраны в присутствии Co-содержащих металлопорфиринов, “Известия НАН Армении, Физика”, N 6, 49, 2014, с. 440-445.
3. *З. А. Григорян, Е. Ш. Мамасахлисов, А. Т. Карапетян,* Ориентационный порядок в ДНК-содержащих полимерных композитах: эффект плавления, “Доклады НАН РА”, N 114, 2014, с. 123-130.
4. *Sh. A. Tonoyan, A. V. Asatryan, Y. Sh. Mamasakhlisov, V. F. Morozov,* Helix-coil transition in biopolymers with multicomponent heterogeneity of energy and number of conformations, “J. Contemp. Phys.” N 49, 2014, p. 132-137.
5. *A.V. Badasyan, Sh. A. Tonoyan, A. Giacometti, R. Podgornik, V. A. Parsegian, Y. Sh. Mamasakhlisov, V. F. Morozov*, Unified description of solvent effects in the helix-coil transition, “Phys. Rev. E”, N 89, 2014, p. 022723 (1-10).
6. *A. T. Karapetian, Z. A. Grigoryan, Y. Sh. Mamasakhlisov, M. V. Minasyants and P. O. Vardevanyan,* Theoretical treatment of helix-coil transition of complexes DNA with two different ligands having different binding parameters, “J. Biomolecular Structure and Dynamics” DOI: 10.1080/07391102.2015.1010584, 2015.
7. *A. V. Badasyan, Y. Sh. Mamasakhlisov, R. Podgornik and V. A. Parsegian*, Solvent effects in the helix-coil transition model can explain the unusual biophysics of intrinsically disordered proteins, “J. Chem. Phys.” N 143, 2015, p. 014102.
8. *V. G. Barkhudaryan, G. V. Ananyan, Y. B. Dalyan, S. G. Haroutiunian,* Development of viscometric methods for studying the interaction of various porphyrins with DNA. Part I: meso-tetra-(4N-hydroxyethylpyridyl) porphyrin, “J. Porphyrins and Phthalocyanines”, N 18, 2014, p. 594-599.
9. *A. A. Avetisyan,* The interaction of TOEPyP4 porphyrin with A form of DNA, “Proceedings of the YSU, series Physical and Mathematical sciences”, N 3, 2014, p. 51-56.
10. *A. A. Avetisyan, Y. B. Dalyan,* Thermodynamics of Interactions of CoTOEPyP4 Porphyrin with A-DNA, “Proceedings of the YSU, series Chemical and Biological sciences”, N 3, 2014, p. 40-45.

11. *A. A. Avetisyan, Y. B. Dalyan,* The comparative study of H_2TOEPyP4 and CoTOEPyP4 porphyrins with A-DNA, "J. Biomolecular Structure and Dynamics", Vol. 33, S1, No. 135, 2015, p. 87.
12. *G. V. Ananyan, N. H. Karapetyan, S. G. Haroutiunian, Y. B. Dalyan,* The features of complex formation of poly(dI-dC)$_2$ with porphyrins, "J. Biomolecular Structure and Dynamics", Vol. 33, S1, No. 132, 2015, p. 85.
13. *P. O. Vardevanyan, V. B. Arakelyan, M. A. Parsadanyan, A. P. Antonyan, G. G. Hovhannisyan, M. A. Shahinyan,* Analysis of experimental binding curves of EtBr with single- and double-stranded DNA at small fillings, "Modern Physics Letters B", Vol. 28, N 22, 2014, p. 1-11.
14. *V. B. Arakelyan, P. O. Vardevanyan, Z. E. Navoyan, M. A. Parsadanyan, G. G. Hovhannesyan, A. T. Karapetian,* Kinetics of adsorption of extended ligands on DNA at small fillings, "Journal of Biomolecular Structure and Dynamics", Vol. 32, Issue: 2, 2014, p. 330-335.

Զեկուցման թեզիս

1. *A. L. Torosyan, V. B. Arakelyan, R. K. Ghazaryan,* Influence of cationic and anionic porphyrins on the stability of planar bilayer lipid membrane, "10th European Biophysics Congress", Dresden, Germany, July 18 - 22, 2015, p. 199.
2. *I. V. Vardanyan, Y. B. Dalyan,* The Influence of the Form of tRNA on Complex Formation with Porphyrins, "The FEBS-EMBO 2014 meeting", aug. 30-sept. 4, Paris, France, 2014, p. 76.
3. *A. A. Avetisyan, Y. B. Dalyan,* The comparative study of H_2TOEPyP4 and CoTOEPyP4 porphyrins with A-DNA, "The19-th Conversation of JBSD", Albany, USA, June 9-13, 2015, p. 87.
4. *G. V. Ananyan, N. H. Karapetyan, S. G. Haroutiunian, Y. B. Dalyan,* The features of complex formation of poly(dI-dC)$_2$ with porphyrins, "The19-th Conversation of JBSD", Albany, USA, June 9-13, 2015, p. 85.

ՊԻՆԴ ՄԱՐՄՆԻ ՖԻԶԻԿԱՅԻ ԱՄԲԻՈՆ

Ամբիոնի վարիչ՝ *Կիրակոսյան Ալբերտ Ավետիսի, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, ֆիզմաթ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր*

Պրոֆեսորադասախոսական կազմը

1. Լևոնյան Լևոն Վարդգեսի, ֆիզմաթ. գիտ. դոկտոր, դոցենտ
2. Վարդանյան Արշակ Լյուդվիգի, ֆիզմաթ. գիտ. դոկտոր, դոցենտ
3. Առաքելյան Միլետա Մարտիրոսի, ֆիզմաթ. գիտ. թեկնածու, դոցենտ
4. Ասատրյան Աննա Լյուդվիգի, ֆիզմաթ. գիտ. թեկնածու, դոցենտ
5. Ավետյան Կոլյա Թորգոմի, ֆիզմաթ. գիտ. թեկնածու, դոցենտ

Համատեղողներ

1. Մանասելյան Արամ Խաչիկի, ֆիզմաթ. գիտ. թեկնածու, ասիստենտ

Ուսումնաօժանդակ աշխատակիցներ

1. Վերմիշյան Գառնիկ Անդրանիկի, ուսումն. լաբորատորիայի վարիչ
2. Մնացականյան Թամարա Սնոյի, ֆիզմաթ. գիտ. թեկնածու, ավագ լաբորանտ

3. Հովակիմյան Նազենի Հովակիմի, ավագ լաբորանտ
4. Խնկոյան Ռոբերտ Կամսարի, ուսումնական վարպետ

Ըստ ընդհանուր ուղղությունների՝ ամբիոնում կատարված գիտական աշխատանքների ամփոփում

Դրամաշնորհային ծրագրեր

Թեմայի անվանումը	*Ղեկավար*
1. Տերահերցային լազերային, համասեռ էլեկտրական և մագնիսական դաշտերի միացյալ ազդեցությունը կիսահաղորդչային նանոօղակների և նանոբաժակների գծային և ոչ գծային օպտիկական հատկությունների վրա (պետական ֆինանսավորում):	Բարսեղյան Մ. Գ.
2. Սպինային փոխազդեցությունները մագնիսական և ոչ մագնիսական քվանտային օղակներով կառուցվածքներում և դրանց կիրառությունները (պետական ֆինանսավորում):	Մանասելյան Ա. Խ.
3. Ռաշբայի և Դրեսելհաուսի սպին-ուղեծրային փոխազդեցության ներգործությունը պոլարոնային վիճակների և պոլարոնային տրոհման մեխանիզմների վրա վյուրցիտային քվանտային կետերում (պետական ֆինանսավորում):	Երանոսյան Մ. Ա.
4. Էլեկտրոն-ֆոնոն փոխազդեցությամբ և ռամանյան ցրումով մակածված սպինային անցումները գրաֆենային և սիլիցիումային քվանտային կետերում (պետական ֆինանսավորում):	Վարդանյան Ա. Ա.
5. Կապված պլազմոն-ֆոնոնային մոդերը և լիցքակիրների կինետիկան միայնակ կիսահաղորդչային նանոլարերում (պետական ֆինանսավորում):	Վարդանյան Ա. Ա.
6. Էլեկտրոն-ֆոնոնային փոխազդեցությունը քվանտային կետերով Ge/Si հետերոկառուցվածքներում (պետական ֆինանսավորում):	Կիրակոսյան Ա. Ա.

Թեմա 1. Ուսումնասիրվել են տերահերցային լազերային և արտաքին համասեռ էլեկտրական դաշտերի միացյալ ազդեցությունը կիսահաղորդչային միայնակ օղակում մեկէլեկտրոնային վիճակների և լույսի ներգոտիական կլանման գործակցի վրա: Դիտարկվել են լույսի երկու տարբեր բևեռացումների դեպքեր: Ցույց է տրվել, որ արտաքին դաշտերի ազդեցությունը հանգեցնում է կլանման սպեկտրի կարմիր կամ կապույտ շեղումների:

Թեմա 2. Ուսումնասիրվել են մագնիսական և ոչ մագնիսական քվանտային օղակներում և դրանցից կազմված գերցանցերում սպինային փոխազդեցության ազդեցությունը նշված համակարգերի մագնիսական, օպտիկական հատկությունների, ինչպես նաև գոտիական կառուցվածքի վրա:

Թեմա 3. Ուսումնասիրվել են վյուրցիտային կառուցվածքով նիտրիդային քվանտային փոսում ֆոնոնային մոդերի առանձնահատկությունները, ինչպես նաև Ռաշբայի և Դրեսելհաուսի սպին-ուղեծրային փոխազդեցությունների համաժամանակյա ազդեցությունը պոլարոնային վիճակների վրա: Խոտորումների տեսության շրջանակում հաշվարկվել են պոլարոնի սեփական էներգիան և արդյունարար զանգվածը՝ հաշվի առնելով այդպիսի կառուցվածքներում առկա տարածական անհամաչափության ներգործությունը սպին-ուղեծրային փոխազդեցության, ինչպես նաև ֆոնոնային սպեկտրի վրա:

Թեմա 4. Ուսումնասիրվել են գրաֆենային և սիլիցիումային քվանտային կետերում և այդ քվանտային կետերից կազմված մոլեկուլներում լիցքակիրների սպինային ռելաքսացիայի և կոհերենտության հարցերը և քվանտային կետերով կառուցվածքներում ֆոնոնային համակարգի տարածական սահմանափակությամբ պայմանավորված ֆոնոնային սպեկտրի արմատական փոփոխության ազդեցությունը սպինային ռելաքսացիայի վրա: Հետազոտվել են ռելաքսացիայի և կոհերենտության ժամանակների կախումները ջերմաստիճանից, կառուցվածքի պարամետրերից (ձևից, չափերից, նյութից, պարունակած էլեկտրոնների քանակից և այլն), ֆոնոնային սպեկտրի առանձնահատկություններից և արտաքին գործոններից: Տեսական հետազոտության գլխավոր գործնական նպատակն է արդյունքների վերլուծման միջոցով բացահայտել վերոնշյալ ժամանակների հնարավոր երկարացման ուղիները:

Թեմա 5. Կիսահաղորդչային նանոլարերում Ռաշբայի սպին-ուղեծրային փոխազդեցության հաշվառմամբ ուսումնասիրվել են բևեռային օպտիկական ֆոնոն-պլազմոն կապված մոդերի դիսպերսային առնչությունները: Հաշվարկվել է այդ կառուցվածքներում տաք էլեկտրոնների էներգիական կորուստների արագությունը՝ նշված քվազիմասնիկային կոմպլեքսների առաքման դեպքում: Տեսական մոդելավորումը և հետազոտումը կատարել է Երևանի պետական համալսարանի խումբը, իսկ փորձարարականը՝ Լիոն-1 համալսարանի խումբը: Ռամանյան սպեկտրադիտումը (պլազմոն-ֆոնոն մոդերի հաճախությունների որոշման համար) և ժամանակային լուծունակությամբ սպեկտրադիտումը (անհավասարակշիռ էլեկտրոնային համակարգի էներգիական կորուստների արագության որոշման համար) օգտագործվում են էլեկտրոնային կինետիկայի փորձերում, որոնք իրականացվում են ինչպես լեգիրված, այնպես էլ չլեգիրված, այլ ֆոտոներարկված լիցքակիրներով միայնակ նանոլարերի դեպքում: Տեսականորեն ուսումնասիրվել են նաև «ձայնային ֆոնոն-մագնիսապլազմոն» գրգռումները քվազիմիաչափ էլեկտրոնային գազում սպին-ուղեծրային կապի հաշվառմամբ: Ուսումնասիրությունը կատարվել է վերոշարադրյալ սխեմայով նախ InP և ապա ZnO նանոլարերի դեպքում:

Թեմա 6. Տեսականորեն ուսումնասիրվել են Si-ում ներդրված Ge-ի քվանտային կետերի տարբեր համակարգերում լիցքակիրների էներգիական սպեկտրները և նրանցում կալանման և արտանետման պրոցեսները, որոնցում էական դեր է խաղում լիցքակիրների փոխազդեցությունը նանոկառուցվածքի ֆոնոնային համակարգի հետ:

Ամբիոնում կատարված այլ աշխատանքների մասին:

Թեմա 1. *Ֆոնոնային սահմանափակման ազդեցությունը քվանտային կետերի համակարգում էլեկտրոն-ֆոնոն փոխազդեցությամբ միջնորդված սպինային ռելաքսացիայի վրա (ղեկավար՝ Վարդանյան Ա. Ա.)*

Ուսումնասիրվել են քվանտային կետերով համակարգերում «լիցքակիր-ձայնային ֆոնոն» փոխազդեցությամբ մակածված սպինային անցումների բնութագրերը՝ կախված ֆիզիկական համակարգի կառավարվող պարամետրերից (փականային լարում, մագնիսական դաշտ, նանոկառուցվածքի չափեր, ձև և բաղադրություն): Նկատի ունենալով քվանտային կետերով նանոկառուցվածքներում սպին-ուղեծրային փոխազդեցության կառավարելիությունը՝ տեսականորեն ուսումնասիրվել է սպինի շրջումով անցումների բնութագրական ժամանակը՝ հաշվի առնելով ֆոնոնային սահմանափակման երևույթը: Սպինային անցումների ժամանակային բնութագրերի իմացությունը կարևորվում է այդ կառուցվածքների օգտագործմամբ սպինտրոնային սարքերի, մասնավորապես սպինային հենքով քվանտային համակարգիչների նախագծման և ստեղծման տեսանկյունից:

Թեմա 2. *Երեք առանցքներով տատանումներ գրանցող սեյսմիկ դետեկտոր, որը գործելու է աննախադեպ լայն հնարավորություններ ընձեռող SFCO նոր տվիչի հիման վրա (ղեկավար՝ Գևորգյան Ս. Գ.)*

Հաշվետու ժամանակահատվածում ավարտին են հասցված 3 առանցքներով տատանումներ գրանցող /վեկտորական/ սեյսմիկ դետեկտորների /թվով՝ 5/ լաբորատոր մանրակերտների ու դրանցից ելնող ազդանշանները մշակող արագագործ հաճախաչափերի /թվով՝ 3/ ստեղծման աշխատանքները:

Այդ համակարգի փորձարկումների շրջանակում 2014 թ. ԱՄՆ Մոհավի անապատում (Mojave Desert, CA) իրականացվել են դրա համեմատական փորձարկումներ՝ արտերկրից լավագույն անալոգների մասնակցությամբ: Փորձարկումները նպատակ են հետապնդել այս բնագավառում աշխարհում առաջատար մի շարք ընկերությունների փորձագետներին նախ ծանոթացնել մեր նոր դետեկտորների սկզբունքային առավելություններին, ապա փորձերի արդյունքում ձեռք բերված տվյալների հիման վրա համոզել ներկաներին, որ նոր սենսորներն իրենց առավելություններով կարող են փոխարինել «սահմանների ու տարածքների» ու նաև նավթի ու գազի տեղափոխումն ապահովող խողովակների /նավթամուղ, գազամուղ/ հսկողության համակարգերում այլ սկզբունքներով գործող, իրենց դարն ապրած սենսորներին:

Թեմա 3. *Նոր սեյսմիկ դետեկտոր, որը, հնարավոր է, էապես նպաստի երկրաշարժերի կանխագուշակմանը (ղեկավար՝ Գևորգյան Ս. Գ.)*

Ծրագրի շրջանակում մշակվել ու ստեղծվել է SFCO-սենսորով սեյսմիկ սարքերից ելնող ազդանշանների գրանցման և մշակման էլեկտրոնային ու ծրագրային ավարտուն համակարգ, որը թույլ է տալիս USB կամ LAN պորտերի միջոցով չափման տվյալներն արագ հաղորդել համակարգչին ու դրանք ենթարկել նախնական մշակման:

Հրատարակություններ

Դասագիրք	Մենագրություն	Ուսումնական ձեռնարկ	Ուսումնամեթոդական ձեռնարկ	Հոդված	Ձեկուցման թեզիս
1	1	-	-	28	5

Գիտական և ուսումնամեթոդական հրատարակությունների ցանկ

Դասագիրք

1. *Է. Ղազարյան, Ա. Կիրակոսյան, Գ. Մելիքյան, Ռ. Թոսունյան, Ս. Մաիլյան, Ս. Ներսիսյան,* Ֆիզիկա և աստղագիտություն, «Էդիթ Պրինտ» հրատ., Երևան, 2015, 224 էջ:

Մենագրություն

2. *Ա. Կիրակոսյան,* Պինդ մարմնի ֆիզիկայի ներածություն, Մաս I (երկ. հրատ.), ԵՊՀ հրատ., Երևան, 2015, 288 էջ:

Հոդված

1. *К. В. Алумян, Т. С. Мнацаканян, Т. О. Эйрамджян,* Исследование смещений интерференционных полос по разным кристаллографическим направлениям как метод обнаружения и оценки остаточных напряжений в кристаллах, “Известия НУАСА”, т. 46, N 2, 2015, с. 19-24.
2. *К. Т. Аветян, Л. В. Левонян, О. С. Семерджян, М. М. Аракелян, О. М. Бадалян, Д. А. Зейналян,* Две схемы дифракции широко расходящегося пучка рентгеновского излучения, “Известия НАН Армении”, т. 50, N 1, 2015, с. 118-125.
3. *К. Т. Аветян, Л. В. Левонян, О. С. Семерджян, М. М. Аракелян, О. М. Бадалян*, Особенности двух схем дифракции широко расходящегося пучка рентгеновского излучения, “Кристаллография”, т. 60, N 2, 2015, с. 207-211.

4. *Л. А. Арутюнян,* Рентгеновский интерферометр из двухуровневых френелевских зонных пластин в режиме разделения амплитуды, “Известия НАН Армении, Физика”, т. 50, N 3, 2015, с. 395.
5. *М. К. Балян,* Рентгеновская брэгговская дифракция сферической волны с учетом двумерной кривизны волнового фронта, “Известия НАН Армении, Физика”, т. 50, N 1, 2015, с. 134-143.
6. *М. К. Балян,* Рентгеновская Лауэ дифракция с учетом двумерной кривизны волнового фронта: концепция локально плоской волны, “Известия НАН Армении, Физика”, т. 49, N 6, 2014, с. 446-450.
7. *Э. В. Агабабян, Н. П. Арутюнян,* Магнитокалорический эффект соединений в системе $Gd_5Si_{2-x}Ge_{2-x}Sn_{2x}$, “Изв. НАН Армении, Физика”, т. 50, N 2, 2015, с. 264-268.
8. *A. A. Avetisyan,* A strong electromagnetic radiation interaction with bilayer graphene, “Proceedings of State Armenian Engineering University (SEUA) Series “Information technologies, Electronics, Radio engineerings”, Issue 17, N 2, 2014, pp. 67-72.
9. *A. A. Avetisyan, A. P. Djotyan, V. V. Buniatyan,* Physical properties of donor states near semiconductor interface in external electric field, «Լրաբեր» հոդվածների ժողովածու, Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարան, N 1, 2015, էջ 206-211:
10. *A. A. Kirakosyan, D. Laroze, H. M. Baghramyan and M. G. Barseghyan, A. Radu,* Electronic and intraband optical properties of single quantum rings under intense laser field radiation, “Journal of Applied Physics”, v. 116, 2014, pp. 093101-1-6.
11. *A. L. Asatryan, K. A. Vardanyan, A. L.Vartanian,* The influence of electric field on the interface polaron properties in a wurtzite nitride nanowire, “Superlattices and Microstructures”, v. 77, 2015, pp. 286-294.
12. *A. V. Ghazaryan, A. Kh. Manaselyan, T. Chakraborty*, Tuning of exciton states in a magnetic quantum ring, “Physica E”, v. 66, 2015, pp. 157-161.
13. *D. A. Baghdasaryan, H. Ts. Ghaltaghchyan, E. M. Kazaryan, H. A. Sarkisyan*, Two-electron impurity in the parabolic quantum dot: uncertainty relation and perturbation approach, “Physica E”, v. 70, 2015, pp. 52-57.
14. *D. B. Hayrapetyan, E. M. Kazaryan, L. S. Petrosyan, H. A. Sarkisyan*, Core/shell/shell spherical quantum dot with Kratzer confining potential: Impurity states and electrostatic multipoles, “Physica E”, v. 66, 2015, pp. 7-12.
15. *K. A. Vardanyan, A. L. Vartanian, V. N. Mughnetsyan, A. V. Dvurechenskii, A. A. Kirakosyan,* Effect of phonon confinement on one- and two-polar optical phonon capture processes in quantum dots, “Physica E”, v. 66, 2015, pp. 5268-274.
16. *K. A. Vardanyan, A. L. Vartanian, A. A. Kirakosyan,* Effect of Phonon Confinement on Optical Phonon-Mediated Carrier Capture into CdSe/ZnS Quantum Dots, “Journal of Electronic Materials”, 2015, DOI: 10.1007/s11664-015-3744-2.
17. *K. A. Vardanyan, A. L. Vartanian, V. N. Mughnetsyan, A. V. Dvurechenskii, A. A. Kirakosyan,* Effect of phonon confinement on one- and two-polar optical phonon capture processes in quantum dots, “Physica E: Low-dimensional Systems and Nanostructures”, v. 66, 2015, pp. 268-274.
18. *K. A. Vardanyan, A. L. Asatryan, A. L. Vartanian,* Polaronic effects due to quasi-confined optical phonons in wurtzite nitride nanowire in the presence of an electric field, “Superlattices and Microstructures”, v. 83, 2015, pp. 588-594.
19. *M. A. Yeranosyan, A. L. Vartanian, A. G. Shahbandari, A. A. Kirakosyan,* Phonon confinement effect on the polaron states in a double quantum ring structure in the presence of electric and magnetic fields, “Physica B”, v. 456, 2015, pp. 365-370.
20. *M. G. Barseghyan,* Electronic states of coupled quantum dot-ring structure under lateral electric field with and without a hydrogenic donor impurity, “Physica E” v. 69, 2015, pp. 219-223.
21. *M. K. Balyan,* Theoretical consideration of an X-ray Bragg-reflection lens using the eikonal approximation, “J. Synchrotron Rad.”, v. 21, 2014, pp. 700-707.

22. *S. M. Amirkhanyan, E. M. Kazaryan, H. A. Sarkisyan,* Spin magnetic moment current of impurity electron in a spherical quantum dot, "Journal of Contemporary Physics (Armenian Academy of Sciences)", v. 49, 2014, pp. 264-271.
23. *V. L. Aziz Aghchegala, V. N. Mughnetsyan, A. A. Kirakosyan*, Effect of interdiffusion on electronic states of strain-free Gaussian-shaped double quantum ring superlattice, "Physica E", v. 65, 2015, pp. 30-35.
24. *V. L. Aziz Aghchegala, V. N. Mughnetsyan, A. A. Kirakosyan,* Effect of interdiffusion on nonlinear intraband light absorption in Gaussian-shaped double quantum rings, "Physica E", v. 70, 2015, pp. 210-216.
25. *V. N. Mughnetsyan, A. Kh. Manaselyan, A. A. Kirakosyan,* Rashba Spin-Orbit Coupling in a Two-Dimensional Quantum Ring Superlattice, "Superlattices and Microstructures", v. 82, 2015, pp. 584-591.
26. *V. N. Mughnetsyan, A. Kh. Manaselyan, A. A. Kirakosyan,* Rashba spin-orbit coupling in a two-dimensional quantum ring superlattice, "Superlattices and Microstructures", v. 82, 2015, pp. 47-53.
27. *V. S. Harutyunyan, A. P. Aivazyan,* Application of $Ca(OH)_2$ - comprising dispersions in CO_2 capture and sequestration technologies, "Recent Patents on Materials Science" v. 8, 2015, pp. 2-14.
28. *A. Radu, A. A. Kirakosyan, D. Laroze, M. G. Barseghyan,* The effects of the intense laser and homogeneous electric fields on the electronic and intraband optical properties of $GaAs/Ga_{0.7}Al_{0.3}As$ quantum ring, "Semicond. Sci. Technol.", v. 30, 2015, pp. 045006-1-9.

Զեկուցման թեզիս

1. *A. L. Asatryan, K. A. Vardanyan, A. L. Vartanian*, The polaron properties in a wurtzite nitride cylindrical quantum wire under external electric field, "Optics and its Applications. ICTP OPTICS-2014" 2nd International Symposium, Yerevan, 2015, p. 118.
2. *A. L. Vartanian, V. N. Mughnetsyan, K. A. Vardanyan, A. V. Dvurechenskii, A. A. Kirakosyan*, Effect of phonon confinement on two polar optical phonon capture process in quantum dots, "Nanostructures: Physics and Technology" 22nd International Symposium, Saint Petersburg, 2014, pp. 192-193.
3. *M. A. Yeranosyan, A. Shahbandari, A. L. Vartanian,* The effect of phonon confinement on the binding energy of a hydrogenic impurity in double quantum rings in the perpendicular electric and magnetic fields, "Advanced Materials Research. Ultrafine Grained and Nanostructured Materials" 4-th international conference, Tehran, 2014, p. 795-799.
4. *M. A. Yeranosyan, K. A. Vardanyan, A. L. Vartanian, A. A. Kirakosyan*, Effect of Rashba and Dresselhaus spin-orbit interactions on the polaron properties in wurtzite semiconductor quantum well, "Optics and its Applications. ICTP OPTICS-2014" 2nd International Symposium, Yerevan, 2014, p. 114.
5. *V. N. Mughnetsyan, A. A. Kirakosyan, A. Kh. Manaselyan,* Effect of interdiffusion on band structure in $GaAs/Ga_{1-x}Al_xAs$ quantum ring superlattices, "NANOCON-2014 6-th International Conference", Conference Proceedings, Brno, 2015, pp. 47-53.

ԱԿԱԴԵՄԻԿՈՍ ԳՈՒՐԳԵՆ ՍԱՀԱԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՏԵՍԱԿԱՆ ՖԻԶԻԿԱՅԻ ԱՄԲԻՈՆ

Ամբիոնի վարիչ՝ *Հարությունյան Գոհար Հրայրի, ֆիզմաթ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր*

Պրոֆեսորադասախոսական կազմը

1. Չուբարյան Էդվարդ Վարդանի, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, ֆիզմաթ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր, ամբիոնի պատվավոր վարիչ

2. Կրյուչկյան Գագիկ Յուրիի, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, ֆիզմաթ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր
3. Խաչատրյան Բաբկեն Վաղարշակի, ֆիզմաթ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր
4. Շահաբասյան Կարեն Մերուժանի, ֆիզմաթ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր
5. Սահարյան Արամ Ազատի, ֆիզմաթ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր
6. Հակոբյան Տիգրան Ստեփանի, ֆիզմաթ. գիտ. դոկտոր, դոցենտ
7. Հովսեփյան Աշոտ Վաղարշակի, ֆիզմաթ. գիտ. թեկնածու, դոցենտ
8. Պետրոսյան Ռուբիկ Գրիգորի, ֆիզմաթ. գիտ. թեկնածու, ասիստենտ

Համատեղողներ

1. Ավագյան Ռոլանդ Մամիկոնի, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, ֆիզմաթ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր
2. Գրիգորյան Լևոն Շավիղի, ֆիզմաթ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր
3. Հարությունյան Վաչագան Վիկտորի, ֆիզմաթ. գիտ. դոկտոր, դոցենտ

Ուսումնաօժանդակ աշխատակիցներ

1. Քոթանջյան Աննա Սենիկի, ֆիզմաթ. գիտ. թեկնածու, ավագ լաբորանտ
2. Հախվերդյան Նաիրա Արշամի, ավագ լաբորանտ

Ըստ ընդհանուր ուղղությունների՝ ամբիոնում կատարված գիտական աշխատանքների ամփոփում

Դրամաշնորհային ծրագրեր

Թեմայի անվանումը	*Ղեկավար*
1. Երկրչափությամբ և տոպոլոգիայով պայմանավորված քվանտային երևույթներ և դրանց կիրառությունները կոսմոլոգիայում ու նանոֆիզիկայում (պետական ֆինանսավորում):	Սահարյան Ա. Ա.
2. Ըստ ժամանակի մոդուլված դաշտով ղեկավարվող արհեստականատոմական համակարգեր. կիրառությունները քվանտային համակարգիչներում և լազերային ֆիզիկայում (պետական ֆինանսավորում):	Կրյուչկյան Գ. Յու.
3. Ինտեգրվող համակարգերը քվանտային մեխանիկայում (պետական ֆինանսավորում):	Ներսեսյան Ա. Պ.
4. Սուպերհամաչափ համակարգերը քվանտային մեխանիկայում, դաշտի տեսություններում և գրավիտացիայում (պետական ֆինանսավորում):	Ներսեսյան Ա. Պ.
5. Ինտեգրվող սուպերսիմետրիկ մոդելներ ցածր չափողականություններում (պետական ֆինանսավորում):	Ներսեսյան Ա. Պ.
6. Գրավիտացիայի սկալյար-թենզորային տեսությունների կոսմոլոգիական և աստղաֆիզիկական արդիական կիրառությունները (պետական ֆինանսավորում):	Հարությունյան Գ. Հ.

Թեմա 1. Հետազոտվել են դաշտի քառակուսու, հոսանքի խտության ու էներգիա-իմպուլսի թենզորի միջին արժեքները սկալյար ու ֆերմիոնային քվանտային դաշտերի համար կոմպակտ

չափողականություններով հարթ, անտի-դե Սիտտերի ու դե Սիտտերի տարածություններում՝ սահմանների և կոնական դեֆեկտի առկայությամբ: Քննարկվել են կիրառությունները Կալուզա-Քլեյնի տիպի մոդելներում, մեծ լրացուցիչ չափողականություններով բրան-աշխարհի մոդելներում և գլանային ու տորոիդալ ածխածնային նանոխողովակների ֆիզիկայում: Դիտարկվելու են նաև կիրառությունները կոսմիկական լարերի ու գրաֆենային նանոկոների համար: Հետազոտվելու է մեկ-օղակային քվանտային երևույթների ազդեցությունը կոսմոլոգիական դինամիկայի վրա սկալյար-թենզորական տեսություններում և լարային էֆեկտիվ գրավիտացիայում: Քննարկվելու է մութ էներգիայի դերում քվանտային երևույթներով պայմանավորված էներգիայի հանդես գալու հնարավորությունը:

Թեմա 2. Իրականացվել են հետազոտություններ գերհաղորդչային շղթաների և նանոմեխանիկական օսցիլյատորների վրա հիմնված արհեստական ատոմների ոլորտներում: Մշակվել են նոր համակարգեր, որոնք փոխազդում են ըստ ժամանակի մոդուլված էլեկտրամագնիսական դաշտերի և գերկարճ լազերային փնջերի հետ: Աշխատանքը կարելի է բաժանել երկու շաղկապված մասերի՝ գերհաղորդչային քյուբիթների քվանտային դինամիկայի ուսումնասիրությունը երկմոդանի դաշտերում և ոչ գծային դիսիպատիվ օսցիլյատորի ուսումնասիրությունը որպես արհեստական ատոմական համակարգ:

Թեմա 3. Հետազոտվել են կալոջերոյի մոդելի ընդհանրացումները կուլոնյան պոտենցիալի առկայությամբ: Կառուցվել են շարժման ինտեգրալները՝ ներառյալ հավելյալ ինտեգրալները:

Թեմա 4. Ուսումնասիրված են կոմուտացիոն առնչություններն այդ ինտեգրալների միջև: Ապացուցված է նոր համակարգի ինտեգրելիությունը:

Թեմա 5. Նախագծի հիմնական նպատակն է կառուցել և ուսումնասիրել նոր (սուպերսիմետրիկ) ինտեգրվող համակարգեր: Մասնավորապես նախագիծը ենթադրում է՝

- կառուցել մոդելներ, որոնք նկարագրում են՝ զանգված ունեցող սուպերմասնիկ, որը շարժվում է Կեռ, Կեռ-AdS և Մայերս-Պերիի էքստրեմալ սև խոռոչների հորիզոնի մոտակայքում,
- կառուցել D=7 սուպեր-մեմբրանի D=8 սուպերսիմետրիկ 3-բրանի կոմպոնենտային գործողությունները, ինչպես նաև Բորն-Ինֆելդի սուպերսիմետրիկ տեսությունների կոմպոնենտային գործողությունները՝ սպոնտան խախտված սուպերսիմետրիայով,
- կառուցել և ուսումնասիրել Կալոջերոյի մաքսիմալ սուպերինտեգրվող ռացիոնալ մոդել կուլոնյան պոտենցիալով, ինչպես նաև Կալոջերոյի մոդելի սֆերիկ անալոգը օսցիլիատորի և կուլոնի պոտենցիալներով,
- ընդհանուր քվանտային U_q(gl(n)) հանրահաշվի, SO և Sp տիպի հանրահաշիվների համար լուծել L-օպերատորի ֆակտորիզացիայի խնդիրը: Կառուցել «սպինորային» R-մատրիցան համաչափությունների Sp(n) խմբի դեպքում, որը միացնում է երկու անվերջ-չափանի մետապլեկտիկ խմբերի ներկայացումները՝ Sp(n)-ի երկշերտ ծածկույթները,
- կառուցել R-օպերատորը, որը գործում է կամայական սպին-թենզորային ներկայացումների և Բակստերի Q-օպերատորի թենզորական արտադրյալի վրա:

Թեմա 6. Վաղ տիեզերքի տեսության շրջանակում կարևոր դեր է կատարում դե Սիտտերի մոդելի ուսումնասիրությունը: Ըստ ՅԲԴ-ի մոդիֆիկացված տեսության՝ տարբեր կոսմոլոգիական սկալյարների դեպքում (որոնք հանդես են գալիս որպես համապատասխան սկալյար դաշտի պոտենցիալներ), փնտրվել են լուծումներ՝ ինֆլյացիայի երևույթը նկարագրելու համար:

Մինիմալ և ոչ մինիմալ կապված դաշտի առկայությամբ դիտարկված են ինֆլյացիոն դինամիկայի երկու մոդելներ ՅԲԴ մոդիֆիկացված տեսության շրջանակում: Հաշվի են առնված վաղ կոսմոլոգիայում հարթայնության և հորիզոնի հատկությունները:

ՅԲԴ տեսության շրջանակում ուսումնասիրվել է ինֆլյացիայի սցենարներում (Ստարոբինսկու տիպի ինֆլյացիոն մոդելներ՝ $f(R)$ մոդելներ) սկալյար դաշտի չորրորդ աստիճանով պոտենցիալը ոչ մինիմալ գրավիտացիոն կապի դեպքում, ստացվել են դաշտի հավասարումների լուծումները:

Հետազոտված է նաև ոչ մինիմալ կապված դաշտի ինֆլյացիոն դինամիկան ինֆլատոնի պոտենցիալի ընդհանուր D-չափանի տարածության դեպքում:

Ուսումնասիրված են Կեռի լուծման առանձնահատկությունները:

Արտասահմանյան դրամաշնորհներ

Թեմայի անվանումը	*Ղեկավար*
1. Horizon 2020. H2020-MSCA-RISE-2014, Proposal Number: SEP-210156718. Proposal Acronym: Collective Excitations in Advanced Nanostructures (CoExAN) (2015-2018 թթ.):	Կրյուչկյան Գ. Յու.

Թեմա 1. Ուսումնասիրվել են քվանտային էլեկտրոդինամիկայի կիրառությունները նանոկառուցվածքներում: Հաշվարկված է վակուումային երևույթներից մեկը՝ էլեկտրոնի էներգետից մակարկաների Լամբի շեղումը քվանտային օղակների համար:

Ամբիոնում կատարված այլ աշխատանքների մասին:

Ուսումնասիրվել են վակուումային քվանտային երևույթները էլեկտրամագնիսական դաշտի համար հաղորդիչ սահմանների առկայությամբ կամայական չափողականությամբ դե Սիտտերի տարածությունում ու ժամանակից կախված աստիճանային օրենքով փոփոխվող մասշտաբային ֆակտորով ֆրիդմանյան կոսմոլոգիական մոդելներում: Ցույց է տրված, որ սահմանների առկայությունը հանգեցնում է էներգիայի հոսքի սահմաններին ուղղահայաց ուղղությամբ: Գրավիտացիոն դաշտի ազդեցությունը վակուումային ուժերի վրա էական է, երբ սահմանների միջև հեռավորությունը մեծ է ֆոնային տարածության կորության շառավղից: Ուսումնասիրվել է գրավիտացիոն դաշտի ու սֆերիկ սահմանի համատեղ ազդեցությունը սկալյար դաշտի վակուումի հատկությունների վրա հաստատուն բացասական կորությամբ տարածությունում: Սահմանի վրա դաշտը բավարարում է Ռոբինի եզրային պայմանին: Եզրային պայմանի գործակցի համար գոյություն ունի կրիտիկական արժեք, որից մեծ տիրույթում վակուումը դառնում է անկայուն: Ուսումնասիրվել է անտի-դե Սիտտերի տարածությունում բրանի ազդեցությունը սկալյար վակուումի բնութագրերի վրա: Քննարկված է այն դեպքը, երբ բրանն ուղղահայաց է անտի-դե Սիտտերի տարածության սահմանին: Վակուումային միջիններում բացահայտ առանձնացված են բրանով պայմանավորված մասերը: Դիրիխլեի ու Նեյմանի եզրային պայմաններից տարբեր Ռոբինի եզրային պայմանի համար բրանով մակածված էներգիայի խտությունը դրական է բրանին մոտ տիրույթում և բացասական մեծ հեռավորությունների վրա: Դիրիխլեի պայմանի համար էներգիայի խտությունը բացասական է ամենուրեք, իսկ Նեյմանի պայմանի համար՝ դրական: Դիտարկվել են ֆերմիոնային վակուումային հոսանքները դե Սիտտերի տարածությունում իր առանցքի ուղղությամբ կոմպակտիֆիկացված կոսմիկական լարի դաշտում: Լարի առանցքով մագնիսական հոսքի առկայությունը հանգեցնում է Ահարոնով-Բոմի երևույթի ֆիզիկական մեծությունների վակուումային միջինների համար:

Ենթադրվում է նաև կոմպակտ չափով պարփակված մագնիսական հոսք, որը հանգեցնում է հոսանքի խտության առաջացմանը լարի առանցքին զուգահեռ ուղղությամբ: Ցույց է տրված, որ վակուումային լիցքը և հոսանքը լարին ռադիալ ուղղությամբ զրո են: Առանցքային հոսանքի տոպոլոգիական մասը զույգ պարբերական ֆունկցիա է լարի առանցքի երկայնքով մագնիսական հոսքից և կենտ պարբերական ֆունկցիա է կոմպակտ չափով պարփակված հոսքից: Երկու դեպքում էլ պարբերությունը հավասար է հոսքի քվանտին: Ազիմուտալ ուղղությամբ հոսանքի խտությունը կենտ պարբերական ֆունկցիա է լարի առանցքի երկայնքով մագնիսական հոսքից և զույգ պարբերական ֆունկցիա է կոմպակտ չափով պարփակված հոսքից: Զանգվածեղ կոմպլեքս սկալյար դաշտի համար հետազոտվել են Հադամարի ֆունկցիան և հոսանքի խտության վակուումային միջինը ընդհանուր կառուցվածքի վերջավոր միջուկով կոսմիկական լարի շրջակայքում: Ենթադրվում է նաև, որ միջուկում

առկա է ոչ զրոյական մագնիսական հոսք: Ներքին երկրաչափությունը նկարագրվում է ստատիկ, գլանային համաչափ ընդհանուր տեսքի մետրիկական թենզորով: Միջուկից դուրս տիրույթում վակուումային միջինները բաժանված են իդեալականացված լարի երկրաչափությանը համապատասխանող մասերի և վերջավոր միջուկով մակածված մասերի: Զրոյից տարբեր է միայն հոսանքի խտությունը ազիմուտալ ուղղությամբ: Ի տարբերություն զրոյական շառավղով միջուկով կոսմիկական լարի դեպքի՝ վերջավոր միջուկի դեպքում հոսանքի խտությունը, ընդհանրապես ասած, պարբերական ֆունկցիա չէ մագնիսական հոսքից: Սա մագնիսական հոսքի հետ վակուումային ֆլուկտուացիաների անմիջական փոխազդեցության հետևանք է: Ի հավելումն՝ վակուումային հոսանքն ընդհանուր դեպքում մոնոտոն ֆունկցիա չէ լարից ունեցած հեռավորությունից և կարող է փոխել նշանը:

Թենզորա-սկալյար տեսությունների նկատմամբ հետաքրքրությունը կապված է Տիեզերքի կոսմոլոգիական էվոլյուցիայի ինֆլյացիոն փուլը հաշվի առնելու անհրաժեշտության հետ: ՀԸՏ-ում ինֆլյացիոն փուլից ֆրիդմանյան փուլին սահուն անցումը կարելի է ստանալ միայն կոսմոլոգիական պարամետրերի արժեքների շատ նուրբ ճշգրտումներով, իսկ ՅԲԴ տեսությունում գրավիտացիոն սկալյարի առկայությունը թույլ է տալիս անմիջապես իրականացնել էվոլյուցիոն փուլերի հերթափոխումը: Բացի դրանից՝ թենզորա-սկալյար տեսությունները բնականորեն ծագում են ժամանակակից սուպերլարային տեսություններում՝ որպես դրանց ցածր էներգիական սահման: Ընդունելի տարբերակներից մեկը ՅԲԴ տեսությունն է, որի արդյունքները թույլ դաշտերի տիրույթում համընկնում են ՀԸՏ-ի հետևությունների հետ, իսկ ուժեղ դաշտերի դեպքում տարբեր են: Հաշվետու ժամանակահատվածում ՅԲԴ տեսության տարբեր ներկայացումներում կառուցվել է դե Սիտտերի կոսմոլոգիական մոդելը: Հաստատվել է սկալյար դաշտի ազդեցության էական կախումը ζ կապի հաստատունի ընտրությունից: Ցույց է տրվել, որ ζ -ի դրական մեծ արժեքների դեպքում ընդարձակվող Տիեզերքի արագացումը համընկնում է համապատասխան Էյնշտեյնյան արժեքի հետ, իսկ ζ -ի փոքրացմանը զուգընթաց սկալյար դաշտի դերն աճում է, որը հանգեցնում է արագացման փոքրացմանը:

Իրականացվել են հետազոտություններ քվանտային տեխնոլոգիայի բնագավառում:

Ուսումնասիրվել են Կեռռի ուժեղ ոչ գծայնությամբ օժտված դիսիպատիվ ռեզոնատորներն արտաքին սինխրոնացված Գաուսյան է.մ. իմպուլսների ներքոֆոտոնային վիճակների ճարտարագիտության և բազմա-ֆոտոնների շրջափակման երևույթի (multi-photon blockade) իրականացման համար: Նորույթն այն է, որ ֆոտոնների շրջափակման երևույթը դիտարկվում է իմպուլսային ռեժիմներում: Ցույց է տրվել, որ Կեռռի ոչ գծային ռեզոնատորների համար իմպուլսային ռեժիմներում ֆոտոնների շրջափակումը կարող է հասնել աննախադեպ արժեքների՝ 85-90%, որը գերազանցում է Կեռռի ռեզոնատորների ստացիոնար ռեժիմներում իրականացվող 50% սահմանը: Ոչ գծային համակարգերի համար հետազոտվել է փուլային սիմետրիայի առկայության և քաոսի առաջացման կապը: Ուսումնասիրվել է քվանտային էլեկտրադինամիկայի հիմնական վակուումային երևույթներից մեկը՝ էլեկտրոնի էներգետից մակարկաների Լամբի շեղումը քվանտային օղակների համար: Քննարկված է էլեկտրամագնիսական դաշտում երկմակարդականի քվանտային համակարգի դինամիկան Բլոխի սֆերայի վրա Մագնուսի ներկայացմամբ: Այս մոտեցումը հնարավորություն է տալիս ստանալ ընդհանուր բանաձևեր քվանտային անցումների համար ռեզոնանսային մոտավորությունից դուրս: Ներկայացված են արդյունքներ քյուբիթի ինչպես մոնոխրոմատիկ դաշտի, այնպես էլ Գաուսյան իմպուլսի հետ փոխազդեցության համար:

Ուսումնասիրվել է գերհոսելի նեյտրոնային մրրկային թելերի կապը քվարկային կիսագերհոսելի թելերի հետ նեյտրոնային աստղերում:

Պաշտպանություն՝

1. Մուշեղ Սպարտակի Ռաֆայելյան (ֆիզմաթ. գիտ. թեկնածուի աստիճանի համար)՝ «Անիզոտրոպ մետանյութերի և մետանյութերի հիմքով խոլեստերինային հեղուկ բյուրեղների օպտիկական հատկությունները»:

Հրատարակություններ

Դասագիրք	Մենագրություն	Ուսումնական ձեռնարկ	Ուսումնամեթոդական ձեռնարկ	Հոդված	Ձեկուցման թեզիս
-	-	-	1	21	4

Գիտական և ուսումնամեթոդական հրատարակությունների ցանկ

Ուսումնական ձեռնարկ

1. *Է. Ս. Նազարյան,* Ձևագոյացման տեսական հիմունքները, ՀՊՃՀ «Ճարտարագետ» հրատ., Երևան, 2014, էջ 103:

Հոդված

1. *Э. А. Назарян, М. М. Аракелян, А. С. Симонян,* Теоретические исследования параметров качества в процессе вытяжки цилиндрических деталей, “Заготовительные производства в машиностроении”, 5, Москва, 2015, с. 24-30.
2. *Э. А. Назарян, М. М. Аракелян, А. С. Симонян,* Анализ процесса изгиба двухслойного листового пакета, ЗПМ, 8, Москва, 2014, с. 19-23.
3. *R. M. Avagyan, G. H. Harutyunyan, A. V. Hovsepyan, A. S. Kotanjyan,* De Sitter model in the presence of scalar fields. III Astrophysics, Vol. 57, No. 2, 2014, pp. 327-336.
4. *T. Sh. Navasardyan, A. A. Saharian,* Vacuum energy-momentum tensor in models with non-trivial topology in the presence of boundaries, Journal of Contemporary Physics (Armenian Academy of Sciences), 49, Issue 6, (Izvestiya NAN Armenii, Fizika, 2014, 49, 375-381), 2014, pp. 243-248.
5. *A. A. Saharian, V. F. Manukyan,* Scalar Casimir densities induced by a cylindrical shell in de Sitter spacetime, Class. Quantum Grav. 32, 2015, p. 025009.
6. *S. Bellucci, A. A. Saharian, N. A. Saharyan,* Wightman function and the Casimir effect for a Robin sphere in a constant curvature space, Eur. Phys. J. C, 74, 2014, p. 3047.
7. *E. R. Bezerra de Mello, A. A. Saharian, V. Vardanyan,* Induced vacuum currents in anti-de Sitter space with toral dimensions, Phys. Lett. B, 741, 2015, pp. 155-162.
8. *E. R. Bezerra de Mello, V. B. Bezerra, A. A. Saharian, H. H. Harutyunyan,* Vacuum currents induced by a magnetic flux around a cosmic string with finite core, Phys. Rev. D, 91, 2015, p. 064034.
9. *A. Mohammadi, E. R. Bezerra de Mello, A. A. Saharian,* Finite temperature fermionic charge and current densities induced by a cosmic string with magnetic flux, J. Phys. A: Math. Theor., 48, 2015, p. 185401.
10. *A. Mohammadi, E. R. Bezerra de Mello, A. A. Saharian,* Induced fermionic currents in de Sitter spacetime in the presence of a compactified cosmic string, Class. Quantum Grav., 32, 2015, p. 135002.
11. *A. S. Kotanjyan, A. A. Saharian, H. A. Nersisyan,* Quantum effects from boundaries and geometry for the electromagnetic field in de Sitter spacetime, 40th COSPAR Scientific Assembly, from 2–10 August Lomonosov Moscow State University, Book of abstracts, 2014, p. 8.
12. *A. S. Kotanjyan, A. A. Saharian, H. A. Nersisyan,* Electromagnetic Casimir effect for conducting plates in de Sitter spacetime, Phys. Scr. 90, 4, 2015, p. 06204.
13. *A. S. Kotanjyan, A. A. Saharian,* Electromagnetic fields and the radiation of a charged particle rotating along a closed trajectory around a dielectric cylinder, Journal of Physics: RREPS13 and Meghri13, Conference Series 517, 012025 doi:10.1088/1742-6596/517/1/012025, 2014, pp. 1-6.

14. *G. H. Hovsepyan, A. R. Shahinyan, G. Yu. Kryuchkyan,* Multiphoton blockades in pulsed regimes beyond the stationary limits, Physical Review A 90, 2014, p. 013839.
15. *G. H. Hovsepyan and G. Yu. Kryuchkyan,* Excitations of photon-number states in Kerr nonlinear resonator at finite temperatures, Eur. Phys. J., D 69, 2015, p. 64.
16. *G. Y. Kryuchkyan, O. I. Kyriienko,* Shelich,Lamb shift of energy levels in quantum rings, Journ. Phys. B: At. Mol. Opt. Phys. 48, 2015, p. 025401.
17. *G. A. Abovyan and G. Yu. Kryuchkyan,* Multiple resonant manipulations of qubits by train of pulses, Physical Review A 91, 073824, 2015, arXiv: 1503. p. 01665.
18. *T. S. Hakobyan, O. Lechtenfeld, A. P. Nersessian,* Superintegrability of generalized Calogero models with oscillator or Coulomb potential, Phys. Rev. D 90, (R), 2014, p. 101701.
19. *T. S. Hakobyan, D. Karakhanyan, O. Lechtenfeld,* The structure of invariants in conformal mechanics, Nucl. Phys. B 886, 2014, pp. 399-420.
20. *E. Gevorgyan, A. P. Nersessian, V. R. Ohanyan, E. Tolkachev*, Landau problem on the rotational ellipsoid, hyperboloid and paraboloid of revolution, Mod. Phys. Lett. A 29, 2014, p. 1450148.
21. *E. A. Nazaryan, M. M. Arakelyan, A. S. Simonyan,* Analysis of the Process of Bending a Two-layer Sheet Pascage, Prossidings of Int. congress of machines, technologies and materials, Varna, 2014, p. 6-9.

Զեկուցման թեզիս

1. *Э. А. Назарян, М. М. Аракелян, А. С. Симонян,* Определение параметров качества при вытяжке цилиндрических деталей, Труды межд. конф., “Технология упрочнения, теория и практика”, Санкт-Петербург, 14-17 апреля, 2015, с. 115-118.
2. *G. H. Hovsepyan, A. R. Shahinyan, G. Yu. Kryuchkyan,* IONS North America, Charlotte. Oral Presentation. Topic- “Parametrically driven nonlinear oscillator in strong quantum regime”, 2014, pp. 20-25.
3. *A. S. Kotanjyan, A. A. Saharian,* The radiation from a longitudinal oscillator moving along a circular trajectory, 2ndInternational Symposium “Optics and its applications”, 1-5 September, 2014, Yerevan-Ashtarak, 2014, p. 1-3.
4. *G. Yu. Kryuchkyan, G. H. Hovsepyan, A. R. Shahinyan,* International Conference and Workshop Quanta and Matter. QuantArm-2014, Tsaghkadzor, September 22-26, “Multiphoton Blockades Beyond the Fundamental Limit”, 2014, p. 18.

ՄԻՋՈՒԿԱՅԻՆ ՖԻԶԻԿԱՅԻ ԱՄԲԻՈՆ

Ամբիոնի վարիչ՝ *Բալաբեկյան Անահիտ Ռաֆիկի, ֆիզմաթ. գիտ. դոկտոր, դոցենտ*

Պրոֆեսորադասախոսական կազմը

1. Գրիգորյան Ռոմեն Պետրոսի, ֆիզմաթ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր
2. Դանագուլյան Ալիտա Սերգեյի, ֆիզմաթ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր
3. Ժամկոչյան Վահան Միքայելի, ֆիզմաթ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր
4. Մարգարյան Ռազմիկ Խալաթի, ֆիզմաթ. գիտ. թեկնածու, դոցենտ
5. Բզնունի Սուրիկ Արարատի, ֆիզմաթ. գիտ. թեկնածու, ասիստենտ
6. Հովհաննիսյան Գոհար Հովհաննեսի, ֆիզմաթ. գիտ. թեկնածու, ասիստենտ

Համատեղողներ

1. Սիրունյան Ալբերտ Մկրտչի, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, ֆիզմաթ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր
2. Ցականով Վասիլի Մկրտչի, ֆիզմաթ. գիտ. դոկտոր, դոցենտ

Ուսումնաօժանդակ աշխատակիցներ

1. Պետրոսյան Լեոնիդ Հենրիկի, ուսումն. լաբորատորիայի վարիչ
2. Խաչատրյան Անահիտ Արթուրի, ավագ լաբորանտ
3. Մկրտչյան Հասմիկ Սասունի, ավագ լաբորանտ
4. Օհանյան Կարապետ Սարիբեկի, ավագ լաբորանտ

Ըստ ընդհանուր ուղղությունների՝ ամբիոնում կատարված գիտական աշխատանքների ամփոփում

Ամբիոնում կատարված աշխատանքների մի մասը վերաբերում է.

1. Բարձր էներգիաների տիրույթում միջուկ-միջուկ փոխազդեցությունների ուսումնասիրություններին: Դեյտրոնների փնջով ճառագայթվել է ոսկու թիրախը: Ուսումնասիրվում են թիրախում ռադիոակտիվ իզոտոպների առաջացման հավանականությունները: Ուսումնասիրվում են մնացորդային միջուկների մետաստաբիլ վիճակների առաջացման հավանականությունները:

2. Կատարվում են ուսումնասիրություններ բժշկության մեջ օգտագործվող ռադիոնուկլիդների ստացման ուղղությամբ: Ստացվել են ^{nat}Te և ^{nat}Hf թիրախներում գամմա-փնջով ճառագայթման հետևանքով առաջացած մնացորդային միջուկների ելքերը՝ ներմուծված ակտիվության մեթոդով (E_{ymax} = 40 ՄէՎ), այդ թվում՝ բժշկական ^{111}In, ^{117m}Sn, ^{124}Sb և ^{177}Lu ռադիոիզոտոպների համար: Նախատեսվում է ստանալ ^{58}Ni(p, ()^{55}Co ռեակցիայի գրգռման ֆունկցիան: Փորձը կատարվելու է CYCLONE C18/18 արագացուցիչի վրա:

Հրատարակություններ

Դասագիրք	Մենագրություն	Ուսումնական ձեռնարկ	Ուսումնամեթոդական ձեռնարկ	Հոդված	Ձեկուցման թեզիս
-	-	1	-	6	-

Գիտական և ուսումնամեթոդական հրատարակությունների ցանկ

Ուսումնական ձեռնարկ

1. *Ա. Ռ. Բալաբեկյան*, Միջուկային ռեակցիաներ, ԵՊՀ հրատ., Երևան, 2014, 111 էջ:

Հոդված

1. *В. М. Жамкочян,* О процессах рождения чармония в ядро-ядерных соударениях, “Изв. НАН Армении, Физика”, 50, 2015, с. 151-158.
2. *A. R. Balabekyan, N. A. Demekhina, G. S. Karapetyan*, Spallation of 197Au with 4.4-GeV deuterons, “EPJ Web of Conferences 69”, 2014, 00022. http://dx.doi.org/10.1051/epjconf/20136900022

3. *A. Depman, V. Guimaraes, G. S. Karapetyan, A. R. Balabekyan,* Photon and proton induced fission on heavy nuclei at intermediate energies, "EPJ Web of Conferences 69", 2014, 00017. http://dx.doi.org/10.1051/epjconf/20136900017
4. *A. S. Danagulyan, G. H. Hovhannisyan, T. M. Bakhshiyan, R. H. Avagyan, A. E. Avetisyan, I. A. Kerobyan, R. K. Dallakyan,* Photonuclear Reactions on ^{112,118,124}Sn, ^{nat}Te, and ^{nat}Hf Targets, "Physics of Atomic Nuclei", Vol. 77, No. 11, 2014, pp. 1313-1320
5. *A. S. Bznuni, N. N. Baghdasaryan, A. R. Amirjanyan*, Power Prediction Improvement of PARCS-RELAP Coupled Code for Peripheral Fuel Assemblies In WWER-440 Reactor, "2014 Fall CAMP Meeting, Rockville MD", October 22-24, 2014, p. 11-16.
6. *A. S. Bznuni,* Overview of Softwares Applied in Neutronics Analysis in NRSC ANRA, "Kick of Meeting of Reactor Physics Group of WWER Regulatory Forum", 24-26 September, 2014, p. 189-196.

ՕՊՏԻԿԱՅԻ ԱՄԲԻՈՆ

Ամբիոնի վարիչ՝ *Ալլահվերդյան Ռոման Բախշիի, ֆիզմաթ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր*

Պրոֆեսորադասախոսական կազմը

1. Կարայան Համլետ Սուրենի, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, ֆիզմաթ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր
2. Ասլանյան Լևոն Սուրենի, ֆիզմաթ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր
3. Հակոբյան Ռաֆիկ Սերյոժայի, ֆիզմաթ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր
4. Մուրադյան Լևոն Խաչիկի, ֆիզմաթ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր
5. Էլբակյան Վաչագան Լևոնի, ֆիզմաթ. գիտ. թեկնածու, դոցենտ
6. Հարությունյան Իշխան Գրիգորի, ֆիզմաթ. գիտ. թեկնածու, դոցենտ
7. Քոչարյան Լևոն Մուսայելի, ֆիզմաթ. գիտ. թեկնածու, դոցենտ
8. Կուտուզյան Աղավնի Ալբերտի, ֆիզմաթ. գիտ. թեկնածու, ասիստենտ
9. Գրիգորյան Ջուլիետտա Խաչատուրի, դասախոս

Համատեղողներ

1. Չիլինգարյան Յուրի Սերգեյի, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, ֆիզմաթ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր, ամբիոնի պատվավոր վարիչ
2. Մակարյան Անուշավան Հայկարամի, ֆիզմաթ. գիտ. թեկնածու, դոցենտ
3. Սանթրոսյան Էմին Ազատի, ֆիզմաթ. գիտ. թեկնածու, դոցենտ
4. Սահակյան Նաիրա Սարգսի, դասախոս

Ուսումնաօժանդակ աշխատակիցներ

1. Դաղալյան Տիգրան Կարենի, ֆիզմաթ. գիտ. թեկնածու, ուսումն. լաբորատորիայի վարիչ
2. Սահակյան Նաիրա Սարգսի, ուսումն. լաբորատորիայի վարիչ
3. Կարախանյան Ալվարդ Գուրգենի, ավագ լաբորանտ
4. Կիրակոսյան Արթուր Աբրահամի, ավագ լաբորանտ
5. Հակոբյան Մարիամ Ռաֆիկի, ավագ լաբորանտ

6. Մարգարյան Գոհարիկ Հրանտի, ավագ լաբորանտ
7. Վարդանյան Նունե Ֆրունզեի, ավագ լաբորանտ
8. Գալստյան Սուրեն Ռուբենի, ուսումնական վարպետ

Ըստ ընդհանուր ուղղությունների՝ ամբիոնում կատարված գիտական աշխատանքների ամփոփում

Դրամաշնորհային ծրագրեր

Թեմայի անվանումը	*Ղեկավար*
1. Ղեկավարվող արատներով հեղուկ բյուրեղական ֆոտոնային կառուցվածքների օպտիկական հատկությունների փորձարարական ուսումնասիրումը (պետական ֆինանսավորում):	Ալլահվերդյան Ռ. Բ.
2. Նոր կողմնորոշումային երևույթներ մաքուր և նանոմասնիկներով հարստացված հեղուկ բյուրեղներում և դրանց կիրառությունները ֆոտոնիկայում (պետական ֆինանսավորում):	Հակոբյան Ռ. Ս.

Թեմա 1. Նախագծով նախատեսված է եղել կանխատեսել և ուսումնասիրել հեղուկ բյուրեղական ֆոտոնային կառուցվածքներում (ֆոտոնային բյուրեղներում) արտաքին դաշտերով և հիդրոդինամիկ հոսքերով արատների մակածման հնարավորությունը, ինչպես նաև դիտել փոքր կոնցենտրացիայով ֆերոմագնիսական և ֆերոէլեկտրական նանոմասնիկների ազդեցությունը այդ համակարգերի հատկությունների վրա:

Աշխատանքում, նախագծին համապատասխան, մասնավորապես ստացվել են հետևյալ հիմնական արդյունքները. լազերային դաշտերով քիրալ հեղուկ բյուրեղական ֆոտոնային կառուցվածքներում արատների մակածման հնարավորությունների, ինչպես նաև նրանց օպտիկական հատկությունների ղեկավարման և սպեկտրային առանձնահատկությունների հստակ պատկերը: Ստացվել է նաև վերոհիշյալ կառուցվածքներում հիդրոդինամիկական հոսքերով պլանար արատների մակածման մեխանիզմների, դրանց պայմանների և ղեկավարման հնարավորությունների հստակ պատկերը: Որպես արդյունք ստացվել են նաև քիրալ հեղուկբյուրեղական ֆոտոնային կառուցվածքներում պարույրի քայլի գրադիենտային բաշխում ստանալու օպտիկական, թերմոմեխանիկական և հիդրոդինամիկական մեխանիզմները, ինչպես նաև այդ մեխանիզմների վրա միջավայրում առկա նանոմասնիկների ազդեցությունը:

Նախագծով նախատեսված աշխատանքների իրականացման արդյունքում կատարողներից Մարգարիտ Հակոբյանը պաշտպանել է «Լուսային փնջերի բևեռացման ու ինտենսիվության ղեկավարման հեղուկ բյուրեղական տարրերի կատարելագործումը նանոմասնիկներով» թեմայով թեկնածուական ատենախոսությունը, իսկ Հերմինե Ղարագուլյանի՝ «Լույսի բևեռացման վարքի հետազոտությունը խիրալ հեղուկ բյուրեղական ֆոտոնիկ կառուցվածքներով անցնելիս» թեմայով թեկնածուական ատենախոսությունը պաշտպանության է ներկայացվելու 2015 թվականի վերջին:

Թեմա 2. Նախագծի նպատակն էր կանխատեսել ու դիտել նոր կողմնորոշումային ու հիդրոդինամիկական երևույթներ մաքուր և նանոմասնիկներով ներարկված հեղուկ բյուրեղներում:

Աշխատանքում մասնավորապես ստացվել են հետևյալ հիմնական արդյունքները. ուսումնասիրվել է մաքուր և նանոմասնիկներով հարստացված նեմատիկ հեղուկ բյուրեղներում ֆլեքսաէլեկտրականության առկայությամբ սեպաձև (մաքուր լայնական ու երկայնական ճկումներով) 100նմ-10մկմ չափերով դիսկլինացիաների կայունությունը, առաջարկվել է երկու միատեսակ շրջանային

բևեռացումներով պարուրաձև բևեռացումային դիֆրակցիոն ցանցերի գրման նոր էֆեկտիվ սխեմա: Ուսումնասիրվել է հոմեոտրոպ և հոմեոտրոպ-պլանար սահմանային պայմաններով խոլեստերիկների, թվիստ ու գերթվիստ նեմատիկի կայունության շեմը նանոմասնիկների առկայությամբ, դիտվել ու տեսականորեն բացատրվել են ջերմամեխանիկական տատանումներ գլանաձև-հիբրիդ կողմնորոշված ՆՀԲ-ներում, ցույց է տրվել, որ ֆերոէլեկտրական և ֆերոմագնիսական նանոմասնիկները ուժեղացնում են հեղուկ բյուրեղային համակարգի ֆիզիկական հատկությունները:

Ներկայացված գործունեության շրջանակում կատարողներից Արթուր Ալեքսանյանը պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն, իսկ մյուս կատարող Մարիամ Հակոբյանի ատենախոսությունը պաշտպանության է ներկայացվելու 2015 թվականի վերջին:

Արտասահմանյան դրամաշնորհներ

Թեմայի անվանումը	*Ղեկավար*
1. Ֆեմտովայրկյանային ժամանակային սանդղակում ազդանշանի բնութագրման նոր մեթոդներ. սիմիլարիտոնի վրա հիմնված սպեկտրալ ինտերֆերաչափություն և սպեկտրաժամանակային արտապատկերում (ՀՕՖ ԳԿՀԱՀ դրամաշնորհ ANSEF opt-3604):	Մուրադյան Լ. Խ.
2. Արդյունավետ սպեկտրալ ֆոկուսացում CARS սպեկտրոսկոպիայի/միկրոսկոպիայի համար (ՀՕՖ ԳԿՀԱՀ (ANSEF) դրամաշնորհ ANSEF opt-3575):	Զեյթունյան Ա. Ս.

Թեմա 1. Հաշվետու ժամանակահատվածում կատարվել են հետևյալ աշխատանքները. սիմիլարիտոնով մակածված ժամանակային ոսպնյակում սպեկտրաժամանակային արտապատկերման սահմանային լուծողունակության ուսումնասիրություն, սիմիլարիտոնով մակածված ժամանակային ոսպնյակում ֆեմտովայրկյանային իմպուլսների բնութագրման սպեկտրալ ինտերֆերաչափության մեթոդի կիրառելիության տիրույթի հետազոտություններ, ինչպես նաև ոչ գծային-դիսպերսիոն սիմիլարիտոնների գեներացման հակադարձ խնդիրը՝ ֆեմտովայրկյանային իմպուլսների բնութագրման տեսանկյունից:

Թեմա 2. Իրականացվել է սիմիլարիտոնով մակածված ժամանակային ոսպնյակում ճառագայթման սպեկտրալ սեղմման /սպեկտրալ ֆոկուսացման/ հնարավորությունների ուսումնասիրություն՝ հաճախային խառնման տարբեր ոչ գծային երևույթների միջոցով: Կատարվել է սիմիլարիտոնով մակածված ժամանակային ոսպնյակում ճառագայթման հաճախային վերալարման մեթոդի մշակում հաճախային խառնման տարբեր ոչ գծային երևույթների միջոցով՝ ռեզոնանսային սպեկտրոսկոպիայի և օպտիկական կապի խնդիրների լուծման նպատակով: Հետազոտությունները ներառել են նաև CARS պրոցեսում սիմիլարիտոնով մակածված սպեկտրաժամանակային ոսպնյակի նախնական ուսումնասիրություններ՝ սպեկտրոսկոպիայում, միկրոսկոպիայում և էնդոսկոպիայում կիառման հեռանկարով:

Ամբիոնում կատարված այլ աշխատանքների մասին:

Հաշվետու ժամանակահատվածում ամբիոնում կատարված հիմնական գիտահետազոտական աշխատանքների արդյունքները հանգում են հետևյալին՝

1. Ուսումնասիրվել են օպտիկական անշրջելիության երևույթը և ԽՀԲ բարակ թաղանթից լույսի ընտրողաբար անդրադարձման (ֆոտոնային արգելված գոտու (ՖԱԳ-ի)) միաժամանակ դիտվող երկու տիրույթների հնարավորությունը: Շարունակվել են տեսական և փորձարարական աշխատանքները ասիմետրիկ սահմանային պայմաններով քիրալ հեղուկ բյուրեղական (ԽՀԲ) թաղանթում օպտիկական

անշրջելիության վերաբերյալ: Ձեռք են բերվել նոր փորձարարական արդյունքներ, որոնք պահանջում են նոր տեսական մոտեցումներ և մեկնաբանություններ:

2. Շարունակվել են փորձնականորեն հետազոտությունները պուազեյլյան հիդրոդինամիկ հոսքերով քիրալ ՀԲ-ական ֆոտոնային կառուցվածքներում պլանար արատի մակածման և այդ հոսքերով քիրալ ֆոտոնային կառուցվածքի ՖԱԳ-ի ղեկավարման հնարավորությունների բացահայտման ուղղությամբ:

3. Ուսումնասիրվել է երկու տարբեր քայլերով ԽՀԲ-ի դիֆֆուզիայի երևույթը: Տարբեր քայլերով ԽՀԲ թաղանթների անմիջական հպման մեթոդով ձևավորվել է գրադիենտային քայլով քիրալ ՀԲ ֆոտոնային կառուցվածք: Փորձնականորեն հետազոտվել են այդ կառուցվածքից լույսի անցման և անդրադարձման սպեկտրները: Ուսումնասիրվել է լույսի բևեռացման վարքը գրադիենտային քայլով քիրալ հեղուկ բյուրեղական ֆոտոնային կառուցվածքում տարածվելիս և լույսի բևեռացման ղեկավարման հնարավորությունը հեղուկ բյուրեղական ֆոտոնային կառուցվածքների միջոցով:

4. Ներկանյութով հարստացված քիրալ հեղուկ բյուրեղական ֆոտոնային բյուրեղների անդրադարձման, կլանման, անցման և ֆոտոլյումինեսցենցիայի սպեկտրային առանձնահատկությունների ուսումնասիրությունների արդյունքում հաջողվել է այդ կառուցվածքներում ստանալ լազերային գեներացիա:

5. Թվիստ կողմնորոշմամբ նեմատիկ հեղուկ բյուրեղում ուսումնասիրվել է բևեռացված լույսի վարքը Ջոնսի մատրիցական մեթոդի օգնությամբ (բարակ շերտերի բաժանման մեթոդ): Ակնառության նպատակով լույսի բևեռացման տարածական դինամիկան ներկայացվել է Պուանկարեի սֆերայի օգնությամբ:

6. Ներկայացված է տեսական մոդել, որը նկարագրում է ֆեռոէլեկտրական նանոմասնիկներով (ՆՄ) հարստացված հեղուկ բյուրեղային համակարգի վիճակագրական մեխանիկան: ՆՄ-ների և նեմատիկ հեղուկ բյուրեղի (ՆՀԲ) մոլեկուլների փոխազդեցության պոտենցիալ էներգիայի և ազատ էներգիայի համար ստացվել են արտահայտություններ՝ հաշվի առնելով նաև ՆՄ-ների կողմնորոշումային բախշվածությունը: Օնզագերի հիմնարար տեսությունն ընդհանրացված է այս համակարգի համար: Օգտագործելով Լագրանժի անորոշ գործակցի մեթոդը՝ համակարգի ազատ էներգիայի վարիացիայի միջոցով ստացվել է հավասարում ՆՀԲ-ի մոլեկուլների կողմնորոշային բախշման ֆունկցիայի համար:

7. Իրականացված հետազոտությունները ներառել են սիմիլարիտոնների կիրառությունների գործարկում ֆեմտովայրկյանային ժամանակային սանդղակում ազդանշանների անալիզի և սինթեզի խնդիրներում, հատկապես՝ իմպուլսների ժամանակային և սպեկտրալ սեղմման, սիմիլարիտոնի վրա հիմնված սպեկտրալ ինտերֆերաչափության և ֆեմտովայրկյանային օսցիլոգրաֆի համար: Նաև նախնական հետազոտություններ են իրականացվել բարձր լուծողունակության չիրպավորված CARS մեթոդում լայն սպեկտրով սիմիլարիտոնների պոտենցիալ կիրառությունների ուղղությամբ՝ սպեկտրալ ֆոկուսացման և իմպուլսային CARS-ի գործարկման ուղղությամբ՝ մեկ ֆեմտովայրկյանային լազերի օգտագործմամբ:

Հրատարակություններ

Դասագիրք	Մենագրություն	Ուսումնական ձեռնարկ	Ուսումնամեթոդական ձեռնարկ	Հոդված	Ձեկուցման թեզիս
-	-	-	-	19	7

Գիտական և ուսումնամեթոդական հրատարակությունների ցանկ

Հոդված

1. *Ա. Խաչատրյան, Լ. Ս. Ասլանյան,* ԺԲԿ առարկայի մշակումն ու ներդրումը ԵՊՀ-ում, «Ուսումն. ռեսուրս. վիրտուալիզ. կոնֆերանսի նյութեր», Երևան, 2015, էջ 75-82:
2. *Ռ. Մ. Ավագյան, Հ. Ս. Կարայան,* Կրթական համակարգը փորձադաշտ չէ, «Առավոտ» օրաթերթ, 42/4885/, 23.03.2015:
3. *М. Р. Акопян, А. А. Кандевосян, Р. С. Акопян, Ю. С. Чилингарян,* О стабильности однородной ориентации в плоскопараллельной ячейке жидкого кристалла, обогащенного наночастицами, “Известия НАН Армении, Физика”, 49 (5), 2014, с. 309-316.
4. *Р. Б. Алавердян, А. Л. Асланян, Л. С. Асланян, Г. С. Геворгян, С. Ц. Нерсисян*, Поляризованный свет в анизотропной среде с кручением, “Известия НАН Армении, Физика”, т. 50, № 2, 2015, с. 185-193.
5. *А. Л. Асланян, Л. С. Асланян, Ю. С. Чилингарян,* О матричном методе Джонса в анизотропной среде с кручением, ”Оптика и спектроскопия”, том 119, № 4, 2015, с. 151-156.
6. *П. О. Вардеванян, В. Л. Элбакян, М. А. Шагинян, М. В. Минасян, М. А. Парсаданян, Н. С. Саакян,* Определение изобестической точки спектров поглощения комплексов ДНК бромистым этидием, “Журнал прикладной спектроскопии”, т. 81. 6, 2014, с. 970-974.
7. *Г. С. Караян, В. Л. Элбакян,* Фотоэлектрическая солнечная энергетика в нагорных условиях, Избранные материалы IX международной конференции “Sustainabie Development of Mountain Territories”, 3 (5), 2014, с. 71-77.
8. *L. Aslanyan, A. L. Aslanyan Yu. S. Chilingaryan,* Geometrical Optics of a Twist_Oriented Nematic Liquid Crystal, “Optics and Spectroscopy”, Vol. 116, No. 3, 2014, pp. 483-487.
9. *M. R. Hakobyan, R. B. Alaverdyan, R. S. Hakobyan,* Thermomechanical Effects in Hybrid and Cylindrical-Hybrid Oriented Nematic Liquid Crystals, “Mol. Cryst. and Liquid Cryst.”, 596 (1), 2014, p. 152-162.
10. *M. R. Hakobyan, R. B. Alaverdyan, R. S. Hakobyan, Yu. S. Chilingaryan,* Volume Expansion Mechanism of Laser-Induced Hydrodynamic Reorientation, “Armenian Journal of Physics”, 7 (1), 2014, pp. 19-27.
11. *M. R. Hakobyan, R. B. Alaverdyan, R. S. Hakobyan, Yu. S. Chilingaryan,* Enhanced Physical Properties of Nematics Doped with Ferroelectric Nanoparticles, “Armenian Journal of Physics”, 7 (1), 2014, pp. 11-18.
12. *M. R. Hakobyan and R. S. Hakobyan,* Liquid-Crystal Devices and Waveplates for light controlling, “Armenian Journal of Physics”, vol. 7, issue 2, 2014, pp. 59-68.
13. *H. Gharagulyan, M. S. Rafayelyan, A. H. Gevorgyan, R. B. Alaverdyan,* Spectral Properties of Light in Photonic Liquid Crystals Doped with Nanoparticles in the Presence of Induced Defects, “Proceedings of ALPS'14”, 2014, pp. 207-208.
14. *H. S. Karayan,* Quantum Mechanics and physical calculations, “2nd International Symposium on the Modern Physics of Compact Stars and Relativistic Gravity, IOP Publishing Journal of Physics: Conference Serie”, 496, 2014, doi:10.1088/ 1742-6596/496/1/012031.
15. *Lefort, M. Kalashyan, G. Ducourthial, T. Mansuryan, R. P. O'Connor, F. Louradour,* Sub-30-fs pulse compression and pulse shaping at the output of a 2m long optical fiber in the near-infrared range, “J. Opt. Soc. Am. B”, Vol. 31, No. 10, 2014, pp. 2317-2324.
16. *V. G. Harutyunyan, K. M. Gambaryan, V. M. Aroutiounian, I. G. Harutyunyan,* InAsSbP Quantum Dot Mid-IR Photodetectors Operating at Room Temperature, “Infrared Physics and Technology”, doi:10.1016/ J.infrared.2014, 2014, 11.008.
17. *M. R. Hakobyan,* Forced convection in nematics liquid crystals in the absence of reorientation, “Proc. YSU, Phys. and Math. Sciences”, 3, 2014, p. 56-61.

18. *H. Gevorgyan, R. B. Alaverdyan, H. Gharagulyan, M. S. Rafayelyan, H. Grigoryan,* Diffusion in liquid crystals of two cholesterics with different pitches, "Journal of Nanophotonics", Vol. 9 (1), 093591-1-093591-11, doi:10.1117/1.JNP.9.093591. Published online Apr. 24, 2015.
19. *R. S. Asatryan, N. R. Khachatryan, H. S. Karayan,* On the Method of Distant Infrared Monitoring of Forest Spaces and Gas Main Pipelines, "American Research Journal of Agriculture", Original Article Volume 1, Issue 2, April, 2015, ISSN 2378-9018.

Զեկուցման թեզիս

1. *L. S. Aslanyan,* Quasi-spin vector and geometrical optics of inhomogeneous anisotropic Media, "Optics and its applications" II Intern. symp. Armenia, 2014, p. 83.
2. *H. Toneyan, A. Zeytunyan, L. Mouradian, V. Tsakanov, F. Louradour, A. Barthelemy, R. Zadoyan*, 8x, 12x, and 23x Spectral Compressionby All-Fiber, Classic, and Similaritonic Techniques, "Frontiers in Optics 2014", Tucson, Arizona, USA, 19-23 October, 2014.
3. *L. Kh. Mouradian,* Spectral Compression-Temporal Lensing and Fourier Conversion in Ultrafast Optics, "Optics-2014, 2nd Int. Symposium Optics & Its Applications", 1-5 September, Yerevan-Ashtarak, 2014, p. 61.
4. *A. Grigoryan, A. Kutuzyan, G. Yesayan, L. Mouradian,* Spectral compression of randomly modulated pulses, "Optics-2014, 2nd Int. Symposium Optics & Its Applications", 1-5 September, Yerevan-Ashtarak, 2014, p. 141.
5. *A. Grigoryan, H. Toneyan, A. Zeytunyan, A. Kutuzyan, G. Yesayan, L. Mouradian,* Spectral self-compression of Femtosecond pulses, "Optics-2014, 2nd Int. Symposium Optics & Its Applications", 1-5 September, Yerevan-Ashtarak, 2014), p. 131.
6. *H. Toneyan, A. Zeytunyan, L. Mouradian, V. Tsakanov, F. Louradour, A. Barthelemy, R. Zadoyan,* Spectral Compression of Femtosecond pulses: Classic, All-Fiber, and Similaritonic Techniques, "Optics-2014, 2nd Int. Symposium Optics & Its Applications", 1-5 September, Yerevan-Ashtarak, 2014, p. 112.
7. *M. Kalashyan, C. Lefort, L. Martinez-Leon, T. Mansuryan, L. Mouradian, F. Louradour,* Fiber Delivery of Sub-20 fs Nanojoule Pulses with a Grism-based Dispersive Line, "Optics-2014, 2nd Int. Symposium Optics & Its Applications", 1-5 September, Yerevan-Ashtarak, 2014, p. 137.

Ֆակուլտետում գործող լաբորատորիաների թիվը՝ 8

ՔՎԱՆՏԱՅԻՆ ԵՐԵՎՈՒՅԹՆԵՐԻ ՀԵՏԱԶՈՏՄԱՆ ԵՎ ՄՈԴԵԼԱՎՈՐՄԱՆ ԳՀ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱ

Գիտական ղեկավար՝ *Մեղրակյան Դավիթ Մհերի, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, ֆիզմաթ. գիտ. դոկտոր, գլխավոր գիտաշխատող*

Լաբորատորիայի աշխատակիցների կազմը

1. Մուրադյան Ատոմ Ժորայի, ֆիզմաթ. գիտ. դոկտոր, առաջատար գիտաշխատող
2. Մուրադյան Գևորգ Ատոմի, ֆիզմաթ. գիտ. թեկնածու, առաջատար գիտաշխատող
3. Բաղալյան Դավիթ Հայրապետի, ֆիզմաթ. գիտ. դոկտոր, ավագ գիտաշխատող
4. Հայրապետյան Մեխակ Վազգենի, ֆիզմաթ. գիտ. թեկնածու, ավագ գիտաշխատող

5. Աբրահամյան Մարտին Գրիգորի, ֆիզմաթ. գիտ. թեկնածու, գիտաշխատող
6. Գրիգորյան Լյովա Նազարեթի, ֆիզմաթ. գիտ. թեկնածու, գիտաշխատող
7. Պետրոսյան Պետիկ Գրիգորի, ֆիզմաթ. գիտ. թեկնածու, գիտաշխատող

Ըստ ընդհանուր ուղղությունների՝ լաբորատորիայում կատարված գիտական աշխատանքների ամփոփում

Թունելացման դինամիկայում միջմասնիկային փոխազդեցությունների և սկզբնական վիճակի կոհերենտության դերի մասին լրացուցիչ լուսաբանում ստանալու համար շարունակվել են երկու մասնիկների թունելացման երևույթի քննարկումը գերող պոտենցիալի համար: Երկփունջ նյութական ալիքների ինտերֆերոմետրի պրոբլեմում քննարկվել է առանձնացված իմպուլսային վիճակների բազմաճառագայթ սուպերպոզիցիայով ինտերֆերոմետրերի իրականացման հնարավորությունը: Մանրամասն քննարկվել են Գաուսյան դիսկրետ իմպուլսային վիճակների ստացման իրական հնարավորությունները ներկա տեխնոլոգիական միջոցներով՝ մասնավորապես օգտագործելով կոհերենտ ցրումն օպտիկական ցանցերի վրա: Ուսումնասիրվել է քվանտային մասնիկի երկուղի ցրումը հետերոկառուցվածքներում:

Հետազոտվել են քվանտային նեյտրոնային մրրիկների պինինգի ու դեպինինգի երևույթները նեյտրոնային աստղի միջուկում և բաբախիչների պտույտի ոչ ստացիոնար դրսևորումները:

Ուսումնասիրվել են կիսահաղորդչային նանոբյուրեղներ պարունակող սիլիկատային ապակիների օպտիկական թողարկման սպեկտրների ջերմաստիճանային կախվածությունները՝ կախված նրանցում նանոբյուրեղների չափերից:

ՄԱԿՐՈՄՈԼԵԿՈՒԼՆԵՐԻ ՖԻԶԻԿԱՅԻ ԳՀ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱ

Գիտական ղեկավար՝ *Հարությունյան Սամվել Գառնիկի, ֆիզմաթ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր, գլխավոր գիտաշխատող*

Լաբորատորիայի աշխատակիցների կազմը

1. Առաքելյան Վալերի Բեյբութի, ֆիզմաթ. գիտ. դոկտոր, առաջատար գիտաշխատող
2. Բարխուդարյան Վիգեն Գրիգորի, ֆիզմաթ. գիտ. դոկտոր, ավագ գիտաշխատող
3. Մամասախլիսով Եվգենի Շամիլի, ֆիզմաթ. գիտ. դոկտոր, ավագ գիտաշխատող
4. Մորոզով Վլադիմիր Ֆյոդորի, ֆիզմաթ. գիտ. դոկտոր, ավագ գիտաշխատող
5. Կարապետյան Նելլի Հրանտի, կենս. գիտ. թեկնածու, ավագ գիտաշխատող
6. Ալոյան Լուսինե Ռաֆիկի, ֆիզմաթ. գիտ. թեկնածու, գիտաշխատող
7. Նավոյան Զավեն Էմիլի, ֆիզմաթ. գիտ. թեկնածու, գիտաշխատող
8. Վարդանյան Իշխան Վոլոդյայի, ֆիզմաթ. գիտ. թեկնածու, գիտաշխատող
9. Ղազարյան Ռուզան Սուրենի, կենս. գիտ. թեկնածու, կրտսեր գիտաշխատող
10. Տոնոյան Շուշանիկ Արմենի, ֆիզմաթ. գիտ. թեկնածու, կրտսեր գիտաշխատող
11. Քարամյան Կարինե Կառլենի, կրտսեր գիտաշխատող
12. Վարդանյան Հարություն Բաբկենի, տնտ. գիտ. թեկնածու, ավագ ինժեներ
13. Պողոսյան Միքայել Կարենի, ավագ ինժեներ
14. Ավետիսյան Անի Արթուրի, ավագ լաբորանտ

15. Բոյաջյան Հասմիկ Բենիկի, ավագ լաբորանտ
16. Սինյավսկայա Ալլա Կոնստանտինի, ավագ լաբորանտ
17. Ասլիկյան Մուշեղ Արթուրի, լաբորանտ
18. Դանոյան Աստղիկ Անդրանիկի, լաբորանտ
19. Հովհաննիսյան Արմեն Թադևոսի, լաբորանտ

Ըստ ընդհանուր ուղղությունների՝ լաբորատորիայում կատարված գիտական աշխատանքների ամփոփում

Գիտական թեմաներ

Թեմայի անվանումը	*Ղեկավար*
1. Մակրոմոլեկուլների կառուցվածքային փոխակերպումների ջերմադինամիկան և կինետիկան (պետական ֆինանսավորում):	Հարությունյան Ս. Գ.

Թեմա 1. *ԴՆԹ-լիգանդ փոխազդեցություններ:* Հաշվետու ժամանակահատվածում շարունակվել են UV-VIS սպեկտրոֆոտոմետրիայի, շրջանային դիքրոիզմի և մածուցիկաչափության եղանակներով մեզո-տետրա-(4N-օքսիէթիլպիրիդիլ) պորֆիրինի (TOEPyP4) և նրա CuTOEPyP, CoTOEPyP փոխազդեցության՝ ԴՆԹ-ի տարբեր կոնֆորմացիոն ձևերի հետ հետազոտությունները: Ցույց է տրվել, որ այս պորֆիրինների հետ փոխազդեցության պատճառով ԴՆԹ-ի բնութագրական մածուցիկությունը աճում է պորֆիրինի կոնցենտրացիայի աճման հետ զուգահեռ որոշակի տիրույթում, որը հաստատում է սպեկտրալ մեթոդներով ստացված փոշազդեցության ինտերկալացիոն մեխանիզմը: Հաշվվել են կոմպլեքսների կապման K_b և n հաստատունները, ինչպես նաև էնթալպիա, էնտրոպիա և Գիբսի ազատ էներգիա ջերմադինամիկական պոտենցիալների փոփոխությունները ԴՆԹ-ի տարբեր ձևերի հետ կոմպլեքսաառաջացման ժամանակ: Ցույց է տրված, որ ԴՆԹ-ի հետ ինտերկալացիայի եղանակով կապվող TOEPyP4 և CuTOEPyP4 պորֆիրիններն ավելի ուժեղ են փոխազդում ԴՆԹ-ի A-ձևի, քան B-ձևի հետ:

Տեսական հետազոտություններ: Հաշվետու ժամանակահատվածում տեսականորեն հետազոտվել են խնդիրներ, որոնք առնչվում են մակրոմոլեկուլների կարգ-անկարգավորվածություն անցումների վրա լուծիչի ազդեցությանը, ՌՆԹ-ի կինետիկական և թերմոդինամիկական ուսումնասիրությանը, պոլի-մերային բաղադրիչների կառուցվածքին, ինչպես նաև անկարգավորվածության էֆեկտներին հետերոպոլիմերներում:

Ստացվել են հետևյալ արդյունքները.

1 Տեսականորեն հայտնաբերվել է սառը դենատուրացման պրոցեսը ՌՆԹ-ում:

2 Հայտնաբերվել է 2-րդ սեռի անհավասարակշիռ փուլային անցում ՌՆԹ-ում:

Ստացվել է պարույր-կծիկ անցման պարամետրերի ձևափոխությունը հետերոգեն պոլիպեպտիդների և պոլինուկլեոտիդների համար:

Երկշերտ լիպիդային թաղանթներ: Շարունակվել են ուսումնասիրությունները meso-tetra-(4N-oxyethylpyridyl) պորֆիրինի /TOEtPyP4/ և նրա Co մետաղական ածանցյալի /CoTOEtPyP4/՝ երկշերտ լիպիդային թաղանթների /ԵԼԹ/ հետ փոխազդեցության ուղղությամբ: Կատարվել է համեմատություն ԵԼԹ-ի վրա անիոնային TFnSO3Na պորֆիրինի ազդեցության հետ: Ցույց է տրվել, որ կատիոնային TOEtPyP4 և CoTOEtPyP4 պորֆիրինների առկայությունը փոքրացնում է ԵԼԹ-ի մակերևութային լարվածությունը, իսկ TFnSO3Na անիոնային պորֆիրինի առկայությունը՝ մեծացնում այն: Ցույց է տրվել, որ կատիոնային պորֆիրինների առկայության դեպքում ԵԼԹ-ի էլեկտրական ունակությունն աճում է, իսկ

անիոնային պորֆիրինի առկայության դեպքում՝ նվազում: Ցույց է տրվել նաև, որ ուսումնասիրված երեք պորֆիրինների առկայության դեպքում էլ մեծանում է ԵԼԹ-ի էլեկտրական հաղորդականությունը:

ՊԻՆԴ ՄԱՐՄՆԻ ՖԻԶԻԿԱՅԻ ԳՀ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱ

Գիտական ղեկավար՝ *Կիրակոսյան Ալբերտ Ավետիսի, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, ֆիզմաթ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր, գլխավոր գիտաշխատող*

Լաբորատորիայի աշխատակիցների կազմը

1. Գևորգյան Սամվել Գերասիմի, ֆիզմաթ. գիտ. դոկտոր, առաջատար գիտաշխատող
2. Հարությունյան Վալերի Սոսի, ֆիզմաթ. գիտ. թեկնածու, առաջատար գիտաշխատող
3. Լևոնյան Լևոն Վարդգեսի, ֆիզմաթ. գիտ. դոկտոր, ավագ գիտաշխատող
4. Սարգսյան Հայկ Արայի, ֆիզմաթ. գիտ. դոկտոր, ավագ գիտաշխատող
5. Այվազյան Աշոտ Պետրոսի, ֆիզմաթ. գիտ. թեկնածու, ավագ գիտաշխատող
6. Բալյան Մինաս Կարապետի, ֆիզմաթ. գիտ. թեկնածու, ավագ գիտաշխատող
7. Գասպարյան Լաուրա Գասպարի, ֆիզմաթ. գիտ. թեկնածու, ավագ գիտաշխատող
8. Հարությունյան Լևոն Ալբերտի, ֆիզմաթ. գիտ. թեկնածու, ավագ գիտաշխատող
9. Մանուկյան Հասմիկ Միքայելի, ֆիզմաթ. գիտ. թեկնածու, ավագ գիտաշխատող
10. Ջոթյան Անահիտ Պարույրի, ֆիզմաթ. գիտ. թեկնածու, ավագ գիտաշխատող
11. Աղաբաբյան Էդուարդ Վաղինակի, քիմ. գիտ. թեկնածու, գիտաշխատող
12. Ավետիսյան Արտակ Արայի, ֆիզմաթ. գիտ. թեկնածու, գիտաշխատող
13. Ավետյան Կոլյա Թորգոմի, ֆիզմաթ. գիտ. թեկնածու, գիտաշխատող
14. Բարսեղյան Մանուկ Գևորգի, ֆիզմաթ. գիտ. թեկնածու, գիտաշխատող
15. Գասպարյան Շուշանիկ Գրիգորի, ֆիզմաթ. գիտ. թեկնածու, գիտաշխատող
16. Գևորգյան Վարդան Սամվելի, ֆիզմաթ. գիտ. թեկնածու, գիտաշխատող
17. Երանոսյան Մկրտիչ Ալեքսանի, ֆիզմաթ. գիտ. թեկնածու, գիտաշխատող
18. Էյրամջյան Տիգրան Հովհաննեսի, տ. գիտ. թեկնածու, գիտաշխատող
19. Կուրղինյան Բիլոր Կորյունի, ֆիզմաթ. գիտ. թեկնածու, գիտաշխատող
20. Հարությունյան Նորայր Պատվականի, ֆիզմաթ. գիտ. թեկնածու, գիտաշխատող
21. Մանասելյան Արամ Խաչիկի, ֆիզմաթ. գիտ. թեկնածու, գիտաշխատող
22. Մկրտչյան Վահրամ Պատվականի, ֆիզմաթ. գիտ. թեկնածու, գիտաշխատող
23. Մնացականյան Թամարա Սևոյի, ֆիզմաթ. գիտ. թեկնածու, գիտաշխատող
24. Մուղնեցյան Վռամ Ներսեսի, ֆիզմաթ. գիտ. թեկնածու, գիտաշխատող
25. Մուրադյան Սերոբ Տարոնի, ֆիզմաթ. գիտ. թեկնածու, գիտաշխատող
26. Սաքանյան Մարտին Սարգսի, ֆիզմաթ. գիտ. թեկնածու, գիտաշխատող
27. Վարդանյան Լյուդվիգ Արշակի, ֆիզմաթ. գիտ. թեկնածու, գիտաշխատող
28. Խնկոյան Ռոբերտ Կամսարի, կրտսեր գիտաշխատող
29. Սեմերջյան Հովհաննես Սարգսի, ավագ ինժեներ
30. Ստեփանյան Արմեն Գագիկի, լաբորանտ

Ըստ ընդհանուր ուղղությունների՝ լաբորատորիայում կատարված գիտական աշխատանքների ամփոփում

Գիտական թեմաներ

Թեմայի անվանումը	*Ղեկավար*
1. Միկրո- և նանոկառուցվածքների ռենտգենադիֆրակտային և ցածրջերմաստիճանային փորձարարական և տեսական ուսումնասիրում և հետազոտման նոր մեթոդների մշակում. • Ռենտգենյան հետազոտություններ, • Կիսահաղորդչային նանոկառուցվածքների հետազոտություններ, • Ցածրջերմաստիճանային հետազոտություններ, գիտական սարքաշինություն և գերհաղորդականություն, մագնիսական հետազոտություններ (պետական ֆինանսավորում):	Կիրակոսյան Ա. Ա.

Թեմա 1. *Ռենտգենյան հետազոտություններ:*

Տեսականորեն ուսումնասիրվել է ռենտգենյան դինամիկ դիֆրակցիայի հավասարումներում լայնույթների՝ ըստ դիֆրակցիայի հարթությանն ուղղահայաց ուղղության երկրորդ կարգի ածանցյալների դերը Լաուեի երկրաչափությամբ հարթ ալիքի հայեցակարգում (հեռավոր աղբյուր)՝ օգտագործելով նախորդ աշխատանքներում ստացված Գրինի ֆունկցիան: Ստացվել է դինամիկ դիֆրակցիայի ճոճման կորը Լաուեի երկրաչափությամբ՝ հաշվի առնելով ալիքային ճակատի երկչափ կորությունը: Բրեգի երկրաչափության դեպքում տեսականորեն ուսումնասիրվել են ռենտգենյան գնդային ալիքի դիֆրակցիան ընկնող ալիքի ճակատի երկչափ կորության հաշվառմամբ, ռենտգենյան դինամիկ-դիֆրակտային ֆուրիե-հոլոգրաֆիան և երրորդ կարգի ոչ գծայնությամբ բյուրեղներում դինամիկական դիֆրակցիան:

Շարունակվել են ռենտգենաինտերֆերաչափական մեթոդների կիրառմամբ նախատեսված աշխատանքները՝ կապված միաբյուրեղներում մնացորդային լարման դաշտերի ուսումնասիրության հետ: Երկբյուրեղ ինտերֆերաչափով ստացված ճոճանակային շերտերի օգնությամբ ուսումնասիրվել են մնացորդային լարումները, որոնք առաջացել են, երբ ինտերֆերաչափի սեպաձև բլոկը ենթարկվել է էլեկտրոնային ճառագայթահարման $[1\bar{1}0]$ բյուրեղագիտական ուղղությամբ:

Տեսականորեն հետազոտվել են ցրված ռենտգենյան ճառագայթմամբ ձևավորված պատկերի ցայտունության առանձնահատկությունները: Ցույց է տրվել, որ թույլ կլանող նմուշների դեպքում ցրման ցայտունությունը կարող է զգալիորեն մեծ լինել թուլացման ցայտունությունից:

Մշակվել է փորձարարական սարքի սխեմա, որը հնարավորություն է տալիս որոշելու որոշակի մարմնային անկյան ներսում, առաջնային փնջի հետ փոքր անկյուն կազմող ուղղություններով ցրված ռենտգենյան ճառագայթման ինտենսիվությունը՝ կախված նմուշի ցրման գործակցից և նմուշի հաստությունից: Ցույց է տրվել, որ նմուշի փոքր հաստությունների դեպքում ցրված ռենտգենյան ճառագայթման ինտենսիվությունը, նմուշի հաստությունից կախված, աճում է, իսկ մեծ հաստությունների դեպքում սկսում է նվազել: Փորձարարական տվյալների հիման վրա որոշվել է պատկերի ցայտունությունը, և այն համեմատվել է թուլացման ցայտունության հետ, և ցույց է տրվել, որ փորձարարական տվյալները հաստատում են տեսության կանխատեսումները:

Հետազոտվել են երկմակարդակ գոտիական թիթեղներից բաղկացած եռաբլոկ ռենտգենյան ինտերֆերաչափի լայնական և երկայնական ապակիզակետված տարբերակները: Գրանցված ինտերֆերենցային պատկերից, ինտերֆերող փնջերի փուլերի տարբերության վերականգնման «Ֆուրիե ձևափոխություն» և «Շերտերի տեսածրում» եղանակները կիրառվել են վերը նշված ինտերֆերաչափով

կենսաբանական օբյեկտների արտապատկերման խնդրում: Ցույց է տրվել, որ վերջինս բերում է արտապատկերվող օբյեկտների դասի ընդլայնման և պատկերի աղմուկի նվազեցման:

Տեսականորեն հետազոտվել է ռենտգենյան ճառագայթների դինամիկ դիֆրակցիան դարսման արատ պարունակող միաչափ հետերոէպիտաքսային գերցանցերում Բրեգի երկրաչափության դեպքում՝ գերցանցը կազմող նյութերի փոխադարձ դիֆուզիայի պայմաններում: Հետերոէպիտաքսային գերցանցի սեղանաձև մոդելի համար ստացվել է դարսման արատ պարունակող գերցանցից անդրադարձած ռենտգենյան ճառագայթների ինտենսիվության բանաձև՝ կախված դարսման արատի խորությունից և փուլի թռիչքից: Հետազոտվել են հիմնական մաքսիմումի և սատելիտների ինտենսիվությունների կախումներն արատի խորությունից, փուլի թռիչքից և գերցանցը կազմող նյութերի փոխադարձ դիֆուզիայից:

Տեսականորեն հետազոտվել է ռենտգենյան ճառագայթների անդրադարձած փնջի ինտենսիվության կախումը դարսման արատ պարունակող հետերաէպիտաքսային գերցանցի պարբերության պատահական շեղումներից Բրեգի երկրաչափության դեպքում: Պարզվել է, որ ինչպես և դարսման արատ չպարունակող գերցանցերում, պարբերության պատահական շեղումները չեն ազդում հիմնական մաքսիմումի ինտենսիվության վրա և ավելի շատ թուլացնում են սատելիտների ինտենսիվությունները:

Հաշվարկվել է ջրային լուծույթում աճող կալցիումի հիդրօքսիդի նանոբյուրեղների «լուծույթ-բյուրեղ» միջմակերևութային էներգիան: $\{0001\}$ և $\{\bar{1}010\}$ բյուրեղային նիստերին համապատասխանող միջմակերևութային էներգիայի համար արտածվել են տեսական արտահայտություններ, որոնք հաշվի են առնում այդ էներգիայի կախումը բյուրեղի երկրաչափական ձևը բնորոշող պարամետրերից:

Ռենտգենյան փափուկ ալիքային տիրույթում աշխատող մանրադիտակի (սինքրոտրոնային արագացուցիչ, Լոուրենս Բերկլիի ազգային լաբորատորիա, Բերկլի, ԱՄՆ) կիրառմամբ հետազոտվել են ցեմենտի ջրային լուծույթում աճող կալցիումի հիդրօքսիդի բյուրեղների երկրաչափական ձևի և գծային չափերի՝ ժամանակից կախված փոփոխությունները: Ստացված փորձարարական տվյալների և մշակված տեսական մոդելի հիման վրա հաշվարկվել են ջրային լուծույթում իոնային դիֆուզիայի գործակիցը, բյուրեղային աճի կինետիկ գործակիցը և տարբեր տիպի բյուրեղային նիստերի աճի արագությունները:

Հրապարակվել է ակնարկային հոդված, որում վերլուծվել և դասակարգվել են կալցիումի հիդրօքսիդի կիրառմամբ մթնոլորտից և գործարանային այրման գազային արտանետումներից CO_2-ի մեկուսացման քիմիական եղանակները: Հիմնավորվել են նաև այդ եղանակների արդյունավետության բարձրացման հնարավոր մոտեցումները:

Ռենտգենադիֆրակտային չափումների հիման վրա հետազոտվել են $C_4A_3\bar{S}$ խառնուրդային նյութ պարունակող, հիդրատացիայի ենթարկված ցեմենտային մածուկի էտրինգիտ ֆազի մեխանիկական դեֆորմացիայի և լարումների կախումները նշված խառնուրդային նյութի հարաբերական բաղադրությունից: Համաձայն ստացված արդյունքների՝ խառնուրդային նյութի հարաբերական բաղադրության աճը հանգեցնում է մեխանիկական լարումների կտրուկ աճի:

- ***Կիսահաղորդչային նանոկառուցվածքների հետազոտություններ:***

Ուսումնասիրվել է դոնորային խառնուկով պայմանավորված ֆոտոիոնացման կտրվածքը $GaAs/Ga_{1-x}Al_xAs$ եռաչափ, համակենտրոն կրկնակի քվանտային օղակներում: Հիդրոստատիկ ճնշման, ալյումինի կոնցենտրացիայի և համակարգի երկրաչափական չափերի տարբեր արժեքների դեպքում ուսումնասիրվել է ֆոտոիոնացման կտրվածքի կախումն ընկնող լույսի հաճախությունից: Ստացված արդյունքների համաձայն՝ նշված պարամետրերի փոփոխությունները ֆոտոիոնացման կտրվածքի սպեկտրում կարող են բերել ինչպես կարմիր, այնպես էլ կապույտ շեղումների:

«Կետ-օղակ» քվանտային համակարգում ուսումնասիրվել է լայնական էլեկտրական դաշտի ազդեցությունը մեկէլեկտրոնային վիճակների վրա: Դիտարկվել են ինչպես խառնուկի առկայության, այնպես էլ բացակայության դեպքերը: Մեկէլեկտրոնային էներգիական մակարդակները և ալիքային ֆունկցիաները որոշվել են ճշգրիտ անկյունագծայնացման եղանակով: Սահմանափակող

պոտենցիալների էներգիաների, արգելքի հաստության տարբեր արժեքների համար ուսումնասիրվել են էներգիական մակարդակների կախումներն արտաքին էլեկտրական դաշտի լարվածությունից: Ցույց է տրվել, որ էլեկտրական դաշտի ազդեցությունն էներգիական մակարդակների վրա էապես կախված է էլեկտրոնի տեղայնացման տեսակից (կետ-տեղայնացում կամ օղակ-տեղայնացում):

$GaAs/Ga_{0.7}Al_{0.3}As$ երկչափ քվանտային օղակում ուսումնասիրվել են ուժեղ լազերային և լայնական էլեկտրական դաշտերի միաժամանակյա ազդեցություններն էլեկտրոնային վիճակների և լույսի ներգոտիական կլանման գործակցի վրա: Արտաքին դաշտերի առկայությամբ սահմանափակող պոտենցիալի համար ստացվել է վերլուծական արտահայտություն: Մեկէլեկտրոնային էներգիական մակարդակները և ալիքային ֆունկցիաները որոշվել են ճշգրիտ անկյունագծայնացման եղանակով: Ցույց է տրվել, որ լույսի բևեռացման ուղղության փոփոխությունը կլանման սպեկտրում հանգեցնում է ինչպես կարմիր, այնպես էլ կապույտ շեղման: Բացի դրանից՝ արտաքին դաշտերի ազդեցությունը նույնպես հանգեցնում է կլանման սպեկտրի կարմիր կամ կապույտ շեղումների:

Ուսումնասիրվել են էքսիտոնային վիճակները մագնիսական խառնուկ պարունակող CdTe քվանտային օղակում՝ արտաքին մագնիսական դաշտում: Հաշվարկները կատարվել են էլեկտրոնի և խոռոչի միջև սպինային փոխազդեցության, ինչպես նաև էլեկտրոնի, խոռոչի և մագնիսական խառնուկի միջև s,p-d փոխազդեցությունների հաշվառմամբ: Ճշգրիտ անկյունագծայնացման մեթոդի օգնությամբ հաշվարկվել են էքսիտոնային էներգիական մակարդակները և օպտիկական անցումները: Ցույց է տրվել, որ սպինային փոխազդեցության շնորհիվ հնարավոր է մագնիսական դաշտի օգնությամբ պայծառ էքսիտոնային վիճակը վերածել մութ վիճակի և հակառակը: Առաջարկվել է նաև s,p-d փոխազդեցությունների ինտենսիվությունների փորձնական գնահատման նոր եղանակ:

Ուսումնասիրվել է Ռաշբայի սպին-ուղեծրային փոխազդեցության ազդեցությունը $GaAs/Ga_{1-x}Al_xAs$ քվանտային օղակներից կառուցված երկչափ գերցանցի էլեկտրոնային վիճակների վրա: Հաշվարկվել են գերցանցի հաղորդականության գոտու կառուցվածքը և Բլոխի ֆունկցիաները: Ցույց է տրվել, որ Ռաշբայի սպին-ուղեծրային փոխազդեցության շնորհիվ գերցանցի հաղորդականության գոտու էներգիական մինիգոտիները ճեղքվում են երկուսի: Այդ երկու սպինային վիճակները դեռևս մնում են այլասերված Բրիլյուենի գոտու կենտրոնում, սակայն այդ կետն այլևս գոտու մինիմում չէ: Ցույց է տրվել նաև, որ սպին-ուղեծրային փոխազդեցությունը հանգեցնում է հաղորդականության գոտու Բլոխի ֆունկցիաների լրացուցիչ անհամաչափության:

Վերջավոր պոտենցիալային փոսի մոդելի շրջանակում ուսումնասիրվել են պոլարոնային վիճակները կրկնակի քվանտային օղակներում, արտաքին էլեկտրական և մագնիսական դաշտերի առկայությամբ: Լանդաու-Պեկարի փոփոխակային տեսության շրջանակում ուսումնասիրվել է էլեկտրոնի փոխազդեցությունը սահմանափակ և մերձմակերևութային ֆոնոնների հետ, գնահատվել է այդ փոխազդեցության ներդրումը պոլարոնի սեփական էներգիայում՝ կախված օղակների չափերից և արտաքին դաշտերի մեծությունից:

Ուսումնասիրվել է Ga-ի և Al-ի փոխադարձ դիֆուզիայի ազդեցությունը $GaAs/Ga_{1-x}Al_xAs$ քվանտային օղակներից կազմված միաշերտ գերցանցի և $GaAs/Ga_{1-x}Al_xAs$ գաուսյան տիպի կրկնակի համառանցք քվանտային օղակներից կազմված եռաչափ գերցանցի գոտիական կառուցվածքի վրա: Ստացվել են էլեկտրոնի դիսպերսային կորերը և Բլոխի լայնույթները դիֆուզիայի երկարության տարբեր արժեքների դեպքում: Ցույց է տրվել, որ ադիաբատական մոտավորությունը կիրառելի է նույնիսկ այն դեպքում, երբ քվանտային օղակների շառավիղը համեմատական է դրանց բարձրությանը: Խորանարդային և տետրագոնալ համաչափությամբ եռաչափ գերցանցերի Բրիլյուենի գոտու բարձր համաչափությամբ կետերում էլեկտրոնի էներգիայի արժեքների դասավորությունն ըստ աճման կարգի տարբեր է: Գաուսյան տիպի կրկնակի օղակներից կազմված գերցանցում օղակների առանցքի ուղղությամբ դիսպերսային կորերը որակապես տարբերվում են այդ առանցքին ուղղահայաց հարթության մեջ դիսպերսային կորերից: Սակայն տարբեր ուղղություններով կորերի վարքի համանմանությունը դիֆուզիայի հետևանքով վերականգնվում է:

Ուսումնասիրվել է փոխադարձ դիֆուզիայի ազդեցությունը $GaAs/Ga_{1-x}Al_xAs$ գաուսյան տիպի կրկնակի համառանցք քվանտային օղակի ոչ գծային կլանման գործակցի վրա: Ստացվել են սահմանափակող պոտենցիալը, էլեկտրոնի էներգիական մակարդակները, հավանականային բաշխումները, կլանման գործակիցը դիֆուզիայի պարամետրի տարբեր արժեքների դեպքում, ինչպես նաև համապատասխան ջոկման կանոններն արտաքին գրգռման՝ օղակի համաչափության առանցքով և դրան ուղղահայաց բևեռացումների դեպքերում: Ստացված արդյունքները վկայում են դիֆուզիայի միջոցով նշված կառուցվածքի օպտիկական բնութագրերի կառավարման հնարավորության մասին:

Ուսումնասիրվել է Ռաշբայի սպին-ուղեծրային փոխազդեցության ազդեցությունը $GaAs/Ga_{1-x}Al_xAs$ քվանտային օղակներից կազմված երկչափ գերցանցում էլեկտրոնային վիճակների վրա: Ցույց է տրվել, որ Ռաշբայի փոխազդեցությունը հանգեցնում է իմպուլսային տարածությունում դիսպերսային մակերևույթների շեղման: Բարձր համաչափությամբ կետերում այդ մակերևույթները հատվում են: Ցույց է տրվել նաև, որ սպին-ուղեծրային փոխազդեցության հետևանքով վերանում է Բլոխի լայնույթների համաչափությունը:

Ուսումնասիրվել է քվանտային կետում էլեկտրոնի երկֆոնոնային գրավման վրա սահմանափակ օպտիկական ֆոնոնի ազդեցությունը: Ցույց է տրվել, որ 100 Կ-ից բարձր ջերմաստիճաններում գրավման պրոցեսի արագությունը կարող է հասնել 10^{10} վ$^{-1}$-ի:

Ուսումնասիրվել է ֆոնոնային սահմանափակման ազդեցությունը քվանտային կետերում բևեռային օպտիկական ֆոնոնների գրավման պրոցեսի արագության վրա: Մասնիկների գրավման արագության համար ստացվել են վերլուծական արտահայտություններ, որոնք հարմար է կոնկրետ հաշվարկներում օգտագործել գնդային քվանտային կետերի համար: Ցույց է տրվել, որ արգելքի տիրույթից քվանտային կետի հիմնական վիճակ էլեկտրոնի գրավումը մեկ կամ երկու ֆոնոնի առաքմամբ հնարավոր է քվանտային կետի շառավղի արժեքների որոշակի տիրույթների համար:

Հետազոտվել է խառնուկային էլեկտրոնի հիմնական վիճակի էներգիայի և ալիքային ֆունկցիայի վարքը կիսահաղորդչում, երբ խառնուկը տեղայնացված է կիսահաղորդիչ-մետաղ ինտերֆեյսի շրջակայքում և տեսածրող թունելային մանրադիտակի սայրով ստեղծած էլեկտրական դաշտում է: Քննարկվել է սայրի դրական պոտենցիալի դեպքում /բացասական լիցք սայրի վրա/ տեղի ունեցող իոնացման երևույթի հիման վրա նոր տիպի գազային դետեկտորների ստեղծման հնարավորությունը:

Զարգացվել է միկրոսկոպական տեսություն՝ ուժեղ լազերային դաշտի փոխազդեցությունը երկշերտ գրաֆենի հետ նկարագրելու համար, երբ համակարգում առկա է հաստատուն էլեկտրական դաշտով ստեղծված էներգիական ճեղք: Ցույց է տրվել, որ փականի պոտենցիալի ադիաբատական փոփոխությունը կարող է բերել էլեկտրոնային բնակեցվածության լրիվ ինվերսիայի արժեքական և հաղորդականության գոտիների միջև:

Ուսումնասիրվել է միաշերտ և երկշերտ գրաֆենում K-կետի շուրջն առաջացող էքսիտոնների ազդեցությունը համակարգի կլանման սպեկտրի վրա:

Հետազոտվել են երկէլեկտրոնային վիճակները պարաբոլական քվանտային կետում այն դեպքում, երբ խառնուկը տեղադրված է կետի կենտրոնում: Խնդիրը լուծվել է խոտորումների տեսության և փոփոխակային մեթոդի շրջանակներում: Որոշվել են համակարգի լրիվ և կապի էներգիաները, ինչպես նաև վիճակների փոխանակման ժամանակը:

Ռասել-Սաունդերսի մոտավորությամբ վերլուծականորեն ուսումնասիրվել են խառնուկային վիճակները Կրատցերի սահմանափակող պոտենցիալով գնդային նանոշերտում: Օգտագործելով ալիքային ֆունկցիաների համար ստացված վերլուծական արտահայտությունները՝ հաշվարկվել են խառնուկային էլեկտրոնի ստեղծած էլեկտրական դաշտի պոտենցիալը և լարվածությունը երկբևեռային և քառաբևեռային մոտավորությամբ: Քննարկված են էլեկտրական դաշտի պոտենցիալի և լարվածության կախումները նանոշերտի երկրաչափական պարամետրերից:

Հետազոտվել է գնդային քվանտային կետում տեղադրված ջրածնանման խառնուկի հետ կապված էլեկտրոնի սպինային մագնիսական մոմենտի հոսանքն անվերջ խորը պոտենցիալային փոսի մոդելի

շրջանակներում: Քննարկվել են էլեկտրոնի S-վիճակներն էլեկտրոնի լրիվ էներգիայի և՛ դրական, և՛ բացասական արժեքների համար: Քվանտային կետի տարբեր շառավիղների համար ստացվել են էլեկտրոնի սպինային մագնիսական մոմենտի հոսանքի մեծության կախումները շառավղային փոփոխականից: Ցույց է տրվել, որ մեծ շառավղով քվանտային կետերի համար չափային քվանտացման երևույթի թուլացման պատճառով համապատասխան կորերը մոտենում են իրար:

• Ցածրջերմաստիճանային հետազոտություններ, գիտական սարքաշինություն և գերհաղորդականություն:

SFCO մեթոդի հիման վրա գործող զգայնության լայն հաճախային տիրույթ ունեցող /սկսած «0» Հց-ից/ ակուստիկ նոր տվիչ ստեղծելու նպատակով մշակվել ու ստեղծվել են ձայնային տատանումների՝ աշխարհում առաջին դետեկտորները /«միկրոֆոնները»/, որոնցում որպես սենսոր ծառայում են 5-8 մմ տրամագծով հարթ կոճերը:

Դրանք ենթարկվել են փորձարկումների, որոնց ընթացքում հետազոտվել են բժշկա-կենսաբանական հետազոտություններում նոր միկրոֆոնների օգտագործման հնարավորությունները և նպատակահարմարությունը: Փորձերն իրականացվել են առողջ ու տկար կամավորների վրա, որոնց ընթացքում միկրոֆոններով գրանցվել են մարդու ներքին օրգանների գործունեության հետևանք հանդիսացող, նրա մարմնի տարբեր հատվածներից դետեկտված մաշկի տատանումները՝ 0.1-500Հց հաճախային տիրույթում: Դա թույլ է տվել բացահայտել մարդու ներքին օրգանների (սրտանոթային և շնչառական օրգաններ, ձայնալարեր) գործունեության՝ նախկինում չդիտված առանձնահատկություններ:

Հետազոտությունների արդյունքները հնարավորություն են տալիս պնդելու, որ հարթ կոճի մեթոդով գործող նոր միկրոֆոնի հիման վրա կարելի է ստեղծել մարդուն ըստ ձայնի (խոսելու միջոցով) ճանաչելու (իդենտիֆիկացնելու), ինչպես նաև մարդու սրտանոթային համակարգի ճնշումը վայրկյանը մեկ, առանց թևակապ օգտագործելու, չափելու նոր ու զգայուն սարքեր:

Հետազոտությունների արդյունքները կկիրառվեն նաև ցածր ջերմաստիճանների ֆիզիկայի բնագավառում՝ «2-րդ ձայնի» առանձնահատկությունները գերհոսուն հելիումում 2.17Կ-ից ցածր ջերմաստիճաններում առավել զգայուն հետազոտելու նպատակով:

Ավարտին են հասցված նաև 3 առանցքներով տատանումներ գրանցող /վեկտորական/ 5 սեյսմիկ դետեկտորների լաբորատոր մանրակերտերի ու դրանցից ելնող ազդանշանները մշակող արագագործ հաճախաչափերի /թվով՝ 3/ ստեղծման աշխատանքները: Այդ սեյսմիկ համակարգի դաշտային փորձարկումների շրջանակում 2014 թ. հոկտեմբերի 28-ից մինչև նոյեմբերի 6-ն ընկած ժամանակահատվածում ԱՄՆ-ի Մոհավի անապատում (Mojave Desert, California, USA) իրականացվել են դրա համեմատական փորձարկումներ՝ արտասահմանյան լավագույն անալոգների մասնակցությամբ: Փորձարկումները նպատակ են հետապնդել այս բնագավառում աշխարհում առաջատար մի շարք ընկերությունների փորձագետներին նախ ծանոթացնել նոր դետեկտորների սկզբունքային առավելություններին, ապա համեմատական փորձարկումների արդյունքում ձեռք բերված տվյալների հիման վրա համոզել ներկաներին, որ այս սենսորներն իրենց առավելություններով կարող են փոխարինել «սահմանների ու տարածքների» (US) ու նաև նավթի ու գազի տեղափոխումն ապահովող խողովակների /նավթամուղ, գազամուղ/ հսկողության համակարգերում այլ սկզբունքներով գործող, իրենց դարն ապրած սենսորներին:

Նշված աշխատանքներն իրականացվել են «Փի Էս Այ» (PSI Ltd. - www.psi.am) ընկերության հետ ու վերջինիս ֆինանսական աջակցությամբ:

- **Մագնիսական հետազոտություններ:**

Հետազոտվել է $Gd_5Si_{2-x}Ge_{2-x}Sn_{2x}$ համակարգի մագնիսակարգավորված միացությունների մագնիսացումը, երբ սիլիցիումի և գերմանիումի ատոմները մասնակիորեն փոխարինվել են անագի նույնարժեքականությամբ ատոմներով: $Gd_5Si_{2-x}Ge_{2-x}Sn_{2x}$ ($2x = 0 – 0.1$) համաձուլվածքների մագնիսացման ջերմաստիճանային և մագնիսական դաշտի կախումներից որոշվել են համաձուլվածքների էնտրոպիայի

մագնիսական մասերի առավելագույն փոփոխությունները $\Delta S_M^{\max}$: Հայտնաբերվել է, որ անագով լեգիրված համաձուլվածքների Կյուրիի ջերմաստիճանները և $\Delta S_M^{\max}$ - ի արժեքները աճում են: Դիտվում է $\Delta S_M^{\max}$ - ի մոտ կրկնակի աճ T_C - ի ($\Delta T_C \approx 15$ Կ) աճի դեպքում:

Ստացված արդյունքները վկայում են այն մասին, որ վերը նշված միացություններն ունեն բարձր մագնիսակալորական հատկություններ և հեռանկարային են որպես բանող նյութ կենցաղային մագնիսական սառնարաններում կիրառելու համար:

ՏԵՍԱԿԱՆ ՖԻԶԻԿԱՅԻ ԳՀ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱ

Գիտական ղեկավար՝ *Չուբարյան Էդվարդ Վարդանի, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, ֆիզմաթ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր, գլխավոր գիտաշխատող*

Լաբորատորիայի աշխատակիցների կազմը

1. Ավագյան Ռոլանդ Մամիկոնի, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, ֆիզմաթ. գիտ. դոկտոր, առաջատար գիտաշխատող
2. Հարությունյան Գոհար Հրայրի, ֆիզմաթ. գիտ. դոկտոր, առաջատար գիտաշխատող
3. Նազարյան Էռնեստ Աղաջանի, տեխ. գիտ. դոկտոր, առաջատար գիտաշխատող
4. Ներսեսյան Արմեն Պետրոսի, ֆիզմաթ. գիտ. դոկտոր, առաջատար գիտաշխատող
5. Հակոբյան Տիգրան Ստեփանի, ֆիզմաթ. գիտ. դոկտոր, ավագ գիտաշխատող
6. Սահարյան Արամ Ազատի, ֆիզմաթ. գիտ. դոկտոր, ավագ գիտաշխատող
7. Քոթանջյան Աննա Սենիկի, ֆիզմաթ. գիտ. թեկնածու, ավագ գիտաշխատող
8. Սարգսյան Գոռ Ալֆրեդի, ֆիզմաթ. գիտ. թեկնածու, գիտաշխատող
9. Օհանյան Վաղիմ Ռոբերտի, ֆիզմաթ. գիտ. թեկնածու, գիտաշխատող
10. Վարդանյան Իշխան Վոլոդիայի, ֆիզմաթ. գիտ. թեկնածու, կրտսեր գիտաշխատող
11. Նովիկովա Ալլա Լեոնիդի, ավագ լաբորանտ
12. Սարգսյան Հայկ Գուրգենի, ավագ լաբորանտ
13. Սիմոնյան Դավիթ Հակոբի, ավագ լաբորանտ

Ըստ ընդհանուր ուղղությունների՝ լաբորատորիայում կատարված գիտական աշխատանքների ամփոփում

Արտասահմանյան դրամաշնորհներ

Թեմայի անվանումը	*Ղեկավար*
1. Spherical systems related to the rational Calogero models (ANSEF 3501-math-phys).	Hakobyan T. S.
2. Novel Approach for Mesoscopic phenomena (ICTP Network NET68, Armenia-Iran-Morocco-Turkey).	Nersessian A. P.

Թեմա 1. Կառուցվել են կալոջերոյի մոդելի սֆերիկ մասին համապատասխան շարժման ինտեգրալները: Հետազոտվել է կապը այդ ինտեգրալների և կալոջերոյի մոդելի ինտեգրալների հետ:

Թեմա 2. 2014 թ.-ին Երևանում կազմակերպվել է կոնֆերանս՝ թեման՝ «Second Autumn School on High Energy Physics and Quantum Theory»:

Լաբորատորիայում կատարված այլ աշխատանքների մասին:

Ժամանակակից տիեզերագիտական դիտումները (մասնավորապես Ia տիպի գերնորերի կարմիր շեղումները) հաստատում են, որ Տիեզերքը ներկա ժամանակաշրջանում ընդարձակվում է արագացումով և նրանում գերիշխող բաղադրիչը մութ էներգիան է: Սույն փաստը նպաստում է ձգողության տեսությունների հետագա զարգացմանը և հանգեցնում է մի շարք այլընտրանքային տեսությունների առաջացմանը, այդ թվում՝ նաև թենզորա-սկալյար: Արդեն 1998-99 թթ. պարզ դարձավ, որ դիտվող Տիեզերքի դինամիկան կառավարվում է ոչ միայն ձգողությամբ, այլ նաև կոսմոլոգիական վանողությամբ: Հակագրավիտացիան նպաստում է Տիեզերքի արագացումով ընդարձակմանը, որը հայտնաբերված է անմիջական աստղագիտական դիտումներով՝ չափազանց մեծ հեռավորությունների վրա, համարյա տեսանելի Տիեզերքի սահմանին մոտ: Սակայն որոշակի տիպի (Ia) գերնոր աստղերի պայծառությունն այնքան մեծ է, որ դրանք կարելի է գրանցել հարյուրավոր և հազարավոր մեգապարսեկ հեռավորությունների վրա և պարզել, թե ինչպես են շարժվում գալակտիկաները, որոնցում հայտնաբերվել են այդ աստղերը: Ըստ վերջին դիտողական և տեսական տվյալների՝ մութ էներգիան բաժին է ընկնում Տիեզերքի էներգիայի խտության 70%-ը , 25%-ը՝ մութ նյութին, մոտ 5%-ը՝ «սովորական նյութ»-ին, 0,01%-ը՝ մնացորդային ճառագայթմանը: Արդյունքում կոսմոլոգիական հետազոտություններում առաջացան մի շարք խնդիրներ: Բացի Տիեզերքի էվոլյուցիայի սինգուլյար բնույթից՝ ծագեցին զարգացման սկզբնական փուլում ինֆլյացիոն փոփոխությունների և ուշ փուլում արագացումով ընդարձակմանը վերաբերող հարցեր: Հեռավոր գերնորերի բռնկումների վերջին դիտումները էապես փոխեցին Տիեզերքի մասին մեր պատկերացումները, մասնավորապես հիմնվելով այդ դիտումների արդյունքների վրա, կարելի է համարել հաստատված, որ.

- կոսմոլոգիական ընդարձակման դինամիկան կառավարվում է «հակագրավիտացիա»-յով,
- կոսմոլոգիական ընդարձակումն արագանում է,
- ներկայումս Տիեզերքում գերակշիռ է վակուումի էներգիան (դաշտի քվանտային ժամանակակից տեսությունների շրջանակներում Λ կոսմոլոգիական հաստատունը մեկնաբանվում է որպես վակուումի էներգիայի խտություն), որի խտությունը գերազանցում է տիեզերական մատերիայի բոլոր «սովորական» ձևերի խտությունների գումարային արժեքը:

Ձգողականության տեսություններից ամենահետևողականը՝ ՀՔՏ-ն, թույլ գրավիտացիոն դաշտերի համար, Արեգակնային համակարգի սահմաններում, բավականաչափ հավաստի հաստատված է փորձերով: Ենթադրությունը, որ ՀՔՏ-ի կիրառության ոլորտը սահմանափակված է թույլ դաշտերով, իսկ ուժեղ դաշտերի դեպքում այն ճշգրտման կարիք ունի, ծագել է դեռ այն կապակցությամբ, որ դիտողական փաստերի բազմակողմանի վերլուծության վրա հիմնված Վ. Հ. Համբարձումյանի կոնցեպցիան հակասում է ՀՔՏ-ին:

ՅԲԴ-ն Էյնշտեյնի տեսությանը բնույթով ամենամոտ տեսությունն է, որում գրավիտացիոն հաստատունը փոխարինվում է $y\left(x^i\right)$ սկալյար ֆունկցիայով: ՅԲԴ տեսության մեջ սկալյար դաշտը, համաձայն Մախի գաղափարների, որոշվում է Տիեզերքի լրիվ մատերիայի բաշխումով: Այն դրսևորվում է միայն գրավիտացիոն փոխազդեցության միջոցով, և այդ պատճառով ՅԲԴ տեսության շրջանակում իրականացվում է համարժեքության Էյնշտեյնյան սկզբունքի պահանջը: Քանի որ Տիեզերքի էվոլյուցիան ուսումնասիրելիս Λ կոսմոլոգիական հաստատունի ներմուծումը բավականաչափ համոզիչ է, իմաստ ուներ նման մեծություն ներմուծել նաև ՅԲԴ տեսությունում: Արդյունքում ստեղծվեց մոդիֆիկացված տեսություն, որի հիման վրա կարելի է կառուցել կոսմոլոգիական մոդելներ:

Դե Սիտտերի տարածաժամանակը գրավիտացիայում ամենատարածված ֆոներից է: Այս երկրաչափությունը կարևոր նշանակություն ունի ինֆլյացիոն կոսմոլոգիայում, որի համաձայն՝ կոսմոլոգիական ընդարձակման վաղ ժամանակաշրջանում Տիեզերքն անցնում է մի փուլով, որի

երկրաչափությունը լավ նկարագրվում է դե Սիտտերի մոդելով: Ինֆլյացիոն փուլի ընթացքում քվանտային դաշտերի ֆլյուկտուացիաները գեներացնում են նյութի բաշխման անհամասեռություններ, որոնք կարևոր դեր են խաղում մեծամասշտաբ տիեզերական կառուցվածքների ձևավորման գործում: Մյուս կողմից, ինչպես վերը նշվեց, ներկա ժամանակաշրջանում Տիեզերքը ընդարձակվում է արագացումով, որը նկարագրվում է դրական կոսմոլոգիական հաստատունով համասեռ և իզոտրոպ մոդելով: Արդյունքում ֆիզիկական երևույթների ուսումնասիրությունը դե Սիտտերի ֆոնի վրա կարևոր է Տիեզերքի ընդարձակման վաղ և արդի էտապները հասկանալու համար:

Դաշտի քվանտային տեսությունում սահմանների առկայությունը հանգեցնում է վակուումի բևեռացման երևույթի: Վերջինս հայտնի է Կազիմիրի էֆեկտ անվամբ: Կազիմիրի էֆեկտի հետ կապված հետազոտություններում կարևոր է սահմանների վրա ազդող վակուումային ուժերի՝ ֆոնային երկրաչափությունից կախվածությունը: Կամայական չափողականությամբ հարթ տարածաժամանակային ֆոնի համար նախկինում հետազոտվել էր էլեկտրամագնիսական վակուումի խնդիրը: Այժմ հետազոտվել են էլեկտրամագնիսական դաշտի երկկետային ֆունկցիաները, դաշտի քառակուսու և էներգիայի իմպուլսի թենզորի վակուումային միջինները, երկու զուգահեռ թիթեղների առկայությամբ (D+1) չափանի դե Սիտտերի տարածաժամանակում: Ենթադրվել է, որ դաշտը գտնվում է Բանչ-Դևիսի վակուումային վիճակում, իսկ թիթեղների վրա դրվում են իդեալական հաղորդչի եզրային պայմանները: Ցույց է տրված, որ D ≥ 4 դեպքում գրավիտացիոն դաշտը էապես փոխում է վակուումային միջինների վարքն այն պարագայում, երբ թիթեղների միջև եղած հեռավորությունը մեծ է դե Սիտտերի տարածաժամանակի կորության շառավղից: Մեծ հեռավորությունների վրա Կազիմիրի ուժերը հակադարձ համեմատական են հեռավորության չորրորդ աստիճանին D ≥ 3 բոլոր չափողականությունների համար: D ≥ 4 դեպքում այս արդյունքը էապես տարբեր է Մինկովսկու տարածաժամանակում երկու հարթ թիթեղների դեպքից, երբ ուժը նվազում է հեռավորության (D+1) աստիճանին հակադարձ համեմատական:

Հաշվետու ժամանակաշրջանում ուսումնասիրություններ են կատարվել նաև ինտեգրվող համակարգերին վերաբերող խնդիրներում: Մասնավորապես դեֆորմացվել են բազմաչափ տատանակի և Կուլոնի համակարգերը՝ փոխարինելով նրանց անկյունային մասը ընդհանրացված ռացիոնալ Կալոջերոյի մոդելի անկյունային մասով: Հաստատվել է նոր համակարգի մաքսիմալ սուպերինտեգրելիությունը: Կիրառելով ռեդուկցիայի մեթոդը՝ գտնվել են շարժման բոլոր հաստատունները: Մասնավորապես կառուցվել է Ռունգե Լենցի վեկտորի անալոգը: Սահմանվել է Լանդաուի խնդիրը երկրորդ կարգի երկչափ մակերևույթների համար: Սահմանափակ շարժման դեպքում (էլիպսաձև մակերևույթ) կառուցվել են նաև գործողություն - անկյուն փոփոխականները:

Կառուցվել են գործողությունները եռաչափ սուպերմասնիկի համար N=4 սուպերսիմետրիայի առկայությամբ, որը մասամբ խախտված է մինչև N=2-ը: Ներկայացվել են սուպերլիցքերը անխախտ և խախտված սուպերսիմետրիաների համար:

Օգտագործելով ճշգրիտ լուծումը՝ փոխանցման մատրիցի եղանակով մանրամասն վերլուծության են ենթարկվել եռամետաղական պոլիմերային նյութի մագնիսական հատկությունները և հիմնական վիճակի կառուցվածքը:

Կառուցվել են տոպոլոգիական դեֆեկտներ առաջացնող ոչ աբելյան T-դուալությունները: Ցույց է տրվել, որ այդ դեֆեկտների շարժման հավասարումները պարունակում են նաև ոչ աբելյան T-դուալության ձևափոխությունները: Ուսումնասիրվել են Ֆուրյե-Մուկայի ձևափոխությունները Ռամոնդ-Ռամոնդ դաշտերի համար:

Մշակված ֆիզիկա-ֆենոմենոլոգիական մոդելների հիման վրա շարունակվել են ձևագոյացման պրոցեսներում արդյունարար դեֆորմացիաների կուտակման օրինաչափությունների ուսումնասիրությունները: Հաշվի առնելով նյութերի դեֆորմացիոն հատկությունները՝ ուսումնասիրվել է երկշերտ ծռման պրոցեսը: Ցույց է տրվել, որ արտաքին շերտի որոշակի չափերի և հատկությունների դեպքում հնարավոր է փխրուն նյութերի համար ներքին շերտում կուտակել զգալի դեֆորմացիաներ:

ՕՊՏՈԷԼԵԿՏՐՈՆԻԿԱՅԻ ԵՎ ՖՈՏՈՆԻԿԱՅԻ ԳՀ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱ

Գիտական ղեկավար՝ *Չիլինգարյան Յուրի Սերգեյի, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, ֆիզմաթ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր, գլխավոր գիտաշխատող*

Լաբորատորիայի աշխատակիցների կազմը

1. Հակոբյան Ռաֆիկ Սերգեյի, ֆիզմաթ. գիտ. դոկտոր, առաջատար գիտաշխատող
2. Ալահվերդյան Ռոման Բախշիի, ֆիզմաթ. գիտ. դոկտոր, առաջատար գիտաշխատող
3. Ասլանյան Լևոն Սուրենի, ֆիզմաթ. գիտ. դոկտոր, ավագ գիտաշխատող
4. Չիլինգարյան Ալեքսանդր Դավիթի, ֆիզմաթ. գիտ. թեկնածու, գիտաշխատող
5. Գևորգյան Գևորգ Սամվելի, ֆիզմաթ. գիտ. թեկնածու, կրտսեր գիտաշխատող
6. Էլբակյան Վաչագան Լեոնի, ֆիզմաթ. գիտ. թեկնածու, կրտսեր գիտաշխատող
7. Կիրակոսյան Արթուր Աբրահամի, տեխն. գիտ. թեկնածու, կրտսեր գիտաշխատող
8. Ղարագուլյան Հերմինե Սաշայի, կրտսեր գիտաշխատող
9. Ներսիսյան Սամվել Ցոլակի, կրտսեր գիտաշխատող
10. Սահակյան Նաիրա Սարգսի, կրտսեր գիտաշխատող
11. Վարդանյան Աշոտ Անուշավանի, կրտսեր գիտաշխատող
12. Գրիգորյան Հայարփի Հովելի, ավագ լաբորանտ
13. Մարգարյան Կարինե Ալեքսանդրի, ավագ լաբորանտ
14. Վարդանյան Նունե Ֆրունզեի, ավագ լաբորանտ
15. Նինոյան Ժիրայր Վահեի, լաբորանտ
16. Տոնեյան Հրաչ Ալբերտի, լաբորանտ

Ըստ ընդհանուր ուղղությունների՝ լաբորատորիայում կատարված գիտական աշխատանքների ամփոփում

Գիտական թեմաներ

Թեմայի անվանումը	*Ղեկավար*
1. Լազերային ճառագայթման տարածումը և ստացիոնար ու ոչ ստացիոնար փոխազդեցությունը մանրաթելերում, պլանար ալիքատարներում և ծավալային կառուցվածքներում: Դրանց հիման վրա օպտոէլեկտրոնային տարրերի և համակարգերի մշակում ու ստեղծում (պետական ֆինանսավորում):	Չիլինգարյան Յու. Ս.

Թեմա 1. Ուսումնասիրվել են արտաքին փոփոխական էլեկտրական դաշտի ազդեցությունը երկհաճախային քիրալ հեղուկ բյուրեղի (ՀԲ)-ի պարուրաձևավորման ընթացքի վրա և դրա ազդեցությունը նրանով անցնող լազերային փնջի բևեռացման վրա: Փորձնականորեն ուսումնասիրվել են երկհաճախային քիրալ ՀԲ-ական թաղանթից լազերային ճառագայթման անդրադարձման առանձնահատկությունները արտաքին էլեկտրական դաշտով հոմեոտրոպից պլանար (պարուրաձև) կառուցվածքային անցման ընթացքում, երբ լազերային ճառագայթման ալիքի երկարությունն ընկած է քիրալ ՀԲ-ի ֆոտոնային արգելված գոտու (ՖԱԳ)-ի մեջ:

Անիզոտրոպության սահուն անհամասեռությամբ միջավայրերում իրականացվել է լույսի բևեռացման վիճակի տարածական դինամիկայի համակարգված վերլուծություն: Որպես նման միջավայրի օրինակ դիտարկվել է թվիստ կողմնորոշմամբ նեմատիկ հեղուկ բյուրեղը: Երկրաչափական օպտիկայի մեթոդով ստացվել է այդ համակարգի անալիտիկ լուծումը, և ցույց է տրվել, որ պտույտ պարունակող միջավայրերում լույսի բևեռացման վիճակը ենթարկվում է օսցիլյացիաների, որոնց տարածական հաճախությունը կախված է նմուշի հաստությունից:

Կատարվել են կալցիտի թափանցիկության տիրույթում բազմաֆոնոնային ռեզոնանսի երևույթի ուսումնասիրմանն ուղղված փորձարարական հետազոտություններ: Ստացված արդյունքներից հստակ երևում է, որ երբ ընկնող ճառագայթման հաճախականությունը համընկնում է կալցիտի ֆոնոնային մակարդակի կամ նրա պատիկների հետ, ապա դիտվում է հստակ արտահայտված ռեզոնանսի երևույթ:

Լաբորատորիայում զբաղվում են ֆիզիկական գիտափորձի սարքավորումների ղեկավարմամբ, չափումների տվյալների ավտոմատացմամբ և համակարգչային վերլուծությամբ:

Ինժեներական խումբը մշակել է համակարգ, որը կարող է կիրառվել աստղադիտակների պտտվող գմբեթի ճշգրիտ կառավարման համար, կատարված են որոշակի աշխատանքներ այդ համակարգի LabVIEW-ի միջավայրում ծրագրային ապահովմամբ, որն արդյունավետ կերպով կարող է օգտագործվել աստղադիտակների ավտոմատացված կառավարման համար:

ԳԵՐԱՐԱԳ ՕՊՏԻԿԱՅԻ ԵՎ ՖՈՏՈՆԻԿԱՅԻ ԳՀ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱ

Գիտական ղեկավար՝ *Մուրադյան Լևոն Խաչիկի, ֆիզմաթ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր, առաջատար գիտաշխատող*

Լաբորատորիայի աշխատակիցների կազմը

1. Զեյթունյան Արամ Սարգսի, ֆիզմաթ. գիտ. թեկնածու, ավագ գիտաշխատող
2. Հարությունյան Իշխան Գրիգորի, ֆիզմաթ. գիտ. թեկնածու, ավագ գիտաշխատող
3. Կուտուզյան Աղավնի Ալբերտի, ֆիզմաթ. գիտ. թեկնածու, գիտաշխատող
4. Քալաշյան Մերի Աշոտի, ֆիզմաթ. գիտ. թեկնածու, կրտսեր գիտաշխատող
5. Հակոբյան Մարիամ Ռաֆիկի, կրտսեր գիտաշխատող
6. Մարգարյան Գոհարիկ Հրանդիկի, ավագ լաբորանտ

Ըստ ընդհանուր ուղղությունների՝ լաբորատորիայում կատարված գիտական աշխատանքների ամփոփում

Գիտական թեմաներ

Թեմայի անվանումը	*Ղեկավար*
1. Գերարագ օպտիկայի և ֆոտոնիկայի լաբորատորիայի ստեղծում և զարգացում (պետական ֆինանսավորում):	Մուրադյան Լ. Խ.

Թեմա 1. Հետազոտությունների առարկան են լազերային ճառագայթման ինքնա-, կրոսս- և փոխմոդուլացման, սպեկտրալ սեղմման, հաճախային վերալարման, ոչ գծային օպտիկական Ֆուրյե-փոխակերպման, սոլիտոնաձևավորման, օպտիկական ինքնանմանության տիպի երևույթները: Հաշվետու ժամանակահատվածում իրականացվել են թվային և փորձարարական հետազոտություններ՝ նպատա-

կառուցված լազերային գերկարճ իմպուլսների բնութագրման և կառավարման մեթոդների մշակմանը ժամանակակից գերարագ օպտիկայի և ֆոտոնիկայի հիմնախնդիրների լուծման համար, մասավորապես՝ ֆեմտովայրկյանային ժամանակային սանդղակում ազդակների գրանցման և կառավարման սարքերի ստեղծման հեռանկարով: Լաբորատորիայի ձեռքբերումները հիմք են ծառայում ֆեմտովայրկյանային իմպուլսների անալիզի և սինթեզի մեթոդների մշակման համար, կոհերենտ վերահսկման, ֆոտոնիկայի և հեռահաղորդակցության ոլորտներում կիրառությունների նպատակով: Լաբորատորիայում իրականացված աշխատանքների արդյունքները ամփոփ արտահայտված են գիտական հրապարակումներում:

ԳԾԱՅԻՆ ԵՎ ՈՉ ԳԾԱՅԻՆ ՄՈՏԱՐԿՄԱՆ ԵՎ ԴՐԱՆՑ ԿԻՐԱՌՄԱՆ ԳՀ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱ

Գիտական ղեկավար՝ *Գրիգորյան Մարտին Գևորգի, ֆիզմաթ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր, առաջատար գիտաշխատող*

Լաբորատորիայի աշխատակիցների կազմը

1. Եպիսկոպոսյան Սերգո Արմենակի, ֆիզմաթ. գիտ. թեկնածու, ավագ գիտաշխատող
2. Գալոյան Լևոն Նիկոլայի, ֆիզմաթ. գիտ. թեկնածու, կրտսեր գիտաշխատող
3. Գրիգորյան Տիգրան Մարտինի, ֆիզմաթ. գիտ. թեկնածու, կրտսեր գիտաշխատող
4. Կոբելյան Արթուր Խաչիկի, կրտսեր գիտաշխատող

Ըստ ընդհանուր ուղղությունների՝ լաբորատորիայում կատարված գիտական աշխատանքների ամփոփում

Հետազոտված է տարբեր համակարգերով Ֆուրյե շարքերի բացարձակ, ոչ պայմանական զուգամիտությունը: Ուսումնասիրված են տարբեր դասերի միաչափ և բազմաչափ ֆունկցիաների ըստ Ուոլշի, ընդհանրացված Ուոլշի, Ֆաբեր-Շաուդերի, Հաարի եռանկյունաչափական համակարգերի ոչ գծային մոտարկման, որոշ դեպքերում լավագույն մոտարկման, մասնավորապես Greedy ալգորիթմով մոտարկման հարցեր:

ԹԱՂԱՆԹԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԳՀ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱ

Գիտական ղեկավար՝ *Նազարյան Էռնեստ Աղաջանի, տեխ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր, առաջատար գիտաշխատող*

Լաբորատորիայի աշխատակիցների կազմը

1. Մարտիրոսյան Միլետա Մարտիրոսի, ֆիզմաթ. գիտ. թեկնածու, ավագ գիտաշխատող
2. Հովսեփյան Աշոտ Վաղարշակի, ֆիզմաթ. գիտ. թեկնածու, ինժեներ ծրագրավորող
3. Նովիկովա Ալլա Լեոնիդի, ավագ լաբորանտ

Ըստ ընդհանուր ուղղությունների՝ լաբորատորիայում կատարված գիտական աշխատանքների ամփոփում

Հաշվետու ուստարում ուսումնասիրվել են բարակապատ առանցքահամաչափ թաղանթների ձևագոյացման պրոցեսների ֆիզիկա-ֆենոմենոլոգիական մոդելավորման վերլուծական մեթոդների մշակման սկզբունքները:

Մասնավորապես լուծվել է արդյունարար դեֆորմացիաների կուտակման օրինաչափությունների հիման վրա թաղանթների ճշգրտության և ամրության չափանիշների բաշխման խնդիրը:

ՖԻԶԻԿԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊՈՐՏԻ ԱՄԲԻՈՆ

Ամբիոնի վարիչ՝ *Սանթրոսյան Սարգիս Գրիգորի, դոցենտ*

Պրոֆեսորադասախոսական կազմը

1. Զաքոյան Վլադիմիր Ռուբենի, մանկ. գիտ. թեկնածու, պրոֆեսոր
2. Թումանյան Հենրիկ Գևորգի, մանկ. գիտ. թեկնածու, պրոֆեսոր
3. Ավագիմյանց Վլադիմիր Միքայելի, պրոֆեսոր
4. Թադևոսյան Հմայակ Տիգրանի, դոցենտ
5. Հակոբյան Հրաչյա Ռաֆիկի, դոցենտ
6. Բաբուրյան Հայկ Ռուբենի, ասիստենտ
7. Ղուկասյան Արկադի Արսենի, ասիստենտ
8. Գալոյան Արսեն Ռոբերտի, դասախոս
9. Գևորգյան Հայկ Սանասարի, դասախոս
10. Զաքարյան Երվանդ Ալեքսանդրի, դասախոս
11. Կարապետյան Դավիթ Սերգեյի, դասախոս
12. Հարությունյան Արարատ Աղաբեկի, դասախոս
13. Ղուկասյան Նարեկ Յուրիի, դասախոս
14. Մելքոնյան Լուսինե Ազատի, դասախոս
15. Մինասյան Դավիթ Ոստանիկի, դասախոս
16. Մխիթարյան Արսեն Գուրգենի, դասախոս
17. Մնացականյան Սարգիս Խաչիկի, դասախոս
18. Մուրադյան Սարիբեկ Մկրտչի, դասախոս
19. Շահբազյան Կարեն Նորայրի, դասախոս
20. Սարգսյան Աշոտ Հրաչյայի, դասախոս
21. Փարվանյան Դիաննա Վարդանի, դասախոս
22. Օրդյան Վրեժ Վլադիմիրի, դասախոս

Համատեղողներ

1. Ֆահրադյան Դավիթ Սարգսի, մանկ. գիտ. թեկնածու
2. Պողոսյան Արթուր Բորիկի, դասախոս

Ուսումնաօժանդակ աշխատակիցներ

1. Գուլասարյան Ջուլիետա Լյուդվիգի, գործավար
2. Բարսեղյան Լիլյա Հակոբի, լաբորանտ
3. Գասպարյան Լուսինե Վոլոդյայի, օպերատոր

Ըստ ընդհանուր ուղղությունների՝ ամբիոնում կատարված գիտական և այլ աշխատանքների ամփոփում

Հաշվետու ուստարում անցկացված կարևորագույն մարզական միջոցառումներից հարկ է նշել ՀՀ ԿԳ նախարարության կողմից անցկացված «Բարձրագույն ուսումնական հաստատությունների ուսանողների 16-րդ հանրապետական մարզական խաղերը»: Մրցումների կանոնակարգի համաձայն՝ նախատեսված էր մարզախաղերն անցկացնել 10 մարզաձևերից 2 շրջանով՝ գարնանային և աշնանային: Մրցումների առաջին շրջանն անցկացվեց մարտ-մայիս ամիսներին 7 մարզաձևերից /տղաներ և աղջիկներ/, որին մասնակցեցին 16 բուհերի ներկայացուցիչներ: ԵՊՀ-ի ուսանող մարզիկները բարձր կազմակերպվածությամբ մասնակցեցին բոլոր մարզաձևերի առաջնություններին: Արդյունքում 3 մարզաձևերում՝ սեղանի թենիս /աղջիկներ/, աթլետիկական կրոսավազք /աղջիկներ/, ֆուտզալ /աղջիկներ/, մեր հավաքականները գրավեցին 1-ին տեղերը: Չորս մարզաձևերում՝ շախմատ /աղջիկներ/, վոլեյբոլ /աղջիկներ/, աթլետիկական կրոսավազք /տղաներ/ և բասկետբոլ /աղջիկներ/, գրավեցին 2-րդ մրցանակային պատվավոր տեղերը:

Ձմեռային արձակուրդներին Տնտեսագիտական համալսարանի մարզակառույցում անցկացվեց բուհերի ֆիզիկական դաստիարակության ամբիոնների վոլեյբոլի առաջնություն: ԵՊՀ ամբիոնի կոլեկտիվը գրավեց 1-ին տեղը, պարգևատրվեց գավաթով և հավաստագրով:

Հրատարակություններ

Դասագիրք	Մենագրություն	Ուսումնական ձեռնարկ	Ուսումնամեթոդա-կան ձեռնարկ	Հոդված	Ձեկուցման թեզիս
-	-	1	-	1	-

Գիտական և ուսումնամեթոդական հրատարակությունների ցանկ

Ուսումնական ձեռնարկ

1. *Հ. Ռ. Հակոբյան,* Սպորտը և արվեստը, Հեղինակային հրատարակություն, Երևան, 2015, 116 էջ:

Հոդված

1. *В. М. Авагимянц,* Физическая культура и спорт как фактор здоровой опорно-двигательной системы человека, Միջազգային 41-րդ համաժողովի գիտական հոդվածների ժողովածու, Երևան, 2014, էջ 370-374:

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆ

Ամբիոնի վարիչ՝ *Մանուկյան Սարգիս Անուշավանի*

Պրոֆեսորադասախոսական կազմը

1. Մանասյան Կարինե Աշոտի, կենս. գիտ. թեկնածու, դոցենտ
2. Անանյան Սուսաննա Սուրենի, դասախոս
3. Բաղդասարյան Լյովա Լյուդվիգի, դասախոս
4. Հակոբյան Ասյա Անդրանիկի, դասախոս
5. Հարությունյան Հասմիկ Վարդգեսի, դասախոս
6. Ճաղարյան Գագիկ Հրանտի, դասախոս
7. Մանուկյան Սուսաննա Ալեքսանի, դասախոս
8. Նիկոյան Կարինե Ռազմիկի, դասախոս
9. Շահինյան Սուսաննա Միշիկի, դասախոս
10. Սադիխյան Ֆենյա Միշայի, դասախոս
11. Սամվելյան Արա Գեղամի, դասախոս
12. Քամալյան Սամվել Վլադիմիրի, դասախոս

Համատեղողներ

1. Հարությունյան Էլմիրա Ալեքսանդրի, դասախոս

Ուսումնաօժանդակ աշխատակիցներ

1. Շահնազարյան Մարինե Սերժիկի, գործավար
2. Հարությունյան Էլմիրա Ալեքսանդրի, օպերատոր
3. Մարտիրոսյան Անուշ Ալբերտի, ավագ լաբորանտ

Ըստ ընդհանուր ուղղությունների՝ ամբիոնում կատարված գիտական և այլ աշխատանքների ամփոփում

Հաշվետու ժամանակաշրջանում «Քաղպաշտպանություն և արտակարգ իրավիճակներում բնակչության առաջին բուժօգնություն» դասընթացի շրջանակում ամբիոնի կողմից ուսուցանվել են 3062 առկա և 939 հեռակա համակարգերի ուսանողներ:

Վերանայվել և վերամշակվել է դասավանդվող առարկայի ծրագիրը:

Աշխատանքներ են տարվել ուսումնանյութական բազայի բարելավման ուղղությամբ, պատրաստվել են նոր ցուցապաստառներ, ձեռք են բերվել նոր միջոցներ և պիտույքներ գործնական պարապմունքների անցկացման պատշաճ մակարդակն ապահովելու համար:

Դասախոսների որակավորման բարձրացման կրթական ծրագրի շրջանակում ամբիոնի դասախոսները մասնակցել են որակավորման բարձրացման դասընթացներին:

Հրատարակություններ

Դասագիրք	Մենագրություն	Ուսումնական ձեռնարկ	Ուսումնամեթոդա-կան ձեռնարկ	Հոդված	Զեկուցման թեզիս
–	–	–	–	-	1

Գիտական և ուսումնամեթոդական հրատարակությունների ցանկ

Զեկուցման թեզիս

1. *K. A. Manasyan*, Life-saving Education and Training for Disaster Medical Support, «Մանկավարժության ժամանակակից հիմնախնդիրները», Միջազգային գիտաժողովի թեզիսներ, Ծաղկաձոր, 17-18 հոկտեմբերի, 2014, էջ 225-228:

ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ

Տնօրեն՝ *Առաքելյան Սամվել Արշավիրի, պատմ. գիտ. թեկնածու, դոցենտ*

Գիտական քարտուղար՝ *Աթոյան Միհեր Սերգեյի, ֆիզմաթ. գիտ. թեկնածու, դոցենտ*

Մասնաճյուղի ուսանողների թիվը՝ 1535, որից անվճար՝ 118, վճարովի՝ 1417

2014-2015 ուստարում հրատարակվել են

Դասագիրք	Մենագրություն	Ուսումնական ձեռնարկ	Ուսումնամեթոդական ձեռնարկ	Հոդված	Ձեկուցման թեզիս
2	6	1	12	101	-

Մասնաճյուղում գործող ֆակուլտետների թիվը՝ 4

ԲՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԱԿՈՒԼՏԵՏ

Դեկանի ժամանակավոր պաշտոնակատար՝ *Զաքարյան Մանվել Աշոտի, ֆիզմաթ. գիտ. թեկնածու, դոցենտ*

Ֆակուլտետի մասնագիտությունները

Շիֆր	*Մասնագիտություններ՝*
010500	Կիրառական մաթեմատիկա և ֆիզիկա
010400	Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա
020500	Քարտեզագրություն և կադաստրային գործ

Կրթական աստիճան, Մասնագիտություն	*Ուսանողների թիվը՝ 68*							
	I կուրս		II կուրս		III կուրս		IV կուրս	
	պպ	վճ	պպ	վճ	պպ	վճ	պպ	վճ
Բակալավրիատ								
Կիրառական մաթեմատիկա և ֆիզիկա	-	-	-	-	4	10	-	-
Բնապահպանություն և բնօգտագործում	-	-	-	-	-	-	-	-
Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա	4	20	4	20	-	-	-	-
Քարտեզագրություն և կադաստրային գործ	-	6	-	-	-	-	-	-
Ընդամենը	***4***	***26***	***4***	***20***	***4***	***10***	**-**	**-**

Քննաշրջանների արդյունքներ
Ձմեռային քննաշրջան

Կրթական աստիճան, մասնագիտություն, կուրս	Քննաշրջանին մասնակցել են	Անբավարար գնահատական ստացած ուսանողների թիվը		Գերազանցիկ-ների թիվը	Առաջադիմու-թյան %-ը
		պպ	վճ		
Բակալավրիատ					
Կիրառական մաթեմատիկա և ֆիզիկա					
3-րդ	14	-	4	-	71.4
Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա					
1-ին	24	-	9	-	62.5
2-րդ	24	-	9	-	62.5
Քարտեզագրություն և կադաստրային գործ	6	-	1	-	83.3
		-	-	-	-
Ընդամենը	***68***	**-**	***23***	**-**	***66.2***

Ամառային քննաշրջան

Կրթական աստիճան, մասնագիտություն, կուրս	Քննաշրջանին մասնակցել են	Անբավարար գնահատական ստացած ուսանողների թիվը		Գերազանցիկ-ների թիվը	Առաջադիմու-թյան %-ը
		պպ	վճ		
Բակալավրիատ					
Կիրառական մաթեմատիկա և ֆիզիկա					
3-րդ	13	-	2	-	84.6
Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա					
1-ին	22	-	8	-	63.6
2-րդ	23	-	6	1	73.9
Քարտեզագրություն և կադաստրային գործ	5	-	-	-	100
Ընդամենը	***63***	***-***	***16***	***1***	***74.6***

Ֆակուլտետում գործող ամբիոնների թիվը՝ 2

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱԹԵՄԱՏԻԿԱՅԻ ԵՎ ԲՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆ

Ամբիոնի վարիչի ժամանակավոր պաշտոնակատար՝ *Յուցուլյան Արտակ Վոլոդյայի, ֆիզմաթ. գիտ. թեկնածու, դոցենտ*

Պրոֆեսորադասախոսական կազմը

1. Աթոյան Մհեր Սերգեյի, ֆիզմաթ. գիտ. թեկնածու, դոցենտ
2. Այվազյան Կամո Բենիկի, տեխ. գիտ. թեկնածու, դոցենտ
3. Զաքարյան Մանվել Աշոտի, ֆիզմաթ. գիտ. թեկնածու, դոցենտ
4. Իսախանյան Հմայակ Լևոնի, քիմ. գիտ. թեկնածու, դոցենտ
5. Մակարյան Անուշավան Հայկարամի, ֆիզմաթ. գիտ. թեկնածու, դոցենտ
6. Խաչատրյան Սոնա Ժիրայրի, կենս. գիտ. թեկնածու, ասիստենտ
7. Մարգարյան Ալեքսան Շամիլի, ֆիզմաթ. գիտ. թեկնածու, ասիստենտ
8. Քամալյան Հայկ Արթուրի, ֆիզմաթ. գիտ. թեկնածու, ասիստենտ
9. Ամիրյան Անահիտ Արամայիսի, ասիստենտ

10. Օսիպովա Էլմիրա Կառլի, ասիստենտ
11. Գուլակյան Գեղամ Վոլոդյայի, դասախոս

Համատեղողներ

1. Մարդոյան Լևոն Գրիշայի, ֆիզմաթ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր
2. Գրիգորյան Արծվի Արտաշեսի, կենս. գիտ. թեկնածու, դոցենտ
3. Հարությունյան Նորայր Պատվականի, ֆիզմաթ. գիտ. թեկնածու, դոցենտ
4. Մակարյան Արմեն Հովհաննեսի, ֆիզմաթ. գիտ. թեկնածու, դոցենտ
5. Նավոյան Վարազդատ Խաժակի, ֆիզմաթ. գիտ. թեկնածու, դոցենտ
6. Սիմոնյան Գևորգ Սարգսի, քիմ. գիտ. թեկնածու, դոցենտ
7. Ալավերդյան Արթուր Զավենի, կենս. գիտ. թեկնածու, ասիստենտ
8. Դավթյան Սմբատ Ռուբիկի, դասախոս
9. Մեհրաբյան Անուշ Վոլոդյայի, դասախոս

Ուսումնաօժանդակ աշխատակիցներ

1. Գուլակյան Գեղամ Վոլոդյայի, Ընդհանուր ֆիզիկայի լաբորատորիայի վարիչ
2. Թելունց Հերմինե Կորյունի, Ընդհանուր մաթեմատիկայի և բնագիտության ամբիոնի գործավար-օպերատոր

Ըստ ընդհանուր ուղղությունների՝ ամբիոնում կատարված գիտական աշխատանքների ամփոփում

Մասնաճյուղի Ռազմավարական ծրագրի բարձրորակ կրթություն խնդրի պահանջներով և ներբուհական որակի ապահովման նկատմամբ պատասխանատվությամբ պայմանավորված՝ դասընթացների ծրագրերը բարելավելու համար կազմվել են աշխատանքային փաթեթներ, որոնք պարունակում են փաստաթղթերի համակարգված և կազմակերպված հավաքագրում:

Նոր գիտելիքների ձեռքբերման, ծրագրի հիմնավորման և ինքնուրույն աշխատանքների զարգացման համար 2014-2015 ուստարվա I կիսամյակում ամբիոնը ստեղծեց խմբակ՝ «Ընդհանուր մաթեմատիկա», որի արդյունքում իրականացվում են ուսանողների զեկույցներ:

Դասախոսական կազմի դասավանդման որակի բարելավման նպատակով Ընդհանուր մաթեմատիկայի և բնագիտության ամբիոնի նախաձեռնությամբ ամբիոնի դասախոսները դասախոսություններ են կարդացել օտար լեզվով: Նախաձեռնության նպատակն է ուսանողներին ցույց տալ օտար լեզվի կարևորությունը մասնագիտական որակների բարձրացման գործում:

Հրատարակություններ

Դասագիրք	Մենագրություն	Ուսումնական ձեռնարկ	Ուսումնամեթոդական ձեռնարկ	Հոդված	Զեկուցման թեզիս
-	-	-	-	3	-

Գիտական և ուսումնամեթոդական հրատարակությունների ցանկ

Հոդված

1. *Н. П. Арутюнян,* Магнитоклорический эффект соединений в системе $Gd_5Si_{2-x}G_{2-x}Sn_{2x}$, “Известия АН НАН Армении”, серия “Физика”, т. 50, N 2, 2015, с. 264-269.
2. *Г. С. Симонян*, Синергический подход к нафтидным системам, “Международный журнал прикладных и фундаментальных исследованый”, № 5, Часть 2, 2015, с. 270-272.
3. *G. S. Simonian,* Analysis of the state of geo-ecological systems in the viewof synergetic theory of information, “GISAP: Physics, Mathematics and Chemistry”, № 4, 2014. p. 18-21.

ԾՐԱԳՐԱՎՈՐՄԱՆ ԵՎ ԻՆՖՈՐՄԱՑԻՈՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԱՄԲԻՈՆ

Ամբիոնի վարիչի ժամանակավոր պաշտոնակատար՝ *Քամալյան Ռաֆայել Ռուբենի, ֆիզմաթ. գիտ. թեկնածու, դոցենտ*

Պրոֆեսորադասախոսական կազմը

1. Սիմոնյան Աննա Սմբատի, տեխ. գիտ. թեկնածու, ասիստենտ
2. Ճաղարյան Մարիետա Ալբերտի, ասիստենտ
3. Դավթյան Նարինե Նվերի, դասախոս
4. Խաչատրյան Արփինե Մանվելի, դասախոս
5. Խաչատրյան Տաթևիկ Վասիլի, դասախոս
6. Օթարյան Քնար Վլադիմիրի, դասախոս

Համատեղողներ

1. Դարբինյան Կարապետ Սուրենի, ֆիզմաթ. գիտ. թեկնածու, դոցենտ
2. Հովակիմյան Աննա Սեդրակի, տեխ. գիտ. թեկնածու, դոցենտ
3. Ղազարյան Սերժիկ Սպարտակի, ասիստենտ
4. Թովմասյան Սուրեն Վլադիմիրի, դասախոս

Ուսումնաօժանդակ աշխատակիցներ

1. Օթարյան Քնար Վլադիմիրի, գործավար-օպերատոր

Ըստ ընդհանուր ուղղությունների՝ ամբիոնում կատարված գիտական աշխատանքների ամփոփում

Ուղղումներ են կատարվել 2014-2015 ուստարվա Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա մասնագիտության կրթական ծրագրի տեղեկագրքում: Ուշադրություն դարձնելով նորագույն մեթոդների

մշակման և առարկայական ծրագրերի արդիականության վրա՝ հաշվետու ուստարում բոլոր դասախոսները ներկայացրել են առարկայական փաթեթներ:

Ամբիոնը կազմակերպել է գիտական զեկուցումներ, որոնք իրականացվել են ամբիոնի կողմից հրավիրված առաջատար դասախոսների կողմից:

Դասավանդման նոր մեթոդների, ուսումնական գործընթացում տեղեկատվական տեխնոլոգիաներ կիրառելու հմտությունների, ինչպես նաև ուսանողների ակտիվության դիտարկման նպատակով կազմակերպվել են բաց դասեր և միջոցառումներ:

Ն. Ն. Դավթյանն ատենախոսություն է պաշտպանել «Որոշ դասերի գրաֆների ճիշտ կողային ներկումների բազմության մեջ միջակայքային սպեկտրով գագաթների թվի էքստրեմալ արժեքների մասին» թեմայով:

Հրատարակություններ

Դասագիրք	Մենագրություն	Ուսումնական ձեռնարկ	Ուսումնամեթոդական ձեռնարկ	Հոդված	Զեկուցման թեզիս
-	-	-	-	8	-

Գիտական և ուսումնամեթոդական հրատարակությունների ցանկ

Հոդված

1. *Հ. Ս. Օվակիմյան, Ս. Գ. Սարգսյան, Լ. Օ. Խաչոյան,* Программные интерфейсы для доступа к виртуальным хранилищам, “Сб. тезисов форума корпорации EMC”, Москва, 2014, с. 91-96.
2. *Ս. Գ. Սարգսյան, Հ. Ս. Օվակիմյան, Լ. Օ. Խաչոյան,* Разработка и реализация Cloud-компонентов Ms Office для предприятия, “Сб. тезисов форума корпорации EMC”, Москва, 2014, с. 97-101.
3. *Հ. Ս. Օվակիմյան, Ս. Գ. Սարգսյան, Մ. Ա. Զիրոյան,* Самоорганизующиеся карты в задачах биометрической идентификации, “Сб. тезисов межд. конф. Бесконечномерный анализ, стохастика, мат. моделирование: новые задачи и методы”, Москва, 2014, с. 255-257.
4. *N. N. Davtyan, R. R. Kamalian,* On the number of vertices with an interval spectrum in edge labelings of regular graphs, “Proceedings of the Yerevan State University, Physical and Mathematical Sciences”, 3 (235), Yerevan, 2014, pp. 40-42.
5. *N. N. Davtyan, A. M. Khachatryan, R. R. Kamalian,* A Structure of the Subgraph Induced at a Labeling of a Graph by the Subset of Vertices with an Interval Spectrum, “Applied Mathematical Sciences”, 8 (173), 2014, pp. 8635-8641.
6. *N. N. Davtyan,* On a game connected with edge colorings of graphs, “Scientific Proceedings of Gyumri State Pedagogical Institute”, Ruse, Bulgaria, 2014, pp. 129-137.
7. *N. N. Davtyan, R. R. Kamalian,* Some relations between the μ-parameters of regular graphs, “Proceedings of the Yerevan State University, Physical and Mathematical Sciences”, 1 (236), Yerevan, 2015, pp. 47-51.
8. *R. R. Kamalian,* Estimates for the number of vertices with an interval spectrum in proper edge colorings of some graphs, “BASM”, 3 (76), 2014, pp. 3-12.

ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԱԿՈՒԼՏԵՏ

Դեկան՝ *Ալեքսանյան Վարդան Արամայիսի, պատմ. գիտ. թեկնածու, դոցենտ*

Ֆակուլտետի մասնագիտությունները

Շիֆր	*Մասնագիտություններ՝*
031000	Հայոց լեզու և գրականություն
030400	Պատմություն
051000	Մանկավարժություն և հոգեբանություն
031300	Ֆրանսերեն լեզու և գրականություն
031300	Անգլերեն լեզու և գրականություն

Կրթական աստիճան, մասնագիտություն	*Ուսանողների թիվը՝ 267*							
	I կուրս		II կուրս		III կուրս		IV կուրս	
	պպ	վճ	պպ	վճ	պպ	վճ	պպ	վճ
Բակալավրիատ								
Պատմություն	5	22	5	14	7	16	-	-
Հայոց լեզու և գրականություն	4	4	5	13	5	19	-	-
Մանկավարժություն և հոգեբանություն	4	8	4	15	4	5	-	-
Ֆրանսերեն լեզու և գրականություն	3	11	3	7	3	6	-	-
Անգլերեն լեզու և գրականություն	4	15	4	27	3	22	-	-
Ընդամենը	***20***	***60***	***21***	***76***	***22***	***68***	**-**	**-**

Քննաշրջանների արդյունքներ
Ձմեռային քննաշրջան

Կրթական աստիճան, մասնագիտություն, կուրս	Քննաշրջանին մասնակցել են	Անբավարար գնահատական ստացած ուսանողների թիվը		Գերազանցիկ-ների թիվը	Առաջադիմու-թյան %-ը
		պպ	վճ		
Բակալավրիատ					
Պատմություն					
1-ին	27	-	9	2	66.7
2-րդ	19	1	5	2	73.7
3-րդ	23	-	7	4	69.6
Հայոց լեզու և գրականություն					
1-ին	8	-	-	1	100

2-րդ	18	-	5	-	72.2
3-րդ	24	1	11	-	54.2
Մանկավարժություն և հոգեբանություն					
1-ին	12	-	1	3	91.7
2-րդ	19	-	-	1	100
3-րդ	9	-	1	1	88.9
Ֆրանսերեն լեզու և գրականություն					
1-ին	14	-	5	-	64.3
2-րդ	10	-	2	1	80
3-րդ	9	-	1		88.9
Անգլերեն լեզու և գրականություն					
1-ին	19	-	4	3	78.9
2-րդ	31	-	8	6	74.2
3-րդ	25	-	8	1	68
Ընդամենը	***267***	***2***	***163***	***25***	***74.9***

Ամառային քննաշրջան

Կրթական աստիճան, մասնագիտություն, կուրս	Քննաշրջանին մասնակցել են	Անբավարար գնահատական ստացած ուսանողների թիվը		Գերազանցիկ-ների թիվը	Առաջադիմու-թյան %-ը
		պպ	վճ		
Բակալավրիատ					
Պատմություն					
1-ին	25	-	1	3	96.2
2-րդ	18	-	-	-	100
3-րդ	23	-	7	2	65.2
Հայոց լեզու և գրականություն					
1-ին	8	-	1	1	87.5
2-րդ	18	1	3	-	77.8
3-րդ	22	-	2	-	91.7
Մանկավարժություն և հոգեբանություն					
1-ին	12	-	3	2	75
2-րդ	19	-	4	1	78

3-րդ	9	-	-	1	100
Ֆրանսերեն լեզու և գրականություն					
1-ին	14	-	4	-	71.4
2-րդ	10	-	2	1	80
3-րդ	9	-	1	1	88.9
Անգլերեն լեզու և գրականություն					
1-ին	18	-	4	-	77.8
2-րդ	30	-	7	4	76.7
3-րդ	25	-	6	2	76
Ընդամենը	***263***	***2***	***45***	***18***	***82.1***

Ֆակուլտետում գործող ամբիոնների թիվը՝ 4

ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆ

Ամբիոնի վարիչ՝ *Նահապետյան Ռաֆիկ Ասքանազի, պատմ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր*

Պրոֆեսորադասախոսական կազմը

1. Ներսիսյան Աշոտ Արտաշեսի, պատմ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր
2. Ալեքսանյան Վարդան Արամայիսի, պատմ. գիտ. թեկնածու, դոցենտ
3. Առաքելյան Սամվել Արշավիրի, պատմ. գիտ. թեկնածու, դոցենտ
4. Գրիգորյան Նաթելլա Սերոժի, պատմ. գիտ. թեկնածու, ասիստենտ
5. Անանյան Գարուշ Գուրգենի, ասիստենտ
6. Զորոյան Հակոբ Ազատի, ասիստենտ
7. Ազատյան Արա Կամոյի, դասախոս
8. Բեկնազարյան Յուրա Իսրայելի, դասախոս
9. Գյոզալյան Գագիկ Շուրիկի, դասախոս
10. Հովհաննիսյան Ալբերտ Սարգսի, դասախոս
11. Մատինյան Անյա Ռուբենի, դասախոս

Համատեղողներ

1. Թինոյան Դավիթ Ֆերդինանդի, պատմ. գիտ. թեկնածու, դոցենտ
2. Հովհաննիսյան Արամ Էդուարդի, պատմ. գիտ. թեկնածու, դոցենտ
3. Ղազարյան Արտաշես Սոսի, պատմ. գիտ. թեկնածու, դոցենտ
4. Մովսեսյան Հովսեփ Իսրայելի, քաղ. գիտ. թեկնածու, ասիստենտ

5. Մարտիրոսյան Ռուբիկ Անդրանիկի, ասիստենտ
6. Գրիգորյան Լուսիկ Բախշիի, դասախոս

Ուսումնաօժանդակ աշխատակիցներ

1. Ազատյան Արա Կամոյի, գործավար-օպերատոր
2. Նազարեթյան Սուսաննա Իշխանի, գործավար-օպերատոր

Ըստ ընդհանուր ուղղությունների՝ամբիոնում կատարված գիտական աշխատանքների ամփոփում

Հաշվետու ուստարում ամբիոնում կատարվել են ինչպես ուսումնական, գիտական, այնպես էլ կազմակերպչական աշխատանքներ:

2014 թ. սեպտեմբերի 23-ին ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտում գործող ՀՀ ԲՈՀ-ի 001 մասնագիտական խորհրդում տեղի է ունեցել ամբիոնի դասախոս Ն. Ս. Գրիգորյանի «1921 թ. փետրվարյան ապստամբությունը Հայաստանում» թեմայով թեկնածուական ատենախոսության պաշտպանությունը:

2015 թ. ապրիլի 23-ին ամբիոնի նախաձեռնությամբ ու մասնակցությամբ կազմակերպվել է գիտաժողով՝ «Հայոց ցեղասպանությունը, պատճառները, հետևանքները և միջազգային արձագանքները» թեմայով:

Հրատարակություններ

Դասագիրք	Մենագրություն	Ուսումնական ձեռնարկ	Ուսումնամեթոդական ձեռնարկ	Հոդված	Ձեկուցման թեզիս
-	2	-	1	11	-

Գիտական և ուսումնամեթոդական հրատարակությունների ցանկ

Մենագրություն

1. *Դ. Ֆ. Թինոյան,* Ամբողջատիրական համակարգի ձևավորումն ու անկումը Եվրոպայում, «Տիր» հրատ., Երևան, 2015, 145 էջ:
2. *A. A. Nersisyan*, General Sebouh, “Edit print”, Yerevan, 2015, 276 p.

Ուսումնամեթոդական ձեռնարկ

1. *Ռ. Ա. Նահապետյան,* Ուղեցույց, Հայ ազգագրություն (Ընդհանուր դասընթացի), ԵՊՀ պատմության ֆակուլտետի առաջին կուրսի առկա և հեռակա ուսուցման բակալավրի ուսանողների համար, ԵՊՀ հրատ., Երևան, 2015, 92 էջ:

Հոդված

1. *Ա. Ա. Ներսիսյան,* Գրիգոր Ասատրյան, Հումանիզմը նոր հազարամյակի հիմնախնդիրների համատեքստում, «Պատմաբանասիրական հանդես», № 1 /198/, 2015, էջ 297-301:

2. *Ա. Ա. Ներսիսյան,* ՀՀ Բյուրո կառավարության և Խորհրդային Ռուսաստանի բանակցությունների առաջին փուլը, «Ակունք» գիտական հոդվածների ժողովածու, 2014, № 1 /10/, էջ 3-14:
3. *Ա. Ա. Ներսիսյան, Ա. Հ. Սիմոնյան,* Հայաստանի առաջին Հանրապետության պատմագրության գնահատման հայեցակարգային հիմքերը, «Հայագիտության հարցեր» հանդես, № 3, 2014, էջ 11-19:
4. *Ա. Է. Հովհաննիսյան,* Լևոն Մեծագործի և Լամբրոնի Հեթումյանների հարաբերությունների պատմությունից, «Տարեգիրք», Թ, 2014, էջ 229-235:
5. *Ա. Է. Հովհաննիսյան,* 1254 թ. կնքված հայ-մոնղոլական պայմանագրի գնահատության շուրջ, «Բանբեր Երևանի համալսարանի», № 3, 2014, էջ 30-35:
6. *Դ. Ֆ. Թինոյան,* Հայ իշխանական տները և նրանց մնացորդները 15-րդ դարի վերջին քառորդին, 16-րդ դարի առաջին քառորդին, «Կանթեղ», № 4, 2014, էջ 18-25:
7. *Դ. Ֆ. Թինոյան,* Հովհաննես Անթեպցի Կիլիկիո կաթողիկոսի նախքան հովվապետ օծվելու գործունեության որոշ դրվագների մասին, «Կրոնագիտության և եկեղեցաբանության խնդիրները Հայաստանում», Գիտաժողովի զեկուցումներ, 2014, էջ 74-82:
8. *Ռ. Ա. Նահապետյան,* Դաշտային ազգագրական հետազոտությունները իբրև ազգագրական գիտության հիմնական սկզբնաղբյուր, Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ 90-ամյակին նվիրված գիտաժողովի նյութերի ժողովածու, պրակ 2-րդ, «Մանկավարժ» հրատ., 2014, էջ 372-377:
9. *Ռ. Ա. Նահապետյան,* Ստրաբոնի «Աշխարհագրություն» երկը Հայաստանի և հայերի մասին, «Պատմաբանասիրական հանդես», «Գիտություն» հրատ., 2015, էջ 202-223:
10. *Ս. Ա. Առաքելյան,* Դպրոցականների հայրենասիրական դաստիարակություն իրականացնող ուսուցիչների նախապատրաստման գիտատեսական հիմքեր, «ՀՀ սահմանամերձ գոտու ազգաբնակչության հոգեբանամանկավարժական հիմնախնդիրները» միջբուհական հանրապետական գիտաժողովի նյութեր, 2015, էջ 8-15:
11. *Վ. Ա. Ալեքսանյան,* Հակոբ Ա եպիսկոպոս Սյունեցու գործունեության շուրջ (918-958 թթ.), «Պատմաբանասիրական հանդես», № 3, 2014, էջ 195-209:

ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆ

Ամբիոնի վարիչ՝ *Ավագյան Վաչագան Վարազդատի, բան. գիտ. թեկնածու, դոցենտ*

Պրոֆեսորադասախոսական կազմը

1. Սարհատյան Աիդա Ասիլբեկի, բան. գիտ. թեկնածու, դոցենտ
2. Աղաբաբյան Վահան Արշակի, բան. գիտ. թեկնածու, ասիստենտ
3. Թումանյան Լուսինե Վիլիկի, բան. գիտ. թեկնածու, ասիստենտ
4. Հասանյան Ալիսա Զավենի, բան. գիտ. թեկնածու, ասիստենտ
5. Մկրտչյան Գարիկ Գվիդոնի, բան. գիտ. թեկնածու, ասիստենտ
6. Պողոսյան Կարինե Պողոսի, բան. գիտ. թեկնածու, ասիստենտ
7. Սարուխանյան Մուշեղ Լևոնի, բան. գիտ. թեկնածու, ասիստենտ
8. Վանյան Հասմիկ Սամվելի, բան. գիտ. թեկնածու, ասիստենտ
9. Ադամյան Արմինե Արգամի, դասախոս

Համատեղողներ

1. Վարդանյան Խաչատուր Գարուշի, բան. գիտ. թեկնածու, դոցենտ
2. Էմին-Տերյան Գևորգ Գրիգորի, ասիստենտ
3. Թամամյան Գայանե Արամայիսի, դասախոս

Ուսումնաօժանդակ աշխատակիցներ

1. Մեհրաբյան Գոհար Ժորայի, գործավար-օպերատոր

Ըստ ընդհանուր ուղղությունների՝ ամբիոնում կատարված գիտական աշխատանքների ամփոփում

Հաշվետու ուստարում ամբիոնի դասախոս Վ. Ավագյանը ընդգրկված է եղել Համաշխարհային բանկի կողմից իրականացվող TASS-2014 (Trendis in armenistic subjects study) ծրագրի մշակման աշխատանքային խմբում, որը թեստեր է կազմում հայագիտական առարկաներից: Շարունակվել են ամբիոնի դասախոս Գ. Մկրտչյանի մասնակցությամբ ՀՀ ԿԳՆ ԳՊԿ-ի կողմից ֆինանսավորվող հետազոտության աշխատանքները՝ № SCS 13-6B382 գիտական թեմայի շրջանակում:

Հրատարակություններ

Դասագիրք	Մենագրություն	Ուսումնական ձեռնարկ	Ուսումնամեթոդական ձեռնարկ	Հոդված	Ձեկուցման թեզիս
-	1	-	6	27	-

Գիտական և ուսումնամեթոդական հրատարակությունների ցանկ

Մենագրություն

1. *Վ. Ա. Աղաբաբյան,* Սերո Խանզադյանի պատմվածքներն ու վիպակները, «Տիր» հրատ., Երևան, 2014, 146 էջ:

Ուսումնամեթոդական ձեռնարկ

1. *Ա. Աբաջյան, Լ. Թելյան, Մ. Հալաջյան, Ռ. Սաքապետոյան, Ս. Մուրադյան, Վ. Վ. Ավագյան,* Հայոց լեզու և հայ գրականություն, 2014 թ. պետական ավարտական քննությունների առաջադրանքների շտեմարան, մաս 4, «Հաշ Ընդ Հաշ Փրինթ» հրատ., Երևան, 2014, 348 էջ:
2. *Ա. Աբաջյան, Լ. Թելյան, Մ. Հալաջյան, Ռ. Սաքապետոյան, Ս. Մուրադյան, Վ. Վ. Ավագյան,* Հայոց լեզու և հայ գրականություն, 2015 թ. պետական ավարտական քննությունների առաջադրանքների շտեմարան, մաս 1, «Ռաբունի» հրատ., Երևան, 2014, 304 էջ:
3. *Ա. Աբաջյան, Լ. Թելյան, Մ. Հալաջյան, Ռ. Սաքապետոյան, Ս. Մուրադյան, Վ. Վ. Ավագյան,* Հայոց լեզու և հայ գրականություն, 2015 թ. պետական ավարտական քննությունների առաջադրանքների շտեմարան, մաս 2, «Ռաբունի» հրատ., Երևան, 2014, 300 էջ:

4. *Ա. Աբաջյան, Լ. Թելյան, Մ. Հալաջյան, Ռ. Սաքապետոյան, Ս. Մուրադյան, Վ. Վ. Ավագյան,* Հայոց լեզու և հայ գրականություն, 2015 թ. պետական ավարտական քննությունների առաջադրանքների շտեմարան, մաս 3, «Բաբունի» հրատ., Երևան, 2014, 296 էջ:
5. *Ա. Աբաջյան, Լ. Թելյան, Մ. Հալաջյան, Ռ. Սաքապետոյան, Ս. Մուրադյան, Վ. Վ. Ավագյան,* Հայոց լեզու և հայ գրականություն, 2015 թ. պետական ավարտական քննությունների առաջադրանքների շտեմարան, մաս 4, «Բաբունի» հրատ., Երևան, 2014, 284 էջ:
6. *Գ. Գ. Մկրտչյան,* Բարբառագիտության հիմունքներ (Դասախոսություններ), ԵՊՀ հրատ., Երևան, 2015, 69 էջ:

Հոդված

1. *Վ. Վ. Ավագյան,* Արշակ Չոպանյանի քննադատական հայացքները դասընթացի ուսուցումը, «Ակունք» գիտական հոդվածների ժողովածու, N 1 /11/, ԵՊՀ հրատ., Երևան, 2015, էջ 181-187:
2. *Ա. Ա. Սարհատյան,* Կրկնությունների խորհուրդն ու ոճական արժեքը Համո Սահյանի քնարերգության մեջ, «Ակունք», N 1 /10/, 2014, էջ 168-179:
3. *Ա. Ա. Սարհատյան,* Դարձվածքների ուսուցումը, «Մխիթար Գոշ», N 2 /41/, 2014, էջ 38-43:
4. *Ա. Ա. Սարհատյան,* Էսսե. ինչ են պատմում Մարութա սարի ամպերը, «Ակունք», N 1 /11/, 2015, էջ 123-129:
5. *Ա. Ա. Հասանյան,* Գուներանգների խորհուրդը Համո Սահյանի քնարերգության մեջ, «Ակունք», N 1 /11/, 2015, էջ 123-129:
6. *Ա. Ա. Ադամյան,* Նեոռոմանտիզմի ըմբռնումը հայ գրականագիտության մեջ, «Հայագիտական հանդես», N 2-3 /26-27/, 2014, էջ 138-148:
7. *Ա. Ա. Ադամյան,* Նեոռոմանտիզմի դրսևորումը Դանիել Վարուժանի ստեղծագործության մեջ, «Ակունք», N 1 /10/, 2014, էջ 119-132:
8. *Ա. Ա. Ադամյան,* Հին հայոց աստվածներ Անահիտը և Վահագնը Սիամանթոյի և Դ. Վարուժանի բանաստեղծություններում, «Հայագիտական հանդես», N 4 /28/, 2014, էջ 137-144:
9. *Գ. Գ. Մկրտչյան,* Միջին հայերենում ու Մշո բարբառում գործառող հոգնակերտ մասնիկները /ընդհանրությունները և տարբերությունները/, «Ջահուկյանական ընթերցումներ», 2014, էջ 125-132:
10. *Գ. Գ. Մկրտչյան,* Առկայացման քերականական կարգի առանձնահատկությունները միջին հայերենում և Մշո բարբառում (Զուգադրահամեմատական քննություն), «Երիտասարդ լեզվաբանների հանրապետական գիտական չորրորդ նստաշրջանի զեկուցումներ», 2014, էջ 38-47:
11. *Գ. Գ. Մկրտչյան,* Մշո բարբառի արդի վիճակը Գեղարքունիքի մարզում, «Հայ բարբառագիտության հիմնախնդիրներ միջազգային գիտաժողով», 2014, էջ 134-144:
12. *Գ. Գ. Մկրտչյան,* Մշո բարբառի տեղաշարժերը, տարածական բուն հիմքերի խախտման պատճառները և դիրքը հայերենի բարբառների շարքում (Հանրալեզվաբանական դիտարկումներ), «Էջմիածին», 2014, էջ 81-89:
13. *Գ. Գ. Մկրտչյան,* Լեհահայ բարբառի ընդհանուր բնութագիրը և նրա վերացման պատճառները, «Հայ գիտական բարբառագիտության հիմնադրման 100-ամյակին նվիրված հանրապետական գիտական նստաշրջան», 2015, էջ 56-71:
14. *Գ. Գ. Մկրտչյան,* Հայերենի Ը հոդի ծագման և գործառության հարցի շուրջ, «Բանբեր Երևանի համալսարանի», Բանասիրություն, թիվ 2 (17), 2015, էջ 35-43:
15. *Լ. Վ. Թումանյան,* XIX դարի գրական աշխարհաբարի հարցերը Ստ. Նազարյանի «Հանդէս նոր հայախօսութեան» աշխատության մեջ, «Ակունք», N 1 /10/, 2014, էջ 206-215:
16. *Խ. Գ. Վարդանյան,* Գրախոսություն Վարագ Ներսիսյանի գրքի վերաբերյալ, «Էջմիածին», դեկտեմբեր, 2014, էջ 132-149:

17. *Կ. Պ. Պողոսյան,* Հատկացուցիչ-հատկացյալ կապակցությունը Փ. Բուզանդի «Պատմութիւն Հայոց» երկում, «Ակունք» N 1 /10/, 2014, էջ 193-206:
18. *Հ. Ս. Վանյան,* Հայրենիքի իմաստավորումը Ավ. Իսահակյանի չափածո լեգենդներում, «Ակունք», N 1 /10/, 2014, էջ 102-110:
19. *Հ. Ս. Վանյան,* Սիրո տարբեր մոտիվները Ավետիք Իսահակյանի չափածո լեգենդներում, «Ակունք», N 1 /11/, 2015, էջ 101-109:
20. *Հ. Ս. Վանյան,* «Սասնա ծռեր» և «Շահնամե», Հայ գիտական բարբառագիտության 100-ամյակի գիտաժողովի նյութեր, 2015, էջ 254-264:
21. *Մ. Լ. Սարուխանյան,* Գուրգեն Մահարին և քրիստոնեությունը, «Ակունք», N 1 /10/, 2014, էջ 111-118:
22. *Վ. Վ. Ավագյան,* Մկրտիչ Պեշիկթաշլյանի ազգային-հասարակական գործունեության գնահատումը Արշակ Չոպանյանի կողմից, «Տարեգիրք», Աստվածաբանության ֆակուլտետ, 2014, էջ 306-313:
23. *Վ. Վ. Ավագյան,* Մաշտոցյան այբուբենի ստեղծման հանգամանքներն ու նրա պատմական նշանակությունը, ԵՊՀ աստվածաբանության ֆակուլտետ, Գիտաժողովի զեկուցումներ, Կրոնագիտության և եկեղեցաբանության խնդիրները Հայաստանում, 2014, էջ 12-26:
24. *Վ. Ա. Աղաբաբյան,* Հայրենական պատերազմի թեման Սերո Խանզադյանի պատմվածքներում, «Ակունք», N 1 /10/, 2014, էջ 145-150:
25. *Վ. Ա. Աղաբաբյան,* Լեռնաշխարհն ու նրա մարդիկ Ս. Խանզադյանի «Մատյան եղելությանց» վիպակում, «Ակունք», N 1 /11/, 2015, էջ 89-100:
26. *Վ. Ա. Աղաբաբյան,* Եղեռնի անդրադարձները Ս. Խանզադյանի «Մեռածները հիշում են» վիպակում, «Առաջին աշխարհամարտը և հայ ժողովուրդը (պատմություն և արդիական խնդիրներ)» միջազգային գիտաժողովի նյութեր, Երևան, 2015, էջ 90-97:
27. *Г. Г. Мкртчян,* Диалект Муша, Лингвистическая экология: Проблематика исчезающих языков и культур в истории и современности, 2014, с. 174-193.

ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆ

Ամբիոնի վարիչի ժամանակավոր պաշտոնակատար՝ *Բրուտյան Վաչիկ Արամայիսի, մանկ. գիտ. թեկնածու, դոցենտ*

Պրոֆեսորադասախոսական կազմը

1. Ղուկասյան Աշխենիկ Ալեքսանդրի, դասախոս

Համատեղողներ

1. Աղուզումցյան Ռուբեն Վազգենի, հոգ. գիտ. թեկնածու, դոցենտ
2. Ասմարյան Քնարիկ Ժորայի, մանկ. գիտ. թեկնածու, դոցենտ
3. Ավագիմյան Հայկ Ռոդիկի, հոգեբ. գիտ. թեկնածու, դոցենտ
4. Մանուկյան Արմենուհի Մնացականի, մանկ. գիտ. թեկնածու, դոցենտ
5. Սարգսյան Վաչագան Պետրոսի, բժշկ. գիտ. թեկնածու, դոցենտ
6. Բեջանյան Արմեն Տիգրանի, հոգեբ. գիտ. թեկնածու, ասիստենտ
7. Սարգսյան Դիանա Յուրիկի, հոգեբ. գիտ. թեկնածու, ասիստենտ
8. Հովակիմյան Աննա Գիգուշի, ասիստենտ
9. Մարտիրոսյան Անուշ Արշավիրի, դասախոս

10. Սարգսյան Լևոն Կարոյի, դասախոս
11. Սիմոնյան Էդիտա Սպարտակի, դասախոս

Ուսումնաօժանդակ աշխատակիցներ

1. Ստեփանյան Լիլիթ Ռևիկի, գործավար-օպերատոր

Ըստ ընդհանուր ուղղությունների՝ ամբիոնում կատարված գիտական աշխատանքների ամփոփում

2014-2015 ուստարում ամբիոնը իրականացրել է մի շարք գիտաժողովներ և միջոցառումներ:

2014 թ. հոկտեմբերի 2-ին ուսանողները Վ. Բրուտյանի գլխավորությամբ գործնական ուսուցման նպատակով այցելել են Վանաձորի մանկատուն, որտեղ մանկատան մանկավարժահոգեբանական աշխատակազմը նրանց ծանոթացրել է նախադպրոցական խմբի երեխաների հետ, ներկայացրել նրանց խնդիրները, իրավունքներն ու պարտականությունները:

2014 թ. նոյեմբերի 22-ին ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի կիրառական արվեստի ֆակուլտետի դահլիճում կազմակերպվել է Հոգեբանի օրվան նվիրված գիտագործնական կոնֆերանս: Դասախոսները համապատասխան շնորհանդեսների ուղեկցությամբ ներկայացրել են գիտական զեկուցումներ:

2015 թ. մայիսի 16-ին ամբիոնը կազմակերպել է «Սահմանամերձ գոտու ազգաբնակչության հոգեբանամանկավարժական հիմնախնդիրները» թեմայով միջբուհական հանրապետական գիտաժողով: Գիտաժողովի նյութերը տպագրվել են առանձին ժողովածուով:

Հրատարակություններ

Դասագիրք	Մենագրություն	Ուսումնական ձեռնարկ	Ուսումնամեթոդական ձեռնարկ	Հոդված	Զեկուցման թեզիս
-	-	-	-	31	-

Գիտական և ուսումնամեթոդական հրատարակությունների ցանկ

Հոդված

1. *Ա. Ա. Մարտիրոսյան,* Գործազրկության ազդեցությունը երիտասարդների սոցիալ-հոգեբանական զարգացման վրա, «ՀՀ սահմանամերձ գոտու ազգաբնակչության հոգեբանամանկավարժական հիմնախնդիրները» միջբուհական հանրապետական գիտաժողովի նյութեր, «Սիմ տպագրատուն», 2015, էջ 291-295:
2. *Ա. Գ. Հովակիմյան,* Կյանքի դժվար իրավիճակում հայտնված երեխաների սոցիալ-մանկավարժական հարմարումն ու վերականգնումը, «ՀՀ սահմանամերձ գոտու ազգաբնակչության հոգեբանամանկավարժական հիմնախնդիրները» միջբուհական հանրապետական գիտաժողովի նյութեր, «Սիմ տպագրատուն», 2015, էջ 223-229:
3. *Ա. Տ. Բեջանյան,* Էկզոգեն դեպրեսիայի (ընկճախտի) տարածվածությունը, դիֆերենցիալ դիագնոստիկան և հոգեբանական աջակցության մոտեցումները, «Արդիականության մարտահրավերները. փիլիսոփայական և հոգեբանական հիմնախնդիրներ» միջազգային գիտաժողովի նյութեր, 2014, էջ 266-276:

4. *Ա. Տ. Բեջանյան,* Զինվորական ստորաբաժանումների հրամանատարների կոնֆլիկտալոգիական կոմպետենտությունը որպես միջանձնային կոնֆլիկտների նվազման պայման, «ՀՀ սահմանամերձ գոտու ազգաբնակչության հոգեբանամանկավարժական հիմնախնդիրները» միջբուհական հանրապետական գիտաժողովի նյութեր, «Սիմ տպագրատուն», 2015, էջ 78-83:
5. *Ա. Մ. Մանուկյան,* Սահմանամերձ գոտու դեռահասների ստախոսության դրդապատճառների բացահայտման հոգեբանական մեխանիզմները, «ՀՀ սահմանամերձ գոտու ազգաբնակչության հոգեբանամանկավարժական հիմնախնդիրները» միջբուհական հանրապետական գիտաժողովի նյութեր, «Սիմ տպագրատուն», 2015, էջ 138-144:
6. *Դ. Յ. Սարգսյան,* Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց հոգեբանական առանձնահատկությունների հետազոտման հիմնախնդիրները, «Հատուկ կրթության հիմնախնդիրները գիտամեթոդական հանդես», N 1, ԵՊՄՀ, 2014, էջ 43-48:
7. *Դ. Յ. Սարգսյան,* Ներառական կրթության կազմակերպման սոցիալ-հոգեբանական դժվարությունները, «ՀՀ սահմանամերձ գոտու ազգաբնակչության հոգեբանամանկավարժական հիմնախնդիրները» միջբուհական հանրապետական գիտաժողովի նյութեր, «Սիմ տպագրատուն», 2015, էջ 199-203:
8. *Դ. Յ. Սարգսյան,* Անձի հոգեբանական անվտանգության հիմնախնդրի ուսումնասիրությունը տարբեր մոտեցումներում, «Հանրային կառավարում գիտական հանդես /հատուկ թողարկում/» միջբուհական գիտաժողովի նյութեր, 3-4, ՊԿԱ, 2014, էջ 353-358:
9. *Դ. Յ. Սարգսյան,* Մասնագիտական ուղղորդման հոգեբանական տեխնոլոգիաների մշակման հիմնախնդիրը, «Արդիականության մարտահրավերները. փիլիսոփայական և հոգեբանական հիմնախնդիրներ» միջ. գիտ. նյութեր, 2014, էջ 430-432:
10. *Դ. Յ. Սարգսյան,* Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց հոգեբանական առանձնահատկությունների հետազոտման հիմնախնդիրները, «Հատուկ կրթության հիմնախնդիրները գիտամեթոդական հանդես», N 1, ԵՊՄՀ, 2014, էջ 43-48:
11. *Դ. Յ. Սարգսյան,* Ստի հոգեբանական մեխանիզմների բացահայտման լաբորատոր ուսումնասիրության փորձ, «Երիտասարդ գիտնականների միջբուհական գիտաժողով», 2014, էջ 122-126:
12. *Է. Ս. Սիմոնյան,* ՀՀ սահմանամերձ գոտու դպրոցների հոգեբանական ծառայության կազմակերպման առանձնահատկությունները, «ՀՀ սահմանամերձ գոտու ազգաբնակչության հոգեբանամանկավարժական հիմնախնդիրները» միջբուհական հանրապետական գիտաժողովի նյութեր, «Սիմ տպագրատուն», 2015, էջ 156-159:
13. *Լ. Կ. Սարգսյան,* Կառավարչական որոշումների ընդունման մեթոդաբանական հիմքերը, ԵՊՀ 95-ամյակին և ԵՊՀ փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետի 50-ամյակին նվիրված «Արդիականության մարտահրավերները. փիլիսոփայական և հոգեբանական հիմնախնդիրներ» միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածու, ԵՊՀ հրատ., 2014, էջ 398-401:
14. *Լ. Կ. Սարգսյան, Ն. Վ. Արզումանյան,* Դեռահասության տարիքի ճգնաժամի բացասական դրսևորումները և դրանց կանխարգելման մանկավարժահոգեբանական միջոցները, «Դպրոցական հոգեբանական ծառայության հիմնախնդիրները» գիտաժողովի նյութեր, «Գրիգոր Տաթևացի» հրատ., 2014, էջ 239-244:
15. *Լ. Կ. Սարգսյան,* Հոգեբանի հիմնական խնդիրները դպրոցում, «Դպրոցական հոգեբանական ծառայության հիմնախնդիրները» գիտաժողովի նյութեր, «Գրիգոր Տաթևացի» հրատ., 2014, էջ 179-183:
Կրթական ուղղվածությամբ կայքերից շարունակում են գործել ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտի «Ցեղասպանագիտություն» մագիստրոսական ծրագրի **www.masters.armeniansgenocide.am** և Սփյուռքագիտության ամբիոնի հետ իրականացվող «Հայագիտություն» մագիստրոսական ծրագրի **www.masters.armin.am** կայքերը:

Բաժնում կատարված այլ աշխատանքների մասին:

Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի Հարավային գիտական կենտրոնի սոցիալ-տնտեսական և հումանիտար հետազոտությունների ինստիտուտի՝ 2014 թվականի սեպտեմբերի 18-19-ին կազմակերպած «Կազակներն ու լեռնականները՝ Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին» խորագիրը կրող միջազգային գիտական համաժողովում բաժնի ղեկավար Մհեր Հովհաննիսյանը հանդես է եկել «Անդրկովկասը Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին՝ ռուս ականատեսի աչքերով» զեկույցով: Նա զեկույցով հանդես է եկել նաև 2015 թ. հուլիսի 13-15-ը «Սփյուռքահայ ուսուցիչների մեկամսյա վերապատրաստում Հայաստանում» ծրագրի շրջանակում ՀՀ կրթության և գիտության նախարարության և Կրթության ազգային ինստիտուտի կազմակերպած «Սփյուռքում հայեցի կրթության կազմակերպման արդի հիմնախնդիրները» թեմայով համահայկական գիտագործնական կոնֆերանսին՝ ներկայացնելով ԵՊՀ-ի գործունեությունը Սփյուռքի հայագիտական կրթական դաշտում:

Սփյուռքում հայագետների պատրաստման և մասնագիտական հմտությունների ապահովման նպատակով շարունակում է գործել հեռաուսուցման համակարգը, որի մեկնարկը տրվել է ապրիլի 14-ին՝ Համազգայինի Լիբանանի շրջանային վարչության հետ գործակցաբար: 2015 թվականի դրությամբ հեռաուսուցման ծրագիրն անցել են 2 ուսանող, իսկ Սիրիայից 14 ուսանող ընթացիկ փուլում են:

Բաժնի ավագ լաբորանտ Նինա Սեդրակյանը համալսարանական և արտահամալսարանական կամավորների հետ բաժնին կից շարունակում է իրականացնել «Հայ ազգ» էլեկտրոնային հանրագիտարանի հայերեն տարբերակի խմբագրությունը (http://am.hayazg.info):

Նախատեսվում է իրականացնել «Ամառային դպրոց» ծրագիրը, որի համար բաժինը պատրաստել է ենթադոմենային կայք, որը գտնվում է նախապատրաստական աշխատանքների իրականացման ընթացքում՝ **www.summerschool.armin.am**:

Հրատարակություններ

Դասագիրք	Մենագրություն	Ուսումնական ձեռնարկ	Ուսումնամեթոդական ձեռնարկ	Հոդված	Ձեկուցման թեզիս
-	-	-	-	4	-

Գիտական և ուսումնամեթոդական հրատարակությունների ցանկ

Հոդված

1. *Մ. Ս. Հովհաննիսյան,* Հայոց ցեղասպանության թեման ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտի 2009-2013 թթ. ուսումնասիրություններում, «Հայագիտության հարցեր», ՀՀԻ հանդես, Երևան, 2014, էջ 202-207:
2. *Մ. Ս. Հովհաննիսյան,* Հայագիտութեան ներկայացուածութեան հիմնախնդիրները համացանցում, «Հայկական Անդրսահմանային Տարածականութիւնը Եւ Արդի Հաղորդակցական Միջոցները» Գիտաժողովի Նիւթեր, Haigazian University Press, Պէյրութ, 2014, էջ 223-230:
3. *Մ. Ս. Հովհաննիսյան,* Համացանցային քարոզչության հակահայկական դրսևորումները, «Հայագիտական միջազգային երկրորդ համաժողով. Հայագիտությունը և արդի ժամանակաշրջանի մարտահրավերները: Ձեկուցումների ժողովածու», «Գիտություն» հրատ., Երևան, 2014, էջ 121-124:
4. *М. С. Оганнисян,* Закавказье в годы Первой мировой войны глазами русского очевидца, Казаки и горцы в годы Первой мировой войны, Ростов-на-Дону, 2014, с. 274-277.

ՑԵՂԱՍՊԱՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ

Բաժնի վարիչ՝ *Պողոսյան Վարուժան Արամազդի, պատմ. գիտ. դոկտոր, առաջատար գիտաշխատող*

Բաժնի աշխատակիցների կազմը

1. Հայրունի Աշոտ Նորայրի, պատմ. գիտ. դոկտոր, ավագ գիտաշխատող
2. Գևորգյան Սուսաննա Պարույրի, բան. գիտ. թեկնածու, գիտաշխատող
3. Մակարյան Էվելինա Անդրանիկի, կրտսեր գիտաշխատող
4. Յոլչյան Ռուզաննա Կարենի, լաբորանտ

Բաժնի հիմնական խնդիրները

ՀՀԻ ցեղասպանագիտության բաժինը զբաղվում է Հայոց ցեղասպանության պատմության ուսումնասիրությամբ, փաստաթղթերի ժողովածուների, մենագրությունների հրատարակությամբ, արժեքավոր արտասահմանյան գրքերի թարգմանությամբ:

Բաժնի գործունեության ուղղությունները

Բաժնի գործունեության ուղղություններն են՝ Հայոց ցեղասպանության առաջին փուլի՝ 1890-ական թվականների կոտորածների պատմագրության ուսումնասիրությունը՝ ցեղասպանագիտության նվաճումների կտրվածքով, 1909 թ. կիլիկյան կոտորածները, 1915 թ. Մեծ եղեռնը, եվրոպական մեծ տերությունների քաղաքականությունը, 19-րդ դարի վերջի և 20-րդ դարի սկզբի հայկական ազատագրական շարժումները:

Ըստ ընդհանուր ուղղությունների՝ բաժնում կատարված գիտական աշխատանքների ամփոփում

«1909 թ. կիլիկյան կոտորածները» փաստաթղթերի ժողովածուն տպագրության է պատրաստում բաժնի ղեկավար Վ. Պողոսյանը, նա հավաքել է մեծ թվով անգլերեն, ֆրանսերեն, ռուսերեն արժեքավոր սկզբնաղբյուրներ: Ժողովածուն տպագրության կներկայացվի 2015 թ. երկրորդ կեսին: Վ. Պողոսյանը տպագրության է պատրաստում նաև «Հայոց ցեղասպանությունն Օսմանյան կայսրությունում 1919-1922 թթ.» փաստաթղթերի ժողովածուն՝ նվիրված Հայոց ցեղասպանության երրորդ փուլին (1919-1922), որն իրականացրել են քեմալականները: Նման քառալեզու (անգլերեն, ֆրանսերեն, ռուսերեն և հայերեն) ժողովածուի հրատարակումը կնպաստի թե՛ ուսումնասիրողների և հանրության գիտելիքների խորացմանը, թե՛ Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացին: Այն ընդգրկում է ոչ միայն տպագիր սկզբնաղբյուրներ, այլև ռուսական և հայկական արխիվներից քաղված անտիպ վավերագրեր: Աշխատանքներն ընթացքի մեջ են, ավարտին կհասնեն 2016 թ. երկրորդ կեսին:

Հայոց մեծ եղեռնի ֆրանսիական պատմագրությունը ուսումնասիրված չէ: Թեման ունի մեծ կարևորություն և արդիական հնչեղություն, որովհետև 1970-ական թվականներից ի վեր Ֆրանսիան դարձել է Հայոց ցեղասպանությունն ուսումնասիրող հիմնական երկրներից: «Հայոց մեծ եղեռնի ֆրանսիական պատմագրությունը» մենագրության աշխատանքներն ընթացքի մեջ են: Պատրաստ է միայն առաջին գլուխը: Ընթացքի մեջ է ֆրանսիական կարևոր մի սկզբնաղբյուրի՝ Սվազում Ֆրանսիայի դեսպանի տիկնոջ՝ Էմիլի Կարլիեի հուշերի վերահրատարակությունը ֆրանսերեն լեզվով: Նա թղթին է հանձնել 1890-ական թվականներին Սվազում տեղի ունեցած հայկական կոտորածների մանրամասները, որոնք առանձին գրքույկով 1903 թ. տպագրվել են Փարիզում: Աշխատանքը տպագրության կներկայացվի 2016 թ. առաջին կեսին:

Բաժնի առաջատար գիտաշխատող Ա. Հայրունին 2015 թ. մարտի 1-3-ը մասնակցել է Բեռլինում Գերմանիայի պատմության թանգարանի և Պոտսդամի Լեփսիուսի տան կողմից համատեղ կազմակերպված՝ «Հարյուրամյակի ռճրագործության վկաները. գերմանական կայսրությունը և Հայոց ցեղասպանությունը» խորագրով միջազգային գիտական կոնֆերանսին՝ ներկայացնելով «Կարո՞ղ էր կայսերական կառավարությունը Հայոց ցեղասպանությունն արգելել՝ առանց Թուրքիայի հետ դաշինքը վտանգելու» զեկույցը, ինչպես նաև 2015 թ. ապրիլի 21-24-ը հրավեր է ստացել մասնակցելու ավստրիական «Խոսել սահմանների մասին» կազմակերպության և Նյուրնբերգի պետական թատրոնի կողմից համատեղ կազմակերպված՝ «40 օրը 40 ժամում. Նյուրնբերգն ընթերցում է Ֆրանց Վերֆելի

«Մուսա լեռան 40 օրը»» խորագրով գիտական և գրական-գեղարվեստական միջոցառմանը, որի շրջանակում անդրադարձել է Հայոց ցեղասպանության ծրագրման ու իրականացման հարցին:

Հրատարակություններ

Դասագիրք	Մենագրություն	Ուսումնական ձեռնարկ	Ուսումնամեթոդական ձեռնարկ	Հոդված	Ձեկուցման թեզիս
-	5	-	-	22	-

Գիտական և ուսումնամեթոդական հրատարակությունների ցանկ

Մենագրություն

1. *Վ. Ա. Պողոսյան*, Էջեր Հայոց ցեղասպանության պատմության և պատմագրության (հոդվածների ժողովածու), Երևան, 2015, 380 էջ:
2. *В. А. Погосян,* Армяне - сподвижники Наполеона: история и мифы, второе издание, Ереван, 2015, 128 с.
3. *V. A. Poghosyan (խմբ.),* Rose Lambert, Hadjin, and the armenian massacres (վերատպություն), Yerevan, 2015, 64 p..
4. *V. A. Poghosyan (խմբ.),* Henry Barby, Au pays de l'épouvante. L'Arménie martyre (վերատպություն), Erevan, 2015, 176 p..
5. *V. A. Poghosyan (խմբ.),* Rene Pinon, La suppression des Arméniens (վերատպություն), Erevan, 2015, 58 p..

Հոդված

1. *Ա. Ն. Հայրունի*, Ակսել Մայսներ, Մարտին Ռադեի «Քրիստոնյա Արևելքը» և Հայաստանը, «Հայագիտության հարցեր», թիվ 1 (4), Երևան, 2015, էջ 197-200:
2. *Ա. Ն. Հայրունի,* Հայոց ցեղասպանության հարյուրամյակին ընդառաջ՝ միջազգային գիտաժողով Բեռլինում, «Հայագիտության հարցեր», թիվ 1 (4), Երևան, 2015, էջ 226-229:
3. *Ա. Ն. Հայրունի,* Մեծ եղեռնը և Հայկական հարցը Յոհաննես Լեփսիուսի հետպատերազմյան հրապարակախոսության մեջ, «Հայկական բանակ», թիվ 1-2 (83-84), Երևան, 2015, էջ 211-226:
4. *Ս. Պ. Գևորգյան,* Հարցը որպես ռճական միջոց Գ. Նժդեհի աշխատություններում և գրական-հռետորական ժառանգության մեջ, «Էջմիածին», № 5, 2015, էջ 70-89:
5. *Վ. Ա. Պողոսյան,* Յոհաննես Լեփսիուսի նամակը Արշակ Չոպանյանին, «Հայագիտության հարցեր», թիվ 3, 2014, էջ 165-167:
6. *В. А. Погосян,* Новое исследование по истории франко-персидских отношений, О книге И. Амини "Наполеон и Персия", Французский ежегодник - 2014, кн. 2, Франция и Восток, М., 2014, с. 409-415.
7. *В. А. Погосян,* Письма А. З. Манфреда немецкому историку В. Маркову, "Новая и новейшая история", № 5, 2014, с. 151-165.
8. *В. А. Погосян,* Новонайденные документы о бесчинствах и погромах кемалистов в Ахалкалакском уезде в 1921 г., «Հայագիտության հարցեր», թիվ 1, 2015, էջ 179-184.
9. *В. А. Погосян (գրախոս), А. Постникова*, Великая армия Наполеона на Березине: событие - память, СПб, 2014, Annales historiques de la Révolution française (Paris), № 380, (avril-juin), 2015, p. 171-174:
10. *В. А. Погосян (գրախոս), А. В. Зотов,* Главный соперник Наполеона. Великий генерал Моро, М., 2012, Annales historiques de la Révolution française (Paris), № 377 (juillet-septembre), 2014, p. 216-218.

11. *В. А. Погосян (գրախոս), А. В. Чудинов,* Д. Ю. Бовыкин, Французская революция. В кн.: Всемирная история, Т. 4. Мир в XVIII веке, М., 2013, с. 644-706, Annales historiques de la Révolution française (Paris), № 378 (octobre-décembre), 2014, p. 181-185.
12. *В. А. Погосян (գրախոս), Б. С. Каганович*, Евгений Викторович Тарле. Историк и время, СПб, 2014, Annales historiques de la Révolution française (Paris), № 378 (octobre-décembre), 2014, p. 178-181.
13. *В. А. Погосян (գրախոս), Е. Морозова,* Мария Антуанетта, М., 2014, Annales historiques de la Révolution française (Paris), № 380 (avril-juin), 2015, p. 174-176.
14. *В. А. Погосян (գրախոս),* Участие армян в Отечественной войне 1812 года, Ереван, 2012, Annales historiques de la Révolution française (Paris), № 377 (juillet-septembre), 2014, p. 215-216.
15. *A. N. Hayruni,* Karen Jeppe im Kampf um die Rettung der verschleppten Armenier, «Հայագիտության հարցեր», թիվ 1 (4), 2015, էջ 136-155.
16. *A. N. Hayruni,* Verbindungen von Johannes Lepsius mit Vertretern des armenischen Volkes, «Հայագիտության հարցեր», թիվ 3, 2014, էջ 62-84.
17. *V. A. Poghosyan,* Editor's Preface // R. Lambert, Hadjin, and the Armenian massacres, Yerevan, 2015, p. 7-8.
18. *V. A. Poghosyan,* En guise de préface // H. Barby, Au pays de l'épouvante. L'Arménie martyre, Erevan, 2015, p. 5-17.
19. *V. A. Poghosyan*, En guise de préface // R. Pinon, La suppression des Arméniens. Méthode allemande - travail turc, Erevan, 2015, p. 5-10.
20. *V. A. Poghosyan,* Le génocide des Arméniens et les religieux français // Du génocide des Arméniens Ո la Shoat. Typologie des massacres du XXe siècle. Sous la direction de Gérard Dédéyan, Carol Iancou, Toulouse, 2015, p. 273-284.
21. *V. A. Poghosyan*, Les lettres de Jacques Godechot à Albert Manfred et aux responsables de l'Annuaire d'études françaises // Annales historiques de la Révolution française (Paris), № 380 (avril-juin), 2015, p. 133-147.
22. *V. A. Poghosyan (գրախոս)*, *H. Grkacharian*, Hadjn, si on t'oublie… Mémoires, Chamigny, 2012, «Հայագիտության հարցեր», թիվ 1, 2015, էջ 206-210:

ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱ

Լաբորատորիայի ղեկավար՝ *Ավետիսյան Հայկ Գրիգորի, պատմ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր, ավագ գիտաշխատող*

Լաբորատորիայի աշխատակիցների կազմը

1. Բոբոխյան Արսեն Ալեքսանդրի, պատմ. գիտ. թեկնածու, ավագ գիտաշխատող
2. Գնունի Արտակ Վարդգեսի, պատմ. գիտ. թեկնածու, ավագ գիտաշխատող
3. Վարդանեսովա Տատյանա Վլադիմիրի, պատմ. գիտ. թեկնածու, ավագ գիտաշխատող
4. Օհանյան Հովհաննես Արտաշի, պատմ. գիտ. թեկնածու, ավագ գիտաշխատող
5. Աբաջյան Լիլիթ Վլադիմիրի, կրտսեր գիտաշխատող
6. Գասպարյան Բորիս Զարեհի, կրտսեր գիտաշխատող
7. Դավթյան Անժելա Զալիոսի, կրտսեր գիտաշխատող
8. Ավետիսյան Նատալյա Հայկի, լաբորանտ

Լաբորատորիայի հիմնական խնդիրները

Վերջին տասնամյակների ընթացքում նորագույն մեթոդների վրա հիմնված հնագիտական հետազոտությունները ՀՀ տարածքում հեղաշրջիչ դեր ունեցան մեր երկրի հնագույն պատմության վերակազմության գործում: Որակապես և քանակապես հարստացած աղբյուրագիտական հենքի շնորհիվ հնարավոր դարձավ նորովի մեկնաբանել հայ ժողովրդի հնագույն պատմության բազմաթիվ հարցեր: Այս համատեքստում իրականացվում է Հայաստանի հնագիտական հուշարձանների ուսումնասիրություն, որը ներառում է դաշտային աշխատանքները, նյութի լաբորատոր մշակումը, չափագրումը և հրապարակումը: Բացի դրանից՝ հնագիտական հետազոտությունների լաբորատորիայի աշխատակիցների կողմից ուսումնասիրվում է և վերակազմվում հնագույն լանդշաֆտը, ինչը հիմքեր է ստեղծում հնեաաշխարհագրական մոդելի վերակազմության համար: Վերակազմության առարկա են հանդիսանում նաև հնագույն ճանապարհները:

Լաբորատորիայի գործունեության ուղղությունները

Լաբորատորիան իր աշխատանքն իրականացնում է հետևյալ ուղղություններով՝ պեղումներ Օշականում և Արամուսում, Սոդքում և Մարգահովտում, Արենիի, Աղուդիի քարայրներում, հնագիտական ուղեգծային արշավներ Սյունիքում և Վայոց ձորում, ԼՂՀ Քաշաթաղի և Շահումյանի շրջանում, թանգարանային նյութի մշակում (Էջմիածնի պատմաազգագրական թանգարան, Եղեգնաձորի երկրագիտական թանգարան, Կապանի երկրագիտական թանգարան, Քաշաթաղի երկրագիտական թանգարան), Կապանի, Հարժիսի, Սելիմի, Եղեգնաձորի հնագիտական նյութերի մշակում, մերձավորարևելյան քաղաքակրթությունների զարգացման ընդհանուր օրինաչափությունների ուսումնասիրություն:

Հրատարակություններ

Դասագիրք	Մենագրություն	Ուսումնական ձեռնարկ	Ուսումնամեթոդական ձեռնարկ	Հոդված	Ձեկուցման թեզիս
-	-	-	-	32	4

Գիտական և ուսումնամեթոդական հրատարակությունների ցանկ

Հոդված

1. *Ա. Բոբոխյան,* Քաղաքագոյացման գործընթացները նախաուրարտական Հայաստանում, (պարբերացման փորձ), Բ. Բ. Պիոտրովսկին և հնագիտությունը, 2014, էջ 40-75:
2. *Ա. Գնունի*, Ավարայր, «Էջմիածին», Բ, 2015, էջ 98-101:
3. *Ա. Գնունի,* Կերենը քաղաքակրթությունների խաչմերուկում մ.թ.ա. I հազ. երկրորդ քառորդում, «Հայագիտության հարցեր», h. 2, 2014, էջ 149-167:
4. *Ա. Բոբոխյան,* Աղթիքի նորահայտ վիշապաքարը և Տայքի դերը Հայկական լեռնաշխարհի հնամշակութային զարգացումներում, «Հաբիտուս. մարդաբանական և հնագիտական ուսումնասիրություններ», I, 2014, էջ 252-260:
5. *Բ. Գասպարյան,* Հայագիտական միջազգային երկրորդ համաժողով, «Հայագիտությունը և արդի շրջանի մարտահրավերները», 2014, էջ 183-187:

6. *Լ. Արաջյան,* Հին Իրանի մշակույթները, «Հայ աստվածաբան», Տարեգիրք, հատոր IX, 2014, էջ 254-294:
7. *Հ. Ավետիսյան, Ս. Բորոիյան, Ս. Գնունի,* «Սրբազան տարածք» հասկացությունը և դրա կառուցվածքը, «Հայ աստվածաբան», Տարեգիրք, հատոր IX, 2014, էջ 295-305:
8. *Հ. Ավետիսյան, Ս. Գնունի*, Archäologie in Armenien II, Meller H., Avetisyan P. (Hrsg), Halle 2013, 258 Seiten, (գրախոսական), «Հայագիտության հարցեր», h. 2, 2014, էջ 225-228:
9. *Հ. Ավետիսյան, Ս. Բորոիյան, Ս. Գնունի,* Ուղեգծային հնագիտական այցելություն պատմական Սյունիքի Վայոց ձորի տարածաշրջան, «Պատմություն և մշակույթ», 2014, էջ 424-437:
10. *Г. Аветисян, Л. Абаджян, С. Есаян,* Колонные залы и портики Урарту, «Պատմություն և մշակույթ», 2014, էջ 409-423:
11. *Т. Варданесова*, К вопросу о начале формирования школ в культуре хачкаров. Хачкары Ариндж конца XII-начала XIII веков, «Հայագիտության հարցեր», h. 2, 2014, էջ 140-148.
12. *Т. Варданесова*, К вопросу об определении “художественной школы” хачкаров, «Հայագիտության հարցեր», N 3, 2014, էջ 126-135:
13. *Ф. Тер-Мартиросов,* Маршрут похода Арташеса к Ервандашату, «Պատմություն և մշակույթ», 2014, էջ 52-67:
14. *A. Bobokhyan, A. Gevorgyan,* Metallurgy of Ancient Armenia in Cultural and Historical Context, Journal of Armenian Studies I Yerevan, 2014, p. 47-98.
15. *A. Bobokhyan,* Bronze Age Musical Instruments of the Region between the Caucasus and Taurus in Context Problems of Early Metal Archaeology of Caucasus and Anatolia, Tbilisi, 2014, p. 265-277.
16. *A. Bobokhyan,* Divine and Human Markets, Market beyond Economy, 2014, p. 90-108.
17. *A. Bobokhyan,* Problems of Ethnicity in the Context of Archaeology of Ancient Armenia, Aramazd: Armenian Journal of Near Eastern Studies VIII, N 1-2, 2014, p. 14-35.
18. *B. Gasparyan, A. Khechoyan,* Rock-Painting Phenomenon in the Republic of Armenia in B. Gasparyan and M. Arimura (Eds.), Stone Age of Armenia, A Guide-book to the Stone Age Archaeology in the Republic of Armenia, Monograph of the JSPS-Bilateral Joint Research Project, Kanazawa University Press, Printed in Japan, 2014, pp. 315-387.
19. *B. Gasparyan, A. Petrosyan*, Paesaggi cerimoniali sotterranei: rituali di sepoltura in alcune caverne dell’Armenia, Preistoria e Protostoria in Etruria, Paesaggi cerimoniali Ricerche e scavi, Volume II, In copertina disegno di Ercole Negroni, Centro Studi di Preistoria e Archeologia, Milano, 2014, pp. 529-542.
20. *B. Gasparyan, D. S. Adler, Ch. P. Egeland, K. Azatyan,* Recently Discovered Lower Paleolithic Sites of Armenia, in B. Gasparyan and M. Arimura (Eds.), Stone Age of Armenia, A Guide-book to the Stone Age Archaeology in the Republic of Armenia, Monograph of the JSPS-Bilateral Joint Research Project, Kanazawa University Press, Printed in Japan, 2014, pp. 37-64.
21. *B. Gasparyan, D. S. Adler, K. N. Wilkinson, S. Blockley, D. F. Mark, R. Pinhasi, B. A. Schmidt-Magee, S. Nahapetyan, C. Mallol, F. Berna, P. J. Glauberman, Y. Raczynski-Henk, N. Wales, E. Frahm, O. Joris, A. MacLeod, V. C. Smith, V. L. Cullen,* Early Levallois technology and the Lower to Middle Paleolithic transition in the Southern Caucasus, Science, Volume 345, Issue 6204, DOI: 10.1126/science. 1256484, 26 September, 2014, pp. 1609-1613.
22. *B. Gasparyan, M. Arimura, S. Nahapetyan, R. Pinhasi,* Forest Exploitation during the Holocene in the Aghstev Valley, Northeast Armenia in B. Gasparyan and M. Arimura (Eds.), Stone Age of Armenia, A Guide-book to the Stone Age Archaeology in the Republic of Armenia, Monograph of the JSPS-Bilateral Joint Research Project, Kanazawa University Press, Printed in Japan, 2014, pp. 261-281.
23. *B. Gasparyan, A. Bobokhyan, Kh. Meliksetian, P. Avetisyan, C. Chataigner, E. Pernicka,* Transition to Extractive Metallurgy and Social Transformation in Armenia at the End of the Stone Age in B. Gasparyan and M. Arimura (Eds.), Stone Age of Armenia, A Guide-book to the Stone Age Archaeology in the Republic of

Armenia, Monograph of the JSPS-Bilateral Joint Research Project, Kanazawa University Press, Printed in Japan, 2014, pp. 283-313.

24. *B. Gasparyan, Ch. P. Egeland, D. S. Adler, R. Pinhasi, P. Glauberman, H. Haydosyan,* The Middle Paleolithic Occupation of Armenia: Summarizing Old and New Data, in B. Gasparyan and M. Arimura (Eds.), Stone Age of Armenia, A Guide-book to the Stone Age Archaeology in the Republic of Armenia, Monograph of the JSPS-Bilateral Joint Research Project, Kanazawa University Press, Printed in Japan, 2014, pp. 65-105.
25. *B. Gasparyan, Ch. P. Egeland, D. Arakelyan, Ch. M. Nicholson, A. Petrosyan, R. Ghukasyan, R. Byerly,* Reconnaissance survey for Palaeolithic sites in the Debed River Valley, northern Armenia, Journal of Field Archaeology, vol. 39, NO 4, 2014, pp. 370-386.
26. *B. Gasparyan, A. Kandel, C. Montoya,* Living the High Life: The Upper Paleolithic Settlement of the Armenian Highlands, in B. Gasparyan and M. Arimura (Eds.), Stone Age of Armenia, A Guide-book to the Stone Age Archaeology in the Republic of Armenia, Monograph of the JSPS-Bilateral Joint Research Project, Kanazawa University Press, Printed in Japan, 2014, pp. 107-131.
27. *B. Gasparyan, A. W. Kandel, S. Nahapetyan, A. Taller, L. Weissbrod,* The Upper Paleolithic settlement of the Armenian Highlands, M. Otte & F. Le Brun-Ricalens (Eds.) Modes de contacts et de déplacements au Paléolithique eurasiatique, Actes du colloque international de la commission 8 (Paléolithique supérieur) de l'UISPP, Université de Liège, 28-31 mai 2012, ERAUL 140, Luxemburg, 2014, pp. 39-60.
28. *B. Gasparyan, M. Arimura,* Study of the Stone Age in the Republic of Armenia. Achievements and Perspectives, in B. Gasparyan and M. Arimura (Eds.), Stone Age of Armenia, A Guide-book to the Stone Age Archaeology in the Republic of Armenia, Monograph of the JSPS-Bilateral Joint Research Project, Kanazawa University Press, Printed in Japan, 2014, pp. 13-33.
29. *B. Gasparyan, F. Muradyan, D. Zardaryan, L. Aghikyan,* Discovery of the First Chalcolithic Burial Mounds in the Republic of Armenia in B. Gasparyan and M. Arimura (Eds.), Stone Age of Armenia, A Guide-book to the Stone Age Archaeology in the Republic of Armenia, Monograph of the JSPS-Bilateral Joint Research Project, Kanazawa University Press, Printed in Japan, 2014, pp. 339-364.
30. *B. Gasparyan, A. Petrosyan, M. Arimura, S. Nahapetyan, C. Chataigner,* Early Holocene Sites of the Republic of Armenia: Questions of Cultural Distribution and Chronology in B. Gasparyan and M. Arimura (Eds.), Stone Age of Armenia, A Guide-book to the Stone Age Archaeology in the Republic of Armenia, Monograph of the JSPS-Bilateral Joint Research Project, Kanazawa University Press, Printed in Japan, 2014, pp. 135-159.
31. *B. Gasparyan, A. Smith, T. Bagoyan, I. Gabrielyan, R. Pinhasi,* Late Chalcolithic and Medieval Archaeobotanical Remains from Areni-1 (Birds' Cave), Armenia in B. Gasparyan and M. Arimura (Eds.), Stone Age of Armenia, A Guide-book to the Stone Age Archaeology in the Republic of Armenia, Monograph of the JSPS-Bilateral Joint Research Project, Kanazawa University Press, Printed in Japan, 2014, pp. 233-260.
32. *B. Gasparyan, L. Stapleton, L. Margaryan, G. E. Areshian, R. Pinhasi,* Weaving the Ancient Past: Chalcolithic Basket and Textile Technology at the Areni-1 Cave, Armenia in B. Gasparyan and M. Arimura (Eds.), Stone Age of Armenia, A Guide-book to the Stone Age Archaeology in the Republic of Armenia, Monograph of the JSPS-Bilateral Joint Research Project, Kanazawa University Press, Printed in Japan, 2014, pp. 219-232.

Զեկուցման թեզիս

1. *Ա. Բոբոխյան,* Հայաստանի վիշապաքարերը, Համեմատական առասպելաբանության 8-րդ տարեկան միջազգային գիտաժողով, Երևան, 2014, էջ 8-10:
2. *B. Gasparyan, A. Kandel, A. Bruch, S. Nahapetyan, L. Weissbrod,* Environmental change and cultural adaptation in the southern Caucasus: Latest results from Aghitu-3 Cave, Armenia, Geophysical Research Abstracts Vol. 16, EGU2014-1281, 2014 EGU General Assembly, 2014.

3. *B. Gasparyan, K. Wilkinson, D. Adler, S. Nahapetyan, V. Smith, D. Mark, C. Mallol, S. Blockley,* Middle Pleistocene palaeoenvironments and the late Lower-Middle Palaeolithic of the Hrazdan valley, central Armenia Geophysical Research Abstracts Vol. 16, EGU2014-1281, 2014 EGU General Assembly, 2014.
4. *B. Gasparyan, A. Taller, A. W. Kandel,* Living on the edge: The earliest Modern Human settlement of the Armenian Highlands, RNMH2014, The Second International Conference, Replacement of Neanderthals by Modern Humans: Testing Evolutionary Models of Learning, November 30 December 6, 2014, Date City, Program and Abstracts, Edited by T. Akazawa and Y. Nishiyaki, RNMH Project Series, Published by RNMH Project Group, Research Institute, Kochi University of Technology, Tokyo, 2014, pp. 045-047.

Բ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՔԱՐՏԵԶԱԳՐՈՒԹՅԱՆ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱ

Լաբորատորիայի վարիչ՝ *Մխիթարյան Վարդան Գառնիկի, գիտաշխատող*

Լաբորատորիայի աշխատակիցների կազմը

1. Սարգսյան Համլետ Գրիշայի, պատմ. գիտ. թեկնածու, ավագ գիտաշխատող
2. Ղամբարյան Գոհար Գուրգենի, կրտսեր գիտաշխատող
3. Արզումանյան Սրբուհի Անդրանիկի, լաբորանտ

Լաբորատորիայի հիմնական խնդիրները

1. Ուսումնասիրել պատմական զարգացման տարբեր փուլերում Հայաստանի պատմությունն ու աշխարհագրությունը՝ Հայաստանի պատմական աշխարհագրությունը, որը ներառում է հետևյալ ուղղությունները. պատմական-ֆիզիկական աշխարհագրությունը, պատմական-քաղաքական աշխարհագրությունը, բնակչության և տարաբնակեցման պատմական աշխարհագրությունը, պատմական-տնտեսական աշխարհագրությունը, պատմամշակութային աշխարհագրությունը և պատմաաշխարհագրական երկրագրությունը:

Վերոհիշյալից ակնառու է դառնում, որ լաբորատորիայի ուսումնասիրությունների շրջանակներում կարող են ներառվել նաև ներկա ժամանակաշրջանի աշխարհագրական հետազոտությունները:

2. Կատարել պատմական զարգացման տարբեր փուլերում Հայաստանի պատ-մաաշխարհագրական ուսումնասիրությունների տարածական տեղաբաշխման պատկերում և մոդելավորում՝ քարտեզների ստեղծում: Ավելի լայն մեկնաբանությամբ դա քարտեզների հեղինակային և կազմողական բնօրինակների, ձևավորման և տպագրական բնօրինակների ստեղծման աշխատանքներն են:

3. Կիրառել պատմաաշխարհագրական ուսումնասիրություններում ժամանակակից տեղեկատվական համակարգերի և տեխնոլոգիաների ընձեռած հնարավորությունները՝ պատմական գեոինֆորմատիկա, որը նոր մոտեցում է պատմական հետազոտություններում: Այն հնարավորություն կընձեռի ժամանակակից և հին քարտեզների, ինչպես նաև տեղեկատվական բազաների համադրմամբ կատարել վերլուծություններ, ստանալ որակապես նոր քարտեզներ:

Լաբորատորիայի գործունեության ուղղությունները

Լաբորատորիան իր գործունեությունը իրականացնում է հետևյալ ուղղություններով՝ աշխարհագրություն, պատմական աշխարհագրություն, քարտեզագրություն, պատմական քարտեզագրություն, պատմական գեոինֆորմատիկա, ատլասների կազմում և ձևավորում (Հայոց ցեղասպանության ատլասի ստեղծում), ուսումնական քարտեզների և պաստառների (պլակատների) կազմում և ձևավորում, ադրբեջանական և թուրքական քարոզչության դեմ պայքարի ծավալում:

Ըստ ընդհանուր ուղղությունների՝ լաբորատորիայում կատարված գիտական աշխատանքների ամփոփում

Բ. Հարությունյանի անվան Հայաստանի պատմական աշխարհագրության և քարտեզագրության լաբորատորիան ձեռնամուխ է եղել անգլերեն լեզվով «Հայոց ցեղասպանության ատլաս»-ի կազմողական և ձևավորման աշխատանքների իրականացմանը: Ատլասի պատրաստումը ունի ոչ միայն գիտական, այլև քաղաքական մեծ նշանակություն:

Ատլասը ունենալու է հետևյալ կառուցվածքը. բաղկացած է լինելու տիտղոսաթերթից, բովանդակությունից, ներածությունից, պայմանական նշաններ էջից, պատմական քարտեզների շարքից, Ցեղասպանության պատմության շարադրանքից, բացատրական տեքստերից և նկարներից, տվյալ ժամանակահատվածին առնչվող պատմական (հին) քարտեզների կամ փաստաթղթերի պատճեններից, անվանացանկից:

Լաբորատորիայի անդամները ներգրավված են ատլասի պատրաստման աշխատանքներում: Արդեն ավարտվել են անգլերեն քարտեզների կազմման, Հայոց ցեղասպանության պատմության, հայերեն տեքստային մասի շարադրման՝ անգլերեն թարգմանության, քարտեզների անվանացանկի պատրաստման աշխատանքները: Սկսվել են քարտեզների լեգենդների՝ անգլերեն լեզվով կազմման, վերստուգման, ձևավորման և հրատարակության նախապատրաստման աշխատանքները: Նախատեսվում է առաջիկայում աշխատությունը հանձնել տպագրության:

Լաբորատորիայում կատարված այլ աշխատանքների մասին:

Հրատարակման փուլում են գտնվում «ՀՀ վարչատարածքային բաժանումը և մարզկենտրոնների տարածաժամանակային կազմակերպման առանձնահատկությունները» հոդվածը և «Կարսի մարզի բնակչության թվի ու էթնիկ կազմի շարժընթացը (1878-1914 թթ.)» խորագիրը կրող հոդվածաշարը, իսկ հրատարակության հանձնման փուլում են գտնվում «Հայաստանի և Անդրկովկասի ֆրանսիական քարտեզները» գիրքը և «Население Нагорного Карабаха за 100 лет (1823-1923 гг.), (Этнодемографическое исследование)» հոդվածաշարը:

Աշխատանքներ են տարվում «ՀՀ վարչատարածքային բաժանումը» ատլաս տեղեկագրքի կազմման ուղղությամբ:

Բաժնի ղեկավար Վ. Մխիթարյանը 2015 թ. ապրիլի 17-20-ը Բեյրութում զեկուցում է կարդացել «Հին պատմական քարտեզները քաղաքական շահարկումների համատեքստում: Հայաստանի աշխարհագրության, պատմության և, մասնավորապես, Հայոց ցեղասպանության արտացոլումը քարտեզներում: Ժամանակակից քարտեզագրական մեթոդների առավելությունները պատմական հետազոտություններում» թեմայի շրջանակում:

2015 թ. մայիսին Երևանի պետական համալսարանում կազմակերպվել է «ՀՀ տնտեսության զարգացման և տեղաբաշխման ժամանակակից հիմնախնդիրը» խորագրով հանրապետական գիտաժողով, որին բաժնի կրտսեր գիտաշխատող Գ. Ղամբարյանը ներկայացել է «ՀՀ ռեգիոնալ տնտեսական քաղաքականության ընտրության հարցի շուրջ» զեկույցով:

Հրատարակություններ

Դասա-գիրք	Մենագրություն	Ուսումնական ձեռնարկ	Ուսումնամեթոդական ձեռնարկ	Հոդված	Ձեկուցման թեզիս	Քարտեզ
-	-	-	-	2	-	62

Գիտական և ուսումնամեթոդական հրատարակությունների ցանկ

Հոդված

1. *Վ. Գ. Միսիթարյան,* Ֆրեդերիկ Դյու Բուա դը Մոնպերոյի քարտեզը աղրբեջանական գիտական և քաղաքական շահարկումներում, «Հայագիտության հարցեր», հանդես 3, ԵՊՀ հրատ., 2014, էջ 34-52:
2. *Հ. Գ. Սարգսյան,* Տավուշի մարզի բնակչությունը XIX դ.-XX դ. սկզբներին (Էթնոժողովրդագրական ուսումնասիրություն), ՏԱՎՈՒՇ սոցիալ-մշակութային գործընթացներ (Ավանդույթ և արդիականություն), 2014, էջ 9-82:

Քարտեզ
Դասագիրք

1. *Վ. Գ. Միսիթարյան (քարտեզները Վ. Միսիթարյանի), Մ. Մանասյան, Ա. Հովսեփյան,* Աշխարհագրություն. Հայաստան, 9-րդ դասարան, «Տիգրան Մեծ» հրատ., Երևան, 2014, 240 էջ:
   1. Հայկական լեռնաշխարհի մեզոդիրքը:
   2. Հայկական լեռնաշխարհի լեռնագրությունը:
   3. Հայկական լեռնաշխարհի գետային ցանցը:
   4. Հայկական լեռնաշխարհի վերընթաց լանդշաֆտային գոտիները:
   5. ՀՀ վարչատարածքային բաժանումը:
   6. ՀՀ երկրաբանական քարտեզ:
   7. ՀՀ օգտակար հանածոները:
   8. ՀՀ լեռնագրությունը:
   9. ՀՀ կլիմայի վերընթաց գոտիները:
   10. ՀՀ ջրագրությունը:
   11. ՀՀ հողային ծածկույթը:
   12. ՀՀ լանդշաֆտային գոտիները:
   13. Բնակչության խտությունն ըստ վերընթաց գոտիների:
   14. Քաղաքները:
   15. Արդյունաբերության տեղաբաշխումը:
   16. Էլեկտրաէներգետիկա:
   17. Գյուղատնտեսություն:
   18. Գյուղատնտեսական ոռոգման համակարգը:
   19. Տրանսպորտ:
   20. Արագածոտնի մարզ:
   21. Արարատի մարզ:
   22. Արմավիրի մարզ:
   23. Գեղարքունիքի մարզ:
   24. Լոռու մարզ:
   25. Կոտայքի մարզ:

26. Շիրակի մարզ:
27. Սյունիքի մարզ:
28. Վայոց ձորի մարզ:
29. Տավուշի մարզ:
30. Լեռնային Ղարաբաղի (Արցախի) Հանրապետություն:

2. *Վ. Գ. Միհթարյան (քարտեզները կազմեց Վ. Միհթարյանը), Մ. Մանասյան, Ռ. Մարգարյան, Ա. Հովսեփյան, Գ. Հովհաննիսյան,* Աշխարհագրություն, 8-րդ դասարանի դասագիրք, «Մանմար» հրատ., Երևան, 2014, 224 էջ:
   1. Աշխարհի բաժանումը խոշոր տարածաշրջանների:
   2. Եվրամիության ընդարձակումը:
   3. Եվրոպայի քաղաքական քարտեզը:
   4. Արևելյան Եվրոպա:
   5. Եվրասիայի բնակչության տեղաբաշխումը և տարաբնակեցումը:
   6. Եվրասիայի օգտակար հանածոները:
   7. Ռուսաստանի Դաշնություն. հանրապետություններ և երկրամասեր:
   8. Ծնելիությունը Ռուսաստանում, 2012 թ. (1000 մարդու հաշվով):
   9. Հարավային Եվրոպա:
   10. Արևմտյան Եվրոպա:
   11. Հյուսիսային Եվրոպա:
   12. Ասիա (քաղաքական քարտեզ):
   13. Հարավարևմտյան Ասիա:
   14. Կենտրոնական Ասիա:
   15. Հարավարևելյան Ասիա:
   16. Արևելյան Ասիա:
   17. Աֆրիկա (քաղաքական քարտեզ):
   18. Աֆրիկա (օգտակար հանածոներ):
   19. Ավստրալիա և Օվկիանիա (քաղաքական քարտեզ):
   20. Ավստրալիա (օգտակար հանածոներ):
   21. Հյուսիսային Ամերիկա:
   22. Ամերիկայի Միացյալ Նահանգներ:
   23. Լատինական Ամերիկա:

Գիրք

1. Հայոց պատմություն, հատոր II, Միջին դարեր (IV դար-XVII դարի առաջին կես), Գիրք երկրորդ (IX դարի կես - XVII դարի առաջին կես), «Զանգակ» հրատ., Երևան, 2014 *(Բ. Հ. Հարությունյան, Վ. Գ. Միհթարյան (քարտեզագիր)):*
   1. Բագրատունյաց տերությունը Աշոտ Ա և Սմբատ Ա թագավորների օրոք (885-908 թթ.):
   2. Հայաստանը ավատատիրական հարաբերությունների խորացման, տնտեսական և մշակութային վերելքի շրջանում (908-1020 թթ.):
   3. Հայաստանը սելջուկ-թուրքերի արշավանքների և տիրապետության հաստատման շրջանում (1047-1092 թթ.):
   4. Զաքարյանների իշխանությունը XIII դարում և XIV դարի սկզբին:
   5. Հայաստանը և հարևան երկրները XIII դարի սկզբներին: Մոնղոլական արշավանքները Հայաստան:
   6. Կիլիկիայի Հայկական պետությունը (1080-1375 թթ.):

7. Հայաստանը XIV դարում և XV դարի սկզբին: Լենկ Թեմուրի արշավանքները Հայաստան:
8. Հայաստանը XVI դարում և XVII դարի առաջին կեսին:

2. *V. Mkhitaryan*, Maps, "Armenian Soviet Socialist Republic, Nagorno-Karabakh Autonomous Oblast, 1985", "Republic of Armenia, Republic of Artsakh (NKR), 2015", R. Galichian, A glance into the history of Armenia, Through cartographic records, Bennett and Bloom, 2015, p. 73-74.

ՀԱՅ-ՔՐԴԱԿԱՆ ԱՌՆՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԺԻՆ

Բաժնի վարիչ՝ *Պետրոսյան Վահրամ Սամվելի, պատմ. գիտ. թեկնածու, դոցենտ*

Բաժնի աշխատակիցների կազմը

1. Յարալյան Ռուդիկ Ֆելիքսի, պատմ. գիտ. թեկնածու, ավագ գիտաշխատող
2. Գրիգորյան Սարգիս Մարտինի, պատմ. գիտ. թեկնածու, կրտսեր գիտաշխատող

Բաժնի հիմնական խնդիրները

Բաժնի գործունեությունը գերազանցապես գիտահետազոտական ուղղվածության է, որի շրջանակում ամենամյա կտրվածքով պատրաստվում են համապատասխան քանակությամբ գիտավերլուծական հոդվածներ, մենագրություններ և այլ ձևաչափի աշխատություններ: Գիտահետազոտական աշխատանքի շրջանակում կարևորվում են հետևյալ խնդիրները.

- հայ-քրդական համագործակցության և կոնֆլիկտային պոտենցիալի ուսումնասիրությունը,
- հայ-քրդական իրողությունների մշտադիտարկումը,
- հայ-քրդական առնչությունների ու հարաբերությունների ներկայացումը պատմական, քաղաքական, քաղաքակրթական, տնտեսական, կրոնական, մշակութային, դեմոգրաֆիական, սոցիոլոգիական լայն շրջանակների համատեքստում,
- հայ-քրդական հարաբերություններին և շփումներին առնչվող բազմալեզու աղբյուրների և մասնագիտական գրականության ուսումնասիրությունը,
- Տարածաշրջանային զարգացումների լույսի ներքո հայ-քրդական հարաբերությունների և դրանցում առկա խնդիրների վերլուծությունն ու ամբողջական տեսքով ներկայացումը:

Բաժնի գործունեության ուղղությունները

Պրակտիկ գործունեություն

Տվյալ գործունեությունը միտված է օտարերկրյա գիտահետազոտական կենտրոնների հետ կապեր հաստատելուն և հայ-քրդական առնչությունների համատեքստում համատեղ ծրագրեր, դաշտային աշխատանքներ իրականացնելուն: Վերջինիս նպատակն է Մերձավոր Արևելքի քրդաբնակ տարածքներում ստեղծված իրավիճակին տեղում ծանոթանալը, գործընթացներն առավել հստակ գնահատելը, ընկալելն ու դրանց վերաբերյալ համապատասխան եզրահանգումներ կատարելը: Այդ տեսանկյունից մտադիր ենք՝

- դաշտային հետազոտություններ իրականացնել (ֆինանսավորման առկայության դեպքում) Հյուսիսային Իրաքի քրդական ինքնավարության մայրաքաղաք Էրբիլում,

- ՌԴ և Վրաստանի, ինչպես նաև արևմտյան արևելագիտական և քրդագիտական կենտրոնների հետ ծավալել համագործակցություն՝ ակտիվորեն մասնակցելով վերջիններիս կողմից կազմակերպվող գիտական և փորձագիտական համաժողովներին,
- հայ-քրդական առնչությունների, հայ-իրանական հարաբերությունների և Հայոց ցեղասպանության խնդիրների շրջանակում ներկայացնել դասախոսություններ ԻԻՀ-ում և Լիբանանում (հրավերի առկայության դեպքում):

Տեղեկատվական գործունեություն

Տվյալ գործունեությունը բխում է քաղաքական հետազոտությունները պրակտիկ գործունեության հետ կապելու անհրաժեշտության գիտակցումից, ունի ներքին և արտաքին հասցեատերեր: Որպես ներքին հասցեատեր՝ հանդես են գալիս հայաստանյան նեղ մասնագիտական (փորձագիտական) և հասարակական լայն շրջանակները: Արտաքին հասցեատեր են ընկալվում Հայաստանից դուրս գտնվող բոլոր այն ուժերը, որոնք հետաքրքրված են քրդական խնդրով և հայ-քրդական հարաբերություններով:

Տեղեկատվական գործունեության նպատակներից են թեմատիկ հետաքրքրությունների շրջանակում արտաքին ուղերձների օպերատիվ ընկալումը և տեսակետների արտահայտումը: Տեղեկատվական աշխատանքի ուղղություններն են՝

- հայկական, քրդական, ռուսաստանյան և արևմտյան ԶԼՄ-ներում (այդ թվում՝ համացանցային ռեսուրսներում) քրդական հիմնախնդրի և հայ-քրդական առնչությունների վերաբերյալ գիտական և հրապարակախոսական նյութերի տպագրումն ու հրապարակումը,
- քրդական գործոնի, տարածաշրջանային զարգացումների և աշխարհաքաղաքական ու աշխարհատնտեսական գործընթացների վերաբերյալ հարցազրույցների և մամուլի ասուլիսների կազմակերպումը,
- ԵՊՀ Հայագիտական հետազոտությունների ինստիտուտի հայ-քրդական առնչությունների բաժնի հետաքրքրությունների շրջանակում կազմակերպվող արևելագիտական և միջազգային գիտական կոնֆերանսներին մասնակցելը:

Ըստ ընդհանուր ուղղությունների՝ բաժնում կատարված գիտական աշխատանքների ամփոփում

Հայ-քրդական հարաբերություններին նվիրված ժողովածուի համար պատրաստվել են համապատասխան հոդվածներ: Այդ ուղղությամբ աշխատանքները ներկայումս ավարտական փուլում են: Համագործակցության նպատակով կապեր են հաստատվել ՌԴ և մերձավորարևելյան որոշ երկրների, մասնավորապես Լիբանանի, Իրանի, Թուրքիայի և Իրաքի գիտահետազոտական կենտրոնների ու փորձագիտական շրջանակների հետ:

Բաժնում կատարված այլ աշխատանքների մասին:

- ԵՊՀ Սարգիս և Մարի Իզմիրլյանների անվան գրադարանի նախասրահում Իրաքի եզդիների ցեղասպանությանը նվիրված լուսանկարների ցուցահանդեսի և Բորիս Մուրազիի «100 տարի անց…» գրքի շնորհանդեսի կազմակերպում (մայիսի 21-27, 2015 թ.):
- ԵՊՀ ՀՀԻ-ում հայ-քրդական հարաբերությունների վերաբերյալ կլոր սեղան-քննարկման կազմակերպում Սուլեյմանիայի համալսարանից ժամանած պատվիրակության հետ (հուլիսի 10, 2015 թ.):

Վահրամ Պետրոսյան

1. Մասնակցություն ՌԴ ԳԱ Համաշխարհային տնտեսության և միջազգային հարաբերությունների ինստիտուտի (ИМЭМО РАН) կազմակերպած «Քրդական գործոնի դերն ու նշանակությունը տարածաշրջանային աշխարհաքաղաքականության շրջանակներում» խորագիրը կրող

գիտաժողովին, որի ընթացքում ներկայացվել է հետևյալ վերտառությամբ զեկուցումը՝ «Հայ-քրդական հարաբերությունների «SWOT» վերլուծություն»: Մոսկվա, մարտի 11-13, 2015 թ.
(http://kurdistan.ru/2015/03/12/news-23572_Kruglyy_stol_Rol_i.html):

2. Интервью представителя Демократической партии Иракского Курдистана в России и СНГ, господина Хошави Бабакра, которое он дал заведующему отделом армяно-курдских отношений Института Арменоведческих исследований Ереванского Государственного Университета, кандидату исторических наук, доценту кафедры международных отношений и дипломатии факультета международных отношений Ереванского Государственного Университета Ваграму Петросяну. Интервью: Армения пока только готовится сделать первые шаги в экономическом сотрудничестве с Курдистаном, Kurdistan.Ru (30. 04. 2015)
(http://kurdistan.ru/2015/04/30/news-23975_Intervyu_Armeniya_poka_tolko_gotovitsya_sdelat_pervye_shagi_v_ekonomicheskom_sotrudnichestve_s_Kurdistanom.html):
3. Մասնակցություն «Հայոց ցեղասպանությունը որպես մարդկության դեմ ուղղված հանցագործություն» խորագիրը կրող միջազգային գիտաժողովին, որի ընթացքում ներկայացվել է հետևյալ վերտառությամբ զեկուցումը՝ «Քրդական կառույցների դիրքորոշումը Հայոց ցեղասպանության հարցում» (ԼՂՀ, 10.04.2015-12.04.2015):
4. Մասնակցություն «Հայոց ցեղասպանությունը որպես մարդկության դեմ ուղղված հանցագործություն» խորագիրը կրող միջազգային գիտաժողովին, որի ընթացքում ներկայացվել է հետևյալ վերտառությամբ զեկուցումը՝ «Հալաբջայի իրողությունները Իրաքում քրդերի ցեղասպանության հարցում» (ԼՂՀ, 10.04.2015-12.04.2015):
5. Интервью новостного сайта Kurdistan.Ru с кандидатом исторических наук, доцентом кафедры международных отношений и дипломатии факультета международных отношений Ереванского государственного университета, заведующим отделом армяно-курдских отношений Института арменоведческих исследований Ереванского государственного университета, Петросяном Ваграмом Самвеловичем. “Мы должны стремиться к стратегическому партнерству”, Kurdistan.ru (21. 04. 2015)
(http://kurdistan.ru/2015/04/21/news-23906_Vagram_Petrosyan_My_dolzhny_stremitsya_k_strategicheskomu_partnerstvu.html):

Ռուդիկ Յարալյան

1. Մասնակցություն «Հայոց ցեղասպանությունը որպես մարդկության դեմ ուղղված հանցագործություն» խորագիրը կրող միջազգային գիտաժողովին, որի ընթացքում ներկայացվել է հետևյալ վերտառությամբ զեկուցումը՝ «Քուրդիստանի աշխատավորական կուսակցության դիրքորոշումը Հայոց ցեղասպանության ճանաչման համատեքստում» (ԼՂՀ, 10.04.2015-12.04.2015):
2. Մասնակցություն Իմամ Խոմեյնու մահվան 26-րդ տարելիցի կապակցությամբ կազմակերպված «Իմամ Խոմեյնու գաղափարների ու տեսակետների վերլուծություն» խորագիրը կրող գիտաժողովին, որի ընթացքում ներկայացվել է հետևյալ վերտառությամբ զեկուցումը՝ «Իմամ Խոմեյնու մոտեցումը քրդական հիմնախնդրին» (ՀՀ ԳԱԱ, 04.06.2015):

Սարգիս Գրիգորյան

1. Մասնակցություն «Հայոց ցեղասպանությունը որպես մարդկության դեմ ուղղված հանցագործություն» խորագիրը կրող միջազգային գիտաժողովին, որի ընթացքում ներկայացվել է հետևյալ վերտառությամբ զեկուցումը՝ «2014 թ. Սինջարի իրողությունն իրաքյան եզդիների դեմ ուղղված բռնարարքների համատեքստում» (ԼՂՀ, 10.04.2015-12.04.2015):

Հրատարակություններ

Դասագիրք	Մենագրություն	Ուսումնական ձեռնարկ	Ուսումնամեթոդական ձեռնարկ	Հոդված	Ձեկուցման թեզիս
-	-	-	-	2	-

Գիտական և ուսումնամեթոդական հրատարակությունների ցանկ

Հոդված

1. *Հ. Մ. Գրիգորյան,* Становление фактора Исламского государства в Ираке и Сирии, Kurdistan.ru (26. 05. 2015) (http://kurdistan.ru/2015/05/26/articles-24145_Stanovlenie_faktora.html).
2. *Հ. Մ. Գրիգորյան,* Вилаят Кавказ-34-ый вилаят Исламского государства, Kurdistan.ru (12. 07. 2015) (http://kurdistan.ru/2015/07/12/articles-24478_Vilayat_Kavkaz_-_3.html).

ՀԱՅ-ՎՐԱՑԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԺԻՆ

Գիտական ղեկավար՝ *Բայրամյան Հրաչիկ Սմբատի, բան. գիտ. թեկնածու, դոցենտ, ավագ գիտաշխատող*

Բաժնի աշխատակիցների կազմը

1. Վիրաբյան Վանիկ Հրանտի, պատմ. գիտ. դոկտոր, ավագ գիտաշխատող
2. Մաղալյան Վլադիմիր Սարգսի, պատմ. գիտ. թեկնածու, ավագ գիտաշխատող
3. Հարությունյան Ռուզաննա Վասպուրականի, պատմ. գիտ. թեկնածու, գիտաշխատող
4. Մինասյան Մարինե Պետիկի, արվեստ. գիտ. թեկնածու, կրտսեր գիտաշխատող
5. Թամարյան Ջեննի Լավրենտիի, լաբորանտ
6. Յոլչյան Ծովինար Կարենի, լաբորանտ

Բաժնի հիմնական խնդիրները

Բաժինն իր գործունեության հիմքում ներառել է հետևյալ հիմնական խնդիրները՝ ուսումնասիրել Վրաստանի պատմությունը, գրականությունը, լեզուն և մշակույթը, ստեղծել համապատասխան ծրագրեր, անհրաժեշտ դասագրքեր, ուսումնամեթոդական ձեռնարկներ, բառարաններ, զրուցարաններ, «Վրացագիտություն» և «Կովկասագիտություն» մասնագիտացումների համար պատրաստել հայ վրացագետների կադրեր, կազմակերպել գիտական սեմինարներ, կոնֆերանսներ, թարգմանել և հրատարակության պատրաստել վրացալեզու հայագիտական արժեքավոր աշխատությունները, նպաստել գիտակրթական կապերի սերտացմանը Հայաստանի և Վրաստանի բուհերի միջև: Բաժնի խնդիրներից են նաև վրացական կայքերից հակահայկական նյութերի, վիճահարույց հոդվածների վերհանումը, թարգմանումը և համակարգումը:

Գիտական աշխատանքները նվիրված են վրաց գրականության պատմության, հայ-վրացական լեզվական-բառարանագրական առնչությունների, հայ-վրացական գրական-մշակութային կապերի, վրացի և վրացացած հայագետների, հայագիտական աշխատությունների ուսումնասիրությանը, դրանցից կարևորագույնների հայերեն թարգմանությանն ու հրատարակության պատրաստմանը:

Հայ-վրացական հարաբերությունների բաժնի աշխատանքներն ընթանում են մասնագիտական երկու ուղղությամբ՝ գիտահետազոտական և գիտամանկավարժական (Հայ բանասիրության ֆակուլտետի «Վրացագիտություն» մասնագիտացման և Պատմության ֆակուլտետի բակալավրիական ու «Կովկասագիտություն» մագիստրոսական խմբերում վրացագիտական որոշ առարկաներ դասավանդում են բաժնի աշխատակիցներ Բայրամյանը և Թամարյանը):

Բաժնի գործունեության ուղղությունները

Հաշվետու ժամանակաշրջանում բաժնի գիտահետազոտական աշխատանքները հիմնականում նվիրված են եղել վրաց գրականության պատմության և վրաց լեզվի ուսումնական ձեռնարկներ ստեղծելու աշխատանքներին, հայ-վրացական գրական-մշակութային կապերի վերջին տարիների խնդիրներին:

Ըստ ընդհանուր ուղղությունների՝ կենտրոնում կատարված գիտական աշխատանքների ամփոփում

Հաշվետու ժամանակաշրջանում հայ-վրացական հարաբերությունների բաժնի ղեկավարը հավաքել է «Վրաց գրականությունը XX դ.» թեմային վերաբերող 1900-1930-ական թվականների նյութերը, վրացի հեղինակների ու նրանց երկերի մասին հայ մամուլում հրապարակված տեսական-քննադատական հոդվածներն ու գրախոսությունները, որոշակիացրել տվյալ տասնամյակների ուսումնասիրության հիմնական հեղինակներին ու նրանց երկերը, շարադրանքի դրույթներն ու մեթոդները: 20-30-ական թվականներին նվիրված մենագրության գլուխները շարադրվում են:

Բաժնի ավագ գիտաշխատող Վ. Վիրաբյանը հրատարակել է «Հայաստանի Հանրապետության պետական անվտանգության համակարգի ստեղծումը և գործունեությունը 1918-1920 թթ.» մենագրությունը (Երևան, ԵՊՀ հրատ., 2015 թ., 746 էջ):

Բաժնի ավագ գիտաշխատող Վ. Մաղալյանն ուսումնասիրել և գրի է առել ՀՀ Ազգային գրադարանում պահվող 1930-40-ական թթ. վիրահայ մամուլը, արխիվային նյութերը, աշխատությունները: Թեմայի վերաբերյալ հրատարակել է հոդվածներ:

Գիտաշխատող Ռ. Հարությունյանը «Հայկական պատմական աղբյուրները (8-10 դդ.) Վիրքի և վրաց ժողովրդի մասին» թեմայի շրջանակում կատարել է հավաքագրման աշխատանքներ: Թեմայի վերաբերյալ հրատարակել է մեկ հոդված:

Բաժնում կատարված այլ աշխատանքների մասին:

Հաշվետու ժամանակահատվածում հայ-վրացական հարաբերությունների բաժինը, գիտական թեմաների իրականացումից զատ, կատարել է նաև հետազոտական հետևյալ աշխատանքները. բաժնի ղեկավարը հրատարակել է «Հայերեն-վրացերենզրուցարան»-ը (Երևան, 2015, 117 էջ):

Ավագ գիտաշխատող Վ. Վիրաբյանը հրատարակել է «Հայ-վրացական ռազմաքաղաքական հարաբերությունները և Լոռու չեզոք գոտին 1920-1921 թթ.» գրքույկը (Երևան, 2015, 92 էջ):

Ջ. Թամարյանն իրականացրել է վրացական կայքերից հակահայկական նյութերի, հայ-վրացական պատմամշակութային առնչություններին վերաբերող վիճահարույց հոդվածների, գրքերի և հարցազրույցների վերհանումը, թարգմանումը, մոնիթորինգը, համակարգումը և հասցեագրումը համապատասխան մասնագետներին:

Աշխատակիցների կողմից թարգմանվել է «Հայոց ցեղասպանությունը վրաց պարբերականներում 1914-1918 թթ.» արխիվային նյութերի ժողովածուն: Վրացերեն այդ ժողովածուում ներկայացված են Հայոց ցեղասպանության թեման լուսաբանող նյութեր վրացական երեք՝ «Սաքարթվելո» («Վրաստան»), «Սամշոբլո» («Հայրենիք»), «Սախալխո փուրցելի» («Ժողովրդական թերթ») թերթերից և «Կլդե» («Ժայռ») ամսագրից:

Հրատարակություններ

Դասագիրք	Մենագրություն	Ուսումնական ձեռնարկ	Ուսումնամեթոդա-կան ձեռնարկ	Հոդված	Ձեկուցման թեզիս
-	2	1	-	13	1

Գիտական և ուսումնամեթոդական հրատարակությունների ցանկ

Մենագրություն

1. *Վ. Հ. Վիրաբյան,* Հայաստանի Հանրապետության պետական անվտանգության համակարգի ստեղծումը և գործունեությունը 1918-1920 թթ., ԵՊՀ հրատ., Երևան, 2015, 746 էջ:
2. *Վ. Հ. Վիրաբյան*, Հայ-վրացական ռազմաքաղաքական հարաբերությունները և Լոռու չեզոք գոտին 1920-1921 թթ., ԵՊՀ հրատ., Երևան, 2015, 92 էջ:

Ուսումնական ձեռնարկ

1. *Հ. Ս. Բայրամյան,* Հայերեն-վրացերեն զրուցարան, Հեղ. հրատ., Երևան, 2015, 117 էջ:

Հոդված

1. *Հ. Ս. Բայրամյան,* Տաղանդով ճառագված թարգմանություն, «Լիտերատուրուլի գազեթի», 19 սեպտեմբերի - 2 հոկտեմբերի, Թբիլիսի, 2014, էջ 9-10 (վրացերեն):
2. *Հ. Ս. Բայրամյան,* Հայրենների վրացերեն թարգմանության շուրջ, «Հայագիտության հարցեր, N 3 (4), Երևան, 2014, էջ 142-151:
3. *Հ. Ս. Բայրամյան,* Հայոց ցեղասպանությունը վրացական պարբերականներում 1914-1918 թթ. (արխիվային նյութերի ժողովածու), «Հայագիտության հարցեր», N 1 (4), Երևան, 2015, էջ 201-205:
4. *Հ. Ս. Բայրամյան,* Անդրադարձ և արձագանք, «Կամուրջ». Հատուկ թողարկում, Վրաստանի գրողների ստեղծագործական միություն: Թբիլիսի (տարեգիրք), 2015, էջ 295-299:
5. *Հ. Ս. Բայրամյան,* Գիտության երևելի մշակը, «Կամուրջ». Հատուկ թողարկում, Վրաստանի գրողների ստեղծագործական միություն: Թբիլիսի (տարեգիրք), 2015, էջ 300-305:
6. *Ռ. Վ. Հարությունյան,* Հայ-վրացական հարաբերություններն ըստ Մովսես Խորենացու, ԲԵՀ, N 1, 2015, էջ 31-38:
7. *Վ. Ս. Մաղալյան,* Ալեքսանդր Մյասնիկյանի «Էնվեր փաշայի վախճանը» հոդվածի առթիվ, «Պատմություն և մշակույթ» հայագիտական հանդես, պրակ Ա, ԵՊՀ հրատ., 2014, էջ 584-588:
8. *Վ. Ս. Մաղալյան,* Հրաչիկ Բայրամյան. Էջեր հայ-վրացական գրական կապերի պատմությունից /գրախոսություն/, «Հայագիտության հարցեր» հանդես, թիվ 2, ԵՊՀ հրատ., 2014, էջ 213-217:
9. *Վ. Ս. Մաղալյան,* Գեներալի անցած ուղին, «Հայ զինվոր» շաբաթաթերթ, թիվ 9/1078/, 12-18 մայիսի, 2015, էջ 12:
10. *Վ. Ս. Մաղալյան,* Փոքր գյուղը մեծ պատերազմում, «Հայ զինվոր» շաբաթաթերթ, թիվ 19/1088/, 21-27 մայիսի, 2015, էջ 12:
11. *Վ. Ս. Մաղալյան,* Մեծ հայրենականը նամակներում, «Հայ զինվոր» շաբաթաթերթ, թիվ 21/1090/, 4-10 հունիսի, 2015, էջ 10-11:
12. *Ջ. Լ. Թամարյան,* Վրաց բառանյութը Հրաչյա Աճառյանի «Արմատական բառարան»-ում, Հայ բարբառագիտության հիմնադրման 100-ամյակին նվիրված հանրապետական գիտական նստաշրջանի հոդվածների ժողովածու, ԵՊՀ հրատ., 2014, էջ 93-100:

13. *Ծ. Կ. Յոլչյան,* Եվրոպական արժեքները և վրաց հասարակական-քաղաքական միտքը XIX դարի II կեսին, ՈՒԳԸ գիտական հոդվածների ժողովածու, 1.6 (9), 2015, էջ 157-162:

Ձեկուցման թեզիս

1. *Կ. Ս. Մաղալյան*, Հոգեբանության առաջին դասախոսը Երևանի համալսարանում, «Արդիականության մարտահրավերները. Փիլիսոփայական և հոգեբանական հիմնախնդիրներ» թեմայով միջազգային գիտաժողով, ԵՊՀ հրատ., հոկտեմբերի 10-12, 2014, էջ 136-140:

ՀԱՅ-ՕՍՄԱՆԱԿԱՆ ԱՌՆՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԺԻՆ

Բաժնի վարիչ՝ *Սահակյան Լուսինե Սուրենի, բան. գիտ. թեկնածու, դոցենտ, ավագ գիտաշխատող*

Բաժնի աշխատակիցների կազմը

1. Սաֆարյան Ալեքսանդր Վիլենի, պատմ. գիտ. թեկնածու, ավագ գիտաշխատող
2. Սարգսյան Անի Համլետի, բան. գիտ. թեկնածու, ավագ լաբորանտ
3. Մինասյան Միհրան Անթունի, լաբորանտ

Բաժնի հիմնական խնդիրները

Հայ-օսմանական առնչությունների բաժնի հիմնական նպատակն է ուսումնասիրել Օսմանյան կայսրության իրականացրած վարչական, հարկային, ժողովրդագրական, կրոնական և լեզվական քաղաքականությունը, քննել հայերի և այլ քրիստոնյա ժողովուրդների իսլամացման փուլերն ու նպատակները, տեղանունների թուրքացման մեթոդները (մասնավորապես Արևմտյան Հայաստանում և հարակից հայաբնակ շրջաններում): Ուսումնասիրվում են թյուրքականության գաղափարախոսությունը, դրա թողած հետևանքները Թուրքիայի արտաքին և ներքին քաղաքականության, մշակույթի և տնտեսության վրա:

Բաժնի գործունեության ուղղությունները

Բաժինն իր գործունեությունն իրականացնում է հետևյալ ուղղություններով՝ Օսմանյան կայսրությունում և հանրապետական Թուրքիայում ոչ թուրք ժողովուրդների իսլամացման-թուրքացման քաղաքականության, տեղանունների թուրքացման քաղաքականության ուսումնասիրություն, Զիա Գյոքալփի քաղաքական, մշակութաբանական հայացքների քննություն, Օսմանյան կայսրության ժողովրդագրական, իսլամացման և տեղանունների թուրքացման քաղաքականության ուսումնասիրություն, Զեյթունի Ֆըռնուզ գյուղաքաղաքի պատմության քննություն, թուրք պատմագրության կեղծարարության բացահայտում և հակադարձում, հայ ուսանողների համար օսմաներեն դասագրքի ստեղծում:

Ըստ ընդհանուր ուղղությունների՝ բաժնում կատարված գիտական աշխատանքների ամփոփում

Դրամաշնորհային ծրագրեր

Թեմայի անվանումը	*Ղեկավար*
1. Համշենահայերի իսլամացման քաղաքականությունն Օսմանյան կայսրությունում. փուլերը, մեթոդները, հետևանքները և ներկա վիճակը (պետական ֆինանսավորում):	Սահակյան Լ. Ս.

Թեմա 1. Լ. Ս. Սահակյանը 2011, 2012, 2013 թթ. ամռանը ԵՊՀ Հայագիտության հետազոտությունների ինստիտուտի աջակցությամբ դաշտային աշխատանքներ է կատարել Թուրքիայի Ռիզեի, Արդվինի և Էրզրումի նահանգների համշենաբնակ շրջաններում՝ հատկապես պատմական հայոց Համշեն գավառում (Չայելի, Չամլըհեմշին, Համշեն և Արտաշեն գավառներում), ուր գրանցվել են համշենցիների ներկայիս սերունդների խոսակցական թուրքերենում պահպանված բազմաթիվ հայերեն միկրոտեղանուններ, կենցաղային բառեր, բանահյուսական նյութեր: Հրատարակության է պատրաստվում «Հայոց Համշեն գավառը (պատմություն, ժողովրդագրություն, տեղանուններ)» մենագրությունը, որում առաջին անգամ համակողմանիորեն քննության են ենթարկվում Համշենում իրականացված իսլամացման քաղաքականության մեթոդները, փուլերը և պատմաքաղաքական հետևանքները, ինչպես նաև լեզվական վերլուծության են ենթարկվում Համշենի մանրատեղանունները, թուրքախոս համշենցիների խոսքում պահպանված հայերեն լեզվական փաստերն ու քերականական իրողությունները: Ուսումնասիրման արդյունքների մի մասը Լ. Սահակյանը հրատարակել է «Համշենի մանրատեղանունները» մենագրության տեսքով (հայերեն, ռուսերեն, թուրքերեն, ֆրանսերեն):

Բաժնում կատարված այլ աշխատանքների մասին:

Շարունակվել են աշխատանքներն օսմաներենի դասագրքի ստեղծման ուղղությամբ, և գրեթե ավարտին են հասցված նյութերի հավաքագրման աշխատանքները: Հրատարակության է պատրաստվում Ցեղասպանության ականատեսի մի հուշագրություն, որը վերաբերում է Զեյթունի Ֆըռնուզ գյուղաքաղաքի պատմությանն ու քաղաքական իրադարձություններին:

Շարունակվել են աշխատանքները թյուրքիզմի գաղափարախոսության պատմաքաղաքական հիմքերի ուսումնասիրության ուղղությամբ:

Բաժնի աշխատակիցները դասախոսություններով և զեկուցումներով հանդես են եկել միջազգային գիտաժողովներում և Սփյուռքում (Նյու Յորք, Տորոնտո, Մոնրեալ, Աշխաբադ, Դոնի Ռոստով, Պետերբուրգ, Մոսկվա, Սոչի, Տուապսե):

Հրատարակություններ

Դասագիրք	Մենագրություն	Ուսումնական ձեռնարկ	Ուսումնամեթոդական ձեռնարկ	Հոդված	Զեկուցման թեզիս
-	-	-	-	6	2

Գիտական և ուսումնամեթոդական հրատարակությունների ցանկ

Հոդված

1. *Ալ. Վ. Սաֆարյան,* Քեմալականների լեզվական քաղաքականության ակունքներում. Զիյա Գյոքալփի լեզվաբանական հայացքները, «Ժամանակակից Եվրասիա», Հատոր III (2), 2014, էջ 52-76:
2. *Լ. Ս. Սահակյան*, Բոնի իսլամացված համշենահայերի սերունդների ինքնության ընկալումը, «Հայագիտության հարցեր», 1 (4), ԵՊՀ հրատ., 2015, էջ 156-163:
3. *Լ. Ս. Սահակյան*, Հայոց Համշեն գավառը պատմության ոլորաններում, «Տրապիզոնի նահանգ և Համշեն», հոդվածների ժողովածու, Թորոնթo, 2014, էջ 56-66:
4. *L. S. Sahakyan,* Concring the Identity of the Generations of Islamided Hamshen, Armenian Folia Anglistika, N 2, Yerevan, 2015, p. 186-191.
5. *Մ. Ա. Մինասյան,* Անծանօթ էջ մը Հայկական ցեղասպանութենէն. Տիգրան Ճամպազեանի վկայութիւնը Տէր Զօրի կոտորածներուն մասին, Պէյրութ, «Ազդակ» օրաթերթի 24 Ապրիլ 2015-ի ապրիլեան բացառիկին մէջ:
6. *Մ. Ա. Մինասյան,* Անտիպ էջ մը Հայկական ցեղասպանութենէն. «Հալէպի Քառլըխը», Հալէպ, «Գանձասար» շաբաթաթերթի 24 Ապրիլ 2015-ի ապրիլեան բացառիկին մէջ:

Զեկուցման թեզիս

1. *Լ. Ս. Սահակյան,* Ռիզեի նահանգի թուրքախոս համշենցիների հայկական լեզվաշերտը (Խախոնջ-Չաթալդերե գյուղի օրինակով), Armenian Language Contacts Through the Ages, Inernational Conferance, Institute for Linguisyics Studies Russian Academy of Sciences, St. Petersburg, 12-15 may, 2015, էջ 45-46:
2. *А. В. Сафарян, А. Г. Симонян,* О преподавании тюркологических предметов в Армении, Образование и спорт в эпоху могущества и счастья (Материалы международной научной конференции, 11-13 ноября, 2014 года), Ашгабад, 2014, с. 352-353 (նույնը թուրքմ.՝ էջ 10-11, անգլ.՝ էջ 215).

«ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ» ՀԱՆԴԵՍԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Խմբագրակազմ

1. Ավետիսյան Լևոն Վազգենի, բան. գիտ. թեկնածու, ավագ գիտաշխատող
2. Աղուզումցյան Աննա Խաչատուրի, ավագ լաբորանտ
3. Դերձյան Վահանդուխտ Վահանի, լաբորանտ

2014 թ. սկսվեց հրատարակվել ՀՀԻ **«Հայագիտության հարցեր»** հանդեսը (տարեկան երեք համար): Հանդեսի հիմնական նպատակն է հրատարակել բարձրակարգ գիտական հետազոտություններ, ինչպես նաև գիտական շրջանակներին ծանոթացնել հայագիտության նվաճումներին: Պարբերականի էջերում զետեղվող հոդվածների որոշակի մասը օտար լեզուներով է, ինչն այլազգի հայագետներին հնարավորություն է ընձեռում ծանոթանալու այդ ոլորտի գործընթացներին, հաղորդակից լինելու Հայաստանում կատարվող հայագիտական հետազոտություններին, իսկ մեր գիտնականների՝ այլ լեզուներով հրատարակված աշխատանքները հասանելի կլինեն օտարազգի հեղինակներին:

2015 թ. 2 (5)-րդ համարն ամբողջությամբ նվիրված է եղել «Հայագիտությունը Ռուսաստանում» թեմային: Այդ համարը կազմվել է ՀՀԻ գործընկեր Դոնի Ռոստովի «Նոր Նախիջևան» համայնքի հայագիտական կենտրոնի միջոցով և բացառապես Ռուսաստանից ներկայացված հոդվածներով:

Հանդեսը համացանցում միաժամանակ ներկայացվում է ՀՀԻ պաշտոնական կայքի միջոցով՝ www.armin.am/am/Journal, ինչպես նաև ներառված է ՀՀ բարձրագույն որակավորման հանձնաժողովի պարբերականների ցանկում:

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԵՎ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Կենտրոնի գիտական ղեկավար՝ *Շուքուրյան Սամվել Կիմի, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, ֆիզմաթ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր*

Կենտրոնի հիմնական խնդիրները

- SS-ների ոլորտում կրթական, մարզման, շարունակական կրթության ծրագրերի և առանձին դասընթացների իրականացում,
- SS-ների բնագավառում գիտահետազոտական աշխատանքների կատարում,
- համալսարանական կրթության կառավարման և որակի ապահովման տեղեկատվական համակարգերի մշակում և ներդրում:

Կենտրոնի գործունեության ուղղությունները

- կրթական ծրագրերի և առանձին դասընթացների իրականացում,
- գիտահետազոտական աշխատանքների կատարում,
- համալսարանի կրթության կառավարման և որակի ապահովման տեղեկատվական համակարգերի մշակում և ներդրում:

Կենտրոնի մասնագիտությունները եւ մասնագիտացումները

Շիֆր **Մասնագիտություն՝**

090100 Տեղեկատվական տեխնոլոգիաներ

Մասնագիտացումներ՝
(մագիստրոսական ծրագրեր)

Տեղեկատվական համակարգերի մշակում
Տեղեկատվական համակարգերի կառավարում

Կրթական աստիճան, մասնագիտություն	*Ուսանողների թիվը՝39*			
	I կուրս		II կուրս	
	պպ	վճ	պպ	վճ
Մագիստրատուրա				
Տեղեկատվական տեխնոլոգիաներ	9	12	9	9

Քննաշրջանների արդյունքներ

Ձմեռային քննաշրջան

Կրթական աստիճան, մասնագիտություն, կուրս	Քննաշրջանին մասնակցել են	Անբավարար գնահատական ստացած ուսանողների թիվը		Գերազանցիկների թիվը	Առաջադիմության %-ը
		պպ	վճ		
Մագիստրատուրա					
Տեղեկատվ. տեխն.					
1-ին	21	1	5	2	71
2-րդ	18	-	-	3	100
Ընդամենը	39	1	5	5	85

Ամառային քննաշրջան

Կրթական աստիճան, մասնագիտություն, կուրս	Քննաշրջանին մասնակցել են	Անբավարար գնահատական ստացած ուսանողների թիվը		Գերազանցիկների թիվը	Առաջադիմության %-ը
		պպ	վճ		
Մագիստրատուրա					
Տեղեկատվ. տեխն.					
1-ին	20	-	-	4	100

Շրջանավարտներ

Մասնագիտություն	*Ընդամենը* ՝ 18
	մագիստրատուրա (գերազանցության դիպլոմով)
Տեղեկատվական տեխնոլոգիաներ	18 (1)

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ԱՄԲԻՈՆ

Ամբիոնի վարիչ՝ *Շուքուրյան Սամվել Կիմի, ֆիզմաթ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս (համատեղության կարգով)*

Պրոֆեսորադասախոսական կազմը

1. Կոստանյան Արմեն Հրաչի, ֆիզմաթ. գիտ. թեկնածու, դոցենտ
2. Մանուկյան Մանուկ Գառնուշի, ֆիզմաթ. գիտ. թեկնածու, դոցենտ
3. Ավագյան Արթուր Արամայիսի, տեխն. գիտ. թեկնածու, ասիստենտ

Համատեղողներ

1. Թոփչյան Ռուբեն Վարդանի, ֆիզմաթ. գիտ. թեկնածու, դոցենտ
2. Գրիգորյան Ալվարդ Հասոյի, ֆիզմաթ. գիտ. թեկնածու, ասիստենտ
3. Վասիլյան Աշոտ Մորիսի, ֆիզմաթ. գիտ. թեկնածու, ասիստենտ

4. Վարդանյան Վալերիկ Արտյուշայի, ֆիզմաթ. գիտ. թեկնածու, ասիստենտ
5. Ավագյան Անի Վահեի, դասախոս
6. Էլբակյան Լարիսա Աշոտի, դասախոս
7. Խաչատրյան Մանիկ Ռազմիկի, դասախոս
8. Պետրոսյան Ելենա Գրիգորի, դասախոս
9. Սողոմոնյան Ժաննա Միքայելի, դասախոս

Ուսումնաօժանդակ աշխատակիցներ

1. Պետրոսյան Ելենա Գրիգորի, գործավար
2. Ավագյան Անի Վահեի, օպերատոր

Ըստ ընդհանուր ուղղությունների՝ ամբիոնում կատարված գիտական աշխատանքների ամփոփում

Տվյալների բազաներ

Տեղեկատվական տեխնոլոգիաների տարբեր կիրառություններում նոր պարադիգմի առաջացումը կապված է *գերմեծ տվյալների* (Big Data) մշակման խնդիրների հետ: Տվյալների բազաների ավանդական տեխնոլոգիաներով այդպիսի տվյալների մշակումը և վերլուծությունը դառնում են խնդրահարույց: Այս պայմաններում ենթադրվում է նոր տեղեկատվական տեխնոլոգիաների մշակում, որոնցում տվյալները նոր մոտեցումների շրջանակում դառնում են դոմինանտ՝ լուծելու խնդիրներ, որոնք ավելի վաղ համարվում էին արտակարգ բարդ, իսկ որոշ դեպքերում՝ անլուծելի: Գերմեծ տվյալների կոնտեքստում դիտարկվել են դրանց վիրտուալ և նյութականացված (materialized) ինտեգրման խնդիրներ: Այդ խնդիրների լուծման մեր մոտեցումը ենթադրում է ընդլայնվող կանոնական մոդելի կառուցում, որի կորիզը մի XML տվյալների մոդել է: Կանոնական մոդելի կորիզի ընդլայնումը կատարվում է աքսիոմատիկ եղանակով: Առաջարկվել է *տվյալների մոդել* հասկացության ֆորմալիզացիայի սկզբունքները աբստրակտ մեքենաների նշանակումների համակարգի (AMN) միջոցով՝ կառուցելու տվյալների մոդելների հիմնավորված արտապատկերում ոչ համասեռ տվյալների բազաների ինտեգրման նպատակով [2]: Ամեն մի աղբյուր մոդելի համար մենք կառուցում ենք հակադարձելի արտապատկերում դեպի ընդլայնվող կանոնական մոդել: B-տեխնոլոգիայի կիրառմամբ ապացուցվում է, որ աղբյուր մոդելի AMN-սեմանտիկան ընդլայնվող կանոնական մոդելի AMN-սեմանտիկայի ճշգրտումն է: Կառուցվել են AMN-մեքենաներ տվյալների ռելացիոն և կանոնական մոդելների համար: Աղբյուր մոդելներից դեպի կանոնական մոդել արտապատկերումները նույնպես ներկայացվում են AMN-մեքենաների միջոցով: Հենվելով B-տեխնոլոգիայի վրա՝ ապացուցվել են ռելացիոն մոդելից դեպի կանոնական մոդել արտապատկերման կոռեկտությունը և ընդլայնվող կանոնական մոդելի՝ ռելացիոն սխեմաներ ներկայացնելու ունակությունը:

Հիշող սարքերի թեստավորում

Առաջարկվել են արտաքին հիշող սարքերի անսարքությունները նկարագրելու նոտացիա, ինչպես նաև անսարքությունների թեստավորման և ախտորոշման ալգորիթմ: Ստացված արդյունքների հիման վրա առաջարկվել է ներդրված ինքնաթեստավորող համակարգ արտաքին հիշող սարքերը թեստավորելու համար [6]:

Հետազոտվել են հիշող սարքի պարամետրերի վարիացիաների ազդեցությունը FinFET տիպի անսարքությունների վրա [7]:

Հետազոտվել են FinFET տիպի հիշող սարքերի անսարքությունները, առաջարկվել են արդյունավետ ալգորիթմներ դրանց թեստավորման համար: Հետազոտվել է անսարքությունների հայտնաբերման կախվածությունը հիշող սարքի ջերմաստիճանից, լարման և հաճախականության չափից [8]:

Հետազոտվել են FinFET տիպի հիշող սարքերի անսարքությունները, մշակվել է անսարքությունների մոդելավորման ընթացակարգ, և դրա միջոցով կառուցվել են արդյունավետ ալգորիթմներ այդ անսարքությունները թեստավորելու համար [3]:

Ընդլայնվել է անսարքությունների կանոնիկ աղյուսակը, որպեսզի ընդգրկի 20-ից ցածր նանոմետրանոց հիշող սարքերի անսարքությունները [4]:

[1] արտոնագրում առաջարկված են մեթոդ և համակարգ էլեկտրոնային հիշող սարքերի ստուգման համար, որը հնարավորություն է տալիս հայտնաբերելու հիշող սարքում տարբեր ֆիզիկական թերությունների կամ խափանումների հետևանքով առաջացող պատահական հեռագրային աղմուկը, որը տևում է մի քանի միլիվայրկյանից մինչև վայրկյաններ և ունի լրիվ պատահական բնույթ:

[2] արտոնագրում, հիմնվելով հիշող սարքի կառուցվածքային խճողումների (scrambling) մասին ունեցած ինֆորմացիայի վրա, առաջարկվում է կառուցել ցանկացած թվով սեգմենտներ հիշող սարքի բառերի տրոհման միջոցով, որը հնարավորություն է տալիս ստանալու բազմաթիվ սխալներ հայտնաբերող և ուղղող կոդային բազմասեգմենտանոց համակարգ, որտեղ ամեն մի սեգմենտում հնարավոր է հայտնաբերել երկու սխալ և ուղղել մեկ սխալ:

Մասնակցություն միջազգային գիտաժողովների աշխատանքներին

Ս. Կ. Շուքուրյան

- IEEE խորագրով անցկացվող EWDTS'2015 (East-West Design and Test Symposium) գիտաժողովի ծրագրային կոմիտեի նախագահ:
- IEEE խորագրով անցկացվող VTS'2015 (VLSI Test Symposium) գիտաժողովի ծրագրային կոմիտեի անդամ:
- CSIT'2015 (Computer Science and Information Technologies) միջազգային գիտաժողովի ծրագրային կոմիտեի անդամ:

Մ. Գ. Մանուկյան

- ACM խորագրով անցկացվող ADBIS'2014 (Advances in Databases and Information Systems) եվրոպական գիտաժողովի ղեկավար մարմնի (Steering Committee) և ծրագրային կոմիտեի անդամ:

http://adbis2014.finki.ukim.mk/data/uploads/ADBIS_2014-CfP.pdf

- 16th International Conference on Information Integration and Web-based Applications & Services (iiWAS2014), Hanoi, Vietnam, 2014.

Գ. Է. Հարությունյան

- IEEE VLSI Test Symposium (VTS), USA, 2015,
- IEEE International Test Conference (ITC), USA, 2014.

Հրատարակություններ

Դասագիրք	Մենագրություն	Ուսումնական ձեռնարկ	Ուսումնամեթոդական ձեռնարկ	Հոդված	Ձեկուցման թեզիս	Արտոնագիր
-	-	-	-	13	-	2

Գիտական և ուսումնամեթոդական հրատարակությունների ցանկ

Հոդված

1. *A. Kostanyan, P. Khnkoyan,* "Computations in Boolean Algebra with Approximation", Fundamenta Informaticae, The Netherlands, Volume 135, Issue 3, 2014, pp. 229-241.
2. *Manukyan M. G.,* "Canonical Model: Construction Principles", ACM, ISBN : 978-1-4503-3001-5, New York, 2014, pp. 320-329.
3. *Y. Zorian, G. Harutyunyan*, "Design, Test & Repair Methodology for FinFET-based Memories", IEEE International Test Conference (ITC), USA, 2014.
4. *G. Harutyunyan, S. Shoukourian, V. Vardanian, Y. Zorian*, "Extending Fault Periodicity Table for Testing Faults in Memories under 20nm", IEEE East-West Design and Test Symposium (EWDTS), Ukraine, 2014, pp. 12-15.
5. *G. Harutyunyan, S. Shoukourian, V. Vardanian, Y. Zorian*, "Extending Fault Periodicity Table for Testing Faults in Memories under 20nm", IEEE East-West Design and Test Symposium (EWDTS), Sochi, Russia, 2014, 4 p..
6. *G. Harutyunyan, Y. Zorian, "*An Effective Embedded Test & Diagnosis Solution for External Memories", IEEE International On-Line Testing Symposium (IOLTS), Greece, 2015, pp. 168-170.
7. *G. Harutyunyan, G. Tshagharyan, Y. Zorian,* "Impact of Parameter Variations on FinFET Faults", IEEE VLSI Test Symposium (VTS), USA, 2015, pp. 145-148.
8. *G. Harutyunyan, G. Tshagharyan, Y. Zorian*, "Test & Repair Methodology for FinFET-Based Memories", IEEE Transactions on Device and Materials Reliability, Vol. 15, No. 1, 2015, pp. 3-9.
9. *T. Grigoryan, H. Malkhasyan, G. Mushyan, V. Vardanian*, "Fault Collapsing For Digital Circuits Based On Relations Between Stuck-At Faults", Submitted to Int'l Conference on Computer Science and Information Technologies (CSIT'15), Yerevan, 2015, pp. 234-237.
10. *A. Avagyan, A. Kostanyan, M. Manukyan, S. Shoukourian*, "Reforming Content and Technology for Educational Programs in Information Technologies", Inter-University Cooperation in Virtualization of Learning Resources, Workshop Proceedings, Yerevan, 2015, pp. 18-23.
11. *A. Avagyan*, "Learning Management System for the Project", Inter-University Cooperation in Virtualization of Learning Resources, Workshop Proceedings, Yerevan, 2015, pp. 35-38.
12. *A. Avagyan*, "Technology Support for Armenian Virtual College", Inter-University Cooperation in Virtualization of Learning Resources, Workshop Proceedings, Yerevan, 2015, pp. 31-34.
13. *A. Avagyan, A. Kostanyan, M. Manukyan*, "The Unified Format for Online Courses Development", Inter-University Cooperation in Virtualization of Learning Resources, Workshop Proceedings, Yerevan, 2015, pp. 39-41.

Արտոնագիր

1. *H. Grigoryan, G. Harutyunyan, S. Shoukourian, V. Vardanian, Y. Zorian*, "Determining a desirable number of segments for a multi-segment single error correcting coding scheme", Patent No.: US 9,053,050, filed on December 2, 2011Date of Patent: June 9, 2015, Appl. No. 13/310,479.
2. *K. Amirkhanyan, H. Grigoryan, G. Harutyunyan, T. Melkumyan, S. Shoukourian, A. Shubat, V. Vardanian, Y. Zorian*, "Detecting random telegraph noise induced failures in an electronic memory", Patent No.: US 8,850,277 B2, filed on July 15, 2011Date of Patent: Sept. 30, 2014, Appl. No.: 13/183,471.

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ԲԱԺԻՆ

Բաժնի ղեկավար՝ *Դանիելյան Նատալյա Ռոբերտի*

Ըստ ընդհանուր ուղղությունների՝ ամբիոնում կատարված աշխատանքների ամփոփում

Հաշվետու ուստարում բաժնում կատարվել են հետևյալ աշխատանքները.

- Անհատական ծանրաբեռնվածության, աշխատանքային և ուսումնական պլանների մուտքագրման ծրագիրը վերամշակվել է նորմերի փոփոխություններին համապատասխան, և ավելացվել են ըստ ամբիոնների, ֆակուլտետների և մասնագիտությունների (առկա, հեռակա, մագիստրատուրա, բակալավրիատ) բեռնվածությունը փաստացի և պլանային ուսանող թվերով համեմատում կատարող հաշվետվությունները:
- Մշակվել է ուսանողների դիմումների ավտոմատ գեներացման ենթահամակարգ:
- Մշակվել է ուսանողներին վերաբերող հրամաններ կազմելու ավտոմատացման ենթահամակարգ, որը հնարավորություն է տալիս հետևելու հրամանների կատարմանը:
- Մշակվել է դասացուցակ կազմելու ավտոմատացման ենթահամակարգ, որը նաև կատարում է համեմատական ստուգումներ դասախոսների անհատական ծանրաբեռնվածությունների, ուսումնական պլանների, լսարանային ֆոնդի և դասացուցակի միջև: Ենթահամակարգը հնարավորություն է տալիս ստանալու տարբեր տեսակի հաշվետվություններ:
- Մշակվել են 2013-2014 և 2014-2015 ուսումնական տարիների համապատասխանաբար 2-րդ և 1-ին կիսամյակների ուսանողական հարցման տվյալները:
- Վերամշակվել են ուսանողների առաջադիմությանը վերաբերող որոշ հաշվետվություններ:
- Իրականացվել են Supervision ծրագրի սպասարկումն ու ընթացիկ թարմացումները:

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԲԱԺԻՆ

Բաժնի ղեկավար՝ *Գրիգորյան Ալվարդ Հասոյի, ֆիզմաթ. գիտ. թեկնածու*

Ըստ ընդհանուր ուղղությունների՝ ամբիոնում կատարված աշխատանքների ամփոփում

Հաշվետու ուստարում բաժնում կատարվել են հետևյալ աշխատանքները.

1. «Կոմպյուտերից օգտվելու հմտություններ» համահամալսարանական առարկայի դասավանդումը ԵՊՀ բոլոր ֆակուլտետների բակալավրիատում: Դասերն անցկացվում են ՏՏԿՀ կենտրոնի հինգ համակարգչային լսարաններում (4-րդ մասնաշենքի կենտրոնական համակարգչային դահլիճ, Ռոմանագերմանական բանասիրության ֆակուլտետի մասնաշենքի երկու համակարգչային սրահներ, Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի մասնաշենքի համակարգչային սենյակ, Հայ բանասիրության ֆակուլտետի մասնաշենքի համակարգչային սենյակ):
2. Բաժինն ապահովում է ԵՊՀ որոշ ֆակուլտետների մագիստրատուրայի «Տեղեկատվական տեխնոլոգիաները մասնագիտության մեջ» առարկայի դասավանդումը: Յուրաքանչյուր մասնագիտության համար մշակվել են դասընթացի պլան-ծրագիրը և գործնական առաջադրանքները:
3. Բաժնի աշխատակիցների կողմից մշակվել են ՀՀ բուհերի և արտերկրի ասպիրանտուրայի (առկա և հեռակա ուսուցման) ընդունելության նախապատրաստական դասընթացի պլան-ծրագիրը, գործնական առաջադրանքների ձեռնարկը, քննության թեստերը, որոնց հիման վրա էլ անցկացվել են նախապատրաստական դասընթացները և ընդունելության քննությունը:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ՆՈՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱ

Լաբորատորիայի ղեկավար՝ *Ավագյան Արթուր Արամայիսի, տեխն. գիտ. թեկնածու, ասիստենտ*

Ըստ ընդհանուր ուղղությունների՝ լաբորատորիայում կատարված գիտական աշխատանքների ամփոփում

Շարունակվել են էլեկտրոնային ուսուցման կրթական գործընթացի կառավարման ունիֆիկացված ներկառուցվածքի մշակման աշխատանքները՝ ոչ մասնագիտական առարկաների առցանց ուսուցման նյութերի բազմաշերտ մատուցման շաբլոնների մշակման ուղղությամբ:

Շարունակվել են կոմբինացված ուսուցմանն աջակցող ծրագրային գործիքների նախագծման և իրականացման նպատակով տարբեր ֆակուլտետներում դասավանդվող ոչ մասնագիտական դասընթացների ընդհանուր պլատֆորմի հենքի վրա միջհամալսարանական էլեկտրոնային կուրսերի կիրառման և կրեդիտների փոխանցման մեխանիզմներ:

Հայկական վիրտուալ համալսարանի շրջանակում շարունակվում է իրականացվել մուլտիմեդիա հարթակի վրա ստեղծված մեդիա էլեկտրոնային գրքերի շարքը: Այն անվճար է և հասանելի է յոթ լեզուներով ու դյուրին է օգտագործման համար:

ՀՎՀ և Հայաստանի շախմատի ակադեմիայի հետ շարունակվում է վերամշակվել «Շախմատի ռազմավարություն» սկսնակ մակարդակի համար նախատեսված և երկու մասերից կազմված էլեկտրոնային անիմացիոն առցանց դասընթացը:

ՀԱՄԱԿԱՐԳԱՅԻՆ ԾՐԱԳՐԱՎՈՐՄԱՆ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱ

Լաբորատորիայի ղեկավար՝ *Թոփչյան Ռուբեն Վարդանի, ֆիզմաթ. գիտ. թեկնածու, դոցենտ*

Լաբորատորիայի հիմնական ուղղվածությունը

Հետազոտական աշխատանքներ են իրականացվել JavaScrtipt լեզվի V8 դինամիկ կոմպիլյատորի միջանկյալ ներկայացումից LLVM բիկոդի թարգմանության ուղղություններով, ինչպես նաև V8 կոմպիլյատորում ավելացվել է ծրագրի մասին ինֆորմացիայի հավաքագրման և կիրառման մոդուլ:

Ըստ ընդհանուր ուղղությունների՝ լաբորատորիայում կատարված գիտական աշխատանքների ամփոփում

Հաշվետու ուստարում բաժնում կատարվել են հետևյալ աշխատանքները.

- V8 դինամիկ կոմպիլյատորում ծրագրի մասին ինֆորմացիայի հավաքագրման և կիրառման մոդուլի ավելացում,
- կոդի կլոնների որոնման մեթոդների մշակում և իրականացում,
- կոդի կլոնների հիման վրա ծրագրերում սխալների որոնման ալգորիթմների մշակում և ավելացում:

Լաբորատորիայի անվանական կրթաթոշակ են ստացել 3 ուսանողներ:

ՈՒԺԵՂ ԴԱՇՏԵՐԻ ՖԻԶԻԿԱՅԻ ԿԵՆՏՐՈՆ

Գիտական ղեկավար և տնօրեն՝ *Ավետիսյան Համլետ Կարոյի, ֆիզմաթ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր*

Կենտրոնի աշխատակիցների կազմը

1. Ավետիսյան Համլետ Կարոյի, ֆիզմաթ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր, գլխավոր գիտաշխատող
2. Ավետիսյան Արա Կարապետի, ֆիզմաթ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր, ավագ գիտաշխատող
3. Մկրտչյան Գառնիկ Ֆելիքսի, ֆիզմաթ. գիտ. դոկտոր, առաջատար գիտաշխատող, լաբորատորիայի վարիչ
4. Սեդրակյան Խաչիկ Վազգենի, ֆիզմաթ. գիտ. դոկտոր, ավագ գիտաշխատող
5. Մարկոսյան Արմենուհի Գևորգի, ֆիզմաթ. գիտ. թեկնածու, ավագ գիտաշխատող
6. Ավչյան Բաբկեն Ռուբենի, ֆիզմաթ. գիտ. թեկնածու, գիտաշխատող
7. Իսրաելյան Սամվել Սամվելի, ֆիզմաթ. գիտ. թեկնածու, գիտաշխատող
8. Լալայան Ասատուր Ալեքսանդրի, ֆիզմաթ. գիտ. թեկնածու, ավագ գիտաշխատող, լաբորատորայի վարիչ
9. Մովսեսյան Հովհաննես Ավետիսի, կենսաբ. գիտ. թեկնածու, կրտսեր գիտաշխատող

Ուսումնաօժանդակ աշխատակիցներ

1. Վարդանյան Սոֆիա Նապոլեոնի, ավագ լաբորանտ
2. Խաչատրյան Լուիզա Միքայելի, ավագ լաբորանտ

Կենտրոնի հիմնական խնդիրները

Կենտրոնի հիմնական խնդիրներն ու նպատակներն են՝ ուժեղ դաշտերի էլեկտրադինամիկայի, լազերային-պլազմային-արագացուցչային ֆիզիկայի, ռենտգենյան քվանտային էլեկտրոնիկայի, նանոկառուցվածքների ոչ գծային էլեկտրադինամիկայի, կոհերենտ ատոմամոլե կուլյար համակարգերի քվանտային օպտիկայի և ինֆորմատիկայի, աստղաֆիզիկական կիրառությունների և կոսմոլոգիայի բնագավառներում տեսական հիմնարար աշխատանքների կատարումը, ինչպես նաև փորձարարական հետազոտություններ լազերային ֆիզիկայի ու նանոտեխնոլոգիաների ոլորտում և դրանց կիրառությունները նանոկենսաբանության ու բժշկության մեջ:

Կենտրոնի գործունեության ուղղությունները

Գիտական հիմնարար, կիրառական-հետազոտական դրամաշնորհների կամ հատուկ նպատակային ծրագրերի շրջանակներում իրականացվող տեսական և փորձարարական հետազոտությունների իրականացումը, արտասահմանյան առաջատար գիտական կենտրոնների հետ հիմնարար և կիրառական նոր նախագծերի մշակումը, միջազգային համագործակցության ծավալումը, ինչպես նաև վերոնշյալ բնագավառներում գիտական կադրերի պատրաստումը:

Ըստ ընդհանուր ուղղությունների՝ կենտրոնում կատարված գիտական աշխատանքների ամփոփում

Գիտական թեմաներ և դրամաշնորհային ծրագրեր

Թեմայի անվանումը	*Ղեկավար*
1. Լազերային դաշտերով ինդուկցված ոչ գծային երևույթների ուսումնասիրությունը և լազերային նանոտեխնոլոգիաների կիրառություններ (պետական ֆինանսավորում):	Ավետիսյան Հ. Կ.
2. Մասնիկ-հակամասնիկ զույգերի ծնումը և անիհիլացիան գերհզոր լազերային դաշտերում (պետական ֆինանսավորում):	Ավետիսյան Հ. Կ.
3. Նանոկառուցվածքների ոչ գծային էլեկտրադինամիկա (պետական ֆինանսավորում):	Ավետիսյան Հ. Կ.

Թեմա 1. Ուսումնասիրվել է էլեկտրոն-պոզիտրոնային զույգերի ծնումը բազմաֆոտոն կանալներով՝ քվանտէլեկտրադինամիկական վակուումի հետ գերհզոր ռենտգենյան ազատ էլեկտրոնային լազերների փոխազդեցության պրոցեսում: Ցույց է տրվել, որ կոշտ ռենտգենյան հաճախությամբ լազերային դաշտերում իրական է Դիրակյան ծովի արդյունավետ գրգռումը բազմաֆոտոն կանալներով:

Ռելյատիվիստիկ քվանտային տեսության շրջանակում ուսումնասիրվել է հզոր ռենտգենյան ճառագայթման ոչ գծային կլանումը պինդմարմնային խտության պլազմայում, ինչը հանգեցնում է գերբարձր ջերմաստիճանների հաստատման: Սա հատկապես կարևոր է, քանի որ մեծ միջուկային կարգաթվով թիրախների դեպքում ռելյատիվիստիկ ջերմաստիճանները հանգեցնում են էլեկտրոն-պոզիտրոնային զույգերի հեղեղային ծնման:

Ցույց է տրվել պինդմարմնային խտության ուլտրառելյատիվիստիկ էլեկտրոնային փնջերի ստացման հնարավորությունը ածխածնային նանոթաղանթներից՝ գերկարճ-գերհզոր լազերային իմպուլսներով: Հետազոտվել է այդպիսի փնջերով մեծ միջուկային կարգաթվով թիրախներից ինտենսիվ գամմա ճառագայթման և էլեկտրոն-պոզիտրոնային զույգերի հեղեղային ծնման հնարավորությունը ոչ գծային կանալներով:

Ուսումնասիրվել է գրգռող ալիքի հարմոնիկների ռեզոնանսային գեներացիան մեծ միջուկային կարգաթվով իոնային համակարգում՝ գերհզոր ռենտգենյան ազատ էլեկտրոնային լազերային դաշտերում: Մասնավորապես ցույց է տրվել, որ բազմաֆոտոն ռեզոնանսային փոխազդեցության շնորհիվ կարելի է ստանալ մեծ ինտենսիվության կոհերենտ կոշտ-ռենտգենյան ճառագայթում:

Կենտրոնի Լազերային կիրառությունների լաբորատորիայում շարունակվել են փորձարարական աշխատանքները լազերային նանոտեխնոլոգիաների ոլորտում: Ուսումնասիրվել են լազերային ճառագայթահարման /աբլացիայի/ միջոցով ստացված մի շարք մետաղական և կիսահաղորդչային նանոմասնիկների հիբրիդ համակարգի ոչ գծային օպտիկական հատկությունները: Հետազոտվել են GaAs նանոմասնիկների լուսարձակման սպեկտրալ առանձնահատկությունների փոփոխությունները՝ կախված գրգռող Nd:YAG լազերի տարածական մոդայի տեսքից:

Առաջարկվել է էլեկտրամագնիսական ճառագայթման ստացման նոր տիպի ոչ ծախսատար աղբյուր տերահերցային տիրույթում: Փորձնականորեն ուսումնասիրվել են վերջինիս հատկությունները, որոնք վկայում են, որ բացահայտված ճառագայթումը արդյունք է ջրի մոլեկուլներում քվանտային անցումների:

Թեմա 2. Հետազոտվել է կոհերենտ գամմա ճառագայթման ստացման հնարավորությունը պոզիտրոնիումի ատոմներից բաղկացած Բոզե կոնդենսատում՝ կոլեկտիվ անիհիլացիայի պայմաններում:

Դիտարկվել է որոշակի ուղղությամբ պոզիտրոնիումի ատոմներից բաղկացած Բոզե կոնդենսատում կոհերենտ գամմա ճառագայթման ստացման հնարավորությունը տարբեր տեսակի թակարդներում, ատոմների փոխազդեցության հաշվառմամբ, և ցույց է տրվել, որ այդ դեպքում ճառագայթման ուժեղացումը իրականանում է միայն առանցքային մոդաների համար:

Ուսումնասիրվել է քվանտէլեկտրադինամիկական վակուումից հարմոնիկների կոհերենտ գեներացիան գերհզոր ռենտգենյան ազատ էլեկտրոնային լազերների հետ փոխազդեցության դեպքում: Ցույց է տրվել, որ հնարավոր է բազմաֆոտոն կանալներով գրգռել Դիրակյան ծովը և էլեկտրոն-պոզիտրոն զույգի անիհիլյացիայի դեպքում ստանալ գրգռող ալիքի հարմոնիկների արդյունավետ գեներացիա:

Ուսումնասիրվել է մասնիկ-հակամասնիկ բաղադրությամբ անհավասարակշիռ պլազմայի ընդարձակման/սեղմման դեպքում առաջացող գամմա ճառագայթման պրոցեսը, քննարկվել են աստղաֆիզիկական կիրառություններ:

Թեմա 3. Ուսումնասիրվել է միջին դիպոլային մոմենտով օժտված եռամակարդակ Λ տիպի ատոմների փոխազդեցությունը քվանտացված միամոդային ճառագայթային դաշտերի հետ բազմաֆոտոն ռեժիմում: Ցույց է տրվել Ռաբի-տատանումների ձևավորման հնարավորությունը կլանված/ճառագայթված մեծ թվով ֆոտոնների դեպքում և ֆոտոնային դաշտի խիստ քվանտային վիճակների առաջացումը այդպիսի համակարգերում:

Ուսումնասիրվել է գերհաղորդիչ կոնտուրների միջոցով իրականացվող L-տիպի եռամակարդակ արհեստական ատոմների փոխազդեցությունը քվանտացված ճառագայթային դաշտերի հետ գերուժեղ կապի ռեժիմում: Ընդհանրացվել է Ջեյնս-Քամմինգսի խնդիրը այս տիպի արհեստական ատոմների համար: Ցույց է տրվել ատոմների և մեծ թվով ֆոտոնների կապված վիճակների առաջացման հնարավորությունը, որն իրական հիմքեր կստեղծի բազմաֆոտոն գրգռման պայմաններում ատոմ-ֆոտոն կոհերենտ-կառավարելի խճճված վիճակների ստեղծման համար:

Զարգացվել է միաշերտ գրաֆենի և արտաքին կոհերենտ ճառագայթային դաշտի փոխազդեցության միկրոսկոպիկ քվանտային տեսություն: Գտնվել է գրաֆենի դինամիկ ոչ գծային հաղորդականությունը օպտիկական տիրույթի համար, երբ էլեկտրոնային սպեկտրում էական է անիզոտրոպիան: Որոշվել են ճառագայթային դաշտի շեմային արժեքները, որոնցից մեծ արժեքների դեպքում կլանման գործակիցը էապես տարբերվում է գծային տեսության շրջանակում ստացված ունիվերսալ հաստատուններով որոշվող արժեքից:

Հրատարակություններ

Դասագիրք	Մենագրություն	Ուսումնական ձեռնարկ	Ուսումնամեթոդական ձեռնարկ	Հոդված	Զեկուցման թեզիս
-	-	-	-	10	3

Գիտական և ուսումնամեթոդական հրատարակությունների ցանկ

Հոդված

1. *H. K. Avetissian, B. R. Avchyan, G. F. Mkrtchian,* Generation of harmonics via multiphoton resonant excitation of hydrogenlike ions in an x-ray free-electron-laser field, Phys. Rev. A, v. 90, 2014, pp. 053812 (1) - 053812 (7).
2. *A. G. Ghazaryan,* Treatment of the Plasma Nonlinear Absorption Law at Linearly Polarized Laser Radiation of Relativistic Intensities, Armenian Journal of Physics, v. 8, 2015, pp. 64-72.

3. *H. K. Avetissian, A. K. Avetissian, G. F. Mkrtchian, O. V. Kibis,* Multiphoton interaction of a qutrit with single-mode quantized field in the ultrastrong and deep strong coupling regimes, quant-ph:1409.1353.v 1, 2014, pp. 1-18.
4. *H. K. Avetissian, A. K. Avetissian, G. F. Mkrtchian, O. V. Kibis,* Multiphoton dynamics of qutrits in the ultrastrong coupling regime with quantized photonic field, JETP, v. 148, 2015, pp. 1-14.
5. *H. K. Avetissian, A. K. Avetissian, G. F. Mkrtchian, O. V. Kibis,* Multiphoton interaction of a qutrit with single-mode quantized field in the deep strong coupling regime, Journal of Nanophotonics, v. 9, 2015, pp. 093064 (1) - 093064 (14).
6. *H. K. Avetissian, A. K. Avetissian, G. F. Mkrtchian,* Gamma-ray laser based on the collective decay of positronium atoms in a Bose-Einstein condensate, Phys. Rev. A, v. 92, 2015, pp. 023820 (1) - 023820 (11).
7. *H. K. Avetissian, A. G. Ghazaryan, H. H. Matevosyan, G. F. Mkrtchian,* Nonlinear absorption of high-intensity shortwave radiation in plasma within relativistic quantum theory, plasma-ph: 1507.03626, v. 1., 2015, pp. 1-8.
8. *H. K. Avetissian, A. K. Avetissian, G. F. Mkrtchian,* Intense Coherent Gamma-Ray Source Based on the Collective Radiation of Positronium Atoms in a Bose-Einstein Condensate, Annual GSI Report "High Energy Density Physics with Intense Ion and Laser Beams", Darmstadt, v. 1, 2015. p. 61.
9. *H. K. Avetissian, B. R. Avchyan, G. F. Mkrtchian,* Multiphoton Excitations and Harmonics Generation in Quantum Electrodynamic Vacuum, Annual GSI Report "High Energy Density Physics with Intense Ion and Laser Beams", Darmstadt, v. 1, 2015. p. 62.
10. *A. A. Lalayan, S. S. Israelyan, H. A. Movsesyan,* Luminescence properties of the hybrid Si-Ni nanoparticles system, cond-mat. mes-hall: 1508.07757, 2015, VI, pp. 1-8.
11. *H. K. Avetissian, H. H. Matevosyan, G. F. Mkrtchian, Kh. V. Sedrakian,* Production of ultrarelativistic electron bunches, gamma-ray and positron fluxes at the interaction of superstrong laser pulses with solid density plasma targets, plasme-ph: 1507. 07359, v. 1, 2015, pp. 1-6.
12. *H. K. Avetissian, A. G. Ghazaryan, H. H. Matevosyan, G. F. Mkrtchian,* Microscopic nonlinear relativistic quantum theory of absorption of powerful x-ray in plasma, Phys. Rev. E, v. 92, 2015, pp. 043103 (1) - 043103 (6).

Զեկուցման թեզիս

1. *H. K. Avetissian, A. K. Avetissian, B. R. Avchyan, G. F. Mkrtchian,* Harmonics generation in quantum electrodynamic vacuum via x-ray free electron laser, International Conference - Laser Interaction with Matter, Paris, France, 31 August - 05 September, 2014.
2. *A. K. Avetissian, A. G. Ghazaryan, S. S. Israelyan, Kh. V. Sedrakian,* Nonlinear absorption of superintense linearly polarized laser radiation in relativistic plasma via bremsstrahlung, ICOPS, The 42nd IEEE International Conference on Plasma Science, 15 December 2014, Belek, Antalya, Turkey.
3. *H. K. Avetissian, B. R. Avchyan, G. F. Mkrtchian, O. V. Kibis,* Non-linear dynamic conductivity of graphene beyond the Dirac cone approximation, Advanced Research Workshop on Fundamental and Applied NanoElectroMagnetics, Minsk, Belarus, May 25-27, 2015.

ՔԱՂԱՔԱԿՐԹԱԿԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ

Կենտրոնի ղեկավար՝ *Հովհաննիսյան Դավիթ Արտաշեսի, բան. գիտ. թեկնածու, պրոֆեսոր, առաջատար գիտաշխատող*

Կենտրոնի աշխատակիցների կազմը

1. Քոչարյան Հայկ Մկրտչի, պատմ. գիտ. թեկնածու, ավագ գիտաշխատող
2. Գևորգյան Աննա Սերգեյի, կրտսեր գիտաշխատող
3. Մկրտչյան Տաթևիկ Սոկրատի, կրտսեր գիտաշխատող
4. Մկրտչյան Սաթենիկ Սոկրատի, կրտսեր գիտաշխատող
5. Սահակյան Նաիրա Էդիկի, լաբորանտ

Կենտրոնի հիմնական խնդիրները

Քաղաքակրթական և մշակութային հետազոտությունների կենտրոնը (ՔՄՀԿ) Երևանի պետական համալսարանի (ԵՊՀ) ինքնուրույն կառուցվածքային ստորաբաժանում է, որն իրականացնում է ֆունդամենտալ հետազոտություններ մշակութաբանության, քաղաքագիտության, աշխարհաքաղաքականության և այլ ոլորտներում: ՔՄՀԿ-ն իրագործում է նաև քաղաքակրթական գործընթացների փորձագիտական վերլուծություն և զբաղվում է ընթացիկ քաղաքական զարգացումների իրադարձային վերլուծությամբ: Հետազոտություններն իրականացվում են Երևանի պետական համալսարանի համապատասխան բաժինների գիտական ներուժի ներգրավմամբ: ՔՄՀԿ-ի նպատակներից է մշակել առաջարկություններ և եզրակացություններ ՀՀ պետական համապատասխան մարմինների համար: Կենտրոնը հրատարակում է վերլուծական տեղեկագրեր, ինչպես նաև մենագրական ուսումնասիրություններ կենտրոնի հետազոտական ուղղվածության թեմաներով:

Կենտրոնի գործունեության ուղղությունները

Կենտրոնում ուսումնասիրություններ են կատարվում հետևյալ հիմնահարցերի շուրջ.

- «Ինքնության և արժեքային համակարգերի մրցակցության խնդիրները գլոբալացման պայմաններում»,
- «Հայ-թուրքական հարաբերությունները՝ արժեքաբանական տեսանկյունից»,
- ««Մեծ Միջին Արևելք» ծրագրի հիմնադրույթները և Հայաստանը»,
- «Ենթամշակութային համակարգեր և արժեքային համակարգերի մրցակցություն»,
- «Մշակութային ադապտացիոն մեխանիզմների դերը և առանձնահատկությունները»,
- «Տարածաշրջանային անվտանգության համակարգեր և Իրան-ԱՄՆ հարաբերություններ»,
- «Արևելյան գործընկերություն» ծրագիրը և Հայաստանը:

Ըստ ընդհանուր ուղղությունների՝ կենտրոնում կատարված գիտական աշխատանքների ամփոփում

Թեմա 1. «Երեք ծովերի համակարգ» հայեցակարգը (ղեկավար՝ Հովհաննիսյան Դ. Ա.) հնարավորություն է տալիս ներկայացնելու ժամանակակից աշխարհաքաղաքական, աշխարհատնտեսական, քաղաքական և տեղեկատվական գործընթացները՝ ժամանակի և տարածության կատեգորիաների փոփոխության, այն է՝ աշխարհընկալման և աշխարհի պատկերի ձևավորման սկզբունքորեն նոր պայմաններում: Հայեցակարգը համալիր մոտեցմամբ դիտարկում և վերլուծում է այն նոր իրողությունները, որոնք փոխել են ժամանակակից քաղաքական, տնտեսական, մշակութային և հասարակական երևույթների ընկալման էությունը: Դիտարկման կենտրոնում ունենալով Միջերկրական, Սև և Կասպից ծովերի ավազանները և դրանց կոմունիկացիոն արեալների մեջ ընդգրկված տարածքները՝ հայեցակարգը իր ամբողջականության մեջ է դիտարկում այս մեգառեգիոնում տեղի ունեցող գործընթացները, վեր հանում տեղի ունեցող տարատեսակ կոնֆլիկտների իրական պատճառները, բացատրում համաշխարհային ուժային կենտրոնների որոշումների և իրականացվող ծրագրերի իրական դրդապատճառները: Հատուկ ուշադրություն է դարձվում ցանցայնացման համաշխարհային գործընթացներին:

«Երեք ծովերի համակարգ» հայեցակարգում տարատեսակ խզումների ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս բավականին բարձր ճշգրտությամբ կանխագուշակելու այդ մեգառեգիոնում իրադարձությունների զարգացումը: Թեման պլանավորվում է ավարտել 2016 թ.-ին: «Երեք ծովերի համակարգը» թեմայի վերաբերյալ հետազոտությունները նախատեսված են տպագրել կենտրոնի «Վերլուծական տեղեկագրի» առաջիկա համարում:

Թեմա 2. «Հանրային դիսկուրս և գենդերային կարծրատիպեր» ծրագրի (ղեկավար՝ Գևորգյան Ա. Ս.) շրջանակում շարունակվում են ուսումնասիրվել Հայաստանի հանրային ու քաղաքական դիսկուրսներում գենդերային կարծրատիպերի վերարտադրության մեխանիզմները: Հաշվետու ժամանակահատվածում կատարվել է քաղաքացիական շարժումներում կանանց մասնակցության մասին հանրային ու քաղաքական գործիչների ելույթների վերլուծություն՝ դրանցում առկա կարծրատիպերի վերհանման նպատակով: Առաջիկայում ծրագրով նախատեսվում է ուսումնասիրել խորհրդային կանանց կերպարների կերտման առանձնահատկությունները հայ խորհրդային տպագիր մամուլում: Ծրագիրը նախատեսվում է ավարտել 2016 թվականի վերջում:

Թեմա 3. «Իսնաաշարիական սկզբնաղբյուրների ուսումնասիրությունը որպես ժամանակակից Իրանի Իսլամական Հանրապետության (ԻԻՀ) մշակութային և քաղաքակրթական համակարգերի ուսումնասիրության աղբյուր» թեմայի (ղեկավար՝ Մկրտչյան Տ. Ս.) ուսումնասիրությունը պլանավորվում է ավարտին հասցնել 2016 թ.-ին: Հաշվետու տարում կատարվել են նյութի հավաքագրման, համակարգման, ինչպես նաև թարգմանչական աշխատանքներ: Ուսումնասիրության ենթարկվող շիայական միջնադարյան սկզբնաղբյուր «Նահջ ալ-Բալաղայի» թեմայով պատրաստվում է պաշտպանել ատենախոսություն: Թեմայի վերաբերյալ պատրաստվել են զեկույցներ և ներկայացվել տեղական և միջազգային գիտաժողովներում: Հաշվետու տարում ավարտին են հասցվել ատենախոսության առաջին և երկրորդ գլուխները, ինչպես նաև երկու հավելված: Բացի միջնադարյան աղբյուրների ուսումնասիրությունից՝ կատարվել է հետազոտություն նաև ժամանակակից Իրանի Իսլամական կառավարման («Վելայաթե ֆաղիհ») տեսության և ԻԻՀ-ի արտաքին հարաբերությունների ձևավորման փոխազդեցությունների թեմայով: Իրանի արտաքին հարաբերությունների ձևավորման վրա կրոնական կառավարման ազդեցության թեմայով զեկուցումներ և հոդվածներ են պատրաստվել թե՛ տեղական և թե՛ միջազգային հրատարակություններում: Այս համատեքստում առանձնահատուկ ուշադրության են արժանացել Իրան-Հարավային Կովկաս փոխհարաբերությունները:

Թեմա 4. Հաշվի առնելով վերջին շրջանում դեպքերի զարգացումը Մերձավոր Արևելքում և Հյուսիսային Աֆրիկայում՝ «Ադապտացիոն գործընթացները Մերձավոր Արևելքում» թեմայի (ղեկավար՝ Քոչարյան Հ. Մ.) ուսումնասիրության ժամկետները երկարաձգվել են ևս մեկ տարով, և պլանավորվում է ավարտել 2017 թ.-ին: Հաշվետու տարում ուսումնասիրվել են մերձավորարևելյան պետությունների ներքաղաքական զարգացումները, հասարակական ու մշակութային գործընթացները մերձավորարևելյան առանձին պետություններում և Մերձավոր Արևելքում ընդհանրապես: Ուշադրության կենտրոնում եղել են հիմնականում «Իսլամական պետություն» խմբավորման գործունեությունը և դրա արդյունքում ձևավորված նոր աշխարհաքաղաքական իրավիճակը Մերձավոր Արևելքում: Հրատարակման է պատրաստվել թեմային առնչվող մեկ հոդված: Ուսումնասիրվող խնդիրները ներկայացվել են տեղական և միջազգային գիտաժողովներում: Պարբերաբար լրատվամիջոցներով լուսաբանվել են Մերձավորարևելյան տարածաշրջանի հիմնախնդիրները:

Հաշվետու ուստարում կենտրոնում կայացել են հետևյալ քննարկումները, զեկուցումները, կլոր սեղանները և սեմինարները.

- 25 սեպտեմբերի, 2014, «Մերձավոր Արևելքում տիրող իրադրությունը. «Իսլամական պետությունը-1»: Զեկուցող՝ Դ. Հովհաննիսյան:
- 26 նոյեմբերի, 2014, «Մերձավոր Արևելքում տիրող իրադրությունը. «Իսլամական պետությունը-2»: Զեկուցողներ՝ Հ. Քոչարյան, Ս. Գրիգորյան:
- 20 փետրվարի, 2015, «Երեք ծովերի համակարգ-1» թեմայով զեկույց-քննարկում (լեզուն՝ հայերեն): Զեկուցող՝ Դ. Հովհաննիսյան:
- 26 մարտի, 2015, «Իսլամական պետությունը և մերձավորարևելյան զարգացումները», թեմայով քննարկում:
- 2 ապրիլի, 2015, «Բասկերի երկրի դասերը Լեռնային Ղարաբաղի հակամարտության համատեքստում» զեկույցի ներկայացում-քննարկում:
- 21 մայիսի, 2015, «Երեք ծովերի համակարգ-2» թեմայով զեկույց–քննարկում (լեզուն՝ հայերեն): Զեկուցող՝ Հ. Քոչարյան:
- 11 հունիսի, 2015, «Փոփոխվող աշխարհ և Հայաստան» դասախոսություն-քննարկում, դասախոս՝ Դ. Հովհաննիսյան:
- 18 հունիսի, 2015, «Տրանսֆորմացիոն գործընթացները Մերձավոր Արևելքում և Հայաստանը» կլոր սեղան-քննարկում:
- 2 հուլիսի, 2015, «Երեք ծովերի համակարգ-3», զեկուցողներ՝ Տ. Մկրտչյան, Ն. Սահակյան, Ա. Գևորգյան:

«Քաղաքակրթությունից քաղաքականություն» Լրատվական ռադիոյի և ԵՊՀ ՔՄՀԿ-ի համատեղ ծրագիր

1. Հայկ Քոչարյան, Սարգիս Գրիգորյան, Դեր Զորի եկեղեցու պայթյունի հետքերով, 23 սեպտեմբերի, 2014, (http://lratvakan.am/?p=40400&l=am/der+zori+ekexecu+paytyuni+hetqerov+qaxaqakrtutyunic+qaxaqakanutyun):
2. Հայկ Քոչարյան, Սարգիս Գրիգորյան, Թուրքերն ու Իսլամական խալիֆայությունը, 30 սեպտեմբերի, 2014, (http://lratvakan.am/?p=40501&l=am/turqernvo%D6%82+islamakan+xalifayutyuny+qaxaqakrtutyunic+qaxaqakanutyun):

3. Գոռ Գևորգյան, Հանրապետական Եգիպտոս, 24 հոկտեմբերի, 2014, (http://lratvakan.am/?p=40798&l=am/hanrapetakan+egiptos+qaxaqakrtutyunic+qaxaqakanutyun:
4. Սևակ Քարամյան, Եվրասիականության ակունքները՝ սլավոնաթուրքական դաշինք, 4 նոյեմբերի, 2014, (http://lratvakan.am/?p=40927&l=am/evrasiakanutyan+akunqnery+slavonaturqakan+dashinq):
5. Սևակ Քարամյան, Ռուսաստանը Եվրոպա չէ, եվրասիական երկիր է, 25 նոյեմբերի, 2014, (http://lratvakan.am/?p=41294&l=am/rusastany+evropa+che+evrasiakan+erkir+e+qaxaqakrtutyunic+qaxaqakanutyun):
6. Սարգիս Գրիգորյան, Իսլամական աշխարհ. ամփոփիչ թողարկում, 23 դեկտեմբերի, 2014, (http://lratvakan.am/?p=41749&l=am/islamakan+ashxarh+ampopich+toxarkum+qaxaqakrtutyunic+qaxaqakanutyun):
7. Աննա Գևորգյան, Նաիրա Սահակյան, Ալլահի առյուծներն ընդդեմ «ֆրանսիական մատիտի», 26 հունվարի, 2015, (http://lratvakan.am/?p=42023&l=am/allahi+aryucnern+ynddem+fransiakan+matiti+tarbervox+verlucutyun):
8. Աննա Գևորգյան, Հետաքրքիր մանրամասներ իսլամական հեղափոխությունից. Իրանը 36 տարի առաջ և այսօր, 10 փետրվարի, 2015, (http://lratvakan.am/?p=42314&l=am/hetaqrqir+manramasner+islamakan+hexapoxutyunicirany+36+tari+araj+ev+aysor):
9. Նաիրա Սահակյան, Ահաբեկչությունից՝ ջիհադ և հակառակը. պատմական ակնարկ, 20 փետրվարի, 2015, (http://lratvakan.am/?p=42470&l=am/ahabekchutyunic%D5%9D+jihad+ev+hakaraky+patmakan+aknarkqaxaqakrtutyunic+qaxaqakanutyun):
10. Սարգիս Գրիգորյան, «Իսլամական պետությունն» ու 100- ամյակը, 1 մարտի, 2015, (http://lratvakan.am/?p=42615&l=am/+islamakan+petutyunvo%D6%82+100-+amyakyqaxaqakrtutyunic+qaxaqakanutyun):
11. Աննա Գևորգյան, Ամեն ինչ Նովրուզի մասին, 17 մարտի, 2015, (http://lratvakan.am/?p=42916&l=am/amen+inch+novruzi+masin+qaxaqakrtutyunic+qaxaqakanutyun):
12. Հայկ Քոչարյան, Եմենում «արաբական գարուն» չէ, 2 ապրիլի, 2015, (http://lratvakan.am/?p=43218&l=am/emenum+arabakan+garun+che+qaxaqakrtutyunic+qaxaqakanutyun):
13. Աննա Գևորգյան, «Հարեմի գեղեցկուհիները» հայտնի լուսանկարների հետքերով, 7 ապրիլի, 2015, (http://lratvakan.am/?p=43296&l=am/haremi+gexeckuhinery+haytni+lusankarneri+hetqerov+):
14. Մարատ Յավրումյան, Հայ գրականությունը Քո գրպանում. թվային գրքեր, 12 մայիսի, 2015, (http://lratvakan.am/?p=43750&l=am/hay+grakanutyuny+qo+grpanum+tvayin+grqer):
15. Սարգիս Գրիգորյան, Կառավարելի քաոս, ո՞ւր կհասնի այն, 26 մայիսի, 2015, (http://lratvakan.am/?p=43992&l=am/karavareli+qaosvo%D6%82r+khasni+ayn+qaxaqakrtutyunic+qaxaqakanutyun):
16. Հայկ Քոչարյան, Կարծրատիպեր «Իսլամական պետության» շուրջ, 2 հունիսի, 2015, (http://lratvakan.am/?p=44113&l=am/karcratiper+islamakan+petutyan+shurjqaxaqakrtutyunic+qaxaqakanutyun):
17. Հայկ Քոչարյան, Աննա Գևորգյան, «Սուրբ ամիս» է՝ Ռամադան կամ Ռամազան, 3 հուլիսի, 2015, (http://lratvakan.am/?p=44717&l=am/surb+amis+e%D5%9D+ramadan+kam+ramazanqaxaqakrtutyunic+qaxaqakanutyun):

Հրատարակություններ

Դասա-գիրք	Մենագրու-թյուն	Ուսումնական ձեռնարկ	Ուսումնամեթոդա-կան ձեռնարկ	Հոդված	Զեկուցման թեզիս	«Վերլուծական տեղեկագիր»
-	2	-	-	12	2	1

Գիտական և ուսումնամեթոդական հրատարակությունների ցանկ

Մենագրություն

1. *Հ. Մ. Քոչարյան, Հ. Վ. Հովհաննիսյան, Մ. Մ. Յավրումյան*, Կրոնական գործոնը հայ-թուրքական հարաբերություններում՝ նոր ադապտացիոն մեխանիզմների մշակման գործում, Հեղին. հրատ., Երևան, 2014, 84 էջ:
2. *H. M. Kocharyan, H. V. Hovhannisyan, M. M. Yavrumyan,* The religious factor in Armenia-Turkey relations and in the development of new mechanisms of adaptation, Yerevan, 2014, 77 p..

Հոդված

1. *Դ. Ա. Հովհաննիսյան,* Սուննիական ծայրահեղականության դրսևորումները. «ներկան» և «ապագան», «Վերլուծական տեղեկագիր», հ. 7, ԵՊՀ հրատ., Երևան, 2015, էջ 9-30:
2. *Ն. Է. Սահակյան,* Խալիֆայության սուննիական տեսության պատմական զարգացումը, «Վերլուծական տեղեկագիր», հ. 7, ԵՊՀ հրատ., Երևան, 2015, էջ 31-71:
3. *Տ. Ս. Մկրտչյան,* «Իսլամական պետությունը» և ԱՄՆ քաղաքականությունը. վերլուծական կենտրոնների արձագանքները, «Վերլուծական տեղեկագիր», հ. 7, ԵՊՀ հրատ., Երևան, 2015, էջ 101-137:
4. *Ա. Ս. Գևորգյան,* Իրանի արձագանքը «Իսլամական պետություն» կազմակերպության գործողություններին, «Վերլուծական տեղեկագիր», հ. 7, ԵՊՀ հրատ., Երևան, 2015, էջ 150-171:
5. *Հ. Մ. Քոչարյան,* «Իսլամական պետության» ածխաջրածնային հզորությունները, «Վերլուծական տեղեկագիր», հ. 7, ԵՊՀ հրատ., Երևան, 2015, էջ 194-216:
6. *Դ. Ա. Հովհաննիսյան, Ն. Է. Սահակյան,* Գլոբալ հակամարտությունը և «ծաղրանկարային պատերազմը» հեղինակների մասին, «Վերլուծական տեղեկագիր», հ. 7, ԵՊՀ հրատ., Երևան, 2015, էջ 272-290:
7. *Ն. Է. Սահակյան,* Ոչ մուսուլմանների իրավունքներն «Իսլամական պետությունում», «Տարածաշրջանային խնդիրներ», № 1 (6), Երևան, 2015, էջ 51-60:
8. *Ն. Է. Սահակյան,* Ֆաթվան՝ որպես տեղեկատվական-հոգեբանական պատերազմի գործիք (Սիրիական ճգնաժամի օրինակով), «Արաբագիտական ուսումնասիրություններ», Հ. 7, ԵՊՀ հրատ., Երևան, 2014, էջ 131-147:
9. *Տ. Ս. Մկրտչյան*, Nahǧ al-balāġā-ի «հեղինակային» խնդրի քննարկումը միջնադարյան սուննի գիտնականների շրջանում, «Արաբագիտական ուսումնասիրություններ», Հատոր 7, ԵՊՀ հրատ., Երևան, 2014, էջ 160-182:
10. *Ա. Ս. Գևորգյան,* Հիջաբն ըստ Մորթեզա Մոթահարիի, «Արաբագիտական ուսումնասիրություններ», Հ 7, ԵՊՀ հրատ., Երևան, 2014, էջ 147-159:
11. *S. S. Mkrtchyan*, Constructing national identities through general education: religion in Armenian schools, Religion, Nation and Demcoracy in the South Caucasus, Edited by Alexandr Agadjanian, Ansgar Jodicke and Evert van der Zweerde, Routledge, 2014, pp. 149-162.

12. *T. S. Mkrtchyan*, Shi'a politics, "strategic culture" and Iran's relations with the South Caucasus, Religion, Nation and Demcoracy in the South Caucasus, Edited by Alexandr Agadjanian, Ansgar Jodicke and Evert van der Zweerde, Routledge, 2014, pp. 221-237.

Զեկուցման թեզիս

1. *Ն. Է. Սահակյան,* Սրբազանի և առօրեականի հարաբերակցության փոփոխությունը իբն Զուբայրի «Ռիհլայում», «Միգրացիան գիտակարգերի խաչմերուկում» աշխատաժողով, Երևան, 2014, էջ 7:
2. *Т. С. Мкртчян,* "Нахдж ал-Балага" как пример средневековой историографической полемики, Третья международная научная конференция, Мир Ислама: История, Общество, Культура, 22-24 Октября 2014, Программа конференции, Москва, 2014, с. 18.

«Վերլուծական տեղեկագիր»

1. «Վերլուծական տեղեկագիր», h. 6, Հոդվածների ժողովածու, ԵՊՀ հրատ., Երևան, 2015, 300 էջ:

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ

Կենտրոնի տնօրեն, գիտական ղեկավար՝ *Ղազինյան Արթուր Գագիկի, իրավ. գիտ. թեկնածու, դոցենտ, առաջատար գիտաշխատող*

Կենտրոնի մասնագիտությունները եւ մասնագիտացումները

Շիֆր	**Մասնագիտություն՝**
032700	Եվրոպագիտություն
Մասնագիտացումներ՝ **(մագիստրոսական ծրագրեր)**	Եվրոպական ուսումնասիրություններ Մարդու իրավունքներ և ժողովրդավարացում

Կենտրոնի աշխատակիցների կազմը

1. Մարտիրոսյան Վլադիմիր Էդուարդի, քաղ. գիտ. թեկնածու, դոցենտ, ավագ գիտաշխատող
2. Ալեքսանյան Աշոտ Սեյրանի, քաղ. գիտ. թեկնածու, դոցենտ, գիտաշխատող
3. Ալեքսանյան Արուսյակ Սեմյոնի, քաղ. գիտ. թեկնածու, գիտաշխատող
4. Անափիոսյան Արևիկ Վարդանի, կրտսեր գիտաշխատող
5. Գրիգորյան Տիգրան Ալեքսանդրի, իրավ. գիտ. թեկնածու, կրտսեր գիտաշխատող
6. Կարապետյան Լիլիթ Սամվելի, կրտսեր գիտաշխատող
7. Կարապետյան Քնարիկ Գագիկի, կրտսեր գիտաշխատող

Կենտրոնի հիմնական խնդիրները

1. «Եվրոպական ուսումնասիրություններ» միջմասնագիտական մագիստրոսական ծրագրի կոորդինացում,
2. «Մարդու իրավունքներ և ժողովրդավարացում Կովկասում» մագիստրոսական ծրագրի կոորդինացում,
3. Գիտական և միջմասնագիտական հետազոտությունների նախաձեռնում և իրականացում ԵՄ, ԵՄ-Հայաստան, ԵՄ-Հարավային Կովկասի առանձին հիմնախնդիրների համագործակցության վերաբերյալ,
4. Ներպետական, տարածաշրջանային և կարևորագույն ոլորտներին վերաբերող միջմասնագիտական ծրագրերի հետազոտություն,
5. ԵՄ տեղեկատվական կենտրոն (EUi) Ռեսուրս կենտրոնի ընդլայնում և կատարելագործում,
6. Եվրոպական ճանաչված համալսարանների և կենտրոնների հետ համագործակցություն:

Կենտրոնի գործունեության ուղղությունները

Կենտրոնը, լինելով ԵՄ ուսումնասիրությունների ոլորտում մասնագիտացած կրթական և գիտահետազոտական ինստիտուտ, 2008 թ.-ից իրականացնում է «Եվրոպական ուսումնասիրություններ» միջմասնագիտական մագիստրոսական ծրագիրը: Եվրոպական ուսումնասիրությունների կենտրոնը շարունակում է կատարելագործել «Եվրոպական ուսումնասիրություններ» միջմասնագիտական մագիստրոսական ծրագիրը, որը պատրաստում է ուսանողներ ԵՄ հաստատություններում, միջազգային կազմակերպություններում, պետական հաստատություններում և խոշոր ընկերություններում աշխատելու և փորձ ձեռք բերելու համար: 2014-2015 թթ. ընթացքում ևս ներդրվել են նոր առարկաներ՝ «ԵՄ էներգետիկ անվտանգություն» և «Միջազգային տնտեսական կազմակերպություններ», կապեր հաստատվել եվրոպական ուսումնասիրություններով զբաղվող եվրոպական հեղինակավոր համալսարանների և կենտրոնների հետ, ինչպես նաև իրականացվել են բազմաթիվ փոխայցելություններ առաջադեմ փորձի փոխանակման նպատակով:

2011 թ.-ից կենտրոնն իրականացնում է Հայաստանում և տարածաշրջանում նախադեպը չունեցող «Մարդու իրավունքներ և ժողովրդավարացում Կովկասում» մագիստրոսական ծրագիր: Այն իրականացվում է 4 գործընկեր համալսարանների կողմից (Երևանի պետական համալսարան, Կիևի Տարաս Շևչենկոյի ազգային համալսարան, Բելառուսի պետական համալսարան և Ի. Ջախիաշվիլու անվ. Թբիլիսիի պետական համալսարան): Ծրագիրը տրամադրում է ուսանողներին մարդու իրավունքների և ժողովրդավարացման ոլորտում համապարփակ գիտելիքներ: Այն նախատեսում է ուսանողների և դասախոսների փոխանակում, ուսուցողական այցեր ԵՄ ինստիտուտներ, վերապատրաստում ծրագրին մասնակից երկրներում: Ծրագրի տևողությունն է մեկ տարի:

Եվրոպական ուսումնասիրությունների կենտրոնում գործում է ԵՄ ռեսուրս կենտրոնը, որն իր կազմում ունի ԵՄ իրավունքի, տնտեսագիտության, քաղաքագիտության, սոցիոլոգիայի և պատմության ոլորտներում ամենահարուստ գրադարան: Կենտրոնի տվյալների բազան պարբերաբար համալրվում է ԵՄ պաշտոնական տեղեկագրերով, ԵՄ ինստիտուտների կողմից ընդունված նորմատիվ իրավական ակտերով, հետազոտություններով: 2012 թ. սկսած կենտրոնի դասախոսներին և ուսանողներին հնարավորություն է ընձեռվել ռեսուրս կենտրոնի շրջանակում օգտվել JSTOR էլեկտրոնային գրադարանից:

Ըստ ընդհանուր ուղղությունների՝ կենտրոնում կատարված գիտական աշխատանքների ամփոփում

Արտասահմանյան դրամաշնորհներ

Թեմայի անվանումը	*Ղեկավար*
1. «Մարդու իրավունքներ և ժողովրդավարացում Կովկասում» մագիստրոսական ծրագիր (EIUC/YER/2014/8/1):	Ղազինյան Ա. Գ.

Թեմա 1. 2013 թ.-ից կենտրոնը համագործակցում է Վենետիկի Եվրոպական միջհամալսարանական կենտրոնի հետ: Ծրագրով համագործակցություն է սկսվել նաև Գլոբալ Կամպուսի /Վենետիկի EIUC համալսարանի ղեկավարությամբ/ շրջանակում, որը միավորում է «Մարդու իրավունքներ և ժողովրդավարացում» տարածաշրջանային մագիստրոսական վեց ծրագրերը և նորաստեղծ միջերկրյածովյան տարածաշրջանային ծրագիրը: 2014 թ. Գլոբալ Կամպուսի շրջանակում իրականացվել են մի շարք համատեղ ծրագրեր՝ «Մարդու իրավունքներ և ժողովրդավարացում» տարածաշրջանային մագիստրոսական ծրագրի շրջանավարտների աշխատանքային տարեկան հանդիպումներ, համատեղ հետազոտություններ, Գլոբալ Կամպուսի լսարանի կազմակերպում, որի շրջանակում յուրաքանչյուր ծրագրից երեքական ուսանող մասնակցելու են մեկշաբաթյա հատուկ դասընթացների:

Կենտրոնում կատարված այլ աշխատանքների մասին:

«Եվրոպական ուսումնասիրությունների կենտրոն» գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային ֆինանսավորման ծրագրի և կենտրոնի գործառույթների իրականացման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով 2014-2015 թթ. ընթացքում շարունակվել է համագործակցությունը Մեծ Բրիտանիայի Էսեքսի համալսարանի պատմության ֆակուլտետի և Մարդու իրավունքների կենտրոնի հետ: Համագործակցության շրջանակում իրականացվել է մագիստրոսական ծրագրերի դասախոսների վերապատրաստում, ինչպես նաև կիրառվել է կրկնակի գնահատում:

Հաշվետու ուստարում ԵՄ հեղինակավոր համալսարանների և հաստատությունների ներկայացուցիչները դասախոսություններ են կարդացել Եվրոպագիտության մագիստրոսական ծրագրի ուսանողների համար: 2014 թ. կենտրոնում մեկշաբաթյա դասընթացներ են վարել Տարտուի համալսարանի իրավաբանության ֆակուլտետի երկու հրավիրյալ դասախոսներ՝ Ռենե Վարկը և Լաուրի Մելքսոնը:

Եվրոպական ուսումնասիրությունների կենտրոնի ընթացիկ գործունեության մեջ կարևոր տեղ է զբաղեցնում հետազոտական բաղադրիչը, որի շրջանակում կենտրոնի փորձագետները փորձում են համալիր հետազոտության ենթարկել ՀՀ-ԵՄ և Հարավային Կովկաս-ԵՄ ձևաչափով ընթացող համագործակցության առանձին հիմնախնդիրները: 2014-2015 թթ. կենտրոնի փորձագետներն իրականացրել են «Ժողովրդավարության մակարդակի ինդեքսը. Հայաստանի, Վրաստանի, Ադրբեջանի, Ռուսաստանի, Բելառուսի, Ղազախստանի, Ուկրաինայի և Մոլդովայի համեմատական միջերկրային վերլուծություն» թեմայով հետազոտությունը /հայերեն/: Միջազգային մակարդակում իրականացված հետազոտության արդյունավետությունն ընդգծելու համար այն թարգմանվել է անգլերեն:

Կենտրոնը 2014-2015 թթ. ընթացքում շարունակել է համագործակցությունը ՀՀ Կառավարության, ՀՀ արտաքին գործերի նախարարության, ՀՀ սփյուռքի նախարարության հետ: ՀՀ Սփյուռքի նախարարության համագործակցության ընթացքում կենտրոնի փորձագետներն իրականացրել են հետազոտություն, որը տպագրվել 2015 թ. հունվարին:

Հրատարակություններ

Դասա-գիրք	Մենագրու-թյուն	Ուսումնական ձեռնարկ	Ուսումնամեթոդական ձեռնարկ	Հոդված	Ձեկուցման թեզիս	Հետազոտու-թյուն
-	-	-	-	-	-	3

Գիտական և ուսումնամեթոդական հրատարակությունների ցանկ

Հետազոտություն

1. *Լ. Ս. Կարապետյան, Լ. Լ. Միրզոյան, Վ. Գրիգորյան,* «Հայկական կտակների իրավական դաշտի ուսումնասիրություն» հետազոտական աշխատանք, Երևան, 2014, 147 էջ:
2. *Ա. Ալեքսանյան, Ա. Ալեքսանյան, Ա. Անաիիոսյան, Ա. Ղազինյան, Վ. Հունանյան, Ա. Սարկիսյան,* «Ժողովրդավարության մակարդակի ինդեքսի համեմատական վերլուծություն. Հայաստան, Վրաստան, Ադրբեջան, Ռուսաստան, Բելառուս, Ղազախստան, Ուկրաինա, Մոլդովա» վերլուծություն, ԵՊՀ հրատ., Երևան, 2015, 352 էջ:
3. *Arusyak Aleksanyan, Arthur Ghazinyan, Ashot Aleksanyan, Arevik Anapiosyan, Vahan Hunanyan, Anna Sarkisyan,* Comparative analysis of the index of Democracy level: Armenia, Georgia, Azerbaijan, Russia, Belarus, Kazakhstan, Ukraine and Moldova, YSU press, Yerevan, 2015, p. 296.

ԱԿԱԴԵՄԻԿՈՍ ԱԼԵՔՍԵՅ ՄԻՍԱԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԵՌԱՆԿԱՐԱՅԻՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ

Գիտական ղեկավար՝ *Պողոսյան Գեորգի Սամվելի, ֆիզմաթ. գիտ. դոկտոր, գլխավոր գիտաշխատող*

Կենտրոնի աշխատակիցների կազմը

1. Բալաբեկյան Անահիտ Ռաֆիկի, ֆիզմաթ. գիտ. դոկտոր, առաջատար գիտաշխատող
2. Մարդոյան Լևոն Գրիշայի, ֆիզմաթ. գիտ. դոկտոր, ավագ գիտաշխատող
3. Դանագուլյան Ալիտա Սերգեյի, ֆիզմաթ. գիտ. դոկտոր, ավագ գիտաշխատող
4. Հովսեփյան Աշոտ Արտավազդի, ֆիզմաթ. գիտ. թեկնածու, գիտաշխատող
5. Աբրահամյան Խաչիկ Հունանի, ֆիզմաթ. գիտ. թեկնածու, գիտաշխատող
6. Հովհաննիսյան Գոհար Հովհաննեսի, ֆիզմաթ. գիտ. թեկնածու, գիտաշխատող
7. Մելյան Էլմիրա Արայիկի, ավագ լաբորանտ
8. Խաչատրյան Անահիտ Արթուրի, լաբորանտ
9. Մկրտչյան Հասմիկ Սասունի, լաբորանտ

Կենտրոնի հիմնական խնդիրները

1. Գիտական հետազոտությունների կատարում տեսական և մաթեմատիկական ֆիզիկայի, ինչպես նաև միջուկային և տարրական մասնիկների ֆիզիկայի բնագավառներում:
2. Միջուկային հետազոտությունների միացյալ ինստիտուտի (ՄՀՄԻ) հետ միջազգային գիտական միջոցառումների՝ գիտաժողովների, թեմատիկ հանդիպումների, սեմինարների, գիտական դպրոցների կազմակերպում:

Կենտրոնի գործունեության ուղղությունները

Կենտրոնի գործունեության ուղղություններն են՝

1. *Տեսական ֆիզիկայի բնագավառում՝* ինտեգրվող և սուպերինտեգրվող համակարգերի սիմետրիաների հետազոտություն:
2. *Փորձարարական միջուկային ֆիզիկայի բնագավառում՝* միջուկային ռեակցիաների ուսումնասիրումը բարձր էներգիաներով մասնիկների և իոնների ազդեցությամբ: Բժշկական ռադիոիզոտոպների հատկությունների ուսումնասիրումը ցածր էներգիաներով ֆոտոնների փնջի ազդեցությամբ:
3. *Տարրական մասնիկների ֆիզիկայի բնագավառում՝* ՄՀՄԻ նուկլոտրոնի ներքին փնջերի վրա կատարված փորձարկումներում ստացված չեզոք (նեյտրալ) մեզոնների ծնման փորձարարական տվյալների մշակում:
4. ՄՀՄԻ հետ «Symphys» միջազգային գիտաժողովների շարքի և «Symmetry and integrable systems» երիտասարդ գիտնականների դպրոցի կազմակերպում:
5. ՄՀՄԻ-ից և այլ միջազգային կենտրոններից հրավիրված, բարձր որակավորում ունեցող մասնագետների միջոցով ուսումնական գործընթացի կատարելագործում:

Ըստ ընդհանուր ուղղությունների՝ կենտրոնում կատարված գիտական աշխատանքների ամփոփում

Դրամաշնորհային ծրագրեր

Թեմայի անվանումը	*Ղեկավար*
1. Փոփոխականների անջատում, քվանտային սինգուլյար պոտենցիալներ և երկու և երեք չափանի Լոբաչևսկու և (անտի) դե-Սիտտերի տարածություններում Լիի հանրահաշվի կոնտրակցիաներ (պետական ֆինանսավորում):	Պողոսյան Գ. Ս.
2. Դե-Սիտտերի և անտի դե-Սիտտերի տարածությունների երկրաչափության վրա հիմնված ճշգրիտ լուծվող դասական և քվանտային համակարգերի որոնումը և հետազոտումը (պետական ֆինանսավորում):	Պողոսյան Գ. Ս.

Թեմա 1. Այդ հետազոտությունների հիմքում ընկած է թեմայի ղեկավար Գ. Ս. Պողոսյանի և Պ. Վինտերնիցի համատեղ աշխատանքը («Journal of Mathematical Physics», Vol. 43 (6), 3387, 2002), որտեղ առաջին անգամ ամբողջությամբ լուծվել է բոլոր հնարավոր ենթախմբային կոորդինատային համակարգերի դասակարգման խնդիրը, գտնվել են համապատասխան լուծումները (չնորմավորված) n-չափանի հիպերբոլոիդի և էվկլիդեսյան տարածության վրա, և մշակվել է հարմար դիագրամային տեխնիկա այդպիսի համակարգերի նկարագրության համար:

Թեմա 2. Ցույց է տրվել, որ ինչպես էվկլիդեսյան տարածությունում, այնպես էլ դե-Սիտտերի և անտի դե-Սիտտերի տարածություններում կարելի է սահմանել դասական և քվանտային համակարգ, որը անվանվում է ներդաշնակ օսցիլյատոր, և որն իր էվկլիդեսյան անալոգի շատ հատկություններ է կրում: Տվյալ համակարգի համար Լոբաչևսկու, դե-Սիտտերի և անտի դե-Սիտտերի տարածություններում կառուցվել է Շրեդինգերի հավասարման քառակուսային լուծումը, և գտնվել են դասական շարժման հետագծերը: Ցույց է տրվել, որ բոլոր վերջավոր հետագծերը փակ են:

Արտասահմանյան դրամաշնորհներ

Թեմայի անվանումը	*Ղեկավար*
1. Լոբաչևսկու եռաչափ ընդլայնված տարածության հիման վրա ինտեգրվող և սուպերինտեգրվող դինամիկ համակարգերը և դրանց սիմետրիաների հատկությունները:	Պողոսյան Գ. Ս.

Թեմա 1. Աշխատանքի նպատակն է ինտեգրվող /սուպերինտեգրվող/ մոդելների արդեն հայտնի դասի ընդլայնումը, դրանց լրիվ դասակարգումը, մյուս կողմից՝ Լոբաչևսկու եռաչափ տարածությունում տարրական դաշտային կոնֆիգուրացիաների վրա հիմնված թեոր-խմբային և հանրահաշվային մեթոդներով դրանց նկարագրումը և ուսումնասիրումը, ինչպես նաև ոչ էվկլիդյան երկրաչափության կիրառմամբ ինտեգրվող /սուպերինտեգրվող/ դասական և քվանտային դինամիկ համակարգերի շրջանակի ընդլայնումն ու հետագայում հարթ տարածություններում ֆիզիկայի և մաթեմատիկական ֆիզիկայի խնդիրների լուծման նկատմամբ վերջիններիս որպես մոդել կիրառումը: Սուպերինտեգրվող համակարգերը ինտեգրվող համակարգերի կարևորագույն ենթադաս են, որոնք թույլատրում են շարժման դասական և քվանտային հավասարումների ինտեգրումը այլընտրանքային տարբեր եղանակներով:

Կենտրոնում կատարված այլ աշխատանքների մասին:

Շարունակվում է Միջուկային հետազոտությունների միջազգային ինստիտուտի նուկլոտրոնի վրա 2011 թ. մարտ ամսին սկսված փորձի շրջանակում 2.2 ԳէՎ/նուկլոն էներգիայով օժտված դեյտրոնների փնջով ոսկու թիրախում ճառագայթման միջոցով առաջացած մնացորդային միջուկների կտրվածքների ուսումնասիրությունը: 2012 թ. Միջուկային հետազոտությունների միջազգային ինստիտուտի նուկլոտրոնի վրա 2.2 ԳէՎ/նուկլոն դեյտրոնների փնջով ճառագայթվել են կապարի հարստացված թիրախներ, և կատարվում է ստացված սպեկտրների մշակում:

Բժշկական իզոտոպների ստացմանը և դրանց հատկությունների ուսումնասիրմանը նվիրված աշխատանքի շրջանակում Երևանի գծային էլեկտրոնային արագացուցիչի վրա կրկին ճառագայթվել են ^{118,120,124}Sn, ինչպես նաև բնական կազմությամբ Te թիրախները՝ ֆոտոնների 40 ՄէՎ մաքսիմալ էներգիա ունեցող փնջով, և չափվել են ^{117m}Sn, ^{111}In և ^{124}Sb ռադիոիզոտոպների գամմա սպեկտրները: Կատարվել է փորձի արդյունքում ստացված տվյալների մշակում:

Միջուկային հետազոտությունների միացյալ ինստիտուտին պատկանող նուկլոտրոնի ներքին փնջի վրա ստացված չեզոք (նեյտրալ) մեզոնների ծնման ռեակցիաների ուսումնասիրման շրջանակում դրվել է գիտական փորձ, որի նպատակն էր միաժամանակ գրանցել վերադարձվող միջուկները և π^0-, η-մեզոնների, R-ռեզոնանսի պակասորդ զանգվածը: Փորձը կատարվել է 1-5ԳէՎ/վ շրջակայքում ընկած իմպուլսով օժտված նեյտրոնների փնջի ազդեցությամբ: Փորձը թույլ կտա պարզել դիտարկվող ռեզոնանսային կառուցվածքի բնույթը, մասնավորապես պարզել՝ դիտարկվող համակարգը /կառուցվածքը/ միջուկային էֆեկտ է, թե իրական մասնիկի ազդանշան է:

Կատարվել են հաշվարկներ TALYS ծրագրային փաթեթի օգնությամբ միջուկային ռեակցիաներում առաջացած մնացորդային միջուկների կտրվածքների վերաբերյալ: Հաշվարկները կատարվել են հիմնական և իզոմերային վիճակների համար ընկնող տարբեր մասնիկների դեպքում *(γ, p, d, α):* Ստացված արդյունքները համեմատվում են փորձարարական տվյալների հետ, և արվում են եզրակացություններ:

Հրատարակություններ

Դասագիրք	Մենագրություն	Ուսումնական ձեռնարկ	Ուսումնամեթոդական ձեռնարկ	Հոդված	Ձեկուցման թեզիս
-	-	-	-	5	1

Գիտական և ուսումնամեթոդական հրատարակությունների ցանկ

Հոդված

1. *A. R. Balabekyan, N. A. Demekhina, G. S. Karapetyan, D. R. Drnoyan, V. I. Zhemenik, J. Adam et al.,* Target residues formed in the 4.4 GeV deuteron-induced reaction on gold. Physical review C 90, 054612 (2014).
2. *A. R. Balabekyan, N. A. Demekhina, G. S. Karapetyan, L. Karayan, J. R. Drnoyan, V. I. Zhemenik, J. Adam et al.,* Recoil properties of fragments formed in 4.4 GeV deuteron-induced reactions on a gold target. Physical review C 89, 054604 (2014).
3. *A. S. Danagulyan, G. H. Hovhannisyan, T. M. Bakhshiyan, R. H. Avagyan, A. E. Avetisyan, I. A. Kerobyan and R. K. Dallakyan,* Photonuclear Reactions on ^{112,118,124}Sn, ^{nat}Te, and ^{nat}Hf Targets. Physics of Atomic Nuclei, Vol. 77, No. 11, 2014, pp. 1313-1320.
4. *D. R. Petrosyan, G. S. Pogosyan*, Harmonic Oscillator on the SO (2, 2) Hyperboloid. Arxiv: 1504.06228 (math. ph), 2015.

5. *D. R. Petrosyan, G. S. Pogosyan,* Quantum Oscillator Problem on SO (2, 2) Hyperboloid. Nonlinear Phenomena in Complex System V. 17, N4, 2014, pp. 405-408.

Ձեկուցման թեզիս

1. *S. Danagulyan, G. H. Hovhannisyan, T. M. Bakhshiyan, R. H. Avagyan, A. E. Avetisyan, I. A. Kerobyan and R. K. Dallakyan,* Photonuclear Reactions on ^{112,118,124}Sn, ^{nat}Te, and ^{nat}Hf Targets, Physics of Atomic Nuclei, Vol. 77, No. 11, 2014, pp. 1313-1320.

«ՔՎԱՆՏԱՅԻՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐ ԵՎ ՆՈՐ ՆՅՈՒԹԵՐ» ԿԵՆՏՐՈՆ

Գիտական ղեկավար՝ *Կրյուչկյան Գագիկ Յուրիի, ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ, ֆիզմաթ. գիտ. դոկտոր*

Կենտրոնի աշխատակիցների կազմը

1. Ղազարյան Էդուարդ Մուշեղի, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, ֆիզմաթ. գիտ. դոկտոր, առաջատար գիտաշխատող
2. Սարգսյան Հայկ Արայի, ֆիզմաթ. գիտ. դոկտոր, ավագ գիտաշխատող
3. Գևորգյան Տիգրան Վարդանի, ֆիզմաթ. գիտ. թեկնածու, գիտաշխատող
4. Հայրապետյան Դավիթ Բորիսի, ֆիզմաթ. գիտ. թեկնածու, գիտաշխատող
5. Դադայան Լիլիաննա Յուրիի, ինժեներ-ծրագրավորող

Կենտրոնի հիմնական խնդիրները

Հանրապետական գիտակրթական համակարգի ձևավորում՝ նպատակաուղղված քվանտային տեխնոլոգիաների և նոր նյութերի ոլորտներում հիմնարար և կիրառական հետազոտությունների զարգացմանը՝ կիրառելով նաև բարձր արտադրողականությամբ հաշվարկներ՝ ԵՊՀ-ում գործող համակարգչային կլաստերի և «Քլոուդ» ենթակառուցվածքի հիման վրա:

Կենտրոնի գործունեության ուղղությունները

- Պինդմարմնային արհեստական ատոմների և նանոկառուցվածքների վրա հիմնված տեխնոլոգիաների հետազոտություններ՝ էլեկտրոնիկայի, ֆոտոնիկայի և քվանտային համակարգիչների բնագավառներում:

Ըստ ընդհանուր ուղղությունների՝ կենտրոնում կատարված գիտական աշխատանքների ամփոփում

Մի շարք նանոկառուցվածքների համար հետազոտվել են էլեկտրոնային և էքսիտոնային վիճակները, էներգիայի մակարդակները և քվանտային անցումները: Այդ թվում ստացվել է քվազիկոնաձև քվանտային կետի ճշգրիտ լուծումը, դիտարկվել են գլանային քվանտային կետը, որը աքսիալ ուղղությամբ սահմանափակված է Մորսի պոտենցիալով, և նեղ արգելված գոտիով InSb սֆերիկ նանոշերտը: Առաջին անգամ հաշվարկվել է քվանտային էլեկտրադինամիկայի հիմնական վակուումային երևույթներից մեկը՝ էլեկտրոնի էներգետիկ մակարդակների Լամբի շեղումը քվանտային օղակների համար: Արտաքին դաշտով ղեկավարվող արհեստական ատոմական համակարգերի բնագավառում հետազոտվել են ֆոտոնային շրջափակման (բլոկադայի) երևույթը Կեռի ուժեղ ոչ գծայնությամբ օժտված դիսիպատիվ ռեզոնատորների համար իմպուլսային ռեժիմում, որի էֆեկտիվությունը հասնում է աննախադեպ արժեքների՝ 90%: Զարգացված է քյուբիթների (քվանտային բիթերի) կառավարման տեսությունը լազերային իմպուլսների միջոցով: Այդ թվում, շրջանցելով ռեզոնանսային մոտավորությունը, ստացված է բնակեցության ինվերսիայի երևույթը թունելային էֆեկտով օժտված քյուբիթների համար:

Հրատարակություններ

Դասագիրք	Մենագրություն	Ուսումնական ձեռնարկ	Ուսումնամեթոդա-կան ձեռնարկ	Հոդված	Ձեկուցման թեզիս
-	-	-	-	10	-

Գիտական և ուսումնամեթոդական հրատարակությունների ցանկ

Հոդված

1. *С. М. Амирханян, Э. М. Казарян, А. А. Саркисян,* Вычисление электростатических мультиполей электрона, локализованного в узкозонном сферическом нанослое InSb, Известия НАН Армении, Физика, 50, 1001-1012 (2015).
2. *G. H. Hovsepyan and G. Yu. Kryuchkyan,* Excitations of photon-number states in Kerr nonlinear resonator at finite temperatures, Europh. Physical Journal D 69, 64-71 (2015).
3. *E. M. Kazaryan, L. S. Petrosyan, V. A. Shahnazaryan, H. A. Sarksiyan,* Quasi-conical quantum dot: electron states and quantum transitions, Communications in Theoretical Physics, 63 (2), 2015, pp. 255-260.
4. *G. Y. Kryuchkyan, O. Kyriienko, I. Shelich*, Lamb shift of energy levels in quantum rings, Journ. Physics B: At. Mol. Opt. Phys. 48, 025401-7 (2015).
5. *D. B. Hayrapetyan, E. M. Kazaryan, T. V. Kotanjyan, H. Kh. Tevosyan,* Light absorption of cylindrical quantum dot with Morse potential in the presence of parallel electrical and magnetic fields, SPIE Microtechnologies. (International Society for Optics and Photonics), 9519, 951919-8 (2015).
6. *D. B. Hayrapetyanet, E. M. Kazaryan, T. V. Kotanjyan, H. Kh. Tevosyan,* Exciton states and interband absorption of cylindrical quantum dot with Morse confining potential, Superlattices and Microstructures 78, 2015, pp. 40-49.
7. *T. V. Gevorgyan,* Three-photon states in phase-space, Journ. Contemporary Physics, (NAN RA), 50, 2015, pp. 44-48.
8. *D. A. Baghdasaryan, D. B. Hayrapetyan, E. M. Kazaryan,* Prolate spheroidal quantum dot: Electronic states, direct interband light absorption and electron diploe moment, Physica B: Physics of Condensed Matter, 479, 85-89 (2015).
9. *D. A. Baghdasaryan, D. B. Hayrapetyan, E. M. Kazaryan,* Oblate spheroidal quantum dot: electronic states, direct interband light absorption and pressure dependence, European Physical Journal B 88, 223-229 (2015).
10. *H. H. Adamyan, J. A. Bergou, N. T. Gevorgyan, and Yu. Kryuchkyan,* Strong squeezing in periodically modulated optical parametric oscillators, Physical Review A 93, 00380-8 (2015).

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿՐԹԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Տնօրեն՝ *Շեկյան Լեոնարդ Արամի, ֆիզմաթ. գիտ. թեկնածու, դոցենտ*

Կենտրոնի ունկնդիրների թիվը՝ ***35***

Կենտրոնում գործող ամբիոնների թիվը՝ ***1***

ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ԱՄԲԻՈՆ

Ամբիոնի վարիչ՝ *Աթայան Կամո Իվանի, մանկ. գիտ. դոկտոր, դոցենտ*

Պրոֆեսորադասախոսական կազմը

1. Ալեքսանյան Պավլիկ Գարսևանի, ֆիզմաթ. գիտ. թեկնածու, դոցենտ
2. Բատիկյան Սեդա Հրանտի, կենս. գիտ. թեկնածու, դոցենտ
3. Բաբախանյան Մարինա Հրանտի, մանկ. գիտ. թեկնածու, ասիստենտ
4. Հոռոփյան Ստեփան Սարգսի, պատմ. գիտ. թեկնածու, ասիստենտ
5. Բաղումյան Սոֆիկ Լևոնի, դասախոս
6. Հովհաննիսյան Արուսյակ Էդիկի, դասախոս
7. Պետրոսյան Սիմոն Սարգսի, դասախոս
8. Սահակյան Տատյանա Պյոտրի, դասախոս

Ուսումնաօժանդակ աշխատակիցներ

1. Մղդեսյան Անահիտ Գրիգորի, ավագ լաբորանտ

Կենտրոնի հիմնական խնդիրները

Կենտրոնի հիմնական խնդիրներն են.

1. ԵՊՀ-ում կամ ՀՀ այլ ուսումնական հաստատություններում օտարերկրյա քաղաքացիների ուսումնառությունը շարունակելու համար նախապատրաստական դասընթացների կազմակերպումը,
2. օտարերկրյա քաղաքացիների հետբուհական լրացուցիչ կրթական ծրագրերի իրականացումը,
3. Սփյուռքի համար վերապատրաստման և կրթական հատուկ ծրագրերի իրականացումը, ամառային դպրոցի կազմակերպումը,
4. օտարալեզու ունկնդիրների համար հայոց լեզվի՝ որպես օտար լեզվի ուսուցումը:

Կենտրոնի գործունեության ուղղությունները

Կենտրոնի գործունեության ուղղություններն են.

1. նախապատրաստական դասընթացների ուսումնական պլանների և առարկայական ծրագրերի կազմումը,
2. նախապատրաստական դասընթացների ուսումնական գործընթացի կազմակերպումը,
3. նախապատրաստական դասընթացների ավարտական քննությունների կազմակերպումը,
4. օտարերկրյա քաղաքացիների որակավորման բարձրացման և մասնագիտական վերապատրաստման կազմակերպումը,
5. «Սփյուռք» ամառային դպրոցի նախապատրաստումը և անցկացումը,
6. օտարալեզու ունկնդիրների համար հայոց լեզուն որպես օտար լեզու ուսուցանելու բազմամակարդակ դասընթացների մշակումը և իրականացումը, օտար լեզուների ուսուցման կազմակերպումը,
7. կենտրոնի ուսումնական գործընթացի մեթոդական ապահովումը:

Ըստ ընդհանուր ուղղությունների՝ ամբիոնում կատարված գիտական աշխատանքների ամփոփում

Հաշվետու տարում ամբիոնում հետազոտական աշխատանքներ են տարվել «Սովորողների էկոլոգիական կրթության և դաստիարակության հիմնահարցերը բնագիտական առարկաների դասավանդման պրոցեսում» թեմայով, որը հրատապ է ինչպես աշխարհի, այնպես էլ մեր կրթական համակարգի համար: Խնդիր է դրված հնարավորինս էկոլոգացնել ուսուցանվող բոլոր, հատկապես բնագիտական առարկաները: Մշակվել են ֆիզիկայի դպրոցական և ընդհանուր ֆիզիկայի բուհական դասընթացների էկոլոգացված ուսուցման հիմնական սկզբունքները, որոնք Կ. Աթայանի կողմից փորձարկվել են ինչպես տեղում, այնպես էլ հանրապետության որոշ բուհերում: Հաշվետու ժամանակահատվածում տպագրվել է երկու գիտական հոդված:

Շարունակվել են ամբիոնում իրականացվող «Նորարարությունը և ինովացիաները ժամանակակից կրթական համակարգում» թեմայով հետազոտական աշխատանքները: Քննարկվել են Հայաստանում օտարերկրացիների ինովացիոն ուսուցման կազմակերպման խնդիրները: Մշակվել են գիտատեսական նյութեր, ուսումնասիրվել է նշված ուղղությամբ առկա միջազգային փորձը: Տպագրվել է չորս գիտական հոդված:

Ամբիոնում հետազոտական աշխատանքներ են տարվել դասավանդվող առարկաների, հատկապես հայոց լեզվի արագացված ուսուցման կազմակերպման ուղղությամբ:

ՀՀ Սփյուռքի նախարարության և ԵՊՀ համագործակցության շրջանակում «Սփյուռք» ամառային դպրոցի ծրագրերով 2015 թ. կազմակերպվել են «Սփյուռքի ուսուցիչների վերապատրաստման», «Հայոց լեզվի արագացված ուսուցման», «Երիտասարդ առաջնորդների», «Սփյուռքի լրագրողների» և «Ազգային երգի ու պարի» դասընթացներ: Ամառային դպրոցի բովանդակային աշխատանքների կազմակերպման պատասխանատվությունը դրված էր Հանրակրթական առարկաների ամբիոնի վարիչ Կ. Աթայանի վրա: Ամառային դպրոցի պարապմունքները սկսվել են 2015 թ. հուլիսի 9-ին, ավարտվել օգոստոսի 1-ին: Ուսումնական պարապմունքները կազմակերպվել են ԵՊՀ-ում: Դասընթացներում ընդգրկված էր 250 ունկնդիր: Ամառային դպրոցի ուսումնական ընդհանուր ծանրաբեռնվածությունը կազմել է մոտ 1500 ժամ:

Վերը նշված ուղղություններով ամառային դպրոցի պարապմունքներին հաջողությամբ մասնակցած 240 ունկնդիր ստացել է վկայագիր: Ամառային դպրոցի պարապմունքները վարել են ԵՊՀ և ՀՀ այլ բուհերի ավելի քան 50 փորձառու դասախոսներ: Ամբիոնի հայոց լեզվի դասախոսները «Սփյուռք» ամառային

դպրոցի շրջանակում դասավանդել են «Սփյուռքի ուսուցիչների վերապատրաստման», «Հայոց լեզվի արագացված ուսուցման» դասընթացներում:

Հրատարակվել է 2014 թ. հուլիսի 25-26-ին Միջազգային կրթական կենտրոնի կողմից կազմակերպված «Օտարերկրացիների ուսուցումը Հայաստանում. հիմնախնդիրներ և լուծումներ» միջազգային II կրթական գիտաժողովի նյութերի ժողովածուն:

2015 թ. մայիսի 3-4-ին կենտրոնում տեղի է ունեցել «Սփյուռքի հայ կրթօջախները» խորագրով «Իմ դպրոցը» թեմայով ուսանողական գիտաժողով, որին մասնակցել են շուրջ 60 դասախոս, ուսանող, ուսուցիչ, կրթական գործի կազմակերպիչներ ՀՀ բուհերից և արտերկրից:

2015 թ. հուլիսին սփյուռքահայ ուսուցիչների և ՀՀ բուհերի դասախոսների ու ուսուցիչների համար կազմակերպվել է «Հայեցի կրթության կազմակերպումը Սփյուռքի գաղթօջախներում. հիմնախնդիրներ և լուծումներ» թեմայով առաջին կրթական գիտաժողովը:

Հրատարակություններ

Դասագիրք	Մենագրություն	Ուսումնական ձեռնարկ	Ուսումնամեթոդական ձեռնարկ	Հոդված	Ձեկուցման թեզիս
-	-	-	1	20	1

Գիտական և ուսումնամեթոդական հրատարակությունների ցանկ

Ուսումնամեթոդական ձեռնարկ

1. *Մ. Գ. Бабаханян,* Изучаем русские глаголы движения, изд. ЕГУ, 2015, 101 с.

Հոդված

1. *Կ. Ի. Աթայան,* Ջերմոցային երևույթի և համընդհանուր տաքացման մասին, «Բնագետ», N 2, «Զանգակ-97» հրատ., Երևան, 2014, էջ 39-42:
2. *Կ. Ի. Աթայան, Ս. Ս. Մայիլյան, Հ. Ա. Սարգսյան,* Հնարավոր տեղափոխությունների սկզբունքը, «Բնագետ», N 3, «Զանգակ-97» հրատ., Երևան, 2014, էջ 53-60:
3. *Կ. Ի. Աթայան,* Անհամասեռ մագնիսական դաշտում թույլ մագնիսական նյութի վրա ազդող ուժի որոշումը, «Բնագետ», N 3, «Զանգակ-97» հրատ., Երևան, 2014, էջ 89-90:
4. *Կ. Ի. Աթայան, Լ. Ա. Սահակյան,* Ուսուցման գործընթացին հետազոտական մոտեցման էությունը, «Կրթությունը և գիտությունը Արցախում», N 3-4, «Ասողիկ» հրատ., Երևան, 2014, էջ 37-42:
5. *Կ. Ի. Աթայան,* Ուսուցման կազմակերպման առանձնահատկությունները նախապատրաստական կրթության համակարգում, Միջազգային II կրթական գիտաժողով «Օտարերկրացիների ուսուցումը Հայաստանում. հիմնախնդիրներ և լուծումներ», նյութերի ժողովածու, ԵՊՀ հրատ., Երևան, 2014, էջ 139-144:
6. *Կ. Ի. Աթայան,* «Սփյուռք» ամառային դպրոցը որպես սփյուռքահայերի Հայաստանում կարճատև ուսուցման ձև, Միջազգային II կրթական գիտաժողով «Օտարերկրացիների ուսուցումը Հայաստանում. հիմնախնդիրներ և լուծումներ», նյութերի ժողովածու, ԵՊՀ հրատ., Երևան, 2014, էջ 161-165:
7. *Կ. Ի. Աթայան,* Էկոլոգիական կրթության իրականացման առանձնահատկությունները օտարերկրյա ուսանողների նախապատրաստական կրթության համակարգում, Միջազգային II կրթական գիտաժողով «Օտարերկրացիների ուսուցումը Հայաստանում. հիմնախնդիրներ և լուծումներ», նյութերի ժողովածու, ԵՊՀ հրատ., Երևան, 2014, էջ 161-165:
8. *Կ. Ի. Աթայան,* Բալիստիկ ճոճանակի հետազոտումը, «Կրթությունը և գիտությունը Արցախում», N 1, «Ասողիկ» հրատ., Երևան, 2015, էջ 21-24:

9. *Պ. Գ. Ալեքսանյան,* $mx^4 + nx + p = 0$ հավասարման մի լուծման մասին, Միջազգային II կրթական գիտաժողով «Օտարերկրացիների ուսուցումը Հայաստանում. հիմնախնդիրներ և լուծումներ», նյութերի ժողովածու, ԵՊՀ հրատ., Երևան, 2014, էջ 200-203:
10. *Ս. Լ. Բաղումյան, Ա. Է. Հովհաննիսյան,* Արագացված ուսուցման կազմակերպումը հայոց լեզվի դասերին, Միջազգային II կրթական գիտաժողով «Օտարերկրացիների ուսուցումը Հայաստանում. հիմնախնդիրներ և լուծումներ», նյութերի ժողովածու, ԵՊՀ հրատ., Երևան, 2014, էջ 25-30:
11. *Ս. Լ. Բաղումյան, Ա. Է. Հովհաննիսյան,* Գրուսուցման առանձնահատկությունները հայոց լեզվի արագացված ուսուցման գործընթացում, Միջազգային II կրթական գիտաժողով «Օտարերկրացիների ուսուցումը Հայաստանում. հիմնախնդիրներ և լուծումներ», նյութերի ժողովածու, ԵՊՀ հրատ., Երևան, 2014, էջ 31-35:
12. *Ս. Հ. Բատիկյան, Ռ. Հ. Սայադյան,* ԵՊՀ-ի միջազգային կրթական կենտրոնի բնագիտական հոսքերում միջառարկայական կապերի կիրառման հարցի շուրջ, Միջազգային II կրթական գիտաժողով «Օտարերկրացիների ուսուցումը Հայաստանում. հիմնախնդիրներ և լուծումներ», նյութերի ժողովածու, ԵՊՀ հրատ., Երևան, 2014, էջ 207-212:
13. *Լ. Ա. Շեկյան,* Պարամետրով ցուցչային ֆունկցիաների և հավասարումների մասին, Միջազգային II կրթական գիտաժողով «Օտարերկրացիների ուսուցումը Հայաստանում. հիմնախնդիրներ և լուծումներ», նյութերի ժողովածու, ԵՊՀ հրատ., Երևան, 2014, էջ 195-199:
14. *Ս. Ս. Պետրոսյան,* Դաս-այցելությունների դերը օտարազգի ուսանողների՝ հայերենի ուսուցման գործընթացում, Միջազգային II կրթական գիտաժողով «Օտարերկրացիների ուսուցումը Հայաստանում. հիմնախնդիրներ և լուծումներ», նյութերի ժողովածու, ԵՊՀ հրատ., Երևան, 2014, էջ 36-39:
15. *Ժ. Գ. Ջիվանշիրյան,* Օտարազգի լսարանում կենսաբանության մուտքային դասերի անցկացման անհրաժեշտության և արդի մոտեցումների մասին, Միջազգային II կրթական գիտաժողով «Օտարերկրացիների ուսուցումը Հայաստանում. հիմնախնդիրներ և լուծումներ», նյութերի ժողովածու, ԵՊՀ հրատ., Երևան, 2014, էջ 212-215:
16. *Ռ. Հ. Սայադյան, Ս. Հ. Բատիկյան*, Բնապահպանական խնդիրների իմացության կարևորությունը ուսանողների համար, Միջազգային II կրթական գիտաժողով «Օտարերկրացիների ուսուցումը Հայաստանում. հիմնախնդիրներ և լուծումներ», նյութերի ժողովածու, ԵՊՀ հրատ., Երևան, 2014, էջ 216-221:
17. *К. И. Атаян, А. К. Атаян,* Интегративный подход к осуществлению экологического образования в системе вузовского курса общей физики, Научное издание, Экологические проблемы, Евразийское пространство, изд. МГУ, 2014, с. 49-59.
18. *М. Г. Бабаханян,* Использование компьютера в процессе обучения русским глаголам движения в армянской аудитории, “Русский язык в Армении”, N 6 (91), изд. “Национальный институт образования” РА, Ереван, 2014, с. 3-9.
19. *М. Г. Бабаханян*, Использование звукозаписи в процессе обучения русским глаголам движения, Միջազգային II կրթական գիտաժողով «Օտարերկրացիների ուսուցումը Հայաստանում. հիմնախնդիրներ և լուծումներ», նյութերի ժողովածու, ԵՊՀ հրատ., Երևան, 2014, էջ 75-82:
20. *М. Г. Бабаханян*, Роль занимательного материала в процессе обучения русским глаголам движения, «Կրթությունը և գիտությունը Արցախում», N 1, «Ասողիկ» հրատ., Երևան, 2015, էջ 52-55:

Զեկուցման թեզիս

1. *Կ. Ի. Աթայան,* Ֆիզիկայի դասավանդման հիմնախնդիրները, Թեզիսներ «Մանկավարժության ժամանակակից հիմնախնդիրները» տարածաշրջանային միջազգային գիտաժողովի, Ծաղկաձոր, հոկտեմբերի 17-18, 2014, էջ 13-15:

ՄԱՍՍ ՄԵԴԻԱՅԻ ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Ղեկավար՝ *Գրիգորյան Մարգարիտա Աշոտի, բան. գիտ. թեկնածու*

Կենտրոնի աշխատակիցների կազմը

1. Մարտիրոսյան Անուշ Մանվելի, բան. գիտ. թեկնածու, դոցենտ
2. Գրիգորյան Մարինա Ռոլենի
3. Սիմոնյան Հասմիկ Սենիկի

Կենտրոնի մասնագիտությունները եւ մասնագիտացումները

Շիֆր	**Մասնագիտություն՝**
030600	Լրագրություն
070300	Ռեժիսուրա
071400	Օպերատորություն
080200	Կառավարում

Մասնագիտացումներ՝ (մագիստրոսական ծրագրեր)	Հաղորդավարական գործ Հեռուստառեժիսուրա Արտ-մենեջմենթ

Կրթական աստիճան, մասնագիտություն	***Ուսանողների թիվը՝ 49***			
	I կուրս		**II կուրս**	
	պպ	**վճ**	**պպ**	**վճ**
Մագիստրատուրա				
Ռեժիսուրա	-	3	-	4
Լրագրություն	3	12	-	11
Կառավարում	-	9	-	7
Ընդամենը	3	24	-	22

Քննաշրջանների արդյունքներ

Ձմեռային քննաշրջան

Կրթական աստիճան, մասնագիտություն, կուրս	Քննաշրջանին մասնակցել են	Անբավարար գնահատական ստացած ուսանողների թիվը		Գերազանցիկների թիվը	Առաջադիմության %-ը
		պպ	վճ		
Մագիստրատուրա					
Ռեժիսուրա					
1-ին	3	-	1	-	67
2-րդ	4	-	-	2	100
Լրագրություն					
1-ին	15	-	2	-	87
2-րդ	11	-	-	-	100
Կառավարում					
1-ին	9	-	2	-	78
2-րդ	7	-	-	-	100
Ընդամենը	49	-	5	2	90

Ամառային քննաշրջան

Կրթական աստիճան, մասնագիտություն, կուրս	Քննաշրջանին մասնակցել են	Անբավարար գնահատական ստացած ուսանողների թիվը		Գերազանցիկների թիվը	Առաջադիմության %-ը
		պպ	վճ		
Մագիստրատուրա					
Ռեժիսուրա					
1-ին	3	-	1	-	67
Լրագրություն					
1-ին	14	-	1	-	93
Կառավարում					
1-ին	9	-	5	-	44
Ընդամենը	26	-	7	-	73

Կենտրոնի հիմնական խնդիրները

Պատրաստել որակյալ և արհեստավարժ կադրեր հեռուստառադիոդաշտի համար՝ ըստ պահանջարկի, այդպիսով իսկ ապահովելով ոլորտի բնականոն սերնդափոխությունը:

Կենտրոնի գործունեության ուղղությունները

Մագիստրոսական ծրագրերով ուսուցում, վերապատրաստումներ, մեդիա դաշտի պարբերական հետազոտություն:

Ըստ ընդհանուր ուղղությունների՝ կենտրոնում կատարված աշխատանքների ամփոփում

Հաշվետու ուստարում իրականացվել են տարբեր նախագծեր՝ Գովազդային բիենալե, համերգ՝ հայ կոմպոզիտորների երգերը ֆրանսերենով, «Ոսկե ծիրան», «Վարդավառ ֆեստ», Գրական ընթերցումներ:

ԿԻՐԱՌԱԿԱՆ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Կենտրոնի տնօրեն՝ *Գևորգյան Դավիթ Էմիլի*

Կենտրոնի աշխատակիցների կազմը

1. Գարգրցյան Լիլիթ Ալբերտի, հոգ. գիտ. թեկնածու, խմբավար
2. Խանամիրյան Իրինա Ռյուրիկի, հոգ. գիտ. թեկնածու, խմբավար, հոգեբան խորհրդատու
3. Խաչատրյան Նարինե Գագիկի, հոգ. գիտ. թեկնածու, խմբավար
4. Սարգսյան Սյուզի Ֆելիքսի, հոգ. գիտ. թեկնածու, խմբավար
5. Սիմոնյան Լիլիթ Դիմիտրիի, պատմ. գիտ. թեկնածու, խմբավար
6. Կարախանյան Արմեն Հակոբի, խմբավար
7. Համբարձումյան Մարիա Էդուարդի, հոգեբան-խորհրդատու
8. Ղազարյան Իզաբելլա Արտավազդի, խմբավար, հոգեբան-խորհրդատու
9. Սմբատյան Մերի Բագրատի, խմբավար, հոգեբան-խորհրդատու
10. Բաղդասարյան Աննա Լևոնի, լաբորանտ
11. Գևորգյան Լուսինե Հայկի, լաբորանտ

Կենտրոնի գործունեության ուղղությունները

1. Մասնագիտական դասընթացների (թրեյնինգների) կազմակերպում և անցկացում,
2. Հոգեբանական անհատական խորհրդատվություն,
3. Անհատական և խմբային սուպերվիզիոն աշխատանքների կազմակերպում,
4. Համագործակցություն:

Ըստ ընդհանուր ուղղությունների՝ կենտրոնում կատարված աշխատանքների ամփոփում

1. Ընդհանուր առմամբ կենտրոնի **խմբային ծառայություններից** օգտվել են 233 հոգի (30 խումբ), որոնցից 137-ը՝ ԵՊՀ ուսանողներ:

1. 1 Ուսումնական թրեյնինգներ

#	Թրեյնինգի անվանումը	Խմբերի քանակը	Մասնակիցների քանակը	Այդ թվում՝ ԵՊՀ ուսանողների քանակը
1	Կոգնիտիվ-վարքաբանական հոգեթերապիա. 2 փուլ	4	40	25
2	Արքետիպային վերլուծություն. 2 փուլ	4	30	9
3	Արտ-թերապիա. 2 փուլ	3	18	13
4	Հեքիաթ-թերապիա	2	18	13

5	Նեյրոլեզվաբանական ծրագրավորում. 6 փուլ	7	39	22
6	Մանկական հոգեթերապիա	2	22	16
7	Հոգեբանական խորհրդատվություն	4	40	21
8	Խմբավարի հմտությունների զարգացում. 2 փուլ	2	8	4
9	Հոգեբանական հետազոտության կազմակերպման հմտություններ	1	8	8
10	Դասական և յունգյան հոգեդրամա	1	10	6
ԸՆԴԱՄԵՆԸ		**30**	**233**	**137**

1.2 Անձնային աճի թրեյնինգներ

#	Թրեյնինգի անվանումը	Խմբերի քանակը	Մասնա-կիցների քանակը	Այդ թվում՝ ԵՊՀ ուսանողների քանակը
1	Խմբային կոգնիտիվ հոգեթերապիա (հոգեթերապևտիկ խումբ)	2	16	11
2	Կանանց համար անձնային աճի թրեյնինգ	2	9	5
ԸՆԴԱՄԵՆԸ		**4**	**25**	**16**

2. Կենտրոնում ընդհանուր առմամբ իրականացվել են 1322 **անհատական խորհրդատվություններ,** որոնցից.

#	Այցելուներ	Հանդիպումների քանակը
1	ԵՊՀ ուսանողներ	375
2	Այլ բուհերի ուսանողներ	306
3	Երեխաներ և դեռահասներ	212
4	Այլ այցելուներ	417
5	Զույգեր	12
ԸՆԴԱՄԵՆԸ		**1322**

3. Սուպերվիզիոն խմբեր

#	Թրեյնինգի անվանումը	Խմբերի քանակը	Մասնա-կիցների քանակը	Այդ թվում՝ ԵՊՀ ուսանողների քանակը
1	Մեծահասակների հետ աշխատող հոգեթերապևտների խումբ	1	6	3
ԸՆԴԱՄԵՆԸ		**1**	**6**	**3**

3.1 Ընդհանուր առմամբ կենտրոնում անց է կացվել 45 ժամ տնողությամբ **անհատական սուպերվիզիա:**

4. Համագործակցություն

Կենտրոնը երկարատև պայմանագիր է կնքել «Վիվա-Սել ՄՏՍ» ընկերության հետ, որի շրջանակում կենտրոնը հոգեբանական աջակցություն է մատուցելու «Վիվա-Սել ՄՏՍ»-ի աշխատակազմին:

Կենտրոնը «Ինսայթ» հասարակական կազմակերպության հետ մեկտեղ հոգեբանությամբ հետաքրքրվող երիտասարդների համար իրականացնում է «Հավես հոգեբանություն» ուսանողական նախաձեռնությունը, որի շրջանակում հաշվետու ժամանակահատվածում կազմակերպվել են 2 մասնագիտական միջոցառումներ (սեմինարներ)՝ «Պրոյեկտիվ մեթոդիկաների» և «Ռորշախի թանաքաբծերի» մասին թեմաներով:

2014 թ. հոկտեմբերին կայացել է «Անքնություն և կոգնիտիվ-վարքային թերապիա անքնության դեպքում» թեմայով սեմինար քննարկումը, որը վարել է ԵՊՀ սոցիալական հոգեբանության ամբիոնի ասպիրանտ Լիլիթ Ղահրամանյանը:

2015 թ. փետրվարին անց է կացվել սեմինար՝ «Ասպերգերի համախտանիշը, միջանձնայնության խանգարումները, հոգեպաթոլոգիական ազդեցություններն ու խնամքի ձևերը» թեմայով (4 ժամ): Սեմինարը վարել է աուտիզմի ոլորտում մասնագիտացած լոգոպեդ, Պիեռ և Մարի Կյուրիի համալսարանի /Փարիզ/ դասախոս Իզաբել Տանե-Մորին:

Փետրվար ամսին ևս կենտրոնը «Բաց հասարակություն հիմնադրամներ-Հայաստան» կազմակերպության և «Միջազգային պալիատիվ խնամքի նախաձեռնության» հետ կազմակերպել է դասախոսություն՝ «Պալիատիվ խնամքի կարևորությունը, դրա զարգացման հեռանկարներն աշխարհում, ինչպես նաև հոգեբանների դերը այդ ոլորտի կայացման գործընթացում» խորագրով: Դասախոսությունը վարել է Պալիատիվ օգնության միջազգային ասոցիացիայի ներկայացուցիչ Ստեֆան Կոնորը:

Ապրիլին տեղի է ունեցել «Պրակտիկ հոգեբանության էթիկական հիմնահարցերը» սեմինար-քննարկումը, որը կազմակերպվել էր կենտրոնի կողմից: Սեմինարը վարել են Հասմիկ Հարությունյանը (կենտրոնի հոգեթերապևտ) ու Դավիթ Գևորգյանը (կենտրոնի տնօրեն, հոգեթերապևտ, խմբավար):

2014 թ. օգոստոսից մինչև 2015 թ. հուլիս ամիսը անց են կացվել «Բալինտյան խմբային աշխատանք» ուսուցողական մեծ ծրագրի 8 սեմինարներ, որոնց հեղինակն ու վարողն է եղել Ի. Մ. Սեչենովի անվան Մոսկվայի պետական բժշկական համալսարանի քույրական գործունեության և սոցիալական աշխատանքի կառավարման ամբիոնի դասախոս, Պրոֆեսիոնալ հոգեթերապևտիկ լիգայի իսկական անդամ, սերտիֆիկացված ու հավատարմագրված հոգեբան-խորհրդատու, բալինտյան խմբի սերտիֆիկացված ղեկավար Անժելա Ավագիմյանը: Ծրագրի նպատակն է եղել մասնագիտական միջանձնային շփման կոմպետենտության բարձրացումը, «օգնող մասնագիտություններում» մասնագետների վերականգնումը, որոնց շրջանում արդեն զարգացել է մասնագիտական այրման համախտանիշը: Բալինտյան խմբային աշխատանքն ուղղված է հոգեթերապևտ-այցելու, բուժանձնակազմ-հիվանդ, ուսուցիչ-աշակերտ, սոց. աշխատող-շահառու փոխհարաբերությունների ուսումնասիրությանը, ինչպես նաև մարդկանց հետ իրենց աշխատանքում անմիջականորեն առնչություն ունեցող այլ մասնագետների /փրկարարներ, լրագրողներ, օրինապահ մարմինների աշխատակիցներ/ հուզական վիճակի կարգավորմանը:

2015 թ. հուլիսի 16-19 տեղի է ունեցել «Հուզական այրումը և բալինտյան շարժումը օգնող մասնագիտություններում» խորագրով առաջին միջազգային գիտաժողովը, որին մասնակցել են Գերմանիայի, Մեծ Բրիտանիայի, Ռուսաստանի բալինտյան շարժման ականավոր ներկայացուցիչներ, այդ թվում՝ Մեծ Բրիտանիայի բալինտյան միության նախագահ Դևիդ Ուոտը, Սանկտ Պետերբուրգի բալինտյան միության նախագահ Վլադիմիր Վինոկուրը, Գերմանիայի բալինտյան միության նախագահ

Գյունտեր Բերգմանը և այլք: Գիտաժողովը նվիրված է եղել աջակցող մասնագետների հուզական սթրեսի և այրման կանխարգելման հիմնախնդրին:

Հրատարակություններ

Դասագիրք	Մենագրություն	Ուսումնական ձեռնարկ	Ուսումնամեթոդական ձեռնարկ	Հոդված	Ձեկուցման թեզիս
-	-	-	-	6	-

Գիտական և ուսումնամեթոդական հրատարակությունների ցանկ

Հոդված

1. *Դ. Է. Գևորգյան,* Հոգեցնցման դերը բացասական կոգնիտիվ սխեմաների ձևավորման հարցում, «Ցեղասպանության ախտահոգեբանական և սոցիալ-հոգեբանական հետևանքները» գիտաժողովի նյութերի ժողովածու, 2015, էջ 12-18:
2. *Ի. Ա. Ղազարյան,* Ցեղասպանության հիմնախնդրի քաղաքական-հոգեբանական հայեցակետերը, «Ցեղասպանության ախտահոգեբանական և սոցիալ-հոգեբանական հետևանքները» գիտաժողովի նյութերի ժողովածու, 2015, էջ 146-150:
3. *Ի. Ռ. Խանամիրյան,* Ընտանեկան խորհրդատվության խնդիրները փոփոխվող հասարակությունում, «Ընտանիք, հասարակություն և եկեղեցի. ժամանակակից մարտահրավերներ» գիտաժողովի նյութերի ժողովածու, 2015, էջ 110-119:
4. *Ի. Ռ. Խանամիրյան,* Կորուստը որպես մանկության ճգնաժամային իրավիճակ, «Արդիականության մարտահրավերները. փիլիսոփայական և հոգեբանական հիմնախնդիրներ», ԵՊՀ փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետի 50-ամյակին նվիրված միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածու, Երևան, 2014, էջ 309-312:
5. *Լ. Դ. Սիմոնյան,* Ս. Սարգսի կերպարը հայ ժողովրդական ավանդազրույցներում, երգերում և աղոթքներում նորահայտ նյութերի հիման վրա, «Տարեգիրք», Աստվածաբանության ֆակուլտետ,Երևան, 2014, էջ 166-176:
6. *Լ. Դ. Սիմոնյան,* Հեթանոսություն և շամանիզմ - երկու հակադիր հայացք դեպի հոգևորը (ոգեղենը), «Տարեգիրք», Աստվածաբանության ֆակուլտետ, Երևան, 2014, էջ 179-207:

ԿԻՐԱՌԱԿԱՆ ԿԵՆՍԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԳԵՐԱԶԱՆՑՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Ղեկավար՝ *Հովհաննիսյան Նելլի Ալեքսանդրի, կենս. գիտ. թեկնածու*

Կենտրոնի աշխատակիցների կազմը

1. Եսայան Ալեքսանդր Հրանտի, կենս. գիտ. թեկնածու, գիտական խորհրդատու
2. Դալլաքյան Մարինա Վահանի, կրտսեր գիտաշխատող
3. Եսոյան Սյուզաննա Սայաթի, կրտսեր գիտաշխատող
4. Մանուկյան Իսկուհի Մարտիկի, լաբորանտ
5. Դավթյան Հասմիկ Հարությունի, լաբորանտ

Կենտրոնի հիմնական խնդիրները

1. Հանրապետությունում և դրա սահմաններից դուրս գործող շահագրգիռ կազմակերպությունների՝ ուսումնական հաստատությունների, գիտահետազոտական կենտրոնների, ձեռնարկությունների և ֆիզիկական անձանց հետ նորարարական կրթական և հետազոտական ծրագրերի մշակումը և իրականացումը,
2. միջազգային հետազոտական չափանիշներին համապատասխանող հիմնարար ու կիրառական ուղղվածության հետազոտությունների իրականացումը՝ կիրառական կենսաբանության և կենսահնագիտության ոլորտներում,
3. միջառարկայական ուսումնասիրությունների խթանումը և դրանցում արդիական ու նորարարական հետազոտական մոտեցումների և սարքավորումների կիրառումը,
4. մրցունակ մասնագետների պատրաստումը արտադրության և գիտության ոլորտների համար՝ «Կիրառական կենսաբանություն» արտադրական և «Կենսահնագիտություն» հետազոտական մագիստրոսական կրթական ծրագրերով:

Կենտրոնի գործունեության ուղղությունները

Կիրառական կենսաբանության գերազանցության կենտրոնը՝ որպես ինքնուրույն ստորաբաժանում, ստեղծվել է Երևանի պետական համալսարանում 2014 թ. ՀՀ կրթության և գիտության նախարարության «Կրթության որակ և համապատասխանություն» երկրորդ վարկային ծրագրի «Կիրառական կենսաբանության գերազանցության կենտրոնի ստեղծում» դրամաշնորհային ծրագրի շրջանակում:

Կենտրոնի կազմում գործում են հետազոտական և ուսումնական հետևյալ լաբորատորիաները.

- Ժամանակակից և հնագույն ԴՆԹ-ի գենոմային հետազոտությունների և նուկլեոտիդային հաջորդականության վերծանման (DNA Next generation sequencing),
- Միկրոսկոպիայի և ինֆրակարմիր սպեկտրոսկոպիայի,
- Հյուսվածքային կուլտուրաների:

Կենտրոնի գործունեության հիմնական ուղղություններն են՝

1. Գենետիկական, սպեկտրոսկոպիկ և մանրադիտակային հետազոտություններ գյուղատնտեսության և սննդի անվտանգության ոլորտում, կենսաբազմազանության պահպանության ոլորտում,
2. Միջառարկայական հետազոտությունների կենսահնագիտության ոլորտում, հնագույն ԴՆԹ-ի ուսումնասիրություններ,
3. Կրթական գործունեություն, մասնավորապես մագիստրոսական կրթական ծրագրերի և կարճատև վերապատրաստման ծրագրերի իրականացում՝ կիրառական կենսաբանության և կենսահնագիտության ուղղություններով:

Ըստ ընդհանուր ուղղությունների՝ կենտրոնում կատարված գիտական աշխատանքների ամփոփում

Դրամաշնորհային ծրագրեր

Թեմայի անվանումը	*Ղեկավար*
1. Արենի քարանձավային համալիրում հայտնաբերված հնագույն խաղողի մնացորդների համեմատական հնէագենետիկական ուսումնասիրությունը (պետական ֆինանսավորում):	Հովհաննիսյան Ն. Ա.

Թեմա 1. Հաշվետու ժամանակաշրջանում իրականացվել են օրացուցային պլանով նախատեսված հետազոտական աշխատանքները: Կատարված աշխատանքների արդյունքում 23 միկրոսատելիտային ԴՆԹ մարկերների և 48 SNP մարկերների կիրառմամբ գենետիկորեն ուսումնասիրվել են Հայաստանի խաղողների տարբեր սորտեր, ինչպես նաև Արենի քարանձավում հայտնաբերված խաղողի մնացորդները, կատարվել են համեմատական գենետիկական վերլուծություններ՝ համեմատելով ստացված տվյալները միջազգային գենետիկական բազաների հետ: Իրականացվել են Արենի քարանձավային համալիրից հայտնաբերված խաղողի հնագույն մնացորդների իդենտիֆիկացում և դրանց նկարագրման աշխատանքներ: Որոշվել է նաև քարանձավում հայտնաբերված խաղողի նմուշների տարիքը ռադիոածխածնային թվագրման եղանակով: Խաղողի հնագույն, մասնավորապես միջնադարյան մնացորդներից անջատվել է գենոմային ԴՆԹ-ն, և իրականացվել է դրա միկրոսատելիտային վերլուծություն: Հաշվի առնելով նախորդ փուլերում ստացված արդյունքները և առկա ազգագրական և հնագիտական տվյալները՝ իրականացվել է Վայոց ձորում աճող Արենի խաղողի սորտի տարբեր նմուշների, խաղողի այլատեսակների գենետիկական պրոֆիլների, հնագույն խաղողի ԴՆԹ-ի, ինչպես նաև տեղի միջնադարյան վանքապատկան լքված այգիներում մնացած խաղողների գենետիկական պրոֆիլների համեմատական վերլուծություն: Ցույց է տրվել խաղողի տեսակների պատշաճ նույնականացման համար ամպելոգրաֆիկ և ժամանակակից կենսամոլեկուլային մոտեցումների հետ (ԴՆԹ մարկերների վրա հիմնված վերլուծություն) հնագիտական սկզբնաղբյուրների ուսումնասիրության արդյունքում ստացված տվյալների հետ համեմատության կարևորությունը: Ստացված արդյունքներն ունեն ինչպես գիտական, այնպես էլ կիրառական նշանակություն, քանի որ կարող են կիրառվել ինչպես ֆիլոգենետիկական հետազոտությունների համար, այնպես էլ գինեգործական, խաղողագործական ընկերությունների համար, ինչպես նաև կարող են ծառայել որպես սորտի գենետիկական մաքրությունը ստուգաճշտելու միջոց:

Արտասահմանյան դրամաշնորհներ

Թեմայի անվանումը	Ղեկավար
1. Establishment of Center of Excellence in Applied Biosciences Competitive Innovation Fund of CFEP, World Bank.	Հովհաննիսյան Ն. Ա.
2. Variation, Identification and Genetic Passportization of autochthonous, old, long neglected and endangered cultivated grapevine in Armenia ANSEF (Գիտության և կրթության ազգային հիմնադրամ):	Դալլաքյան Մ. Վ.

Թեմա 1. Հայաստանում Նորարարությունների մրցակցային հիմնադրամի (ՆՄՀ) ծրագրի շրջանակում ստեղծվել է Կիրառական կենսաբանության գերազանցության կենտրոնը: Որպես կարևորագույն արդյունք հարկ է նշել կենտրոնի գործողությունների ռազմավարական ծրագիրը, որը մշակվել է 2015-2020 թթ. համար: Այն ներառում է ինչպես կենտրոնի ռազմավարական նպատակների և գործառույթների իրականացման ծրագիրը, այնպես էլ կենտրոնի գործունեության կայունության պլանը: Ծրագրի կարևորագույն արդյունքներից և ձեռքբերումներից է կենտրոնի լաբորատորիաների զինումը նորագույն սարքավորումներով: Մասնավորապես ծրագրի շրջանակում ստեղծվել են ժամանակակից և հնագույն ԴՆԹ-ի ուսումնասիրության լաբորատորիաներ, որոնք հագեցվել են բոլոր անհրաժեշտ սարքավորումներով: Ստեղծվել է ԴՆԹ next generation sequencing լաբորատորիա, ձեռք է բերվել Illumina MiSeq սեքվենավորող համակարգը: Համակարգը տեղադրվել է, իրականացվել է կենտրոնի մասնագետների վերապատրաստում դրա կիրառության ուղղությամբ: Ստեղծվել են հնարավորություններ միջմասնագիտական համատեղ հետազոտական և կրթական ծրագրերի իրականացման համար: Ծրագրի շրջանակում ձեռք է բերվել նաև Nicolet IS 50 ինֆրակարմիր ճառագայթների տիրույթում աշխատող սպեկտրոսկոպը, որը լայնորեն կիրառվում է ինչպես կենսաբանության տարբեր ոլորտներում, այնպես էլ բնության պահպանության և նյութագիտության ոլորտում: Ծրագրի շրջանակում ձեռք է բերվել նաև սկանավորող էլեկտրոնային մանրադիտակ՝ Phenom ProX EDX համակարգով: Մանրադիտակը նույնպես շատ կիրառելի է կենսաբանության տարբեր ոլորտներում և արդյունավետորեն կիրառվում է կրթագիտական գործընթացներում: Վերը նշված բոլոր սարքավորումներն արդեն արդյունավետորեն օգտագործվում են ինչպես մագիստրոսների, այնպես էլ ասպիրանտների և գիտաշխատողների կողմից: Ծրագրի իրականացման արդյունքում կենտրոնի մասնագետները վերապատրաստվել են իրենց մասնագիտացման ոլորտներում և ձեռք բերել բոլոր անհրաժեշտ գիտելիքները՝ կենտրոնում առկա սարքավորումներով աշխատելու, կրթական ծրագրերում հետազոտական բաղադրիչն արդյունավետ ներդնելու և վերապատրաստման կարճատև դասընթացներ մշակելու և իրականացնելու համար: Մշակվել են վերապատրաստման կարճատև դասընթացներ ԴՆԹ սեքվենավորման և դրան առնչվող ոլորտներում: Ծրագրի իրականացման արդյունքում մշակվել է կիրառական կենսաբանության մագիստրոսական կրթական ծրագրերի նոր հայեցակարգ, որի հիման վրա էլ մշակվել են «Սննդի և գյուղատնտեսական կենսատեխնոլոգիա» և «Կենսահնագիտություն» մագիստրոսական կրթական ծրագրերի կառուցվածքը և բովանդակությունը, որը ներառում է ծրագրի մասնագիրը, մոդուլների քարտեզը, մոդուլների նկարագրիչները և մոդուլների ծրագրերը:

Թեմա 2. Հաշվետու ժամանակահատվածում ԴՆԹ մարկերներով ուսումնասիրված խաղողների սորտերի գենոտիպերի գենետիկական պրոֆիլները համեմատվել են European Vitis Database տվյալների հետ: Ուսումնասիրված նմուշներում հայտնաբերվել են 12 սինոնիմներ և 5 հոմոնիմներ: 28 սորտերի համար ստացվել են մենահատուկ գենետիկական պորֆիլներ: Մշակվել են Հայաստանի խաղողների գենետիկական ռեսուրսների միջազգային նկարագրիչներով նկարագրելու մոտեցումները և տվյալների բազայում դրանց ներկայացման ձևաչափը, որը ներառում է OIV նկարագրիչներ և գենետիկական անձնագրի տվյալներ:

Հայաստանում խաղողների գենետիկական ռեսուրսների ուսումնասիրման ուղղությամբ իրականացված աշխատանքները ցույց են տալիս դրանց շարքում սինոնիմների և հոմոնիմների առկայությունը և դրանց նույնականացման խնդրի լուծման անհրաժեշտությունը:

Կենտրոնում կատարված այլ աշխատանքների մասին:

Հաշվետու ժամանակահատվածում կենտրոնում իրականացվել են նաև մի շարք նպատակային հետազոտություններ, կազմակերպվել են քննարկումներ և սեմինարներ արտասահմանի գործընկերների մասնակցությամբ, կազմակերպվել են կենտրոնի աշխատակիցների վերապատրաստման ծրագրեր:

Այսպես, GIZ (German International Cooperation) Management and Sustainable use of Biodiversity- South Caucasus ծրագրի շրջանակում կենտրոնում իրականացվել են ցորենի և գարու տեղական սորտերի աղադիմացկունության և չորադիմացկունության ուսումնասիրություն, համապատասխան գեների դուրսբերում: Արդյունքները ներկայացվել են GIZ կլոր սեղանի ժամանակ, որին մասնակցել են ինչպես Գյուղատնտեսության, այնպես էլ Բնապահպանության նախարարության ներկայացուցիչներ:

Նույն ծրագրի շրջանակում մշակվել է «Ագրոկենսաբազմազանություն» ուսումնական հայերեն ձեռնարկը, որի տասից ավելի օրինակներ տրամադրվել են ԵՊՀ գրադարանին: Ձեռնարկը հասանելի է նաև էլեկտրոնային տարբերակով:

Հաշվետու ժամանակահատվածում կենտրոնում իրականացվել է վերապատրաստման երեք ծրագիր սկանավորող էլեկտրոնային մանրադիտակի, ինֆրակարմիր սպեկտրոսկոպի և ԴՆԹ սեքվենավորող սարքի առանձնահատկությունների, դրանցով աշխատելու և արդյունքները վերլուծելու վերաբերյալ: Կենտրոնի մասնագետները վերապատրաստվել են Դուբլինի Հնագիտական դպրոցի հնագույն ԴՆԹ-ի լաբորատորիայում և իրականացրել են Հայաստանի տարածքում պեղված մարդաբանական մնացորդների գենետիկական ուսումնասիրություններ: Մասնագետները վերապատրաստվել են նաև Հռոմում՝ կարճատև դասընթացների կազմակերպման ոլորտում, Վարեսեյում՝ գենետիկորեն վերափոխված օրգանիզմների հայտնաբերման նոր մեթոդների ուղղությամբ:

Հրատարակություններ

Դասագիրք	Մենագրություն	Ուսումնական ձեռնարկ	Ուսումնամեթոդական ձեռնարկ	Հոդված	Ձեկուցման թեզիս
-	-	-	1	3	3

Գիտական և ուսումնամեթոդական հրատարակությունների ցանկ

Ուսումնամեթոդական ձեռնարկ

1. *Ն. Ա. Հովհաննիսյան, Ա. Մելիքյան, Ա. Ա. Դանիելյան*, Ագրոկենսաբազմազանություն, «Ասողիկ» հրատ., Երևան, 2014, 137 էջ:

Հոդված

1. *M. V. Dallakyan, A. H. Yesayan, N. A. Hovhannisyan,* Armenian aborigene grape varieties identification and genetic diversity assessment by 48 SNP markers set for grapevine, “Biological Journal of Armenia”, 66 (2), 2014, pp. 84-86.
2. *N. A. Hovhannisyan, M. V. Dallakyan, A. H. Yesayan, T. V. Bagoyan, G. H. Melyan, B. Z. Gasparyan,* Multidisciplinary investigation of identity of the “Areni” grape variety, BIO Web of Conferences 5, 2015, pp. 01013-1-4. DOI: 10.1051/bioconf/20150501013

3. *N. A. Hovhannisyan and A. H. Yesayan,* Synthetic Engineered Genes, GMOs, and Hybridization with Wild Relatives, in S. S. Yadav, B. Redden. Crop Wild Relatives and Climate Change, Wiley-Blackwell, 2015, pp. 250-268.

Զեկուցման թեզիս

1. *M. Dallakyan, E. Zyprian, E. Maul, A. Yesayan, N. Hovhannisyan,* Genetic characterization of grape varieties in Armenia, Proceedings of the conference "Progress in vitis vinifera diversity evaluation and use", Lisbon, Protugal, 7-8 October, 2014, p. 55.
2. *E. Maul, R. Töpfer, F. Carka, V. Cornea, M. Crespan, M. Dallakyan, M. T. De Andrés Dominguez, G. De Lorenzis, L. Dejeu, S. Goryslavets, M. S. Grando, N. Hovannisyan, M. Hudcovicova, T. Hvarleva, J. Ibáñez, E. Kiss, L. Kocsis, T. Lacombe, V. Laucou, D. Maghradze, E. Maletic, G. Melyan, M. Z. Mihaljevic, G. Muñoz-Organero, M. Musayev, A. Nebish, C. F. Popescu, F. Regner, V. Risovanna, S. Ruisa, V. Salimov, G. Savin, A. Schneider, N. Stajner, L. Ujmajuridze, O. Failla,* Identification and characterization of grapevine genetic resources maintained ineastern European collections. Proceedings of the conference "Progress in vitis vinifera diversity evaluation and use", Lisbon, Protugal, 7-8 October, 2014, p. 16.
3. *N. Hovhannisyan, A. Yesayan, M. Dallakyan, B. Gasparyan, A. Bobokhyan, S. Hobosyan, Z. Muradyan, E. Binder, A. Danielyan,* Promotion to the preservation of Armenian wine grape diversity for wine production by development and publication of bilingual book on Armenian vines and wines, 38th World Vine and Wine Congress, Germany, 5-10 July, 2015, abstract book, p. 263.

ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Գիտական ղեկավար՝ *Մովսեսյան Ռուբեն Սուրենի, երկր.-հանք. գիտ. թեկնածու, դոցենտ*

Կենտրոնի աշխատակիցների կազմը

1. Գրիգորյան Մարատ Արիսի, երկր.-հանք. գիտ. թեկնածու, դոցենտ, փորձագետ
2. Խաչատրյան Շահեն Վոլոդյայի, երկր.-հանք. գիտ. թեկնածու, դոցենտ, փորձագետ
3. Մանուկյան Լիանա Ստյոպայի, քիմ. գիտ. թեկնածու, ղեկավարի ասիստենտ
4. Մարգարով Ալեքսանդր Ալեքսանդրի, քաղ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր, փորձագետ
5. Մովսիսյան Հարություն Իշխանի, երկր. գիտ. թեկնածու, դոցենտ, փորձագետ
6. Ներսեսյան Սուրեն Սահակի, երկր.-հանք. գիտ. թեկնածու, դոցենտ, փորձագետ
7. Քելյան Սարգիս Սամվելի, տեխ. գիտ. թեկնածու, փորձագետ

Կենտրոնի հիմնական խնդիրները

Հանքահումքային և ջրային ռեսուրսների կառավարման հիմնախնդիրներ: ՀՀ հանքահումքային, այդ թվում՝ տեխնածին, և ջրային ռեսուրսների նպատակային, արդյունավետ ու անվտանգ օգտագործման ուղիների ուսումնասիրում:

Կլոր սեղանների, քննարկումների և սեմինարների կազմակերպում շահագրգիռ կողմերի մասնակցությամբ՝ կառավարությանը համապատասխան քաղաքականության ու ծրագրերի հարցում աջակցելու նպատակով:

ՄԱԿ-ի Կայուն զարգացման փաթեթի ազգային և տեղական մակարդակներում իրագործման աջակցում ՀՀ Կառավարությանը՝ ապահովելով հանրության մասնակցությունը շրջակա միջավայրի հարցերի քննարկման և որոշումների ընդունման բոլոր փուլերում:

Հզորացնել ԵՊՀ կարողությունները և որպես գիտաուսումնական, հետազոտական բարձր ռեսուրսային կենտրոն՝ իրականացնել Ռիոյի սկզբունքներին համահունչ զարգացման համապատասխան ծրագրեր:

Կենտրոնի գործունեության ուղղությունները

ՀՀ օգտակար հանածոների հանքավայրերի շահագործման ներկայիս պայմանների, հանքաքարերի համալիր մշակման մակարդակի, լեռնահանքային թափոնների անվտանգ պահպանման և երկրորդային օգտագործման հնարավորությունների վերլուծություն:

Հանքահումքային ռեսուրսների արդյունահանման և լեռնահանքային թափոնների ծավալների կրճատման խնդիրների լուծման նպատակով տնտեսապես նպատակահարմար տեխնոլոգիաների որոնում, որոնք միաժամանակ կնպաստեն շրջակա միջավայրի աղտոտման նվազեցմանն ու բնական միջավայրի պահպանմանը:

ՀՀ տարածքի ջրային ռեսուրսների կառավարման ներկայիս վիճակի ուսումնասիրում, առկա բացթողումների վերհանում, որոնք առաջ են բերում ոռոգվող հողատարածքների ոչ լիարժեք օգտագործմանը, բնակչությանը բավարար ծավալով խմելու ջրով ապահովմանը: Ջրային ռեսուրսների օգտագործմանը, պահպանմանն ու կառավարմանն ուղղված միջոցառումների բարելավման ուղղությամբ, ինչպես նաև անապատացման դեմ պայքարին նպաստող առաջարկությունների մշակում:

Հանքավայրերի մշակման և ջրային ռեսուրսների օգտագործման համաշխարհային առաջատար փորձի և ՀՀ-ում վերջինիս կիրառման հնարավորությունների ուսումնասիրում:

Ըստ ընդհանուր ուղղությունների՝ կենտրոնում կատարված գիտական աշխատանքների ամփոփում

Արտասահմանյան դրամաշնորհներ

Թեմայի անվանումը	*Ղեկավար*
1. Աջակցություն Հայաստանին իրականացնելու Օրհուսի կոնվենցիայի դրույթները (OSCE Project 4200630):	Մովսեսյան Ռ. Ս.
2. Աջակցություն Կառավարությանն ու քաղաքացիական հասարակությանը շրջակա միջավայրի խնդիրների լուծման գործընթացներում (OSCE project UB 4200655):	Մովսեսյան Ռ. Ս.

Թեմա 1. Ծրագրի շրջանակում իրականացվել և 2014 թ.-ի դեկտեմբերին ավարտին են հասցվել «ՀՀ մետաղական օգտակար հանածոների պոչամբարների՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության վտանգների նվազեցմանն ուղղված պահանջների և խնդիրների վերհանումը» թեմայով ուսումնասիրությունները: ԵԱՀԿ երևանյան գրասենյակի ֆինանսական աջակցությամբ և կենտրոնում ներգրավված մասնագետ փորձագետների մասնակցությամբ իրականացվել են պոչամբարների ձևավորման նկատմամբ պահանջների, դրանց կառուցման ինժեներաերկրաբանական և կայունության մոնիթորինգի նորմերի պահպանման, ՀՀ մետաղական օգտակար հանածոների հանքավայրերի հանքաքարերի հարստացման արդյունքում ձևավորված հարստապոչերի պոչամբարների անձնագրավորման և կադաստրի վարման կարգերի ուսումնասիրություն, տեղեկատվական ամփոփ աղյուսակի ստեղծում և վերջիններիս վտանգավորության և շրջակա միջավայրի վրա ազդեցության կարգի որոշման հստակ սահմանումների մշակում: Մշակվել են առաջարկություններ, որոնք հնարավորություն կտան ՀՀ-ում նվազեցնելու հանքավայրերի շահագործման արդյունքում շրջակա միջավայրին հասցվող վնասները: Մասնավորապես դրանք վերաբերում են լեռնահանքային արդյունաբերության տնտեսական թափանցիկությանը, ընդերքօգտագործման գործունեության հնարավոր վթարների հետևանքների պատասխանատվության պարտադիր ապահովագրությանը, բնապահպանական և բնօգտագործման վճարների սահմանաչափերի վերանայմանը, գերշահույթների հարկման մեխանիզմներին, ընդերքօգտագործման քաղաքականությանը և այլն:

Թեմա 2. Ծրագրի շրջանակում ԵԱՀԿ երևանյան գրասենյակի ֆինանսական աջակցությամբ և մասնագետ փորձագետների ընդգրկմամբ մինչև տարեվերջ նախատեսվում է իրականացնել ուսումնասիրություններ երեք հիմնական ուղղություններով՝ հանքային ռեսուրսների ռացիոնալ օգտագործում և ՀՀ-ում հանքարդյունաբերական գործունեության գնահատում, ՀՀ տարածքում ջրային ռեսուրսների նպատակային օգտագործում, գոյություն ունեցող ջրային ռեսուրսների որակի պահպանում, ՀՀ կայուն զարգացման գերակայությունների և նպատակների քննարկում և որոշում: Հաշվետու ժամանակահատվածում կազմակերպվել են կլոր սեղան-քննարկումներ և սեմինար-հանդիպումներ «ՀՀ մետաղական հանքավայրերի արդյունահանման հետ կապված առանցքային հարցեր» և «ՀՀ տարածքում ջրահոսքերի վրա հիդրոէլեկտրակայանների կառուցման և շահագործման խնդիրները» թեմաներով: Ուսումնասիրությունների արդյունքների վերաբերյալ կազմվել են միջանկյալ հաշվետվություններ՝ ձևավորված առաջարկություններով, որոնք հասանելի են հանրությանը:

ԿՈՍՄՈԼՈԳԻԱՅԻ ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԽՈՒՄԲ-ԿԵՆՏՐՈՆ

Խումբ-կենտրոնի գիտական ղեկավար՝ *Գուրզադյան Վահագն Գրիգորի, ֆիզմաթ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր*

Խումբ-կենտրոնի աշխատակիցների կազմը

1. Եգորյան Գեղամ Մերուժանի, ֆիզմաթ. գիտ. թեկնածու, գիտաշխատող
2. Պողոսյան Էմիլ Էդուարդի, ֆիզմաթ. գիտ. թեկնածու, գիտաշխատող
3. Միրզոյան Սերգեյ Սամվելի, ֆիզմաթ. գիտ. թեկնածու, գիտաշխատող
4. Սարգսյան Սեդա Նորայրի, ֆիզմաթ. գիտ. թեկնածու, կրտսեր գիտաշխատող

Խումբ-կենտրոնի հիմնական խնդիրները

Խումբ-կենտրոնի հիմնական խնդիրներն են՝ տիեզերական մնացորդային ճառագայթում, տիեզերքում նյութի մեծ տարածքային բաշխում, գրավիտացիոն համակարգերի դինամիկա:

Խումբ-կենտրոնի գործունեության ուղղությունները

Խումբ-կենտրոնի գործունեության ուղղություններն են՝ աստղաֆիզիկայի և կոսմոլոգիայի ոչ գծային խնդիրների հետազոտություն, քաոսային երևույթներ, բնութագրիչներ, մոդելավորում, դիտողական տվյալների մշակում:

Ըստ ընդհանուր ուղղությունների՝ խումբ-կենտրոնում կատարված գիտական աշխատանքների ամփոփում

Գիտական թեմաներ

Թեմայի անվանումը	*Ղեկավար*
1. Ոչ գծային դինամիկական համակարգերի մոդելավորում (պետական ֆինանսավորում):	Գուրզադյան Վ. Գ.

Թեմա 1. Մշակվել է մեթոդ խոտորված համիլտոնյան դինամիկական համակարգերի էվոլյուցիայի համակարգչային հանրահաշվի (computer algebra) միջոցով հետազոտման համար՝ ժամանակից անկախ ճշտությամբ: Մեթոդը չի ներառում իտերատիվ թվային ինտեգրում սխալների կուտակմամբ, այլ օգտագործում է Լապլասի ձևափոխության կիրառությամբ փուլային տարածությունում ռեզոլվենտով հավասարման լուծումը համակարգչային հանրահաշվի միջոցով:

Խումբ-կենտրոնում կատարված այլ աշխատանքների մասին:

PLANCK արբանյակի միկրոալիքային քարտեզներում Տեզմարկի մեթոդով մշակման և Կոլմոգորովի ստոխաստիկական պարամետրի կիրառությամբ ի հայտ են բերվել կետային աղբյուրներ (գալակտիկաներ, քվազարներ, բլազարներ): Գտնված կետային աղբյուրների մի մասը համընկնում է

PLANCK-ի տվյալների այլ մեթոդներով մշակման արդյունքների, այլ հայտնի աղբյուրների հետ, սակայն ինն աղբյուրների համար համընկնումներ դեռևս գտնված չեն:

WMAP արբանյակի տվյալների օգնությամբ գրանցվել է M31 գալակտիկայի հալոն. ստացվել են տվյալներ հալոյի չափերի, պտույտի վերաբերյալ, հալոների բնութագրերը համարվում են հատկապես կարևոր մութ նյութի բնույթի և տարածքային բաշխման բացահայտման համար:

Մշակվել է մեթոդ խոտորված համիլտոնյան դինամիկական համակարգերի էվոլյուցիայի համակարգչային հանրահաշվի (computer algebra) միջոցով հետազոտման համար՝ ժամանակից անկախ ճշտությամբ: Մեթոդը չի ներառում իտերատիվ թվային ինտեգրում սխալների կուտակմամբ, այլ օգտագործում է Լապլասի ձևափոխության կիրառությամբ փուլային տարածությունում ռեզոլվենտով հավասարման լուծումը համակարգչային հանրահաշվի միջոցով:

Շարունակվել է LARES (Laser Relativity Satellite) արբանյակի միջոցով Հարաբերականության ընդհանուր տեսության ստուգմանը վերաբերող տվյալների մշակումը՝ միջազգային համագործակցության շրջանակներում: Նախնական արդյունքները պատրաստվում են տպագրության:

Վ. Գուրզադյանը ելույթներ է ունեցել մի քանի գիտաժողովներում և համալսարաններում, այդ թվում՝ «CCC predictions vs Planck» դասախոսություն «Conformal Cosmology» գիտաժողովում (Banach Center, Վարշավայի համալսարան), դասախոսություններ «Dynamical systems and signal separation» «The Third International LARES (LAser RElativity Satellite) Science workshop: Celebrating One Hundred Years of General Relativity» (Centro Fermi, Հռոմի համալսարան): Գիտաժողովներում ելույթներ են ունեցել նաև Հ. Խաչատրյանը՝ «The study of the Cold Spot with Planck» զեկուցում «Cosmology and Particles» գիտաժողովում ICTP-ում (Տրիեստ), ապա Մոսկվայում, Ս. Սարգսյանը՝ Ժնևի համալսարանում, Ա. Ալլահվերդյանը՝ Փարիզում:

Հրատարակություններ

Դասագիրք	Մենագրություն	Ուսումնական ձեռնարկ	Ուսումնամեթոդական ձեռնարկ	Հոդված	Զեկուցման թեզիս
-	-	-	-	5	-

Գիտական և ուսումնամեթոդական հրատարակությունների ցանկ

Հոդված

1. *H. G. Khachatryan, A. L. Kashin, E. Poghosian, G. Yegorian*, On the detection of point sources in Planck LFI 70 GHz CMB maps based on cleaned K-map, Mod. Phys. Lett. A30, 2015, 1550083.
2. *S. Mirzoyan*, Microlensing towards the Small Magellanic Cloud, Proc. Thirteenth Marcel Grossmann Meeting, pp. 2085-2087, World Scientific, 2015; doi: 10.1142/9789814623995-0363.
3. *F. De Paolis, G. Ingrosso, A. A. Nucita, D. Vetrugno, V. G. Gurzadyan, A. L. Kashin, H. G. Khachatryan, S. Mirzoyan, Ph. Jetzer, A. Qadir,* Possible evidence of the M31 halo rotation in WMAP data, Proc. Thirteenth Marcel Grossmann Meeting, pp. 1488-1490, World Scientific, 2015; doi: 10.1142/9789814623995_0203.
4. *V. G. Gurzadyan, V. V. Harutyunyan, A. A. Kocharyan,* A principal possibility for computer investigation of evolution of dynamical systems with independent on time accuracy, Eur Phys Journ C, 75, 252, 2015.
5. *A. E. Allahverdyan, V. G. Gurzadyan,* Can the time arrow be influenced by the dark energy? arXiv: 1506.00621.

ՌՈՒՍԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Տնօրեն՝ *Ներսեսյան Արուսյակ Մերգեյի*
Մեթոդիստ՝ *Երզինկյան Աննա Վիդոկի*

Ռուսական կենտրոնը բացվել է 2008 թ. փետրվարի 7-ին «Ռուսկիյ միր» հիմնադրամի և Երևանի պետական համալսարանի միջև 2006 թ. հունվարի 6-ին կնքված պայմանագրի հիման վրա:

Կենտրոնը ստեղծվել է պրոֆեսորադասախոսական կազմի, ուսանողության և բոլոր ցանկացողների ռուսերենի ուսուցմանն օժանդակելու, ռուս գրականության դասական և ժամանակակից ստեղծագործություններին, ինչպես նաև Ռուսաստանի մշակույթին, պատմությանը, արվեստին և կյանքին ծանոթանալու, հայ-ռուսական մշակութային և գիտական կապերն ընդլայնելու նպատակով:

Կենտրոնն ունի ընթերցասրահ, համակարգչային սենյակ և տեսանյութերի դիտման և քննարկումների համար նախատեսված սենյակ՝ ապահովված համապատասխան տեխնիկական միջոցներով:

Կենտրոնը հագեցած է հանրագիտարաններով, բառարաններով, հանրամատչելի և մասնագիտական գրականությամբ, ունի հարուստ տեսա- և աուդիոֆոնդ, ինչպես նաև ուսումնական ծրագրեր ռուսաց լեզվի ուսուցման և կատարելագործման համար:

Կենտրոնը հագեցած է նաև տեղեկատվական ուսուցողական համակարգով, որն ինտերակտիվ եղանակով հնարավորություն է տալիս օգտվելու ուսումնամեթոդական և գիտահանրամատչելի նյութերի մեծ ծավալով: Կենտրոնում կարելի է ծանոթանալ Ռուսաստանի ԶԼՄ-ների էլեկտրոնային տարբերակներին և օգտվել ռուսական տեղեկատվական կայքերից:

Ռուսական կենտրոնի այցելուներին ցուցաբերվում է համապատասխան օգնություն և օժանդակություն ռուսաց լեզվի ուսուցման, ուսումնական գրականության և ուսուցողական ծրագրերի հետ աշխատելու համար անհրաժեշտ ինքնուրույն աշխատանքի հմտություններ ձեռք բերելու գործում:

2014-2015 ուսումնական տարում Ռուսական կենտրոնի նյութերից օգտվել են ավելի քան 10 000 այցելու:

Հաշվետու տարում կենտրոնը կազմակերպել է հետևյալ միջոցառումները՝

1. Ակցիա «Առաջին կուրսեցիները Ռուսական կենտրոնում», որի շրջանակում ուսանողները ծանոթացել են կենտրոնի գործունեությանը և դիտել տեսաֆիլմ հիմնադրամի մասին:
2. Մոսկվայի և Սանկտ Պետերբուրգի մասին ֆիլմերի դիտում և քննարկում ուսանողների և դպրոցականների համար:
3. Ռուս դասականների գրականության հիման վրա նկարահանված ֆիլմերի դիտում ուսանողների և դպրոցականների մասնակցությամբ:
4. Գիտահանրամատչելի ֆիլմերի դիտում և քննարկում:
5. Հանդիպում-միջոցառումներ դպրոցականների հետ՝
   ա/ «Ուղևորություն Ռուսաստան» (N 139 դպրոցի աշակերտներ),
   բ/ «Պուշկինի հեքիաթների աշխարհում» («Ուսում» դպրոցի աշակերտներ),
   գ/ «Պոեզիայի երեկո» (N 173 դպրոցի աշակերտներ):
6. Միջոցառումներ՝ նվիրված ռուսական տոներին՝
   ա/ «Մասլենիցա»,
   բ/ «Ռուսաց լեզվի միջազգային օր»՝ ըստ ՄԱԿ-ի որոշման,
   գ/ Տիեզերագնացության օրը:
7. Գրական երեկոներ՝ նվիրված ռուսական գրականության և արվեստի ներկայացուցիչներին:

8. «Հեքիաթների աշխարհում»՝ միջոցառումների շարք դպրոցականների համար:
9. Ակցիա՝ նվիրված Հաղթանակի 70-ամյակին՝ ֆիլմերի դիտում, բանաստեղծական մրցույթ, հանդիսավոր միջոցառում:
10. Ռուսական մշակույթի օրեր Հայաստանում՝ համերգային ծրագիր, մոնոներկայացում, դասախոսություններ:
11. Կլոր սեղաններ՝
    ա/ «Վիրտուալ ուղևորություն Ասիական մայրաքաղաքներ»,
    բ/ «Ռուսական մշակույթ»,
    գ/ «21-րդ դարի լրագրող»,
    դ/ «Գենդերային լեզվաբանություն»:
12. Ուսանողական գիտական կոնֆերանս՝ «Մաթեմատիկայի և ինֆորմատիկայի հիմնախնդիրները»:
13. Բաց դասեր՝ նվիրված Եղեռնի 100-րդ տարելիցին:
14. Ստեղծագործական հանդիպում պրոֆեսոր Գալեչյանի հետ:
15. Ուսանողական թերթի հրատարակում:
16. Ամառային դասընթացներ երեխաների համար:

ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Գիտական ղեկավար և տնօրեն՝ *Շահնազարյան Գոհար Նելսոնի, սոց. գիտ. թեկնածու, դոցենտ*

Կենտրոնի աշխատակիցների կազմը

1. Մանուկյան Անի Գառնիկի, մանկ. գիտ. թեկնածու, արտաքին կապերի համակարգող
2. Հովհաննիսյան Սիրան Հրաչի, արտաքին և հասարակայնության հետ կապերի համակարգող
3. Նավոյան Սինարա Գառնիկի, հետազոտությունների համակարգող

Կենտրոնի հիմնական խնդիրները

- Բարձրացնել հայ հասարակությունում գենդերային հիմնախնդիրների վերաբերյալ տեղեկացվածության մակարդակը և ազդեցություն ունենալ գենդերային հարցերին վերաբերող քաղաքականության վրա խորհրդատվական, հետազոտական, իրավունքների և շահերի պաշտպանության ու հանրային գործունեությունների շնորհիվ:
- Նոր ընդլայնված և համակարգված ուսումնական ծրագրի միջոցով ուսանողներին ապահովել կանանց և գենդերային ուսումնասիրությունների վերաբերյալ կատարելագործված թրեյնինգներով:
- Համագործակցել ԵՊՀ կարիերայի և շրջանավարտների կենտրոնի հետ և սեմինարների ու դասընթացների իրականացման միջոցով նպաստել կանանց կրթական կապիտալի իրացմանը կարիերայում, ինչպես նաև մասնագիտական ու քաղաքական առաջնորդության դաշտում:
- Զարգացնել կայուն հանրային ռազմավարություն, որը կապ կստեղծի Գենդերային հետազոտությունների և առաջնորդության կենտրոնի ու կանանց հասարակական կազմակերպությունների, պետական և միջազգային կազմակերպությունների ու բարձրագույն ուսումնական հաստատությունների միջև Երևանում և ՀՀ մարզերում:
- Մասնավոր և պետական սեկտորում մասնագիտական առաջխաղացում փնտրող հայ կանանց համար զարգացնել մասնագիտական ցանց և վերապատրաստվելու այլ հնարավորություններ, ինչպես նաև կազմակերպել գիտաժողովներ և քննարկումներ:
- Որպես հետազոտական կենտրոն՝ ծառայել գենդերային հավասարության ու կանանց առաջնորդության հիմնախնդիրներին վերաբերող հետազոտությունների ու պետական քաղաքականության առաջխաղացմանը:

Կենտրոնի գործունեության ուղղությունները

Հետազոտություններ: Հայտարարված դրամաշնորհային ծրագրի շրջանակներում 2014-2015 ուսումնական տարվա ընթացքում իրականացվել են 28 հետազոտություններ, որոնք ներառում են ՀՀ գենդերային քաղաքականության բարելավմանն ուղղված մի շարք առաջարկներ: Հետազոտությունները վերաբերում են ինչպես կանանց քաղաքական մասնակցությանը, սեռով պայմանավորված հղիության

արհեստական ընդհատումներին, զանգվածային լրատվամիջոցներում կանանց կերպարի ներկայացմանը, այնպես էլ միգրացիայի գենդերային ասպեկտներին, առօրյա պրակտիկաներում գենդերային առանձնահատկությունների վերհանմանը, բարձրագույն կրթության ոլորտում կանանց հիմնախնդիրներին և այլն:

Գիտաժողովներ: Հաշվետու ժամանակահատվածում կենտրոնի կողմից իրականացվել է 1 գիտաժողով՝ նվիրված Հայաստանում գենդերային հիմնախնդիրների բարձրաձայնմանը: Գիտաժողովի ընթացքում ներկայացվել են 30 հետազոտությունների արդյունքներ, որոնք իրականացվել են 2014 և 2015 թվականների ընթացքում: Գիտաժողովի շրջանակում 2015 թվականի մայիսի 11-ին և 12-ին առանձին ելույթներով հանդես են եկել տեղական և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչներ, փորձագետներ, ինչպես նաև անկախ հետազոտողներ: Գիտաժողովի օրակարգում տեղ են գտել այնպիսի հետազոտություններ, ինչպիսիք են հայաստանյան գենդերային դիսկուրսի վերլուծությունը, ՏԻՄ ընտրություններում կանանց քաղաքական մասնակցությունը, բարձրագույն կրթական համակարգում կանանց ակադեմիական կարիերայի կառուցման սոցիալ-մշակութային գործոնները, կանանց դերի ընկալումները Հայաստանում գործող ավանդական և ոչ ավանդական կրոնական կազմակերպությունների կողմից, միգրացիայի ազդեցությունը գենդերային դերերի փոփոխության վրա ՀՀ Գեղարքունիքի մարզում, սեռական բնույթի հետապնդումները աշխատավայրում որպես կանանց մասնագիտական առաջընթացին խոչընդոտող գործոն, սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատումները որպես ընտանիքում գենդերային խտրականության արտահայտում, ինչպես նաև այլ հետազոտություններ, որոնք ունեն թե՛ գիտական և թե՛ պրակտիկ կարևոր նշանակություն: Գիտաժողովին ներկայացված բոլոր հետազոտությունների արդյունքները հայերեն և անգլերեն հասանելի են http://www.ysu.am/gender/ ԳՀԱԿ պաշտոնական կայքում:

Մենթորային ծրագիր: Մենթորային ծրագիրն իր էությամբ նորարար մոտեցում է ԵՊՀ ուսանողների համար: Այսօր մի շարք մասնագիտական դիտարկումները ակնհայտ են դարձնում այն փաստը, որ ուսանողուհիները համալսարանական տարիներին ունենում են բարձր առաջադիմություն, հմտորեն դրսևորում են իրենց մասնագիտական պրակտիկայի շրջանակներում, պատրաստակամ են աշխատանքի կատարողականության տեսանկյունից, ինչպես նաև ունեն բարձր աշխատանքային արդյունավետություն, սակայն աշխատաշուկայում չեն կարողանում լիարժեք դրսևորել իրենց, զբաղեցնել բարձր պաշտոններ և ունենալ մասնագիտական և աշխատանքային առաջխաղացումներ: Գենդերային հետազոտությունների և առաջնորդության կենտրոնի նպատակներից մեկն է, բացի ակադեմիական և պրակտիկ նշանակության հետազոտությունների իրականացումից, վեր հանել այն գործոնները, որոնք խոչընդոտում են երիտասարդ կանանց և աղջիկներին շարունակել կարիերայի կառուցման ճանապարհը հենց մենթորային ծրագրի կազմակերպման միջոցով:

Կրթական ծրագրեր և վերապատրաստումներ: Հաշվետու ժամանակահատվածում կենտրոնի կողմից մշակվել և իրագործման է հանձնվել «Կանայք, առաջնորդություն և զարգացում» նոր մագիստրոսական ծրագիրը: Ծրագիրը նոր մագիստրոսական մասնագիտացում է, որը 2015-2016 ուսումնական տարվանից կգործի Սոցիոլոգիայի ֆակուլտետում: Բացի դրանից՝ կենտրոնի կողմից պարբերաբար իրականացվել են վերապատրաստման ծրագրեր Արիզոնայի պետական համալսարանից հրավիրված դասախոսների կողմից, որոնց ավարտին մասնակիցներին տրվել են վկայականներ: Նշված դասընթացները հիմնականում ուղղված են եղել գենդերային հետազոտությունների շրջանակներում կիրառվող սոցիոլոգիական հետազոտության մեթոդաբանությանը և միգրացիայի ուսումնասիրություններին. Սարա Հեյֆորդ՝ «Ծանոթացում բազմամակարդակ մոդելավորմանը», Սեսիլիա Մենջիվար՝ «Ներգաղթի արդի օրենքները և դրանց ազդեցությունը ընտանիքների վրա» և մի շարք այլ թրեյնինգներ:

Ըստ ընդհանուր ուղղությունների՝ կենտրոնում կատարված գիտական աշխատանքների ամփոփում

Արտասահմանյան դրամաշնորհներ

Թեմայի անվանումը	*Ղեկավար*
1. «Հայաստանցիների դիրքորոշումները կանանց և տղամարդկանց իրավունքների հավասարության համատեքստում» (HED 0039722 ARM 1201):	Շահնազարյան Գ. Ն.

Թեմա 1. 2014 թվականի աշնանը՝ սեպտեմբեր-նոյեմբեր ամիսների ընթացքում, ԳՀԱԿ-ն իրականացրել է «Հայաստանի գենդերային բարոմետր» հետազոտությունը կանանց և տղամարդկանց դերերի վերաբերյալ հայաստանցիների դիրքորոշումները պարզելու նպատակով՝ հետազոտության ընտրանքում ընդգրկելով ՀՀ բոլոր մարզերը և Երևան քաղաքը:

Հաշվետու ժամանակահատվածում կենտրոնի կողմից իրականացվել է նաև ԵՊՀ ուսանողների գենդերային դիրքորոշումներին վերաբերող 2-րդ պարբերական բնույթ ունեցող հետազոտությունը: Հետազոտությունն իր տեսակով յուրահատուկ է, քանի որ կրելու է շարունակական բնույթ՝ պարզելու համար հայաստանցիների գենդերային դիրքորոշումների փոփոխությունների դինամիկան: Նշված հետազոտության նախապատրաստական, դաշտային, ինչպես նաև վերլուծական աշխատանքներն ավարտված են, իսկ հետազոտության արդյունքներն արդեն մի քանի անգամ ներկայացվել են Արիզոնայի պետական համալսարանում (ԱՄՆ), Վաշինգտոնում (ԱՄՆ), ինչպես նաև 2015 թվականի մայիսի 11-12-ին Գենդերային հետազոտությունների և առաջնորդության կենտրոնի կողմից կազմակերպված «Գենդերային հիմնախնդիրները ժամանակակից Հայաստանում. հետազոտությունից դեպի քաղաքականություն» երրորդ միջազգային գիտաժողովի ընթացքում:

Կենտրոնում կատարված այլ աշխատանքների մասին:

Կրթական ծրագրեր: Հաշվետու տարում կենտրոնը Կիրառական սոցիոլոգիայի ամբիոնի հետ մշակել է «Կանայք, առաջնորդություն և զարգացում» նոր մագիստրոսական ծրագիրը, որն իր տեսակով առաջինն է Հայաստանում և առաջին անգամ ներդրվում է ԵՊՀ-ում: Ուսումնական ծրագրի ավարտին շրջանավարտները ձեռք կբերեն սոցիոլոգիայի մագիստրոսի կոչում՝ «Կանայք, առաջնորդություն և զարգացում» մասնագիտացմամբ: Մագիստրոսական ծրագիրը սպասարկվելու է Կիրառական սոցիոլոգիայի ամբիոնի կողմից:

«Կանայք, առաջնորդություն և զարգացում» մագիստրոսական ծրագիրը Հայաստանում առաջինն է և ներառում է կրթական այնպիսի մոդուլներ, ինչպիսիք են՝

- Կանանց համաշխարհային շարժման պատմությունը 19-րդ և 20-րդ դարերում,
- Մշակութային հաղորդակցություն և գենդերային խտրականություն,
- Կանանց առաջնորդությունը գլոբալացման համատեքստում,
- Գենդեր և սոցիալական քաղաքականություն,
- Գենդերային հետազոտությունների մեթոդաբանություն,
- Կանայք և սոցիալական շարժումները հետխորհրդային ժամանակաշրջանում,
- Հաղորդակցման գենդերային առանձնահատկությունները,
- Կանայք, առաջնորդություն, կառավարում,
- Ռազմավարական կառավարում:

«Կանայք, առաջնորդություն և զարգացում» մագիստրոսական ծրագրի շրջանակում դասավանդող դասախոսներն ունեն մասնագիտական բարձր պատրաստվածություն և ակտիվ մասնակցություն են

ունեցել Հայաստանում կանանց առաջնորդությանն ուղղված գործընթացներին և հետազոտություններին: Դասախոսական կազմի վեց անդամներ 2013-2014 թթ. նաև վերապատրաստվել են Արիզոնայի պետական համալսարանի (ԱՄՆ) սոցիալական փոխակերպումների ֆակուլտետում:

Մագիստրոսական ծրագրի ուսանողներին հնարավորություն կընձեռվի ունենալու մենթորներ և գիտական ղեկավարներ Արիզոնայի պետական համալսարանի կանանց և գենդերային ուսումնասիրությունների ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմից:

Մենթորային ծրագիր: 2014-15 թթ. կենտրոնում շարունակվել է մենթորային ծրագրի իրականացումը, որի շրջանակում ԵՊՀ-ից 25 ուսանողներ կանոնավոր կերպով հանդիպել են իրենց ոլորտում կայացած կին քաղաքական գործիչների, գործարարների, միջազգային կառույցների ներկայացուցիչների հետ, ովքեր իրենց փորձով ու խորհրդատվությամբ փորձել են աջակցել ծրագրում ներգրավված ուսանողուհիներին՝ աշխատաշուկայում նրանց մրցունակությունը բարձրացնելու համար: Մենթորային ծրագրի նպատակն է հնարավորություն տալ ուսանողուհիներին ծանոթանալու ու զարգացնելու ապագա համագործակցություն տեղական ու միջազգային կառույցների և դրանց՝ կին ղեկավար պաշտոններ ունեցող մասնագետների հետ:

Վերապատրաստման դասընթացներ: Կենտրոնն ակտիվորեն համագործակցել է ԵՊՀ-ի կարիերայի և շրջանավարտների կենտրոնի հետ՝ աղջիկ ուսանողների համար կարիերայի զարգացման նպատակով աշխատաժողովներ ու դասընթացներ կազմակերպելու գործում: Դասընթացների նպատակն էր օգնել կանանց կրթական կապիտալի իրացմանը կարիերայում ու մասնագիտական-քաղաքական առաջնորդության դաշտում: Կենտրոնը նաև իրականացրել է բազմաթիվ հանդիպում-քննարկումներ, աշխատաժողովներ (workshops) ու թրեյնինգներ գենդերային հիմնահարցերի վերհանման ու բարձրաձայնման նպատակով: Միջոցառումներին մասնակցել են մի շարք ներկայացուցիչներ կանանց հասարակական կազմակերպություններից, պետական ու միջազգային կազմակերպություններից, բարձրագույն ուսումնական հաստատություններից:

Հրատարակություններ

Դասագիրք	Մենագրություն	Ուսումնական ձեռնարկ	Ուսումնամեթոդական ձեռնարկ	Հոդված	Ձեկուցման թեզիս
-	-	-	-	2	3

Գիտական և ուսումնամեթոդական հրատարակությունների ցանկ

Հոդված

1. *Զ. Գ. Ազնաուրյան, Գ. Ն. Շահնազարյան,* Գենդերային տարբերությունների ընկալումները հայաստանյան աշխատաշուկայում, «Գենդերային անհավասարությունը աշխատաշուկայում. հիմնախնդիրները և լուծումները լոկալ և գլոբալ համատեքստում», Գիտաժողովի նյութեր, ԵՊՀ հրատ., Երևան, 2015, էջ 67-82:
2. *Ա. Գ. Մանուկյան, Ն. Վ. Աբազյան,* Գենդերային անհավասարությունը հայաստանյան տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների աշխատաշուկայում, «Գենդերային անհավասարությունը աշխատաշուկայում. հիմնախնդիրները և լուծումները լոկալ և գլոբալ համատեքստում», Գիտաժողովի նյութեր, ԵՊՀ հրատ., Երևան, 2015, էջ 155-168:

Զեկուցման թեզիս

1. *Գ. Ն. Շահնազարյան, Վ. Ա. Աղաջանյան, Ս. Գ. Նավոյան,* Երևանի պետական համալսարանի ուսանողների գենդերային դիրքորոշումները (սոցիոլոգիական հետազոտության արդյունքների համառոտ ներկայացում), «Գենդերային անհավասարությունը աշխատաշուկայում. հիմնախնդիրները և լուծումները լոկալ և գլոբալ համատեքստում», Գիտաժողովի նյութեր, հոկտեմբերի 7-8, 2013, ԵՊՀ հրատ., Երևան, 2015, էջ 16-40:
2. *V. Agadjanian, A. Sevoyan,* Men's Migration and Employment of Women Left Behind in Rural Armenia, «Գենդերային անհավասարությունը աշխատաշուկայում. հիմնախնդիրները և լուծումները լոկալ և գլոբալ համատեքստում», Գիտաժողովի նյութեր, հոկտեմբերի 7-8, 2013, ԵՊՀ հրատ., Երևան, 2015, էջ 97-113:
3. *A. Křížkovn,* The Embeddedness of Entrepreneurship in the Gender Order of Post-Socialist Czech Society, «Գենդերային անհավասարությունը աշխատաշուկայում. հիմնախնդիրները և լուծումները լոկալ և գլոբալ համատեքստում», Գիտաժողովի նյութեր, հոկտեմբերի 7-8, 2013, ԵՊՀ հրատ., Երևան, 2015, էջ 114-129:

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՀ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱ

Գիտական ղեկավար՝ *Աղաբաբյան Ալվինա Սամվելի*

Լաբորատորիայի աշխատակիցների կազմը

1. Միրաքյան Վահրամ Գևորգի, բան. գիտ. թեկնածու, ավագ գիտաշխատող
2. Էլբակյան Էդգար Արմենի, լաբորանտ
3. Մելիքյան Սիրանուշ Սերոժի, լաբորանտ

Լաբորատորիայի հիմնական խնդիրները

- Ինֆոգեն վտանգների բացահայտմանն ուղղված գիտական մեթոդոլոգիայի մշակումը և կիրառումը տեղեկատվական տիրույթում,
- Ազգային անվտանգության տեսանկյունից արատավոր դիրքորոշումների ձևավորման, տարածման ճանապարհների ուսումնասիրումը և հակազդման մեխանիզմների մշակումը,
- Հայկական ԶԼՄ-ների բովանդակային քաղաքականության, դրա դրսևորումների և հասարակության վրա ունեցած հետևանքների գիտական հետազոտումը,
- Լրատվամիջոցների ազդեցությամբ սոցիալական դիրքորոշումների ձևավորման մեխանիզմների և փոփոխման հնարավորությունների և ուղիների ուսումնասիրումը,
- Կատարված հետազոտությունների շրջանակներում համագործակցության հաստատումը ինչպես լրատվամիջոցների, այնպես էլ համապատասխան պետական կառույցների հետ (նաև Արցախում)՝ հետազոտությունների ընթացքում ստացված արդյունքները լայնորեն կիրառելի դարձնելու նպատակով,
- Ներքոնշյալ ուղղություններով գիտահետազոտական ուսումնասիրությունների իրականացումը:

Լաբորատորիայի գործունեության ուղղությունները

- Ներքին և արտաքին միջավայրում հակահայկական քարոզչության հիմնական ուղղությունների և թեզերի ուսումնասիրություն և հակաքարոզչության կազմակերպում,
- Ինֆորմացիոն ներքին հոսքերի մշտադիտարկում, ինֆոգեն վտանգների բացահայտում և դրանց դեմ պայքարի մեթոդոլոգիայի մշակում,
- Հասարակության շրջանում ազգային անվտանգության տեսանկյունից վտանգ ներկայացնող սոցիալական դիրքորոշումների ձևավորման աղբյուրների, մեխանիզմների և տարածման ճանապարհների ուսումնասիրություն, հակազդման մեխանիզմների մշակում,
- Հայկական ինքնության ձևավորման հարցում լրատվամիջոցների դերի ուսումնասիրություն,
- Հայոց ցեղասպանության և Արցախյան հիմնախնդրի համակողմանի ուսումնասիրություն,
- Հայ-ադրբեջանական հակամարտության քարոզչական ասպեկտների, հայ-ադրբեջանական հակամարտության համատեքստում Հայաստանի Հանրապետության և Արցախի տեղեկատվական-հոգեբանական անվտանգության հիմնախնդիրների ուսումնասիրություն,
- Արցախի և Արցախյան հիմնախնդրի, բանակի, հայրենիքի, պետության և այլ պետականապահպան միավորների հետ կապված հասարակությունում առկա սոցիալական դիրքորոշումների ուսումնասիրություն,

- ԶԼՄ-ների միջոցով սոցիալական դիրքորոշման ձևավորման մեխանիզմների, դրանց կառուցվածքի, առաջացման և փոփոխման նախապայմանների, ինչպես նաև զանգվածային հաղորդակցության միջոցների ազդեցության և դրա հնարավոր հետևանքների ուսումնասիրում:

Ըստ ընդհանուր ուղղությունների՝ լաբորատորիայում կատարված գիտական աշխատանքների ամփոփում

Հաշվետու ժամանակահատվածում լաբորատորիայում իրականացվել են մի շարք աշխատանքներ, ծրագրեր և հետազոտություններ, որոնցից մի քանիսը առանձնակի կարևորություն ունեն:

1. Լաբորատորիայի անմիջական ուշադրության և համակողմանի ուսումնասիրության առարկա է այնպիսի մի հրատապ խնդիր, ինչպիսին է Հայաստանի դեմ տարվող թուրք-ադրբեջանական քարոզչությունը: Հրադադարից ի վեր հայ-ադրբեջանական հակամարտությունը ռազմաճակատից տեղափոխվել է դիվանագիտական և տեղեկատվական հարթակներ: Արդեն երկու տասնամյակ շարունակ Բաքվում և Անկարայում փորձում են, Հայաստանի հանդեպ տնտեսական, դիվանագիտական և հոգեբանական ճնշումներ բանեցնելով, Հայաստանում հասունացնել Արցախն Ադրբեջանին հանձնելու դիրքորոշումներ: Ի՞նչ նպատակներ է հետապնդում ներկայիս ադրբեջանական քարոզչությունը, քարոզչական ի՞նչ թեզեր է օգտագործում թշնամին, որո՞նք են թշնամական քարոզչության առավելություններն ու խոցելի կողմերը, ինչպե՞ս հակազդել թուրք-ադրբեջանական քարոզչական ագրեսիային, ինչպե՞ս չեզոքացնել նրանից բխող սպառնալիքները: Հարցերի այն շրջանակն է, որը մշտապես գտնվում է լաբորատորիայի ուշադրության կենտրոնում: Արդեն իսկ կատարված ուսումնասիրությունների հիման վրա հաշվետու ժամանակաշրջանում պատրաստվել և հրատարակվել է «Հայ-ադրբեջանական հակամարտության քարոզչական նկարագիրը. Հայաստանի Հանրապետության և Արցախի հոգեբանական անվտանգության խնդիրները հայ-ադրբեջանական հակամարտության համատեքստում» մենագրությունը (հեղինակ՝ Դ. Ջամալյան), որը բազմաթիվ հարցերի պատասխան է տալիս:

2. Արդեն իսկ ուսումնասիրության են ենթարկվել ՀՀ մի շարք լրատվամիջոցներ՝ հայ հասարակության շրջանում տարբեր երևույթների և կառույցների նկատմամբ դրական կամ բացասական սոցիալական դիրքորոշումներ ձևավորելու տեսանկյունից: Կատարված ուսումնասիրությունը հրատարակվել է մենագրության տեսքով՝ «Սոցիալական դիրքորոշումների ձևավորումը զանգվածային լրատվամիջոցներով» (հեղինակ՝ Վ. Միրաքյան): Ուսումնասիրությունը ցույց է տվել, որ մեզանում առկա հասարակական խնդիրների զգալի մասի պատճառը սոցիալական դիրքորոշումների ձևավորման հարցում մեր լրատվամիջոցների տեղեկատվական քաղաքականությունն է, հետևաբար այդ խնդիրները կարելի է լուծել լրատվամիջոցների տեղեկատվական քաղաքականության ճշգրտումներով:

3. Հաշվետու ժամանակահատվածում լաբորատորիան մի շարք ծրագրեր է իրականացրել Արցախում, մասնավորապես՝ Քաշաթաղի շրջանում: 2014 թ. դեկտեմբերին Քաշաթաղի շրջանում անցկացվել է «Լավագույն աշակերտ 2014» մրցույթը, որի ավարտին շրջանի 17 աշակերտներ պարգևատրվել են ԵՊՀ պատվոգրերով և մրցանակներով, իսկ նրանցից 3-ը (ավարտական դասարաններից) իրավունք են ստացել Երևանի պետական համալսարան ընդունվելու դեպքում ուսումնառության տարիներին օգտվել վարձավճարի 50 տոկոս զեղչից: Հաշվետու շրջանում լաբորատորիայի ջանքերով Քաշաթաղի 5 գյուղերի (Քաշունիք, Կումայրի, Աղաձոր, Իշխանաձոր, Գետամեջ) հանրակրթական դպրոցները համալրվել են գեղարվեստական և ուսումնամեթոդական գրականությամբ և տարատեսակ սպորտային գույքով:

4. Լաբորատորիան շարունակում է նաև իրականացնել սոցիոլոգիական բնույթի հետազոտություններ Արցախի, Արցախյան հիմնախնդրի, Հայոց ցեղասպանության, Թուրքիայի հետ հարաբերությունների հաստատման և այլ հիմնահարցերի հետ կապված: Հաշվետու ժամանակահատվածում սոցիոլոգիական հետազոտությունն անցկացվել է Քաշաթաղի շրջանի

դպրոցականների շրջանում (5-ից 12-րդ դասարանցիների շրջանում), որի նպատակն էր պարզել տարիքային այդ խմբերի ներկայացուցիչների պատկերացումները շրջանում իրենց ապագայի վերաբերյալ և շրջանում առկա խնդիրների նրանց պատկերացումները: Կատարված հետազոտությունը գտնվում է արդյունքների ամփոփման փուլում, որից հետո կպատրաստվի տպագրության: Լաբորատորիան իրականացնում է նաև «ՀՀ պետական բուհերի ուսանողների ընկալումները Հայոց ցեղասպանության ճանաչման, դատապարտման և պահանջատիրության խնդիրների վերաբերյալ» խորագրով սոցիոլոգիական որակական հետազոտություն, որի արդյունքները պատրաստ կլինեն տարեվերջին:

5. Լաբորատորիան սերտորեն համագործակցում է ՀՀ պաշտպանության նախարարության հետ: Համագործակցության հիմնական նպատակներն են բանակ-հասարակություն կապի ամրապնդումը, ներքին հակաբանակային ինֆոգեն վտանգների բացահայտումը և չեզոքացումը, հայկական զինված ուժերին և դրանց մարտունակության անկմանն ուղղված թուրք-ադրբեջանական նպատակաուղղված հակահայկական քարոզչության բացահայտումը և հակադարձումը և այլն: ՀՀ ՊՆ-ի հետ իրականացվում է «10 միֆ, 10 պատասխան» նախագիծը, որի հիմնական նպատակն է հակադարձել Արցախյան հերոսամարտի և հայկական բանակի հետ կապված առավել տարածված ադրբեջանական 10 միֆերը: Նախագծի շրջանակում կատարված աշխատանքը կամփոփվի գրքի տեսքով:

6. Հաշվետու շրջանում գործարկվել է լաբորատորիայի քառալեզու (հայերեն, ռուսերեն, անգլերեն, թուրքերեն) կայքէջը՝ www.armcsr.com: Այն ունի հետևյալ գլխավոր բաժինները՝ Հոդվածներ և վերլուծություններ, Հետազոտություններ, Հրապարակումներ, Հարցազրույց, Նորություններ, Գրադարան և այլն, որոնք անընդհատ համալրվում են նոր նյութերով և հրապարակումներով:

Հրատարակություններ

Դասագիրք	Մենագրություն	Ուսումնական ձեռնարկ	Ուսումնամեթոդա-կան ձեռնարկ	Հոդված	Ձեկուցման թեզիս
-	2	-	-	2	-

Գիտական և ուսումնամեթոդական հրատարակությունների ցանկ

Մենագրություն

1. *Վ. Գ. Միրաքյան,* Սոցիալական դիրքորոշումների ձևավորումը զանգվածային լրատվամիջոցներով, ԵՊՀ հրատ., Երևան, 2015, 216 էջ:
2. *Դ. Վ. Ջամալյան,* Հայ-ադրբեջանական հակամարտության քարոզչական նկարագիրը. Հայաստանի Հանրապետության և Արցախի հոգեբանական անվտանգության խնդիրները հայ-ադրբեջանական հակամարտության համատեքստում, ԵՊՀ հրատ., Երևան, 2015, 164 էջ:

Հոդված

1. *Ա. Ս. Աղաբաբյան,* ԼՂԻՄ-ի տարածքային յուրացման որոշ դրսևորումներ 1920-1930-ական թթ., «Պատմություն և մշակույթ» (հայագիտական հանդես), հ. 3, Երևան, 2014, էջ 193-202:
2. *E. A. Elbakyan,* Involvement of the State of Qatar in the Syrian Crisis, Hemispheres. Studies on Cultures and Societies, Institute of Mediterranean and Oriental Cultures, Polish Academy of Sciences, Vol. 30, No. 2, 2015, pp. 27-38.

ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

Տնօրեն՝ *Գրիգորյան Կարեն Հովիկի, բան. գիտ. թեկնածու*

ՀՀ-ում գործող ամենահին հրատարակչությունը՝ ԵՊՀ հրատարակչությունը, 2014 թ. ընթացքում հրատարակել է 102 անուն գիրք՝ 14.570 տպաքանակով, 1450 տպագրական մամուլ ընդհանուր ծավալով:

ԵՊՀ հրատարակչության աշխատանքներն ընթացել են հետևյալ հիմնական ուղղություններով՝

- ԵՊՀ գրահրատարակչական քաղաքականության իրականացում,
- ԵՊՀ գրահրատարակչական խորհրդի բնականոն աշխատանքների կազմակերպում,
- գրքերի էջադրում, համակարգչային և նկարչական ձևավորում, խմբագրում, սրբագրում,
- տպագրական աշխատանքների իրականացում,
- գրքերի թվանշայնացում և էլեկտրոնային գրքերի ստեղծում:

Հաշվետու ուստարում հրատարակվել են բազմաթիվ դասագրքեր, ուսումնամեթոդական ձեռնարկներ, բառարաններ և ակադեմիական այլ գրականություն:

Ուշադրության են արժանի հատկապես Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի շրջանակում հրատարակված գրքերը: Լույս են տեսել իսպանացի հայտնի գրող Գոնսալո Գուարչի՝ Հայոց ցեղասպանությանը նվիրված եռագրության վերջին՝ երրորդ գիրքը՝ «Սպիտակ լեռը», Հռոմի Սապիենցա համալսարանի պրոֆեսոր Մարիա Իմմակոլատա Մաչոտիի հեղինակած «Հայոց ցեղասպանությունը պատմության և հիշողության մեջ» աշխատությունը, Վենետիկի համալսարանի աշխատակից Սոնա Հարությունյանի «Հայոց ցեղասպանության թեման իտալական գրականության մեջ» գիրքը, Անգլերեն լեզվի թիվ 1 ամբիոնի դոցենտ Սիլվա Խասապետյանի «Ցեղասպանագիտական տերմինների հայերեն-անգլերեն և անգլերեն-հայերեն բառարանը», որը նորություն էր բառարանագրության մեջ և հետաքրքիր աղբյուր ցեղասպանագետների համար:

Ուշագրավ էին Հայագիտական հետազոտությունների ինստիտուտի ցեղասպանագիտության բաժնի վարիչ Վարուժան Պողոսյանի «Էջեր Հայոց ցեղասպանության և պատմագրության» աշխատությունը, պրոֆեսոր Պետրոս Հովհաննիսյանի կազմած Նիկողայոս Ադոնցի ասույթները Հայոց ցեղասպանության և Հայկական հարցի մասին, ինչպես նաև Շահան Նաթալիի «Թուրքերը և մենք» ժողովածուն:

Ծավալուն աշխատանք է տարվել նաև նոր դասագրքերի ստեղծման, մի շարք արժեքավոր ձեռնարկների վերահրատարակման ուղղությամբ: Հրատարակվել են «Հայոց լեզու և խոսքի մշակույթ» դասագրքի 2-րդ մասը՝ Յու. Ավետիսյանի, Ա. Սարգսյանի, Ն. Ներսիսյանի, Լ. Թելյանի, Ա. Տեր-Մինասյանի, Շ. Գևորգյանի, Ա. Ադիլխանյանի խմբագրությամբ, Պավել Բալայանի, Լուիզա Տեր-Սարկիսյանի, Բելլա Խոջումյանի «Учебник по русскому языку. Грамматика. Коммуникация. Речь.», Ալբերտ Կիրակոսյանի «Պինդ մարմնի ֆիզիկայի ներածություն», Յուրի Մովսիսյանի «Բարձրագույն հանրահաշիվ և թվերի տեսություն», Վահագն Միքայելյանի «Ալգորիթմական հանրահաշիվ» և մի շարք այլ դասագրքեր:

Ընթերցողների կողմից մեծ ուշադրության են արժանացել նաև Հայկ Ավետիսյանի, Արտակ Գնունու, Արսեն Բոբոխյանի, Գագիկ Սարգսյանի «Բրոնզ-երկաթեդարյան Սյունիքի սրբազան լանդշաֆտը. հնագիտական հետազոտություններ», Հրաչիկ Սիմոնյանի «1912-1913 թթ. բալկանյան պատերազմները և հայերը», ինչպես նաև «Ադրբեջանցիների պատմության «հերոսական» էջերից մեկը լուսանկարներում» գրքերը:

Տպագրության են պատրաստվել Նիկողայոս Ադոնցի 8 հատորյակի 7-րդ և 8-րդ հատորները, որոնցում զետեղված են մեծանուն պատմաբանի նամականին և «Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում» մեծածավալ աշխատությունը: Վերահրատարակման են պատրաստվել Մանուկ Աբեղյանի երկերի 5 հատորյակի վերջին երեք հատորները, ինչպես նաև Գևորգ Ջահուկյանի «Լեզվաբանության պատմություն» երկհատորյակը:

ԵՊՀ հրատարակչությունն աշխատանքներ է իրականացրել նաև լույս ընծայված գրքերի հանրայնացման ուղղությամբ: Գործարկվել է հրատարակչության նոր կայքը՝ http://publishing.ysu.am/, ուր տեղադրվում են նոր լույս տեսած, շուտով լույս տեսնող գրքերը, ինչպես նաև թարմացվում են նախկին տարիներին լույս տեսած գրքերը: Պարբերաբար հրատարակվել է լույս տեսած վերջին գրքերի կատալոգը, ֆակուլտետներում կազմակերպվել են նոր գրքերի շնորհանդեսները:

Հրատարակչությունը մասնակցել է Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի շրջանակում կազմակերպված միջազգային ֆորումի ժամանակ կայացած գրքերի ցուցահանդեսին, ինչպես նաև սեպտեմբերի 24-ից 26-ը կազմակերպված «ArmBook Expo» գրքի միջազգային ցուցահանդեսին: Ցուցահանդեսին մասնակցում էին ավելի քան 50 երկրների 100-ավոր հրատարակչություններ, և ներկայացված էր վերջին 3 տարիներին լույս տեսած՝ բացառապես Հայկական հարցին և Հայոց ցեղասպանությանը նվիրված գրականություն: Նկատենք, որ Հայաստանում այդ թեմայով ամենաշատ գրքերը՝ 34 անուն գիրք, հրատարակել էր ԵՊՀ-ն (ԵՊՀ հրատարակչությանը հաջորդում էին Ցեղասպանության թանգարան-ինստիտուտը և «Զանգակ 97» հրատարակչությունը՝ համապատասխանաբար 18 և 14-ական անուն գրքերով):

ԵՊՀ հրատարակչությունը մասնակցել է նաև Փարիզի, Լոնդոնի, Նյու Յորքի և Ֆրանկֆուրտի գրքի միջազգային տոնավաճառներին: Ֆրանկֆուրտում կայացած գրքի տոնավաճառին, որն աշխարհում ամենամեծն է, ներկայացված էր 27 անուն գիրք Հայաստանի, Հայկական հարցի և Հայոց ցեղասպանության մասին: Ֆրանկֆուրտի գրքի տոնավաճառի շրջանակում կայացել է նաև գերմանացի հայտնի մտավորական Ռոլֆ Հոսֆելդի «Մահ անապատում. Հայոց ցեղասպանությունը» գրքի գերմաներեն տարբերակի շնորհանդեսը, իսկ գերմաներենից հայերեն թարգմանության աշխատանքները մոտենում են ավարտին, և գիրքն առաջիկայում հրատարակվելու է նաև հայերեն:

Ընդլայնվել է համագործակցությունը Եվրոպական համալսարանների հրատարակչությունների ասոցիացիայի հետ, լիիրավ անդամության համար պաշտոնապես ներկայացվել են անհրաժեշտ փաստաթղթերը:

Հաշվետու տարում ԵՊՀ հրատարակչությունում շարունակվել են հրատարակված գրքերի թվանշայնացման, ինչպես նաև Android, iOS օպերացիոն համակարգերի և Kindle-ի համար նախատեսված էլեկտրոնային գրքերի ստեղծման աշխատանքները:

Հրատարակչության կողմից 2014-2015 թթ.-ին հրատարակված գրքերի ցանկ

1. Ալբերտ Կիրակոսյան, Արշակ Վարդանյան, Աննա Ասատրյան - «Պինդ մարմնի ֆիզիկայի խնդիրներ», 156 էջ
2. Ալբերտ Կիրակոսյան - «Պինդ մարմնի ֆիզիկայի ներածություն. Մաս 1», 288 էջ
3. Ալբերտ Կիրակոսյան - «Պինդ մարմնի ֆիզիկայի ներածություն. Մաս 2», 376 էջ
4. Ալբերտ Ղազարյան - «Գիտական հետազոտության մեթոդաբանական առանձնահատկությունները», 112 էջ
5. Ալեքսանդր Գրիգորյան, Մարիա Զասլավսկայա - «2011-2013 թթ. ԵՊՀ շրջանավարտների բավարարվածությունը ստացած կրթությունից. համեմատական վերլուծություն», 162 էջ
6. Ալեքսանդր Մարգարյան - «Ստուգաբանություններ» (վերահրատարակում), 173 էջ

7. «Ակունք», գիտամեթոդական և ուսումնամեթոդական հոդվածների ժողովածու (խմբ. խորհուրդ՝ Գ.Ա. Ղարիբյան և ուրիշ., գլխ. խմբ.՝ Ա.Ա. Ներսիսյան), 230 էջ
8. «Անտառ ծննդոց», գիտական հոդվածների ժողովածու, 656 էջ
9. Աննա Աբաջյան - «Անցյալ կատարյալ ժամանակը հայերենում», 178 էջ
10. Աննա Ալեքսանյան - «Միջանձնային հաղորդակցման իրականացումը կրթական գործընթացում», 264 էջ
11. Աննա Օհանջանյան - ««Բանալի ճշմարտութեան» երկը», 288 էջ
12. Աշխեն Զախարյան - «Ամուսնությունը հին Եգիպտոսում», 68 էջ
13. Աշոտ Մանուչարյան - «Վիմագրերը որպես Հայաստանի քաղաքական պատմության սկզբնաղբյուրներ (IX-XIV դդ.)», 240 էջ
14. Աշոտ Ոսկանյան - «Հասկացման անխուսափելիությունը», Մենագրություն, 398 էջ
15. Աշոտ Սաղյան - «Ամինաթթուների, պեպտիդների և սպիտակուցների քիմիա», 476 էջ
16. «Արաբագիտության ուսումնասիրություններ», պարբերական, 195 էջ
17. Արամ Մանուկյան - «Արտասահմանյան երկրների հակակոռուպցիոն քաղաքականության համեմատական վերլուծություն», 116 էջ
18. Արեմ Մկրտչյան, Գագիկ Թումանյան, Արթուր Աթանեսյան, Մարիա Զասլավսկայա - «Հայկական միգրացիոն ցանցերի ձևավորման և գործառնման որոշ հարցեր», 56 էջ
19. Արմենակ Մանուկյան - «Քաղաքական ուսմունքները նորագույն ժամանակներում», Ուսումնական ձեռնարկ, 2-րդ հրատարակություն, 162 էջ
20. Արմինե Գագինյան - «Ինֆինիտիվի տիպաբանությունը», մենագրություն, 240 էջ
21. Գայանե Թոքմաջյան, Լուսինե Կարապետյան - «Չհագեցած միացությունների քիմիա», Դասախոսությունների շարք, 226 էջ
22. Գայանե Ղազարյան - «Վերլուծական երկրաչափություն և գծային հանրահաշիվ - խնդիրների լուծման ուղեցույց և տիպային խնդիրների ընտրանի», Ուսումնամեթոդական ձեռնարկ, 198 էջ
23. Գագիկ Ղազինյան, Արթուր Վաղարշյան - «Հայոց իրավունքի պատմության հիմնահարցը, Հին շրջանից մինչև մեր օրերը», Մենագրություն, 416 էջ
24. «Գենդերային անհավասարությունները աշխատաշուկայում. հիմնախնդիրները և լուծումները լոկալ և գլոբալ համատեքստում», Գիտաժողովի ելույթների ժողովածու, 210 էջ
25. Գրիգոր Բալասանյան - «ԱՄՆ-ի քաղաքականությունը Հարավային Կովկասում», 24 էջ
26. Գրիգոր Ղարիբյան - «85-ամյա հոբելյանական և 60-ամյա համալսարանական կյանքիս էջերից», 114 էջ + 16 էջ ներդիր
27. Գևորգ Գրիգորյան, Արմեն Մարտիրյան - «Ատոմային սպեկտրոսկոպիա», ուսումնամեթոդական ձեռնարկ, 21 էջ
28. Դավիթ Ջամալյան - «Հայ-ադրբեջանական հակամարտության քարոզչական նկարագիրը», 164 էջ
29. «ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի ասպիրանտների և հայցորդների 2014 թ. նստաշրջանի նյութերի ժողովածու», խմբ.՝ Գ. Ս. Ղազինյան, 560 էջ
30. «ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի գիտաժողովի նյութերի ժողովածու», Նվիրվում է Ա. Եսայանի ծննդյան 100-ամյակին, գլխ. խմբագիր՝ Գ. Ղազինյան, 208 էջ
31. Երջանիկ Գեւորգեան, Սուսաննա Գեւորգեան - «Գարեգին Նժդեհի երկերի լեզուառճական միջոցները», 194 էջ + 1 էջ ներդիր
32. Էդմոնդ Վարդումյան - «Ֆինանսական ռիսկերի կառավարման մեթոդներ», ուսումնամեթոդական ձեռնարկ մագիստրանտների համար, 40 էջ
33. «Թաթուլը», 576 էջ + 8 էջ ներդիր
34. «Ժողովրդավարության մակարդակի ինդեքսի համեմատական վերլուծություն. Հայաստան, Վրաստան, Ադրբեջան, Ռուսաստան, Բելառուս, Ղազախստան, Ուկրաինա, Մոլդովա» (խմբ.՝ Ար. Ս. Ալեքսանյան), 352 էջ

35. Ժորա Աչոյան - «Ջրաերկրաբանական հետազոտությունների մեթոդիկա», ուսումնական ձեռնարկ, 245 էջ
36. Լևոն Ավետիսյան - «Արհեստ - արհեստավորանիշ անվանումները հայերենում», 136 էջ
37. «Ծաղիկ թարգմանությանց» (թարգմանության խմբագիրներ՝ Հ. Բաղդասարյան, Պ. Գևառա, Ա. Մանուկյան, Ա. Ստեփանյան, Հ. Օհանյան, Լ. Պաչենտի), գիտական հոդվածների ժողովածու, 188 էջ + 4 էջ ներդիր
38. Կարինե Ջիվանյան - «Իմունաբանություն», ուսումնական ձեռնարկ, 300 էջ
39. «Կիսահաղորդչային միկրո- և նանոէլեկտրոնիկա» գիտաժողովի նյութերի ժողովածու (կազմող՝ Ֆ. Գասպարյան), միջազգային իններորդ գիտաժողովի նյութերի ժողովածու, 180 էջ
40. «Կրթություն հանուն ապագայի՝ ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետ», (կազմեցին՝ պ.գ.դ., պրոֆեսոր Գ. Պետրոսյանը, պ.գ.թ., դոցենտ Ժ. Մանուկյանը, պ.գ.թ., դոցենտ Վ. Պետրոսյանը), 44 էջ
41. «Հայ գիտական բարբառագիտության 100-ամյակին նվիրված գիտաժողովի նյութեր», ԵՊՀ Իջևանի մասնաճյուղ, 280 էջ
42. «Հայագիտության հարցեր - 2015 (1)», գլխ. խմբագիր՝ Սիմոնյան Ա. Հ., ՀՀԻ, 243 էջ
43. «Հայագիտության հարցեր - 2015 (2)», գլխ. խմբագիր՝ Սիմոնյան Ա. Հ., ՀՀԻ, 183 էջ
44. Հայկ Ավետիսյան, Արտակ Գնունի, Արսեն Բոբոխյան, Գագիկ Սարգսյան - «Բրոնզ-երկաթեդարյան Սյունիքի սրբազան լանդշաֆտը. հնագիտական հետազոտություններ», 330 էջ
45. «Հայերենագիտության հիմնահարցեր և զարգացման հեռանկարներ» միջազգային գիտաժողովի զեկուցումներ (խմբ. խորհուրդ՝ Ա. Աբաջյան, Ռ. Սաքապետոյան, Ն. Պողոսյան), 230 էջ
46. «Հայոց ինքնության հարցեր» (գիտական հոդվածների ժողովածու), 148 էջ
47. «Հայոց լեզու և խոսքի մշակույթ», Գիրք Բ, (խմբ.՝ Յու. Ավետիսյան, Ա. Սարգսյան, Ն. Ներսիսյան, Լ. Թելյան, Ա. Տեր-Մինասյան, Շ. Գևորգյան, Ա. Ադիլխանյան), 340 էջ
48. Հասմիկ Սարգսյան - «Էլեկտրոնային կլանման սպեկտրոսկոպիա. կիրառումը քիմիական և կենսաբանական համակարգերում», ուսումնամեթոդական ձեռնարկ, 21 էջ
49. Հասմիկ Մայսուրյան - «ԶԼՄ տեխնիկա և տեխնոլոգիա», դասախոսություններ, 52 էջ
50. Հենրիկ Աբրահամյան - «Եվրամիությունը և կովկասյան տարածաշրջանը արդի ժամանակաշրջանում (1991-2015 թթ.)», 28 էջ
51. Հրաչիկ Միրզոյան - «Էջեր հայ գրքի և գրատպության պատմության», 400 էջ
52. Հրաչիկ Սիմոնյան - «1912-1913 թթ. բալկանյան պատերազմները և հայերը», 502 էջ + 8 էջ ներդիր
53. Հրաչիկ Սիմոնյան - «Ադրբեջանցիների պատմության «հերոսական» էջերից մեկը լուսանկարներում», 84 էջ
54. Մարիա Իմմակոլատա Մաչոտի - «Հայոց ցեղասպանությունը պատմության և հիշողության մեջ», Սապիենցա համալսարան, Հռոմ, Իտալիա, 232 էջ
55. Մարտին Աբրահամյան - «Աստղային դինամիկա», 160 էջ
56. Մարտին Գրիգորյան, Լևոն Գալոյան, Արթուր Կոբելյան - «Իրական անալիզի ընտրովի բաժիններ», Ուսումնամեթոդական ձեռնարկ, 156 էջ
57. Մարութ Վարդազարյան - «Աշխարհաքաղաքականություն», Դասընթացի ծրագիր, 33 էջ
58. «Մեթոդական ուղեցույց ուսանողների գիտելիքների ստուգման ու գնահատման եղանակների և ընթացակարգի վերաբերյալ», (Հայ բանասիրության ֆակուլտետ, «Հայոց լեզու և գրականություն» մասնագիտություն), 32 էջ
59. Մելանյա Դավթյան, Հենզել Մանուչարյան - «Մովսես Բաղրամյան. «Հայ քաղաքական հրապարակախոսության սկզբնավորումը»», 128 էջ
60. Միքայել Մալխասյան - «Կարսի մարզի բնակչությունը», 80 էջ
61. Միքայել Մալխասյան - «Պատմաժողովրդագրական ուսումնասիրություններ», Գիտական հոդվածների ժողովածու, գիրք 1, 248 էջ

62. Յուրի Գաբրիելյան - «Գերմաներեն լեզվի տիպաբանություն», Ուսումնական ձեռնարկ, 98 էջ
63. Յուրի Մովսիսյան - «Բարձրագույն հանրահաշիվ և թվերի տեսություն», Բուհական դասագիրք, Երրորդ հրատարակություն, 944 էջ
64. Նարինե Հայրապետյան, Միսակ Դավթյան - «Կենսաքիմիայի լաբորատոր աշխատանքներ», ուսումնամեթոդական ձեռնարկ, 51 էջ
65. Նիկողայոս Ադոնց - «Ասույթներ Հայկական հարցի և Հայոց ցեղասպանության մասին» (հայերեն, անգլերեն), կազմեց Պ. Հ. Հովհաննիսյանը, 44 էջ
66. «Նիցշեն մշակույթի համատեքստում» (գիտական հոդվածների ժողովածու), 454 էջ
67. Նորա Ազարյան - «Գենետիկական ճարտարագիտության գործնական աշխատանքներ», 60 էջ
68. «Շահան Նաթալի. «Թուրքերը և մենք»» (կազմող՝ Պետրոս Հովհաննիսյան), 464 էջ
69. Պետրոս Պետրոսյան, Վահան Մկրտչյան, Ռաֆիկ Քամալյան - «Գրաֆների տեսություն», 214 էջ
70. Ռուբեն Աղուզումցյան, Ելենա Մուրադյան, Վարդուհի Պապոյան, Ալինա Գալստյան, Դիանա Սարգսյան, Ծովինար Ամիրյան - «Անձի կենսագործունեության հոգեբանական անվտանգություն», կոլեկտիվ մենագրություն, 142 էջ
71. Սիլվա Խասապետյան - «Ցեղասպանագիտական եզրույթների բառարան անգլերեն-հայերեն և հայերեն-անգլերեն», Բառարան, 420 էջ
72. Սլավիկ Մելքոնյան - «Կիսահաղորդիչների օպտիկայի հիմունքներ», ուսումնական ձեռնարկ, 112 էջ
73. Սոնա Հարությունյան - «Հայոց ցեղասպանության թեման իտալական գրականության մեջ. Անտոնիա Արսլան», 102 էջ
74. Վահագն Միքայելյան - «Ալգորիթմական հանրահաշիվ», 374 էջ
75. Վահրամ Միրաքյան - «Սոցիալական դիրքորոշումների ձևավորումը զանգվածային լրատվամիջոցներով», 216 էջ
76. Վանիկ Վիրաբյան - «Հայաստանի Հանրապետության պետական անվտանգության համակարգի ձևավորումը և գործունեությունը 1918-1920 թթ.», մենագրություն, 746 էջ
77. Վանիկ Վիրաբյան - «Հայ-վրացական ռազմաքաղաքական հարաբերությունները և Լոռու չեզոք գոտին 1920-1921 թթ.», 94 էջ
78. Վարդուհի Պապոյան, Ալինա Գալստյան, Ելենա Մուրադյան, Դիանա Սարգսյան - «Մասնագիտական ինքնորոշման և կայացման հոգեբանական ուղղորդումը կրթական համակարգում», 82 էջ
79. Վարուժան Պողոսյան - «Էջեր Հայոց ցեղասպանության պատմության և պատմագրության», 380 էջ
80. «Վերլուծական տեղեկագիրք», պարբերական, 295 էջ + 5 էջ հավելված
81. Վլադիմիր Հարությունյան - «Կոնդենսացված միջավայրերի հետ իոնացնող ճառագայթման փոխազդեցության ֆիզիկական հիմունքները», Տեսություն և կիրառություններ, 104 էջ
82. «Ցեղասպանության ախտահոգեբանական և սոցիալ-հոգեբանական հետևանքները» (գլխ. խմբ.՝ Գ. Շահվերդյան), Գիտաժողովի նյութեր, 188 էջ
83. «Ցեղասպանությունը հասարակագիտական վերլուծությունների կիզակետում», Հոդվածների ժողովածու /Ա. Ե. Մկրտիչյանի գիտ. խմբագրությամբ, 188 էջ
84. Айказ Оганесян - «Россия и Армяне: Уроки истории и реалии», (2-ое дополненное издание), 322 стр.
85. Александр Амфитеатров - “Армянский вопрос”, 108 с. + 2 вкладыша
86. Ваге Енгибарян - “Концепция методики расследования преступлений”, 128 с.
87. Валери Тунян - “Армянский вопрос: мифотворческий аспект”, 410 стр.
88. “Евразийская перспектива Армении: региональные и глобальные вызовы” (ред. Гегам Петросян), Сборник научных докладов научнопрактической конференции (11 ноября 2014), 52 с.
89. “История Армении”, Под редакцией проф. Гр. Р. Симоняна, 740 стр.
90. Лилит Брутян - “Говорим, не говоря (Невербальная коммуникация в разных культурах)”, (Невербальная коммуникация в разных культурах), Учебное пособие, 77 с.

91. Марина Бабаханян - “Изучаем русские глаголы движения”, Учебно-методическое пособие для преподавателей русского языка как иностранного/неродного, 102 с.
92. Мовсес Демирчян - “Диалог культур в современных условиях”, 108 с.
93. Наира Мартирян - “Сборник заданий по стилистике и культуре речи современного русского языка”, 92 стр.
94. “Образование во имя будущего. Факультет международных отношений”, Составители: д.и.н., профессор Гегам Арутюнович Петросян, к.и.н., доцент Жак Самвелович Манукян, к.и.н., доцент Ваграм Самвелович Петросян, 44 ст.
95. Павел Балаян, Луиза Тер-Саркисян, БеллаХоджумян - “Учебник по русскому языку. Грамматика. Коммуникация. Речь.”, 480 стр.
96. Сергей Саядов – “У Истоков русского арменоведения: историографический обзор”, 336 с. + 36 с. вкладыш
97. Србуи Ламбарджян - “Персуазивность в художественном тексте”, (курс лекций), 42 с.
98. Татьяна Варданесова - “Культура хачкаров Арагацотна и Котайка IX-XVII вв.”, 192 с. + 44 с. вкладыш
99. Astghik Grigorian - “Thoughts - the Shadows of Our Feelings (English for students of Philosophy and Psychology)”, 247 p.
100. “Education for Future. YSU Faculty of International Relations”, Compiled by: G. Petrosyan, Zh. Manukyan, V. Petrosyan, 44 p.
101. Hrachik Simonyan - “One of the “heroic” pages of the history of Azerbaijan in pictures”, 76 p.
102. Margarita Apresyan, Diana Bagiryan - “A new glimpse into science”, 3rd edition, 192 p.
103. Henry Barby - “Au pays de l’épouvante. L’Arménie martyre”, (editor: V. Poghosyan), 176 p.
104. Rose Lambert - “Hadjin, and the Armenian Massacres”, (editor: V. Poghosyan), 64 p.
105. René Pinon - “La suppression des Arméniens. Méthode allemande - travail turc”, (editor: V. Poghosyan), 58 p.

Էլեկտրոնային գրքեր

1. Արման Կիրակոսյան - «ԱՄՆ-ի արտաքին քաղաքականությունը և արևմտահայությունը (19-րդ դար - 1914 թ.)», մենագրություն, 400 էջ
2. Աշոտ Եղիազարյան - «Աշոտ Ա Բագրատունի. թագավոր Հայոց», մենագրություն, Երևան, 80 էջ
3. «Հայոց պատմություն», դասագիրք, Հր. Սիմոնյանի խմբ., 874 էջ

ԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍՆԵՐ

«ԳԻՏԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ»

«Գիտական տեղեկագիր» հանդեսի բնական գիտություններ սերիան հրատարակվում է 1967 թ.-ից: 2009 թ.-ից ԵՊՀ գիտխորհրդի որոշմամբ տեղեկագիրը տրոհվել է 3 հանդեսների:

2014 թ. երրորդ քառամսյակում լույս է տեսել.

«Գիտական տեղեկագրի» (Proceedings of YSU)՝ «Ֆիզիկամաթեմատիկական գիտություններ», «Քիմիա», «Կենսաբանություն» (անգլերեն) հանդեսների 3-րդ համարները և «Գիտական տեղեկագրի»՝ «Երկրաբանություն, աշխարհագրություն» (հայերեն, ռուսերեն) հանդեսի 3-րդ համարը:

2015 թ. լույս են տեսել նշված 3 հանդեսների 1-ին և 2-րդ համարները:

2014 թվականի մայիսից «Գիտական տեղեկագրի» (Proceedings of YSU) «Ֆիզիկամաթեմատիկական գիտություններ» հանդեսը ներկայացված է Գերմանիայի Դաշնային Հանրապետությունում հրապարակվող «zbMATH Journal» ռեֆերատային հանդեսում:

ԲԱՆԲԵՐ ԵՐԵՎԱՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ

2014 թ. սեպտեմբերից մինչև դեկտեմբերի վերջ «Բանբեր Երևանի համալսարանի» քառամսյա գիտական հանդեսը լույս է ընծայվել մասնագիտական 6 շարքով (1. «Հայագիտություն», 2. «Բանասիրություն», 3. «Իրավագիտություն», 4. «Փիլիսոփայություն, հոգեբանություն», 5. «Սոցիոլոգիա, տնտեսագիտություն», 6. «Միջազգային հարաբերություններ, քաղաքագիտություն»)՝ յուրաքանչյուրից մեկական համար (N 3):

Տպագրվող հանդեսներին ԵՊՀ գիտխորհրդի որոշմամբ 2015 թ. հունվարից ավելացել է նաեւ «Բանբեր Երևանի համալսարանի. Ռուս բանասիրություն» շարքը, բայց սկսած 2015 թվականից, համաձայն ՀՀ գրապալատի պահանջների, տեղի են ունեցել մի շարք փոփոխություններ: «Բանբեր Երևանի համալսարանի» հանդեսի շարքերը դարձել են առանձին հանդեսներ՝ իրենց անհատական միջազգային համարանիշներով.

1. «Բանբեր Երևանի համալսարանի. Հայագիտություն» (ISSN 1829-4588),
2. «Բանբեր Երևանի համալսարանի. Բանասիրություն» (ISSN 1829-457X),
3. «Բանբեր Երևանի համալսարանի. Իրավագիտություն» (ISSN 1829-4561),
4. «Բանբեր Երևանի համալսարանի. Փիլիսոփայություն, հոգեբանություն» (ISSN 1829-4553),
5. «Բանբեր Երևանի համալսարանի. Սոցիոլոգիա, տնտեսագիտություն» (ISSN 1829-4545),
6. «Բանբեր Երևանի համալսարանի. Միջազգային հարաբերություններ, քաղաքագիտություն» (ISSN 1829-4529),
7. «Բանբեր Երևանի համալսարանի. Ռուս բանասիրություն» (ISSN 1829-4537):

Դրանից զատ՝ խմբագրական խորհուրդները վերաձևավորվել են նոր ձևաչափով. նախկին ընդհանուր և տվյալ շարքի խմբկոլների փոխարեն յուրաքանչյուր հանդես ունի մեկ միասնական խմբագրակազմ:

Մինչև 2015 թ. լույս են տեսել հանդեսների առաջին և երկրորդ համարները:

Ինչպես և նախկինում, հանդեսների յուրաքանչյուր համարը լույս է տեսել 5 մամուլ ծավալով, 100 օրինակ տպաքանակով՝ բացառությամբ «Բանբեր Երևանի համալսարանի. Բանասիրություն» հանդեսի, որը լույս է տեսնում 120 օրինակով:

«Բանբերում», հայերենից և ռուսերենից բացի, հոդվածներ են տպագրվում նաև անգլերեն, յուրաքանչյուր հոդված ունենում է երկու լեզվով ամփոփում:

Հանդեսի հրատարակությանը զուգահեռ՝ իրականացվում են ԵՊՀ կայքում հանդեսի էլեկտրոնային տարբերակի զետեղման աշխատանքները:

Հաշվետու ժամանակահատվածում կայքում տեղադրվել են 1997-1999 թթ. լույս տեսած համարները:

Հանդեսը համագործակցում է ռուսաստանյան «Էլեկտրոնային գիտական գրադարան» ՍՊԸ-ի հետ՝ փոխանակելով տեղեկատվություն, ինչը նպաստում է «Բանբերի» միջազգային հեղինակության աճին: Այդ մասին է վկայում ԵՊՀ կայքում «Բանբերի» էջ հաճախումների կտրուկ աճը:

2014-2015 ՈՒՍՏԱՐՈՒՄ ԵՊՀ-ՈՒՄ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱԾ ՀԻՇԱՐԺԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐՆ՝ ԸՍՏ www.ysu.am ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԻՆՏԵՐՆԵՏԱՅԻՆ ԿԱՅՔԻ ԼՐԱՀՈՍԻ

[01.09.14] ԲԱՐԻ ԱՎԱՆԴՈՒՅԹՆ ԱՅՍ ՏԱՐԻ ԷԼ ՉԽԱԽՏՎԵՑ

Այսօր ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետի առաջին կուրսեցիների հյուրն էր ՀՀ արտգործնախարար Էդվարդ Նալբանդյանը:

[01.09.14] ԲԱՐԻ ԳԱԼՈՒՍՏ ԵՊՀ ԿԱՄ 2014-2015 ՈՒՍՏԱՐՎԱ ՄԵԿՆԱՐԿԸ ՏՐՎԱԾ Է

Այսօր առաջին կուրսեցիներն առաջին անգամ ոտք դրեցին ԵՊՀ որպես ուսանողներ, իսկ ֆակուլտետներում նրանց սպասվում էր ջերմ ընդունելություն:

[01.09.14] ԵՊՀ-Ն ԸՆԴՈՒՆԵՑ ԻՐ ՆՈՐԵԿՆԵՐԻՆ

Ինչպես դպրոցականների, այնպես էլ նորաթուխ համալսարանականների համար սեպտեմբերի 1-ը՝ Գիտելիքի օրը, միշտ էլ եղել է սպասված ու ցանկալի տոն:

[02.09.14] ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏԵԼԻՔԻ ՕՐ ԵՌԱԲԼՈՒՐՈՒՄ

Սեպտեմբերի 1-ին Գիտելիքի օրվան նվիրված միջոցառումներից անմասն չէր մնացել նաև ԵՊՀ «Վարդանանք» ռազմահայրենասիրական դաստիարակության ակումբը:

[08.09.14] ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓՈՐՁԱԳԵՏՆԵՐՆ ԱՅՑԵԼԵՑԻՆ ԵՊՀ

Սեպտեմբերի 8-ին ԵՊՀ ռեկտոր Արամ Սիմոնյանն իր աշխատասենյակում հյուրընկալեց բարձրագույն կրթության ոլորտն ուսումնասիրող Եվրոպական միության մի խումբ փորձագետների:

[09.09.14] ԲԱՔՎԻ ՋԱՐԴԵՐԸ՝ 14-ԱՄՅԱ ԱՂՋԿԱ ՀՈՒՇԵՐԻ ՏԵՍՔՈՎ

Արդեն երկու տարի է՝ միջազգային հանրության դատին է հանձնվել Բաքվի ջարդերի մասին պատմող «Nowhere: A story of exile» անգլերեն գիրքը՝ հիմնված ականատեսի հուշերի վրա:

[10.09.14] ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆՆԵՐԻՆ ՀԱՄԱԽՄԲԵԼ ԷՐ ՀՈԲԵԼՅԱՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍԸ

Այսօր Հայ բանասիրության ֆակուլտետի մասնաշենքը սովորականից բազմամարդ էր. հարազատ ֆակուլտետի 95-ամյակն էին նշում պատմաբաններն ու բանասերները:

[10.09.14] ՄԱՅՐ ԲՈՒՀԻ ԱՆԴՐԱՆԻԿ ՖԱԿՈՒԼՏԵՏՆԵՐԸ 95 ՏԱՐԵԿԱՆ ԵՆ

Այսօր համալսարանականների՝ Կոմիտասի անվան պանթեոն այցելությամբ տրվեց ԵՊՀ պատմության և հայ բանասիրության ֆակուլտետների հիմնադրման 95-ամյակին նվիրված միջոցառումների մեկնարկը:

[11.09.14] ԵՊՀ 95-ԱՄՅԱ ՖԱԿՈՒԼՏԵՏՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԸ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐԳԵՎՆԵՐ ԵՆ ՍՏԱՑԵԼ

Հանդիսավոր նիստով ամփոփվեցին ԵՊՀ հայ բանասիրության և պատմության ֆակուլտետների 95-ամյակին նվիրված միջոցառումները:

[11.09.14] ՀԵՌԱՆԿԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԲՋՋԱԳԵՆԵՏԻԿԱՅԻ ՈԼՈՐՏՈՒՄ

Այսօր ԵՊՀ ռեկտոր Արամ Սիմոնյանը ԵՊՀ պատվավոր դոկտորի կոչում շնորհեց հանրահայտ գերմանացի գիտնական Թոմաս Լիիրին:

[11.09.14] ՈՒՇԱԴՐՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆՈՒՄ ԲՈՒՀԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆ ԷՐ

ԵՊՀ արհեստակցական կազմակերպությունը մասնակցել է արհեստակցական կազմակերպությունների միջազգային համագումարին:

[11.09.14] ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆԸ՝ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԺՈՂՈՎԻ ՄԱՍՆԱԿԻՑ
Սեպտեմբերի 9-ից 10-ը ՌԴ մայրաքաղաք Մոսկվայում տեղի է ունեցել «Ռուսաստանի առջև եղած մարտահրավերները փոփոխվող աշխարհում» խորագրով գիտաժողով:

[11.09.14] ՎԱՐԴԱՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ. ՆԱ ՄԱՀԱՊԱՐՏ Է ԵՎ ՈՉ ՄԻԱՅՆ...
Այսօր ԵՊՀ տնտեսագիտության ֆակուլտետում տեղի ունեցավ հուշ-ցերեկույթ՝ նվիրված նույն ֆակուլտետի զոհված ուսանող-ազատամարտիկ Վարդան Հովհաննիսյանի հիշատակին:

[12.09.14] ՉԻՆԱՐԵՆՆ ՈՒ ՉԻՆԱԿԱՆԸ ԵՊՀ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ
Այսօր ԵՊՀ ռեկտոր Արամ Սիմոնյանը հյուրընկալել էր Հայաստանում Չինաստանի Ժողովրդական Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան Տյան Չանչունին:

[12.09.14] ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ՆՈՐ ԾՐԱԳՐԵՐ DAAD-ԻՑ
DAAD գրասենյակի ղեկավարը կրկին Մայր բուհում էր:

[12.09.14] ՀԱՆԴԻՊՈՒՄ-ՔՆՆԱՐԿՈՒՄ ԻԳԱԿԱՆ ՄԵՌԻ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ
Այսօր ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի դատական նիստերի դահլիճում տեղի ունեցավ հանդիպում-քննարկում Երևանի Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Մարգարիտա Հարթենյանի հետ:

[15.09.14] ՈՒՍԱՆՈՂԸ ՆԵՐԿԱՅԱՑՐԵՑ ՄԱՅՐ ԲՈՒՀՆ ԱՐՏԵՐԿՐՈՒՄ
ԵՊՀ-ի մագիստրոսը ոչ միայն մասնակցել է միջազգային գիտաժողովին, այլև հանդես է եկել որպես բանախոս և ավագ գրախոս:

[16.09.14] «ՄԵՐ ՈՒԺԸ ՄԵՐ ԶԻՆՎՈՐՆ Է»
ԵՊՀ «Վարդանանք» ռազմահայրենասիրական դաստիարակության ակումբը մասնակցեց Կապավորի օրվան նվիրված միջոցառմանը:

[16.09.14] ՄԱՅՐ ԲՈՒՀՆ ԻՐ ԼՈՒՄԱՆ ՈՒՆԻ ԲԱՆԱԿԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՄ
Այսօր ԵՊՀ գիտխորհրդի նիստերի դահլիճում տեղի ունեցավ ՀՀ ՊՆ նախարար Սեյրան Օհանյանի հերթական հանդիպումը համալսարանականների հետ:

[16.09.14] ՍՈՎՈՐԵԼՈՒ Է ՀՐԱՎԻՐՈՒՄ ԷՍՏՈՆԱԿԱՆ ՏԱՐՏՈՒԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԸ
Այսօր ԵՊՀ Պալեանների անվան դահլիճում Տարտուի համալսարանի պրոֆեսոր Էիկի Բերգը ներկայացրեց երկու նոր մագիստրոսական ծրագրեր, որոնցով կարող են սովորել նաև հայ ուսանողները:

[17.09.14] ՀԱՄԵՐԳ՝ ՆՎԻՐՎԱԾ ԵՊՀ 95-ԱՄՅԱԿԻՆ
Արամ Խաչատրյանի անվան միջազգային 2-րդ փառատոնի բացման համերգը նվիրված էր Երևանի պետական համալսարանի 95-ամյակին:

[18.09.14] 100-ԱՄՅԱ ԲԱՐԵԿԱՄՈՒԹՅՈՒՆ. ՇՆՈՐՀԱՎՈՐԱՆՔԸ՝ ՀԱՄԱԺՈՂՈՎԻ ՏԵՍՔՈՎ
ԵՊՀ-ում այսօր մեկնարկել է «Հայ-գերմանական հարաբերությունների ավելի քան 100 տարին» խորագրով միջազգային համաժողովը:

[19.09.14] «ԲԻՋՆԵՍԻ ՄԱՐԴ ԵՄ, ԲԱՅՑ ՉԵՄ ՄՈՌԱՆՈՒՄ, ՈՐ ՆԱԵՎ ՄԱՅՐ ԵՄ...»
2013 թ-ին ՀՀ վարչապետի կողմից «Լավագույն գործատու» մրցանակին արժանացած Աննա Խաչատուրովան համալսարանականների հյուրն էր:

[19.09.14] ՀԱՅԱԳԵՏՆԵՐԻ «ՎԵՐԱԴԱՐՁԸ» ԵՊՀ. ԲԱՑՎԵԼ ԵՆ 3 ԱՆՎԱՆԱԿԱՆ ԼՍԱՐԱՆՆԵՐ
ԵՊՀ-ում բացվել են 3 ականավոր գործիչների՝ Յոհաննես Լեփսիուսի, Հերման Գոլցի և Գարեգին Հովսեփյանցի անունները կրող լսարաններ:

[19.09.14] ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՓՈՍՏԻ ՀԱՍՑԵՆԵՐ ԲՈԼՈՐ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ
Սեպտեմբերի 18-ին ԵՊՀ գիտխորհրդի նիստերի դահլիճում տեղի ունեցավ աշխատանքային խորհրդակցություն. քննարկվեցին ԵՊՀ ուսանողներին համալսարանական էլեկտրոնային փոստի հասցեներ տրամադրելու, ինչպես նաև շրջանավարտների «HEN-GEAR» պորտալը ԵՊՀ-ում շահագործելու հարցերը:

[22.09.14] ԱՄՐԱՊՆԴՎԵՑԻՆ ԿՐԹԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԵՎ ԳԻՏԱԿԱՆ ԿԱՊԵՐԸ
Սեպտեմբերի 18-19-ը ԵՊՀ ներկայացուցիչները՝ ի դեմս ռեկտոր Արամ Սիմոնյանի և Հայագիտական հետազոտությունների ինստիտուտի փոխտնօրեն Մհեր Հովհաննիսյանի,(ՀՀԻ)Դոնի Ռոստովում մասնակցել են միջազգային երկօրյա գիտական համաժողովին:

[22.09.14] ԱՆՑԿԱՑՎԵՑ ԱՄԵՆԱՄՅԱ 18-ՐԴ ԳԻՏԱԳՈՐԾՆԱԿԱՆ ԿՈՆՖԵՐԱՆՍԸ
Սեպտեմբերի 19-21-ը ԵՊՀ Բյուրականի ուսումնաարտադրական բազայում տեղի ունեցավ «Կրթությունը ՀՀ անվտանգության համատեքստում» խորագրով գիտագործնական կոնֆերանս:

[23.09.14] ՔՆՆԱՐԿՎԵՑԻՆ ԿԱՆԱՆՑ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ
Սեպտեմբերի 23-ին ԵՊՀ-ում ներկայացվեցին «Վերծանելով կնոջը Հայաստանի արդի քաղաքական դիսկուրսում» թեմայով հետազոտության արդյունքները:

[24.09.14] ՇՆՈՐՀԱՎՈ՛Ր ՏՈՆԴ, ՈՒՍԱՆՈ՛Ղ
Սեպտեմբերի 23-ին՝ երեկոյան, ԵՊՀ կենտրոնական մասնաշենքի բակը լցված էր համալսարանականների շնչով:

[24.09.14] ՀԱԼԼԵԻՑ ԵՐԵՎԱՆ՝ ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ՀԵՏՔԵՐՈՎ
ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետի ուսանողների ու պրոֆեսորադասախոսական անձնակազմի հյուրը Հալլեի համալսարանի մանրէաբանության ինստիտուտի պրոֆեսոր Գերի Սովերսն էր:

[25.09.14] ԿԱՅԱՑԱՎ ԳԻՏԽՈՐՀՐԴԻ՝ ԱՅՍ ՈՒՍՏԱՐՎԱ ԱՌԱՋԻՆ ՆԻՍՏԸ
Այսօր կայացավ ԵՊՀ գիտխորհրդի՝ այս ուստարվա անդրանիկ նիստը՝ օրակարգային 7 հարցերով:

[26.09.14] ԲԱՑ ԴՌՆԵՐՈՎ ԴԵՊԻ ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ԲՈՒՀԵՐ
«Ալիանս ֆրանսեզ» կազմակերպության և Հայաստանում Ֆրանսիայի դեսպանատան ներկայացուցիչներն այսօր եկել էին ԵՊՀ՝ ուսանողներին ներկայացնելու Ֆրանսիայում սովորելու հնարավորությունները:

[26.09.14] ՔՆՆԱՐԿՎԵՑԻՆ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
Հելմուտ Շմիդթի անվան համալսարանի պատվիրակության անդամները հանդիպեցին համալսարանականների հետ:

[26.09.14] ԳԻՏԱԺՈՂՈՎԸ ՆՎԻՐՎԱԾ ԷՐ ՍՏԵՓԱՆ ՄԵԼԻՔ-ԲԱԽՇՅԱՆԻ 90-ԱՄՅԱԿԻՆ
Այսօր ԵՊՀ պատմության ֆակուլտետում տեղի ունեցավ «Տեղանունից դեպի պատմություն. նվիրված Ստեփան Մելիք-Բախշյանի ծննդյան 90-ամյակին» խորագրով գիտաժողով:

[27.09.14] ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆՆԵՐԸ ՀԵՏԱՔՐՔՐՎԱԾ ԵՆ ՃԱՊՈՆԵՐԵՆՈՎ
Սեպտեմբերի 26-ին ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետ այցելեց «Ճապոնիա» հիմնադրամի մոսկովյան մասնաճյուղի աշխատակից Տոսիյուկի Յամագուտին:

[27.09.14] «ԿԻՆԸ ՆԱԽԿԻՆՈՒՄ ԱՇԽԱՏՈՒՄ ԷՐ, ԻՍԿ ՀԻՄԱ՝ ՉԱՐՉԱՐՎՈՒՄ»
Սեպտեմբերի 26-ին ԵՊՀ գենդերային հետազոտությունների և առաջնորդության կենտրոնի հյուրն էր ազգագրագետ Մխիթար Գաբրիելյանը:

[27.09.14] ՆՈՐԱՅՐ ՄԱՐՈՒԹՅԱՆ. ՄԻ ՁԵՌՔՈՒՄ ԳՐԻՉՆ ԷՐ, ՄՅՈՒՍՈՒՄ՝ ՁԵՆՔԸ
Սեպտեմբերի 26-ին ԵՊՀ Ե. Չարենցի անվան դահլիճում տեղի ունեցավ զոհված ազատամարտիկ Նորայր Մարությանին նվիրված մրցանակաբաշխություն:

[29.09.14] ՆԵՐԿԱՅԱՑՎԵՑԻՆ ԳՈՐԾԱՐԱՐԻ ԻՄԻՋ ՁԵՎԱՎՈՐԵԼՈՒ ԳԱՂՏՆԻՔՆԵՐԸ
Մարդուն դիմավորում են հագուստով, բայց ճանապարհում են խելքով...

[29.09.14] ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՄՇԱԿՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ ԵՆ
Սեպտեմբերի 18-ին, 23-ին և 26-ին ԵՊՀ գիտական խորհրդի նիստերի դահլիճում պրոռեկտորներ Ալեքսանդր Գրիգորյանի, Գեղամ Գևորգյանի և Ռուբեն Մարկոսյանի գլխավորությամբ ԵՊՀ 2016-2020 թթ. զարգացման ռազմավարական ծրագրի (ՌԾ) մշակմանը մասնակցող աշխատանքային խմբերը շարունակեցին քննարկումները:

[01.10.14] ԿԱՆԱՅՔ ՉԵՆ ԿԱՐՈՂԱՆՈՒՄ ԻՐԵՆՑ ԼԻԱՐԺԵՔ ԴՐՄԵՎՈՐԵԼ ԱՇԽԱՏԱՇՈՒԿԱՅՈՒՄ
Սեպտեմբերի 30-ին համալսարանականների հյուրն էր ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ընտանիքի, երեխաների ու կանանց հիմնահարցերի բաժնի պետ Արմինե Թանաշյանը:

[01.10.14] ԱՊԱԳԱ ԻՐԱՎԱԳԵՏՆԵՐԸ՝ ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆ
Այսօր ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետում մեկնարկել է «Փախստականների իրավունք» խորագրով ամառային դպրոցը:

[02.10.14] ՆԵՐԿԱՅԱՑՎԵՑ ՄԱԿ-Ի ՆՈՐ ԾՐԱԳՐԻ ՕՐԱԿԱՐԳԸ
Հոկտեմբերի 1-ին ՄԱԿ-ի հայկական ասոցիացիան ԵՊՀ Միջազգային հարաբերությունների ֆակուլտետի ուսանողներին ներկայացրեց ՄԱԿ-ի նոր ծրագիրը՝ Հետ-2015-ի զարգացման օրակարգը:

[02.10.14] ԺՈՒՌՆԱԼԻՍՏԻԿԱՅԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԸ 15 ՏԱՐԵԿԱՆ Է
Հոկտեմբերի 1-ին՝ 15 տարի առաջ նույն օրը, Ժուռնալիստիկայի բաժինն առանձնացվեց Հայ բանասիրության ֆակուլտետից՝ դառնալով առանձին ֆակուլտետ:

[03.10.14] ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ ԶԱՐԳԱՑՆՈՒՄ ԵՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
Ապագա մաթեմատիկոսներն ամփոփեցին սեմինարի արդյունքները, իսկ ամենաակտիվները նաև հավաստագրեր ստացան:

[05.10.14] ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԱՌԱՋԻՆ ԽՈՒՄԲՆ ԱՆՑԱՎ ԿՐԱԿԱՅԻՆ ԴԱՍԸՆԹԱՑ
Հոկտեմբերի 5-ին Մայր բուհի ներկայացուցիչները ՊՆ Վ. Սարգսյանի անվան ռազմական ինստիտուտում մասնակցեցին կրակային պատրաստության դասընթացի առաջին փուլին

[06.10.14] ԳԻՏԱԿԱՆ ԿԱՊԵՐԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄ ՏԵՍԱԿԱՆ ՖԻԶԻԿԱՅԻ ՄԻՋՈՑՈՎ
Այսօր ԵՊՀ-ում մեկնարկել է «Բարձր էներգիաների ֆիզիկա և դաշտի քվանտային տեսություն» խորագրով 2-րդ աշնանային դպրոցը:

[06.10.14] ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ ՀԵՏԱՔՐՔՐՎԱԾ ԵՆ ՈՉ ՄԻԱՅՆ ՉԻՆԱՐԵՆՈՎ, ԱՅԼԵՎ ՄՇԱԿՈՒՅԹՈՎ
Այսօր ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետի դեկան Գեղամ Պետրոսյանն ընդունեց ԵՊԼՀ-ի Կոնֆուցիոսի ինստիտուտի չինական կողմի տնօրեն Յանգ Մեյհուային:

[07.10.14] ՄԱՆՐԷԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ՆՎԱՃՈՒՄՆԵՐԸ ՀԱՄԱԽՄԲԵԼ ԷԻՆ ԳԻՏՆԱԿԱՆՆԵՐԻՆ
Այսօր կենսաբաններն ամփոփեցին դեռևս հոկտեմբերի 5-ին մեկնարկած միջազգային գիտաժողովի արդյունքները:

[07.10.14] ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆ «ՌՈՄԵՈ ԵՎ ՋՈՒԼԻԵՏԸ» «ՀԱՅ ՖԵՍՏ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓԱՌԱՏՈՆՈՒՄ
Հոկտեմբերի 6-ին Համազգային թատրոնում ԵՊՀ մշակույթի կենտրոնը «Հայ Ֆեստ» փառատոնի շրջանակներում հանդես եկավ Վ. Շեքսպիրի «Ռոմեո և Ջուլիետ» պիեսի բեմադրության նոր ներկայացմամբ:

[08.10.14] 100-ԱՄՅԱԿԻՆ ԸՆԴԱՌԱՋ. ԱՅՍՕՐՎԱ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ՝ ՎԱՂՎԱ ՊԱՀԱՆՋԱՏԵՐ
Այսօր ԵՊՀ-ում անցկացվեց «Հայոց ցեղասպանության պահանջատիրության հարցը 100-ամյակին ընդառաջ» խորագրով դասախոսություն-քննարկումը:

[09.10.14] ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԴԱՍԵՐԸ ՖՐԱՆՍ-ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՏԵՍԱՆԿՅՈՒՆԻՑ
Այսօր ԵՊՀ գիտական խորհրդի նիստերի դահլիճում տեղի ունեցավ Առաջին համաշխարհային պատերազմին նվիրված հիշատակման միջոցառում:

[10.10.14] ՔՆՆԱՐԿՎԵՑԻՆ ԿԱՆԱՆՑ ՆԿԱՏՄԱՄԲ ԲՌՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՔԵՐՆ ՈՒ ԴՐԴԱՊԱՏՃԱՌՆԵՐԸ
Հոկտեմբերի 7-9-ը ԵՊՀ գենդերային հետազոտությունների և առաջնորդության կենտրոնում տեղի ունեցավ «Կանանց նկատմամբ բռնության սոցիալ-մշակութային և կառուցվածքային գործոնները» թեմայով թրեյնինգը:

[10.10.14] «ՃԱՆԱՉՈՒՄ ԱՍՎԱԾԸ ՆԱԽԵՎԱՌԱՋ ՀԱՏՈՒՑՈՒՄՆ Է»
Կայացավ ուսանողական երեք կառույցների համատեղ կազմակերպած սեմինարը «Հայոց ցեղասպանության 100-ամյա տարելիցին ընդառաջ» միջոցառումների շրջանակում:

[10.10.14] ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 12-Ը ԻՍՊԱՆԵՐԵՆԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՐՆ Է
ԵՊՀ ռոմանագերմանական բանասիրության ֆակուլտետը նշեց իսպաներենի միջազգային օրը:

[10.10.14] **ԿՐԿՆԱԿԻ ՏՈՆ ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏՈՒՄ**
ԵՊՀ փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետը նշում է հիմնադրման 50-ամյակը:

[10.10.14] ... ՈՐՊԵՍԶԻ ԱՐԺԵՎՈՐՎԵՆ ՆՈՐ ԺԱՄԱՆԱԿՆԵՐԻ ՆՈՐ ՀԱՂԹԱՆԱԿՆԵՐԸ
Հոկտեմբերի 9-ին տեղի ունեցավ «Անմահները հրամայում են... ԵՊՀ պատմության ֆակուլտետը Արցախյան գոյամարտում» խորագրով հուշ-ցերեկույթ:

[10.10.14] ԻՆՉՊԵ՞Ս ԿԱՌՈՒՑԵԼ ԽՈՍՏՈՒՄՆԱԼԻՑ ԿԱՐԻԵՐԱ
Հոկտեմբերի 8-10-ը ԵՊՀ շրջանավարտների և կարիերայի կենտրոնն ու Գենդերային հետազոտությունների և առաջնորդության կենտրոնն անցկացրին հերթական սեմինար-դասընթացը:

[13.10.14] ԵՊՀ-Ն՝ ՀԱՄԱՊԵՏԱԿԱՆ ՏՈՆԻ ՄԱՍՆԱԿԻՑ
Հոկտեմբերի 12-ին Մայր բուհի ավելի քան 500 ուսանողներ ու դասախոսներ միացան «Երեբունի-Երևան 2796» տոնակատարությանը:

[13.10.14] «ԼԱՎԱԳՈՒՅՆ ՈՒՍԱՆՈՂ-2014»
«ԵՊՀ լավագույն ուսանող» ամենամյա մրցանակաբաշխության կանոնակարգի համաձայն՝ հայտարարվել է «Լավագույն ուսանող-2014» մրցույթը:

[13.10.14] ԷՆԵՐԳԱԽՆԱՅՈՂՈՒԹՅԱՆ ՀԱՅ-ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԲԱՆԱՁԵՎԻ ՀԵՏՔԵՐՈՎ
Էներգախնայողության և էներգաարդյունավետության ուսումնասիրմանը նվիրված ծրագիրն իրականացնելու են հայ և գերմանացի մասնագետները:

[13.10.14] ԱՍՈՐԻ ՈՒՂՂԱՓԱՌ ԵԿԵՂԵՑՈՒ ՀՈՎՎԱՊԵՏՆ ԱՅՑԵԼԵՑ ՄԱՅՐ ԲՈՒՀ
Այսօր ԵՊՀ գիտական խորհրդի նիստերի դահլիճում տեղի ունեցավ հանդիպում Անտիոքի և Համայն Արևելքի նորընտիր Պատրիարք Նորին Սրբություն Մորան Մոր Իգնատիուս Եփրեմ Երկրորդի հետ:

[14.10.14] ԼՍՈՒՄ ԵՎ ՍՈՎՈՐՈՒՄ ԵՆՔ ԱՐԱԲԵՐԵՆ
Այսօր ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետում ներկայացվեց արաբերենի նոր ուսումնական ձեռնարկը:

[14.10.14] ԵՊՀ-Ն ՖՐԱՆԿՖՈՒՐՏԻ ԳՐՔԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՏՈՆԱՎԱՃԱՌՈՒՄ
ԵՊՀ հրատարակչությունը Հայաստանի պատվիրակության կազմում մասնակցել է աշխարհի խոշորագույն՝ Ֆրանկֆուրտի գրքի տոնավաճառին:

[15.10.14] ԱՊԱԳԱ ԹԱՐԳՄԱՆԻՉՆԵՐԸ ԵՐԴՎԵՑԻՆ
Այս տարի ևս ԵՊՀ թարգմանության տեսության և պրակտիկայի ամբիոնի առաջին կուրսեցիների երդման արարողությունը կայացավ Մաշտոցի գերեզմանի մոտ:

[15.10.14] ՄՈՆՊԵԼՅԵ 1-Ը՝ ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ՆՈՐ ԳՈՐԾԸՆԿԵՐ
ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի դեկան Գագիկ Ղազինյանը հոկտեմբերի 8-12-ը պաշտոնական այցով մեկնել է Մոնպելյե՝ Մոնպելյե 1 համալսարանի հետ միջֆակուլտետային համագործակցությունը խթանելու նպատակով:

[16.10.14] ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳՈՎԱԶԴԱՅԻՆ ԴԱՇՏԸ 3 ՕՐ ԳՏՆՎԵԼՈՒ Է ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ
Երևանի միջազգային կոմունիկացիոն բիենալեի մեկնարկը տրվեց այսօր ԵՊՀ մասս մեդիա կենտրոնում:

[17.10.14] ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՐԵՑ ԻՐ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ
Այսօր ԵՊՀ-ում Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոն-Հայաստանը (ՀՌԿԿ) ընդունեց Նյու Յորքի Կարնեգի կորպորացիայի ներկայացուցիչներին:

[20.10.14] ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԻ ՄԱՆԿԱՎԱՐԺՆԵՐԸ ԿԵՆՏՐՈՆԱՑԵԼ ԷԻՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ
Հոկտեմբերի 17-18-ը Ծաղկաձորում անցկացվել է «Մանկավարժության ժամանակակից հիմնախնդիրները» խորագրով տարածաշրջանային միջազգային գիտաժողովը:

[20.10.14] ՄԱՅՐ ԲՈՒՀԸ ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ՈԼՈՐՏՈՒՄ ԿՀԱՄԱԳՈՐԾԱԿՑԻ ՌՈՒՍԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀԵՏ
Ռուս գործընկերները շահագրգռված են ԵՊՀ-ի հետ համագործակցության հեռանկարային ծրագրերի հաստատմամբ և զարգացմամբ:

[20.10.14] ԱՐԳԵԼՈՑԸ՝ ՈՐՊԵՍ ՊՐԱԿՏԻԿ ՄԻՋԱՎԱՅՐ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ
ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետի ուսանողները բուհում ձեռք բերած գիտելիքներն ամրապնդել են դաշտային աշխատանքներով:

[20.10.14] ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐ ԲՈԼՈՐ ՆՐԱՆՑ, ՈՎՔԵՐ ՉԵՆ ԸՆԴՈՒՆՈՒՄ ՀԱՅՈՑ ԵՂԵՌՆԸ
Կայացավ ԵՊՀ պրոֆեսոր Սեդա Գասպարյանի հեղինակած «Հայոց ցեղասպանությունը. լեզվաճանաչողական մեկնակետ» վերտառությամբ գրքի շնորհանդեսը:

[21.10.14] ԵՐԵՔ ԽԱՂԵՐՈՒՄ ԷԼ ԱՄԵՆԱԻՆՏԵԼԵԿՏՈՒԱԼԸ ԵՊՀ-Ն ԷՐ
ՀՀ կենտրոնական բանկի անցկացրած ինտելեկտուալ 3 մրցույթներում էլ հաղթող են ճանաչվել Մայր բուհի ներկայացուցիչները:

[21.10.14] ԻՏԱԼԵՐԵՆԻ 14-ՐԴ ՇԱԲԱԹԸ ՆՇՎՈՒՄ Է ՆԱԵՎ ՄԱՅՐ ԲՈՒՀՈՒՄ
Մեկնարկեց «Նոր Եվրոպայի տարեգրություն. իտալական հրատարակչական գործը, հեղինակներն ու ընթերցողները թվային դարաշրջանում» խորագրով միջոցառումների շարքը:

[21.10.14] ԱՐԵՎԵԼՅԱՆ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ. ԾԱՆՈԹԱՆՈՒՄ ԵՆ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ
ԵՄ Արևելյան գործընկերության նախագծի ներկայացուցիչները հյուրընկալվել էին ԵՊՀ-ում:

[21.10.14] ԵՐՋԱՆԿՈՒԹՅԱՆ ՄՈԴԵԼԸ ԿՈՎԿԱՍՅԱՆ ԵՐԵՔ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ
Այսօր «ՀՌԿԿ-Հայաստան» կենտրոնում տեղի ունեցավ հերթական հետազոտության ամփոփումը:

[22.10.14] «ԿԻՍԱԼՈՒՄՆԻ ԾՈՎԱԾՈՑԸ». ՀԵՐԹԱԿԱՆ ԿԱՆԳԱՌԸ ԵՊՀ-Ն ԷՐ
Այս տարվա գարնանը մեծ էկրան բարձրացած «Կիսալուսնի ծովածոցը» լիամետրաժ ֆիլմի այսօրվա հանդիսատեսը ԵՊՀ ուսանողներն էին:

[22.10.14] ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆՆ ԸՆԴԼԱՅՆՎՈՒՄ Է
Այսօր ԵՊՀ գիտխորհրդի նիստերի դահլիճում մեկնարկեց ուսանողական և երիտասարդական կազմակերպությունների երևանյան համաժողովը, որին մասնակցում էին շուրջ 50 մասնակիցներ տարբեր երկրներից:

[23.10.14] ԿԱԶԱՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՆ ՈՒ ՄԱՅՐ ԲՈՒՀԸ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԵԶՐԵՐ ԵՆ ՓՆՏՐՈՒՄ
Այսօր ԵՊՀ գիտական խորհրդի նիստերի դահլիճում Կազանի դաշնային համալսարանի ներկայացուցիչները հանդիպեցին համալսարանականների հետ:

[23.10.14] ՀԱՄԱԺՈՂՈՎԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԸ ՀՅՈՒՐԸՆԿԱԼՎԵՑԻՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ
Շարունակելով ուսանողական և երիտասարդական կազմակերպությունների երևանյան համաժողովի միջոցառումների շարքը՝ այսօր մասնակիցները հյուրընկալվեցին ՀՀ Ազգային ժողովում:

[24.10.14] ՔՆՆԱՐԿՎԵՑԻՆ ԳՈՐԾԱՐԱՐ ՈԼՈՐՏՈՒՄ ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹՅԱՆ ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ
Հոկտեմբերի 23-ին ԵՊՀ-ում տեղի ունեցավ «Գործարար ոլորտում առաջնորդության գենդերային առանձնահատկությունները. մի՞ֆ, թե՞ իրականություն» թեմայով թրեյնինգ:

[24.10.14] ԱՄԵՐԻԿԱՑԻ ԳՐՈՂՆԵՐՆ ԱՅՑԵԼԵԼ ԷԻՆ ՄԱՅՐ ԲՈՒՀ
Հոկտեմբերի 23-ին ԵՊՀ Ե. Չարենցի անվան դահլիճում էին հյուրընկալվել ամերիկացի հանրահայտ արձակագիր Գրեգորի Օրֆալին և բանաստեղծներ Մերի Հիթմընն ու Քրիստոֆեր Մերիլը:

[24.10.14] ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԲՈՒՀԵՐԻ ՀԵՏ ԿԱՊԵՐԻ ԽՈՐԱՑՈՒՄԸ՝ ՈՐՊԵՍ ԳԼԽԱՎՈՐ ՆՊԱՏԱԿ
Հայաստան կատարած պաշտոնական այցի շրջանակներում հոկտեմբերի 23-ին ԵՊՀ-ում էր հյուրընկալվել գերմանական DAAD գրասենյակի գլխավոր քարտուղար Դորոթեա Ռյուլանդը:

[24.10.14] ՔՆՆԱՐԿՎԵՑԻՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՆԵՐԻ ՄԻ ՇԱՐՔ ԽՆԴԻՐՆԵՐ ԵՎ ՈՉ ՄԻԱՅՆ…
Ուսանողական կառույցների ներկայացուցիչները հանդիպեցին ՀՀ կրթության և գիտության նախարար Արմեն Աշոտյանին:

[24.10.14] ԹՄՐԱՄՈԼՈՒԹՅՈՒՆԸ ԶՈՒՏ ԳԻՏԱԿԱՆ ՏԵՍԱՆԿՅՈՒՆԻՑ
ԵՊՀ-ում մեկնարկել է թմրամիջոցներին և դրանց ապօրինի շրջանառությանը նվիրված սեմինարների շարք:

[24.10.14] ՆԱՐԵԿԸ ԵԿԱՎ ՈՒ ԱՆՑԱՎ ԼՈՒՍԱՍՏՂԻ ՊԵՍ
Նարեկ Հովսեփյան. «Որպես մահկանացու՝ ես վախենում եմ պատերազմից, որպես հայրենիքի զինվոր՝ պատրաստ եմ պատերազմի: Անմահությունն սկսվում է հայրենիքի սիրուց…»:

[24.10.14] ԻՐԱՎԱԳԵՏՆԵՐԻ ՈՒՇԱԴՐՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆՈՒՄ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԳԱՂՏՆԻՔՆԵՐՆ ԷԻՆ
Հոկտեմբերի 24-ին ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի դատական նիստերի դահլիճում ապագա իրավագետների հետ հանդիպում ունեցավ հայտնի իրավաբան Հովհաննես Մարգարյանը:

[27.10.14] «ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉԸ ՆԱԵՎ ԱՐԵՎՄՏՅԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՄԻ ՄԱՍՆ Է». ՋԱՆՖՐԱՆԿՈ ՌԱՎԱՋԻ

Կայացավ «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ. Քրիստոնեության ընդհանուր ժառանգություն» գրքի հայերեն և ռուսերեն թարգմանության շնորհանդեսը:

[28.10.14] ԱՅՍ ՏԱՐԻ ԱՌԿԱ ԵՎ ՀԵՌԱԿԱ ՀԱՄԱԿԱՐԳԵՐՈՎ ԵՊՀ Է ԸՆԴՈՒՆՎԵԼ 5381 ՀՈԳԻ

Այսօր կայացավ ԵՊՀ գիտխորհրդի հերթական նիստը՝ օրակարգային 5 հարցերով:

[29.10.14] ՄԻԱԿ ՄՐՑԱՆԱԿԸ, ՈՐ ԸՆԴՈՒՆԵԼ Է, «ՀՐԱՆՏ ԴԻՆՔ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՄՐՑԱՆԱԿՆ Է

Այսօր ԵՊՀ գիտխորհրդի նիստերի դահլիճում համալսարանականների հյուրերն էին քուրդ հասարակական գործիչներն ու մտավորականները:

[29.10.14] «HEN-GEAR» ՊՈՐՏԱԼԸ ԿՆՊԱՍՏԻ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻ ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻՆ

Մեկնարկել է ԵՊՀ 2013-2014 ուստարվա շրջանավարտների կողմից «HEN-GEAR» պորտալում գրանցվելու հիմնական գործընթացը:

[29.10.14] ՀԱՅ-ՌՈՒՍԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ՝ ՆՈՐ ՁԵՎԱՉԱՓՈՎ

Այսօր ԵՊՀ դասախոսների և ուսանողների հետ հանդիպման էր եկել Ռազմավարական հետազոտությունների ռուսական ինստիտուտի տնօրեն, գեներալ-լեյտենանտ Լեոնիդ Ռեշետնիկովը:

[29.10.14] ԵՊՀ-Ն ՍԳՈՒՄ Է ԻՐ ՈՒՍԱՆՈՂԻ ԿՈՐՈՒՍԸ

Այսօր ֆիզդաստիարակության դասաժամին հանկարծամահ է եղել ԵՊՀ ինֆորմատիկայի և կիրառական մաթեմատիկայի ֆակուլտետի 2-րդ կուրսի ուսանող Լևոն Հայրապետյանը:

[30.10.14] «ՇՔԱՄՈՒՏՔԸ» ՑՈՒՑԱԴՐՎԵՑ ՆԱԵՎ ՄԱՅՐ ԲՈՒՀՈՒՄ

ԵՊՀ մշակույթի կենտրոնի կինոակումբը, շարունակելով ֆիլմերի ցուցադրությունները, հոկտեմբերի 29-ին համալսարանականներին ներկայացրեց «Շքամուտք» ֆիլմը:

[30.10.14] ԵՊՀ-Ի ՀՐԱՎԵՐՈՎ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ Է ԴՈՆԻ ՀԱՅԵՐԻ «ԱՆԻ» ՀԱՄՈՒՅԹԸ

Դոնի Ռոստովի հայերի «Անի» համույթի՝ ԵՊՀ-ում նախատեսված համերգը չի կայանա՝ պայմանավորված 19-ամյա ուսանողի ցավալի մահվան հանգամանքով:

[30.10.14] ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆՆԵՐԻ ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՎԱՌ Է ԳԱՌՆԻԿ ԱՆԱՆՅԱՆԻ ԼՈՒՍԱՎՈՐ ԿԵՐՊԱՐԸ

Այսօր ԵՊՀ Ե. Չարենցի անվան դահլիճում կայացած հանդիսավոր նիստը նվիրված էր Գառնիկ Անանյանի 80-ամյակին:

[30.10.14] ԿՈՄԻՏԱՍԸ ՉԻ ԽԵԼԱԳԱՐՎԵԼ. ՊՆԴՈՒՄ Է ՀՈԳԵԲԱՆԸ

Այսօր ԵՊՀ փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետում կայացավ ամերիկահայ հոգեբան Մելինե Գարագաշյանի «Կոմիտաս. Մեծ եղեռնի զոհը» գրքի շնորհանդեսը:

[31.10.14] ԵՊՀ ՈՒԳԸ ՏԱՐԵԿԱՆ ՆՍՏԱՇՐՋԱՆՆ ԱՄԵՆԱՄՅԱ ԲՆՈՒՅԹ Է ԿՐԵԼՈՒ

ՈՒԳԸ-ն որդեգրել է գիտաժողովների անցկացման նոր ընթացակարգ, և յուրաքանչյուր ուստարում անցկացվելու է գիտական նստաշրջան՝ բոլոր ֆակուլտետներում իր բաժանմունքներով և ենթաբաժանմունքներով:

[31.10.14] ԱՐՍԵՆ ՋՈՒԼՖԱԼԱԿՅԱՆԸ ՊԱՐԳԵՎԱՏՐՎԵԼ Է ԵՊՀ ՀՈՒՇԱՄԵԴԱԼՈՎ

Հունահռոմեական ոճի ըմբշամարտի աշխարհի չեմպիոն հռչակված Արսեն Ջուլֆալակյանն այսօր հարազատ ֆակուլտետի հյուրն էր:

[31.10.14] «ՀԱՍՄԻԿ ԹՈՔՄԱՋՅԱՆՆԵՐ ՄԵՐ ԻՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՔԻՉ ԵՆ»
Այսօր ԵՊՀ ռոմանագերմանական բանասիրության ֆակուլտետում տեղի ունեցավ միջոցառում՝ նվիրված Անգլիական բանասիրության ամբիոնի երախտավորներից մեկի՝ Հասմիկ Թոքմաջյանի 90-ամյակին:

[31.10.14] ԳԻՏԱԺՈՂՈՎՈՒՄ ՆԵՐԿԱՅԱՑՎԵՑԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԱՐԴԻ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԸ
«Ժուռնալիստը և ժուռնալիստիկան գլոբալ գործընթացների համապատկերում» խորագրով գիտաժողովը նվիրված էր Ժուռնալիստիկայի ֆակուլտետի հիմնադիր դեկան Գառնիկ Անանյանին:

[03.11.14] «ԱՔՍՈՐՎԱԾՆԵՐԸ» ՊԻԵՍԸ ՆԵՐԿԱՅԱՑՎԵՑ ՆՈՐ ՁԵՎԱՉԱՓՈՎ
Հոկտեմբերի 31-ին ԵՊՀ մշակույթի կենտրոնի դահլիճում տեղի ունեցավ «Աքսորվածները» երազ-պիեսի անգլերեն լեզվով բեմադրված ընթերցանությունը:

[03.11.14] ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԵԼ ԵՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆՆԵՐԻ ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ՊԱՏԿԵՐԱՑՈՒՄՆԵՐԸ
Նոյեմբերի 3-ին ԵՊՀ գենդերային հետազոտությունների և առաջնորդության կենտրոնում (ԳՀԱԿ) ներկայացվեց «ԵՊՀ ուսանողների դիրքորոշումները կանանց և տղամարդկանց դերերի վերաբերյալ» հետազոտության արդյունքները:

[03.11.14] ՖԱԿՈՒԼՏԵՏԸ ԴԻՄԱՎՈՐԵՑ ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻՆ
Այսօր տեղի ունեցավ ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետի դեկան Գեղամ Պետրոսյանի՝ արդեն ավանդական դարձած հանդիպումը հեռակա ուսուցման ուսանողների հետ:

[03.11.14] ՄԻԳՐԱՑԻԱ. ՆԵՐԿԱՅԱՑՆՈՒՄ ԵՆ ԴՐԱ ԴՐԱԿԱՆ ՈՒ ԲԱՑԱՍԱԿԱՆ ԿՈՂՄԵՐԸ
Այսօր ԵՊՀ-ում անցկացվեց «Միգրացիա. մարտահրավերներ, զարգացում, զարգացման առավելություններ» թեմայով դասախոսությունը:

[04.11.14] ԵՊՀ ՔԱՂԱՔԱԳԵՏՆԵՐՆ ԱՅՑԵԼԵԼ ԵՆ ԱՐՑԱԽԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
Երկու բուհերի մասնագետները որոշել են կրթագիտական կապերը տեղափոխել նոր՝ ավելի բարձր հարթություն:

[04.11.14] ԵՊՀ-Ն ՇԱՐՈՒՆԱԿՈՒՄ Է ՆՊԱՍՏԵԼ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՈՂՄՆՈՐՈՇՄԱՆԸ
ԵՊՀ-ավագ դպրոցներ համագործակցության շրջանակում Մայր բուհի դասախոսները շարունակում են հանդիպել ավագ դպրոցների աշակերտների հետ:

[05.11.14] ԱՐՑԱԽՅԱՆ ԵՌՕՐՅԱ ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆՆ ԱՄՓՈՓՎԵՑ ԾԱՌԱՏՈՒՆԿՈՎ
Հոկտեմբերի 31-ից նոյեմբերի 2-ը համալսարանականներն այս տարի արդեն երրորդ անգամ Արցախում էին:

[05.11.14] ԳԻՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅ-ՌՈՒՍԱԿԱՆ ԿԱՊԵՐԻ ՀԻՄՔՈՒՄ
Այսօր ԵՊՀ-ում մեկնարկել է հայ-ռուսական գիտագործնական կոնֆերանս:

[06.11.14] SS ՈԼՈՐՏՈՒՄ ԵՊՀ-Ի ՆՈՐ ԳՈՐԾԸՆԿԵՐԸ «SAMSUNG»-Ն Է
ԵՊՀ-ում բացվել է «Samsung»-ի կրթական կենտրոն, որտեղ տարբեր ֆակուլտետների ուսանողներ կուսումնասիրեն պլանշետների ծրագրավորման դասընթացներ:

[06.11.14] ԵՐԵՔ ՏԱՐԲԵՐ ՃԱԿԱՏԱԳՐԵՐ՝ ՄԻԱՀՅՈՒՍՎԱԾ ՄԵԿ ՖԻԼՄՈՒՄ
Նոյեմբերի 5-ին ԵՊՀ մշակույթի կենտրոնի և Ազգային կինոկենտրոնի համատեղ ջանքերով «Կինոաշուն» փառատոնի շրջանակում Մայր բուհում ցուցադրվեց վերջին՝ «Թևանիկ» ֆիլմը:

[07.11.14] ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԴԱՍԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ ԿԱՐԴԱՑ ԻԳՈՐ ՊԱՆԱՐԻՆԸ
ՀԱԿՊ համալսարանական լիգիայի սեմինարի շրջանակներում քննարկվեցին Եվրասիական տարածաշրջանի տեղեկատվական անվտանգության հիմնահարցերը:

[07.11.14] ԵՊՀ-Ն ԵՎՍ ՄԵԿ ՊԱՏՎԱՎՈՐ ԴՈԿՏՈՐ ՈՒՆԻ
Կանադայի գիտահետազոտական խմբի ղեկավար, Մանիտոբայի համալսարանի պրոֆեսոր Տապաշ Չակրաբորտին արժանացել է ԵՊՀ պատվավոր դոկտորի կոչման:

[08.11.14] ՌԻՍԱՆՈՂ ԾՐԱԳՐԱՎՈՐՈՂՆԵՐԸ ԵՐԿՐՈՐԴՆ ԵՆ
ACM ICPC միջազգային մրցույթի քառորդ եզրափակչում շուրջ 300 թիմերից ԵՊՀ-ն հայտնվեց 2-րդ տեղում:

[10.11.14] «ԾԱԳՈՒՄԸ: ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄ». ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ
Նոր Զելանդացի գրող Լեն Ուիքսը, ոգեշնչվելով իր հայ կնոջ ժողովրդի պատմությունից և տոկունությունից, պատմական հայտնի իրադարձությունները շարադրել է այլ կերպ:

[11.11.14] ՄԵԿՆԱՐԿԵՑ ՌԻՍԱՆՈՂԱԿԱՆ ԱՄԵՆԱՄՅԱ ԳԻՏԱԺՈՂՈՎԸ
Նոյեմբերի 10-ին ԵՊՀ հայ բանասիրության ֆակուլտետում տեղի ունեցավ ուսանողական միջբուհական ամենամյա գիտաժողովի աշնանային նստաշրջանի բացումը:

[11.11.14] ԵՊՀ-ՈՒՄ ՆՇՎՈՒՄ Է ՍՈՑԱՇԽԱՏՈՂԻ ՕՐԸ
Այսօր Մայր բուհում տեղի ունեցավ Սոցիալական աշխատողի օրվան նվիրված «Մենք միասին ենք» խորագրով համաժողովը:

[11.11.14] ՌՈՒՄԻՆԻԱՅՈՒՄ ԽՈՐՈՒԹՅԱՄԲ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐԵԼՈՒ ԵՆ ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ
Ռումինիայի Կլուժ-Նապոկա քաղաքի Բաբեշ-Բոյայ համալսարանում ստեղծվել է Հայագիտության ինստիտուտ, որի բացմանը մասնակցել է նաև ԵՊՀ պատվիրակությունը:

[12.11.14] ՆԱՏՕ-ՀԱՅԱՍՏԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ ՔՆՆԱՐԿՎԵՑԻՆ ՆԱԵՎ ԵՊՀ-ՈՒՄ
Նոյեմբերի 12-ին ԵՊՀ գիտխորհրդի նիստերի դահլիճում տեղի ունեցավ ՀՀ-ում հավատարմագրված ՆԱՏՕ-ի անդամ մի շարք երկրների դեսպանների հանդիպումը պրոֆեսորադասախոսական կազմի և ուսանողների հետ:

[12.11.14] ՍՈՎՈՐԵԼՈՒ Է ՀՐԱՎԻՐՈՒՄ «ERASMUS MUNDUS»-Ը
Այսօր ԵՊՀ ուսանողները հանդիպեցին «Erasmus Mundus» ծրագրի համակարգողների հետ:

[13.11.14] «ՃԱՄԲԱՐՈՒՄ» ՖԻԼՄԻ ՊՐԵՄԻԵՐԱՆ ԿԱՅԱՑԱՎ ՆԱԵՎ ԵՊՀ-ՈՒՄ
Նոյեմբերի 12-ին Մշակույթի կենտրոնի դահլիճում կայացավ առաջին մանկապատանեկան «Ճամբարում» գեղարվեստական ֆիլմի ցուցադրությունը

[13.11.14] ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԱՌԱՆՑՔԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐՆ ԷԻՆ
Այսօր ԵՊՀ Պալեանների անվան դահլիճում կայացավ «Հայաստանի եվրասիական հեռանկարը. տարածաշրջանային և գլոբալ մարտահրավերներ» խորագրով միջազգային գիտաժողով:

[13.11.14] ՏԱՐԵԿԱՆ ԳԻՏԱԺՈՂՈՎՆԵՐԸ ՆՎԻՐՎԱԾ ԷԻՆ ՍՈՑԻՈԼՈԳԻԱՅԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ 10-ԱՄՅԱԿԻՆ
Նոյեմբերի 12-ին ԵՊՀ սոցիոլոգիայի ֆակուլտետում անցկացվեցին «Հայ հասարակությունը Եվրասիական միության շեմին» խորագրով, ինչպես նաև ամենամյա 10-րդ ուսանողական գիտաժողովները:

[13.11.14] ԵՊՀ ՌԻՍԱՆՈՂԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՑՆԵՐԸ՝ «ՀԱՅԱՑՔ ԱՊԱԳԱՅԻՆ-2014»-Ի ՄԱՄՆԱԿԻՑՆԵՐ
Այսօր ԵՊՀ կենտրոնական մասնաշենքի նախասրահում մեկնարկեց «Հայացք ապագային-2014» խորագրով երիտասարդական կազմակերպությունների ցուցահանդեսը:

[13.11.14] ԵՊՀ ԱՄԵՆԱԵՐԻՏԱՍԱՐԴ ՖԱԿՈՒԼՏԵՏԸ 10 ՏԱՐԵԿԱՆ Է
Հանդիսավոր նիստով ամփոփվեց ԵՊՀ սոցիոլոգիայի ֆակուլտետի հիմնադրման 10-ամյակին նվիրված միջոցառումների շարքը:

[14.11.14] ՀԵՌՈՒՍՏԱՎԵՐԼՈՒԾԱԲԱՆԸ ՊԱՏԱՍԽԱՆԵՑ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻՆ ՀԵՏԱՔՐՔՐՈՂ ՀԱՐՑԵՐԻՆ
Այսօր ապագա լրագրողների հետ հանդիպում ունեցավ հայտնի լրագրող, հեռուստավերլուծաբան Արմեն Դուլյանը:

[14.11.14] ՍՈՎՈՐՈՒՄ ԵՆՔ ԿԱՌԱՎԱՐԵԼ ՄԵՐ ԿԱՐԻԵՐԱՆ
ԵՊՀ շրջանավարտների և կարիերայի կենտրոնը նոյեմբերի 12-14-ը կազմակերպել էր «Կարիերայի կառավարում» խորագրով սեմինար-դասընթաց:

[17.11.14] ԵՊՀ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՈՒՍԱՆՈՂՆԵՐՆ ԱՐԴԵՆ ՀԱՅՏՆԻ ԵՆ
Այսօր հայտնի դարձան «Լավագույն ուսանող-2014» մրցույթի հաղթողների անունները:

[18.11.14] ԹԱՓՈՒՐ ՏԵՂԵՐԻ ՄՐՑՈՒՅԹԻՆ ԵՊՀ-ԻՑ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ Է 8 ՀՈԳԻ
Այսօր ԵՊՀ գիտխորհուրդը 8 գիտնականի երաշխավորեց մասնակցելու ՀՀ ԳԱԱ ակադեմիկոսի և թղթակից անդամի թափուր տեղերի համալրման համար մրցույթին:

[18.11.14] ՊՈՉԱՄԲԱՐՆԵՐԸ ԿՐԿԻՆ ՀԱՅՏՆՎԵԼ ԵՆ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԻ ՈՒՇԱԴՐՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆՈՒՄ
Այսօր ԵՊՀ աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետում կազմակերպվել էր շրջակա միջավայրի վրա մետաղական օգտակար հանածոների պոչամբարների ազդեցության վերաբերյալ կլոր սեղան-քննարկում:

[19.11.14] ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՉԱՓԻՑ ՇԱՏ ԻՆՖՈՐՄԱՑԻԱՆ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄ ԵՆ ՍՏԵՂԾԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ
Համալսարանականների հյուրն էր ֆրանսիացի գիտնական, առաջադեմ հասարակական գործիչ, պրոֆեսոր Պիեռ Ժոլիո-Կյուրին:

[19.11.14] ՀԱՆԴԻՊԵՑԻՆ ԲՈՒՀԸ, ԱՇԽԱՏԱՇՈՒԿԱՆ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔ ՓՆՏՐՈՂՆԵՐԸ
Այսօր 100-ից ավելի ընկերություններ ԵՊՀ-ում փնտրում էին իրենց ապագա աշխատակիցներին:

[19.11.14] ԳՈՐԾԱՏՈՒՆ ՈՒ ԲՈՒՀԸ՝ ԱՇԽԱՏԱՇՈՒԿԱՅԻ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ՃԱՆԱՊԱՐՀԻՆ
«Բուհից աշխատաշուկա՝ 1 քայլ» աշխատանքի տոնավաճառի շրջանակներում ԵՊՀ-ում անցկացվեց հանրապետական կլոր սեղան-քննարկում:

[20.11.14] ՄԵԾԱՐՄԱՆ ՑԵՐԵԿՈՒՅԹԸ ՆՎԻՐՎԱԾ ԷՐ ԵՐԵՔ ԶՈՀՎԱԾ ՈՒՍԱՆՈՂ-ԱԶԱՏԱՄԱՐՏԻԿՆԵՐԻՆ
Նոյեմբերի 19-ին անցկացվեց համալսարանական զոհված ազատամարտիկների 50-ամյակներին նվիրված մեծարման ցերեկույթ. նրանք համակուրսեցիներ էին, զինակիցներ և մարտական ընկերներ…

[20.11.14] ԱՆՆԱԽԱԴԵՊ ԴԱՍԱԳԻՐՔ ԱՊԱԳԱ ԹՈՒՐՔԱԳԵՏՆԵՐԻ ՀԱՄԱՐ
Առաջին անգամ հայ ընթերցողին ներկայացվեց Հայաստանում հեղինակված Թուրքիայի Հանրապետության պատմության դասագիրքը՝ նախատեսված բուհերի համար:

[20.11.14] «ԸՆԿԵՐ ՓԱՆՋՈՒՆԻ»-Ն «ՀՅՈՒՐԸՆԿԱԼՎԵԼ ԷՐ» ԵՊՀ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻՆ
Նոյեմբերի 19-ին ԵՊՀ մշակույթի կենտրոնի կինոակումբում Ազգային կինոկենտրոնի աջակցությամբ ցուցադրվեց «Ընկեր Փանջունի» ֆիլմը:

[20.11.14] ՈՐՈՇՎԵՑԻՆ ԻՆՏԵԼԵԿՏՈՒԱԼ ԽԱՂԻ ՀԱՂԹՈՂՆԵՐԸ
Այսօր ԵՊՀ ռադիոֆիզիկայի ֆակուլտետում անցկացվեց ֆիզիկամաթեմատիկական բնույթի միջֆակուլտետային ինտելեկտուալ խաղ:

[21.11.14] ՀՀ ԵՎ ԼՂՀ ՆՈՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՆԵԼԻ Է ԳՐՔԻ ՏԵՍՔՈՎ
ԼՂՀ Ազգային ժողովի գրադարանում տեղի ունեցավ ԵՊՀ պատմության ֆակուլտետի դեկան, պրոֆեսոր Էդիկ Մինասյանի «Հայաստանի երրորդ Հանրապետության պատմությունը» գրքի Արցախյան շնորհանդեսը:

[22.11.14] ՀԱՆԴԻՊՄԱՆ ՎԱՅՐԸ՝ ԱՆՓՈՓՈԽ. ԵՊՀ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ ԿՐԿԻՆ ԱՐՑԱԽՈՒՄ ԷԻՆ
Նոյեմբերի 20-23-ը ԵՊՀ մի խումբ ուսանողներ Արցախում էին ԵՊՀ 95, ԱրՊՀ 45 և ԵՊՀ ուսանողական խորհրդի 20-ամյա հոբելյաններին նվիրված հայագիտական գիտաժողովին մասնակցելու համար:

[24.11.14] ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆՆԵՐԸ ՓԱՅԼԵՑԻՆ ՆԱԵՎ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՈԼՈՐՏՈՒՄ
Նոյեմբերի 23-ին «Առնո Բաբաջանյան» համերգասրահում տեղի ունեցավ «Մենք երգում ենք Առնո Բաբաջանյանի երգերը» (2012թ.) և «Главные песни России» (2013թ.) հանրապետական ուսանողական մրցույթ-փառատոնների դափնեկիրների համերգը:

[24.11.14] ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԱՊԱԳԱՆ ԲՈԼՈՆԻԱՅԻ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ
2015 թվականին Երևանում կայանալիք Եվրոպայի կրթության նախարարների գագաթնաժողովին ընդառաջ Բուխարեստում կայացավ Բոլոնիայի գործընթացի հետազոտողների կոնֆերանսը:

[25.11.14] ԱՌՑԱՆՑ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԺՈՂՈՎԻՆ
Համալսարանականն առցանց զեկույց ներկայացրեց Մոսկվայում կայացած «Ռուսաստանի քաղաքագիտությունը. ծագումը, ավանդույթները և հեռանկարները» խորագրով գիտաժողովին:

[25.11.14] ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐՆ ԱՅՍ ԱՆԳԱՄ ՆՎԻՐՎԱԾ ԷԻՆ ՎԱՀԱԳՆ ԴԱՎԹՅԱՆԻՆ
Նոյեմբերի 24-ին ԵՊՀ «Վարդանանք» ռազմահայրենասիրական դաստիարակության ակումբը հերթական անգամ կազմակերպել էր ծիծեռնակաբերդյան ընթերցումներ:

[25.11.14] ՓՈՂԻ ՈՒ ԵՐՋԱՆԿՈՒԹՅԱՆ ԿԱՊԸ՝ ՈՐՊԵՍ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄՈՏԻՎԱՑԻԱ
Գոյություն ունի՞ արդյոք կապ փողի, աշխատանքի և երջանկության միջև. հարցի պատասխանը փորձել է գտնել Ամստերդամից ժամանած պրոֆեսորը:

[26.11.14] ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ ՆԵՐԿԱՅԱՑՐԻՆ ԻՐԵՆՑ ՍՏԵՂԾԱՐԱՐ ՄՏՔԵՐԸ
Նոյեմբերի 26-ին ԵՊՀ աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի սերվիսի բաժնի մի խումբ ուսանողներ հանդես եկան իրենց ստեղծած արտադրանքներով:

[26.11.14] ՔՆՆԱՐԿՎԵՑԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ
Այսօր համալսարանականների համար դասախոսություն կարդաց Արժույթի միջազգային հիմնադրամի հայաստանյան ներկայացուցիչ Թերեզա Դաբան Սանչեսը:

[27.11.14] ՆՈՐ ՈՒՂԵՑՈՒՅՑ ԿԵՂՏԱՋՐԵՐԻ ՄԱՔՐՄԱՆ ԿԱՅԱՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ
Ստեղծվել է Կեղտաջրերի մաքրման կայանների (ԿՄԿ) կառավարման կատարելագործման ուղեցույց:

[28.11.14] ԵՐԵՔ ԵՐՆԵԿ ՄԵԿ ՏԵՂ ԿԱՄ ՏՈՒՐԻԶՄԻ ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԵՏՔԵՐՈՎ
Հայ մասնագետները եվրոպացի կոլեգաներից սովորում են մեթոդներ, որոնցով դասավանդումը կարող է տուրիզմի կայուն զարգացման հիմք դառնալ:

[28.11.14] ՄԱՅՐ ԲՈՒՀԸ ՀԻՇՈՒՄ Է ԻՐ ՀԵՐՈՍՆԵՐԻՆ
Այսօր ԵՊՀ աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի զոհված ասպիրանտ, ազատամարտիկ Միհեր Ջուլհաճյանի ծննդյան օրն է:

[30.11.14] ՄԱՅՐ ԲՈՒՀԸ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՎԵԼ Է ՀԻՄՆԱԴՐԱՄԻ
Նոյեմբերի 27-ին կայացած ՀՀ Կառավարության նիստում որոշում է ընդունվել «Երևանի պետական համալսարան» ՊՈԱԿ-ը վերակազմակերպել հիմնադրամի:

[01.12.14] ԱՌԱՆՑ ԿԱՊԻՏԱԼԻ ԲԻԶՆԵՍՆ ԱՐԴԵՆ ԻՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ Է
Նոյեմբերի 26-28-ը ԵՊՀ-ում անցկացվեց «Ինչպես սկսել բիզնես առանց նախնական կապիտալի» խորագրով եռօրյա սեմինար-դասընթաց:

[01.12.14] ԱՊԱԳԱ ՍՈՑԻՈԼՈԳՆԵՐԸ ՊԱՅՔԱՐԵՑԻՆ ՄԻԵՎՆՈՒՅՆ ԽԱՂԱՏԱԽՏԱԿԻ ԱՌՋԵՎ
Այսօր Մայր բուհի կենտրոնական մասնաշենքի բակում տեղի ունեցավ ֆլեշմոբ՝ շախմատի առցանց առաջնության ձևաչափով:

[02.12.14] ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ՀԵՏ ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՆ ԵՎ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ
Ապագա ուսանողների մասնագիտական կողմնորոշմանը միտված հանդիպում-դասախոսությունները նոյեմբերին նոր թափ առան:

[03.12.14] «ELSA». ԱՆԴԱՄԱԿՑԵԼՈՒ ՀԵՐԹԸ ՀԱՅ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻՆՆ Է
Հայ ուսանող իրավաբանները ևս պատրաստվում են դառնալ եվրոպական ուսանողական ամենամեծ ընտանիքի անդամ:

[03.12.14] ԲԱՑՎԵԼ Է «ԱՐԱՐԱՏԲԱՆԿ» ՓԲԸ-Ի «ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ» ՄԱՍՆԱՃՅՈՒՂԸ
ԵՊՀ կենտրոնական մասնաշենքի նախասրահում այսուհետ կգործի «Արարատբանկ» ՓԲԸ-ի «Ուսանողական» մասնաճյուղը:

[04.12.14] ԱՊԱԳԱ ՍՈՑԻՈԼՈԳՆԵՐԸ ԿՐԿԻՆ ԿԱՐԻՔԱՎՈՐ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԿՈՂՔԻՆ ԵՆ
ԵՊՀ սոցիոլոգիայի ֆակուլտետի ուսանողական խորհուրդը դեկտեմբերի 3-ին այցելել էր Արմավիրի մարզի համար 1 հատուկ (օժանդակ) դպրոց:

[04.12.14] ԱՊԱԳԱ ԴԵՐԱՍԱՆՆԵՐԸ ՀԱՆԴԵՍ ԵԿԱՆ ԵՊՀ-ՈՒՄ
Դեկտեմբերի 3-ին ԵՊՀ մշակույթի կենտրոնի դահլիճում ներկայացվեցին «Հում օր կամ մեծ աղմուկ ոչնչից» երգիծական մանրապատումները:

[04.12.14] ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆՆ ԱՄՐԱՊՆԴՎԵՑ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՍՏՈՐԱԳՐՄԱՄԲ
Ֆրանսիական Մոնպելիե-1 և Մոնպելիե-2 համալսարանների ներկայացուցիչները հանդիպեցին ԵՊՀ ղեկավարություն հետ:

[04.12.14] ՀԱՅՈՑ ՄԵԾ ԵՂԵՌՆ. ՀԱՐՈՒՍՏ ՆՅՈՒԹ ԱՐՏԱՍԱՀՄԱՆՅԱՆ ԳՐՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ
ԵՊՀ-ում այսօր մեկնարկել է «Հայոց մեծ եղեռնի արտացոլումը արտասահմանյան գրականության և արվեստի մեջ» խորագրով հանրապետական գիտաժողովը:

[04.12.14] ՄԵԿՆԱՐԿԵՑ ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐԻ ԵՌՕՐՅԱ ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍԸ
Առաջիկա երեք օրերին ԵՊՀ-ում կցուցադրվի «Մոգական Ասիա» խորագրով լուսանկարների շարքը:

[05.12.14] ԵՊՀ ՈՒԳԸ-Ն ԸՆԴԼԱՅՆՈՒՄ Է ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐԸ
ԵՊՀ-ի մասնագետները դասախոսություններով են հանդես եկել ԱՄՆ-ում, իսկ ՈՒԳԸ-ն փոխըմբռնման հուշագիր է ստորագրել Կոլումբիայի համալսարանի հայկական ընկերության հետ:

[05.12.14] ԳԻՏԱԺՈՂՈՎԸ ՆՎԻՐՎԱԾ ԷՐ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ 80-ԱՄՅԱԿԻՆ
Դեկտեմբերի 4-5-ը Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետում տեղի ունեցավ հոբելյանական գիտաժողով՝ նվիրված ֆակուլտետի հիմնադրման 80-ամյակին:

[05.12.14] ԻՆՉՊԵՍ ԶԱՐԳԱՑՆԵԼ ՊՐԵԶԵՆՏԱՑԻՈՆ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
Այսօր ԵՊՀ ռոմանագերմանական բանասիրության ֆակուլտետի ուսանողները տեղեկացան պրեզենտացիոն հմտությունների մասին:

[08.12.14] ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆՆԵՐԸ ԴԱՄՆ ԱՆՑԿԱՑՐԻՆ ԱՐՄԱՎԻՐՈՒՄ

Դեկտեմբերի 6-ին ԵՊՀ «Վարդանանք» ակումբի անդամներն այցելեցին Արմավիր քաղաքի Վարդան Բախշյանի անվան համար 2 հիմնական դպրոց:

[08.12.14] ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆՆԵՐԸ ՄԱՍՆԱԿՑԵԼ ԵՆ ԾՐԱԳՐԱՎՈՐՄԱՆ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՕԼԻՄՊԻԱԴԱՅԻ ԿԻՍԱԵԶՐԱՓԱԿՉԻՆ

Դեկտեմբերի 7-ին ԵՊՀ երեք թիմեր Թբիլիսիում մասնակցել են համաշխարհային ուսանողական ամենամյա ACM ICPC մրցույթի կիսաեզրափակիչ փուլին:

[08.12.14] ՀՈՒՇ-ՑԵՐԵԿՈՒՅԹԸ ՆՎԻՐՎԱԾ ԷՐ ԶՈՀՎԱԾ ՕԴԱՉՈՒՆԵՐԻՆ

Ապագա լրագրողները դեկտեմբերի 5-ին Եղիշե Չարենցի անվան դահլիճում հավաքվել էին՝ հարգանքի տուրք մատուցելու զոհված օդաչուներին:

[08.12.14] ԱՄԵՆԸ ՀԱՅԿԱԿԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ՝ ԱՆԳԼԵՐԵՆ ԼԵԶՎՈՎ

ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի 80-ամյակին նվիրված գիտաժողովի նյութերը ամփոփվել են մեկ գրքում և հրատարակվել անգլերեն լեզվով:

[09.12.14] ԱՍՊԻՐԱՆՏՆԵՐՆ ՈՒ ՀԱՅՑՈՐԴՆԵՐԸ՝ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Այսօր տեղի ունեցավ ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի ասպիրանտների և հայցորդների տարեկան գլխավոր նստաշրջանը:

[09.12.14] ԵՐԲ ՀԱՆԴԻՊՈՒՄ ԵՆ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐՆ ՈՒ ԿՅԱՆՔԻ ՄԱՍԻՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ֆիզիկայի և կյանքի մասին գիտությունների հատման խաչմերուկում հավաքվել էին երիտասարդ գիտնականները՝ ծանոթանալու մասնագիտական նորություններին:

[09.12.14] ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՈԼՈՐՏԻ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ՝ ՈՐՊԵՍ ԵՐԿՐԻ ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՐԱՎԱԿԱՆ

Այսօր ԵՊՀ աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետում ԵՊՀ կայուն զարգացման կենտրոնի նախաձեռնությամբ տեղի ունեցան բնապահպանական խնդիրների վերաբերյալ քննարկումներ:

[10.12.14] ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԸ 80 ՏԱՐԵԿԱՆ Է

Նշվեց ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի հիմնադրման 80 և վերաբացման 30-ամյակները:

[10.12.14] ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԺՈՂՈՎՆԵՐԸ ԽԹԱՆՈՒՄ ԵՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

ԵՊՀ ամբիոնի վարիչը մասնակցել է Մոսկվայի պետական համալսարանի կողմից կազմակերպված քաղաքացիական հասարակության և տեղական ինքնակառավարման խնդիրներին նվիրված գիտաժողովին:

[10.12.14] ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԸ ԱՄԵՆԱԵՐԱԺՇՏԱԿԱՆՆ Է

Դեկտեմբերի 9-ին տեղի ունեցավ ԵՊՀ ՈՒԽ մշակույթի հանձնաժողովի կողմից կազմակերպված «Երաժշտասեր համալսարանական-2014» մրցույթի եզրափակիչ փուլը:

[10.12.14] ԵՐԿՐԱՇԱՐԺԻ ԴԱՍԵՐԸ՝ ԱՅՍՕՐՎԱ ԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՔ

Սպիտակի երկրաշարժի հետևանքները կլինեին զգալիորեն պակաս, եթե լինեինք պատրաստված: Իսկ թե ինչ է նշանակում դա, հավաքվել և քննարկում էին ոլորտի պատասխանատուներն ու մասնագետները:

[10.12.14] ՆԵՐԱՌԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ. ՔՆՆԱՐԿՎԵՑԻՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ, ՆԱԽԱՆՇՎԵՑԻՆ ՀԵՏԱԳԱ ԾՐԱԳՐԵՐԸ

Քննարկվեցին լսողական և խոսակցական խնդիրներ ունեցող մարդկանց՝ կրթություն ստանալու իրավունքները, այդ գործընթացում առաջացած խնդիրներն ու դրանց լուծման տարբերակները:

[11.12.14] ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ԻՆՏԵԳՐՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ ԶԱՐԳԱՆՈՒՄ Է ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

Դեկտեմբերի 4-5-ը Տոմսկում տեղի է ունեցել «Եվրասիական տնտեսական միություն. ներկան և ապագան» խորագրով միջազգային երիտասարդական համաժողով:

[11.12.14] ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԸ ՔՆՆԱՐԿՈՒՄ ԵՆ ՄՆՆԴԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԸ

Այսօր ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի էկոլոգիական իրավունքի գիտաուսումնական կենտրոնում տեղի ունեցավ «Սննդամթերքի անվտանգության ապահովման հիմնախնդիրները ՀՀ-ում» խորագրով գիտաժողով:

[11.12.14] ԵՊՀ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴՆ ԱՄՓՈՓՈՒՄ Է ՏԱՐԻՆ

Կայացավ ԵՊՀ գիտխորհրդի՝ այս տարվա վերջին նիստը՝ օրակարգային 7 հարցերով:

[12.12.14] ՀԱՍԱՆ ՋԵՄԱԼ. «ԵՍ ՊԱՏՄԱԲԱՆ ՉԵՄ, ՓԱՍՏԵՐԻ ՄԱՍԻՆ ՎԻՃԵԼ ՉԵՄ ԿԱՐՈՂ»

ԵՊՀ թյուրքագիտության ամբիոնի դասախոսներն ու ուսանողներն այսօր հանդիպել են Հասան Ջեմալի հետ, ով Հայոց ցեղասպանությունը ծրագրած երեք ոճրագործներից մեկի՝ Ջեմալ փաշայի թոռն է:

[12.12.14] ԵՎՍ ՄԵԿ ՀԱՅԵՐԵՆ ԳԻՐՔ Է ԼՈՒՅՍ ՏԵՍԵԼ ԱՊԱԳԱ ԹՈՒՐՔԱԳԵՏՆԵՐԻ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱԳԵՏՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Այսօր ԵՊՀ Պալեանների անվան դահլիճում տեղի ունեցավ «Թուրքիայի պաշտպանական համակարգի արդիականացումը և անվտանգության ոլորտի բարեփոխումները» վերտառությամբ գրքի շնորհանդեսը:

[12.12.14] ՌՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԳԻՏԱԺՈՂՈՎԸ ՀՈԲԵԼՅԱՆԱԿԱՆ ԷՐ

Այսօր տեղի ունեցավ Ժուռնալիստիկայի ֆակուլտետի հիմնադրման 15 և հայկական առաջին տպագիր պարբերականի՝ «Ազդարար»-ի 220-ամյակներին նվիրված ուսանողական ներֆակուլտետային գիտաժողով:

[15.12.14] ՄԻԳՐԱՑԻԱՅԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Դեկտեմբերի 12-ին ԵՊՀ պատմության ֆակուլտետի դասախոս, պատմ. գիտ. թեկնածու Աղասի Թադևոսյանն ուսանողների համար կարդաց «Միգրացիայի արդի միտումները ՀՀ-ում» թեմայով դասախոսություն:

[15.12.14] ՌՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ՝ «Ի՞ՆՉ, ՈՐՏԵ՞Ղ, Ե՞ՐԲ» ԻՆՏԵԼԵԿՏՈՒԱԼ ՄՐՑՈՒՅԹԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐ

Դեկտեմբերի 12-ին ԵՊՀ ռուս բանասիրության ֆակուլտետում տեղի ունեցավ «Истина где-то рядом» ներֆակուլտետային ինտելեկտուալ մրցաշար:

[17.12.14] ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐՆ ԱՅՑԵԼԵՑԻՆ ՄԱՅՐ ԲՈՒՀ

Դեկտեմբերի 16-17-ը Արմավիրի մարզի Արմավիր քաղաքի համար 2 հիմնական, Լեռնագոգ գյուղի միջնակարգ և Քարակերտ գյուղի համար 2 միջնակարգ դպրոցների աշակերտները հանդիպեցին համալսարանականների հետ:

[17.12.14] ՀՀ ԿԳ ՆԱԽԱՐԱՐԸ ԴԱՍԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ ԿԱՐԴԱՑ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Այսօր ԵՊՀ միջազգային հարաբերությունների հանրային կառավարման բաժնի 3-րդ կուրսի ուսանողների հյուրն էր նախարար Արմեն Աշոտյանը, ով Մայր բուհ էր այցելել ուսանողների հրավերով:

[17.12.14] ԹԵՐԵԶԱ ՍԱՆՉԵՍ. «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ ԽԻՍ ԴՈԼԱՐԱՅՆԱՅՎԱԾ Է»

Այս օրերի ամենաարդիական ու քննարկվող թեմայի մասին այսօր ԵՊՀ-ում խոսել է Արժույթի միջազգային հիմնադրամի հայաստանյան գրասենյակի ղեկավար Թերեզա Սանչեսը:

[18.12.14] ՖԱԿՈՒԼՏԵՏՆԵՐՆ ԱՄՓՈՓԵՑԻՆ ԱՆՑԱԾ ՈՒՍՏԱՐԻՆ

Այսօր տեղի ունեցավ ԵՊՀ ինֆորմատիկայի և կիրառական մաթեմատիկայի ֆակուլտետի խորհրդի տարեվերջյան ամփոփիչ նիստը:

[19.12.14] ՈՒԳԸ-Ն ԱՄՓՈՓԵՑ ՆԱԽՈՐԴ ԿԻՍԱՄՅԱԿԸ
Այսօր ԵՊՀ Պալեանների անվան դահլիճում տեղի ունեցավ Ուսանողական գիտական ընկերության ընդլայնված նիստը:

[19.12.14] ՀՐԱՎԻՐՎԵՑ ՆՈՐ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՈՒԽ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ
Համագումարը հավանության արժանացրեց ՈՒԽ նախագահի հաշվետվությունը, հաստատեց նախագահության կազմը, ինչպես նաև կանոնադրությունում կատարված փոփոխությունները:

[20.12.14] ԳԻՏԱԿԱՆ ՆՍՏԱՇՐՋԱՆԸ ՆՎԻՐՎԱԾ ԷՐ ԱՂԱՍԻ ԵՍԱՅԱՆԻ 100-ԱՄՅԱԿԻՆ
Այսօր ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի դատական նիստերի դահլիճում տեղի ունեցավ պրոֆեսորադասախոսական կազմի տարեկան գիտական նստաշրջանը:

[22.12.14] ԵՊՀ ԽՈՐՀՈՒՐԴՆ ԱՄՓՈՓԵՑ ՈՒՍՏԱՐԻՆ
Դեկտեմբերի 22-ին ԵՊՀ գիտական խորհրդի նիստերի դահլիճում տեղի ունեցավ ԵՊՀ խորհրդի նիստը, որը նախագահում էր ՀՀ նախագահ, ԵՊՀ խորհրդի նախագահ Սերժ Սարգսյանը:

[23.12.14] ՂԱՐԱԲԱՂՅԱՆ ԽՆԴՐԻ ԺՈՂՈՎՐԴԱԼԵԶՎԱԿԱՆ ԿՈՂՄԸ
Արտասահմանցի մասնագետը շուրջ երկու տարի հետազոտելուց հետո փորձել է վերլուծել Ղարաբաղյան հիմնախնդիրը ժողովրդալեզվական տեսանկյունից:

[24.12.14] ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏՆ ԱՐԴԵՆ ՕՐՀՆԵՐԳ ՈՒՆԻ
Փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետի 50-ամյակին նվիրված միջոցառումները եզրափակվեցին անակնկալ համերգով:

[25.12.14] ԵՊՀ-Ն ԱՌԱՋԱՏԱՐ Է ՆԱԵՎ «FACEBOOK»-ՈՒՄ
Երևանի պետական համալսարանի ֆեյսբուքյան պաշտոնական էջի՝ https://www.facebook.com/ysu.am-ի հետևորդների թիվը հատեց 20.000-ը:

[25.12.14] ԵՊՀ-Ն՝ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ԲՈՒՀԵՐԻ ԱՌԱՋԱՏԱՐՆԵՐԻ ՇԱՐՔՈՒՄ
ՀՀ ԿԳ նախարարը ներկայացրել է հայկական բուհերի վարկանիշները՝ ըստ Բուհերի ազգային վարկանիշավորման համակարգի:

[26.12.14] ԲՈՒՀԱԿԱՆ ԱՐՀՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ԼԱՎԱԳՈՒՅՆԸ ԵՊՀ-ԻՆՆ Է
ԵՊՀ արհեստակցական կազմակերպությունը գլխավորում է բուհական արհմիությունների լավագույն եռյակը:

[27.12.14] ԱՄԱՆՈՐՅԱ ՏՈՆԵՐԻՆ ԸՆԴԱՌԱՋ
Այս օրերին համայն հայությունը նախատոնական տրամադրության մեջ է. օրեր անց 2014 թվականը կանցնի պատմության գիրկը:

[28.12.14] ԵՎ ՀՐԱԺԵՇՏ ՏԱԼՈՎ 2014 Թ-ԻՆ
Օրեր անց պատմության գիրկը կանցնի 2014 թվականը:

[29.12.14] ԵՊՀ-Ն ՀՀ ԳԱԱ ՆՈՐ ԱԿԱԴԵՄԻԿՈՍ ԵՎ ԹՂԹԱԿԻՑ ԱՆԴԱՄ ՈՒՆԻ
ԵՊՀ գիտխորհրդի կողմից երաշխավորված գիտնականներից երկուսն ընտրվել են ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս և թղթակից անդամ:

[13.01.15] ՔՆՆԱՇՐՋԱՆԸ ՍԿՍՎԵԼ Է
Հունվարի 12-ից մեկնարկել է 2014-2015 ուստարվա առաջին կիսամյակի քննաշրջանը:

[20.01.15] ԴԱՍԵՐԸ ԿՎԵՐՍԿՍՎԵՆ ՓԵՏՐՎԱՐԻ 9-ԻՑ

Երևանի պետական համալսարանում 2014-2015 ուստարվա երկրորդ կիսամյակի դասերը կսկսվեն փետրվարի 9-ից, իսկ հեռակա ուսուցման համակարգինը՝ մարտի 16-ից:

[20.01.15] ԵՐԵՎԱՆՈՒՄ ՎԵՐԱԿԱՆԳՆՎԵԼՈՒ Է ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ «ՀԱՍԱԿԱԿԻՑԸ»

Հայոց ցեղասպանության մասին բարձրաձայնող առաջին կտավներից մեկը ժամանակավոր հանգրվան է գտել Հայաստանի ազգային պատկերասրահում:

[21.01.15] ԵՊՀ-ՈՒՄ ՍՏԵՂԾՎԵԼ ԵՆ ՆՈՐ ԿԵՆՏՐՈՆ ԵՎ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱՆԵՐ

Այս տարվա սկզբից ԵՊՀ-ում գիտական հետազոտություններ են կատարվելու ևս 3 նորաբաց լաբորատորիաներում և 1 կենտրոնում:

[23.01.15] «HEN-GEAR» ՆԱԽԱԳԻԾԸ ԿՀԵՇՏԱՑՆԻ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻ ՄՈՒՏՔՆ ԱՇԽԱՏԱՇՈՒԿԱ

Նախագծի շրջանակներում կստեղծվի շրջանավարտների տվյալների բազա, որը թույլ կտա լուծել շրջանավարտների զբաղվածությանն ու կարիերային առնչվող մի շարք խնդիրներ:

[23.01.15] ԵՊՀ 9 ԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԵՐ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐ ԵՆ ՍՏԱՑԵԼ

Գիտության և կրթության հայկական ազգային հիմնադրամի (ANSEF) տրամադրած 30 դրամաշնորհներից 9-ը բաժին է ընկել ԵՊՀ գիտնականներին:

[23.01.15] ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՓՈՍՏՆ ԱՐԴԵՆ ՀԱՍԱՆԵԼԻ Է

2014-2015 ուստարվա երկրորդ կիսամյակից սկսած Մայր բուհի պաշտոնական ծանուցման համակարգից (@ysumail.am) կօգտվի ավելի քան 17.000 սովորող:

[27.01.15] ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹՅԱՆ ՆԵՐԲՈՒՀԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Քննարկվեցին ԵՊՀ-ում ուսանողների առաջնորդության և ինքնակառավարման հիմնական խնդիրները:

[29.01.15] ՍՏՈՐԱԳՐՎԵՑ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

Հունվարի 27-ին ՀՀ կրթության և գիտության նախարարությունում ստորագրվեց կրթական համագործակցության պայմանագիր ԵՊՀ-ի և Լիբանանի՝ Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության Զարեհյան դպրեվանքի միջև:

[29.01.15] ԲԱՑ ԴԱՍ՝ ՆՎԻՐՎԱԾ ՀՀ ԶՈՒ 23-ԱՄՅԱԿԻՆ

ՀՀ զինված ուժերի 23-ամյա հոբելյանի առիթով ԵՊՀ պատմության ֆակուլտետի դեկան Էդիկ Մինասյանը բաց դաս է անցկացրել «Քվանտ» վարժարանում:

[30.01.15] ՀՐԱՊԱՐԱԿՎԵԼ Է ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ 100-ՐԴ ՏԱՐԵԼԻՑԻ ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀՌՉԱԿԱԳԻՐԸ

Հունվարի 29-ին Ծիծեռնակաբերդի հուշահամալիրում տեղի է ունեցել նաև Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի համահայկական հռչակագրի հրապարակման արարողությունը:

[02.02.15] 200.000-ԱԿԱՆ ԴՐԱՄ՝ ՄԱԳԻՍՏՐՈՍԱԿԱՆ ԹԵԶԸ ԱՎԱՐՏԻՆ ՀԱՍՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ

«ՀՌԿԿ-Հայաստան» հիմնադրամը դրամաշնորհներ է տրամադրել ԵՊՀ՝ այս տարվա հոբելյար ֆակուլտետների ուսանողներին:

[03.02.15] ՀԵՐԹԱԿԱՆ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ ՄԻՏՎԱԾ ԷՐ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՈՂՄՆՈՐՈՇՄԱՆԸ

Այսօր Մայր բուհի ներկայացուցիչները հանդիպեցին Երևանի Ս. Գևորգյանի անվան համար 189 ավագ դպրոցի ապագա դիմորդների հետ:

[05.02.15] ԲՈՒՀ-ԴՊՐՈՑ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է

Այսօր Խաչիկ Դաշտենցի անվան համար 114 ավագ դպրոցի 11-րդ դասարանցիների հյուրերը համալսարանականներն էին:

[07.02.15] ԿԳ ՆԱԽԱՐԱՐԸ ՊԱՐԳԵՎԱՏՐԵՑ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻՆ

ԵՊՀ 8 ուսանողներ տարբեր անվանակարգերում հաղթող են ճանաչվել հանրապետական «Լավագույն ուսանող» մրցույթում:

[12.02.15] «ԻՐԱՎՈՒՆՔ ԲՈԼՈՐԻ ՀԱՄԱՐ». ՍՈՎՈՐԵՑՆՈՒՄ ԵՆ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ

ԵՊՀ իրավաբանական կլինիկան հունվարի 19-30-ը Երևանի և Արտաշատի մի շարք ավագ դպրոցներում իրականացրել է «Իրավունք բոլորի համար» ծրագիրը:

[13.02.15] ՎԱՐԴԱՆԱՆՑ ՏՈՆԸ ՆՇՎԵՑ ՄԵԾ ՇՈՒՔՈՎ

Վարդանանց սուրբ նահատակների հիշատակման տոնն այս տարի նույնպես ԵՊՀ-ն նշեց Գևորգյան հոգևոր ճեմարանում:

[13.02.15] ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՑՔԸ ԿԻՆՆ ԷՐ ՈՒ ՆՐԱ ԴԵՐԻ ԸՆԿԱԼՈՒՄՆԵՐԸ

Փետրվարի 13-ին ԵՊՀ գենդերային հետազոտությունների և առաջնորդության կենտրոնում քննարկվեցին կնոջ դերի կրոնական ընկալումների հետ կապված մի շարք հարցեր:

[13.02.15] ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԴԱՍՆ ԱՆՑԿԱՑՎԵՑ ԱՎԱԳ ԴՊՐՈՑՈՒՄ

Այսօր Շենգավիթ վարչական շրջանի համար 46 ավագ դպրոցի ավարտական դասարանցիների հյուրերը համալսարանականներն էին:

[16.02.15] ՎԱՐԴԱՆԱՆՔՑԻՆԵՐԸ ՀԻՇՈՒՄ ԵՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆ ՀԵՐՈՄՆԵՐԻՆ

Փետրվարի 14-ին Պռոշյան գյուղի Պետրոս Ղևոնդյանի անվան միջնակարգ դպրոցում դասը վարեցին համալսարանականները:

[17.02.15] ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐԸ՝ ՈՐՊԵՍ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԽԱՂԱՔԱՐՏ

Այսօր «ՀՌԿԿ-Հայաստան» հիմանդրամի գրասենյակում ներկայացվեց ներքին տեղահանվածների խնդիրներին վերաբերող հետազոտություն:

[18.02.15] ՈՒԳԸ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒՆ ԱՅՍՈՒՀԵՏ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ Է

ԲՈՀ-ի կողմից ճանաչելի հոդվածների ժողովածուն դարձել է երիտասարդական գիտական պարբերական:

[18.02.15] ՀԱՅԿԱԿԱՆ ԲՈՒՀԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՌԻՍԿԵՐԸ ԵՎՐՈՊԱՅԻ ՓՈՐՁԱԳԵՏՆԵՐԻ ԴԻՏԱԿԵՏՈՒՄ

Հակակոռուպցիոն միջոցառումների ծրագրի արդյունավետությունը բարձրացնելու նպատակով Հայաստան են ժամանել Եվրախորհրդի՝ կրթության գծով փորձագետները:

[19.02.15] ԱՅՍՕՐ ԳԻՐՔ ՆՎԻՐԵԼՈՒ ՕՐՆ Է

Փետրվարի 19-ը հայ մեծանուն բանաստեղծ Հովհաննես Թումանյանի ծննդյան օրն է:

[19.02.15] ԵՊՀ-Ն ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵՑ ԵՎՍ 5 ԱՎԱԳ ԴՊՐՈՑԻ ՀԵՏ

Ռեկտոր Արամ Սիմոնյանը համագործակցության պայմանագիր կնքեց Երևանի երկու և մարզային երեք ավագ դպրոցների տնօրենների հետ:

[19.02.15] ԵՊՀ-Ն ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՆՈՐ ԾՐԱԳԻՐ ՈՒՆԻ

Այսօր կայացավ ԵՊՀ գիտխորհրդի հերթական նիստը՝ օրակարգային 8 հարցերով, որի ընթացքում ընդունվեցին մի շարք որոշումներ:

[20.02.15] ««ԳԱՐՈՒՆ»-Ի ՊԱԿԱՍԻ ՑԱՎՆ ԷՐ, ՈՐ ԿՅԱՆՔԻ ԿՈՉՎԵՑ «ԱՆԴԻՆ»-Ը»
Գիրք նվիրելու օրվա կապակցությամբ Ժուռնալիստիկայի ֆակուլտետում էր հյուրընկալվել ԵՊՀ շրջանավարտ, «Գարուն» ամսագրի նախկին, իսկ այժմ «Անդին» ամսագրի գլխավոր խմբագիր Մերուժան Տեր-Գուլանյանը:

[20.02.15] «ՕՐԱՆԺ ԱՐՄԵՆԻԱՅԻ» ՆՈՐՈՒՅԹՆԵՐԸ ԵՊՀ-ՈՒՄ
«Օրանժ Արմենիա» ընկերությունը համալսարանականներին ներկայացրեց իր նորագույն ծրագրերն ու ծառայությունները:

[20.02.15] ԵՊՀ-ՈՒՄ ՏԵՂԱԴՐՎԵՑ ԱՇԽԱՐՀԲԵԿ ՔԱԼԱՆԹԱՐԻ ԿԻՍԱՆԴՐԻՆ
ԵՊՀ հիմնադիր 7 դասախոսներից մեկը՝ Աշխարհբեկ Լոռիս-Մելիք Քալանթարը, «վերադարձավ» համալսարան:

[20.02.15] ԴԱՍԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՆՎԻՐՎԱԾ ԷԻՆ ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՎԻՆ
Մայրենի լեզվի միջազգային օրվան նվիրված միջոցառումների շրջանակում ԵՊՀ դասախոսները մի շարք դպրոցներում դասախոսություններ կարդացին:

[20.02.15] ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՈՒՄՆ ՈՒ ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹՅՈՒՆԸ՝ ՓՈԽԿԱՊԱԿՑՎԱԾ
Քննարկվեցին ուսանողական առաջնորդության զարգացման ԵՊՀ հայեցակարգային դրույթները:

[23.02.15] ԴԵԿԱՆԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՅԱՑԱՎ
ԵՊՀ դեղագործության և քիմիայի ֆակուլտետը ևս 5 տարի ղեկավարելու է Տարիել Ղոչիկյանը:

[23.02.15] ԵՊՀ-Ն 6 ՏԱՐՈՎ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՈՒՄ Է ՍՏԱՑԵԼ
Փետրվարի 21-ին տեղի ունեցավ Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոնի հավատարմագրման հանձնաժողովի նիստը. որոշում կայացվեց 3 բուհերի ինստիտուցիոնալ հավատարմագրում շնորհել:

[23.02.15] ԵՊՀ ՊՐՈՖԵՍՈՐԸ՝ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄՐՑԱՆԱԿԱԿԻՐ
Իրավագիտության ֆակուլտետի դեկան Գագիկ Ղազինյանն արժանացել է «Ֆեմիդա» իրավաբանական միջազգային մրցանակին:

[24.02.15] ԵՎՍ ՄԵԿ ՀԵՐՈՍ ԱՆՄԱՀԱՑԱՎ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՊԱՏԵՐԻ ՆԵՐՔՈ
Այսօր ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետում բացվեց Ազատ Ասոյանի անվան լսարանը:

[24.02.15] ԲԱՑ ԴԱՍԵՐԻ ՇԱՐՔԸ ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է
Փետրվարի 21-ին Երևանի «Քվանտ» վարժարանում հյուրընկալվել էր ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի դեկան Հայկ Սարգսյանը:

[24.02.15] ԱՆԴՐԱՆԻԿ ՕԶԱՆՅԱՆ. ԶՈՐԱՎԱՐՆ ՈՒ ՀԱՅԴՈՒԿԱՊԵՏԸ 150 ՏԱՐԵԿԱՆ Է
Զորավար Անդրանիկի ծննդյան 150-ամյակը ԵՊՀ-ում նշվեց գիտաժողովի տեսքով՝ ծննդյան օրվա նախօրեին:

[25.02.15] ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ 100-ՐԴ ՏԱՐԵԼԻՑԻՆ ԸՆԴԱՌԱՋ
Փետրվարի 24-ին ԵՊՀ «Վարդանանք» ռազմահայրենասիրական դաստիարակության ակումբի անդամներն իրականացրին ծիծեռնակաբերդյան հերթական ընթերցումները:

[26.02.15] ԲԱՑ ԴՌՆԵՐԻ ՕՐ ԱՊԱԳԱ ԴԻՄՈՐԴՆԵՐԻ ՀԱՄԱՐ
Այսօր ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետում տեղի ունեցավ «Հայոց ցեղասպանության հետևանքները և դրանց հաղթահարման հնարավորությունները» թեմայով դասախոսություն:

[26.02.15] ԵՊՀ ԱՐՏԱՍԱՀՄԱՆՅԱՆ ԳՈՐԾԸՆԿԵՐՆԵՐԻ ԹԻՎՆ ԱՎԵԼԱՑԱՎ ԵՎՍ ՄԵԿՈՎ
Այսօր համագործակցության համաձայնագիր է ստորագրվել ԵՊՀ-ի և Մոսկվայի ազգային հետազոտական համալսարանի («Национальный исследовательский университет «МИЭТ»)միջև:

[27.02.15] «HEN-GEAR» ՀԱՐԹԱԿԸ ՆԵՐԿԱՅԱՑՎԵՑ ԳՈՐԾԱՐԱՐ ՈԼՈՐՏԻՆ
Բուհերի շրջանավարտներին ու գործարար ոլորտին իրար միացնող «HEN-GEAR» հարթակն ընդլայնում է աշխատանքի շրջանակները:

[27.02.15] ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՄԱՆ ԿԱՐԻՔ ՈՒՆԻ
Փետրվարի 26-ին ԵՊՀ գիտխորհրդի նիստերի դահլիճում տեղի ունեցավ Կրթության գերազանցության ազգային ծրագրի վերաբերյալ քննարկումներ:

[27.02.15] ՎԻՐՏՈՒԱԼ ՆՈՐ ՀԱՐԹԱԿ՝ ՆՎԻՐՎԱԾ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ 100-ՐԴ ՏԱՐԵԼԻՑԻՆ
ԵՊՀ-ի պաշտոնական պորտալում արդեն գործում է «ԵՊՀ-ն հիշում է և պահանջում» խորագրով կայք:

[27.02.15] ՆԵՐԿԱՅԱՑՎԵՑԻՆ ԹՐԱՖԻՔԻՆԳԻ ՈՒ ՀԱՐԿԱԴԻՐ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ
Այսօր ԵՊՀ-ում տեղի ունեցավ «Թրաֆիքինգը և հարկադիր աշխատանքը Հայաստանում» թեմայով սեմինար-դասընթաց:

[02.03.15] ԵՎՐՈՊԱՑԻ ՄԱՍՆԱԳԵՏԻ ՓՈՐՁԸ՝ ՈՒՍԱՆԵԼԻ ՀԱՅ ԳՈՐԾԸՆԿԵՐՆԵՐԻ ՀԱՄԱՐ
ԵՊՀ-ում անցկացվեց «Ասպերգերի համախտանիշը, միջանձնայնության խանգարումները, հոգեպաթոլոգիական ազդեցություններն ու խնամքի ձևերը» թեմայով սեմինար:

[03.03.15] «ՉԾՆՎԱԾ ԱՂՋԻԿՆԵՐԸ» ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՎԿԱՍՈՒՄ. ԸՆԿԱԼՈՒՄՆԵՐՆ ՈՒ ԼՈՒԾՈՒՄՆԵՐԸ
ԵՊՀ Ռոբերտ Շումանի անվան սրահում քննարկվեցին գենդերային խտրականությանը վերաբերող, մասնավորապես «անհետ կորած կանանց» խնդիրները:

[03.03.15] ԱՆՊԵՏՔ ԻՐԵՐԻՑ ԱՐՎԵՍՏԻ ԳՈՐԾ՝ ՄԵԿ ՔԱՅԼ
Արդեն մի քանի տարի է, ինչ Հովհաննես Շարամբեյանի անվան ժողովրդական ստեղծագործության կենտրոնում զարունն ազդարարում են Նելլի Գևորգյանի ցուցահանդեսները:

[05.03.15] «ՀՈԳԵՎԻՃԱԿ 13». ՍԱՏԻՐԱՆ ՈՒ ՀԵԳՆԱՆՔԸ՝ ՄԵՂՔԻՑ ՕՏԱՐՎԵԼՈՒ ՄԻՋՈՑ
Այսօր ԵՊՀ-ում հյուրընկալվել էր արձակագիր, դրամատուրգ և թարգմանիչ Էլֆիք Զոհրաբյանը:

[06.03.15] ԱՊԱԳԱ ԼՐԱԳՐՈՂՆԵՐԸ ՍՈՎՈՐԵՑԻՆ ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ ԳՐԵԼՈՒ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ
Մարտի 3-ին, 5-ին և 6-ին ԵՊՀ ժուռնալիստիկայի ֆակուլտետում տեղի ունեցավ «Ինչպե՞ս կատարել գիտահետազոտական աշխատանք» թեմայով եռօրյա սեմինար-դասընթաց:

[06.03.15] «ՀԱՅԿՅԱՆ» ՄՐՑԱՆԱԿՆԵՐԻՑ ՄԵԿԸ «ԵԿԵԼ Է» ԵՊՀ
ԵՊՀ երիտասարդ գիտնականը ճանաչվել է «Հայկյան» մրցանակաբաշխության հաղթողներից մեկը:

[09.03.15] ԵՊՀ-Ն ՍՏԱՑԵԼ Է ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՎԿԱՅԱԿԱՆԸ
Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոնի որոշմամբ «Երևանի պետական համալսարան» հիմնադրամը 6 տարով ինստիտուցիոնալ հավատարմագրում է ստացել:

[09.03.15] ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ՆԵՐԿԱՅԱՑՎԵՑԻՆ ԱՆԳԼԵՐԵՆՈՎ
ԵՊՀ ռոմանագերմանական բանասիրության ֆակուլտետի մի խումբ ուսանողներ մասնակցել են գլոբալ տաքացմանը և բնական պաշարներին նվիրված TEDxSalon@Yerevan միջոցառմանը:

[10.03.15] ՄՇԱԿՈՒՅԹՆԵՐԻ ԵՐԿԽՈՍՈՒԹՅՈՒՆ. ՆԵՐԿԱՅԱՑՆՈՒՄ ԵՆ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ

Մարտի 5-ին ՀՀ Ազգային ժողովում կազմակերպվել էր «Ֆրանկոֆոնիա. մշակույթների երկխոսություն» խորագրով համաժողով, որին մասնակցում էին նաև ԵՊՀ ուսանողներ:

[12.03.15] ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԸ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ԱՉՔԵՐՈՎ

Այսօր ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետում մեկնարկեց «Տնտեսագիտության ժամանակակից հիմնահարցերը» խորագրով միջազգային գիտաժողովը:

[13.03.15] ԳԱՐՈՒՆԸ, ՍԵՐՆ ՈՒ ԿԻԹԱՌԸ

Մարտի 12-ին ԵՊՀ մշակույթի կենտրոնի դահլիճում տեղի ունեցավ «Գարուն, սեր, կիթառ…» խորագրով գրական-երաժշտական երեկո:

[13.03.15] ԵՊՀ-Ն ԱՆՄԱՍՆ ՉԻ ՄՆԱԼՈՒ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ 100-ՐԴ ՏԱՐԵԼԻՑԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻՑ

Համալսարանականները ներկայացրին Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի շրջանակներում ԵՊՀ-ի կողմից իրականացվող միջոցառումները:

[13.03.15] ԳԻՏԱԿԱՆ ՎԵՐՋԻՆ ՆՎԱՃՈՒՄՆԵՐԸ՝ ԱՄԵՐԻԿԱՀԱՅ ԳԻՏՆԱԿԱՆԻ ՄԱՏՈՒՑՄԱՄԲ

Կալիֆորնիայի տեխնոլոգիական ինստիտուտի պրոֆեսորը շուրջ 1 ժամ «անցկացրեց» ԵՊՀ-ում՝ ուսանողների և դասախոսների հետ:

[13.03.15] ԽԱՂԵՐԸ՝ ՈՐՊԵՍ ՕՏԱՐ ԼԵԶՎԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԱՍ

Այսօր ԵՊՀ-ում տեղի ունեցավ «Խաղերը՝ անգլերենի ուսուցման մաս. տեսականից դեպի գործնական իրականություն» խորագրով սեմինար-դասընթաց:

[16.03.15] ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ

Կրթության ոլորտի պատասխանատուներին և փորձագետներին է ներկայացվել ՀՀ 2015-2018 թթ. հակակոռուպցիոն ռազմավարության և միջոցառումների ծրագրերի վերլուծությունը:

[16.03.15] «ԵՊՀ ՕԼԻՄՊԻԱԴԱ-2015»-Ի ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ԿԱՄՓՈՓՎԵՆ ՄԱՐՏԻ 27-ԻՆ

Մարտի 14-ին Երևանում և ՀՀ մարզերում կայացավ «ԵՊՀ օլիմպիադան», որին հայտագրվել էր 3324 աշակերտ:

[16.03.15] «ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ ՄԵԾ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՆ ՄԵԶ ՀԱՄԱՐ…»

Համալսարանականների համար դասախոսություն կարդաց ԵՊՀ պատմության ֆակուլտետի պրոֆեսոր Աշոտ Հայրունին:

[18.03.15] ԵՊՀ-Ն ՀԻՇՈՒՄ Է, ԴԱՏԱՊԱՐՏՈՒՄ ԵՎ ՊԱՀԱՆՋՈՒՄ

Հայոց մեծ եղեռնն Օսմանյան կայսրության իշխանության ղեկին կանգնած երիտթուրքական «Իթթիհադ վե թերաքի» կուսակցության կողմից կազմակերպված ցեղասպանություն է, որի արդյունքում 1915-1923 թվականներին զանգվածային տեղահանության է ենթարկվել և բնաջնջվել Օսմանյան կայսրության նահանգների, այդ թվում՝ Արևմտյան Հայաստանի հայ բնակչությունը:

[18.03.15] ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆՆԵՐԻ ՀՅՈՒՐՆ ԷՐ ՋԻՄ ԲՈՒՄԵԼԱՆ

Այսօր ԵՊՀ Պալեանների անվան դահլիճում տեղի ունեցավ հանդիպում Ժուռնալիստների միջազգային ֆեդերացիայի (The International Federation of Journalists-IFJ) նախագահ Ջիմ Բումելայի հետ:

[18.03.15] ԵՊՀ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ ՆՈՒՅՆՊԵՍ ԿՄԱՍՆԱԿՑԵՆ ԿԱՄԱՎՈՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻՆ

ՀՀ տարբեր բուհերից ավելի քան 350 ուսանողներ կընդգրկվեն Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին նվիրված միջոցառումների կամավորական աշխատանքներում:

[19.03.15] ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԱՊԱԳԱ ԼՐԱԳՐՈՂՆԵՐԻ ՈՒՇԱԴՐՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆՈՒՄ ԵՆ
Այսօր ԵՊՀ ժուռնալիստիկայի ֆակուլտետում տեղի ունեցավ «Բնապահպանական հիմնախնդիրները և ժուռնալիստիկան» խորագրով սեմինար-դասընթաց:

[19.03.15] «ՄԵՆՔ ԳՈՅԱՏԵՎՈՒՄ ԵՆՔ ՄԵՐ ԱԶԳԻ ՏԵՍԱԿԻ ՇՆՈՐՀԻՎ»
Այսօր ԵՊՀ ռոմանագերմանական բանասիրության ֆակուլտետում տեղի ունեցան դասախոսություն և ֆիլմի ցուցադրություն՝ նվիրված Հայոց ցեղասպանության 100-ամյա տարելիցին:

[20.03.15] ՄՊԱՅԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ
Այսօր ԵՊՀ Պալեանների անվան դահլիճում ՊՆ ներկայացուցիչները հանդիպեցին համալսարանականների հետ:

[20.03.15] ՎԻՐՏՈՒԱԼ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ՝ ԲՈՒՀԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԲԱՂԱԴՐԻՉ
Հայաստանյան առաջատար մի շարք բուհեր բռնել են ուսումնական ծրագրերի վիրտուալիզացիայի ճանապարհը:

[23.03.15] ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՎԱՐԿԱՆԻՇԱՎՈՐՄԱՄԲ ԵՊՀ-Ն ՀՀ-ՈՒՄ ԱՌԱՋԻՆՆ Է
«Վեբոմետրիքս» միջազգային ընկերությունը (Webometrics Ranking of World Universities) հրապարակել է բուհական համաշխարհային վարկանշային նոր աղյուսակը:

[23.03.15] ՀԱՅՏՆԻ ԵՆ «ԵՊՀ ՕԼԻՄՊԻԱԴԱ-2015»-Ի ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ
Մարտի 14-ին Երևանում և ՀՀ մարզերում կայացավ «ԵՊՀ օլիմպիադան», որին հայտագրվել էր 3324 աշակերտ:

[24.03.15] ԿԼԻՄԱՅԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ
Այսօր ԵՊՀ աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի ուսանողների հյուրն էր ՀՀ ԱԻՆ հիդրոմետ ծառայության պետի տեղակալ, ֆիզմաթ. գիտ. թեկնածու Համլետ Մելքոնյանը:

[24.03.15] ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ՆԵՐԿԱՅԱՑՎԵՑԻՆ ՈՒՍԱՆՈՂ ԿԱՄԱՎՈՐՆԵՐԻՆ
Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին նվիրված միջոցառումների աշխատանքներին աջակցելու համար ՀՀ տարբեր բուհերի ուսանողներից ստեղծվել է կամավորական խումբ:

[24.03.15] ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՍԵԿՏՈՐԸ՝ ԿԱՐԻԵՐԱՅԻ ԼՈՒՐՋ ՀԵՌԱՆԿԱՐ
Նյու Յորքի պետական համալսարանի պրոֆեսոր Սյուզան Էփփը ԵՊՀ ուսանողներին ներկայացրեց այն ամենը, ինչ պետք է հասարակական սեկտորում կարիերա կառուցելու համար:

[24.03.15] ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿԱԾ ԳՐՔԵՐԸ՝ ՓԱՐԻԶԻ ԳՐՔԻ ՏՈՆԱՎԱՃԱՌՈՒՄ
Այս տարի Փարիզի գրքի ավանդական տոնավաճառն անցկացվել է մարտի 20-23-ը:

[25.03.15] ԵՊՀ ԻՐԱՎԱԳԵՏՆԵՐԻ ԹԻՄԸ ՆՎԱՃԵՑ ՄԻԱՆԳԱՄԻՑ ԵՐԿՈՒ ՏԻՏՂՈՍ
Մարտի 21-22-ը Հայաստանի Ամերիկյան համալսարանի և «ԷյԴիԱր Փարթներս» (ADR Partners) ընկերության նախաձեռնությամբ կազմակերպվել էր առևտրային արբիտրաժին նվիրված երրորդ խաղ-մրցույթը:

[26.03.15] ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԱՆՑՔՈՒՄ «ԻՍԼԱՄԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆ» ԽՄԲԱՎՈՐՈՒՄՆ Է
Այսօր ԵՊՀ քաղաքակրթական և մշակութային հետազոտությունների կենտրոնում տեղի ունեցավ «Իսլամական պետությունը և մերձավորարևելյան զարգացումները» խորագրով կլոր սեղան-քննարկում:

[26.03.15] ՀԱՍՏԱՏՎԵԼ Է ԵՊՀ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿԸ
Կայացավ ԵՊՀ գիտխորհրդի հերթական նիստը՝ օրակարգային 7 հարցերով:

[27.03.15] ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ ԵՎ ԱՄՆ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Հանրության դատին հանձնվեց մեծանուն պատմաբան, դիվանագետ, պրոֆեսոր Արման Կիրակոսյանի հերթական ծավալուն աշխատությունը:

[27.03.15] ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆՆԵՐԸ ՅՈՒՐՈՎԻ ԵՆ ՆՇՈՒՄ ԹԱՏՐՈՆԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՐԸ

Մարտի 27-ը Թատրոնի միջազգային օրն է:

[27.03.15] «ԵՐԻՏԱՍԱՐԴ ՍԵՐՈՒՆԴ ԿՐԹԵԼԸ ՎԵՀ ԳՈՐԾ Է…»

Այսօր ԵՊՀ մեծ դահլիճում տեղի ունեցավ «ԵՊՀ օլիմպիադա-2015»-ի փակման հանդիսավոր արարողությունը:

[27.03.15] ՌԴ ՀՆԱԳՈՒՅՆ ԵՎ ԽՈՇՈՐԱԳՈՒՅՆ ԲՈՒՀԵՐԻՑ ՄԵԿԸ ԵՊՀ-Ի ԳՈՐԾԸՆԿԵՐՆ Է

Սանկտ Պետերբուրգի պետական համալսարանը համագործակցում է եվրասիական տարածաշրջանի մի շարք բուհերի, այդ թվում՝ ԵՊՀ-ի հետ:

[30.03.15] ԱՐՑԱԽՅԱՆ ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆԸ ՄԿՍՎԵՑ ՍԵՄԻՆԱՐ-ՔՆՆԱՐԿՈՒՄՈՎ

Մարտի 27-29-ը ԵՊՀ շուրջ 100 ուսանողներ, ուսանողական կառույցների ներկայացուցիչներ Արցախում էին:

[30.03.15] 100 ՈՒՍԱՆՈՂ՝ 100 ԾԱՌ

Բերձորում հիմնվեց Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին նվիրված պուրակ, որտեղ տեղի ունեցավ նաև հուշաքարի բացման արարողություն:

[31.03.15] «iOlymp». ՆՈՐ ԱՌՑԱՆՑ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՀԵՂԻՆԱԿԸ ԵՊՀ ՈՒՍԱՆՈՂ Է

Ինֆորմատիկայի հանրապետական օլիմպիադան անցկացվում է ԵՊՀ ինֆորմատիկայի և կիրառական մաթեմատիկայի ուսանողի մշակած առցանց համակարգով:

[31.03.15] ԵՊՀ-Ն՝ «ՀԱՅ ԱՍՊԵՏ» ՀԵՌՈՒՍՏԱԽԱՂ-ՄՐՑՈՒՅԹԻ ՀԱՂԹՈՂ

Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին նվիրված «Հայ ասպետ» հեռուստախաղ-մրցույթն այս անգամ անցկացվեց բուհական մակարդակով:

[01.04.15] ՍԱԹՅԱՆՆԵՐ. ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԳԵՆԵՐՈՎ ԿՈՄՊՈԶԻՏՈՐՆԵՐԸ «ԵԿԵԼ ԷԻՆ» ԵՊՀ

«ԵՊՀ ռեկտորը ներկայացնում է… Սաթյաններին». ԵՊՀ-ում անցկացված միջոցառումը նվիրված էր Սաթյանների կոմպոզիտորական գերդաստանին:

[02.04.15] «ԵՍ ԻՄ ԱՆՈՒՇ ՀԱՅԱՍՏԱՆԻ»-Ն՝ ՆԱԵՎ ՖՐԱՆՍԵՐԵՆՈՎ

Այսօր ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետում անցկացվեց հատուկ դաս՝ «Ես իմ անուշ Հայաստանի» թեմայով:

[02.04.15] ԳԵՎՈՐԳ ՋԱՀՈՒԿՅԱՆ. ԱԿԱՆԱՎՈՐ ԳԻՏՆԱԿԱՆԻ «ՎԵՐԱԴԱՐՁԸ» ԵՊՀ

Այսուհետ ԵՊՀ հայ բանասիրության ֆակուլտետի 208 լսարանը կրելու է լեզվաբան, ակադեմիկոս Գևորգ Ջահուկյանի անունը:

[02.04.15] ԿՈՆՖԼԻԿՏՆԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՄ ՍԱՌԵՑՄԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՆԱԽԱՊԱՅՄԱՆԸ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆ Է

Այսօր ԵՊՀ քաղաքակրթական և մշակութային հետազոտությունների կենտրոնում քննարկվեցին ԼՂ հակամարտության առանձնահատկություններն ու նմանություններն այլ հակամարտություններին:

[02.04.15] ՄԱՆԿԱՎԱՐԺԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ ՀՀ ՄԱՐԶԵՐՈՒՄ

Ավելի քան 20 շրջանավարտներ այս տարվա սեպտեմբերին հնարավորություն կստանան բարձր աշխատավարձով աշխատանքի անցնելու Լոռու, Տավուշի և Արմավիրի մարզերի դպրոցներում:

[03.04.15] ՀԱՅԱՍՏԱՆՆ ՈՒ ՄԵՐՁԱՎՈՐԱՐԵՎԵԼՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԸ

Այսօր ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտի (ՀՀԻ) քննարկումների սրահում տեղի ունեցավ «Հայոց ցեղասպանության գործոնը մերձավորարևելյան զարգացումների համատեքստում» խորագիրը կրող կլոր-սեղան քննարկում:

[03.04.15] ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՆՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ. ՀԱՅԱՍՏԱՆ ԵՎ ԹՈՒՐՔԻԱ

Մարդաբան, պրոֆեսոր Էմինե Օնառան որոշել է ուսումնասիրել մշակույթի դերը հայ-թուրքական հարաբերություններում:

[07.04.15] ՄԻԳՐԱՑԻԱՅԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ԳԼՈԲԱԼԻԶԱՑԻԱՅԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Մեկնարկեց ԵՊՀ-ի կողմից իրականացվող՝ Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին նվիրված գիտական միջոցառումների շարքը:

[07.04.15] ԻՍԼԱՄԱՑԱԾ ՀԱՅԵՐ ԿԱՄ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՅԼ ԴՐՍԵՎՈՐՄԱՄԲ

ԵՊՀ ռոմանագերմանական բանասիրության ֆակուլտետում ցուցադրվեց «Համշենը ներկայի և անցյալի խաչմերուկներում» վավերագրական ֆիլմը, որը հեղինակը ներկայացրեց անձամբ:

[08.04.15] ՌՈՒՍԱՆՈՂՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎԵՑԻՆ ԱՇԽԱՏԱՆՔ ՓՆՏՐԵԼՈՒ ՈՒՂԻՆԵՐԸ

Այսօր ԵՊՀ-ում տեղի ունեցավ «Ինչպե՞ս և որտե՞ղ փնտրել աշխատանք» խորագրով սեմինար-դասընթաց:

[08.04.15] ԿԱՅՈՒՆ ՏՈՒՐԻԶՄԸ ՈՐՊԵՍ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԿԱՐԵՎՈՐ ԲԱՂԱԴՐԻՉ

Այսօր ԵՊՀ աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի սերվիսի ամբիոնի ուսանողների համար դասախոսություն կարդաց էկոտուրիզմի հայկական ասոցիացիայի նախագահ Ժաննա Գալյանը:

[08.04.15] ԵՊՀ-Ի ԴԵՐԸ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԻՑ ՄԻՆՉԵՎ ԱՐՑԱԽՅԱՆ ԳՈՅԱՄԱՐՏ

Հայաստանի շուրջ 100-ամյա Մայր բուհի՝ հայության կյանքում ունեցած նշանակության մասին որոշել էր պատմել ԵՊՀ պատմության թանգարանը:

[09.04.15] ԼՈՒՅՍ Է ՏԵՍԵԼ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆԸ ՆՎԻՐՎԱԾ «ՎԱՐԴԸ» ՎԵՊԸ

Ապրիլի 8-ին ԵՊՀ Եղիշե Չարենցի անվան դահլիճում տեղի ունեցավ Մարի Լուիզ Վարդանյանի «Վարդը» վեպի գրքի շնորհանդեսը:

[09.04.15] ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆԴԵՊ ՎԱՂԵՄՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏ ՉԻ ԿԻՐԱՌՎՈՒՄ...

Այսօր ԵՊՀ Պալեանների անվան դահլիճում մեկնարկեց Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին նվիրված հանրապետական երիտասարդական գիտաժողովը:

[09.04.15] ԱՇԱԿԵՐՏՆԵՐԸ ԵՊՀ-Ն ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄ ԵՆ ՆԵՐՍԻՑ

ԵՊՀ-ն այսօր հյուրընկալել էր Երևանի համար 109 ավագ դպրոցի ֆիզմաթ հոսքի 12-րդ դասարանի աշակերտներին:

[10.04.15] ՔՆՆԱՐԿՎԵԼ Է ԵՊՀ-ՈՒՄ ԲԻԶՆԵՍ ԴՊՐՈՑ ԲԱՑԵԼՈՒ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

Հայաստանն ու Ավստրիան կրթության ոլորտում համագործակցության հուշագիր են ստորագրել:

[10.04.15] ԵՊՀ-Ն ՆՈՐ ԿՈԼԵԿՏԻՎ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՈՒՆԵՆԱ

Շուրջ մեկ ամիս է՝ մեկնարկել են ԵՊՀ կոլեկտիվ պայմանագրի նախագծի մշակման և քննարկման աշխատանքները:

[10.04.15] «ԶՈՒՅԳ ԱՐԵԳԱԿՆԵՐ». ՀԱՅԱՍՏԱՆԻՑ ԴԵՊԻ ՏԻԵԶԵՐՔ

Գրիգոր Նարեկացուն, Թորոս Ռոսլինին, Արշիլ Գորկուն, Մեսրոպ Մաշտոցին ու Արամ Խաչատրյանին միավորող բալետային ներկայացումը շատ շուտով «կբարձրանա» բեմ:

[11.04.15] ՀԱՅ ԿՆՈՋ ԿԵՐՊԱՐԸ ԶԱՆԳՎԱԾԱՅԻՆ ԼՐԱՏՎԱՄԻՋՈՑՆԵՐՈՒՄ
Ապրիլի 10-ին ներկայացվեցին «Հայ կնոջ կերպարը զանգվածային լրատվամիջոցներում. գենդերային զգայունությունից գենդերային կարծրատիպեր» հետազոտության արդյունքները:

[11.04.15] ՔՆՆԱՐԿՎԵՑԻՆ ՊՐԱԿՏԻԿ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅԱՆ ԷԹԻԿԱԿԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԸ
Ապրիլի 10-ին ԵՊՀ կիրառական հոգեբանության կենտրոնում տեղի ունեցավ «Պրակտիկ հոգեբանության էթիկական հիմնահարցերը» խորագրով սեմինար:

[13.04.15] ՔՆՆԱՐԿՎԵՑԻՆ ՍԵՐՎԻՍԻ ՏԵՍԼԱԿԱՆՆԵՐԸ
Այսօր ԵՊՀ-ում տեղի ունեցավ «Սերվիսի տեսլականները և սերվիսագիտության անհրաժեշտությունը» թեմայով կլոր-սեղան-քննարկում:

[13.04.15] ԱՊԱԳԱ ԼՐԱԳՐՈՂՆԵՐԸ ՀԻՇՈՒՄ ԵՎ ԴԱՏԱՊԱՐՏՈՒՄ ԵՆ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ
Այսօր ԵՊՀ ժուռնալիստիկայի ֆակուլտետում տեղի ունեցավ գիտաժողով՝ նվիրված Հայոց ցեղասպանության 100-ամյա տարելիցին:

[13.04.15] ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ ԾԱՆՈԹԱՑԱՆ ԵՊՀ ԴԱՍԱԽՈՍԻ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆԸ
Հայաստան էին ժամանել Նիդեռլանդների թագավորության Ուտրեխտի պետական համալսարանի ուսանողները:

[13.04.15] ՀԱՅ-ՇՎԵՅՑԱՐԱԿԱՆ ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ԴՊՐՈՑ. ՄԵԿՆԱՐԿԸ ՏՐՎԱԾ Է
Այսուհետ ԵՊՀ գիտնականները հնագիտության բնագավառում համագործակցելու են Ժննի համալսարանի գործընկերների հետ:

[13.04.15] ՀՀ ՆԱԽԱԳԱՀԸ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐԶ Է ՀՂԵԼ ԵՊՀ ՌԵԿՏՈՐ ԱՐԱՄ ՍԻՄՈՆՅԱՆԻՆ՝ ԾՆՆԴՅԱՆ 60-ԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ
ՀՀ Նախագահ Սերժ Սարգսյանն այսօր շնորհավորական ուղերձ է հղել Երևանի պետական համալսարանի ռեկտոր Արամ Սիմոնյանին՝ ծննդյան 60-րդ տարեդարձի կապակցությամբ:

[14.04.15] «ԵՐԿԽՈՍՈՒԹՅՈՒՆԸ ՄԻԱԿ ԵԼՔՆ Է, ՈՐԻ ՕԳՆՈՒԹՅԱՄԲ ՊԵՏՔ Է ԼՈՒԾՈՒՄ ԳՏՆՎԻ...»
Այսօր ԵՊՀ գիտխորհրդի նիստերի դահլիճում Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի (ԵԽԽՎ) նախագահ Անն Բրասերը հանդիպեց համալսարանականների հետ:

[15.04.15] ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍԸ ՆՎԻՐՎԱԾ Է ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ 100-ՐԴ ՏԱՐԵԼԻՑԻՆ
Ապրիլի 10-25-ը համալսարանականները հնարավորություն կունենան դիտելու «Էրգիրը տիրոջ աչքերով» խորագրով ցուցահանդեսը:

[15.04.15] ՑՈՒՑԱԴՐՎԵՑԻՆ «ԱՐԱՐԱՏԻՑ ԵՎՐՈՊԱ» ԵՎ «ՇՆԵՐԻ ԿՂԶԻՆ» ՖԻԼՄԵՐԸ
ԵՊՀ մշակույթի կենտրոնի կինոակումբը վերսկսել է ֆիլմերի ցուցադրությունները:

[15.04.15] ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ ՍՈՎՈՐՈՒՄ ԵՆ ԲԻԶՆԵՍ ԾՐԱԳՐԵՐ ՍՏԵՂԾԵԼ
Այսօր ԵՊՀ Պալեանների անվան դահլիճում մեկնարկեց Ինովացիոն բիզնես գաղափարների մշակման և ձեռներեցության դասընթացների առաջին փուլը:

[16.04.15] ԽՆԴԻՐՆ ԻՐԱԶԵԿՎԱԾՈՒԹՅԱՆ ՑԱԾՐ ՄԱԿԱՐԴԱԿՆ Է...
Ներկայացվեց «Սեռական բնույթի հետապնդումները աշխատավայրում որպես կանանց մասնագիտական առաջընթացին խոչընդոտող գործոն» հետազոտության արդյունքները:

[16.04.15] ԳԻՏԱՃԱՆԱՉՈՂԱԿԱՆ ԱՅՑ ԱՊԱԳԱ ԼՐԱԳՐՈՂՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՄԲ
Այսօր ԵՊՀ ժուռնալիստիկայի ֆակուլտետի մի խումբ ուսանողներ այցելել էին ՀՀ ՊՆ «Մայր Հայաստան» զինվորական թանգարան:

[17.04.15] ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆՆԵՐԻ ՀՅՈՒՐԸ ԳԵՐՄԱՆԱՑԻ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆ ԷՐ
Այսօր ԵՊՀ ուսանողների հետ հանդիպեց Գերմանիայի Դաշնային Հանրապետության բունդեսթագի պատգամավոր, կրթական հարցերով հանձնաժողովի անդամ Թանկրեդ Շիպանսկին:

[17.04.15] ՀԱՅ-ՉԻՆԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆՈՐ ՀԱՐԹԱԿ
Մայր բուհի ղեկավարության և ԵՊԼՀ Կոնֆուցիոսի ինստիտուտի աջակցությամբ ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետում բացվեց չինարենի և չինական մշակույթի կենտրոն:

[17.04.15] ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ ՎԵՐՀԱՆՈՒՄ ԵՆ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԸ
Այսօր ԵՊՀ-ում տեղի ունեցավ «Ցեղասպանության ախտահոգեբանական և սոցիալ-հոգեբանական հետևանքները» խորագրով գիտաժողով:

[17.04.15] ԳՐԱԳԵՏ ԳՐՎԱԾ CV-Ն ԳՈՐԾԱՏՈՒԻՆ ՃԻՇՏ ՆԵՐԿԱՅԱՆԱԼՈՒ ԱՌԱՋԻՆ ՔԱՅԼՆ Է
Այսօր ԵՊՀ-ում տեղի ունեցավ «Ինչպե՞ս գրել CV և ինչպե՞ս անցնել աշխատանքային հարցազրույց» խորագրով սեմինար-դասընթաց:

[17.04.15] ԱՍՏԾՈ ՈՒ ՍԱՏԱՆԱՅԻ ԱՐԱՆՔՈՒՄ. ՇՆՈՐՀԱՆԴԵՍԸ՝ ԵՊՀ-ՈՒՄ
Այսօր ԵՊՀ-ում տեղի ունեցավ Հայ առաքելական եկեղեցու Ուրուգվայի թեմի առաջնորդ Հակոբ արքեպիսկոպոս Գլնճյանի երկու գրքերի շնորհանդեսը:

[17.04.15] ՄԱՅՐ ԲՈՒՀՈՒՄ ՖՐԱՆՍԻԱՀԱՅ ԱՐՎԵՍՏԱԳԵՏՆԵՐԻ ՇՈՒՆՉՆ ԷՐ
Այսօր ԵՊՀ մշակույթի կենտրոնի դահլիճում տեղի ունեցավ «Աշխարհասփյուռ հայ արվեստագետները… Ֆրանսիա» խորագրով միջոցառումը:

[19.04.15] ՀԻՇՈՒՄ ԵՆՔ ԵՎ ՊԱՀԱՆՋՈՒՄ
Մայր բուհի ուսանողներն ու դասախոսները, ի հիշատակ Հայոց ցեղասպանության անմեղ զոհերի, ծաղկեպսակներ իջեցրին և ծաղիկներ նետեցին Մայր Արաքս գետը:

[20.04.15] «ՀԱՎԵՐԺԱՆՈՒՄ ԵՍ ՀՈՂԻ ՄԵՋ, ԵՐԲ ԾԱՌ ԵՍ ՏՆԿՈՒՄ»
Եռաբլուրին հարող տարածքում ստեղծված համալսարանական պուրակը նվիրվեց Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին:

[20.04.15] ՀԱՅՈՑ ԴԱՏԸ ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է…
Այսօր ԵՊՀ հայ բանասիրության և արևելագիտության ֆակուլտետների ուսանողական խորհուրդները կազմակերպել էին միջոցառում՝ նվիրված Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին:

[21.04.15] ԵՊՀ-ՈՒՄ ԲԱՑՎԵՑ ՑԵՂԱՍՊԱՆԱԳԻՏԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՍՐԱՀ
Այսօր ԵՊՀ Սարգիս և Մարի Իզմիրլյանների անվան գրադարանի մասնաշենքում տեղի ունեցավ Ցեղասպանագիտական գրականության սրահի բացումը:

[21.04.15] ՀԱՅԱՍՏԱՆՑԻՆԵՐԸ ՀԱՎԱՏՈՒՄ ԵՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆԸ
Ապրիլի 21-ին ԵՊՀ-ում գործող Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոնը (ՀՌԿԿ-Հայաստան) ներկայացրեց հայ-թուրքական հարաբերությունների վերաբերյալ կատարված սոցիոլոգիական հարցման արդյունքները:

[21.04.15] ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԻՑ ՎԵՐԱԾՆՈՒՆԴ

Այսօր տեղի ունեցավ Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին նվիրված ԵՊՀ միջոցառումներից գլխավորը՝ գիտխորհրդի ընդլայնված հանդիսավոր նիստը:

[21.04.15] ՄԵՓԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԱՌԵՐԵՍՎԵԼԸ ՃԻՇՏ ՄՈՏԵՑՈՒՄ Է

Համալսարանականների հյուրն էր ցեղասպանագետ, մի շարք հետազոտությունների հեղինակ Տոմիսլավ Դուլիչը:

[21.04.15] ԵՊՀ-ՈՒՄ ԲԱՑՎԱԾ ՀՈՒՇԱԿՈԹՈՂԸ ՎԵՐ ԽՈՅԱՑՄԱՆ ԽՈՐՀՐԴԱՆԻՇ Է

Այսօր ԵՊՀ 6-րդ մասնաշենքին (Սև շենք) հարող տարածքում տեղի ունեցավ Հայոց ցեղասպանության նահատակների հիշատակին նվիրված հուշակոթողի բացման արարողություն:

[22.04.15] ՀԱՅՈՑ ԵՂԵՌՆԻՆ ՆՎԻՐՎԱԾ ԱՄԵՆԱՀԱՅՏՆԻ ՖԻԼՄԸ ՑՈՒՑԱԴՐՎԵՑ ԵՊՀ-ՈՒՄ

Ապրիլի 22-ին ԵՊՀ մշակույթի կենտրոնի դահլիճում տեղի ունեցավ ֆրանսիահայ ռեժիսոր Անրի Վերնոյի «Մայրիկ» ֆիլմի ցուցադրությունը:

[22.04.15] «ՄԱՀ ԱՆԱՊԱՏՈՒՄ. ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ»

Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին նվիրված միջոցառումների շրջանակներում համալսարանականների հյուրն էր անվանի գիտնական, հայագետ Ռոլֆ Հոսֆելդը:

[22.04.15] ՄԱՆԿԱՎԱՐԺՆԵՐԸ ՀԻՇՈՒՄ ԵՆ ԵՎ ՊԱՀԱՆՋՈՒՄ

Առաջին անգամ շրջանառության մեջ դրվեց Հայոց ցեղասպանության ընթացքում սպանված հայ մանկավարժների մասին տեղեկատվությունը:

[22.04.15] «ՆՐԱ ՀՈԳԻՆ ՍԱՎԱՌՆՈՒՄ Է ԵՐԿՆՔՈՒՄ»

Ապրիլի 21-ին կլրանար ԵՊՀ պատմության ֆակուլտետի ուսանող, Արցախյան ազատամարտի մասնակից, ՀՀ Ազգային հերոս Թաթուլ Կրպեյանի ծննդյան 50-րդ տարեդարձը:

[23.04.15] «ՑԱՆԿԱՆՈՒՄ ԵՄ, ՈՐ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆՆ ԸՆԴՈՒՆԻ ԱՄԲՈՂՋ ԱՇԽԱՐՀԸ»

Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի միջոցառումներին մասնակցելու նպատակով Հայաստան ժամանած ռուս քաղաքական-հասարակական գործիչ, գործարար Գերման Ստերլիգովն այսօր հյուրընկալվեց նաև ԵՊՀ-ում:

[24.04.15] ԱՊՐԻԼԻ 24. ԿՈՉԵՄ ԱՊՐՈՂԱՑ

ԵՊՀ-ն նույնպես անմասն չի մնում Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին նվիրված միջոցառումներից:

[25.04.15] ԵՆԱՑԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀԵՏ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

ԵՊՀ-ն կընդլայնի իր համագործակցությունը գերմանական համալսարանների հետ:

[25.04.15] ՀՈՒՅՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՈՐԾԻՉՆԵՐՆ ԱՅՑԵԼԵՑԻՆ ԵՊՀ

Այսօր համալսարանականների հետ հանդիպեցին Հունաստանի Ազգային ժողովի նախագահ Զոյի Կոնստանտապուլոսն ու ՀՀ-ում Հունաստանի արտակարգ և լիազոր դեսպան Իոաննիս Տայիսը:

[27.04.15] ԻՐ ԿՅԱՆՔԻ ԼԵՌԸ ՆԱ ՀԱՂԹԱՀԱՐԵԼ ԷՐ 26 ՏԱՐԵԿԱՆՈՒՄ…

Այսօր ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի Տիգրան Սարգսյանի անվան լսարանում տեղի ունեցավ հերոսի ծննդյան 50-ամյակին նվիրված միջոցառում-հանդիպում:

[27.04.15] ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԵԼ ԵՆ ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ԴՊՐՈՑԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ
Ներկայացվեցին «Գենդերային պրակտիկաներից դեպի գենդերային քաղաքականություն. դեպքի մասնակցային հետազոտում հայաստանյան հանրային դպրոցական համայնքում» հետազոտության արդյունքները:

[27.04.15] ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՍՈՑԻՈԼՈԳԻԱԿԱՆ ՏԵՍԱՆԿՅՈՒՆԻՑ
Լույս է տեսել իտալացի պրոֆեսոր Մարիա Իմմակոլատա Մաչոտիի «Հայոց ցեղասպանությունը պատմության և հիշողության մեջ» գրքի հայերեն տարբերակը:

[27.04.15] ՏԱՐԵԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՄԵԿՆԱՐԿԸ ՏՐՎԱԾ Է
Այսօր ԵՊՀ մեծ դահլիճում տեղի ունեցավ ՈՒԳԸ տարեկան գիտական նստաշրջանի հանդիսավոր բացման արարողությունը:

[28.04.15] ԵՊՀ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԸ ՊԱՐՏԱԴԻՐ ԲԺՇԿԱԿԱՆ ՋՆՆՈՒՄ ՊԵՏՔ Է ԱՆՑՆԵՆ
ԵՊՀ ռեկտոր Արամ Սիմոնյանի՝ 07.04.2015 թ.-ի N60§11 հրամանով Մայր բուհի աշխատակիցները 2015 թ.-ի ապրիլ-հունիս ամիսների ընթացքում պետք է անցնեն պարտադիր բուժզննում:

[28.04.15] ԿՐԱԿՈՎԻ ՅԱԳԵԼԼՈՆՅԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀԵՏ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է
Ապրիլի 27-ին ԵՊՀ Պալեանների անվան դահլիճում տեղի ունեցավ «Աշխարհաքաղաքական երկընտրանքներ. Հայաստանի եվրոպական ինտեգրման դետերմինանտներն ու հեռանկարները» թեմայով միջազգային գիտաժողովը:

[28.04.15] «ՀԱՃԱԽՈՐԴԸ ՄԻՇՏ ՃԻՇՏ Է»
Համալսարանականներին ներկայացվեցին հաճախորդների սպասարկման հիմնական սկզբունքները:

[28.04.15] ՋՈՒՂԱՅԻ ԱՎԵՐՎԱԾ ԽԱՉՔԱՐԵՐԸ ԵՐԿՐՈՐԴ ԿՅԱՆՔ ԿՍՏԱՆԱՆ
«Նոյի երկրում. ճանապարհորդություն ետեղեռնյան Հայաստանում» գրքի շնորհանդեսով մեկնարկեց «Ջուղայի խաչքարային դաշտի վիրտուալ վերստեղծում» ծրագիրը:

[29.04.15] ԵՊՀ-ՈՒՄ ԲԱՑՎԵՑ ԵՐԱԽՏԻՔԻ ԾԱՌՈՒՂԻ
ԵՊՀ-ում Հայոց մեծ եղեռնի 100-րդ տարելիցի կապակցությամբ հիմնադրված ծառուղու բացմանն այսօր ներկա էր նաև ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանը:

[29.04.15] ՀՀ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՅՑԸ ԿԻՐԱՌԱԿԱՆ ԿԵՆՍԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԳԵՐԱԶԱՆՑՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ
Երախտիքի ծառուղու բացումից անմիջապես հետո ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանն ու մյուս հյուրերը ուղևորվեցին ԵՊՀ կիրառական կենսաբանության գերազանցության կենտրոն:

[29.04.15] ԿԱՅԱՑԱՎ ԵՊՀ ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴՐԱՆԻԿ ՆԻՍՏԸ
Այսօր տեղի ունեցավ ԵՊՀ հոգաբարձուների խորհրդի նիստը, որը նախագահում էր ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանը:

[30.04.15] ԴԱՏԱԿԱՆ ՆԻՍՏԸ ՎԱՐՈՒՄ ԵՆ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ
Այսօր ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի դատական նիստերի դահլիճում տեղի ունեցավ «Կալանքի՝ որպես խափանման միջոցի հիմնախնդիրները քրեական դատավարությունում» խորագրով դատախաղ:

[30.04.15] ՌՈՒՍԱԿԱՆ ԲՈՒՀԵՐԻ ՀԵՏ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆՆ ԸՆԴԼԱՅՆՎՈՒՄ Է
ԵՊՀ-ում ապրիլի 29-ին հյուրընկալվել էր «Տնտեսագիտության բարձրագույն դպրոց» ազգային հետազոտական համալսարանի Սանկտ Պետերբուրգի մասնաճյուղի տնօրեն Սերգեյ Կադոչնիկովը:

[30.04.15] «ԿՐՊԵՅԱՆՆԵՐԻ ՕՋԱԽԻ ԶԱՎԱԿԸ «ՄԱՏԱՂ» ԵՂԱՎ ՀԱՅ ԱԶԳԻՆ»
24 տարի առաջ՝ ապրիլի 30-ին, թշնամու դավադիր գնդակը կպավ Թաթուլ Կրպեյանին: Նա զոհվեց՝ պաշտպանելով Արցախ աշխարհը…

[04.05.15] ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԿԻԶԱԿԵՏՈՒՄ ՕՏԱՐ ԼԵԶՈՒՆԵՐԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԱՐԴԻ ԽՆԴԻՐՆԵՐՆ ԵՆ
Այսօր ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետում մեկնարկեց «Օտար լեզուների դասավանդման արդի խնդիրները» խորագրով միջհամալսարանական գիտաժողովը:

[04.05.15] ԵՊՀ ՌԵԿՏՈՐԻ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆԻ ԲԱՑ ՄՐՑՈՒՅԹ
«Երևանի պետական համալսարան» հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդը հայտարարում է բաց մրցույթ՝ «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կառավարչի (այսուհետ՝ ռեկտոր) թափուր պաշտոնի համար:

[04.05.15] «ԿԱՐԳԱՎՈՐԻՉ ԳԻԼՅՈՏԻՆ» ԾՐԱԳԻՐ. ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՐՇԱՎԸ ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է
Այս անգամ պետական այդ ծրագրի ու դրա անհրաժեշտության մասին տեղեկատվություն ստանալու հերթը քաղաքացիական ծառայողներինն էր:

[05.05.15] ՍՓՅՈՒՌՔԻ ՀԱՅ ԴՊՐԱՏՆԵՐԸ ՆԵՐԿԱՅԱՑՎԵՑԻՆ ԳԻՏԱԺՈՂՈՎԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ
Մայիսի 4-ին ԵՊՀ միջազգային կրթական կենտրոնում տեղի ունեցավ «Սփյուռքի հայ դպրատները» խորագրով ուսանողական գիտաժողով:

[06.05.15] ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ՝ ՈՐՊԵՍ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱՔԱՐ
Այսօր ԵՊՀ աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետում մեկնարկեց «ՀՀ տնտեսության զարգացման և տեղաբաշխման ժամանակակից հիմնախնդիրները» խորագրով հանրապետական գիտաժողովը:

[06.05.15] ՔՆՆԱՐԿՄԱՆ ԿԻԶԱԿԵՏՈՒՄ ԼՂՀ ԿՈՆՖԼԻԿՏԻ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄՆ ԷՐ
Մի խումբ քաղաքագետներ և միջազգային փորձագետներ հավաքվել էին ԵՊՀ-ում՝ քննարկելու տարածաշրջանային անվտանգության խնդիրները:

[06.05.15] ՆՈՐ ԳԻՐՔ՝ ՑԵՂԱՍՊԱՆԱԳԻՏԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՍՐԱՀՈՒՄ
Այսօր ԵՊՀ Սարգիս և Մարի Իզմիրլյանների անվան գրադարանի ցեղասպանագիտական գրականության սրահը համալրվեց ևս մեկ՝ ամերիկահայ գրող Քրիս Բոհջալյանի «Ավազամրոցի աղջիկները» գրքով:

[06.05.15] 16 ՌԻՍԱՆՈՂ ԱՐԴԵՆ ՌԻՍՈՒՄՆԱՍԻՐՈՒՄ Է ՃԱՊՈՆԵՐԵՆ ԼԵԶՈՒՆ
Այսօր ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետում էր հյուրընկալվել ՀՀ-ում Ճապոնիայի դեսպանության խորհրդական Կենիչիրո Սասամեն:

[06.05.15] ՄԵԿՆԱՐԿԵԼ Է 2015-2016 ՌԻՍՏԱՐՎԱ ԵՊՀ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՀԱՅՏԱԴԻՄՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ
ԵՊՀ ընդունող հանձնաժողովը տեղեկացնում է, որ 2015-2016 ուստարում Մայր բուհի բակալավրիատ ընդունվելու համար փաստաթղթերն ընդունվելու են:

[07.05.15] ԻՆՉՊԵՍ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԿԱՌԱՎԱՐԵԼ ԲԱՆԿԱՅԻՆ ՌԻՍԿԵՐԸ
Այսօր ԵՊՀ շրջանավարտների և կարիերայի կենտրոնի նախաձեռնությամբ տեղի ունեցավ «Բանկային ռիսկերի արդյունավետ կառավարում» խորագրով սեմինար-դասընթաց:

[07.05.15] ԵՊՀ-ՈՒՄ ՆՈՐ ԱՄԲԻՈՆ Է ԲԱՑՎԵԼՈՒ
Այսօր կայացավ ԵՊՀ գիտխորհրդի հերթական նիստը, որի ընթացքում կայացվեցին մի շարք որոշումներ:

[07.05.15] ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԱՆՑՔՈՒՄ ԱՆԳԼԵՐԵՆ ԼԵԶՎԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՀԱՐՑԵՐՆ ԵՆ

Այսօր ԵՊՀ ռոմանագերմանական բանասիրության ֆակուլտետում մեկնարկեց «Միջմշակութային հաղորդակցման հմտությունների կատարելագործումը անգլերենը որպես օտար լեզու ուսուցանելիս» խորագրով երկօրյա գիտաժողովը:

[08.05.15] ՌՈՒՍ ԲԱՆԱՍԵՐՆԵՐԸ ՏՈՆՈՒՄ ԵՆ ՄԵԾ ՀԱՂԹԱՆԱԿԻ 70-ԱՄՅԱԿԸ

Մայիսի 7-ին Ռուս բանասիրության ֆակուլտետում տեղի ունեցավ «Фронтовики, наденьте ордена!» միջոցառումը՝ նվիրված Հայրենական մեծ պատերազմում տարած հաղթանակի 70-ամյակին:

[08.05.15] ԼԵՌՆԱԳՆԱՑՈՒԹՅՈՒՆԸ ՈՉ ՄԻԱՅՆ ՍՊՈՐՏԱԶԵՎ Է, ԱՅԼԵՎ ԿԵՆՍԱԿԵՐՊ

ԵՊՀ ռեկտորատի, Ուսանողների հետ տարվող աշխատանքների բաժնի և Ուսանողական խորհրդի նախաձեռնությամբ ԵՊՀ-ում կգործեն լեռնագնացության սեկցիա և ակումբ:

[09.05.15] ՄԵՐ ԵՎ ՁԵՐ ՀԱՂԹԱՆԱԿԸ 70 ՏԱՐԵԿԱՆ Է

Հայրենական մեծ պատերազմում տարած հաղթանակի 70-ամյակի տոնակատարություններին միացան նաև համալսարանականները:

[11.05.15] ՆԱ ԱՌԱՋՆՈՐԴ ԷՐ ՆԱԵՎ ԽԱՂԱՂ ԺԱՄԱՆԱԿ...

Այսօր ԵՊՀ աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետում տեղի ունեցավ զոհված ազատամարտիկ Սիմոն Աչիքգյոզյանի (Դեդ) հիշատակին նվիրված հուշ-ցերեկույթ:

[11.05.15] ԵՊՀ ԴԱՍԱԽՈՍՆԵՐԸ ՄԱՍՆԱԿՑԵՑԻՆ ՖՐԱՆԿՖՈՒՐՏՅԱՆ ԳԻՏԱԺՈՂՈՎԻՆ

Մայր բուհի և Կրակովի Յագելլոնյան համալսարանի (Լեհաստան) հետ համագործակցության շրջանակներում ԵՊՀ դասախոսները մեկնել էին Գերմանիա:

[11.05.15] «ՉԻՆԱՐԵՆԻ ԿԱՄՈՒՐՋ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄՐՑՈՒՅԹԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Մայիսի 8-ին «Մարիոթ-Արմենիա» հյուրանոցում անցկացվեց «Չինարենի կամուրջ» միջազգային մրցույթի հայաստանյան ընտրական փուլը:

[11.05.15] ՔՆՆԱՐԿՎՈՒՄ ԵՆ ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Այսօր ԵՊՀ Պալեանների անվան դահլիճում մեկնարկեց «Գենդերային հիմնախնդիրները ժամանակակից Հայաստանում. հետազոտությունից դեպի քաղաքականություն» խորագրով միջազգային երկօրյա գիտաժողովը:

[11.05.15] ԵՐԲ ՊԱՐՈՒՄ ԵՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆՆԵՐԸ

Այսօր ԵՊՀ մշակույթի կենտրոնի դահլիճում տեղի ունեցավ «Պարող համալսարանական-2015» մրցույթի եզրափակիչ փուլը:

[12.05.15] ՆԱ ԿԱՄԱՎՈՐ ԹՈՂԵՑ ԳՐԻՉԸ՝ ՄԵԿՆԵԼՈՎ ՌԱԶՄԱՃԱԿԱՏ...

Այսօր ԵՊՀ-ում տեղի ունեցավ Մաթեմատիկայի և մեխանիկայի ֆակուլտետի զոհված ուսանող-ազատամարտիկ Արսեն Ղազարյանին նվիրված հուշ-ցերեկույթ:

[12.05.15] ԵՊՀ-Ն ՄԱՍՆԱԿՑԵԼ Է ՌԻՍԱՆՈՂԱԿԱՆ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ՄՐՑՈՒՅԹ-ՓԱՌԱՏՈՆԻՆ

ԵՊՀ երգչախմբի անհատ կատարողներից 3-ը ելույթ ունեցան գալա համերգում:

[12.05.15] ՆՈՐ ՈՐԱԿԻ ՍՏԱՆԴԱՐՏՆԵՐ ԵՎ ԱՍՏԻՃԱՆԱՇՆՈՐՀՄԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐ

Այս օրերին ԵՊՀ-ում անցկացվում է «Տեմպուս» ծրագրի «Վերիտաս» նախագծի աշխատաժողովը՝ հայաստանյան տարբեր բուհերի ու հաստատությունների մասնակցությամբ

[12.05.15] ԻՆՔՆԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆԸ՝ ՈՐՊԵՍ ԲՈՒՀԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՆԱԽԱՊԱՅՄԱՆ

Այսօր ԵՊՀ գիտխորհրդի նիստերի դահլիճում մեկնարկեց «ATHENA» նախագծի արդյունքների համեմատական հենանշման երկօրյա ֆորումը:

[12.05.15] ԵՐԲ ԵՐԳՈՒՄ ԵՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆՆԵՐԸ

Մայիսի 11-12-ը ԵՊՀ մշակույթի կենտրոնի դահլիճում տեղի ունեցավ «Երգող համալսարանական-2015» մրցույթի եզրափակիչ փուլը:

[13.05.15] ԱՅՍՕՐ ԶԱՔԱՐ ԱՎԱՆԵՍՅԱՆԸ ԿԴԱՌՆԱՐ 45 ՏԱՐԵԿԱՆ...

ԵՊՀ պատմության ֆակուլտետի մեծ դահլիճը լեփ-լեցուն էր մարդկանցով, ովքեր եկել էին՝ հարգանքի տուրք մատուցելու ֆակուլտետի զոհված ուսանող-ազատամարտիկ Զաքար Ավանեսյանի հիշատակին:

[13.05.15] «ՇՐՋԱԴԱՐԶ»-Ը ԼԻԱՄԵՏՐԱԺ ՖԻԼՄ Է ՍԻՐՈ ՄԱՍԻՆ

ԵՊՀ մշակույթի կենտրոնի կինոակումբի նախաձեռնությամբ համալսարանում ցուցադրվեց երիտասարդական «Շրջադարձ» լիամետրաժ ֆիլմը:

[14.05.15] «ATHENA»-Ն ԱՄՓՈՓԵՑ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ

Մայիսի 13-ին ԵՊՀ գիտխորհրդի նիստերի դահլիճում տեղի ունենցավ «ATHENA» նախագծի արդյունքների հրապարակումը, որին մասնակցում էին Բոլոնյան կրթական համակարգում ընդգրկված երկրների մի շարք նախարարներ ու փորձագետներ:

[14.05.15] ՆՈՐ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ՝ ԱՊԱԳԱ ԼՐԱԳՐՈՂՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՄԲ

Մայիսի 13-ին ԵՊՀ Ե. Չարենցի անվան դահլիճում տեղի ունեցավ «Անզեն Հիսուսներ» ներկայացումը:

[14.05.15] ԻՐԱՎԱԿԱՆ ՈԼՈՐՏԻ ԷՎՈԼՅՈՒՑԻԱՆ Ք.Ա.-ԻՑ ՄԻՆՉԵՎ ՄԵՐ ՕՐԵՐ

Այդ էվոլյուցիան փորձել են ուսումնասիրել և բացահայտել ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի առաջին կուրսի ուսանողները:

[14.05.15] ԵՎՐՈՊԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԸՆՏԱՆԻՔԸ ԵՐԵՎԱՆՈՒՄ Է

Երևանում այսօր մեկնարկեց Եվրոպական բարձրագույն կրթական տարածքի (ԵԲԿՏ) նախարարական գագաթնաժողովն ու Բոլոնիայի գործընթացի 4-րդ քաղաքական ֆորումը:

[15.05.15] Պ. ՍԵՎԱԿԻ «ԱՄԱՆԵՋ» ՎԵՊԻ ՇՆՈՐՀԱՆԴԵՍԸ ԵՊՀ-ՈՒՄ

Այսօր ԵՊՀ հայ բանասիրության ֆակուլտետում տեղի ունեցավ Պ. Սևակի «Ամանեջ» գրքի շնորհանդեսը:

[15.05.15] «ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ԻՆՏԵԳՐՈՒՄ» . ՆՈՐ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Այսօր ապագա միջազգայնագետների և դիվանագետների հետ հանդիպեցին ՌԴ սոցիալական ծրագրերի աջակցության հիմնադրամի ներկայացուցիչները:

[15.05.15] «ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՎԵՐՆԻՍԱԺ» ԵՊՀ-ՈՒՄ

Այսօր ԵՊՀ-ում տեղի ունեցավ «Հոգեբանական վերնիսաժ» խորագրով ցուցահանդեսը, որը կազմակերպել էր Փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետի ընդհանուր հոգեբանության ամբիոնը:

[15.05.15] ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆՆԵՐԻ ՀՅՈՒՐԸ ՇՎԵԴ ՆԱԽԱՐԱՐՆ ԷՐ

ԵՊՀ ուսանողներն այս անգամ հանդիպեցին Շվեդիայի բարձրագույն կրթության և հետազոտության նախարար Հելեն Հելլմարք Քնաթսոնի հետ:

[16.05.15] ԵՊՀ-Ն 96 ՏԱՐԵԿԱՆ Է

Շուտով իր հիմնադրման 100-ամյակը բոլորել պատրաստվող ԵՊՀ-ն մինչ օրս տվել է 100 հազարից ավելի շրջանավարտ:

[17.05.15] ԶԱՐԳԱՑՆԵԼՈՎ ԴՐԱՄԱՇՆՈՐՀ ՍՏԱՆԱԼՈՒ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԵՊՀ-ում մայիսի 14-ից 16-ը անցկացվել են վերապատրաստման դասընթացներ «ՊԱԿՏ» (Ծրագրի դերակատարների կարողությունների վերապատրաստում) ծրագրի շրջանակներում:

[18.05.15] ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԱՅՑԸ «ՖՈՏՈՆ» ՎԱՐԺԱՐԱՆ

ՈՒԳԸ գործունեության և մասնագիտական կողմնորոշման առանձնահատկությունները ներկայացրին Ռոմանագերմանական բանասիրության ֆակուլտետի ուսանողները:

[18.05.15] ԵՊՀ 96-ԱՄՅԱԿԸ ՆՇՎԵՑ «ՈՒՍԱՆՈՂ-2015» ՄՐՑԱՆԱԿԱԲԱՇԽՈՒԹՅԱՄԲ

Այսօր ԵՊՀ մեծ դահլիճում ուսանողներն ու Ուսանողական խորհրդի ներկայացուցիչները մշակութային միջոցառմամբ նշեցին Մայր բուհի հիմնադրման 96-ամյակը:

[18.05.15] ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆՆԵՐԸ ԴԻՏԵՑԻՆ ՆՈՐ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ

Մայիսի 16-ին՝ ԵՊՀ 96-ամյակի օրը, Երևանի Հ. Ղափլանյանի անվան դրամատիկական թատրոնում համալսարանականները դիտեցին «Փարիզյան դատավճիռ» ներկայացումը:

[18.05.15] ՀԱՅՏՆԻ ԵՆ «ՈՒՍԱՆՈՂ-2015»-Ի ՀԱՂԹՈՂՆԵՐԸ

Այսօր ԵՊՀ մեծ դահլիճում ուսանողական տոն էր. նշվեց Մայր բուհի հիմնադրման 96-ամյակը և տեղի ունեցավ «Ուսանող-2015» համերգ-մրցանակաբաշխությունը:

[20.05.15] 5 ՈՒՍԱՆՈՂՆԵՐ ԱՐԺԱՆԱՑԱՆ ՊՈՂՈՍ ՆՈՒԲԱՐԻ ԱՆՎԱՆ ԿՐԹԱԹՈՇԱԿԻՆ

Հայկական բարեգործական ընդհանուր միության կողմից տրվող Պողոս Նուբարի անվան կրթաթոշակի տրամադրումը շարունակական բնույթ կկրի:

[20.05.15] ԵՊՀ-ՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԵՑ ՆՈՐ ԿՈԼԵԿՏԻՎ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

Առաջիկա 3 տարիներին ևս ԵՊՀ-ում գործատուի և աշխատողների հարաբերությունները կարգավորվելու են նաև Կոլեկտիվ պայմանագրով:

[20.05.15] ՆԵՐԿԱՅԱՑՎԵՑ ՀԱՅՈՑ ԵՂԵՌՆԱՊԱՏՈՒՄԻ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Այսօր ԵՊՀ հայ բանասիրության ֆակուլտետում տեղի ունեցավ «Հայոց եղեռնապատումի գրականությունը» խորագրով գիտաժողով:

[20.05.15] ԵՊՀ-ՈՒՄ ՆԱԽԱՏԵՍՎՈՒՄ Է ՍՏԵՂԾԵԼ ՌԱԶՄԱԿԱՆ ԱՄԲԻՈՆ

ՀՀ ՊՆ Վ. Սարգսյանի անվան ռազմական ինստիտուտի հենքի վրա նախատեսվում է ստեղծել ռազմական ամբիոն, որտեղ կամավոր հիմունքներով կարող են սովորել տարկետման իրավունքով ԵՊՀ ընդունված արական սեռի քաղաքացիները:

[21.05.15] ԵՊՀ ՈՒԳԸ-Ն ԱՄՓՈՓԵՑ ԵՐԵՔ ՈՒ ԿԵՍ ՏԱՐԻՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Մայիսի 20-ին ԵՊՀ Պալեանների անվան դահլիճում տեղի ունեցավ ԵՊՀ ՈՒԳԸ 2014-2015 ուստարվա 2-րդ կիսամյակի ամփոփիչ ընդլայնված նիստը, որի ընթացքում ամփոփվեց նաև ՈՒԳԸ անցած երեք ու կես տարիների գործունեությունը:

[21.05.15] ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆՆ ԱՎԱՐՏՎԵՑ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՄԲ

Մայիսի 20-ին ԵՊՀ ժուռնալիստիկայի ֆակուլտետի մի խումբ ուսանողներ այցելեցին «Առավոտ» օրաթերթի խմբագրություն և «Տիգրան Մեծ» հրատարակչություն:

[21.05.15] ՈԼՈՐՏԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՐՏԱԴԻՐ Է

Քննարկվեցին շրջակա միջավայրին վերաբերող իրավական ակտերի մշակման գործընթացին հասարակության մասնակցության հիմնախնդիրները:

[21.05.15] ՄԻ «ՍՈՎՈՐԱԿԱՆ» ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԵՏՔԵՐՈՎ

Այսօր ԵՊՀ-ում բացվեց Իրաքի եզդիների ցեղասպանությանը նվիրված լուսանկարների ցուցահանդեսը, և տեղի ունեցավ «100 տարի անց…» գրքի շնորհանդեսը:

[21.05.15] ԵՊՀ-Ն ՆՈՐ ԳՈՐԾԸՆԿԵՐ ՈՒՆԻ

ԵՊՀ-ն ու Ռյազանի Ս. Եսենինի անվան պետական համալսարանը ցանկանում են գործընկերային սերտ հարաբերություններ հաստատել:

[21.05.15] «ՍԻՆԵՐՋԻ» ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ 71%-Ը ԵՊՀ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐ ԵՆ

Այսօր «Սիներջի Ինթերնեյշնալ Սիսթըմզ» ընկերության ներկայացուցիչները հանդիպեցին ապագա ծրագրավորողների հետ:

[22.05.15] ՌՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ ԲԱՐՁՐԱՁԱՅՆՈՒՄ Է ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Մայիսի 21-ին տեղի ունեցավ ԵՊՀ ուսանողական խորհրդի ակտիվի հանդիպումը ԵՊՀ ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատար Արամ Սիմոնյանի հետ:

[22.05.15] ԱՆԴՐԱԴԱՐՁԱՆ ՌՈՒՍԱՍՏԱՆԱԲՆԱԿ ՀԱՅ ԱՐՎԵՍՏԱԳԵՏՆԵՐԻՆ

Ապրիլի 21-ին ԵՊՀ մշակույթի կենտրոնում տեղի ունեցավ «Աշխարհասփյուռ հայ արվեստագետներ… Ռուսաստան» խորագրով միջոցառումը:

[22.05.15] ՀԱՋՈՂՈՒԹՅԱՆ ԲԱՆԱՁԵՎԻՑ ՄԻՆՉԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ԻՐԱԳՈՐԾՈՒՄ

Կարիերայի առաջխաղացմանն ու հաջողության հասնելու գաղտնիքներին միտված սեմինար-դասընթացները շարունակվում են…

[25.05.15] ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԺՈՂՈՎԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՒՄ ԷԻՆ ՆԱԵՎ ԵՊՀ ԴԱՍԱԽՈՍՆԵՐԸ

ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետի դասախոսները մասնակցել են Աթենքում կայացած կրթական 17-րդ գիտաժողովին:

[25.05.15] ԱՌԱՋԻՆ ՀԱՄԵՐԳԸ ԻՐԵՆՑ ՀԱՐԱՋԱՏ ԲՈՒՀՈՒՄ

Մայիսի 23-ին ԵՊՀ մշակույթի կենտրոնում տեղի ունեցավ «Soaring» խմբի «Հեռավոր իմ երազանք» խորագիրը կրող համերգը:

[26.05.15] ԱՌՑԱՆՑ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ ՌՈՒՍ ԲԱՆԱՍԵՐՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՄԲ

Այսօր ԵՊՀ ռուսական կենտրոնում Ռուս բանասիրության ֆակուլտետի 4 ուսանողներ մասնակցեցին Ազգերի բարեկամության ռուսական համալսարանի (РУДН) հետ կազմակերպված առցանց քննությանը:

[26.05.15] ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆԸ՝ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԺՈՂՈՎԻ ՄԱՍՆԱԿԻՑ

Մայիսի 21-ին Կիևի Տ. Շևչենկոյի անվան ազգային համալսարանի միջազգային հարաբերությունների ինստիտուտում անցկացվել է միջազգային գիտաժողով:

[26.05.15] ԽԱՂԱՂԱՊԱՀՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՐՎԱՆ ԸՆԴԱՌԱՋ

Այսօր ԵՊՀ եվրոպական ուսումնասիրությունների կենտրոնում տեղի ունեցավ ՄԱԿ-ի խաղաղապահների միջազգային օրվան նվիրված կլոր սեղան:

[26.05.15] ՀԱՅԱՍՏԱՆԻ ԸՆԴԵՐՔԸ՝ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԻ ԴԻՏԱԿԵՏՈՒՄ

Հայաստանի ընդերքն այսօր օգտագործվում է ոչ ճիշտ, ինչը խանգարում է տնտեսության այդ ճյուղի զարգացմանը:

[27.05.15] ՀՀ ՆԱԽԱԳԱՀԸ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼ Է ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆՆԵՐԻՆ

ՀՀ նախագահի մրցանակին արժանացած գիտական խմբերից երկուսը ներկայացնում են ԵՊՀ-ն:

[27.05.15] ԵՐԵԽԱՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՕՐՎԱՆ ԸՆԴԱՌԱՋ
Այսօր ԵՊՀ մշակույթի կենտրոնի դահլիճը լեփ-լեցուն էր փոքրիկներով. համալսարանականներն ու նրանց երեխաները եկել էին մանկական ներկայացում դիտելու:

[27.05.15] ՆՈՐ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԲԻԶՆԵՍ ԳԱՂԱՓԱՐՆԵՐԻ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻՆ
Այսօր ԵՊՀ գիտխորհրդի նիստերի դահլիճում ամփոփվեցին Ինովացիոն բիզնես գաղափարների մշակման և ձեռներեցության դասընթացների արդյունքները:

[27.05.15] ԴԱՍԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇԱՐՔԸ ՆՎԻՐՎԱԾ ԷՐ ՄԻՋՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆԸ
ԵՊՀ ռոմանագերմանական բանասիրության ֆակուլտետում անգլերենի գործնական դասընթացներ է վարել ամերիկացի դասախոս Էլեանոր Վոլֆը:

[29.05.15] ԵՊՀ ԴՈՑԵՆՏԸ ՄԱՍՆԱԿՑԵԼ Է ՍԻՐԻԱՀԱՅԵՐԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ ԳԻՏԱԺՈՂՈՎԻՆ
Մայիսի 25-27-ը Բեյրութի Հայկազյան համալսարանում տեղի ունեցավ «Սիրիայի հայերը» խորագրով եռօրյա գիտաժողով:

[29.05.15] ԵՊՀ-Ն՝ «ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՈՆԱՎԱՃԱՌ»-Ի ՄԱՍՆԱԿԻՑ
«Մասնագիտությունների տոնավաճառին» առանձին տաղավարով ներկայացել էր նաև Երևանի պետական համալսարանը:

[02.06.15] ԱՄՓՈՓՎԵՑԻՆ ՕԼԻՄՊԻԱԴԱՅԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ
Մաթեմատիկական ուսանողական օլիմպիադային հաղթած չորս ուսանողները կմասնակցեն միջազգային օլիմպիադային:

[02.06.15] «ՀԱՆՈՒՆ ԱՐՑԱԽ ԱՇԽԱՐՀԻ ԴՈՒ ԱՆՄԱՀԱՑԱՐ...»
Հունիսի 1-ին ԵՊՀ պատմության ֆակուլտետում նշվեց ՀՀ Ազգային հերոս Վարդան Բախշյանի 50-ամյակը:

[02.06.15] ԱՎԱՐՏՎԵՑ ՀԱՅՏԱԴԻՄՈՒՄՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԱՌԱՋԻՆ ՓՈՒԼԸ
2015-2016 ուստարվա ընդունելության քննությունների հայտադիմումների 1-ին փուլն ավարտվեց հունիսի 1-ին. հայտադիմումներ են ներկայացրել շուրջ 3.450 դիմորդներ:

[03.06.15] ՔՆՆԱՐԿՄԱՆ ԱՌԱՆՑՔՈՒՄ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՑՆՑՈՒՄՆԵՐՆ ԷԻՆ
Հունիսի 2-ին ԵՊՀ Ռոբերտ Շումանի անվան սրահում «ՀՌԿԿ-Հայաստան» կենտրոնի նախաձեռնությամբ կազմակերպվել էր հանդիպում-քննարկում:

[03.06.15] ՊԱՏՐԱՍՏԱԿԱՄ ԵՆ ՀԱՅ ԳՈՐԾԸՆԿԵՐՆԵՐԻ ՀԵՏ ԽՈՐԱՑՆԵԼ ԱՌԿԱ ՓՈԽԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ
Համալսարանականների հյուրն էր Չեխիայի Հանրապետության Սահմանադրական դատարանի նախագահ Պավել Ռիխետսկիին:

[04.06.15] ԱՅՍ ՏԱՐԻ ՇՈՒՐՋ 70 ՄԱՐԴ Է ԴԻՄԵԼ ԵՊՀ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԿԼԻՆԻԿԱ
ԵՊՀ իրավաբանական կլինիկան ևս մեկ սերնդի ուսանողների զինեց մասնագիտական հմտություններով և ճանապարհեց դեպի պրակտիկ դաշտ:

[05.06.15] ԵՊՀ-Ի ՀՐԱՏԱՐԱԿԱԾ ԳՐՔԵՐԸ ՆԵՐԿԱՅԱՑՎԵԼ ԵՆ ՆՅՈՒ ՅՈՐՔԻ ՏՈՆԱՎԱՃԱՌՈՒՄ
Այս տարի առաջին անգամ Հայաստանը մասնակցել է Նյու Յորքի գրքի տոնավաճառին, որն անցկացվել է մայիսի 27-29-ը:

[08.06.15] ԳՅՈՒՄՐԵՑԻ ԿԻՆ ՁԵՌՆԵՐԵՑՆԵՐԸ ՄԱՐԶԻ ԳՈՐԾԱՐԱՐՆԵՐԻ ՄԻԱՅՆ 25 ՏՈԿՈՍՆ ԵՆ ԿԱԶՄՈՒՄ
Ներկայացվեցին «Գենդերային ճեղքվածքը ձեռնարկատիրական ոլորտում (Շիրակի մարզ)» հետազոտության արդյունքները:

[09.06.15] ԵՊՀ-ՈՒՄ ԷԻՆ ԿԱՆԱՆՑ ՁԵՌՆԵՐԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԽՐԱԽՈՒՍՈՂՆԵՐԸ
Հայաստանում անցկացվող Կանանց ձեռներեցության շաբաթվա շրջանակներում այսօր ԵՊՀ-ում էին հյուրընկալվել Կանանց ձեռներեցության միջազգային համաժողովի մասնակիցները:

[11.06.15] ԵՊՀ ԴԱՍԱԽՈՍԻ ԳԻՐՔԸ ՏՊԱԳՐՎԵԼ Է ԳԵՐՄԱՆԻԱՅՈՒՄ
ԵՊՀ դոցենտ Սմբատ Շահինյանի անգլերեն մենագրությունը տպագրվել է գերմանական «Scholar's Press» հրատարակչության կողմից:

[11.06.15] «ԵՐԵՎԱԿ» ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ԱՅՑԸ ՄԱՅՐ ԲՈՒՀ
Այսօր ԵՊՀ մինչհամալսարանական կրթության վարչության նախաձեռնությամբ համալսարան էին այցելել «Երևակ» կրթահամալիրի աշակերտները:

[11.06.15] ՄԵԿ ՀԱՅՏ Է ՆԵՐԿԱՅԱՑՎԵԼ
ԵՊՀ ռեկտորի թափուր պաշտոնի բաց մրցույթին մասնակցելու համար հայտ է ներկայացրել մեկ հավակնորդ:

[12.06.15] ԿԱ՞ ԱՐԴՅՈՔ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ԴԻՍԿՈՒՐՍ
Հունիսի 11-ին ԵՊՀ-ում ներկայացվեցին «Գենդերային դիսկուրսը Հայաստանում. հիստերայից դեպի կառուցողական քաղաքականություն» հետազոտության արդյունքները:

[12.06.15] ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ՄԱԳԻՍՏՐՈՍՆԵՐԸ ԴԻՊԼՈՄՆԵՐ ՍՏԱՑԱՆ
Այսօր ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի դատական նիստերի դահլիճում ֆակուլտետի մագիստրոսները հանդիսավոր արարողությամբ ավարտական դիպլոմներ ստացան:

[15.06.15] ՊՐՈԲԱՑԻՈՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ ԵՊՀ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ
Այսօր Իրավագիտության ֆակուլտետում տեղի ունեցավ «Պրոբացիոն ծառայությունը Հայաստանի Հանրապետությունում» խորագրով քննարկում-դասընթաց:

[16.06.15] ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆ ԱՌԱՋԻՆ ՁԵՌՔԻՑ. ԷՊԻԳԵՆԵՏԻԿԱ
Այսօր ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետում մեկնարկել է էպիգենետիկային նվիրված երկօրյա դպրոցը:

[18.06.15] ՄԵՐՁԱՎՈՐ ԱՐԵՎԵԼՔԻ ՏՐԱՆՍՖՈՐՄԱՑԻՈՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԸ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԸ
Համալսարանականների ուշադրության կենտրոնում տարածաշրջանային աշխարհաքաղաքական գործընթացներն էին և դրանց ազդեցությունը ՀՀ-ի վրա:

[18.06.15] ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԵԿՆԱԲԱՆՈՒՄԸ ՏԱՐԲԵՐ ԿՈՂՄԵՐԻՑ
ԵՊՀ-ում այսօր անցկացվեց «Հայոց ցեղասպանության պատմական, միջազգային, իրավական, մշակութային և արվեստի հիմնահարցերը» խորագրով գիտաժողով:

[19.06.15] ՄԱՅՐ ԲՈՒՀԸ ԿՇԱՐՈՒՆԱԿԻ ՂԵԿԱՎԱՐԵԼ ԱՐԱՄ ՍԻՄՈՆՅԱՆԸ
Այսօր ԵՊՀ գիտական խորհրդի նիստերի դահլիճում տեղի ունեցավ ԵՊՀ հոգաբարձուների խորհրդի հերթական նիստը:

[19.06.15] ՏՆՏԵՍԱԳԵՏՆԵՐՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒՄ ԵՆ ՈԼՈՐՏԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ
Այսօր ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետում մեկնարկեց Հայկական տնտեսագիտական միության 5-րդ տարեկան գիտական նստաշրջանը:

[23.06.15] ԱՐՏՅՈՄ ՎԱՀԱՆՅԱՆԸ 90 ՏԱՐԵԿԱՆ Է
ԵՊՀ երախտավորներից մեկը՝ ֆիզմաթ. գիտ. դոկտոր Արտյոմ Վահանյանը, այսօր բոլորում է ծննդյան 90-ամյակը:

[23.06.15] ՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ՄՏՔԻ ԱՌԱՆՑՔՈՒՄ
Այս և առաջիկա երկու օրերին ԵՊՀ մաթեմատիկայի և մեխանիկայի ֆակուլտետում կանցկացվի Հայկական մաթեմատիկական միության 7-րդ տարեկան գիտական նստաշրջանը:

[24.06.15] ԵՊՀ-Ն ԸՆԴԼԱՅՆՈՒՄ Է ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՊՈՆԻԱՅԻ ՀԵՏ
ՀՀ-ում Ճապոնիայի դեսպան Էյձի Տագուչին հանդիպեց ԵՊՀ ղեկավարության ներկայացուցիչների հետ:

[25.06.15] ԱՌԱՋԻՆ ՓՈՒԼՈՎ ԵՊՀ Է ԴԻՄԵԼ 3448 ԴԻՄՈՐԴ
Այսօր կայացավ ԵՊՀ գիտխորհրդի՝ այս ուստարվա վերջին նիստը՝ օրակարգային 4 և ընթացիկ մի շարք հարցերով:

[25.06.15] ՄԵԿՆԱՐԿԵՑ ԱՄԵՆԱՄՅԱ «ԱՄԱՌԱՅԻՆ ԴՊՐՈՑ» ԾՐԱԳԻՐԸ
Այսօր ԵՊՀ գիտխորհրդի նիստերի դահլիճում տեղի ունեցավ ԵՊՀ «Վարդանանք» ռազմահայրենասիրական դաստիարակության ակումբի «Ամառային դպրոց-2015» ծրագրի բացման հանդիսավոր արարողությունը:

[25.06.15] ԳՐԻԳՈՐ ՂԱՐԻԲՅԱՆԸ 85 ՏԱՐԵԿԱՆ Է
Համալսարանական «հնաբնակներից» մեկը՝ Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի տնտեսագիտության տեսության ամբիոնի պատվավոր վարիչ Գրիգոր Ղարիբյանն այս տարի նշում է ծննդյան 85-ամյակը:

[26.06.15] «ՆՐԱ ԿԱՏԱՐԱԾ ԳՈՐԾՆ ԱՆՀԵՏ ՉԻ ԱՆՑՆԻ»
Այսօր Մաթեմատիկայի և մեխանիկայի ֆակուլտետում տեղի ունեցավ գիտխորհրդի ընդլայնված նիստ՝ նվիրված Վլադիմիր Սարգսյանի ծննդյան 80-ամյակին:

[26.06.15] ՊԱՏՄԱԳԻՏԱԿԱՆ ԱՐԺԵՔ ՈՒՆԵՑՈՂ ՆՈՐ ՄԵՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ
Այսօր ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտում տեղի ունեցավ Ռոստովի հայագիտական կենտրոնի տնօրեն, պատմ. գիտ. թեկնածու Սերգեյ Սայադովի «У истоков русского арменоведения: историографический обзор» գրքի շնորհանդեսը:

[26.06.15] ԴԱՍԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ ԿԱՐԴԱՑ ՖՐԱՆՍԻԱՀԱՅ ՊԱՏՄԱԲԱՆԸ
Այսօր ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետում տեղի ունեցավ հանդիպում ֆրանսիահայ պատմաբան Քլեր Մուրադյանի հետ:

[26.06.15] ԹՈՒՐՔՄԵՆԱԿԱՆ ՉԵԶՈՔՈՒԹՅԱՆ 20-ԱՄՅԱԿԸ ՆՇՎԵՑ ԳԻՏԱԺՈՂՈՎՈՎ
Թուրքմենստանի չեզոքության հռչակման 20-ամյակի միջոցառումներին մասնակից դարձավ նաև ԵՊՀ-ն:

[26.06.15] ԱՌԱՋԻՆ «ՍՈՑՔԵՄՓ»-Ի ՄԵԿՆԱՐԿԸ ՏՐՎԱԾ Է
Այսօր ԵՊՀ սոցիոլոգիայի ֆակուլտետում անցկացվեց «ՍոցՔեմփ-2015» խորագրով, ոչ ֆորմալ ձևաչափով գիտաժողովը:

[27.06.15] «ԴԱՐԻՑ ԴԱՐԸ» ՎԵՐԱԴԱՌՆՈՒՄ Է ԴՈՆԻ ՌՈՍՏՈՎ
Հայոց ցեղասպանության մասին բարձրաձայնող առաջին կտավներից մեկը ռեստավրացվել է և այսօր ցուցադրվեց Հայաստանի ազգային պատկերասրահում:

[29.06.15] ԲՆԱՊԱՀՊԱՆՆԵՐՆ ԱՆՀԱՆԳՍՏԱՑԱԾ ԵՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԳՈՐԾՈՂ ՀԷԿ-ԵՐԻ ՄԵԾ ԹՎՈՎ
Փոքր ՀԷԿ-երի կառուցման և անվերահսկելի շահագործման հետևանքով մի շարք գետերի էկոհամակարգը հայտնվել է աղետալի վիճակում:

[29.06.15] ՎԱԽՃԱՆՎԵԼ Է ԵՊՀ ԴԱՍԱԽՈՍԸ

Նորվեգիայի Ստավանգեր քաղաքում մահկանացուն է կնքել շախմատային մեկնաբան, ԵՊՀ երկարամյա դասախոս Գագիկ Հովհաննիսյանը:

[01.07.15] ԵՊՀ-Ն ԸՆԴԼԱՅՆՈՒՄ Է ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

ԵՊՀ ռեկտորի հյուրն էր Հորդանանի Հաշիմյան Թագավորության բարձրագույն կրթության և գիտական հետազոտությունների նախարար Լաբիբ Խադրան:

[07.07.15] ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ԿՀՐԱՊԱՐԱԿՎԵՆ ՀՈՒԼԻՍԻ 15-ԻՆ

Այս օրերին ընթանում են ընդունելության վերջին քննությունները, որոնց արդյունքները կփակցվեն ինչպես ԵՊՀ-ում, այնպես էլ հասանելի կլինեն ԵՊՀ պաշտոնական պորտալում:

[08.07.15] ԱՎԱՐՏՎԵՑ ՄԱԳԻՍՏՐԱՏՈՒՐԱՅԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՀԱՅՏԱԴԻՄՈՒՄՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ 2-ՐԴ ՓՈՒԼԸ

ԵՊՀ առկա ուսուցմամբ մագիստրատուրայի 2015-2016 ուստարվա ընդունելության 1-ին և 2-րդ փուլերի տվյալներով՝ մրցութային կարգով ԵՊՀ մագիստրատուրա է դիմել բակալավրիատի 511 շրջանավարտ:

[09.07.15] ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆԸ՝ «GOOGLE EUROPE»-Ի ԿՐԹԱԹՈՇԱԿԱԿԻՐ

ԵՊՀ ինֆորմատիկայի և կիրառական մաթեմատիկայի ֆակուլտետի 3-րդ կուրսի ուսանող Հրայր Հարությունյանը 2015-2016 ուստարում կստանա «Google Europe»-ի կրթաթոշակը:

[10.07.15] ԱՄԱՌԱՅԻՆ ԴՊՐՈՑԻ ԿԻԶԱԿԵՏՈՒՄ ՄԱԹԵՄԱՏԻԿԱՆ ԷՐ

ԵՊՀ մաթեմատիկայի և մեխանիկայի ֆակուլտետը հուլիսի 2-ից 9-ը Ծաղկաձորում կազմակերպել էր «Մաթեմատիկա և կիրառություններ» խորագրով 2-րդ ամառային դպրոցը:

[10.07.15] «ՍՓՅՈՒՌՔ-2015»-Ը ՄԵԿՆԱՐԿԵՑ ԵՊՀ-ՈՒՄ

ԵՊՀ-ում մեկնարկում է «Սփյուռք-2015» ամառային դպրոցը, որի նախաձեռնողն է ՀՀ Սփյուռքի նախարարությունը:

[14.07.15] ՀԱՂԹՈՂՆԵՐԻՑ ԵՐԿՈՒՍԸ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆՆԵՐ ԵՆ

Հուլիսի 10-ին Մեդիա նախաձեռնությունների կենտրոնում ամփոփվեց «Ես եմ մեդիան» ուսանողական մրցույթը. հաղթողներից երկուսը ԵՊՀ ժուռնալիստիկայի ֆակուլտետի ուսանողուհիներ են:

[14.07.15] ՀԱՅՏՆԻ ԵՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Հրապարակվել են ՀՀ պետական և ոչ պետական բուհերի 2015թ. ընդունելության անցողիկ միավորները և ընդունվածների անվանացանկերը:

[16.07.15] ԵՊՀ-ՈՒՄ ՄԵԿՆԱՐԿԵԼ Է ԹԱՓՈՒՐ ՏԵՂԵՐԻ ՀԱՄԱՐ ՄՐՑՈՒՅԹԸ

Հրապարակվել է 2015 թ.-ի բուհական ընդունելության թափուր տեղերի ցանկը:

[16.07.15] ԲԱԼԻՆՏՅԱՆ ՇԱՐԺՄԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Այսօր ԵՊՀ-ում մեկնարկեց «Հուզական այրումը և Բալինտյան շարժումը օգնող մասնագիտություններում» խորագրով առաջին միջազգային գիտաժողովը:

[16.07.15] ԿՅԱՆՔԻ ՆՈՐ ՓՈՒԼ՝ ԱՐԴԵՆ ԻՍԿ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՄԲ

Այսօր ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետում դիպլոմներ հանձնվեցին բակալավրիատի և մագիստրատուրայի շրջանավարտներին:

[24.07.15] ՀԱՅՏՆԻ ԵՆ ԹԱՓՈՒՐ ՏԵՂԵՐԻ ՀԱՄԱՐ ՄՐՑՈՒՅԹԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ
Հրապարակվել է 2015 թ.-ի բուհական ընդունելության թափուր տեղերի համար վճարովի ուսուցման մրցույթի արդյունքում ԵՊՀ ընդունված դիմորդների ցանկը:

[25.08.15] ԵՊՀ ԹԻՄԸ ԱԿՏԻՎ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑԱՎ «ԲԱԶԵ-2015»-ՈՒՄ
Օգոստոսի 17-ից 24-ը Ծաղկաձորում անցկացվեց 13-րդ ամենամյա «Բազե» համահայկական երիտասարդական հավաքը:

[25.08.15] ՀԱՆԴԻՊՄԱՆ ԱՌԱՆՑՔՈՒՄ ՄԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐՆ ԵՆ
Այսօր ԵՊՀ–ում տեղի ունեցավ Վենետիկի հանձնաժողովի անդամների հանդիպումը Հայաստանի քաղաքական ուժերի և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների հետ:

[25.08.15] ԱՌԱՋԻՆ ԿՈՒՐՍԵՑԻՆԵՐԻ ՈՒՂԵՑՈՒՅՑԸ՝ ԱՌՑԱՆՑ
ԵՊՀ առաջին կուրսեցիների համար նախատեսված ուղեցույցի էլեկտրոնային տարբերակն արդեն պատրաստ է:

[26.08.15] «ՀԱՄԱԲՈՒՀԱԿԱՆ ԲԱՆԱԿՈՒՄ-2015»-Ն ԱՐԴԵՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ Է
Օգոստոսի 14-ից 21-ը Հայաստանի, Արցախի և Ջավախքի տարբեր բուհերում սովորող 100-ից ավելի ուսանողներ Արցախում մասնակցեցին «Համաբուհական բանակում-2015»-ին:

[26.08.15] ՎԱՐԴԱՆԱՆՔՑԻՆԵՐՆ ԱՐՑԱԽՈՒՄ 7-ՐԴ ԱՆԳԱՄ ԻՐԱԿԱՆԱՑՐԻՆ ՈՒԽՏԱԳՆԱՑՈՒԹՅՈՒՆ
Օգոստոսի 3-ից 9-ը ԵՊՀ «Վարդանանք» ռազմահայրենասիրական դաստիարակության ակումբի ավելի քան 80 անդամներ մասնակցեցին արշավ-ուխտագնացության…

[27.08.15] ԵՊՀ-Ն ՊԱՏՐԱՍՏ Է ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՆՈՐԵԿՆԵՐԻՆ
Հայտնի է ԵՊՀ առաջին կուրսեցիների դիմավորման ժամանակացույցը:

[27.08.15] ԵՐԵՔ ԱՐԾԱԹԵ ՄԵԴԱԼ՝ ՄԵԿ ԹԻՄԻ ԿԱԶՄՈՒՄ
ԵՊՀ ուսանողները Բուլղարիայում վերջերս կայացած միջազգային ուսանողական օլիմպիադայից վերադարձել են արծաթե մեդալներով և գովասանագրով:

[28.08.15] ՄԱՀՄԱՆՎԵԼ Է ՎԱՐՁԵՐԻ ՎՃԱՐՄԱՆ ՎԵՐՋՆԱԺԱՄԿԵՏԸ
ԵՊՀ-ում վարձերի վճարման վերջնաժամկետն առաջին կուրսեցիների համար սեպտեմբերի 15-ն է: